Ա. Լևանդովսկի

ՌՈԲԵՍՊԻԵՐ

Robespierre

Ա. Պ. ԼԵՎԱՆԴՈՎՍԿԻ

ՌՈԲԵՍՊԻԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1973

9 (Մ) 31
Լ 42

Լ 0—0—7—2 (90) 347.73 / 701 (01) 73 «Տ»

1794 թվականի հուլիսի 24-ին ամբոխի աղմուկ-աղաղակի ու ծաղրուծանակի տակ գիլիոտինի դանակի հարվածից ընկավ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի գլուխը։ Ամբոխը ցրվեց, և այն ժամանակ ոչ մեկի մտքով չանցավ, որ նա ականատես եղավ ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության վախճանին։ Յակոբիններին, որոնք ամենաարմատական հեղաշրջումը կատարեցին այդ ժամանակվա մարդկության պատմության մեջ, փոխարինելու եկան խոշոր բուրժուաները, որոնք արյունով հեղեցին հեղափոխական ժողովրդի բոլոր նվաճումները, դրանցից պահպանելով միայն այն, ինչ շահավետ էր իրենց։

Ա. Պ. Լևանդովսկու գիրքը ոչ միայն յակոբինականների առաջնորդ Ռոբեսպիերի կենսագրությունն է, այլև ֆրանսիական հեղափոխության ամենաստույգ տարեգրությունը, քանի որ Ռոբեսպիերի կյանքը անքակտելիորեն կապված է նրա հետ։

Իր ճառերով, օրենսգրությունների նախագծերով, իր կյանքի ուժով և հեղափոխական գաղափարներին անօրինակ նվիրվածությամբ Ռոբեսպիերը մեծ ազդեցություն ունեցավ հեղափոխական պայքարի ընթացքի վրա։ Ռոբեսպիերը նրա գաղափարախոսն էր, նրա դրոշն ու առաջնորդողը։

Գիրքը գրված է կենդանի ու վառ լեզվով և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ։

А. П. Левандовский
Робеспьер
(На армянском языке)
Издательство „Айастан"
Ереван, 1973

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ
(Նախաբանի փոխարեն)

Նորին մեծություն Լյուդովիկոս XVI-ը, աստծո ողորմածությամբ Ֆրանսիայի և Նավարայի թագավորը, վերադառնում էր Ռեյմսից։ Թագավորը վշտացած էր։ Ամեն ինչ շատ վատ էր ընթանում։ Ամենից առաջ նա քաղցած էր։ Վաղ էին նախաճաշել։ Նրան հաջողվել էր շտապ ուտել միայն մի քանի կտորներ, կես գյուժին ձու, մի փոքր ճուտ և երկու կտոր խոզապուխտ։ Գինին շատ վատն էր, և նա ընդամենը կես շիշ խմեց։ Ասում-ասում գիտե, թե նախաճաշից որքան ժամանակ է անցել, իսկ հաշվերությունը դեռ չի էլ նախատեսվում։ Եվ ահա մտքովդ շատ բան է անցնում։ Ակամայից կրկին ու կրկին հիշում ես այդ սատանայության մասին։

Նրա բարի փարիզեցիները և մյուս քաղաքների բնակիչները իրեն շատ տհաճություններ պատճառեցին։ Տառացիորեն թագադրության նախօրյակին խռովություն բռնկվեց, որն ընդգրկեց Բոմոնը, Սեն-Ժերմենը, Պոնտուազը, իսկ հետո տեղափոխվեց մայրաքաղաք։ Եվ ինչի՞ համար։ Հացի համար։ Գիտեք ինչ, նրանց հացը պակաս է, հացը շատ թանկ է։ Իսկ չէ՞ որ սուրբ գրքում ասված է. «Ոչ միայն հացիվ կեցանե մարդս, այլև բանիվ աստծո»։ Եվ ի՞նչու, սատանան տանի, գրանք բոլորը չեն կարող ապրել խաղաղ, ըստ «Սիրիր մերձավորիդ» պատվիրանի։ Ոստիկանությունը անզոր էր, հարկ եղավ զորքեր կանչել։ Մարշալ Բիրոնը կախեց մի քանի անբան պորտաբույծի, շատերին կոտորեց, մնացածները խաղաղվեցին։ Արդյոք երկա՞ր ժամանակով։ Ինչ ասել կուզի, թագադրության հանդեսների լավ նախերգանք է։ Եվ ինչպես ընդհանրապես իր բախտը չի բերում տոնակատարությունների գործում։ Զորս կողմը բոլորը փսփսում են նախանշանների մասին։ Նախանշանները իրոք շատ վատ են՝ ճշմարտությունից չես փախչի։

Ուղիղ վեց տարի առաջ, երբ դեռևս թագավորում էր նրա հանգուցյալ պապը, նույնպես տեղի ունեցավ մի դեպք, որի մասին մեկ-մեկ պատահում է, որ հիշում ես։

Տոնում էին Մարիա Անտուանետայի հետ նրա ամուսնությունը։ Մեր Լյուդովիկոս XV-ը ցանկացավ թող փչել օտար-

երկրացիների աչքերին։ Չնայած ֆինանսական ծանր դրությանը, ժողովրդի կարիքներին, հերթական անբերրությունից հետո քաղցից առաջացած խռովություններին, դանձարանը ժլատություն չարեց՝ տոնահանդեսները ավելի քան քսան միլիոն նստեցին։ Բայց տոնը կատարեցին շատ ճոխ կերպով։ Խրախճանքը մի ամբողջ ամիս տևեց։ Արքունիքում այնպիսի պարահանդեսներ էին կազմակերպում, որպիսիք այսօր չես տեսնի։ Դամաները պարում էին վիթխարի պանյեով, անպայման երկայնափեշ տոնական զգեստներով։ Պաճուճազարդերով ու թանկարժեք քարերով երիզված բարձր սանրվածքները շողշողում էին մայր տաճարի գմբեթների նման։ Իսկ կավալերնե՞րը։ Նրանց զգեստներն այնքան էին ծանրաբեռնված ոսկյա զարդերով ու թանկարժեք իրերով, որ դեպի պարկետ էին ձգվում։ Թագավորի պաճուճանքը, համենայն դեպս, առնվազն քառասուն ֆունտ քաշ ուներ։ Այդպիսի զգեստով կարելի էր դնել մի քանի դյուզ՝ գյուղացիների հետ միասին։

Արքունիքից տոնահանդեսները տեղափոխեցին փողոց։ Ահա հենց այդտեղ էլ ամեն ինչ կատարվեց։

Մայիսի 31-ին Փարիզում հրավառություն սարքեցին։ Հրսկայական բազմություն հավաքվեց։ Մունիցիպալիտետը հոգ չտարավ կարգ ու կանոնի մասին, և հազարից ավելի քաղաքացիներ տրորվեցին ամբոխի ոտքերի կամ ձիերի սմբակների տակ։ Չարագուշակ ստվեր ընկավ Լյուդովիկոս XVI-ի և Մարիա Անտուանետայի դաշինքի վրա...

Թագավորը ցնցվեց։ Տհաճ սարսուռ անցավ մարմնով։ Իսկ ա՞յժմ։ Գանձարանը կրկին դատարկ է։ Սովահարների խռովությունները դարձյալ հուզում են երկիրը։ Եվ մի՞թե ինքը այնուամենայնիվ, հակառակ ամեն ինչի, միլիոններ չվատնեց տոնակատարությունների համար։ Սակայն դարձյալ ոչինչ չըստացվեց։ Միլիոնները քամուն տրվեցին։ Ոչ ոք բանի տեղ չդրեց։

Իրոք որ, թագադրությունը հսկայական գումարով դրամ խլեց։ Փարիզից Ռեյմս տանող ճանապարհին վերակառուցեցին բոլոր կամուրջները, իսկ Սուասոնում քանդեցին քաղաքի դարպասը, որովհետև տասնութ ոտնաչափ բարձրությամբ թագավորական կառքը դրա միջով չէր անցնում։ Այդ աշ-

խատանքի համար քշելով հավաքեցին հազարավոր դյուղացիների։ Ռեյմսի ճանապարհն այնպես բանուկ դարձավ, ինչպես Փարիզի Սենտ-Օնորե փողոցը. նրանով երթևեկում էր մոտավորապես քսան հազար փոստաձի։ Բուն Ռեյմսի մասին, իհարկե, խոսելու հարկ էլ չկա։ Գոթական վիթխարի տաճարը վերանորոգվեց ու նորացվեց։ Տաճարում թագուհու համար կահավորեցին առանձին շենք՝ հերթապահության սենյակով, ուր տեղավորվեց պահակախումբը։ Անհավատալի պերճություն ստեղծելու համար նույնիսկ զուգարանները վերասարքավորեցին անգլիական ձևով։ Բուն թագադրությունը կազմակերպեցին ըստ հնարավորին ավելի շքեղորեն։ Եվ արդյունքը... Ոչի՛նչ։ Հանդիսատեսները սառը վերաբերմունք էին ցույց տալիս։ Իրեն՝ թագավորին, ոչ ոք չէր ուզում ողջունել ոչ այնտեղ, ոչ այստեղ՝ Փարիզի ճանապարհին։ «Կեցցե՛ թագավորը» բացականչություններ հազվադեպ էին լսվում և կեղծ էին թվում։ Նույնիսկ ցեխոտ գյուղացիները, որոնք տնտնում էին առուների մոտ, պերճ շքերթը ոչ միշտ էին իրենց հայացքին արժանացնում։ Իսկ ինչ վերաբերում է թագուհուն, ապա նրան դիմավորում էին սառցային լռությամբ, իսկ ճանապարհում խուլ քրթմնջյունով։ Ժողովուրդն ատում էր «ավստրուհուն»։ Նրան համարում էին բոլոր դժբախտությունների գլխավոր պատճառը։

Թագավորը խեթ-խեթ նայեց Մարիա Անտուանետային։ Նա նիրհում էր բարձերին հենված։ Նրա գունատ դեմքը մարմարակերտ էր թվում։ Նա շատ գեղեցիկ էր։ «Սատանան տանի,— մտածում էր Լյուդովիկոսը,— թերևս, իմ բարի ժողովուրդն այնքան էլ անիրավացի չէ։ Նա իրոք որ շատ շռայլող ու վատնող կին է... էլ ինչ քմահաճույքներ ասես, որ նրա մրտյով չեն անցնում։ Պարահանդեսներ, ձիարշավներ, մոլի թզբիախաղ... Նա թեթևարարությամբ հազարական լուիդորներ է նետում կանաչ մահուդին և պատրաստ է երեսունվեց ժամ շարունակ խաղալ... Իսկ որքա՞ն դրամ է վատնվում նրա սիրեցյալների թոշակների, խմբապարի ու պարգևների վրա... Որքա՞ն են յուրացնում ճարտարապետները, դերձակուհիները և ոսկերիչները... Եվ այդ ամենից հետո արի ու զարմացիր միջոցների մշտական պակասության վրա... Թագավորը նույ-

նիսկ կունչաց սրտնեղությունից։ Այո, տհաճություններ են գալիս ամեն կողմից։ Իսկ այստեղ էլ դեռ այդ տաղտկալի ցնցումները։ Ճանապարհը կարծես վերջ չունի։ Ժամանակի զգացողությունը վերացել է, հենց միայն լսվում են մտրակների շըրըխկոցը, անիվների թխկթխկոցը և զսպակների ճռռոցը։ Գոնե շուտ հասնեին Վերսալ...

Թագավորական կառաշարը դղրդում էր Փարիզի փողոցներով անցնելիս։ Անձրև էր մաղում։ Անթիվ կառքերի մեջ միապետի ընտանիքի վիթխարի ծածկակառքն աչքի էր ընկնում որպես հեքիաթային մի տապան։ Պալատականը թեքվեց նիրհող թագավորի կողմը։

— Ձերդ մեծություն, սը՛ր։

Լյուդովիկոսն աչքերը բացեց։

— Սը՛ր, դուք խնդրեցիք հիշեցնել... Ձերդ մեծությունն ուզում էր այցելել ձեր սուրբ նախահոր անունը կրող կոլեջը... Մենք Սեն-Ժակ փողոցում ենք...

Վա՜հ։ Ինքն իրոք մոռացել է։ Հիմա՞ր ձևականություն... Ինքը պետք է այցելի Լուի-լը-Գրան կոլեջը, այնտեղ իրեն ողջունելու են։ Եվ ոչ ոքի փույթը չէ, որ ինքը ճանապարհին սաստիկ հոգնել է, որ իր քունը տանում է։ Դե ինչ, ոչինչ չես անի։ Ինքը մտադիր չէ ուշանալու, թերևս, կարելի է նույնիսկ դուրս չգալ ծածկակառքից։ Բայց սովորույթը պետք է պահպանել։

Պալատականը կարգադրություն է անում առջևից դնացող կառքերի ֆորեյտորներին։

... Ահա նա, Լուի-լը-Գրանը, հռչակավոր կոլեջը, որի հովանավորը համարվում է Ֆրանսիայի թագավորը։ Կոլեջի մուտքի առջևի հրապարակն է դուրս եկել հոծ բազմություն՝ թե դաստիարակներ, թե աշակերտներ։ Ինչ-որ բան են բղավում, ծաղիկներ նետում։ Կառքերի հեղեղը կանգ է առնում։ Բոլորը սպասում են։ Բայց ո՛չ թագավորը, ո՛չ թագուհին չեն հեռանում իրենց բարձերից։ Այնժամ պատմուճանով ու կեղծամով բարձրահասակ մի մարդ նշան է անում։ Փոքրիկ թուլակազմ մի պատանի, գրեթե երեխա, արագորեն դուրս է գալիս սա-

ների առողանից։ Նրա ձեռքին խողովակաձև փաթաթած մի թերթ թուղթ կա։ Տղան գունատ է և նկատելիորեն հուզվում է։

— Նայեցեք, տիրուհի, ինչ վտիտ էակ է,— գլխով ցույց է տալիս Լյուդովիկոսը Մարիա Անտուանետային։— Դա, հավանաբար, նրանց առաջին աշակերտն է...

Կոլեջի սիրեցյալը մոտենում է ծածկակառքին։ Թեթևակի նայելով ճանապարհամերձ ցեխին, նա ծունկի է գալիս և սկսում կարդալ։ Բայց նրա ձայնը մեղմ ու անհավասար է։ Անիվները ճռռում են, ֆորեյտորները հայհոյում են, հարևան կառքերում ինչ-որ բանի մասին բարձրաձայն վիճում են։ Լյուդովիկոսը նայում է ընթերցողին, բայց բառերը գրեթե չի հասկանում։ Ողջույններ, բարեմաղթումներ, ռեմոնտրանսներ... Աշակերտն աչքերը կտրում է թղթից։ Մի պահ միապետի հայացքը հանդիպում է նրա հայացքին։ Նա ունի պայծառ և ուշադիր, պողպատե շեղբի պես սառն ու թափանցող աչքեր։ Թագավորը տհաճություն է զգում։ Ի՞նչ... Նա կարծես ուզում է շարունակե՞լ։ Բավական է։ Ձանձրացե՛լ եմ։ Գրողի ծոցը գնա՛ այդ գունատ վաղածին երեխան իր տհաճ աչքերի հետ։ Թագավորը ոռնում է պալատականի արմունկը և ինչ-որ բան փսփսում... Կառաշարն աղմուկով ճամփա է ընկնում...

Աշակերտն ընդհատում է ընթերցումը, նա մնում է ծնկաչոք վիճակում։ Նրա աչքերին ակամա արցունքներ են երևում։ Կամ, թերևս, դրանք անձրևի կաթիլնե՞ր են... Նրա մոտ է վազում երկարամազ մի սան։

— Մի՛ վշտանա, Մաքսիմիլիան։ Քեզ զուր չեն Հռոմայեցի անվանել. տոկուն եղիր, և դու հաջողություն կունենաս։

Մաքսիմիլիանը վեր է թռչում։ Պատառոտված գուլպաների վրայից ցեխը հոսելով թափվում է կոշիկների վրա։ Արագ արցունքը սրբելով, նա խստորեն նայում է ընկերոջը։

— Քեզ ո՞վ ասաց, թե ես վշտացել եմ, Քամիլ։ Ընդհակառակը, ես հպարտ եմ... Չէ՞ որ ես արժանացա ամենամեծ պատվի, ճիշտ չէ՞, արդյոք։— Եվ ապա, մի ակնթարթ լռելով, նա ավելացնում է։— Բայց հիշիր, թե այսօր ինչ օր է. այսօր 1775 թվականի հունիսի 12-ն է։ Երբեք մի մոռացիր այս օրը և, եթե պետք լինի, ինձ հիշեցրու դրա մասին...

ՄԱՍ Ի

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՈՐԴԻՆ

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Նրա անունը Մաքսիմիլիան Մարի Իսիդոր դը Ռոբեսպիեր էր։ Նրա տասնյոթ տարին հենց նոր էր լրացել. նա ծնվել է 1758 թվականի մայիսի 6-ին։ Յոթերորդ տարին էր այն ժամանակվանից, ինչ նա հեռացավ իր հայրենիքից՝ խաղաղ Առասից, հեռացավ առանց մեծ ցանկության, որովհետև այնտեղ մնացին իր բոլոր մերձավոր ու սիրելի մարդիկ։ Բայց Մաքսիմիլիանը բուռն ցանկությամբ ուզում էր գտնել իր տեղը կյանքում։ Նա շուտ հասկացավ, որ միայն կրթությունն իրեն ապագա կտա։ Ուստի, աղքատ ու որբ, նա, ոչ մի բոպե չտատանվելով, կառչեց մայրաքաղաքում այնպիսի կոլեջում սովորելու հնարավորությանը, ինչպիսին Լուի-լը-Գրանն էր՝ չէ՞ որ այնտեղից ուղիղ ճանապարհ էր գնում դեպի համալսարան։

Կոլեջում տեղն ու թոշակը Առասի եպիսկոպոսի օգնությամբ ձեռք բերեց Մաքսիմիլիանի հոգատար խնամակալը՝ Կառոպապը. հենց նա էլ մեկնողին տվեց կյանքի առաջին խորհուրդները։

Լուի-լը-Գրա՜ն։ Որքա՜ն սրտահույզ հույսեր էր կապում այդ կոլեջի հետ առասցի վտիտ տղան։ Եվ որքա՜ն հիասթափություններ էին սպասում նրան։

... Հինգհարկանի մռայլ գորշ շենք՝ իսկական մի բանտ։ Վանդակապատ լուսամուտներ, վանդակներ՝ ցանկապատի փոխարեն։ Դարպասն ու դռները՝ փակի տակ։ Մարդիկ ևս փակի տակ։ Հսկիչները շներից ավելի վատ են, դաստիարակները կեղծ բարեպաշտ ճգնավորներ՝ մռայլ կերպարանքով և մեղմանուշ խոսքերը շուրթերին։ Վանական կարգապահություն։ Եվ վանական կյանք սաների համար. այնպես են

կերակրում, որ մարդու փորը սովածությունից մեջքին է կպնում։

Բայց Լուի-լը-Գրանը դժեղ կամք կոփելու դպրոց է։ Ինտերնատը ինքնամփոփ ու վեհերոտ տղային ստիպեց հասակակիցների հետ շփման մեջ մտնել։ Մաքսիմիլիանը պատվով բռնեց կյանքի այդ առաջին քննությունը։

Նա լավ ընկերոջ համբավ ձեռք բերեց։

Սակայն նա իր բոլոր ուսումնակից ընկերներից ինչպես հարկն է մտերմացավ միայն մեկի՝ երկարամազ Քամիլ Դեմուլենի հետ։

Քամիլը շատ բանով Մաքսիմիլիանի հակապատկերն էր թվում, և, թերևս, հենց այդ հանգամանքն օգնեց նրանց բարեկամանալուն։ Կրակոտ ու փոփոխամիտ, մերթ չափազանց ուրախ, մերթ անչափ տխուր, Քամիլն աչքի էր ընկնում իր հայացքների ու դատողությունների համակրելի անկեղծությամբ։ Լինելով շնորհալի, բայց անհավասարակշիռ մարդ, նա ամենևին չէր ձգտում առաջին աշակերտը դառնալու։ Մաքսիմիլիանը արտասովոր ընդունակություններ ունենալով, շատ աշխատասեր ու ժրաջան էր։ Բնությունը նրան օժտել էր փառասիրությամբ ու տոկունությամբ՝ ի տարբերություն Դեմուլենի, նա կարողանում էր համբերությամբ ու համառորեն հասնել առաջադրված նպատակին։ Սկզբում Քամիլը հակամետ էր թեթևակի ծաղրելու փոքր-ինչ խստականոն առասցուն, բայց հետո ամբողջ հոգով մտերմացավ նրա հետ և նույնիսկ ընդունեց նրա գերազանցությունը։

Միասին ժամանակ անցկացնելով նրանք կարծիքներ էին փոխանակում դաստիարակների և կարդացած գրքերի մասին։ Երբեմն խոսում էին անցյալի մասին։ Քամիլը շուտով իմացավ իր ընկերոջ մանկության ողբերգությունը։ Նա նրան պատմեց, թե ինչպես է մեռել մայրը, ինչպես հայրը գնացել ու կործանվել է օտարության մեջ։ Զղայուն Քամիլը չէր կարողանում արցունքները զսպել, լսելով, որ Մաքսիմիլիանն ընդամենը յոթ տարեկան հասակում դարձել է ավագն ընտանիքում, որի կրտսեր անդամը, պստլիկ Օգյուստենը, ընդամենը երկու տարեկան էր։

— Ահա թե ինչու դու այդպես ինքնամփոփ ու օտարացած ես թվում,— շշնջաց Դեմուլենը, սեղմելով ընկերոջ ձեռքը։

— Այո, ես վաղ զգացի իմ պատասխանատվությունը,— մտախոհ կերպով ասաց Մաքսիմիլիանը։— Հողսերը շատ էին։ Ճիշտ է, շուտով ազգականները մեզ օգնեցին. քույրերիս վերցրին հորաքույրերս, իսկ ես ու եղբայրս տեղափոխվեցինք պապիս մոտ։ Բայց ես մանկություն չեմ իմացել՝ ինձ օտար էին խաղերն ու զվարճությունները։ Դպրոցից և տնային գործերից ազատ ժամանակ հարկավոր էր մի քիչ գիրք կարդալ։ Իմ միակ զվարճությունը թռչուններ խնամելն էր։ Խոստովանում եմ քեզ, ես շատ էի սիրում երաշտահավեր, մոխրագույն կտցարներ, խեղճ ծիտիկներ և նրանց հետ ավելի շատ էի բարեկամություն անում, քան երեխաների հետ։ Այն ժամանակ ինձ համար ոչ մի ուրիշ բան այնքան ուրախալի չէր թվում, որքան թռչուններ կերակրելը, ընտելացնելը և նրանց պահպանելը։

Քամիլը զարմանքով էր նայում իր զրուցակցին։ Նա ուզում էր նրա մասին ավելի շատ բան իմանալ նրան ավելի լավ հասկանալու համար։

— Մաքսիմիլիան,— հարցրեց նա մի անգամ,— ինչո՞ւ դու քո ազգանվանն ավելացնում ես «դը» մասնիկը, որը գրում ես առանձին։ Մի՞թե դու ազնվականներից ես սերվում։ Չէ՞ որ ես էլ կարող էի գրել դը Մուլեն, բայց իմ հայրը Գիզում մագիստրատուրայի մանր աստիճանավոր է, ուստի և մենք պարզապես Դեմուլեններ ենք...

Մաքսիմիլիանը շիկնեց։ Քամիլը նրա ցավոտ տեղին էր հարվածել։ Նա իրոք ստորագրում էր «դը Ռորեսպիեր», ասես դուքս կամ մարկիզ լիներ. դա նրա մանկական փոքրիկ փառասիրությունն էր։ Դե ինչ, բարեկամին պետք է ամեն ինչ խոստովանել։

— Ոչ, Քամիլ,— պատասխանեց նա մի փոքր մտորելուց հետո։— Դա միայն վատ սովորություն է։ Մենք ճիշտ այնպիսի Դեռորեսպիերներ ենք, ինչպես դուք Դեմուլեններ։ Կարծում են, որ մեր տոհմը սերվում է Իռլանդիայից։ Սակայն իմ նախնիները Ֆրանսիայում շատ վաղուց են բնակություն հաստատել։ Արդեն տասնվեցերորդ դարում այդ ազգանունով նոտարներ են հիշատակվում Առասի մոտերքում՝ Կարվեն ավա-

նում։ Բոլոր Ռորեսպիերները սերնդե-սերունդ դատական աշխատողներ են եղել։ Դու ուզում ես իմանալ, թե «դը Ռորեսպիեր» ձևը որտեղի՞ց է հայտնվել։ Խնդրեմ։ Ազգանվան այդ իրավունքն ստացել է իմ հայրական պապի եղբայրը, ոմն Իվ Ռորեսպիեր, որը էպինուայում հարկահավաք էր և իր ա ն ձ ն ա կ ա ն ազնվականության համար հարկային վարչության աստիճանավորներին մեծ գումար վճարեց։ Նա ուներ նույնիսկ զինանշան՝ ոսկեգույն ֆոնի վրա սև լանջագոտի աջ կողմում, արծաթափայլ թևով... Բանը հենց այդպես է եղել, բարեկամ... Իհարկե, հորս վրա այդ արտոնությունն արդեն չէր տարածվում՝ նա պարզապես Ֆրանսուա Դեռորեսպիեր էր, Արտուայի խորհրդի հնատոհմ մի փաստաբան։ Մորս հայրը՝ բարեգութ Կառոն, գարեջրավաճառ է Ռուվիլում։ Իսկ ես հիմար ինքնասիրությունից դրդված, որից ոչ մի կերպ չեմ կարողանում հրաժարվել, Իվի նման ստորագրում եմ «դը Ռորեսպիեր»։ Ահա և ամենը։ Ես այս մասին այսպես մանրամասնորեն պատմեցի քեզ, որ այսուհետև երբեք սրան չվերադառնամ։ Հասկացա՞ր։ Դեհ, ուրեմն բավական է։ Խոսենք որևէ ուրիշ բանի մասին...

«Դը» մասնիկի հարցը երկու պատանի սաներին հուզեց ոչ պատահաբար՝ դա հենց կյանքն էր։

Հին կարգերի Ֆրանսիան դարեր շարունակ արտոնությունների պետություն էր։

Ովքեր իրենց ազգանունից առաջ դնում էին «դը» մասնիկը, կոչվում էին ա զ ն վ ա կ ա ն ն ե ր. մյուս բոլոր մարդիկ համարվում էին հ ա ր կ ա տ ու ն ե ր։

Ազնվականները երկրի տեր ու տիրականն էին։ Ֆրանսիայի բնակչության մեկ տոկոսից էլ պակաս լինելով, նրանք տիրում էին հողի երկու երրորդական մասին և ազատված էին պետության օգտին տրվող հարկերից ու կատարվող պարհակներից։ Բացարձակ միապետությունը դրանց մտցնում էր երկու բարձր արտոնյալ դասերի՝ հոգևորականության և ազնվականության մեջ։

Ֆրանսիացիների մնացած ինն տունինը տոկոսը մտնում էր երրորդ՝ հարկատու դասի մեջ։

«Ի՞նչ է երրորդ դասը»,— գրում էր Սիեյս վանահայրը հեղափոխությունից քիչ առաջ։ «Ամե՛ն ինչ։ Ի՞նչ էր նա քաղաքական տեսակետից մինչև այժմ։ Ոչի՛նչ»։ Այս խոսքերը Սիեյսին հռչակ բերեցին, և իսկապես, դժվար էր ավելի դիպուկ ու լակոնիկ բնորոշել հարկատու դասի էությունն ու ստատուսը նախահեղափոխական Ֆրանսիայում։

Այն ամեն ինչ էր, որովհետև կազմված էր ստեղծագործող, կենսական բարիքներ ստեղծող կամ դրանց ստեղծման պրոցեսը կազմակերպող մարդկանցից։

Այն ոչինչ էր, որովհետև միապետությունը և արտոնյալները նրան ամբողջապես մեկուսացրել էին երկրի քաղաքական ու հասարակական կյանքին մասնակցելուց։

Այդ դասի մեջ էին մտնում քսանմեկ միլիոն գյուղացիներ, հարյուր հազարավոր արհեստավորներ, տնայնագործներ, մանուֆակտուրային բանվորներ, տասնյակ հազարավոր ձեռնարկատերեր, ֆինանսիստներ, առևտրականներ։

Այդ մարդիկ ունեին այլատեսակ, իսկ երբեմն էլ հակառակ ջահեր։ Բայց նրանք բոլորն էլ ունեին մի ընդհանուր թշնամի՝ միահեծանությունը և նրա կողմից հովանավորվող դասերը։ Քանի դեռ միահեծանությունը պահպանում էր ազնվազարմների արտոնությունները, հարկատուները կամա-ակամա պետք է դաշնակիցներ մնային։

Մաքսիմիլիան Ռոբեսպիերը միշտ կլինի իր դասի հավատարիմ զավակը։ Կանցնի ժամանակ, և նա արհամարհանքով դեն կնետի «դը» մասնիկը, որ պատանեկության տարիներին այնքան հրապուրիչ էր թվում։ Ուսուցիչը նրա աչքերը կբացի շատ, անչափ շատ բաներ տեսնելու համար։

Ուսուցիչը Ժան Ժակ Ռուսոն էր։ Մաքսիմիլիանը նրա էրկերին առաջին անգամ ծանոթացավ Լուի-լը-Գրանի պատերի մեջ։

Կոլեջում, որը գտնվում էր կաթոլիկական հոգևորականության ձեռքին, ուսումնական ծրագրերն այնպես էին կազմվում, որ սաներին ըստ հնարավորության հեռու պահեին արդիականության հովերից։ Գլխավոր տեղը հատկացվում էր դասական պատմությանն ու գրականությանը, լատինական ու հունա-

կան դժվարին տեքստերի անգիր սովորելուն։ Անհոգ Քամիլը ձանձրանում էր, սատանայի անունով հայհոյում և վատ թըվանշաններ ստանում։ Ջանասեր Մաքսիմիլիանը սովորում էր ինքնամոռացության հասնող եռանդով։ Նա կարողանում էր գրքերում և ուսուցիչների զբույցներում գտնել այն, ինչ մյուսները չէին նկատում։ Նրան ոգևորում էին անտիկ քաղաքացիների ազատասիրության ու հերոսության օրինակները։ Աթենք, Սպարտա, Հռոմ... Հատկապես Հռոմը։ Գրակքոս եղբայրներ, անվեհեր Բրուտոս, Սպարտակ... Ինչպիսի՜ մարդիկ։ Ինչպիսի՜ գործեր։

Դասատուներից մեկը, Էրիվո վանահայրը, որը բարեհաճ էր դեպի Մաքսիմիլիանը, պաշտպանում էր նրա հափշտակությունը հեռավոր անցյալով և նրան նույնիսկ Հռոմայեցի անվանեց։ Պատվարժան վանահայրը երազում էր իր աշակերտին առաջնորդել հունա-լատինական բանասիրության խաղաղ շավիղով։

Բայց ուրիշ բան ստացվեց։ Շուտով Մաքսիմիլիանը ձեռնամուխ եղավ ժամանակակից փիլիսոփայության ուսումնասիրմանը, և անտիկ աշխարհն իսկույնևեթ երկրորդ պլան մղվեց։

Հեղափոխությունը գործնականում սկսվելուց առաջ մըտքերում կատարվեց։ Երրորդ դասը, իր իրավունքների համար պայքարելով, առաջ քաշեց փիլիսոփաների, հրապարակախոսների, գիտնականների մի համաստեղություն, ովքեր մարդկությանը գաղափարներ տվեցին, որոնք խարխլեցին հին աշխարհի բոլոր հիմքերը՝ նրա կրոնը, նրա բարոյականությունը, նրա հիմնարկությունները։

Մոնտեսքյոն և Վոլտերը, Դիդրոն և Հելվեցիուսը, Տյուրգոն և Քենեն, Մաբլին և Մորելին՝ Լուսավորության դարաշրջանի ականավոր գործիչները, չնայած իրենց հայացքների տարբերություններին, կատաղի բանավեճերին, որ նրանք Էրբեմն վարում էին միմյանց հետ, ներկայացնում էին պայքարի ելած բուրժուազիայի և պլեբեյության առաջավոր, ռադիկալական գաղափարախոսությունը։

Իր ժողովրդականությամբ հատկապես աչքի էր ընկնում

հավասարության ու ժողովրդի սուվերենության մեծ ջատագով, ժնևի քաղաքացի Ժան Ժակ Ռուսոն։ Նրան կարդում էր ամբողջ Ֆրանսիան։ Նա հասարակության առաջավոր խավերի, ամենից առաջ՝ երիտասարդության մտքերի տիրակալն էր։

Արդյոք զարմանալի՞ է, որ լուսավորիչների գաղափարները մուտք գործեցին կոլեջ։ Զարմանալի՞ է, որ առաջադեմ փիլիսոփաների երկերը դարձան Մաքսիմիլիանի հոգևոր սնունդը։

Ուսուցիչները ըմբոստ ուսմունքների դեմ կենտրոնացրին իրենց քարոզների ամբողջ կրակը։ Հարգարժան էրիվոն բավական ջանքեր գործադրեց Մաքսիմիլիանի հետաքրքրությունը հեռու պահելու «անառողջ» հովերից։ Ամեն ինչ ապարդյուն անցավ։ Մոնտեսքյոյից ու Վոլտերից պատանի Հռոմայեցին անցավ Ռուսոյին, և վերջինս դրավեց նրան ամբողջովին, առանց մնացորդի։

Գիշեր է։ Ննջասրահում լսվում է համաչափ խռմփոց։ Մահճակալի մոտ, փոքրիկ սեղանի վրա մենավոր առկայծում է հազիվ նշմարելի լույսը։ Մոմի առաջը կտրված է երեք կողմից։ Հազիվ խշխշում են քրքրված էջերը։

Մաքսիմիլիանը լարված կարդում է։

«... Առաջին մարդը, ով, մի հողակտոր ցանկապատելով, հանդգնեց ասել՝ «այս հողը ինձ է պատկանում», և գտավ մարդիկ, ովքեր այնքան միամիտ էին, որ հավատացին դրան, եղավ քաղաքացիական հասարակության իսկական հիմնադիրը։ Մարդկային ցեղից որքան հանցագործություններ, որքան պատերազմներ, որքան աղետներ ու սարսափներ կվաներ այն մարդը, ով, սահմանասյունները պոկելով կամ սահմանափոսերը լցնելով, բացականչեր, դիմելով մարդկանց, «Զգուշացե՛ք այդ խարերային հավատալուց։ Դուք կկործանվեք, եթե մոռանաք, որ հողի արգասիքները պատկանում են բոլորին, իսկ հողը՝ ոչ ոքի»։

Այս խորաթափանց խոսքերը պատանու համար մի նոր աշխարհ բացեցին, ստիպեցին ուրիշ աչքերով նայել ամբողջ շրջապատին։

Կոլեջի աղքատ թոշակառուն, ինքնասեր ու ծածկամիտ

տղան վաղուց սովորել էր լռելյայն դիտել։ Նա շատ վիշտ ու անարդարություններ տեսավ Առասում, է՛լ ավելի շատ այժմ։ Մանկության հեռավոր օրերին, Սկարպի ափերին զբոսնելով, Մաքսիմիլիանը պատահմամբ հանդիպում էր կեղտոտ, գջլտված, մարդկային կերպարանքը կորցրած հողագործների անփարատ չքավորությանն ու հուսահատությանը։ Մի՞թե կարելի է մոռանալ նրանց խշճուկ քողտիկները, նրանց սովահար, տանջված դեմքը։ Ռոբեսպիերը գիտեր, որ նրանց սնունդը քարթու հացն ու արմտիքն են, որ նրանք իրենց խղճուկ բերքի մեծ մասը տալիս են ուրիշներին։ Բայց նա հիշում էր նաև ապարանքն Առասի եպիսկոպոս պարոն Կոնզիեի, որին՝ պապի հետ միասին գնացել էր շնորհակալություն հայտնելու կոլեջում իրեն տեղավորելու համար։ Հիշում էր նրա հյուրասենյակի շքեղությունը, զգեստավորման նրբաճաշակությունը և այն նեղլիկ, փափկասուն, սպիտակ ձեռքը, որը համբուրելով, ինքը հաճելի, հազիվ նկատելի բուրմունք զգաց։

Իսկ այստեղ, Փարիզո՞ւմ։ Ինչպիսի՞ ցնցող հակադրություն կենտրոնի մաքուր, գեղեցիկ թաղամասերի և ծայրամասերի, բանվորական արվարձանների միջև։ Թվում է, թե գրանք երկու տարբեր աշխարհներ են։ Իր ընկերոջ հետ զբոսնելիս Մաքսիմիլիանը բազմիցս հանդիպում էր վտիտ, սևացած, ցնցոտիավոր մարդկանց խմբերի. այդ մարդիկ նման էին մանկության տարիներին նրա տեսած գյուղացիներին. նա գիտեր, որ դրանք մանուֆակտուրաների թշվառ բանվորներ են, ովքեր գրեթե օր ու գիշեր աշխատում են խղճուկ ապրուստ վաստակելու համար։ Նա ակամայից այդ գջլտված մարդկանց համեմատում էր արքայական կառաշարի ոսկեպատված տիկինների ու պարոնների հետ։

Ինչո՞ւ, ինչո՞ւ այդ ամենն այդպես է։ Երբեմն Մաքսիմիլիանը երկար ժամանակ գլուխ էր կոտրում անլուծելի թվացող որևէ խնդրի վրա։ Այժմ նա ծան ծակի երկերում գտնում էր առեղծվածի լուծումը։ Խախտվել է բնական իրավունքը, բացատրում էր ուսուցիչը։ Ուժեղ ու անգութ մարդիկ գավթել են այն, ինչ պետք է պատկանի բոլորին։ Հասարակությունն այնքան առաջ է գնացել, անարդարությունն այնքան է համակել նրան, որ անհնարին է ոսկե դարին վերադառնալը։ Բայց

եթե չի կարելի ոչնչացնել մասնավոր սեփականությունը, եթե չի կարելի մարդկանց վերադարձնել լիակատար հավասարության, ապա կարելի է և պետք է վերացնել գոյություն ունեցող ծայրահեղ անհավասարությունը կամ, համենայն դեպս, զգալիորեն նվազեցնել այն։ Հասարակական խելամիտ դաշինք միապետի՝ հպատակների շահերի արտահայտիչի հետ՝ ահա այդ խնդրի լուծման ուղին։

Ինչպե՞ս ամեն ինչ պարզ է, տրամաբանական։ Եվ, որ գլխավորն է, միանգամայն իրականանալի։ Նույնիսկ կորչում էր Լյուդովիկոս XVI-ի դիմավորման մասին հիշելիս առաջացող դառնությունը. չէ՞ որ նոր թագավորից բարենորոգություններ էին սպասում, նրա վրա մեծ հույսեր էին դնում։ Եվ ով գիտե, թերևս, Մաքսիմիլիանի անձնական տպավորությունը իրականությանը չէր համապատասխանում, թերևս, անկենդան հայացքով հաստամարմին այդ մարդը ընդունակ կլինի հասկանալու և իրականացնելու ուսուցչի ծրագիրը։

Հաստամարմինն ակնհայտորեն չէր ուզում արդարացնել պատանի Ռոբեսպիերի հույսերը։ 1776 թվականի մայիսին երկիրը վրդովվել էր բարենորոգիչ-մինիստր Տյուրգոյի հրաժարականի լուրը լսելով։ Այդ նորությունը քննարկվում էր ամենուրեք, այդ թվում Լուի-լը-Գրանում։ Ասում էին, թե ամեն ինչի պատճառը պալատական ինտրիգն է, որին մասնակցում է թագուհին։ Իրականում գործն ավելի լուրջ էր և նրա հիմքն՝ անհամեմատ ավելի խորը։

Շնորհազուրկ մինիստրն արտասովոր մարդ էր։ Ֆիզիոկրատների հետևորդ, Լուսավորության գաղափարներով համակված, նա Ֆրանսիայում տեղի ունեցող պրոցեսների էությունը շատերից ավելի լավ էր տեսնում ու հասկանում։

Նա տեսնում էր, որ երկիրը սուր կոնֆլիկտի մեջ է մտել ռեգլամենտների ու սահմանափակումների ֆեոդալական սիստեմի հետ։

Նա հասկանում էր, որ բացարձակ միապետության համար սարսափելի փտանգ պարունակող սոցիալական հակասությունները կարելի է թուլացնել դասերի անհավասարությունը նվազեցնելով և հարկերի բեռի ավելի հավասարաչափ բաշխում սահմանելով միայն։ Ֆինանսների գլխավոր վերահսկիչ դառ-

նալով Տյուրգոն մի շարք կարևոր բարենորոգումներ կատարեց, որոնք, եթե ուժի մեջ մնային, կարող էին նպաստել կապիտալիզմի զարգացմանը և սկզբնական շրջանում շատ սուր անկյուններ հարթել։ Տյուրգոն վերացրեց հացահատիկի առևտրի սահմանափակումները, լիկվիդացրեց կոռը, ոչնչացրեց համքարային կորպորացիաները։ Առևտրա-արդյունաբերական գործունեության շատ տեսակներ ազատվում էին ֆեոդալական խնամակալությունից։ Բայց, միաժամանակ, ցանկանալով ֆինանսական ծանր դրությունից դուրս գալու ելք գտնել, բարենորոգիչ մինիստրը ոտնձգություն կատարեց սրբության սրբոցի դեմ և նախագծեց արտոնյալ դասերի վրա մշտական հարկ դնելու։ Հենց այդ էլ նրան կործանեց։

Պալատականները զայրանում ու պահանջում էին խստորեն պատժել մինիստրին։ Բաստի՛լ ուղարկել նրան։ Շղթայակապե՛լ։ Տե՛ս, թե ի՛նչ է որոշել։ Պալատական կամարիլյայի տրամադրությունների ձայնափողը դարձավ թագուհին։ Թույլ ու անվճռական Լյուդովիկոսն իսկույնևեթ տեղի տվեց։ Գլխավոր վերահսկիչին չբանտարկեցին շղթայակապ, բայց նրան անհապաղ պաշտոնաթող արեցին։ Բոլոր բարենորոգությունները վերացվեցին։

Հռոմայեցուն ամենահակասական մաքեր էին հուզում։ Ինչո՞ւ այդպես չեն համընկնում տեսությունն ու իրականությունը։ Ինչո՞ւ պաշտոնից հեռացնում են հասարակության համար օգտակար մարդկանց և պաշտոնում թողնում նրանց, ովքեր նրան վնաս են տալիս։ Ինչո՞ւ ամբողջ երկրով մեկ զյուղացիական հուզումներ են տեղի ունենում։ Ռուսոյի աշխատություններին ծանոթանալուց հետո շատ բան հասկանալի թվաց։ Եվ այնուամենայնիվ... Կյանքն ընթանում էր ամենևին ոչ այն իդեալական ուղիով, ինչպես նախագուշակում էր «Հասարակական դաշինքը»։ Ռուսոյի տրակտատները պատասխան չէին տալիս բոլոր հարցերին։ Ժան Ժակի հեգնող միտքը բորբոքում էր երևակայությունը, բայց Մաքսիմիլիանը չէր կարողանում լիովին բացահայտել այն։ Ո՞վ կբացատրի նրան ամեն ինչ մինչև վերջ։ Իհարկե, ոչ նրա դաստիարակները։ Եվ դարձյալ նա դիշերները մինչև լույս խորասուզվում է ուսուցչի գրքերի

մեջ, կրկին վերընթերցում այն, ինչ արդեն բազմիցս կարդացել է։

Եվ հանկարծ որոտի ճայթմունքն ապշեցնում է նրան։ Կայծակի պայծառ փայլատակումը շլացնում է ուղեղը... Գրքի էջը դողում է ձեռքին... Ահա այն, ինչ ինքը որոնում և չէր կարողանում գտնել։ Ահա այն խոսքերը, որոնք արտահայտում են ամեն թերասվածն ու թերըմբռնվածը.

«Մենք մոտենում ենք ճգնաժամին և հեղափոխության դարաշրջանին...»

... Մաքսիմիլիանը նստել է մահճակալին՝ արձանի պես քարացած։ Նա չի տեսնում, որ մոմը մինչև վերջ այրվել է ու մարել։ Նա այլևս ոչինչ չի տեսնում ու չի զգում։ Նա այժմ միայն մի բան գիտի՝ իրեն անհրաժեշտ է, միանգամայն անհրաժեշտ է հանդիպել ուսուցչին ու խոսել նրա հետ։ Ինչ էլ լինի, ինքը կհասնի դրան։

Նա ավելի ու ավելի մտացիր ու մարդախույս է դառնում։ Ընկերները նրան չեն ճանաչում։ Քամիլը երկար ժամանակ և ապարդյուն փորձում է իմանալ անհասկանալի փոփոխության պատճառը։ Բայց Մաքսիմիլիանը կարճ է պատասխանում։ Ո՛չ, նույնիսկ Քամիլին ինքը չի կարող վստահել ամենանվիրական բանը, այն, ինչի մասին պետք է խոսել միայն ուսուցչի հետ։ Դեմուլենը ջղայնացած ուսերը թոթվում է։ Մի սրան տեսե՛ք։ Աշխարհը լայն ու ընդարձակ է։ Մեր գլխին քիթը տնկող էլ եղավ։ Առաջին աշակերտն է... Նրանից ավելի հետաքրքրական մարդիկ էլ կան։ Ահա, օրինակ, Ֆրերոնը՝ ուրախ, անհոգ պատանի է, նա դրամ ունի։ Նրա հետ կարելի է լավ ժամանակ անցկացնել։

Եվ երկարամազ Քամիլն այժմ ավելի ու ավելի հաճախ է մեկուսանում Ֆրերոնի հետ։ Նա դեռ երբեմն խեթ-խեթ նայում է մոտիկ անցյալի իր ընկերոջը։ Նա ի՞նչ է։ Խանդո՞ւմ է։ Տանջվո՞ւմ է խղճի խայթից։ Ո՛չ, ամենևին։ Թվում է, նա իրեն ոչ մի բանի մեջ մեղավոր չի համարում։ Դեհ, աստված նրա հետ...

Կոլեջը ետևում է մնացել։ Նա այն ավարտեց պարգևով ու գովասանագրով։ Այժմ այնտեղ սովորում է Մաքսիմիլիանի կրտսեր եղբայրը՝ Օդյուստենը, որին հաջողվեց դրավել թափուր տեղը։

Հռոմայեցին քսան տարեկան է։ Դեռատի տղան պատանի դարձավ, գիմնազիստը՝ ուսանող։ Նա Սորբոնի իրավաբանական ֆակուլտետում դասախոսություններ է լսում։ Առաջվա պես Մաքսիմիլիանը ամբողջովին զբաղված է ուսումով։ Նա բարեկամներ չունի։ Քամիլին նա չի հանդիպում։ Իր ուսումնակից ընկերներին բարձրից է նայում։

Հիմարնե՛ր։ Ինչո՞վ են զբաղված նրանք։ Նրանք դասախոսությունները բաց են թողնում և անփույթ կյանք վարում։ Գինարբուքն ու սիրային արկածները հերթափոխելով, նրանք մի քանի տարի նստում են միևնույն կուրսում և պարապմունքները համարում իբրև մի ծանր բեռ։ Բայց այդ դեպքում էլ ինչո՞ւ սովորել։ Մաքսիմիլիանն այդ հասկանալ չի կարող։

Ոչ, նա այդպիսին չէ։ Նա միշտ խստապահանջ է իր նկատմամբ։ Նա շատ տնտեսող է. ասենք, նրա միջոցներն այնքան չնչին են, որ խեղճ թոշակառուն առանց ծայրահեղ խնայողության ապրել չի կարող։ Նա, որ այնպես խնամքով հետևում է իր հագուստին, նույնիսկ մի կարգին կոստյում չունի։

Դեհ, հետո ի՞նչ։ Թերևս, դա ավելի լավ է՝ նա միշտ պատշաճ պատրվակ ունի հրաժարվելու անցանկալի հանդիպումից։ Իսկ այն այցելության համար, որի մասին նա այնպես երազում է, իրեն տոնական կոստյում պետք չէ։

Մաքսիմիլիանն իմացավ, թե Ռուսոն որտեղ է բնակվում։ Այժմ նա հաճախ էր գնում Պլատրիեր փողոցն ու հետևում մութ ճակատամուտքին։ Այնտեղ, հինգերորդ հարկում, ձեղնահարկում ապրում է ուսուցիչը... Ամեն օր քանի՞-քանի մարդիկ էին անցնում այդ մուտքից։ Բայց Մաքսիմիլիանն այդպես էլ նրան չտեսավ։ Պատանին չգիտեր, որ ծան ծակը ծանր հիվանդ էր։

Մաքսիմիլիանը ջերմորեն հավատում էր իր ապագա պրոֆեսիային՝ փաստաբանի՝ բոլոր թշվառների ու կեղեքվածների դատապաշտպանի պրոֆեսիային։ Անտարակույս, ուսուցիչը

հավանություն կտար իր ընտրությանը։ Պատանի ուսանողը տարվեց իրավաբանական բարդ ու նուրբ գիտության ուսումնասիրությամբ։ Ինչպես և կոլեջում, նա զգում էր, որ ինքը միայն դասախոսություններով բավարարվել չի կարող։ Բայց հետաքրքրական գրականությունը քիչ էր։ Ուստի նա շատ մեծ ուրախությամբ մի բազմահատոր ժողովածուում դտավ «Քրեական օրենսդրության պլան» վերնագրով մի փոքր աշխատություն։ Կարդալով այն, Ռոբեսպիերն իսկույն հասկացավ, որ այդ աշխատությունը գրված է Բեքարիայի իրեն լավ ծանոթ «Տրակտատ հանցագործությունների և պատիժների մասին» երկի ազդեցության տակ։ Բայց ի՞նչ լեզու է։ Ինչպիսի՞ ձևակերպումներ։ Եվ, որ գլխավորն է, ինչպիսի՞ հետևություններ։ Հեղինակը հաստատում էր, որ օրենքները հարուստներն են ստեղծել աղքատներին կեղեքելու համար։ Նա հայտարարում էր, որ աղքատները չպետք է ենթարկվեն այդ օրենքներին, որ նրանք լիակատար իրավունք ունեն ըմբոստանալու իրենց հարստահարողների դեմ։ Մաքսիմիլիանն ապշել էր։ Այդ, անշուշտ, Ռուսոյի ոգով է գրված, բայց ինչպե՞ս սուր ու համարձակ է ասված։ Նա նայեց տիտղոսաթերթին՝ հեղինակի անունը չկար։ Դժվարությամբ հաջողվեց պարզել, որ գիրքը գրել է ոմն դոկտոր Մարատ։ Ռոբեսպիերը հետաքրքրվեց Մարատով և շուտով նրա մասին ինչ-որ բան իմացավ։ Պարզվեց, որ Ժան Պոլ Մարատն արդեն հասուն մարդ է՝ միանդամայն ձևավորված հայացքներով։ Երեք տարի առաջ, գրտնվելով Անգլիայում, նա լույս ընծայեց մի ուրիշ գիրք՝ «Ստրկության շղթաները», միահեծանության դեմ ուղղված մի վառ պամֆլետ։ Նա բժիշկ ու ֆիզիկոս էր, բժշկության դոկտորի կոչում ուներ և մի շարք աչքի ընկնող գիտական հայտնագործություններ էր կատարել։ Բայց գիտությունների թագավորական ակադեմիան Մարատի հետազոտություններին թշնամաբար վերաբերվեց, իսկ մամուլը նրա աշխատությունները մոռացության էր տալիս։ Այն ժամանակ Մաքսիմիլիանը, Մարատով հիացած, չէր էլ կասկածում, թե ապագան իրեն որքան կմոտեցնի այդ նշանավոր մարդուն։

Մեծ մտածող Ժան Ժակ Ռուսոն միշտ աղքատ էր։ Նա ապրեց անօթևան աստանդականի՝ ծանր հոգսերով, գառնությամբ, վիրավորանքներով և հիասթափություններով լի մի կյանք։ Մերությունն աննկատելիորեն վրա հասավ։ Եվ երբ այն հանկարծ ծանր հարված հասցրեց, զառամող, տկար ու անօգնական փիլիսոփան, որի հանճարը պաշտում էին Ֆրանսիան ու Եվրոպան, պարզ հասկացավ, որ իրեն սովամահություն է սպառնում, որովհետև ինքը չի կարող կերակրել իրեն ու կնոջը։ Նրա վրա ծանրացել էր երկրից արտաքսվելու հրովարտակը, նա օրեցօր սպասում էր ռեպրեսիաների և ոչինչ ձեռնարկելու ուժ չուներ։ Հուսահատությունը տիրել էր նրան։ Եվ հպարտ ձեռքը, որը երբեք բարերարություն չէր ընդունում, գրեց այնպիսի տողեր, որ ցնցեցին այն մարդկանց, որոնց հաջողվեց դրանք կարդալ։

Ռուսոն ապաստարան էր խնդրում, ուր նա կարողանար անցկացնել իր ծերության օրերը։ Նա համաձայնվում էր ցանկացած պայմաններին՝ թեկուզ իրեն կալանքի տակ պահեին, հիվանդանոցում տեղավորեին կամ անապատ ուղարկեին. թեկուզ իրեն շրջապատող մարդիկ անգութ ու կեղծավոր լինեին՝ ինքն անկեղծություն գտնելու հույս չունի. թեկուզ ինքն ունենար ամենաէժան հագուստ և ամենահասարակ կերակուր՝ ամենի ինչ ինքը կընդունի ուրախությամբ ու հեզությամբ։

Նա իր հոգու այդ ճիչն ուղղեց մի շարք անձանց, որոնց աջակցության վրա հույս ուներ։ Փիլիսոփայի աղերսանքին իսկույն արձագանքեց նրա անվանի երկրպագուներից մեկը՝ մարկիզ Ռենե դը Ժիրարդենը։

Ժիրարդենի տիրությունների մեջ էր մտնում Փարիզից ոչ հեռու գեղատեսիլ անտառների ու մարգագետինների գրկում տեղավորված Էրմենոնվիլ կալվածքը։ Մարկիզը հենց այստեղ էլ հրավիրում էր աղքատ փիլիսոփային։ Նրա տրամադրության տակ էր դրվում ղղյակի մոտ գտնվող մի տաղավար, որը ծածկված էր թավուտ պուրակի ստվերում, որի բնությունը պետք է Ժան Ժակին հիշեցներ նրա երկերում նկարագրված բնատեսարաններն ու պատկերները։

Արդյոք կարո՞ղ էր բնությունը պաշտող Ռուսոն չընդունել այդքան հրապուրիչ առաջարկությունը։ Նա համաձայնվեց

օգտվել մարկիզի հյուրասիրությունից։ Էրմենոնվիլը, որով նա այժմ փոխարինեց Պլատրիեր փողոցի իր ձեղնահարկը, դարձավ նրա վերջին ապաստարանը։

Ռուսոյի կոչը գաղտնի չմնաց։ Այն տարածվեց և շատ մարդիկ իմացան նրա մասին։ 1778 թվականի գարնանն այն կարդաց նաև Մաքսիմիլիան Ռոբեսպիերը։ Պատանու նյարդերը չդիմացան։ Հեկեկանքը սեղմեց նրա կուրծքը։ Նա ամբողջ օրն անցկացրեց սոսկալի տխրությամբ, դառն խորհրդածությունների մեջ։

Ահա թե ի՞նչ։ Պարզվում է, որ ուսուցիչը տանջվում էր, տանջվում էր ծանր կերպով, օգնության կարիք ուներ, թերևս, կործանման եզրին էր գտնվում։ Իսկ ինքը՞... Ինքը, որի համար ուսուցիչը աշխարհիս բոլոր մարդկանցից էլ ավելի թանկ է, ցցվում էր նրա բնակարանի ճակատամուտքի առջև ու երկչոտությամբ սպասում, չհամարձակվելով ներս մտնել։ Օ՜հ, եթե ինքն իմանա՞ր, եթե ինքը միայն կարողանար հասկանա՞լ։ Բայց էլ ի՞նչ հարկ կա խոսել անցյալի մասին։ Պետք է գործել։ Ինքը անպայման պետք է հանդիպի Ռուսոյին, այլապես, միևնույն է, իրեն տեղ չի գտնի, հանդիստ չի ունենա։ Պետք է գտնել ուսուցչին։ Պետք է թռչել նրա մոտ, ոչ մի արգելքի առաջ կանգ չառնելով։ Վ՞ալը։ Ո՛չ, մինչև վաղը ինքը սպասել չի կարող։ Եվ Մաքսիմիլիանը, Ռուսոյի նոր ապրելավայրն իմանալով, անհապաղ ճամփա ընկավ։

Էրմենոնվիլի պուրակի սովերախիտ ծառուղով դանդաղ զրոսնում էին երկու մարդ։ Բարձրահասակ վտիտ ծերունին հենվել էր ուշադիր, պայծառ աչքերով, նրբակազմ ու դալկադեմ պատանու ուսին։ Երկար տևեց նրանց ցածրաձայն զրույցը։ Նրանք մի քանի անգամ պտտվեցին պուրակի շուրջը, նստեցին Բարդիների կղզու մոտ կանաչ խոտի վրա, դարձյալ զբոսնեցին։ Ռուսոյի հայացքը պայծառացել էր, ճակատի կնճիռները՝ հարթվել։ Վերջին տարիներին նա դարձել էր ինքնամփոփ ու անհաղորդասեր, նոր մարդկանց հետ վատ էր հարմարվում։ Նաև այստեղ, Էրմենոնվիլում, ամեն կերպ խուսափում էր ձանձրալի զրուցակիցներից։ Բայց այդ պատանին,

արտաքուստ այդպես զուսպ ու ձգված, ինչ-որ բանով դրավեց նրան։ Ինչո՞վ։ Թերևս, անկեղծությա՞մբ, որ ճառագայթում էր նրա աչքերում։ Փոխադարձ վստահության անտեսանելի ալիքը պարուրեց նրանց։ Ժան Ժակը, որ զրույցի սկզբում շատ զուսպ էր, աննկատելիորեն վերափոխվեց։ Նա պատանի ուսանողի ընկերակցությամբ իրեն այնպես հանգիստ ու ազատ էր զգում։ Ուսանողը կյանքի արդարությո՞ւն է որոնում։ Նրան հարկավոր են Ժան Ժակի երկերում տեղ գտած բոլոր թերասությունների պատասխանները։ Լավ։ Նա նրան կհայտնի շատ այնպիսի բաներ, որոնց մասին ոչ ոքի հետ չի խոսել։ Հոտառությունը փիլիսոփային հուշում էր, որ նա իր գաղափարները հավատարիմ մարդու է հաղորդում։ Նա հավատում էր երիտասարդությանը։ Ապագան նրան է պատկանում։ Ուրեմն, թող այդ երիտասարդն ընդունի նրա կտակը...

Միայն երեկոյան դեմ, երբ զովն իջավ ծառուղիներին և իրիկնաշաղը նստեց կանաչ խոտերին, խոնջացած ուսուցիչն ավարտեց իր զեղումները անծանոթ աշակերտի առջև։ Հրաժեշտ տալիս նա գրկեց նրան, հաջողություն մաղթեց աշխատանքում և նրա ետևից ինքը փակեց պուրակի դռնակը։

Իսկ ինչ մնում է զրույցի բովանդակությանը, ապա այն հավետ դաղտնի մնաց։ Նրա մասին միայն երկու մարդ գիտեին։ Նրանցից մեկը՝ Ժան Ժակ Ռուսոն, այդ հանդիպումից ընդամենը մեկ ամիս հետո մեռավ, մյուսը՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, իրեն ասված խոսքերն ընդմիշտ պահեց իր սրտում և դրանց մասին ոչ ոքի չհայտնեց։

Նա միանգամայն փոխեց ապագայի մասին իր պլանները։ Մի ժամանակ, փառասիրությամբ համակված, նա ձգտում էր առաջին աշակերտը դառնալ, որ Փարիզում իր համար կարիերա ապահովեր։ Նա մայրաքաղաքում պաշտոնեական առաջխաղացման մեծ հնարավորություններ ընձեռող աշխատանքը երազանքների վերջնասահման էր համարում։

Այժմ Ռուսոյի աշակերտը կյանքին բոլորովին այլ կերպ էր նայում։ Ո՛չ։ Նրան այլևս չեն հրապուրում ո՛չ Փարիզը, ո՛չ կարիերան։ Նա կվերադառնա հայրենի Առասը, գավառ, հասարակ մարդկանց մոտ։ Այնտեղ նա ամենօրյա աշխատանքի

ընթացքում կյանքն ավելի լավ կճանաչի և անհամեմատ ավելի մեծ օգուտ կտա։ Այնտեղ, մայրաքաղաքի իբարանցումից հեռու, նա ավելի լավ կըմբռնի այն ամենը, ինչ այստեղ իմացել է։ Նա չդիտի, թե հետո ինչ կլինի, բայց առայժմ անհրաժեշտ է հենց այդպես անել։ Որոշումը հասունացել էր։

Եվ Ռոքեսպիերն անհամբերությամբ սպասում է մեկնելու օրվանը։

Նա հաշվում է օրերն ու ժամերը։ Մի քանի փողոցների անձկության մեջ պարփակված Փարիզը նրան ավելի ու ավելի օտար է թվում՝ նա հոգով ու մտքով Առասում էր։

ԳԼՈՒԽ 2

ԱՌԱՍ

Արևի ճառագայթը, լուսամուտի փակոցափեղկի ճեղքից անցնելով, թեթևակի բարձին քսվեց-անցավ և քնած մարդու դեմքին պսպղին տվեց։ Մաքսիմիլիանն աչքերը սաստիկ կկոցեց, ապա բացեց և իսկույն անկողնուց վեր թռավ։

Քնով էր անցել։ Արդեն ժամը ինն է։ Փարիզում նրա հետ այդպիսի բան երբեք չի պատահել։ Այստեղ, մերձավորների անվերջ հոգատարության պայմաններում կարելի է բոլորովին ծուլության մատնվել։ Մաքսիմիլիանը իսկույն լուսամուտը լայն բաց արեց և նորից աչքերը կկոցեց պայծառ լույսից։ Հանդիստ ուրախությունը լցրեց նրա հոգին։ Ի՞նչ լավ է, ի՞նչ սքանչելի է... Ահա նա, իր հայրենի Առասը՝ անդորր ու լուսաճաճանչ։ Թույլ աչքերը կկոցելով, Մաքսիմիլիանը նայում է լուսամուտից։

Անդորրություն է։ Մայրաքաղաքում անցկացրած երկար տարիներից հետո զարմանալի, անսովոր անդորրություն։ Եվ փողոցում գրեթե անցորդներ չկան։ Միայն կաթնավաճառուհին բարձում է իր սայլակը և սպիտակաթեղ սերժանտը բարշ դալիս դեպի Արդարադատության պալատը։

Մաքսիմիլիանը նայում է փոքրված ծառայողի հետևից։ Շուտով ինքն էլ պետք է իր քայլերն ուղղի դեպի այնտեղ։ Պալա-

տում տեղավորվել է Արտուայի խորհուրդը՝ նահանգի դատական բարձրագույն ատյանը։

... Հազիվ լսվում է ոանդուղքի աստիճանների ճռռոցը։ Դուռը կիսով չափ, ապա լայն բացվում է, և մի բարեկազմ սևազդեստ օրիորդ նրա վզովն է ընկնում։ Դա Շարլոտա քույրն է, ընտանիքի փաստական տիրուհին։ Տիրուհին մի քիչ բռնակալ է՝ նա եղբայրներին անչափ շատ է սիրում և նրանց իր լիակատար սեփականությունն է համարում։

Քույրը Մաքսիմիլիանին շատ տխուր բաներ պատմեց։ Առասում կյանքը ծանր էր՝ հազիվ էին բավականացնում այն սուղ միջոցները, որոնցով օգնում էին ազգականները, չնայած հենց իրենք էլ աղքատ մարդիկ էին։ Աղետները որբացած ընտանիքից չէին հեռանում, մահը նրանից բաժանվել չէր ուզում։ Այլևս չկա ծերունի Կառոն, որն այնքան հոգ էր տանում թոռների մասին, չկա կրտսեր քույրը, քրքջացող Հենրիետան, որի հետ մի ժամանակ Մաքսիմիլիանը պուրակում վազվզում էր, որին մանկական հպարտությամբ ցույց էր տալիս իր աղավնիներն ու ճնճղուկները, իր թանկարժեք, խնամքով հավաքվող փորագրանկարները։

Այո, մահը չի խնայում ո՛չ ծերերին, ո՛չ երիտասարդներին, իսկ ապրողներին շատ ավելի վիշտ ու արցունք է բաժին ընկնում, քան ուրախություն ու զվարճություն։ Մաքսիմիլիանը լավ դիտեր այդ։

Կարելի է անվերջ խոսել, հիշել, լաց լինել ու ծիծաղել։ Առաջին օրերն անցնում են աննկատելիորեն։ Սակայն բավական չէ՞ արդյոք։ Նա հեշտասեր ծուլության անձնատուր լինելու սովորություն չունի։ Ժամանելուց հետո մի քիչ հանգստանալով Մաքսիմիլիանը շտապում է սկսելու փափագած գործը։ 1781 թվականի նոյեմբերի 8-ին նրան ընդունում են Արտուայի խորհրդին կից փաստաբանների կոլեգիայի մեջ։

Կոլեգիան կազմված էր մի քանի տասնյակ պաշտոնական դատապաշտպաններից։ Սակայն ամենից ավելի կարևոր ու հետաքրքրական գործերը քննարկում էին փոքրաթիվ հին, փորձված իրավաբանները, որոնք կոլեգիայի մյուս անդամների համար թողնում էին առօրյա մանրուքը։ Դրա հետևան-

քով սկսնակ իրավաբանը, եթե նա իր հաջողություններին նըկատմամբ անտարբեր չէր, ստիպված էր լինում շարունակ պայքարել իր գործընկերների դեմ, ձգտելով իր համար ձեռք բերել այն գործերը, որոնք համապատասխանում էին իր հակումներին ու հետաքրքրություններին։ Այդ բոլոր դժվարություններն ստիպված եղավ հաղթահարել նաև երիտասարդ Ռոբեսպիերը։ Նրա դրությունը բարդանում էր նաև նրանով, որ մայրաքաղաքային կրթությունը և հայրենի քաղաքից երկար ժամանակ բացակայելը, հավասարապես և ինքնամփոփ, ծածկամիտ բնավորությունը, նրան առանձնակի վիճակի մեջ էին դնում պաշտոնակիցների շրջանում, որոնք չարախնդորեն ծաղրում էին նրա առաջին անխուսափելի սխալները։

1782 թվականի հունվարի 16-ին պետք է տեղի ունենար Մաքսիմիլիանի առաջին ելույթը դատարանում։ Նա սպասում էր այդ օրվան, սպասում անհամբերությամբ, բայց այժմ, երբ հասել էր այդ օրը, առանձին ոգևորություն չէր զգում։

Ոչ թե նրա համար, որ նա վախենում էր։ Ո՛չ, նա վախենալու ոչինչ չուներ։ Սորբոնը փայլուն կերպով ավարտելով, Մաքսիմիլիանը իրավաբանական գիտությունները լավ էր յուրացրել։ Բացի այդ, նա Փարիզի պառլամենտի դատախազի մոտ լավ ստաժավորում էր անցել։ Եվ այնուամենայնիվ նա տհաճ կաշկանդվածություն էր զգում։

Գործն աննշան էր և ոչ այնքան վստահելի։ Ինչպե՞ս կըվերաբերվի դատարանն իր փաստարկներին։ Իսկ գլխավորը, ինչպե՞ս կընդունի իրեն լսարանը։ Ասում են, թե առաջին հաջողությունը կամ անհաջողությունը կանխագուշակում է ապագան։ Պատրաստվելով գնալու Արդարադատության պալատը, Մաքսիմիլիանն առանձին ուշադրություն դարձրեց իր արտաքին տեսքի վրա՝ լավ արդուկեց հին բաճկոնակը, շտկեց բատիստե կրծկալը, կոկեց կիսակոշիկների արծաթե ճարմանդները։ Նայեց հայելու մեջ և գոհ մնաց։ Դե՛, աստված օգնական...

Ռոբեսպիերը իր առաջին գործը տանուլ տվեց, ասենք, այն շահելը դժվար էր։ Նրա հակառակորդը՝ դատական մի հին կոխա, քաշքշուկարարության ճարտար վարպետ էր, հենց

դատական գործն էլ խճճված էր, շատ կասկածելի։ Բայց այդ չէր անհանգստացնում սկսնակ փաստաբանին։ Նրան թվում էր, թե ինքը հասարակության հետ կոնտակտ չհաստատեց։

Իրոք որ, թատերական տպավորությունների սիրահար քաղքենիները հիասթափվեցին նրա՝ վերացական հասկացություններով հարուստ և բացի այդ, ոչ այնքան ըմբռնելի կերպով արտասանված փոքր-ինչ սառը, խրատական ճառից։ Այդ ճառը ցույց տվեց Ռոբեսպիերի հռետորական սովորության համար բնորոշ մի քանի հատկություններ։ Սուր, թեև ծածուկ կերպով վերապրելով իր անհաջողությունները, շատ աշխատելով ճառերի տեքստերի և իր առոգանության վրա, Կոնվենտի ապագա գեպուտատն աստիճանաբար կազատվի մի շարք թերություններից, որոնք ծիծաղ էին առաջացնում ոչ միայն Առասի դատարանում, այլև հետո, Սահմանադիր ժողովի դահլիճում։ Սակայն նա երբեք չի հրաժարվի ճառի հանգիստ, փայլից զերծ, բայց իր փաստարկների ծանրակշռությամբ համոզիչ հիմնական տոնից, որը հռետոր Ռոբեսպիերից անբաժան կդառնա և որը ժողովուրդն ավելի մեծ սիրով կընդունի, քան ամենահամբավավոր շատախոսների հանպատրաստից կրակոտ ճառերը։

Առաջին անհաջողությունը վշտացրեց, բայց չվհատեցրեց։ Համբերություն, աշխատանք, համառություն՝ այս էր սովորեցրել մեծ Ռուսոն։ Նահանջել չի կարելի, պետք է պայքարել ու հաղթել։

Նա շարունակում է ելույթներ ունենալ և աստիճանաբար բեկում է ձեռք բերում։ Եվ եթե նրա ավագ պաշտոնակիցների շարությունն անշեղորեն աճում է, ապա միայն այն պատճառով, որ Մաքսիմիլիանն ավելի ու ավելի հանրաճանաչ փաստաբան է դառնում և ավելի ու ավելի շատ մարդիկ են հայտնվում, ովքեր ցանկանում են իրենց հայցը նրան հանձնել։

Նրա պաշտպանության համոզկերությունից և վերցրած գործերը հաջողությամբ ավարտելուց բացի, այստեղ պակաս կարևոր դեր չէր կատարում նաև այն հանգամանքը, որ Ռոբեսպիերը գործերը մեծ զգուշությամբ էր ընտրում և վերցնում էր միայն այնպիսի գործեր, որոնք իրեն կատարելապես արդա-

բացի էին թվում. հակառակ դեպքում նա կտրականապես մերժում էր իր կլինտի խնդրանքը։

Եվ հանկարծ նրա մասին սկսեց խոսել ամբողջ նահանգը։

Սենտ-Օմեր քաղաքի Վիսերի անունով մի ինչ-որ քաղաքացի, որը հետաքրքրվում էր գիտական նորություններով, ինչ-որ մի տեղ կարդաց շանթարգելի՝ մեծ ամերիկացի Բենջամին Ֆրանկլինի գյուտի մասին։ Հիացած Վիսերին սկսեց հարևանների շրջանում շանթարգելը պրոպագանդել և ինքն առաջինն այն կանգնեցրեց իր տան տանիքին։ Սակայն այդ գործողությունը Վիսերիի ենթադրած հետևանքներին հակառակ հետևանքներ ունեցավ։ «Երախտապարտ» հարևանները բողոքագիր ներկայացրին, որով հայտարարում էին, թե խորամանկամիտ սարքը պատրաստվել է հարևան տներում հրդեհ առաջացնելու նպատակով։ Տեղական իշխանությունները, ոչ այնքան լավ գլուխ հանելով այդքան բարդ բաներից, սիրով լսեցին գանգատավորներին և կարգադրեցին շանթարգելն անհապաղ մեջտեղից վերացնել։ Վիսերին որոշեց չնահանջել։ Նա Առասի դատական պալատին վճռաբեկության գանգատ տվեց։ Մաքսիմիլիանը սիրով ձեռնամուխ եղավ Վիսերիի գործին, այն համարելով շատ հարմար մի առիթ նահանգում տիրող խավարամոլության ու քարացածության դեմ հրապարակային ելույթ ունենալու համար։ Վիսերիի պաշտպանության վրա Առասի փաստաբանը գործադրեց իր ամբողջ եռանդը։ Նրա լավ կշռադատված ճառը ծափահարություններ առաջացրեց, և նա գործը տարավ։ Հետագայում Ռորեսպիերը նամակ գրեց շանթարգելի գյուտարարին, որը գտնվում էր Ֆրանսիայի տերիտորիայում։ Ֆրանկլինին և նրա հայտնագործությունը փառաբանող նամակին կցվեց Վիսերիի գործի առթիվ արտասանած ճառի մի օրինակ։

Վիսերիի գործը Մաքսիմիլիանի առաջին լուրջ հաղթանակն էր։ Այն ժողովրդականությունը, որի մասին նա մի ժամանակ այնպես երազում էր, նրա տան շեմքից ներս մտավ։

Ճանաչում ձեռք բերելուց հետո կարող էր հետևել նաև նյութական հաջողությունը։ Մաքսիմիլիանի պաշտոնակիցների

մեծամասնությունը ձգտում էր փառաբանվել ամենից առաջ այն պատճառով, որ փառքը դրամ էր տալիս։ Անշուշտ, օգտավետ գործերը հասարակության ուշադրությանն արժանացած փաստաբանի ձեռքն էին անցնում։ Նա հանգիստ կերպով կարող էր ընտրել ամենամեծ օգուտ բերող գործերը։

Այդպիսին չէր պատանի Ռոբեսպիերը։ Այն մարդը, որին հետագայում ժողովրդի արդար ձայնը Անկաշառելի անվանեց, իր գործունեության սկզբից ևեթ անշահախնդիր էր և հաճախ, աղքատ մարդու գործի պաշտպանությունը վերցնելով, ոչ միայն հրաժարվում էր հոնորարից, այլև ինքն էր օգնում իր կլիենտին։

Նրա համար սկզբունքներն աշխարհում ամեն ինչից ավելի թանկ էին։ Իսկ այդ սկզբունքներից ամենագլխավորները նա համարում էր աղատությունը և ապրելու իրավունքը։

Առասի եպիսկոպոսը, որը վաղուց բարյացակամ էր դեպի Ռոբեսպիերը, նրան քաղաքացիական ու քրեական տրիբունալի անդամի նախանձելի պաշտոն առաջարկեց։

Մաքսիմիլիանը համաձայնվեց և օրինակելիորեն կատարում էր իր պարտականությունները։ Բայց մի անգամ ստիպված եղավ ստորագրել մի մարդասպանի մահվան դատավճիռը։ Հանցանշաններն անհերքելի էին, և պատիժը մեղմացնելու ամենափոքրիկ իսկ հնարավորություն չկար։

Տուն վերադառնալով, ընկճված ու ջարդված, Մաքսիմիլիանը երկու օր ուտելիքի ձեռք չտվեց։ Նա մխիթարելու խոսքեր լսել չէր ուզում։

— Ես լավ դիտեմ,— ասում էր նա,— որ հանցագործը մեղավոր է, բայց մարդուն մահվան դատապարտել... Ի՞նչը կարող է ավելի նվիրական ու անձեռնմխելի լինել, քան մարդու կյանքը։ Ճնշվողների պաշտպանումն ընդդեմ ճնշողների, թույլերի շահերի պաշտպանումն ընդդեմ ուժեղների, որոնք շահագործում ու ճնշում են նրանց,— ահա պարտքն ամեն մի մարդու, որի սիրտը եսամոլությամբ ու շահասիրությամբ չի վարակվել։ Իմ կոչումն է պահպանել մարդու կյանքը, և ոչ թե ոտնձգություն անել նրա դեմ։

Եվ նա առանց տատանումների հրաժարվեց օգտավետ պաշտոնից։

Իր մասնագիտական զբաղմունքների ընթացքում երիտասարդ փաստաբանն ավելի ու ավելի հաճախ էր հանդիպում հասարակ ժողովրդի կյանքի երևույթներին։ Նրան բազմիցս վիճակվում էր վարելու գյուղացիների դատավեճերը։ Այժմ նա շատ բան անհամեմատ ավելի լավ էր հասկանում, որ առաջ ինչ-որ տեսադաշտից անհետանում էր։ Ֆեոդալական իրավունքին ծանոթանալու զուգընթաց Մաքսիմիլիանի համար պարզվում էին Առասի շրջակա գյուղերում տիրող ծայրահեղ աղքատության պատճառները։

Ֆրանսիացի գյուղացին, դարեր շարունակ ձգտելով ազատվել էր անձնական պարհակներից, սակայն դեռևս կալվածատիրոջից լիակատար հողային կախման մեջ էր մնում։ Ֆեոդալները համարվում էին՝ ամբողջ մշակվող հողի սեփականատերերը, իսկ գյուղացիները՝ միայն նրա պահպանողները։ Հողաբաժին օգտագործելու համար գյուղացին պետք է կալվածատիրոջը չինշ վճարեր՝ դրամական կանոնավոր մուծում կատարեր, և, բացի այդ, բնավարձ տար, որը կազմում էր ստացած բերքի քառորդը, իսկ հաճախ էլ կեսը։ Ֆեոդալական որսաիրավունքը սոսկալի մի պատուհաս էր։ Գյուղացին մահվան սպառնալիքի տակ ոչ միայն չէր համարձակվում նապաստակները, ճագարները, կաքավները ոչնչացնել, որ իրենց քեֆին թափառում էին ցանած հողամասերում, այլև պետք է դրանք պահեր-պահպաներ, թողնելով, որ ավերեին իր արտերն ու բանջարանոցները, և նույնիսկ հնձի ժամանակ պարտավոր էր արտերում որսի կենդանիների ու թռչունների համար ապաստարաններ թողնել։ Ծանրաբեռնող բանալիտետային իրավունքը գյուղացուն ստիպում էր հացահատիկն աղալ տիրոջ ջրաղացում և հացը թխել տիրոջ վառարանում, անշուշտ, դրա համար բավական մեծ վարձատրությամբ։ Տառացիորեն առօրյա կյանքի յուրաքանչյուր մանրուքով գյուղացին զգում էր տիրոջ ճնշող ձեռքը։ Կամուրջով անցնելու, լաստով գետանցում կատարելու, ջրհոր փորելու, անասունները ուրիշ տեղ քշելու՝ այդ ամենի համար հողատիրոջ օգտին առանձին հարկեր էին վճարվում։

Կալվածատիրոջ հետ մեկտեղ կային նաև եկեղեցին ու պետությունը։ Եպիսկոպոսին տրվում էր տասանորդը, իսկ ինտենս-

դանտին՝ տալիան, որը կազմում էր ծխի եկամտի մոտավորապես մեկ երրորդը։ Թագավորի ադմինիստրացիային «օգնում էր» խոշոր բուրժուազիան. գլխավոր վարձակալները շահույթ ստանալու համար գյուղացուն տառացիորեն կողոպտում էին։

Զարմանալի չէ, որ անբերք տարիներին գյուղացիներն ամբողջ գյուղերով քայքայվում էին, շրջմոլիկներ ու մուրացկաններ դառնալով։

Գյուղացիությունը ֆեոդալական հասարակարգը սասանեցնող ու թուլացնող գլխավոր ուժն էր։ Իրենց նախնիների, քաջարի «ժակերի» օրինակով, XVII—XVIII դարերի գյուղացիները բազմիցս հզոր ապստամբություններ էին բարձրացնում։ Դրանք բռնկվում էին մերթ այստեղ, մերթ այնտեղ և հաճախ թագավորության ամբողջ նահանգներ էին ընդգրկում։

Մաքսիմիլիանը կարդում էր գյուղացիական ապստամբությունների մասին և նահանգում ասեկոսներ լսում «ամբոխի բունտերի» մասին։ Այժմ, գյուղացիության դրությունը բավականաչափ խորն իմանալով, նա ավելի ու ավելի էր կասկածում այդ բունտերի անմտության ու պատճառազրկության մեջ։ Արդյոք ապստամբությունները դաժան ճնշողների դեմ ուղղված արդարացի պայքար չէի՞ն։ Արդյոք դրանք չէի՞ն համապատասխանում Ռուսոյի բնական օրենքի տեսությանը։ Այդ հարցերն ավելի ու ավելի հաճախ ու համառորեն էին անցնում նրա մտքով։

Առասում Ռոբեսպիերի կյանքը միապաղաղ էր ընթանում։ Ամեն ինչ որոշակի էր դարձել, ամեն ինչ իր պատշաճ տեղն ընդունել։ Կարելի էր բնակարանը փոխել, նոր տուն տեղափոխվել, բայց Ռուսոյի աշակերտի պարզորոշ մշակած օրվա կարգուկանոնը ոչ մի խախտման ենթակա չէր։

Նա վեր էր կենում վաղ առավոտյան, ժամը վեցից-յոթից ոչ ուշ, և իսկույն նստում գրասեղանի մոտ։ Ժամը ութին դալիս էր վարսավիրը նրան սանրելու (Մաքսիմիլիանն անփոփոխ կերպով հետևում էր իր արտաքին տեսքին)։ Համեստ նախաճաշից հետո, առանձնասենյակի անդորրության մեջ մինչև ժամը տասն աշխատելով, նա հագնվում ու գնում էր դատարան։ Ռոբեսպիերը ճաշում էր տանը, ճաշատեսակներ

ընտրելու գործում բոլորովին պահանջկոտ չէր և գրեթե գինի չէր խմում։ Հետաքրքրությամբ մի բաժակ սուրճը խմելով և մի երկու ժամ զբոսնելով, նա նորից մինչև ժամը յոթը կամ ութը փակվում էր առանձնասենյակում, իսկ հետո երեկոյի մնացած մասը անցկացնում մերձավոր մարդկանց շրջանում։

Մաքսիմիլիանը սալոնների ճղճիմ զվարճությունները չէր սիրում, անտարբեր էր դեպի թղթախաղը և բարձրաշխարհիկ շաղակրատանքը։ Տափակ խոսակցության մասնակցելու փոխարեն նա գերադասում էր փակվել սենյակի անկյունում ինչ-որ մի տեղ և մտածմունքների մեջ ընկնել։ Ինքն իր մեջ խորասուզվելով նա ցրված էր լինում և հաճախ մարդկանց ողջույնները չէր նկատում, որի հետևանքով բավական թշնամիներ էր վաստակում։

Բայց բարեկամների շրջանում, մերձավոր ու հետաքրքրական մարդկանց մեջ, նա բոլորովին կերպարանափոխվում էր։ Այդ, նրան վատ ճանաչող շատ մարդկանց կարծիքով, մռայլ պեդանտն ու խրատամոլը դառնում էր ուրախ ու սրամիտ զրուցակից, իսկ նրա ծիծաղն այնպես անկեղծ ու վարակիչ էր, որ թվում էր, թե կարող էր ուրախացնել ամենամռայլ մելամաղձոտ մարդուն։

Նրանք հավաքվեցին կանաչազարդ բացատում, սաղարթախիտ ծփիների հովանու տակ։ Ամեն մեկի կոճկառում երևվում էր վառ կարմիր կամ թեյի մի վարդ։ Ընթրիքը պատրաստեցին հենց այդտեղ, ուղղակի կանաչ խոտի վրա։ Բուրգունդական երկու շիշ գինին երեկույթի հաճելի ավարտ էր խոստանում։

Մաքսիմիլիանը ժպտալով նայում էր հարևաններին։ Նրա կողքին է ազնիվ Բյուիսարը, նրա ընտանիքի հին բարեկամը, մի փաստաբան ու գիտնական։ Դյուբուա դը Ֆոսեն ինչ-որ բանի մասին վիճում է վանական գունատ ուսուցիչ Ֆուշեի հետ։ Վայելչակազմ Լազար Կարնոն, ինժեներական զորքերի մի սպա, դիմում է Ռոբեսպիերին։

— Մաքսիմիլիան, ձեր հերթն է։ Դուք չե՞ք մոռացել, որ իբրև նոր ընդունվածի, դուք պետք է կենաց ասեք։

Լսվեցին խրախուսական բացականչություններ։ Մաք-

սիմիլիանը բարձրացրեց բաժակը և, կարճատես աչքերը կըկոցելով, հուզվելուց մի քիչ դողացող ձայնով արտասանեց.

Բարեկամներս,
Ինչպես երջանիկ եմ ես,
Ողջունելու շրջանը ձեր։
Թող այս կենացը,
Թեև անպաճույճ,
Ցույց տա՝ ով է ընկեր ձեզ։
Խմենք կենացը Կարնոյի,
Նմանապես և Կոյի,
Եվ ապա հենց Ռյուզեի.
Կենացը մեր բոլորիս միասին, ընկերներ,
Հրկին լցնենք բաժակները հիմա։

Միծաղն ու ծափահարությունները փոխվեցին բյուրեղապակյա բաժակների զնգոցի։

— Բարեկամս,— շշնջաց Մաքսիմիլիանը Բյուիսարի ականջին,— ես մյուսներից ավելի լավ եմ հասկանում, թե որքան խղճուկ են այս տողերը, աշխատանքից պոկած մի քանի ժամվա այս անհաջող արդյունքը... Բայց ի՞նչ արած, եթե ես առավելի համար ընդունակ չեմ...

— Ինձ մոտ ավելի վատ է ստացվում,— շշնջալով հանգստացրեց նրան նրա ավագ պաշտոնակիցը,— մի հուզվեք, այստեղ բոլորն էլ տնաբույս պոետներ են...

«Վարդանոց» գրական ընկերությունն այդքան անսովոր անուն ստացավ ի պատիվ իր հովանավորուհու՝ վարդերի թագուհու։ Նրա անդամներին «վարդենի» էին անվանում։ Ընկերությունը միավորում էր, ինչպես նշում էր նրա կանոնադրությունը, «բանաստեղծությունների, ծաղիկների ու գինու սիրով միմյանց հետ կապված երիտասարդների»։ Ժողովները, ուր կարդացվում ու քննարկվում էին «վարդենիների» արձակ ու չափածո աշխատությունները, տեղի էին ունենում նախապես նշված օրերին։ Գրական ընթերցանությունն ավարտվում էր ընկերական ուրախ ընթրիքով։

«Վարդանոց» ընկերությունը Ռոբեսպիերի համար դարձավ մի նախադուռ՝ Առասի ակադեմիան ընդունվելու, որի մասին փառասեր պատանին չմտածել չէր կարող։

Գրականության, գիտությունների և արվեստների տեղական ակադեմիայի կազմի մեջ էին մտնում նահանգի ամենանշանավոր անձնավորությունները՝ գրականագետներ, գեղարվեստագետներ, փիլիսոփաներ։ Այստեղ երիտասարդ իրավարանը կարող էր Ռուսոյի ոգով խոսել բնական իրավունքի և բարոյականության մասին այն հաշվով, որ գիտակ մարդիկ իրեն կլսեն։ Ուստի 1783 թվականին ակադեմիայի անդամ ընդունվելը նրա համար իսկական տոն էր։ Ակադեմիայի ամբիոնը Ռոբեսպիերի համար դարձավ նրա փաստաբանական ամբիոնի կարևոր լրացումը։ Շուտով նա դարձավ ակադեմիայի մշտական ու սիրելի հռետորը, իսկ 1786 թվականին ընտրվեց նրա պրեզիդենտ։

Ակադեմիա մտնելը Մաքսիմիլիանին առիթ տվեց մի ճառ արտասանելու մեղապարտի ընտանիքի անդամների վրա ընկնող պատիժների անիրավացիության մասին։ Նա այդ թեման մշակեց և երկն ուղարկեց Մեց քաղաքը՝ գիտությունների ու արվեստների թագավորական ընկերությանը՝ մրցանակաբաշխության ներկայացնելու։ Երկը հրապարակվեց ու պարգևատրվեց։

Արդեն այդ վաղ շրջանի աշխատության մեջ կարելի է գտնել այնպիսի մտքեր, որ հետագայում արտահայտելու է Սահմանադիր ժողովի և Կոնվենտի դեպուտատը։

«... Պետության բարօրությունը հենվում է կարգ ու կանոնի, արդարության և իմաստության անսասան հիմքի վրա։ Յուրաքանչյուր անարդար օրենք, բնական իրավունքը խախտող յուրաքանչյուր դաժան հիմնարկություն, ակներևաբեն, չի համապատասխանում իր նպատակին՝ մարդու իրավունքների, քաղաքացիների երջանկության ու հանգստության ապահովմանը...»։

Խստաբարո Շարլոտան անհանգստացած էր։ Սուասի կանանց շրջանն սկսում էր հետաքրքրվել նրա ավագ եղբորով։ Դրանում զարմանալու ոչինչ չկար։ Նա իր աշխատանքով տարված, բավական սիրունիկ, միշտ սիրալիր և միաժամանակ մտախոհ, տխուր, ասես ինչ-որ խորհրդավոր գաղտնիքի մեջ խորասուզված մի պատանի էր... Մի՞թե դա ռոմանտիկ չէ։

Մի՛թե նա չէր կարող շատ հառաչների ու հոյսերի առարկա դառնալ։ Բայց Շարլոտան զուր էր հուզվում։ Նրա շատ սիրելի եղբայրը Կուպիդոնի նետերի համար անխոցելի էր մնում։ Պատանի ակադեմիկոսի սպարտական հոգին թեթևամիտ հափշտակություններ ու առավել ևս վարմունքներ չգիտեր։

Սակայն Մաքսիմիլիանը բնավ էլ կանանցից խորշող անսիրտ մի ճգնավոր չէր։ Նա նրանցից ամենևին չէր վախենում ու չէր խուսափում։ Նա ուշադրության արտահայտություններին պատասխանում էր նուրբ սիրալիր նամակներով, որոնց կցում էր իր... փաստաբանական ճառերի տպագրված օրինակներ։ Թող համենայն դեպս սիրահարված կանայք ծանոթանան թեթևամիտ սիրախաղից ավելի լուրջ մի նյութի... Նա այդ նամակները խնամքով սքողում էր գրականորեն հղկված արտահայտություններով, որոնք վկայում էին, որ նա նուրբ հոտառություն ունեցող մի մարդ է, որը կարողանում է կանանց նրբակիրթ վայելչագեղությամբ հաճելի բաներ ասել։

«Արդյոք կա՞ ավելի ազնիվ մի նպատակ, որին կարող են ծառայել ձեր շրջանի փայլը և ձեր սրտի բարեմասնությունները, եթե դուք կարող եք այնքան հեշտ միջոցներով խրախուսել մի մարդու բուռն ձգտումը, որն իրեն նվիրել է դժբախտների ու անմեղների ճակատագրի թեթևացմանը...»։

Այս իսկապես վերամբարձության մի դոհար է, որ արժանի է նրբակիրթ XVIII դարին, հաճոյախոսության դարին։

Բայց նրա սիրտն ազատ էր մնում։

Միայն 1786 թվականին Ռորեսպիերի կյանքի ճանապարհին հայտնվեց մի աղջիկ, որը քիչ էր մնացել, որ դառնար նրա հանգստության հափշտակիչը։ Դա Անայիս Դեզորտին էր, սիրասուն ու համեստ, բնիկ առասցի մի օրիորդ, որի հայրը, պրոֆեսիայով մի նոտար, երկրորդ պսակով ամուսնացած էր Մաքսիմիլիանի հորաքույրերից մեկի հետ։ Երիտասարդները, որ արդեն ծանոթ էին վաղուց, հաճախ էին հանդիպում, անընկատելիորեն բարեկամացան։ Ազգականներից ինչ-որ մեկի մտքով անցավ նրանց ամուսնացնել։ Մաքսիմիլիանը մտել էր քսանինը տարվա մեջ, նա հաստատուն դիրք ուներ և հաջողությամբ առաջ էր գնում։ Էլ ինչի՞ համար սպասել։ Արդյոք

ժամանակը չէ՞ ընտանիք կազմել, զբաղվել իր տունուտեղով ու երեխաների դաստիարակությամբ, այսինքն՝ ապրել այնպես, ինչպես ապրում են նրա շրջանի բոլոր օրինավոր մարդիկ։ Եվ արդյոք նա ավելի հարմար ամուսնություն կգտնի՞։ Շարլոտան, որ սկզբում տատանվում էր, հետո հասկացավ այդ փաստարկների արդարացիությունը և մատաղ Անայիսին իր հովանավորության տակ վերցրեց։ Մաքսիմիլիանը ծիծաղում էր և ուսերը թոթվում։ Սակայն նա ազգականների պլանների դեմ լուրջ առարկություններ չուներ։ Ամուսնությունը որոշված խնդիր էր թվում։ Այն խափանեցին արտաքին հանգամանքները։ Ճակատագիրը երիտասարդ փաստաբանի համար ընտանիքի գավառացի հոր խաղաղ կյանք չէր պատրաստում...

Փարիզից լուրերը անկանոն էին հասնում գավառ։ Մաքսիմիլիանը հետաքրքրությամբ հետևում էր լուրերին։ Նա տեսնում էր, որ երկրում լուրջ դեպքեր են հասունանում։ Ըստ երևույթին, ուսուցիչն իրավացի էր։

Մայրը ծայրին չհասցնելով, կառավարությունը դեսուդեն էր ընկնում։ Ինչպե՞ս ծածկել շարունակ ավելացող ծախսերը։ Որտեղի՞ց միջոցներ վերցնել պետական պարտքի տոկոսները վճարելու համար։ Չէ՞ որ այժմ միայն դրա վրա էր ծախսվում Ֆրանսիայի բոլոր հողերից ստացվող զուտ եկամտի տասներորդ մասը։

Տյուրգոյի հաջորդներից մեկը, Ժնևի բանկիր Նեքերը, աշխատելով հենց իրենց սեփական փրկության համար խելքի բերել միապետին ու արքունիքը, խնայողության ռեժիմ առաջարկեց։ Նեքերը փորձեց կրճատել պալատական ծախսերը, պակասեցնելով աստիճանավորների և սպասավորների հաստիքը։ Անմի՞տ դիտավորություն։ Մի՞թե կարող էր ինչ-որ մի գլխավոր դիրեկտոր դիմադրել թագուհուն և արյունակից թագաժառանգներին։ Գրչի մի շարժումով Մարիա Անտուանետան մի քանի անգամ դերազանցում էր տարվա ընթացքում խնայած ամբողջ գումարը։ Այն ժամանակ Նեքերը որոշեց միահեծանության պատմության մեջ առաջին անգամ ֆինանսների վիճակի մասին հաշվետվություն հրապարակել։ Հաշվետվու-

թյունը, որ հրապարակվեց 1781 թվականին, բավական լավ «մաքրազարդված» էր։ Բայց նույնիսկ այդպիսի վիճակում այդ փաստաթուղթը ցնցող տպավորություն թողեց, որովհետև, վարագույրը մի քիչ բարձրացնելով, հասարակությանը ցույց տրվեց բարձր ազնվականության հափշտակությունների բնույթն ու մասշտաբները։

Իհարկե, դրանից հետո Նեքերն իսկույն հրաժարական տրվեց, իսկ ֆինանսների նոր մինիստրն իր գործն սկսեց նոր հարկեր նշանակելով։

Մաքսիմիլիան Ռոբեսպիերի կյանքի խաղաղ ընթացքին վիճակված էր ընդհատվելու 1788—1789 թվականների սահմանագծին։ Վերջացավ ակադեմիական երկասիրությունների, գրական պարգևների, սիրալիր նամակների և ընկերական զրույցների ժամանակը։ Նրա երկիրը գտնվում էր սոսկալի հուզումների նախօրեին, հուզումներ, որոնք պետք է շուտ տային ու հիմնովին փոխեին համեստ փաստաբանի ճակատագիրը, ինչպես և միլիոնավոր ուրիշ մարդկային ճակատագրեր։ Նա նախազգում էր փոփոխությունների անխուսափելիությունը և ուրախությամբ ընդառաջ էր գնում դրանց։

ԳԼՈՒԽ 3

ՆԱԽՕՐԵԻՆ

Այդ տեղի ունեցավ Փարիզում, հեղափոխությունն սկսվելուց մոտավորապես մեկ տարի առաջ։

Ինչ-որ մի ակադեմիկոս հանդիսավոր ճաշկերույթ էր տալիս։ Փայլուն հասարակություն էր հավաքվել։ Հսկայական դահլիճում մի քանի ճաշասեղանի շուրջը բարեհարմարորեն տեղավորվել էին մեծատոհմիկ հյուրեր, որոնք համաձայն էին մոդայի սիրույն մի քիչ սեթևեթել փիլիսոփայության շուրջը և փիլիսոփաներ, որոնք պատրաստ էին իրենց համոզմունքներից հրաժարվել՝ մեծատոհմիկ դառնալու։ Ճաշկերույթը շատ լավ ստացվեց։ Շուտով հյուրերը մի քիչ հարբեցին և հասան

այն երանավետ վիճակին, երբ ամեն ինչ թվում է հեշտ ու հասարակ, հարևանները՝ սիրալիր ու բարեհոգի, կանայք՝ ոմայլելի, իսկ ապագան՝ պայծառ։ Անբռնազբոսիկորեն ծլրում էր զրույցը։ Բնականաբար, ուշադրության կենտրոնում արդիականության հարցերն էին։ Նրբագեղորեն խոսում էին գրականության հաջողությունների մասին, ազատագրված բանականության մոտալուտ թագավորության մասին, առաջարկում էին հարստության ու գիտության, ինտելեկտի ու իշխանության միաձուլման կենաՁներ։

Միայն մի մարդ համառորեն լռում էր աշխույժ զրույցի ընթացքում։ Նրա մարած աչքերը կիսախուփ էին, շրթունքները պինդ սեղմված, ծեր խորշոմապատ դեմքն այլանդակվել էր վշտից ծռմռվելուց։ Դա միստիկ գրող, յոթանասունամյա ծակ Կազոտն էր։

Ինչ-որ մեկը հարցրեց մռայլ ծերունու լռության պատճառի մասին։

Կազոտը ցնցվեց, դողդոջուն ձեռքով դեմքը շփեց, ասես տրտմության շղարշը թոթափելով, և սկսեց ցածր ձայնով խոսել։ Նա ասաց, որ ինքը չի կարող ընդհանուր բարեհոգությունը բաժանել, որովհետև մի՞թե կարելի է անդունդի եզրին կատակներով ու բառախաղերով տարվել։ Ինքը նայում է ապագային ու տեսնում զարհուրելի հուզումներ, հրեղեն մի մրրկասյուն, որ կայրի, կմոխրացնի այն ամենը, ինչ այժմ փայլում է փառքի ու հարստության լուսապսակով։ Ինքը տեսնում է ամայացած ապարանքներ և այրվող դաստակերտներ, իր մլաքի առջևով շարան-շարան անցնում են ցավից այլանդակված դեմքեր, ծանոթ դեմքեր...

Մի փոքր հարբած գրգամոլ հյուրերը իրար նայեցին։ Կազոտի կողքին նստած մարկիզ Կոնդորսեն կիսատ խմած գավաթը սեղանին դրեց, ծերունու ուսերը գրկեց և, ժպտալով, հարցրեց, թե նորելուկ մարգարեն ում նկատի ունի։ Կազոտը սևեռուն նայեց փիլիսոփային։

— Ձեզ, սիրելի մարկիզ, առաջին հերթին ձեզ... Ես տեսնում եմ, որ դուք կթունավորվեք դահճի ձեռքից մահ չընդունելու համար։

Կոնդորսեն, շարունակելով ժպտալ, աչքով արեց իրենց շրջապատած հյուրերին։ Ընդհանուր քրքիջ բարձրացավ։

Իսկ ծերունի միստիկի գունատ նեղ շուրթերը շարունակում էին շարժվել։ Նա աստղագետ Բայիի, իրավաբան Մալերբի և այդտեղ ներկա գտնվող մի շարք ուրիշ հյուրերի համար կառափնարանի մահ գուշակեց։ Նրա խոսելու հետ հետաքրքրությունը բորբոքվում էր. հարևան ճաշասեղանների մոտ խոսակցությունը դադարեց, և բոլորի դեմքերը շրջվեցին դեպի Կազոտի կողմը։

— Բայց պարոն գուշակը, հուսով եմ, կինայի գոնե մեր թույլ սեռը,— ծիծաղելով բացականչեց դքսուհի Գրամոնն։

— Ձեր սե՞ռը... Դուք, տիրուհի, ինչպես և բազմաթիվ ուրիշ տիկնայք, ձեռքներդ շղթայված, քառանիվ սայլով կըտեղափոխվեք մահապատժի հրապարակը...

Կազոտը վեր կացավ։ Նա սևեռուն նայեց դքսուհուն. նրա ալեհեր գլուխը, նահապետի նրա կերպարանքն իր խոսքերին տխուր կարևորություն էին տալիս։ Հյուրերն իրենց շատ վատ էին զգում։

— Դուք կտեսնեք,— կեղծ զվարթությամբ ասաց դքսուհին,— նա ինձ թույլ չի տա նույնիսկ մահապատժից առաջ խոստովանվել։

— Ո՛չ, տիրուհի, վերջին դատապարտյալը, որի համար այդ զիջողությունը կանեն, կլինի... — Կազոտը մի պահ կանգ առավ,— դա կլինի... Ֆրանսիայի թագավորը։

Սաստիկ հուզված, բոլոր հյուրերը սեղանից վեր կացան։ Ինչ-որ իսկույն անցավ թեթև արբեցումը, անհետացավ ուրախ տրամադրությունը։ Ապարդյուն էին տանտիրոջ փորձերը՝ դադարեցնելու անախորժ միջադեպը. երեկույթը փչացավ։ Հասարակության վրա, որ դեռ մի քանի րոպե առաջ այնպես անհոգ էր, կախվեց լռության ճակատագրական ծանրությունը։

... Արդյոք 1788 թվականի այդ երեկո ամեն ինչ ճիշտ այնպե՞ս տեղի ունեցավ, ինչպես այստեղ ասված է։ Չի կարելի երաշխավորել մանրամասնությունների ստուգության համար, որովհետև այդ գեպքը նկարագրել է նրա ականատեսներից մեկը մեծ հեղափոխությունից հետո, երբ Բային, Մալերբը և

դքսուհի Գրամոն վաղուց արդեն մեռել էին գիլյոտինի դանակի տակ, երբ բոլորն էլ գիտեին, որ մարկիզ Կոնդորսեն թունավորվել է, ազատվելով հեղափոխական օրենքի պատժիչ սրից, երբ, վերջապես, ոչ պակաս լավ հայտնի էր, որ Լյուդովիկոս XVI-ը մահապատժից առաջ վերջինն օգտվեց հին ռեժիմի մի քահանայի ծառայություններից։ Իհարկե, զարմանալի ոչինչ չկա, նույնիսկ եթե Կազոտի «մարգարեության» վկան այդ միստիկի բերանն է դրել որոշ չափազանց ճշտորեն իրականացված գուշակություններ, որը նույնպես կործանվել էր հեղափոխության փոթորկոտ օրերին։ Բայց, մյուս կողմից, հարկավոր չէր մարգարեության գերբնական ձիրք ունենալ՝ հեղափոխության նախօրեին կանխատեսելու նրա գալուստը, թագավորի և հին աշխարհի հետ կապված մի շարք գործիչների կործանումը. այդ ամենը միանգամայն ակներև էր թվում նրկարագրված դեպքից շատ առաջ ապրող բազմաթիվ մտածողների համար։

Ֆենելոնը, Լյուդովիկոս XIV արև-թագավորի, մի միապետի ժամանակակիցը, որի օրոք ֆրանսիական արքունիքի փայլն ամենաբարձր աստիճանի հասավ, իսկ միահեծանության ռեժիմը անսասան էր թվում, համարձակություն ունեցավ Ֆրանսիայի կառավարական ապարատը բնութագրել որպես մի «հին, խարխլված մեքենա, որը շարունակում է աշխատել առաջվա, վաղուց ստացած մղման հետևանքով և առաջին իսկ հարվածից անհապաղորեն ջարդուփշուր կլինի»։ Այս տողերը գրվել են XVII և XVIII դարերի սահմանագծին։ Հետագայում Ֆերնեյան նահապետ Վոլտերը այս նույն միտքն արտահայտում էր շատ ավելի որոշակիորեն, ուղղակի խոսելով հեղափոխության անխուսափելիության մասին, և միայն ցավում էր, որ ինքը մինչև այդ օրը չի ապրի։

Սոցիալական ապագա հուզումների մեծ նախակարապետ Ժան Ժակ Ռուսոն 1760 թվականին գրեց այնպիսի խոսքեր, որոնք խոբապես ապշեցրին պատանի Ռոբեսպիերին, խոսքեր, որոնց ըստ արժանվույն գնահատելը հնարավոր եղավ միայն շատ ժամանակ անցնելուց հետո. «Մենք մոտենում ենք ճգնաժամին ու հեղափոխության դարաշրջանին։ Ես անհնարին եմ համարում եվրոպական մեծ միապետությունների

ապագա տեսական գոյությունը. այդ բոլոր միապետություն-ներ իրենց ժամանակին փայլում էին, իսկ փայլունություն ձեռք բերած ամեն մի պետություն անկում է ապրում։ Իմ կարծիքը հիմնված է, մասնավորապես, նաև ուրիշ կ շ ռ ա գ ա տ ու թ յ ու ն ն ե ր ի վ ր ա, որոնք ավելի պակաս ընդհանուր բնույթ ունեն, քան այդ միտքը, բայց դրանք արտահայտելն անտեղի կլինի, ասենք, առանց այդ էլ ա մ ե ն ո ք դ ը ր ա ն ք շ ա տ լ ա վ է տ ե ս ն ու մ ...»։ Իրոք, նշանավոր խոսքեր են։ Աչք ունեցողը հո կտեսնի։ Ահա թե որտեղ պետք է փնտրել Կազոտի «մարգարեության» բանալին։ Կիսակույր միստիկը կարողացավ տեսնել այն, ինչ ակներև էր, բայց որից դիտմամբ իրենց երեսը շուռ տվին նրա դասային ամբարտավան եղբայրները...

Ֆեոդալական Եվրոպան մահանում էր։ Դա հանդչելու խաղաղ մահ չէր՝ դա փոթորկոտ մի պրոցես էր, որ խոցում էր մերթ մեկ, մերթ մյուս փտախտավոր անդամը, այն պոկում մարմնից, խժռում կրակի բոցերի մեջ։ Բայց կրակը ոչ միայն խժռում էր՝ այն ոչնչացնում էր հնացածը, կորստի մատնվածը, փտողը և վերածնում, կյանքի կոչում նորը, նորածինը, առաջադիմականը։

Ֆեոդալիզմը՝ փայլուն ասպետների և դոթական տաճարների ժամանակաշրջանը, նրբակիրթ քաղաքավարության և կաստայական արտոնությունների դարաշրջանը, ֆեոդալիզմը, որ դարեր շարունակ սենյորների ամբարտավան շռայլությունը հատուցում էր ճորտ գյուղացիների արյուն քրտինքով, վաղուց էր սպառել իր խորքային ռեսուրսները։

Արդեն XV դարի վերջից ամայացած արշավարանների և կիսավեր դղյակների վրա սավառնում էր մի նոր ոգի՝ ձեռնարկատիրական գործունեության ու հարստացման ոգին։ Միջնադարյան համքարությանը ճնշում էր կապիտալիստական մանուֆակտուրան։ Նորածին բուրժուան տնտեսապես ջարդում էր զառամած ֆեոդալին։

Բուրժուազիայի ուժն այն էր, որ նա ժողովրդի հետ համաքայլ էր ընթանում։

Եթե անցյալում ճորտ գյուղացիներն իրենց կեղեքողների

դեմ պայքարում էին երես առ երես, ապա այժմ դրությունը փոխվել է՝ ֆեոդալական ատելի հասարակարգի դեմ կողք-կողքի պայքարում էին նրան թշնամի երեք դասակարգ՝ բուրժուազիան, գյուղացիությունը և մանուֆակտուրային պրոլետարիատը։

Հեղափոխական պոռթկումների հուժկու ալիքը սլանում էր Եվրոպայի վրայով։ XVI—XVII դարերի Նիդերլանդական և անգլիական հեղափոխությունները լուրջ ճեղքվածք առաջացրին ֆեոդալիզմի հենարանում։

Բայց վճռական հարվածը հասցվեց Ֆրանսիայում, թեև հենց Ֆրանսիայում հին հասարակարգը երկար ժամանակ այնպես ամուր տեսք ուներ, ինչպես ոչ մի տեղ։ Բուրժուական հեղաշրջումն այստեղ զգալիորեն ավելի ուշ սկսվեց, քան Նիդերլանդիայում կամ Անգլիայում։ Քանի որ այդ հեղաշրջումը այդպես երկար ժամանակ հասունանում էր, այն պետք է առանձնապես հզոր ու վճռական լիներ։

Ֆրանսիայում կապիտալիստական կացությանն առաջացավ դեռևս XVI դարում։ XVIII դարի երկրորդ կեսի մոտերքին այն ամրացավ և մի որոշ աստիճանի հասունության հասավ։

Արդյունաբերության արագ աճը տանում էր դեպի քաղաքների զարգացումը, նրանց բնակչության զգալի ավելացումը։ Խոշոր մանուֆակտուրաներ առաջանալուց անմիջապես հետո երևան եկան առաջին մեքենաները։ Եվ այնուամենայնիվ առաջվա նման խիստ գերակշռում էր արհեստավոր գյուղացիների աշխատանքն օգտագործող տնային արդյունաբերությունը։ Ֆեոդալական ռեժիմի կաշկանդիչ դերն արտահայտվում էր ոչ միայն հին համքարական կարգի գերակշռությամբ, այլև արտադրության կառավարական կարգավորմամբ, մաքսային արգելքների անհաղթահարելի անջրպետի առկայությամբ, որոնք կապված էին այն ժամանակվա Ֆրանսիայի վարչական բաժանումների մեկուսացվածության ու բազմերանգության յուրահատկության հետ։

Ինչ վերաբերում է գյուղին,— իսկ Ֆրանսիան շարունակում էր ագրարային երկիր մնալ,— ապա այստեղ դրությունն է՛լ ավելի վատ էր։ Գյուղում կապիտալիստական կացութա-

ձևի զարգացմանը խանգարում էր գյուղատնտեսության դարավոր հետամնացությունը։ Այդ հետամնացությունը հենվում էր ֆեոդալական հարաբերությունների լճացման, հողամշակման եղանակների մեջ տեխնիկական կատարելագործությունների կիրառմանը խանգարող՝ հողամասերի խիստ մասնատվածության, կարիքից ու խավարամտությունից հիմնական արտադրողի՝ գյուղացու ճնշված վիճակի վրա։

Այդպիսի պայմաններում կապիտալիզմը զարգանալ չէր կարող առանց ֆեոդալական սահմանափակումների հին հեատպիմական սիստեմը կործանելու, մանավանդ որ արտադրության բնագավառում հակասություններն անընդհատ բարդանում էին նախահեղափոխական Ֆրանսիայի քաղաքական հասարակարգի Լուիյունից բխող սոցիալական սուր բախումներով։

Երկրի քաղաքական գագաթնակետը բացարձակ միապետությունն էր՝ իր կենտրոնի՝ թագավորական արքունիքի հետ։

«Պետությունը՝ այդ ես եմ»,— ասում էր թագավորը։ Առերեսուլթ միապետությունն անսահմանափակ էր թվում։ Գլխավոր շտատները՝ Ֆրանսիայի դասային-ներկայացուցչական հիմնարկությունը, 1614 թվականից ի վեր ոչ մի անգամ չէին հրավիրվել։ Պառլամենտները՝ դատական բարձրագույն մագիստրատուրաները, սնապարծ ու անզոր, երբեմն փորձում էին թագավորի հետ օպոզիցիա խաղալ, բայց թագավորն ամեն անգամ հաղթող էր դուրս գալիս։ Նա էր նշանակում ու պաշտոնանկ անում մինիստրներին, պատերազմ հայտարարում ու հաշտություն կնքում, իր կամքով երկրի ուզած բնակչին բանտ նետում։

Սակայն անսահմանափակ տիրակալը, ըստ էության, տիրող դասակարգի ձեռքին մի մարիոնետ էր։ Նա իր հսկայական հզորությունն օգտագործում էր կալվածատերերի ու եպիսկոպոսների կամքը կատարելու համար։ Այդ կամքն ուղղված էր մարդկանց կեղեքման ու ճնշման գործին։ Այն կեղեքում էր արտոնություններ չունեցող բոլոր մարդկանց, ճնշում այն ամենը, ինչ նոր էր, առաջադիմական, ինչը սպառնում էր կորստյան մատնված ֆեոդալական հասարակարգի հիմքերին։

Այն ուղղություն էր տալիս միապետության պատժիչ ձեռքին։ Սարսափելի լեռը դը կաշեն՝ թագավորի սորագրությամբ գաղտնի հրամանները, հարյուրավոր մարդկանց առանց դատի ու հետաքննության բանտախցերն էին նետում։ Թագավորի գործակալների զդոն վերահսկողության տակ էր գտնվում մարդկային մտքի ամեն մի ազատ արտահայտություն։ Տպագիր խոսքին հսկում էր գրաքննությունը։ Դավադրական համարվող երկերն այրվում էին դահճի ձեռքով։

Բացարձակ միապետությունը շատ թանկ նստող մի հիմնարկություն էր։ Այն զանգվածներին սարսափ և հարևաններին հարգանք ներշնչելու համար թագավորը պետք է շքեղացներ։ Միապետի ամբողջ կյանքը շրջապատված էր բարդ հանդիսակարգով։ Հոգևորականության վերնախավից և ընտրյալ ազնվականությունից կազմված նրա արքունիքն ապշեցնում էր իր հեքիաթային պերճությամբ։ Տասնհինգ հազար հոգուց կազմված արքունական անձնակազմը պահելու համար տարեկան ծախսվում էր մոտավորապես քառասուն միլիոն լիվր՝ պետական բոլոր եկամուտների տասներորդ մասը։ Մոտավորապես այդքան էլ ծախսվում էր նույն պալատականների թոշակների, պարգևների և այլ նվերների վրա։ Միայն թագավորի ճաշասեղանին մատուցվող սուրճի ու շոկոլադի վրա օրական ավելի շատ դրամ էր ծախսվում, քան Փարիզի մանուֆակտուրային բանվորն ստանում էր ամբողջ տարին անընդհատ աշխատելով։

Պերճությունը հսկայական գումարով դրամ էր խլում։

Հենց դրամից էլ ամեն ինչ սկսվեց։

Գալիք խարխլումների առաջին ծիծեռնակը, ֆեոդալական-միապետական հասարակարգի կործանման առաջին արտահայտությունը, որ հասարակությանը խորապես ցնցեց, պետական բյուջեի դեֆիցիտը եղավ, որը նախ միայն վախեցրեց, իսկ հետո ամուր աքցանի մեջ սեղմեց Լյուդովիկոս XVI-ի միապետությունը։

Դեֆիցիտն անխուսափելի երևույթ էր։ Այն լավ էին նախապատրաստել նախընթաց տասնամյակները, առանձնապես վերջին տարիները «շատ սիրելի» Լյուդովիկոս XV-ի, մի

թագավորի, որին վերագրում էին «Մեզանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ» ասույթը։

Նոր թագավորությունն առաջին շրջանում ոմանց նոր դարաշրջանի սկիզբ էր թվում։ Դա պատրանք էր։ Արքունիքն իսկույն Տյուրգոյի ու Նեքերի նման հեռատես մինիստրների դատաստանը տեսավ։ Մախսերն անչափորեն աճում էին։ Թեթև միս և իշխանատենչ Մարիա Անտուանետան, որին ժողովուրդը պարգևատրել էր «տիկին Դեֆիցիտ» տիտղոսով, արքունիքին վերադարձրեց արև-թագավորի ժամանակների արտաքին փայլը։ Մեկ տոնախմբությանը փոխարինում էր մյուսը, պարահանդեսները հերթագայում էին թատերական շքեղ ներկայացումների հետ, որսորդությունն ապշեցնում էր իր թափով։

Իսկ դանձարանում փող չկար...

Պետական դեֆիցիտն օրեցօր աճում էր։ Հաշիվը միլիոններից միլիարդների էր անցնում։ Եվ ահա վրա հասավ մի պահ, երբ դանձարանը փոխառությունների տոկոսները վճարել չէր կարող, իսկ առանց փոխառությունների բացարձակ միապետությունն այլևս գոյություն ունենալ չէր կարող։

Այն ժամանակ որոշեցին պատմությունը վերհիշել։ Անցյալում, երբ միապետն այդքան դժվարին կացության մեջ էր լինում, արտակարգ հարկ էին նշանակում, որն օգնում էր ըստ ասի կերպով ճեղքվածքները ծածկելու. բայց այդպիսի հարկ կարող էր թույլատրել միայն դասային-ներկայացուցչական հիմնարկություններից մեկը՝ կա՛մ նոտաբլների ժողովը, կամ Գլխավոր շտատները։ Նոտաբլների ժողովը շատ ավելի հարմար էր գալիս միապետությանը, որովհետև նոտաբլներին՝ արտոնյալների լիդերներին և երրորդ դասի սակավաթիվ ներկայացուցիչներին, հրավիրում էր թագավորը անուն առ անուն, մինչդեռ Գլխավոր շտատների՝ համար երեք դասերի պատգամավորներին բնակչությունն էր ընտրում։

Եվ ահա 1787 թվականին նոտաբլների ժողով հրավիրվեց։ Հաշվի առնելով, որ արտակարգ հարկը հավաքելով հարցը չի լուծվի, կառավարությունը կամ-ակամա ստիպված է լինում

Տյուրգոյի պլանը հիշել։ Զգուշությամբ նոտաբլների քննությանն են դնում հարկային սիստեմի փոփոխման նախագիծը։ Թող հարկերի մի մասը արտոնյալ դասերը վճարեն, որովհետև էլ ո՞վ պետք է ազնվականական միապետությանն օգնի, եթե ոչ ազնվականությունը, որի շահերի համար էլ այն գոյություն ունի։

Բայց թագաժառանգները, դուքսերը և եպիսկոպոսները, որոնք սովորել էին գանձարանը կողոպտել, այդ բանին բոլորովին այլ կերպ են նայում։ Նրանք զայրանում են։ Ոչ, նրանք չեն կարող հրաժարվել իրենց կարևորագույն արտոնությունից, նրանք ոչ մի սու չեն վճարի, որովհետև հարկավճարումը հարկատու, ռամիկ բնակչության, այդ բոլոր կեղտոտ առևտրականների ու գյուղացիների գործն է։ Իրենց կենսական շահերի անտեսումից վիրավորված, արտոնյալ նոտաբլները չեն ուզում հասկանալ իրենց թագավորին, և վերջինիս ուրիշ ոչինչ չի մնում անել, քան նրանց արձակել։

Կառավարության և բարձր խավերի միջև առաջացած այդ, առաջին հայացքից պարադոքսային, բայց, ըստ էության, տվյալ պայմաններում միանգամայն օրինաչափ կոնֆլիկտը մեծ դրամայի նախերգանքն էր, լինելով նախահեղափոխական Ֆրանսիայի տնտեսության ամբողջ ֆեոդալա-ճորտատիրական սիստեմի ընդհանուր տնելանելի ճգնաժամի դրսևորման ձևերից մեկը։

Իրոք որ 1788—1789 թվականների ֆինանսական սնանկացումը սերտորեն միահյուսվում էր արդյունաբերության ու առևտրի լճացման և գյուղում սոսկալի անբերրության ու սովահարության հետ։ Ժողովուրդն անիծում էր իրեն ստրկացնողներին։ Բարձրանում էր գյուղացիական ու պլեբեյական շարժումների նոր հզոր մի ալիք։

Այժմ նույնիսկ արքունիքը հասկացավ, որ առանց ազնվականությանն ու հոգևորականությանը հարկելու ապրել չի կարելի։ Դա հեղափոխության մոտեցումը հետաձգելու միակ միջոցն էր թվում։

Սակայն կառավարության բոլոր ջանքերը չկարողացան ընկճել արտոնյալների դիմադրությունը։ Փարիզի պառլամենտը կտրականապես հրաժարվեց հարկերի նոր ձևերի մա-

սին թագավորի հրովարտակը գրանցելուց, ընդ որում՝ անօրինակ մի դեպք պատմության մեջ,— չօգնեց նույնիսկ թագավորի մասնակցությամբ տեղի ունեցած նիստը։ Կառավարությանը վճռական հակահարված տալու համար պառլամենտի անդամները հանդիսավոր կերպով հայտարարեցին, որ նոր հարկեր հաստատելու իրավունքը պատկանում է բացառապես Գլխավոր շտատներին։

Այսպես բարձր դասերն իրենց արտոնությունները պահպանելու մոլուցքով տարված, սոսկալի հարված հասցրին իրենց սեփական հենարանին՝ բացարձակ միապետությանը։ Նրանք այդ սխալի համար ծանր պատիժ կրեցին։

Գլխավոր շտատների հրավիրման պահանջը շուտով դարձավ ամբողջ ազգի լոզունգը։ Եվ ահա միապետությունը սրնանկացման դամոկլյան սրի տակ, ամեն բոպե ընդհանուր ապստամբություն սկսելու պատրաստ ժողովրդի ահեղ տրտունջը լսելով, որոշեց այդ ծայրահեղ միջոցին դիմել։ Միաժամանակ թագավորը նորից ֆինանսների մինիստր նշանակեց երրորդ դասի շրջանում ժողովրդականություն վայելող Նեքերին։ Թագավորի հրովարտակը Գլխավոր շտատների հրավիրումը հայտարարեց 1789 թվականի նախ ապրիլի 27-ի, հետո մայիսի 5-ի համար։

Գլխավոր շտատների առաջիկա նստաշրջանի մասին լուրերն արագորեն տարածվում էին ամբողջ Ֆրանսիայում։ Այդ լուրերն Առաս հասան դեռևս 1788 թվականի ամռանը։ Քաղաքը հուզված էր։ Հիմնարկություններում, սալոններում, փողոցներում անվերջ քննարկում էին Նեքերի նորից իշխանության գլուխ անցնելը և ապագայի հեռանկարները։ Միայն Մաքսիմիլիան Ռոբեսպիերը չէր մասնակցում ընդհանուր իրարանցմանը։ Նա մի քանի օրով փակվեց իր սենյակում։ Երբ նա այնտեղից դուրս եկավ, նրա դեմքը սովորականից ավելի դունատ էր։ Նա ձեռքին բռնել էր խնամքով փաթաթած մի ձեռագիր՝ իր պատասխանն ընթացիկ դեպքերի մասին։ Դա Արտուայի նահանգի ժողովրդին ուղղված մի կոչ էր նահանգական շտատների արմատական բարեփոխման անհրաժեշտու-

թյան մասին։ Ռոբեսպիերի՝ ցասումնալից մերկացումներով ու քաղաքական հարձակումներով լի նոր երկը խստորեն տարբերվում էր նրա նախկին կոնկուրսային աշխատություններից ու ակադեմիական զեկուցումներից։

«... Մեր շտատները,— գրում էր Ռոբեսպիերը,— ծանր հարկերի տակ ճնշված ժողովրդի կարիքի ու աղքատության հետ գործ չունեն. նրանք ժողովրդին հաց ու կրթություն տալու համար դրամ չունեն, բայց արտասովոր կերպով առատաձեռն են, երբ պետք է դատերն ամուսնացնող նահանգապետին հսկայական գումար հատկացնել... Մեր գյուղերը լցված են ընչազուրկ մարդկանցով, որոնք հուսահատության արցունքներով ողողում են հենց այն հողը, որն անօգուտ կերպով քափ ու քրտինքի մեջ կորած մշակում են։ Աղքատության հետևանքով գյուղացիների մեծ մասն այնքան է բարոյալքվել, որ մարդ, ամբողջովին իր խղճուկ գոյության պահպանման հոգսերով կլանված, արդեն անընդունակ է դառնում գիտակցելու իր իրավունքներն ու վերացնելու իր դժբախտությունների պատճառները...»

Հեղինակի կարծիքով, այդ գրությունից դուրս գալու միջոցը Արտուայի շտատների արմատական բարենորոգումն է, դրանք իսկական ժողովրդական ներկայացուցչություն դարձնելը։ Միայն այս դեպքում շտատները կկարողանան գիմադրել ադմինիստրացիայի չարաշահումներին և իսկապես հոգ տանել ժողովրդի կյանքի մասին։ Այդ բարենորոգությունը պետք է տեղի ունենա այժմ, անհապաղ, որովհետև «հասել է այն պահը, երբ սրբազան խանդավառության կայծերը յուրաքանչյուրին կյանք, խիզախություն և հրջանկություն կտան»։

Անցյալում այդպիսի բրոշյուր լույս ընծայելու համար բանը հավասար չափով կսպառնար թե՛ հեղինակին, թե՛ հրատարակչին։ Սակայն ժամանակները փոխվում են, մոտալուտ հեղափոխության ոգին արդեն սավառնում է ամենուրեք, և 1788 թվականի ձմռան մոտերքը երկուս ու կես հազար համանման բրոշյուրներ լույս են տեսնում Ֆրանսիայի տարբեր ծայրերում։

Բայց ահա այդ ձմեռն անցավ, և վաղ գարնանային արևը ծագեց Առասի վրա։ 1789 թվականի մարտի 17-ին քաղաքի ավագները հանդիսավոր կերպով հայտարարեցին, որ երրորդ դասին պատկանող բնակիչները պետք է մարտի 23-ին, առավոտյան ժամը 7-ին հավաքվեն Առասի կոլեջի եկեղեցում՝ նախնական ընտրությունների համար։

Մաքսիմիլիան Ռոբեսպիերը հաջողությամբ անցավ բոլոր ինստանցիաներից. նա նախ առաջադրվեց որպես Առասի երրորդ դասի քսանչորս ընտրողներից մեկը, հետո մասնակցեց գյուղացիական ժողովների լիազորների միացյալ ժողովին, որտեղ նրան հանձնարարեցին կազմել ընտրական օկրուգի ամփոփիչ նակազը, և, վերջապես, ամբողջ Արտուայի նահանգի երրորդ դասի ընտրողների ընդհանուր ժողովի կողմից Գլխավոր շտատների դեպուտատ ընտրվեց։

Ռոբեսպիերի կազմած նակազը համառոտակի ձևակերպում էր այն ծրագիրը, որով Առասի դեպուտատը պետք է Վերսալում հանդես գար։ Այդ ծրագիրը պահանջում էր բոլոր քաղաքացիների համար պետական ցանկացած պաշտոն գրավելու հնարավորություն, անձի անձեռնմխելիության երաշխիքներ, մամուլի լիակատար ազատություն, կրոնի հանդուրժողականություն, հարկերի համամասնական բաշխում, բոլոր արտոնությունների ու չարաշահումների վերացում, կառավարության գործակալների պատասխանատվություն, գործադիր իշխանության իրավունքների սահմանափակում։

Այսպես, իր հայրենակիցների վստահությամբ օժտված, պատրաստ առանց երկյուղի ու կասկածների կենսագործելու տեսականորեն մշակված ու կշռադատված սկզբունքները, Մաքսիմիլիան Ռոբեսպիերը նորից էր պատրաստվում ճանապարհ ընկնելու, ոչ առանց ափսոսանքի հրաժեշտ տալով սիրելի պարապմունքներին և հայրենի քաղաքին։ Բայց, անշուշտ, այդ ափսոսանքն ընկրկում էր ապագայի հույսերի ու պլանների առաջ։ Ապագայում անհամեմատ ավելի շատ բան էր երևում, քան մնում էր անցյալում՝ ապագայում հեղափոխությունն էր։

ԳԼՈՒԽ 4

ԱՄՐՈՑՆԵՐԻ ԳՐՈՀՈՒՄԸ

Վերսալ։ Աղջամուղջ։ Անհարմարավետ, գրեթե անբնակ մի սենյակ էթան փողոցի № 16 տանը։ Գրասեղանի մոտ՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը։ Նրա առջև թուղթ ու թանաք։ Նա խորհրդածում է և մտացիր կերպով գրիչը տանում թերթի վրայով...

... Երեկ... Այսօր... Վաղը... Ինչպե՞ս արագ, սրընթացորեն արագ են թռչում օրերը։ Եվ ամեն օրը բերում է իրենը, նորը, երբեմն անհավատալին։

Վերջապես, այսօր ազատ ժամանակ եղավ։ Ռոբեսպիերը կարող է մտքերը ժողովել։ Նա մեկնելուց առաջ իր բարեկամ Բյուիսարին խոսք տվեց ամեն ինչի մասին մանրամասն նամակ գրել. էլ ո՛վ, եթե ոչ ի՛նքը պետք է հայրենի Առասին հաղորդի այն մասին, ինչ տեղի է ունենում այստեղ, երկրի սրտում։ Բայց խոստանալը հեշտ էր, իսկ ահա կատարելը, ավա՜ղ, շատ դժվար է։ Իրադարձությունների շրջապտույտը տառացիորեն շփոթեցրեց...

Ասենք, հիշողության մեջ ամեն ինչ թարմ է մնացել։ Դեպքերը շարանով են ծավալվում, և դրանց հաջորդականությունն այստեղ, թղթի վրա, վերականգնելը, քանի որ ազատ ժամանակ կա, իսկապես, շատ հեշտ է...

... Մաքսիմիլիանի գրիչն արդեն վաղուց զարդանախշեր ու վարդագրանուններ չի գծանկարում։ Իրար տակ ընկած են թվականներ, իսկ դրանցից ամեն մեկը մի ուղենիշ է պայքարի երկամյա ճանապարհին...

... Մայիսի 5 ... Գլխավոր շտաբների հանգիստավոր բացում։ Որքա՜ն շատ բան էին ակնկալում այդ օրից և ինչպե՞ս խարվեցին իրենց սպասելիքների մեջ։ Որովհետև իսկույնևեթ պարզվեց, որ միապետությունը և հարկատուների դեպուտատները խոսում են ու կխոսեն տարբեր լեզվով։ Եթե թագավորը, Շտաբներն իր ֆինանսական պլանները թաքցնող մի վարագույր համարելով, ձգտում էր միայն նոր հարկերի, ապա երրորդ դասի դեպուտատները մտածում էին բարենորոգումների մասին։ Նրանք հասկացան, որ այդ բարենորո-

գումները պետք է սպասել ոչ թե միապետի ողորմածությունից, այլ միայն իրենց սեփական վճռականությունից։

Բայց վճռականություն կար։ Բուրժուաները հարուստ են, նրանք իրենց ազգի ներկայացուցիչներ էին զգում։ Ժողովրդի աջակցությունը նրանց շատ ավելի հաստատակամ ու եռանդուն էր դարձնում, քան կառավարությունն ու «ազնվազարմները» կարող էին ենթադրել...

.. Մայիսի 14 ... Ազնվականությունը և բարձր հոգևորականությունը շարունակում են Շտատների աշխատանքին խոչընդոտներ հարուցել։ Երրորդ դասի դեպուտատները հանդես են գալիս վերնախավերի օրստրուկցիոն քաղաքականության հաղթահարման տարբեր նախագծերով...

Մաքսիմիլիանը վերհիշում է։ Այդ նախագծերից մեկը, և բավական լավ մի նախագիծ, անձամբ նա առաջարկեց։ Դա նրա առաջին ելույթն էր Շտատների ամբիոնից։ Բայց նրա առաջարկությունն արհամարհեցին, իսկ նրա վրա ուշադրություն չդարձրին...

... Հունիսի 17... Հարկատուների դեպուտատները գտնում են ստեղծված դրությունից դուրս գալու միջոցը։ Նրանք այնքան են խիզախանում, որ իրենց հռչակում են Ա զ գ ա յ ի ն ժ ո ղ ո վ և արտոնյալներին առաջարկում իրենց հետ միանալ համատեղ աշխատելու համար...

Մաքսիմիլիանը հոգոց է հանում։ Արդյոք առաջինն ի՞նքը չառաջարկեց «Ազգային ժողով» ֆորմուլան։ Ֆորմուլան ընդունեցին, իսկ ահա իրեն չնկատեցին։

... Հունիսի 20 ... Միապետությունը փորձեց շատ համարձակ պլերեյներին հակահարված տալ։ Նրանց շենքից զրկեցին։ «Փոքր զվարճությունների» պալատը, որտեղ նրանք սովորաբար խորհրդակցում էին, փակեցին ու պահազորով շրջապատեցին։ Դե, ի՞նչ կա որ։ Վերսալի ժողովուրդը ցույց տվեց մի ուրիշ շենք՝ գնդակախաղի դատարկ գահլիճը։ Ազգային ժողովի դեպուտատները հենց այստեղ տվեցին համերաշխության իրենց հռչակավոր երդումը՝ չցրվել այնքան ժամանակ, քանի դեռ միահեծանության կամայականությունները սահմանափակող օրենքներ չհրատարակեն...

Մաքսիմիլիանը դառնորեն ժպտում է։ Արդյոք ի՞նքը չէր

այդ երգման տեքստի հեղինակներից մեկը։ Տեքստն օգտագործեցին, իսկ իրեն դարձյալ չցանկացան նկատել։ Այո, ինքը անանկատելի էր մնում այդ բոլոր միրաբոների, սիեյսների, բայիների և բարնավների, փառապանծ իմաստունների և փայլուն հռետորների մեջ...

Իսկ պայքարն ընթանում էր իր կարգով։

Վերջ ի վերջո կառավարությանը ուրիշ ոչինչ չէր մնում, քան զիջումներ անել։ Արտոնյալները կամա-ակամա միացան հարկատուներին...

... Հուլիսի 9 ... Ազգային ժողովն իրեն Ս ա հ մ ա ն ա դ ի ր ժ ո ղ ո վ հայտարարեց, դրանով իսկ շեշտելով, որ իր հիմնական խնդիրը համարում է նոր հասարակարգի հիմնադրումն ու սահմանադրության մշակումը։

Խոշոր բուրժուազիան և ազնվականության նրա հետ համերաշխվող մասը բավարարվեցին։ Նրանք կարծում էին, թե հեղափոխությունը մոտենում է իր ավարտին։ Բայց այդպե՞ս է արդյոք։ Իսկ զուցե՞ հեղափոխությունը նույնիսկ դեռ չի բռկրվել։ Գուցե՞ մայիս—հունիսին տեղի ունեցած ամեն ինչ նրա նախերգանքն է միայն...

Մաքսիմիլիանը գրում է։ Նա գրում է երկար ժամանակ, հետո մոռածում։ Եվ դարձյալ գրում։

Հուլիսի 12-ի առավոտյան Փարիզը սովորական տեսք ուներ։ Չնայած օրը կիրակի էր, արվարձաններում աշխատանքը եռում էր։ Կենտրոնական փողոցները լեփ-լեցուն էին զուգված հասարակությամբ։ Պճնազգեստ տղամարդիկ լոռնետով նայում էին կանանց, միրգ, շագանակ, ոստրե վաճառող փերեզակները բարձրաձայն գովաբանում էին իրենց ապրանքները։ Ժամը 10-ին մոտ որոշ մարդիկ ուշադրություն դարձրին հրապարակների մատույցներն զբաղեցրած զորաջոկատների՝ հետևակի ու հեծելազորի վրա։ Երևացին հրետանային գումակներ։ Այդ ինչի՞ համար կլինի...

Եվ հանկարծ շշուկով տարածվեց սարսափելի մի լուր։ Նրան դեռ չէին հավատում, դեռ կասկածում էին, բայց կիրակնօրյա տրամադրությունը միանգամից ընկավ։ Լսվեցին շրջակների ձայները։ Մարդիկ, աշխատանքն ընդհատելով, վա-

զում էին դեպի կենտրոն։ Հայտաբերեց բազմության մեջ խառնվել էին արհեստավորների գոգնոցները, զրասենյակային ծառայողների սև կոստյումները, բուրժուաների ցանցագծավոր ֆրակները։ Մարդկանց հեղեղները շարժվում էին մեկ ուղղությամբ՝ դեպի Պալե-Ռոյալի զբոսայգին։

Զբոսայգին գվվում էր։ Բազմությունն այնքան էր կուտակվել, որ թվում էր ասեղ գցելու տեղ չկար։ Առավել ձեռներեց մարդիկ ծառերն էին բարձրացել՝ ավելի լավ տեսնելու ու լսելու։ Հատկապես ի՞նչ։ Այդ ոչ ոք ստույգ չգիտեր։

Բայց ահա ժամը տասներկուսին ասես բազմության գլխին որոտ ճայթեց։ Վերսալից բանբեր եկավ։ Նա քրտնած է և դժվարությամբ է քայլում, նրան պահում են թեատակերից բռնած։ Բոլորը ետ են քաշվում, ճամփա տալիս։ Այո՛։ Կասկած չի՛ մնում։ Դավաճանությո՞ւն։ Ժողովրդի գործին դավաճանե՞լ են, այն վտանգի տակ է գտնվում։

Նախորդ օրը ցերեկը Նեքերին պաշտոնաթող են արել։ Նրա փոխարեն նշանակել են մոլի ռեակցիոներ բարոն դը Բրեուելին, որը պարծենում էր, թե Փարիզը կայրի։ Արքունիքը պատրաստվում էր Ազգային ժողովը ցրելու։ Մայրաքաղաքը շրջապատված է բարոն Բեզանվալի վարձկան զորքերով։

... Զբոսայգու տարբեր կողմերում հայտնվում են հռետորներ, որոնք բացատրում են Նեքերի հրաժարականի քաղաքական նշանակությունը։ Նրանցից մեկը, դեռ բոլորովին երիտասարդ, երկարամազ մի տղա, առանձին զայրույթով է խոսում։ Նա խոյանքով լեցուն է, խանդավառված։ Նրա մի ձեռքին ատրճանակն է, մյուսում՝ սուսերը։ Շուրջը հսկայական բազմություն է հավաքվել։ Նստարանին բարձրանալով, նա բղավում է խզված ձայնով.

— Քաղաքացիներ, կառավարությունը ձեզ համար նոր Բարդուղիմեոսյան գիշեր է նախապատրաստում։ Լավագույն հայրենասերներին կկոտորեն։ Դուք ոչ մի վայրկյան չպետք է հապաղեք։ Ի զե՞ն։

Հռետորին քչերն են ճանաչում։ Ինչ-որ մեկը տալիս է նրա անունը՝ Քամիլ Դեմուլեն։ Բայց մի՞թե բանը անունն է։ Այժմ ամեն ինչ համարձակությունն ու նախաձեռնությունն են որոշում։ Ահա նա ծառից մի տերև է պոկում ու կպցնում իր գլխարկ-

գին՝ դա հեղափոխության խորհրդանիշն է։ Շրջապատող մարդիկ հետևում են նրա օրինակին։ Հետո նա, սուրը ճոճելով, իր հանպատրաստից կազմած զորքի գլուխն անցած սլանում է գեպի Վանդոմյան հրապարակը։

Այդ օրը թափվեց առաջին արյունը։ Համազարկերը որոտում էին Վանդոմյան և Լյուդովիկոս XV-ի հրապարակներում։ Իշիան Լամբեսկի հեծյալ գունդը փորձում էր ցուցարարներին ջախջախել։ Բայց այդ ամենը ժողովրդի ցասումը կրկնապատկեց միայն։ Հրացանային առաջին համազարկը դարձավ ապստամբությունն սկսելու ազդանշանը։ Քարերի տարափի տակ հեծելազորը նահանջեց։

«Ի զե՞ն»,— այդ կոչը լսվում էր ամենուրեք։ Ժողովուրդը զինվում էր ինչով որ կարողանում էր։ Վերցնում էին դանակներ ու հրացաններ խանութներում, հինավուրց նիզակներ ու սաղավարտներ թանգարաններում, բորակ ու վառոդ ամենուրեք, որտեղ գտնում էին։ Մայրաքաղաքը ծածկվում էր բարիկադներով։ Ուղեկալները բոցավառվում էին։ Ահազանգը խրփում էր՝ կոչ անելով։

Երեկոյան դեմ դրությունը որոշակի դարձավ։ Բարոն Բեզանվալը որոշեց Փարիզից հեռանալ։ Նրա զորքերը դիմադրությունը դադարեցնում էին։ Ֆրանսիական գվարդիայի զինվորները եղբայրանում էին ժողովրդի հետ։ Փարիզեցիների հաղթանակն ակներև էր դառնում։

Այժմ խոշոր բուրժուազիան սկսեց անհանգստանալ։ Ժողովուրդը զորքերին հաղթեց։ Իսկ հետո ի՞նչ կլինի։ Ժողովրդի հաջողությունները լավ են միայն այն դեպքում, երբ հաջողվում է դրանք օգտագործել։ Չի՛ կարելի ապստամբության տարերքին ազատություն տալ, այլապես այն կարող է ամեն ինչ կլանել։

Հուլիսի 13-ի լուսաբացին Փարիզի անհանգստացած ընտրողները շտապեցին քաղաքապետարանը գրավել և ստեղծել մունիցիպալ իշխանության իրենց օրգանը՝ Մշտական կոմիտեն։ Կոմիտեի աշխատանքին մասնակցելու հրավիրեցին հին ադմինիստրացիայի գործիչներին, այդ թվում վաճառականության

ավագ Դելեսելին, ամբողջ հոգով միապետությանը նվիրված խորամանկ ու ենթող մի մարդու։

Մշտական կոմիտեն խնդիր դրեց ժողովրդական ապստամբություններ դսպելու և աստիճանաբար վերացնելու։ Այդ նպատակով կազմակերպվեց բուրժուական միլիցիա, որը ֆբրանսիական գվարդիայի ջոկատների հետ միասին պետք է դառնար մայրաքաղաքի խոշոր սեփականատերերի հենարանն ու պաշտպանը։

Բայց ապստամբած ժողովրդին դսպելն այնքան էլ հեշտ չէր։ Ապստամբները թեև Մշտական կոմիտեին վստահում էին, չէին ուզում կատարել նրա բոլոր կարգադրությունները։

Հուլիսի 14-ի առավոտյան դեմ Փարիզը ժողովրդի ձեռքին էր։ Միայն Բաստիլի հսկայական մռայլ զանգվածն էր կախվել Սենտ-Անտուան արվարձանի վրա, հիշեցնելով, որ հաղթանակը դեռ չի ավարտվել։

Ո՞վ առաջինը ցույց տվեց Բաստիլը։ Ամենից առաջ ո՞ւմ մտքով անցավ նրա վրա գրոհելու անհրաժեշտությունը։ Լուրերը տալիս էին կրակոտ Քամիլ Դեմուլենի անունը։ Սակայն հենց դեպքերի տրամաբանությունը հանգեցնում էր Բաստիլի գրավման անհրաժեշտությանը։

Սարսափելի ամրոցաբանտը մարմնավորում էր բացարձակ միապետության բռնակալությունն ու կամայականությունը։ Դա ահավոր մի խորհրդանիշ էր, մշտական հուշ ստրկության դարավոր շղթաների մասին։

Ըստ որում Բաստիլը անմիջական մի սպառնալիք էր Փարիզի աշխատավոր ժողովրդի համար։ Հուլիսի լույս 13-ի գիշերը շվեյցարացի վարձկան զինվորները մեծ քանակությամբ վառոդ տեղափոխեցին ամրոցը։ Բաստիլի պարետը, միահեծանության մոլի մի կողմնակից, հրամայեց հրակնատների բանակն ավելացնել և հրանոթների փողերն ուղղել դեպի Սենտ-Անտուան արվարձանը։

Այդ նախապատրաստությունները երկար ժամանակ գաղտնի մնալ չէին կարող։ Ժողովուրդը հասկացավ պարետ Դելոնեի պլանները։ Եվ տեղնուտեղը տարերայնորեն հասունացավ Բաստիլը գրավելու որոշումը։

... Մուխը բոլոր կողմերից պատել է շարագուշակ աշտարակները։ Այրվում են գետին տապալված սայլեր ու դերաններ։ Հրանոթների որոտը ճեղքում է շիկացած օդը։ Մարդիկ ընկնում են, բայց գրոհող բազմությունը չի նոսրանում. հրոր ու անպարտելի, նա՝ ավելի ու ավելի է սեղմում ամրոցի շրջապատման օղակը։ Արդեն խորտակվել են դարպասները և գրավվել է առաջին բակը, արդեն շառաչով կտրվում են շղթաները և ամբարձիչ կամուրջը խորտակվում է, բացելով խրամանցարանը։ Բաստիլի պաշտպանները տեսնում են, որ ամրոցը ուր որ է կգրավեն։ Որտե՞ղ է սպիտակ դրոշակը...

Դելոնեն ներքին բակում թախծոտ այս ու այն կողմ է նետվում։ Նրա շվեյցարացիներն այլևս չեն կրակում, նրա սպաները խորհրդակցում են անձնատուր լինելու։ Իսկ ի՞նչ անել։ Նա նետվում է դեպի վառոդի պահեստը։ Պայթեցնե՛լ Բաստիլը... Նրան սարսափահար ետ են պահում։ Հրետանային համազարկերը փշրում են երկրորդ կամուրջի շղթաները։ Պաշարողները ներխուժում են ամրոց։ Բաստիլը տապալվո՞ւմ է։ Բանտախցերի դռները լայն բացվում են, կալանավորներին ազատում։ Արցունքներ, գրկախառնություններ, ուրախության ճիչեր...

... Բազմությունը Դելոնեին քարշ տալով տանում է Գրևյան հրապարակը։ Այստեղ նա մահ է գտնում։ Հենց այդ օրն էլ կործանվում է ժողովրդի կողմից մերկացված Ֆլեսելը։

Առայժմ Վերսալը դեռ ոչինչ չգիտի, թե Փարիզում ինչ է տեղի ունեցել։ «Փոքր զվարճություններիս» պալատը, որտեղ Ազգային ժողովը նիստեր է ունենում, խաղաղ ու մռայլ է։ Անհանգստացած դեպուտատները երեք գիշեր շարունակ չեն քնում, ուղերձներ են գրում թագավորին և սպասում իրենց ճակատագրին։

Իսկ արքունիքը, մոտալուտ հաղթանակի ուրախությունը կանխավայելելով, երգում ու խրախճանք է անում։ Զինվորներին առատորեն գինի ու դրամ են տալիս։ Թագուհու ախոռներում թաքուն պահում են հրետանին։ Նույնիսկ վհատ հաստամարմինն իրեն ամբարտավանորեն է պահում և Ասամբլեայի ուղերձները լսել չի ուզում։ Նա թագավո՞ր է։ Նա այդ

ռամիկների հետ խոսելու բան չունի՞։ Շուտով նրանք բոլորն էլ կզգա՞ն իր ծանր ձեռքի զորությունը։

Եվ հանկարծ անակնկալ կերպով անսպասելի լուր են բերում, որ զինվորները վտարվել են Փարիզից, գվարդիան անցել է ժողովրդի կողմը, ուղեկալները այրվում են, Բաստիլն ընկել է...

Լյուդովիկոսը քարացած նայում է պալատականներին։

— Թույլ տվեք, պարոնայք, բայց չէ՞ որ դա խռովություն է։

Դուքս Լիանկուրը սառը քմծիծաղով ուղղում է նրան.

— Ոչ, ձերդ մեծություն, դուք սխալվեցիք, դա խռովություն չէ։ Դա արդեն հ ե ղ ա փ ո խ ո ւ թ յ ո ւ ն է...

Դուքսը գոհ է, որ թեավոր խոսք ասաց։ Նա չի էլ կասկածում, թե իր միտքը որքան մոտիկ է ճշմարտությանը։ Իրոք որ, այդ օրը, 1789 թվականի հուլիսի 14-ին, տեղի ունեցավ ֆրանսիական մեծ հեղափոխության առաջին գործողությունը՝ բացարձակ միապետությունը մահացու վերք ստացավ։

Երիտասարդ դեպուտատ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը մեծ ուշադրությամբ էր վերաբերվում տեղի ունեցող երևույթներին։

Տարօրինակ, անհասկանալի բան։ Երրորդ դասի վեց հարյուր ընտրողներ համարձակորեն ձայն են բարձրացնում, բոլոր արգելքները հաղթահարում և հասնում այն բանին, որ նրանց համարում են Ազգային ժողով։ Նրանք խոսում ու գործում են ամբողջ ժողովրդի անունից՝ այդ է նրանց ուժը։ Թագավորն ու արքունիքը բացահայտորեն խարում են նրանց և պատրաստվում նրանց թիկունքին հարված հասցնելու։ Արդեն սուրը բարձրացված է, և բռնակալությունը կանխաճաշակում է հաղթանակը, բայց հանկարծ... Ո՞հ, հրաշք։ Ժողովուրդը, հասարակ ժողովուրդը, Փարիզի անհայտ պլեբեյները դրությունը փրկում են։ Նրանք խափանում են մահացու հարվածը և վերացնում արքունիքի գավերը։ Ազգային ժողովը փրկվա՞ծ է։ Բայց ինչո՞ւ ոչ ոք չի ուրախանում։ Ինչ՞ու բոլորն այդպես խոժոռադեմ են։ Ինչո՞ւ նրանք այդպես երկչոտաբար

սեղմվում են տապալված միապետին, որը քիչ էր մնացել, որ նրանց սաստիկ ջարդեր։

Նրանք վախենո՞ւմ են։ Այո, նրանք իրենց փրկողներից անհամեմատ ավելի են վախենում, քան միապետից։ Նրանք պատրաստ են ներել թագավորի ամբողջ խարդավանքը։ Ինչպիսի՜ մոլեգնությամբ են նրանք ծափահարում, երբ նա, գոլալով ու գունատ, գալիս է ժողովը։ Պարզվում է, որ թագավորը նրանց հարկավոր է, միանգամայն անհրաժեշտ է որպես հենարան ընդդեմ մասսաների, ընդդեմ այն ժողովրդի, որի անունից նրանք այստեղ հավաքվել են և որի կողմից հայտարարում են իրենց որոշումները։

Ռոբեսպիերը թոթվում է ուսերը։ Դե ինչ, պարոնայք, մեր ճանապարհները տարբեր են։ Առայժմ որ ես գրեթե մենակ եմ՝ դուք ինձ չեք նկատում, հետո դուք ինձ կհետապնդեք ու կարհամարհեք՝ այդ ամենը ես նախապես գիտեմ։ Բայց ես համարձակորեն կգնամ իմ ճանապարհով, այն ճանապարհով, որն ինձ կտակել է ուսուցիչը։ Ես ձեզանից չեմ վախենում։ Արդարությունն իմ կողմն է, և այն չհաղթել չի կարող։ Դրա երաշխիքը Փարիզի փայլուն հաղթանակն է...

Տեսնելով, որ իր դավադրությունը խափանվեց, վախեցած արքունիքը քաղաքականությունը շեշտակի փոխեց։ Ժողովում թագավորը լալագին ձայնով դեպուտաներին հավատացնում էր, թե տեղի ունեցած բոլոր դեպքերը թյուրիմացության արդյունք են։ Ինքը՝ Լյուդովիկոսը,— բոլորը գիտեն իր բնավորության ազնվությունը,— իրեն երբեք ժողովրդից չի բաժանել և միշտ ապավինել է ազգի ընտրյալներին։ Օտարերկրյա զորքե՞ր... Ինքն արդեն ստորագրե՛լ է նրանց հեռացման հրամանը։ Ժողովրդի համար անցանկալի մինիստրնե՞ր։ Ինքը նրանց պաշտոնաթող կանի և նորից նեքերին կվերադարձնի...

Բայց երբ դեպուտատների խանդավառ աղաղակների տակ Լյուդովիկոսը նիստերի դահլիճից հեռացավ, նրան խուլ տրրտունջով դիմավորեց հասարակ մարդկանց բազմությունը։ Կոպտազդեստ մի կին, կոմս դ՝ Արտուային մի կողմ հրելով, մոտեցավ թագավորին և ուղղակի նրա երեսին բղավեց.

— Օ՜հ, իմ թագավոր, արդյոք բոլորովի՞ն անկեղծ եք

դուք։ Արդյոք ձեզ նորից չե՞ն ստիպի փոխել ձեր մտադրությունները, ինչպես եղավ մի քանի օր առաջ։

Իսկ ինչ-որ մի աղքատ, իր կոշտացած ձեռքերը մեկնելով դեպի պալատի լուսամուտներից մեկը, բարձրաձայն ասաց.

— Ահա թե որտեղ է պահվում այդ գահը, որի հետքերը շուտով դժվար կլինի գտնել...

Ռոբեսպիերին հայտնեցին, որ նրան մեծ պատիվ են արել. նա Ժողովի երկու հարյուր քառասուն դեպուտատների թվում պետք է թագավորին ուղեկցի դեպի Փարիզ, ուր միապետը պետք է մեկնի իր ժողովրդի հրավերով։ Մաքսիմիլիանը շատ գոհ էր։ Ուղևորությունը հետաքրքրական տպավորություններ էր խոստանում։

Ճամփա ընկան հուլիսի 17-ի վաղ առավոտյան։ Թագավորը մռայլ տեսքով անցավ դեպուտատների շարքերի միջով և տեղ գրավեց իր ծածկակառքում։ Թափորը ճամփա ընկավ քայլելով։ Մաքսիմիլիանը նկատեց, որ Վերսալի ու Փարիզի միլիցիայից կազմված ուղեկցորդ պահակախմբին միացել էին դագանակներով, եղաններով, գերանդիներով զինված շատ գյուղացիներ։

... Միայն ցերեկվա ժամը երեքին երևացին Փարիզի պարիսպները։ Քաղաք մտան Պասիի ուղեկալից։ Երկու շարք զինված մարդիկ՝ Բաստիլը գրավողները, ինչպես երկու անշարժ պարիսպներ ձգվեցին ուղեկալից մինչև Գրևյան հրապարակը ընկած գծի երկայնությամբ։

Որքա՞ն մարդ է հավաքվել չորս կողմը։ Բացի այն, որ բոլոր հարևան փողոցներն ու նրբանցքները լցված են մարդկանցով, նրանք ծվարել են տանիքներին, ծառերի ու ցանկապատերի վրա։ Մաքսիմիլիանն ականջ է դնում աղաղակներին։ Ոչ, «Կեցցե՞ թագավորը» խոսքերը չեն լսվում։ Դրա փոխարեն կարելի է լսել «Կեցցե՞ ժողովուրդը», «Կեցցե՞ ազատությունը» խոսքերը։ Ռոբեսպիերը ծաղրանքով նայում է թագավորին։

Եվ հանկարծ նա սկսում է լարվածությամբ վերհիշել։ Չէ՞ որ մի ժամանակ այդ ամենն արդե՞ն եղել է։ Թե՛ ամպամած երկինքը, թե՛ բազմությունը, թե՛ ծածկակառքը, թե՛ բարձերին հենված թագավորը... Վա՜հ, այդ եղել է տասնչորս տարի առաջ։ Ինքը, կոլեջի աղքատ թոշակառուն, որը նույնպես «բարձր

պատվի» է արժանացել, ցեխի մեջ ծնկի էր եկել ու ողջունում էր ահա հենց այդ հասարամարմնին... Բայց այն ժամանակվանից ինչպե՞ս ամեն ինչ փոխվել է։ Ե՛վ ծածկակառքն է ուրիշ տեսակի, և՛ մարդիկ էլ այն չեն, և՛ լիաթոք ներշնչվող օդը բոլորովին, բոլորովին ուրիշ է...

Թագավորն զգում է իր վրա հառած ինչ-որ մեկի սևեռուն հայացքը, նա գլուխը բարձրացնում է։ Ինքը որտե՞ղ է տեսել այդ պողպատե շեղբի պես սառն ու թափանցող, պայծառ, ուշադիր աչքերը։ Ե՞րբ։ Ինչպիսի՞ հանգամանքներում։ Լյուդովիկոսը փորձում է և չի կարողանում հիշել։ Մտքով ամեն տեսակ հիմար բաներ են անցնում... Հրացաններ, նիզակներ, կոկարդներ... Դեհ, գրո՛ղը տանի դրանց։ Ավելի լավ է այդ մասին բոլորովին չմտածել։ Թագավորն աչքերը փակում է ու խորասուզվում նիրհի մեջ։

Նորընտիր քաղաքագլուխը, ժողովի նախկին նախագահ, աստղագետ Ժան Բային թագավորին մատուցում է Փարիզի բանալիները։ Թագավորը երերուն քայլերով բարձրանում է աստիճաններով և մտնում քաղաքապետարանի մեծ գահլիճը։ Մշտական կոմիտեի անդամները ծափահարում են նրան։ Նա նստում է նախօրոք պատրաստված գահին ու լսում։ Նա ընտիպված լռելյայն հավանություն է տալիս Բաստիլի կործանման, քաղաքացիական միլիցիայի կազմավորման, նոր նշանակումների վերաբերյալ հրամանագրերին։ Նա երկու անգամ փորձում է խոսել, բայց լսվում է միայն ինչ-որ կռինչ՝ բառերը կոկորդում են մնում։ Բային նրան եռագույն մի կոկարդ է առաջարկում։ Լյուդովիկոսը կոկարդն այնպես է վերցնում, ասես նողկալի սողունի է դիպչում։ Բայց ի՞նչ անել։ Նա կոկարդը կպցնում է իր գլխարկին, մոտենում լուսամուտին և ձեռքով անում Գրևյան հրապարակում հավաքված հսկայական բազմությանը։ Լսվում է խանդավառ թնդյուն։ Բայց ժողովուրդը ողջունում է ոչ թե թագավորական իշխանության դժգույն մարմնացումը, այլ ընդամենը միայն նրա գլխարկին երևացող հեղափոխական գույները։

Ռոբեսպիերը իր մի քանի պաշտոնակիցների հետ միասին արագորեն գնաց դեպի Բաստիլի հրապարակը։ Դեպուտատ-

ներին ուղեկցում էր քաղաքացիական միլիցիայի մի ջոկատ։ Ահա Բաստի՛լը, քարակերտ հսկայական մի զանգված, մռայլ մի դամբարան, որ այնքա՞ն պայծառ գլուխներ է կլանել։ Ահա նա՛, միահեծանության դարավոր հենարանը։ Որմնադիրների ջոկատներն արդեն աշխատում են նրա պարիսպների մոտ։ Բայց այն դեռևս կանգուն է։ Պարոն դեպուտատներն ուզում են գիտե՞լ այն։ Խնդրեմ։ Նրանց հաճույքով կուղեկցեն ու ցույց կտան այն ամենը, ինչ կարող է նրանց հետաքրքրել։

Ետևում են մնում պարետատունը, երկու բարձրացնովի կամուրջները, և հետաքրքրասեր դիտորդներն ընկնում են ներքին բակի զարհուրելի քարե տոպրակի մեջ։ Խորն անդորրություն է։ Միայն երկու շղթայակապ կալանավորների նկարներով աշտարակային ժամացույցն է համաչափորեն հաշվում րոպեները։

Ռորեսպիերը մտնում է մեծաղջ վանդակներով բանտախցերը, իջնում նկուղահարկերը՝ շիկամկների ու սարդերի սարսափելի ապաստարանները։ Նրան ցույց են տալիս այն զնդանը, որտեղ անմարդկային տանջանքներ է կրել Մազեր դը Լատյուդը, առանց հանցանքի երեսունհինգ տարի բանտարկված մնալով։ Նրան տանում են այն մենախուցը, որտեղ թաղվել է երկաթե դիմակով մարդու դաղտնիքը։

Բավական չէ՞ արդյոք։ Շուտ դեպի՞ թարմ օդ, դեպի՞ լույս...

Երբ Մաքսիմիլիանը ամրոցի պարիսպներից դուրս է դալիս, նրան թվում է, թե ինքը նոր է ծնվել։ Նա ուսերն ուղղում է, ասես իր վրայից հարյուր փթանոց մի բեռ ցած նետելով։ Արևն առաջվա նման ամպերի ետևն է, և այնուամենայնիվ բանտի խավարից հետո ցերեկվա լույսը շլացուցիչ է թվում։ Նա ետ է նայում։ Որմնադիրներն աշխատում են ոչ թե վախից, այլ խղճմտանքից։ Նրանց մուրճերը մերթ ընդ մերթ երևում են ապում։ Շուտով այդ պարիսպներն այլևս չեն լինի։ Միայն հուշեր՝ միաժամանակ և՛ ծանր, և՛ ուրախ հուշեր կմնան ամբողջ կյանքում։

Վերսալ վերադառնալիս ճանապարհը չէր վերջանում։ Բոլորը ննջում էին։ Թագավորը բոլորովին թուլացել էր։ Միայն երբ Սևը հասան և նա իր լեյբ-գվարդիականներին տեսավ, նրա

դեմքը պայծառացավ։ Մարիա Անտուանետան անհանգստությամբ սպասում էր Լյուդովիկոսին։ Նրա աչքին սարսափելի պատկերներ էին երևում՝ նա սպանվել է, նրա արյունաշաղախ դիակը քարշ են տալիս փողոցներով։

Ամուսնու վերադարձի մասին լսելով, թագուհին նրան ընդառաջ նետվեց։ Սակայն եռագույն կոկարդի տեսքից սարսափած՝ նա ետ ցատկեց։

— Հեռացե՛ք ինձանից,— զայրույթով բացականչեց թագուհին։— Ես չէի կարծում, թե քաղքենու կին կգառնամ։

Իսկ Ռոբեսպիերը, իր տխուր սենյակում փակվելով, իսկույն գրիչ է վերցնում։ Նա իր բարեկամ Բյուիսարին ուղղած նամակում նկարագրում է անցած օրերի բոլոր իրադարձությունները։ Անկրկնելի՞ պահեր։ Արդյոք կարելի՞ է այդ պահերը մոռանալ։ Կարելի՞ է դրանց նկատմամբ անտարբեր մնալ...

Անցնում է ժամ ժամի ետևից, իսկ նա շարունակ գրում է, գրում պարզ, հղկած ոճով, նորից վերապրելով մոտիկ անցյալի այդ բոլոր նշանավոր գործողությունները։ Նա իրեն երջանիկ է զգում, որ եղել է այդ իրադարձությունների ժամանակակիցն ու ականատեսը։ Իսկ գլխավորն այն է, որ նա անսահմանորեն հպարտ է իր մեծ ժողովրդի համար, ժողովուրդ, որին և որի ուժերին նա միշտ անսահմանորեն հավատացել է։ Ո՞ւմ համար է նա գրում։ Արդյոք միայն Բյուիսարի՞ համար։ Համենայն դեպս, նրան սերունդները կկարդան։ Ռոբեսպիերի այդ նամակները պատմաբանի համար կլինեն բուրժուական մեծ հեղափոխության առաջին օրերի մասին ամենաարժեքավոր վկայություններից մեկը։

ԳԼՈՒԽ 5

ԱՌԱՋԻՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռոբեսպիերի ուրախությունը վաղաժամ էր։ Հեղափոխությունն սկսեցին հասարակ մարդիկ, այդ բոլոր բանվորները, արհեստավորները, օրամշակները, որոնց այնպես արհամար-

հում էին ոչ միայն պալատականները, այլև ժողովի պատվարժան գործիչները։ Փարիզի ժողովուրդը շշմեցրած արքունիքին ստիպեց ընդունել իր հաղթանակների առաջին արդյունքները, իսկ Սահմանադիր ժողովը ժողովրդական արդարադատության առաջին գործողությունների վրա աչքերը փակեց։ Բայց իրադարձությունների տրամաբանությունն այնպիսին էր, որ իշխանությունն ու կազմակերպությունը կենտրոնացան ոչ թե հաղթական ժողովրդի, այլ նրան ատող խոշոր բուրժուազիայի ձեռքում։ Ժողովրդի վրա հենվելով, խոշոր բուրժուազիան միապետությանը վախեցրեց, այն հաշվով, որ հետո, միապետության վրա հենվելով, ժողովրդին իրեն ենթարկի։ Այն պահերին, երբ չքավորները փողոցներում մարտեր էին մղում, Փարիզի բուրժուազիան շտապում էր կառավարման նոր օրգաններ ստեղծել։ Մշտական կոմիտեն տեղը զիջեց բուրժուական Փարիզյան կոմունային, որը մայրաքաղաքում ղեկավար դիրք էր գրավել, իսկ քաղաքացիական միլիցիան դարձավ ազգային գվարդիայի՝ բուրժուազիայի զինված ուժերի միջուկը։ Նոր իշխանության սյուներն էին քաղաքագլուխ Բային և ազգային գվարդիայի պետ նշանակված լիբերալ արիստոկրատ մարկիզ Լաֆայետը։

1789 թվականի հուլիս—օգոստոս ամիսների ընթացքում հեղափոխությունը տարածվում էր երկրում։ Քաղաքներում ժողովրդական ապստամբություններն ավարտվում էին նրանով, որ հին իշխանությունները տապալվում էին ու փոխարինվում նոր, ընտրական օրգաններով։ Այդ օրգանները՝ մունիցիպալիտետները, ինչպես և Փարիզում, բուրժուազիայի ձեռքն ընկան, որը զգոնությամբ հետևում էր իր համար հարկավոր պահին ժողովրդի շարժումը դադարեցնելու։ Գրեթե ամենուրեք մայրաքաղաքի օրինակով ստեղծվում էին ազգային գվարդիայի ջոկատներ, որոնք դիմադրում էին ոչ միայն միապետությանը, այլև քաղաքների չքավոր բնակչությանը։

1789 թվականի ամռանը Ֆրանսիայում բռնկվեցին գյուղացիական ապստամբությունների հրդեհներ։ Գյուղացիներն ավերում էին դղյակներն ու դաստակերտները, դադարեցնում ֆեոդալական պարհակների կատարումը և կալվածատերերին տրվող հարկերի վճարումը։ Մի շարք դեպքերում նրանք կա-

լանավորում էին տերերին, երբեմն իրենց դատարանով նրանց պատժում։ Այդ ապստամբությունների թափը «մեծ սարսափ» առաջացրեց ոչ միայն աշխարհիկ ու հոգևոր սենյորների սրտում, այն ահաբեկեց նաև իր սեփականության համար դողացող բուրժուազիային։ Ազգային գվարդիայի ջոկատներ ուղարկվեցին գյուղ։ Ժողովի պատերի մեջ սկսեցին ավելի ու ավելի հաճախակի լսվել «խռովարարների սանձահարում» և «խռովությունների դադարեցում» պահանջող ձայներ։ Ազնվականության և խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներն շտապում էին ժողովրդի գործողությունները դատապարտող օրենքներ հրատարակել։

Հուլիսի 20-ին ժողովի ամբիոն բարձրացավ լիբերալ ազնվականության լիդեր Լալի-Թոլենդալը։

— Ի՞նչը կարող է ժողովրդական հուզումներից ավելի վտանգավոր լինել,— հարցնում էր հռետորը։— Ներկա մոմենտի գլխավոր խնդիրը խռովարարական տրամադրությունն իսպառ վերացնելն է։ Ազգի դեպուտատները պետք է թագավորի, իրենց ժողովրդի հոր և ազատության իսկական հիմնադրի հետ մի ամբողջություն կազմեն... Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է «խռովություն» բառը լսելիս դողալ։ Իսկ ով անվստահություն արտահայտի ժողովի կամ թագավորի նկատմամբ, պետք է վատ քաղաքացի համարվի և արդարադատության ձեռքը հանձնվի...

Լալին դեկրետի մի նախագիծ առաջարկեց, որը «խռովարարների» համար ծանր պատիժներ էր սահմանում։

Այն ժամանակ հանկարծ տեղից վեր թռավ սակավաճանաչ առասցի դեպուտատ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը։ Նրա սովորաբար գունատ դեմքը վառվում էր։ Նա բարձր ու հրամայական ձայնով բացականչեց.

— Ի՞նչ է պատահել, ի՞նչն է պարոն Լալիին ահազանգ խփելու իրավունք տալիս։ Խռովության մասին են խոսում։ Բայց այդ խռովությունը, պարոնայք, ազատությունն է։ Մի՛ խաբեք ձեզ՝ պայքարը դեռ չի վերջացել։ Վազը, թերևս, կործանարար փորձերը կվերսկսվեն։ Եվ այդ փորձերն ովքե՞ր

հետ կմղեն, եթե մենք նախապես խոովարարներ հայտարարենք նրանց, ովքեր զինվել են մեր փրկության համար...

Ռոբեսպիերն արտասովոր կտրուկությամբ էր խոսում։ Ժողովը քար կտրեց։ Դեպուտատների ճնշող մեծամասնությունը այս անգամ հասկացավ Առասի դեպուտատի արդարացիությունը։ Նախագիծը մերժվեց։

Դրանից հետո շատերն ուշադրություն դարձրին ազատության նոր պաշտպանի վրա։ Ռոբեսպիեր... Ո՞վ է նա... Ինչո՞ւ է այդպես եռանդագին խոսում չքավորության կարիքների մասին...

Այդ նրա առաջին հաջողությունն էր Սահմանադիր ժողովում։

Օգոստոս—սեպտեմբեր ամիսներին Ռոբեսպիերն ավելի ու ավելի հաճախ է երևում ամբիոնի վրա, և այժմ արդեն նրան չնկատել չի կարելի։ Թշնամական բացականչություններն ու սուլոցներն արհամարհելով, նա պայքարում է կարծիքների ազատության համար, բազմիցս հանդես է գալիս Իրավունքների դեկլարացիայի[1] առանձին հոդվածների շուրջը և ճակատամարտ տալիս վետոյի հարցի գծով։

Առանձնապես բուռն վիճաբանություններ էին ծավալվել վետոյի իրավունքի շուրջը։

Ասամբլեայի մեծամասնությունը կարծում էր, թե հեղափոխությունն իր խնդիրները կատարել է և այժմ գլխավորն այն հմտորեն դադարեցնելն է։ Այդ ամենից առաջ նշանակում էր աշխատավոր զանգվածներին հեռացնել երկրի քաղաքական կյանքին մասնակցելուց։ Այդ նպատակի համար ուժ է պետք։ Հայրենասեր սեփականատերերն ուզում էին թագավորական իշխանությունն այդպիսի ուժ դարձնել։ Նրանք կարծում էին, թե վախեցած միապետությունը կխուսափի բուրժուազիայի հետ

---

[1] *1789 թվականի օգոստոսի 28-ին Սահմանադիր ժողովի ընդունած «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» հուլիսյան դեպքերի ամենավառ փաստաթղթերից մեկն է։ Դեկլարացիան հռչակում էր խոսքի ու խղճի ազատություն, ժողովրդի անվտանգություն և կեղեքման դեմ ուղղված պայքար, նրա «ազատություն, հավասարություն, եղբայրություն» հռչակավոր լոզունգը թնդաց ամբողջ Եվրոպայում։*

ընդհարվելուց և նրան կօգնի ճնշման ծրագիրն իրականացնելու։ Բայց որպեսզի թագավորական իշխանությունը բավականաչափ ուժեղ լինի, անհրաժեշտ է նրան տալ բավականաչափ լայն լիազորություններ և առաջին հերթին վետոյի իրավունք՝ մերժելու կամ երկար ժամանակով կասեցնելու օրենսդրական ցանկացած նախաձեռնությունը, որը կարող էր նոր հասարակարգի անսասանության տեսակետից վտանգավոր դառնալ։

Աջերը պնդում էին, թե վետոն պետք է բացարձակ լինի։ Աջերի մունետիկն այս անգամ կոմս Միրաբոն էր, Ժողովի ամենափայլուն հռետորը, որն անցյալում բազմիցս միապետությանն ստիպել է դողալ։ Միրաբոն հեղափոխական ֆրազներով խնամքով քողարկված ընդարձակ ճառում, սովորական խանդավառությամբ ապացուցում էր թագավորական բացարձակ վետոյի անհրաժեշտությունն ու բարերարությունը, պնդելով, որ այն առաջադիմական մի միջոց է և որ առանց նրա ազատությունն անխուսափելիորեն կկործանվի՝ իբր ոչնչով չզսպվող Ասամբլեան կարող է բռնակալության ուղին բռնել...

Ռոբեսպիերը, որին չհաջողվեց Ժողովում ելույթ ունենալ հռչակավոր հռետորի դեմ, հանդես եկավ մամուլում։ Նա բացարձակ վետոյի կողմնակիցներին մեծ եռանդով առարկելով, հայտարարեց, որ, ենթադրելով, թե իբր մեկ մարդ կարող է դիմադրել ընդհանուր կամքի արտահայտություն հանդիսացող օրենքին, հանգում ես այն եզրակացության, թե մեկի կամքը բոլորի կամքից բարձր է։ Այդ դեպքում ստացվում է, որ ժողովուրդը ոչինչ է, իսկ մեկ մարդը՝ ամեն ինչ։ Գործադիր իշխանություն ունեցողին օրենքները կասեցնելու իրավունք վստահելով, հնարավորություն են տալիս ազգի կամքը կաշկանդելու նրան, ով պարտավոր է այն կատարելու։ Վախենում են օրենսդիր իշխանության չարաշահումներից. բայց ի՞նչ է նշանակում սահմանափակ ժամանակով ընտրված և ժողովրդին հաշվետու օրենսդիրների ժողովը ժառանգական միապետի համեմատությամբ, որի ձեռքում հսկայական իշխանություն է կենտրոնացած, որը գործադրում է թե՛ ֆինանսները, թե՛ հարկադրման բոլոր միջոցները։ Վերջում Ռոբեսպիերը ընդգծում է, որ բացարձակ վետոյի և կասեցնող վետոյի միջև էական

տարբերություն չի տեսնում, ուստի և հավասարապես մերժում է թե՛ մեկը, թե՛ մյուսը։

Իհարկե, բուրժուական Ասամբլեան Ռոբեսպիերի փաստարկները չընդունեց։ Հաղթեց ձախերի պարագլուխ, Գրենոբլի դեպուտատ Անտուան Բարնավի կոմպրոմիսային առաջարկությունը, որի համաձայն թագավորին կասեցնող վետոյի իրավունք էր տրվում այն պայմանով, որ նա Ասամբլեայի նախընթաց որոշումներն անհապաղ վավերացնում է։

Եվ այնուամենայնիվ ժողովրդի իրավունքների պաշտպանը այդպիսի ելույթներով չէր կարող իր վրա չբևեռել պաշտոնական դեպուտատների ուշադրությունը։ Այդ ուշադրությունն ամենևին բարյացակամ չէր։ Արմատականորեն տրամադրված հեռատարի դեմ հալածանքի կամպանիա սկսվեց։ Առաջինը ազդանշան տվեցին Արտուայի նահանգի ազնվական դեպուտատները՝ դը Բոմեցի, Բյուիսարի ազգականի գլխավորությամբ։ Ծաղրում էին Ռոբեսպիերի զգեստը, նրա արտաքին կերպարանքը, նրա խոսելու ձևը, նրա ճառերի հենց բնույթը։ Նրան անվանում էին «Առասի մոմ» և «Ռուսոյի սան». նրա անունն աղավաղում էին, իսկ ճառերի տեքստերը դիտավորյալ կերպով խեղաթյուրում։ Այդ ամենը չէր կարող շփոթեցնել իր իդեալներին նվիրված հռետորին, և ամեն անգամ, հաշվի չառնելով սուլոցներն ու լուտանքները, նա հանգիստ կերպով ամբիոն էր բարձրանում՝ ոչ պակաս հանգիստ արտահայտելու այն, ինչ որ մտածում էր։ Հալածանքն ուժեղանում էր՝ նա պատասխանում էր է՛լ ավելի մեծ հանգստությամբ։ Եվ ահա Միրաբոն, որին Ռոբեսպիերը հակակրանք էր ներշնչում և որը հաճախ տոն էր տալիս նրա դեմ ուղղված ծաղրանքներին, ասաց իր մարգարեական խոսքերը. «Նա հեռու կգնա, որովհետև հավատում է այն ամենին, ինչ որ ասում է»։ Դժվար էր խորաթափանց թշնամուց ավելի մեծ գովեստ ստանալ։

Մի անգամ, սուրբ Ելիզավետայի փողոցն անցնելիս, Ռոբեսպիերը հանդիպեց մի մարդու, որի արտաքին կերպարանքն իրեն զարմանալիորեն ծանոթ թվաց։ Անցորդն շտապում էր և Մաքսիմիլիանին չտեսավ։ Նա երկար մազեր և շիտակ, բարեհոգի դեմք ուներ։ Մի՞թե Քամիլն է... Ոչ, հազիվ թե... Քամիլն ինչո՞վ կարող է զբաղվել այստեղ, Վերսալում։ Եվ Ռո-

բեսպիները, իր վատ տեսողությունը հաշվի առնելով, որոշեց, որ սխալվել է։ Նա այլևս այդ հանդիպման մասին չէր հիշում։

Սակայն տեսողությունը նրան չէր խաբել։ Իրոք որ, Քամիլ Դեմուլենը, Լուի-լը-Գրան ֆոլեջի սանը, ժողովրդական կրակոտ տրիբունը և Բաստիլի վրա կատարված հարձակման նախաձեռնողներից մեկը սեպտեմբերի երկրորդ կեսից ի վեր գտնվում էր Վերսալում։

1789 թվականի մայիս—հունիս ամիսների դեպքերը Քամիլին հուզեցին։ Առանց մի կոպեկ դրամի, բայց խանդավառությամբ ու երիտասարդական ավյունով համակված, նա տարվեց հեղափոխությամբ։ Նրա գրչին պատկանող երկու կծու բրոշյուրներ գրավեցին Ասամբլեայի որոշ լիդերների ուշադրությունը։ Միրաբոն, որ հաճախ էր լինում Փարիզում, սեպտեմբերի կեսին հանդիպեց Քամիլին ու զրուցեց նրա հետ։ Միրաբոն սիրում էր երիտասարդությանը։ Կաշառվող ու անբարոյական մի մարդ, նա զգացմունքի անմիջականությունն ու անկեղծությունը բարձր էր գնահատում։ Քամիլը նրան դուր եկավ, և նա նրան տարավ Վերսալ։

Եվ այստեղ Քամիլի համար աներևակայելի մի կյանք ընկրկվեց։

Երիտասարդին ապշեցրեց կոմսի բնակարանը, որը նրան պերճության ու հոյակապության մի հրաշք թվաց, նրան զարմացրին առատորեն մատուցվող նրբահամ դինիներն ու արտասովոր համեղ կերակուրները։

Իսկ ինչպիսի՜ հասարակություն էր հավաքվում այստեղ։ Ինչպիսի՜ զրույցներ էին տեղի ունենում։ Քամիլը չէր կարող չզարմանալ, լսելով, թե ինչպես Միրաբոն մտերիմ մարդկանց շրջանում լկտի քմծիծաղով ծաղրում է այն բարձր գաղափարները, որ հենց այդ առավոտյան պաշտպանում էր Ժողովում։

Հետո հայտնվում էին գեղեցիկ, չափից շատ անուշահոտությամբ օծված, դքսուհու նման և վավաշոտ, մատչելի կանայք...

Գիշերային անզուսպ գինարբուքից հետո Քամիլը, բարձերով ու կոմպրեսներով պատած, ամբողջ հաջորդ օրը պառկում էր անկողնում։ Իսկ Միրաբոն հոհոալով մի ըմպանակ մա-

բասկին էր խմում և գնում ժողով իր հերթական որոտալից ճառն արտասանելու։

Այն ժամանակ Քամիլ Դեմուլենը պաշտում էր Միրաբոյին։ Նա անգամ չէր փորձում խորամուխ լինել նրա քաղաքական համոզմունքների մեջ։ Նա չգիտեր, թե սնանկացած կոմսն իր անչափ ծախսերի համար անհրաժեշտ միջոցները որտեղից է վերցնում։ Ասենք, այդ բանը դեռևս ոչ ոք չգիտեր։ Փայլուն հանդիսատեսին մխայն երկու մարդ էին անվսասությամբ վերաբերվում՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը և Ժան Պոլ Մարատը։

Այնինչ «Փոքր զվարճությունների» պալատը պետք է ամայանար։ Մոտենում էր Սահմանադիր ժողովի վերսալյան ժամանակաշրջանի վերջը։ Առաջին վտարանդիները, այդ թվում կոմս դ՝ Արտուան և ատելի Պոլինյակները, արդեն հեռացել էին Ֆրանսիայից։ Հուլիս—օգոստոս ամիսների ընթացքում արքունիքը Բաստիլի գրավման օրն ստացած շոկից աստիճանաբար ուշքի էր գալիս։ Սեպտեմբերին սահմանադիրները գլուխ խոնարհեցին Լյուդովիկոսի առաջ, նրան ժողովի օրենսդրական ցանկացած գործողությունը երկար ժամանակով հետաձգելու իրավունք հրամցնելով։ Այդ մի փոքր քաջալերեց անվճռական միապետին, որին շտապեցնում էր Մարիա Անտուանետան՝ Միրաբոյի խայթիչ արտահայտությամբ, թագավորական ընտանիքի «միակ տղամարդը»,— շտապեցնում էր նաև պալատական ամբողջ կամարիլյան։ Արքունիքը, տեսնելով դեպուտատների համակերպվողությունը և իմանալով նրանց միջև գոյություն ունեցող լուրջ տարաձայնությունների մասին, որոշեց, որ հասել է գործելու ժամանակը։

Սեպտեմբերի 14-ին թագավորը, այլևս Վերսալի զորամասերին չվստահելով, կանչեց Դուեռում կանգնած Ֆլանդրյան գունդը։ Հոկտեմբերի 1-ին պալատի օպերային դահլիճում գնդի սպաների պատվին հանդիսավոր ճաշկերույթ տրվեց։ Նրանց գուրգուրում ու խմեցնում էին։ Թագուհին նրանց հրամայում էր իր գեղեցկությամբ, պալատականները՝ բարեկամական վերաբերմունքով։ Հանդեսի եռուզեռի ժամանակ հայտնվեց թագավորը՝ փոքրիկ գահաժառանգը ձեռքերի վրա պահած։ Հարբած սպաները հավատարիմ հպատակի զգացմունք-

ների պոռթկումով կոխկրտում էին հեղափոխական կոկարդները և սարսափելի երդումներ տալիս։

Իհարկե, շուտով այդ ամենի մասին իմացան Փարիզում։ Հեղափոխության ճակատագրի համար անհանդստացած, քաղցած ու տանջված ժողովուրդը հուլիսյան օրերը լավ էր հիշում։ Այժմ Բաստիլը գրավողները նորից պետք է նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնեին։ Ժան Պոլ Մարատը, Փարիզի գեմոկրատիայի անվեհեր պռաջնորդը, արքունիքի հակահեղափոխական նախապատրաստությունները վիժեցնելու համար ժողովրդին զինված արշավանքի կոչ էր անում։ Հոկտեմբերի 5-ին փարիզեցիների անհամար բազմություններ, որոնց մեջ միայն կանայք վեց հազարից ավելի էին, թնդանոթները գրավելով, հսկայական ռազմերթով, ողողված ճանապարհներով առաջ շարժվեցին դեպի թագավորի նստավայրը։ Ազգային գվարդիայի պետ մարկիզ Լաֆայետը սաստիկ վախեցավ։ Նա երկար ժամանակ տատանվում էր, չիմանալով պաշտպանել ժողովրդին թագավորից, թե թագավորին ժողովրդից, մինչև որ «Դեպի՝ լապտերասյունները» աղաղակները նրան ստիպեցին ազգային գվարդիայի ջոկատի հետ միասին միանալ շարժմանը։ Նա հայտնվեց իրադարձությունների պոչում և ցուցարարների հիմնական զանգվածներից զգալիորեն ավելի ուշ մտավ Վերսալ։ Ցերեկվա ժամը հինգին, անձրևից ու ցեխից թրջված, քաղցած փարիզեցիները միապետի ոստանը շրջապատեցին։ Հաջորդ առավոտյան թագավորի պահազորի հետ ընդհարում տեղի ունեցավ։ Ժողովուրդը ներխուժեց պալատ։ Ահաբեկված թագավորը Լաֆայետի ուղեկցությամբ երկու անգամ պատշգամբ դուրս եկավ։ Նա շտապում էր ստորագրել Իրավունքների դեկլարացիան և օգոստոսյան ագրարային օրենսդրությունը, որը մինչև այժմ ժողովին մերժում էր, և հենց այդ երեկո, բազմահազար բազմությամբ շրջապատված, տեղափոխվեց Փարիզ։

Արքունիքի հետևից Վերսալից հեռացավ նաև Սահմանադիր ժողովը։

Աշնանային սառը քամին պատառոտում էր ծածկակառքի հնամաշ երեսվածքը։ Մաքսիմիլիանը մրսելուց փաթաթվել էր

շալի մեջ։ Նորի՞ց Փարիզ։ Մնա՞ս բարով, Վերսալ, մնաք բարով, «Փոքրիկ զվարճություններ»... Առաջիկայում ինչ-որ բա՞ն է սպասում։ Աչքերը կիսախուփ, նա մտովի անցնում էր իր ճանապարհը մայիսից մինչև հոկտեմբեր։ Նրան չընկճեցին առաջին անհաջողությունները՝ նա պատրաստ էր դրանց համար։ Չարությունը նրան չթեքեց՝ նա սպասում էր դրան։ Նա արդեն ճաշակել է թե՛ պարտության սուր դառնությունը, թե՛ հաղթության առաջին ուրախությունը։ Նա արդեն կռահել է, որ թե՛ իր գործերը, թե՛ իր ճաները, թե՛ հենց իրեն դնահատող կլինի ոչ թե թագավորը, ոչ թե մինիստրները, ոչ թե մտադրում իր ընկերները, այլ միմիայն ժողովուրդը, հենց այն ժողովուրդը, որի համար նա որոշել է անվախ ու անբասիր մարտնչել և որին պատրաստ էր տալու իր ամբողջ ընդունակությունը, իր ամբողջ փառասիրությունը, իր ամբողջ կյանքը՝ մինչև վերջին շունչը։

ԳԼՈՒԽ 6

ՆՈՐԻՑ ՓԱՐԻԶ

Մայրաքաղաքը Մաքսիմիլիանին անտիրալիր էր դիմավորում։ Քամին գլխից գլխարկը խլեց, անձրևը նրան սաստիկ թրջեց, շորս կողմը երթևեկում էին իրենց գործերով զբաղված, մոայլ մարդիկ։

Նա իրեն միայնակ, շվարած էր զգում։ Նա Փարիզը լավ չէր ճանաչում։ Այստեղ նա ոչ ոք չուներ։ Ճիշտ է, մի ժամանակ, շատ վաղուց, կոլեջի առաջին տարիներին, Մաքսիմիլիանն այցելում էր մի տուն, որտեղ նրան հաճույքով ու սիրով էին ընդունում։ Դա Լարոշի, Փարիզի Աստվածամոր տաճարի վանահոր, Ռոբեսպիերի ընտանիքի հեռավոր ազգականի տունն էր։ Լարոշը մտերմաբար էր վերաբերվում Մաքսիմիլիանին, և պատանին այն տարիներին նրան հոր տեղ էր գնում։ Բայց բարի Լարոշը վաղուց արդեն գերեզմանում է, նրա բնակարանում անծանոթ մարդիկ են ապրում։ Անցյալը չես վերադարձնի։ Պետք է շտապ ապաստարան գտնել։

Ասամբլեան տեղափոխվելուց հետո առաջին նիստերն արքեպիսկոպոսի պալատում էր գումարում. հետո օրենսդիրները տեղավորվեցին թագավորի նստավայրի մոտերքում, Տյուիլրյան մեծ ձիամարզարանում։

Տյուիլրիի շրջանում մշտական բնակարան ունենալու մասին Մաքսիմիլիանը չէր էլ մտածում. կենտրոնում բնակարանը թանկ էր նստում, և այն դժվար էր գտնել։ Ռոբեսպիերը բնակություն հաստատեց իր աշխատավայրից հեռու, Մարեի թաղամասում, Սենտոնժ փողոցի № 30 տանը։ Այստեղ նա մի երիտասարդի հետ միասին կիսով վարձեց փոքրիկ ու բավական վատ մի բնակարան։ Հարևանի անունը Պիեռ Վիլլե էր։ Նա պատրաստվում էր զինվորական ծառայության անցնելու և, տանը հազվագեպ լինելով, ամենևին նեղություն չէր տալիս Մաքսիմիլիանին։ Ընդհակառակը, դեպուտատը երբեմն դիմում էր նրա օգնությանը, նրան հանձնարարելով իր ճառերն արտագրելու և զանազան մանր աշխատանքներ կատարելու։

Մայրաքաղաքում կյանքը թանկ ու հոգսաշատ էր։ Մաքսիմիլիանը, որը երբեք ավելորդ դրամ չէր ունենում, Փարիզում մնալու առաջին ամիսներին խիստ կարիքի մեջ էր ապրում և դարձյալ, ինչպես մի ժամանակ սովորելու տարիներին, տոնական կոստյում չուներ։ Նա իր դեպուտատական ռոճկի կեսն ուղարկում էր Սառա՝ քրոջը. ռեստորանում նախաճաշելն ու ճաշելը էժան չէին նստում. միջոցների մնացորդը կլանում էին փոստային առաքումները, թերթեր գնելը և Վիլլեի ծառայությունները վարձատրելը։

Սակայն դրամի բացակայությունը Մաքսիմիլիանին չէր հուզում։ Նրան անհամեմատ ավելի շատ անհանգստացնում էր ժամանակի սղությունը։ Սահմանադիր ժողովը նրանից խլում էր գրեթե ամբողջ ցերեկը, դեմոկրատական ակումբները՝ երեկոն մինչև ժամը տասնմեկը-տասներկուսը, այնպես որ, վաղ առավոտյան տնից դուրս գալով, նա վերադառնում էր ուշ գիշերին։ Իսկ չէ՞ որ հարկավոր էր նաև թերթերն աչքի անցկացնել, նամակներ գրել, մամուլի համար հոդվածներ պատրաստել, մարդկանց հետ տեսնվել, վերջապես, հարկավոր էր,— և դա առանձնապես շատ ժամանակ էր պահանջում,—

հաջորդ օրվա համար ելույթների տեքստերը կազմել։ Եվ ահա թ Հռակիշիո Տալեյրանի կամ Լը-Շապելյեի նման իր շատ պաշտոնակիցների, որոնք ցերեկվա ընթացքում հոգնելով, երեկոներն ու գիշերներն անց էին կացնում կազինոներում կամ հասարակաց տներում, այնուհետև հերթական նիստերից բացակայելով,—Ռոբեսպիերը հաճախ գիշերներն անց է կացնում դրասեղանի մոտ, այն հաշվով, որ վաղ առավոտյան կրկին պաղատարներով ու փաստաթղթերով կատաղելապես զինված լինի։ Զարմանալի չէ, որ շուտով նրա դեմքն է՛լ ավելի կգունատվի, աչքերը փոս կընկնեն ու տենդագին փայլով կփայլատակեն, իսկ բարձի վրա կմնան արյան առաջին հետքերը. ոստիկ լարվածությունը պետք է հետքեր թողներ, որ չէին կարող վերացնել ամենօրյա հարկադրական զբոսանքները, որոնք նա կատարում էր, Սենտոնժ փողոցից գնալով մինչև Տյուիլրյան պալատը և ետ դառնալով։ Սակայն նա այդ զբոսանքներին մեծ նշանակություն էր տալիս ոչ միայն այն պատճառով, որ դրանց ժամանակ կարող էր մաքուր օդ շնչել և իր մշտական մտքերից կտրվել։ Այդ զբոսանքները նրան ծանոթացնում էին մայրաքաղաքին, այն մարդկանց կյանքին ու ուրամադրություններին, որոնց շահերի համար Մաքսիմիլիանոս Սահմանադիր ժողովում իր ճակատամարտերն էր մղում։

Որքան էլ Ռոբեսպիերը Փարիզը վատ էր ճանաչում, նրա հայացքից չէին կարող վրիպել վերջին ութ տարում այստեղ կատարված փոփոխությունները։

Կես միլիոն բնակչությամբ այդ վիթխարի քաղաքը շատ այ ագ էր աճում։ Ճիշտ է, կենտրոնն իր ապարանքներով, տաճարներով ու զբոսայգիներով գրեթե չէր փոխվում։ Դրա փոխարեն ծայրամասերն ու արվարձաններն ամեն տարի ընդարձակվում էին տասնյակ նոր շենքերով։ Երևան եկավ տնատեր բուրժուաների առանձին մի խումբ, որոնք վարձով տալու տներ էին կառուցում։ Մաքսիմիլիանը շարունակ ուշադրություն էր դարձնում փողոցների ու հրապարակների բազմամարդության վրա, որտեղ տիրում էր մշտական, խայտաբղետ, առավոտյան ու երեկոյան գրեթե միատեսակ մի իրարանցում։

Իզուր չէ, որ Փարիզը երկրի քաղաքների ավանգարդն էր։ Նրա մանուֆակտուրաների արտադրանքները հայտնի էին

Ֆրանսիայի սահմաններից հեռու երկրներում։ Արքունիքին, խոշոր ֆինանսիստներին, հարուստ ազնվականներին և բարձր հոգևորականությանը սպասարկելով, մայրաքաղաքի արդյունաբերությունը պերճանքի բազմապան իրեր էր պատրաստում։ Մեծ հռչակ էին վայելում գոբելենի և գորգագործվածքների թագավորական մանուֆակտուրաները, ինչպես նաև նրբաճաշակ կահույքի ձեռնարկությունները։ Սակայն ձեռքի կամ մեքենայի աշխատանք օգտագործող կապիտալիստական խոշոր մանուֆակտուրաները բացառություններ էին։ Փարիզի ձեռնարկությունների ճնշող մասը ներկայացնում էին յուրաքանչյուրն ընդամենը միայն մի քանի բանվոր ունեցող մանր արհեստանոցները։

Բնական է, որ Փարիզի պրոլետարիատը փոքրաթիվ էր, կազմելով արտադրության մեջ զբաղված բնակչության մեկ քառորդից մի քիչ ավելի։ Նրան միանում էին շինարար բանվորները՝ գյուղից եկած մարդիկ, որոնք գարնանից կուտակվում էին Փարիզում և ցրտերը վրա հասնելիս նորից հեռանում քաղաքից։ Առաջվա նման մայրաքաղաքի աշխատավոր բնակչության պարագլուխներն արհեստավորներն էին, որոնք պահպանում էին միջնադարյան համքարությունների մնացորդները, շարունակում իշխել արտադրության որոշ ճյուղերում։

Մաքսիմիլիանը գիտեր Փարիզի պրոլետարիատի բացառիկ ծանր դրության մասին։ Ստիպված օրական տասնչորս տասնվեց ժամ աշխատելով, մանուֆակտուրային բանվորն օրական ամենաշատը քսան-երեսուն սու էր ստանում, հազիվ հացի փող վաստակելով։ Զարմանալի չէ, որ բանվորները հաճախ ընդվզում էին, գործադուլներ կազմակերպում և ապստամբություններ բարձրացնում։

Փարիզի առանձնահատուկ հատկանիշը մանր բուրժուազիայի զգալի խավի առկայությունն էր։ Նրա կազմի մեջ էին մտնում գաճաճային ձեռնարկությունների տերերը, խանութպանները, շուկայական առևտրականները, ճաշարանների ու իջևանատների սեփականատերերը։ Փարիզում այդ մանր սեփականատերերը առևտրա-արդյունաբերական խոշոր բուրժուազիայից շատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեին։ Նը-

բանք պետք է պրոլետարիատի հետ միևնույն շարքերում հանդես գան հեղափոխական Փարիզի դասակարգային շատ ճակատներում։

Մանր բուրժուազիայի շահերն ու ակնկալություններն առանձնապես մոտիկ ու հասկանալի էին Մաքսիմիլիան Ռոբեսպիերի, մեծ նարոդնիկ Ժան Ժակ Ռուսոյի հավատարիմ աշակերտի ու հետևորդի համար։

Մաքսիմիլիանի ուշադրության գլխավոր օբյեկտները, եթե հաշվի չառնենք Սահմանադիր ժողովում նրա աշխատանքները, շարունակ մամուլն ու ակումբներն էին։

Մամուլը հեղափոխության ծնունդն էր։ 1789 թվականի ամռան ընթացքում երևան եկան հսկայական թվով թերթեր, հանդեսներ և թերթիկներ, որոնք լույս էին տեսնում ամեն օր, ամեն շաբաթ և ամեն ամիս, վաճառվում էին և բաժանորդագրությամբ առաքվում, անվճար բաժանվում և մայրաքաղաքի տների պատերին փակցվում։ Տարբեր կուսակցությունների և խմբավորումների թերթերը պայքարում էին հասարակական կարծիքի համար, ձգտում տիրել այդ կարծիքին կամ ենթարկվում էին դրան։ Որոշ թերթիկներ, մեկ կամ երկու անգամ լույս տեսնելով, այնուհետև փակվում էին, մի քանիսն էլ ավելի երկար ժամանակ խղճուկ գոյություն էին քարշ տալիս, սակայն կային այնպիսի թերթեր, որոնց ժողովրդականությունը, օրեցօր աճելով, ամենալայն հռչակն էր ապահովում ինչպես հենց նրանց, այնպես էլ նրանց հրատարակիչների համար։

Մաքսիմիլիանը լավ էր հիշում Մարատի գիրքը, որին առաջին անգամ ծանոթացավ ուսանողական կյանքի տարիներին։ Մարատի, որպես ծայրահեղ համոզմունքներ ունեցող հեղափոխականի, անունը հաճախ էին տալիս Վերսալում։ Այժմ Ռոբեսպիերը տեսավ, որ «Քրեական օրենսդրության պրոյեկտի» հեղինակը դարձել է մայրաքաղաքի ժողովրդական հրապարակախոսների համաստեղության համարյա ամենահռչակավոր դեմքը։

Տաղանդավոր բժիշկ ու ֆիզիկոս լինելով, Ժան Պոլ Մարատը հանուն հեղափոխության հրաժարվեց գիտական կարիերայից

ու ապահովված, հանգիստ կյանքից, որպեսզի իր ամբողջ խանդավառությունը, տաղանդը, իր միտքն ու սիրտը ժողովրդի գործին նվիրեր։ Նա ապագան ուրիշներից ավելի շուտ պատկերացրեց և Սահմանադիր ժողովի բուրժուական առաջնորդների մեծադոզոդ խոսքերի խաբուսիկ փայլից տեսավ նրանց նախապատրաստած դավաճանությունը։ Մարատը իր «Ժողովրդի բարեկամը» թերթի էջերում խարազանում էր Բայիի ու Լաֆայետի քաղաքականությունը և բացահայտորեն դավաճանության մեջ մեղադրում արքունիքին ծախված Միրաբոյին։ Հավասարապես գլխովին ջախջախելով թե՛ աջերին, թե՛ ձախերին, նա Ռոբեսպիերին ճիշտ գնահատեց, նրա նկատմամբ մեծ հարգանքով համակվեց, նրան մամուլում հարգարժան ու անհողդողդ մարդ անվանելով։ Կառավարությունը և խոշոր բուրժուազիայի առաջնորդները վախենում էին ժողովրդի Բարեկամից և ատում նրան, ամեն կերպ հալածում նրան, բազմիցս ստիպելով ընդհատակ անցնելու։ Բայց Փարիզի հասարակ մարդիկ զգոնորեն պահպանում էին իրենց պաշտպանին։

Մաքսիմիլիանը մյուս թերթերի մեջ ուշադրություն դարձրեց «Ֆրանսիական հայրենասերի» վրա։ Նրա հետաքրքրությունը շարժեց հրատարակչի անունը՝ Բրիսո դը Վարվիլ։ Բրիսո՞... Իսկապես որ, նա ինչ-որ տեղ լսել է այդ անունը, բայց որտե՞ղ... Մաքսիմիլիանը վերհիշեց Բրիսոյի հետ իր ծանոթանալու հանգամանքները, երբ մի անգամ ակումբում հանդիպեց «Ֆրանսիական հայրենասերի» հրատարակչին։

Այդ դեպքը պատահել է վաղուց, դրեթե տասը տարի առաջ։ Համալսարանն ավարտելուց հետո պատանի Ռոբեսպիերը Փարիզի պառլամենտի դատախազ պարոն Նոլոյի մոտ պրակտիկա էր անցնում։ Հենց այնտեղ էլ նա հանդիպեց երիտասարդ գրադրին, որը նրան շատ բան էր պատմում իր ճանապարհորդությունների ու արկածների մասին։ Պիեռ Բրիսոն, պանդոկատիրոջ մի տղա, որ երիտասարդությունն անց էր կացրել արկածներով լի կյանքի աղմկալից հորձանուտի մեջ, երազում էր գրող դառնալ։ Նա պերճախոս ու տաղանդավոր մարդ էր։ Սակայն նա Մաքսիմիլիանին դուր չեկավ։ Նրա սև աչքերի խուսափող հայացքը բռնել հնարավոր չէր, նրա ամբողջ արտա-

քին կերպարանքում ինչ-որ կեղտոտ, փնթի բան կար։ Ճշտապահ Ռոբեսպիերը միշտ աշխատում էր այդպիսի մարդկանցից խուսափել։

Տվյալ դեպքում նա չսխալվեց։ Բրիսոն կեղտոտ մարդ էր ոչ այնքան ֆիզիկապես, որքան բարոյապես։ Խարդախ մի ամբոխավար, երկար ժամանակ հանրապետականի և դեմոկրատի դիմակներ հագնելով, նա, ինչպես ժամանակը ցույց տվեց, ոչ մեկն էր, ոչ մյուսը։ Նրա «Ֆրանսիական հայրենասերը» այնպիսի գաղափարներ էր առաջարկում, որոնցից նրանց հեղինակը հետագայում հրաժարվեց։ Այժմ նրան հարկավոր էր ժողովրդականություն, և նա բոլոր հնարավոր միջոցներով աշխատում էր այն ձեռք բերել։

Եվ դարձյալ՝ թերթի խորագրի տակ, ծանոթ մի անուն Մաքսիմիլիանին հիշեցնում է հեռավոր, անցած-գնացած տարիների մասին։ Այդ անունը դիպչում էր նրա սրտի ամենազգայուն թելերին, որովհետև այն պատկանում էր մի մարդու, որը նրա մտերիմն էր իր որոնումների օրերին, այն օրերին, երբ նա ուսուցչին գտավ։

Մաքսիմիլիանին թվաց, որ ինքը Քամիլ Դեմուլենին անցողակի տեսել է Վերսալում. այժմ նա կասկած չուներ, որ իր դպրոցական ընկերը Փարիզում է ապրում և նրա գործերը հաջող են։

Իրոք որ, Դեմուլենի «Ֆրանսիայի և Բրաբանտի հեղափոխությունները» թերթը խլխլվում էր։ Սուր, խայթիչ և միաժամանակ կատակող գրելակերպը, որին հիանալի տիրապետում էր սկսնակ ժուռնալիստը, փարիզեցիներին շատ էր դուր գալիս։ Բացի այդ, «Հեղափոխությունների» հրատարակչին այժմ լավ էին ճանաչում. չէ՞ որ նա Պալե-Ռոյալի ագիտատորներից ամենակրակոտն էր, որը ժողովրդին հարձակման տարավ Բաստիլի վրա։ Քամիլն իրեն «լապտերասյուների գլխավոր դատախազ» էր անվանում։ Նա իր թերթում ու բրոշյուրներում ծաղրում էր արքունիքը և նույնիսկ,— դրանով նա առանձնապես պարծենում էր,— Մարիա Անտուանետայի տանջությունը վաստակեց։

Ռոբեսպիերը չերմ հետաքրքրությամբ էր կարդում Քա-

միլի երկերը։ Նա չէր կարող չենթարկվել իր հին ընկերոջ գրչի հմայքին, բայց միաժամանակ շատ լավ էր հիշում նրան։ Տոդարանքում կարդալով, Մաքսիմիլիանը զգում էր, որ պատանի տրիբունը հեղափոխությունը սիրում է արբեցնող սիրով։ Քամիլի խանդավառությունն անսահման էր։ Իսկ նա անհրաժեշտ կայունություն կունենա՞, երբ լուրջ զոհողություններ պահանջվեն...

Մաքսիմիլիանի հին ծանոթներն իրենց համախոհներին հանդիպում էին ոչ միայն սրճարաններում կամ թերթերի խմբագրություններում. նրանք բոլորն էլ կապված էին ակումբների հետ, որոնք սկսում էին Փարիզում ավելի ու ավելի աչքի ընկնող դեր խաղալ։

Թե իր անդամների կազմով և թե իր ամբիոնից արտահայտվող գաղափարներով առանձնապես դեմոկրատիկ ուղղություն ուներ 1790 թվականի ապրիլին կորդելյերների հին եկեղեցու տերիտորիայում հիմնադրված՝ Մարդու ու քաղաքացու իրավունքների բարեկամների ընկերություն անունն ստացած ակումբը։ Սովորաբար այն պարզապես Կորդելյերների ակումբ էին անվանում։ Այստեղ ցածր անդամավճար էին վերցնում, ուստի և նիստերի դահլիճը շարունակ լեփ-լեցուն էր լինում։ Մարատը և Դեմուլենը Կորդելյերների ակումբի մշտական հաճախորդներն էին։ Հենց այստեղ ժողովրդականություն ձեռք բերեց որոտալից ձայնով ու ըմբիշի մարմնով մի հռետոր, փաստաբան Ժորժ Ժակ Դանտոնը։

Սակայն ամենամեծ հռչակը վայելում էր Յակոբինյան ակումբը, որին վիճակված էր հեղափոխության բարոմետրը դառնալու։ Այդ՝ առաջներում Բրետոնյան կոչվող ակումբը Սահմանադիր ժողովի հետ միասին տեղափոխվեց Փարիզ։ Նրան հաջողվեց իր համար շենք ստանալ Սենտ-Օնորե փողոցում, յակոբինյան վանականների վանքի գրադարանում։ Այստեղ ակումբը վերանվանվեց, կոչվելով Սահմանադրության բարեկամների ընկերություն կամ, խոսակցական լեզվով, Յակոբինյան ակումբ։ Սկզբում ակումբն ամենևին դեմոկրատական կազմ չուներ. դեպուտատների հետ մեկտեղ նրա կազմի մեջ մտնում էին միայն ունևոր փարիզեցիները՝ փաստաբան-

ներ, բժիշկներ, գրողներ, հարուստ արհեստավորներ և վաճառականներ։ Բարձր անդամավճարն ակումբի նիստերը մեկուսացնում էր բնակչության շքավոր զանգվածներից։ Ակումբը գլխավորում էին տարբեր խմբավորումների լիդերները՝ Միրաբոյից ու Լաֆայեթից մինչև Ռոբեսպիերը։ Յակոբինյան ակումբի հեղինակությունն աճում էր նահանգական մասնաճյուղային կազմակերպությունների՝ նրա լայնորեն ճյուղավորված ցանցի շնորհիվ, որոնց թիվն ամսե-ամիս աճում էր։ Ակումբի ժողովրդականությանը բավական նպաստում էր նաև այն հանգամանքը, որ նրա անդամները հարցերը նախապես քննարկում էին և հետո տեղափոխում Ազգային ժողով։

Ռոբեսպիերն ակումբի ոչ մի նիստից չէր բացակայում։ Ասամբլեայի ամբիոն բարձրանալուց առաջ նա այստեղ էր իր ճառերն արտասանում, այստեղ էր բարեկամներին գտնում և թշնամիներին ջախջախում։ Եվ այն բանին զուգընթաց, որ ակումբը, իր կազմը փոխելով, ավելի ու ավելի դեմոկրատական բնույթ կստանա, Ռոբեսպիերը նրա շարքային անդամից կդառնա յակոբինականների սիրելի հռետորն ու առաջնորդը։

Ինչ-որ մի անգամ, 1790 թվականի հունիսին, Դեմուլենի թևերթը կարդալով, Մաքսիմիլիանը նկատեց, որ իր դպրոցական ընկերն իրեն հիշել է, բայց միայն այն նպատակով, որ «Հեղափոխություններ»-ի էջերում շարադրվող մտքերը զարդացնելու համար իր հաշվին մի փոքրիկ անեկդոտ հորինի։ Հեղինակը Առասի դեպուտատին խոսքեր էր վերագրում, որոնցով նա իբր թե դիմել է Տյուիլրյան զբոսայգում հավաքված բազմությանը, ժողովի դեկրետներից մեկը դատապարտելով։

Մաքսիմիլիանն իսկապես այդ ժամանակ Ասամբլեայի ոչ ինքնիշխան որոշումների դեմ պայքար էր մղում։ Նա հանդես էր գալիս նաև Դեմուլենի հիշատակած դեկրետի դեմ, բայց միայն ժողովի պատերի ներսում։ Այն հանգամանքը, որ ժուռնալիստը նրա խոսքերը խեղաթյուրել էր և նրան կարծես թե էժանագին ժողովրդականության ետևից ընկնող համարել, խորապես վրդովեց իր համբավը ծայր աստիճան բարձր գնահատող, խոտապահանջ Մաքսիմիլիանին։ Նա որոշեց հանդուգն տր-

ղային դաս տալ և նրան սուր-պաշտոնական մի նամակ գրեց, պահանջելով ճշմարտություն վերականգնել։ Նամակն սկրվում էր այս խոսքերով.

«Պարոն, ձեր թերթի վերջին համարում...»։

Դեմուլենի պատասխանն իսկույն զինաթափ արեց ճշմարտության խոտարարո սիրահարին։ Խոստանալով թյուրիմացությունն ուղղել, Քամիլն իր հին ընկերոջը կշտամբում էր անտարբերության ու մոռացկոտության համար։

«Միրելի Ռոբեսպիեր, քո նամակը գրված է ոենատորի՝ դպրոցական բարեկամության զգացմունքները վիրավորող արժանապատվությամբ ու վեհանձնությամբ։ Դու իրավամբ հպարտանում ես Ազգային ժողովի դեպուտատի կոչումով։ Այդ ազնիվ հպարտությունն ինձ դուր է գալիս, և ես ցավում եմ, որ ոչ բոլորն են իրենց արժանապատվությունն զգում այնպես, ինչպես դու։ Բայց այնուամենայնիվ դու պետք է քո հին ընկերոջը գոնե գլխի թեթև մի շարժումով բարևեիր։ Ես քեզ ավելի պակաս չեմ սիրում, որ դու քո սկզբունքներին հավատարիմ ես մնում, թեև մեր բարեկամությանն այնքան էլ հավատարիմ չես մնացել...»։

Այս նամակը կարդալիս Մաքսիմիլիանն զգում էր, թե իր այտերն ինչպես շիկնում են։ Այո, Քամիլն իրեն լավ դաս էր տալիս։ Ինքը հին բարեկամությունը չի մոռացել։ Պետք է ցույց տալ, որ Ազգային ժողովի գեպուտատը Լուի-լը-Գրան կոլեջի սանից ավելի հպարտ ու ինքնահավան չէ։

Եվ Մաքսիմիլիանն սկսեց ձգտել հանդիպելու երիտասարդ ժուռնալիստին։ Հանդիպումը տեղի ունեցավ։ Քամիլը ժպտալով ձեռքը մեկնեց դեպուտատին։ Ռոբեսպիերը սրտանց գրկեց ու ջերմորեն համբուրեց իր պատանեկության ընկերոջը։

Դրանից հետո նրանք հաճախ էին հանդիպում, ինչպես ժամանակը ներում էր. Մաքսիմիլիանը համոզվում էր, որ Քամիլը դարձյալ այնպիսին է, ինչ որ տասներկու տարի առաջ։ Նա դարձյալ կյանքին թեթևակի էր նայում և առաջվա նման անփույթ բնավորություն ուներ։ Նա ընկերոջը պատմեց, որ Միրաբոն իրեն հրապուրել էր։ Այժմ դա արդեն անցել է։ Այժմ ինքը հիացած էր Բարնավով։ Սակայն հիմա, բացի այդ ամենից, կամ, ավելի ճիշտ, ամենից ավելի, ինքը սիրահարվել է մի

դեռատի օրիորդի, որից ավելի հմայիչ էակ աշխարհում չի եղել և որի պատճառով ինքը պատրաստ է մոռանալու մնացած ամեն ինչ։ Հրապուրող օրիորդի անունը Լյուսիլ Դյուպլեսի էր։ Նա լավ ընտանիքի աղջիկ էր, և Քամիլն արդեն նրան առաջարկություն էր արել, բայց...

Այստեղ Քամիլը քիչ մնաց, որ վշտից լաց լիներ։ Հարսնացուի ծնողները եկեղեցական ամուսնություն էին պահանջում։ Իսկ ո՞վ թույլ կտա նրան, աթեիստին և աստվածանարգողին, որը սրբերին ծաղրել և քահանաներին ցեխն է կոխել, ո՞վ թույլ կտա նրան ամուսնանալու եկեղեցական կարգով։ Սիրահարված անաստվածը պատրաստ էր ամեն տեսակ միջոցի դիմելու։ Նա գնաց Սուլպիցիա եկեղեցու կյուրեի մոտ և վշտահար տեսքով նրան խնդրեց օրհնել իրեն։ Կյուրեն կասկածեց, որ իր առջև մի բարի կաթոլիկ է կանգնած, և նրան օրհնանք չտվեց։

Մաքսիմիլիանը խեղճ տառապյալին կարեկցելով, հազիվ էր ծիծաղը զսպում։ Դրությունը շատ զավեշտական էր։ Ինչպես ս կաղատվի թեթևամիտ Քամիլը այս փորձանքից։ Սակայն Լյուսիլին ծանոթանալով, Ռոբեսպիերն իր ընկերոջ ընտրությունը չհավանել չէր կարող։

Այնուամենայնիվ ամուսնությունը տեղի ունեցավ։ Ամեն ինչ գլուխ բերեց ծեր վանահայր Բերարդյեն՝ Լուի-լը-Գրան կոլեջի նախկին դիրեկտորը։ Բերարդյեն վերցրեց իր նախկին ոսանի շեֆությունը, իսկ նա երդվեց հետագայում անաստվածությունից խուսափել և ... իր մեղքերը խոստովանեց։

1790 թվականի դեկտեմբերի 29-ին Սուլպիցիա եկեղեցում հոծ բազմության ներկայությամբ տեղի ունեցավ հանդիսավոր ծիսակատարություն։ Դեմուլենի եկեղեցական ամուսնության վկաների թվում էին Բրիսոն, Ռոբեսպիերը և Ուսամբլեայում Մաքսիմիլիանի ընկեր, դեպուտատ Ժերոմ Պետիոնը։ Մաքսիմիլիանն իրեն վատ էր զգում և ընկերոջ վրա ստատիկ զայրացել էր, որ իրեն այդ փորձանքի մեջ էր գցել։ Սրբեք կեղծ բարեպաշտությամբ շտապելով, Մաքսիմիլիանը միաժամանակ երբեք իր աթեիզմով չէր պարծենում։ Նա խորապես գարշում էր տեղի ունեցող խեղկատակությունից և

Քամիլի կեղծ հեղուքյունից։ Նա առանձնապես զայրանում էր, երբ փեսացուն, իբր Բերարդյեի սրտաշարժ քարոզից հուզված, իրենից մեծ ճիգով արցունք էր քամում։

— Լաց մի՛ լինի, կեղծավոր,— զայրույթով ֆշշաց նա փափկած Դեմուլենի ականջին։

Հարսանիքից շատ չանցած երջանիկ ամուսինը վերսկսեց հոգևորականության դեմ իր ելույթները, բայց այժմ դրանք առաջվանից ավելի ցասումնալից էին։

Քամիլի ամուսնությունը Մաքսիմիլիանին մի քիչ զվարճացրեց և ամենօրյա գործերից կտրեց։ Այնինչ այդ գործերը բարդանում էին, դեմոկրատիայի նվաճումներին բացահայտորեն սպառնացող բնույթ ստանալով։

Սահմանադիր ժողովում պայքարն իր գագաթնակետին էր հասնում։ Ժողովրդի 1789 թվականի հոկտեմբերի 5—6-ի հեղափոխական գործողությունները չէին կարող չազդել բուրժուական Ասամբլեայի տրամադրությունների և նրա կազմի վրա։ Ամենից առաջ Ժողովի ծայրահեղ աջ թևը կորցրեց իր երբեմնի նշանակությունը։ Նրա շատ անդամներ դադարեցին նիստերին հաճախելուց, իսկ լիդերները «փախուստի» մատնվեցին։ Սահմանադրականները զգալիորեն աջ ընկրկեցին։ Նրանց գլխավոր լիդերը դարձավ Միրաբոն, որն արքունիքի հետ գաղտնի կապերի մեջ էր մտել։ Թագավորի գանձարանից մեծ գումարով դրամ ստանալով և այն շքեղ պերճությունը ձեռք բերելով, որի մասին շարունակ երազում էր, Միրաբոն հնարավոր էր համարում Ֆրանսիան պահելու լիբերալ սահմանադրա-միապետական ռեժիմի շրջանակներում. նա անձամբ իր համար ձգտում էր ապահովելու գլխավոր դեր խոշոր սեփականատերերի նոր պետության մեջ։

Սահմանադիր ժողովի ձախ թևի մեծամասնությունը Բարնավի, Շարլ Լամետի և Դյուպորի գլխավորությամբ աստիճանաբար գլորվում էր ավելի ու ավելի չափավոր դիրքեր։ Նիստերում ձախերը հաճախ ու շատ էին աղմկում, դեմոկրատական ֆրազներով պճնվելով. Բարնավը բազմիցս Միրաբոյի հետ թեժ վեճի էր բռնվում, բազմության ծափահարություններ առաջացնելով. սակայն բոլոր կարևոր հարցերում նրանք միա-

նում էին սահմանադրականների հետ, դրանով իսկ «զսպելուն քաղաքականություն վարող կայուն մեծամասնություն ստեղծելով։

Մանր էր սակավաթիվ խիզախների դրությունը, որոնք հանդգնում էին ժողովրդի իրավունքները պաշտպանել։ Նրանք պայքարում էին ոչ թե կյանքի, այլ մահվան համար, առաջիկայում որևէ չափով շոշափելի հեռանկարներ չտեսնելով։

Բայց նրանք մտադիր չէին նահանջելու։ Ռոբեսպիերը, որն ընթանում էր նրանց ավանգարդում, կայունության ու սկզբունքայնության կոչ էր անում։ Այժմ նա զգում էր, որ հեղափոխական Փարիզն իրեն լսում ու խրախուսում է, Փարիզը, որը հարազատ ու սիրելի էր դառնում...

Եվ ի հակակշիռ շատ ուրիշների, նա արդեն ապագան լավ էր տեսնում։

— Դուք իզուր եք ուզում մանր շառլատանների հնարքների օգնությամբ հեղափոխության ընթացքը դեկավարել,— սառնությամբ ասում էր նա հրճվող մեծամասնությանը։— Հեղափոխության սլքնթաց հեղեղը ձեզ մանր բզեզիկների պես քշելով կտանի, ձեր հաջողությունները սաի նման վաղանցիկ կլինեն, իսկ ձեր խայտառակությունը՝ ճշմարտության նման հավիտենական։

ԳԼՈՒԽ 7

ԱՆԿԱՇԱՌԵԼԻՆ

— Իսկ այժմ խոսքը տրվում է դեպուտատ Ռոբերտ Պիեռին, — ժպտալով հայտարարեց Ասամբլեայի քարտուղարը։

— Այդ իմ անունը չէ,— բարձրաձայն ասում է դեղնականաչ ֆրակով, նիհարակազմ մի մարդ, ընդհանուր հռհռոցի տակ ճեղքելով-մոտենալով ամբիոնին։

— Ձեր անունը չէ՞։ Ներեցեք, այստեղ անընթեռնելի գրված է... Ելույթ կունենա պարոն Ռոբեսպիերը։

Սուլոցներով ուղեկցվող հռհռոցը սաստկանում է։

— Իմ անունը Ռոբեսպիեր է,— ևս մեկ անդամ հանգիստ

ուղղում է դեղնականաչ ֆրակով դեպուտատը և վճռականորեն ամբիոն բարձրանում։

...Այդ մեկուկես-երկու տարվա ընթացքում նա որքա՜ն չարություն, ատելություն, լուտանքներ և խայթող ծաղր է տարել։ Երբեմն նրան չէին թողնում ամբիոնին մոտենալու, երբեմն օբստրուկցիաներ էին սարքում։ Ամեն անգամ, երբ նրա խոսելու հերթը հասնում էր, նա, թեև իր ճառը լավ գիտեր, վախ էր զգում։ Բայց արիությունը հաղթում էր թուլությանը։ Նրա վախենալու մասին ոչ ոք չէր կռահում։ Ամբիոնի վրա նա մշտապես հանգիստ էր։

Եվ նա խոսում էր, խոսում, խոսում, իր խոսքով կործանելով իր շուրջը քաշած սառցե պատերը, խորտակելով իր ճանապարհին կանգնած ներկոտած կուռքերը։

Խոսքը նրա ուժն էր, նրա հզորությունը, նրա փառքը։ Խոսքը նրան անուն պարգևեց, ժողովրդի ստեղծած և նրա հետ հավիտյան միաձուլված անուն. նա Անկաշառելի դարձավ։

Ասամբլեայի օրենսդրական գլխավոր ակտերն ընդունվեցին 1789 թվականի հոկտեմբերի և 1791 թվականի հունիսի միջև ընկած ժամանակամիջոցում։

Ամենից առաջ անհրաժեշտ էր ամրապնդել նախընթաց պայքարի հետևանքով միահեծանությունից խլած հաջողությունները։ Բնակչության դասային հին բաժանումը վերացնելով, բուրժուական օրենսդիրները ժառանգական աղնվականության սահմանակարգը չեղյալ հայտարարեցին. նախկին աղնվականներին արգելեցին տոհմային տիտղոսներ ու գերբեր օգտագործել։ Վերացվեցին արդյունաբերության ու առևտրի ազատ զարգացմանը խանգարող սահմանափակումները, ոչնչացվեցին հին ֆեոդալա-միապետական հիմնարկությունները, առաջին հերթին՝ պառլամենտները, կատարվեց երկրի վարչական նոր բաժանում։ Եկեղեցական բռնագրավված հողերն ազգային գույք հայտարարեցին և վաճառքի հանեցին։ Եկեղեցական պաշտոններն ընտրովի դարձան, իսկ հոգևորականներին պարտավորեցրին սահմանադրությանը երդում տալ։

Այդ բոլոր ակտերը, որ հրատարակվեցին ի զարգացումն Իրավունքների դեկլարացիայի համապատասխան դրույթների,

պետք է օրենքի առաջ քաղաքացիների ձևական հավասարությունն ապահովեին։

Սակայն գրեթե միաժամանակ, հենց նույն Դեկլարացիային ակնհայտորեն հակասելով, ընդունվեցին նույնիսկ այդ ձևական հավասարությունը խախտող դեկրետներ։

Հոկտեմբերի 23-ին նիստերի դահլիճ բերեցին աղքատ մի գյուղացու, 121 տարեկան ծերունու։ Նա հնատոհմ ճորտ գյուղացի լինելով, լավ էր հիշում Լյուդովիկոս XIV արև-թագավորի դարաշրջանը, ռեգենտության ժամանակաշրջանը, «շատ սիրելի» Լյուդովիկոս XV-ի կառավարումը։ Այդ բոլոր երկար տարիներին, բոլոր փայլուն կառավարողների օրոք նա շարունակ հեծել է ճորտատիրական աղատագրության լծի տակ։ Այժմ, խոր ծերության ժամանակ, այդ սոլիտակամորուք աշխատավորը հեռավոր նահանգից եկել է Փարիզ՝ նվաճած ազատության համար ժողովրդին ու օրենսդիրներին շնորհակալություն հայտնելու։ Ժողովը միահամուռ կերպով ծափահարեց Ֆրանսիական ժողովրդի ավագագույն զավակին։ Նա լայլում էր անհաստատ քայլվածքով, թոռների օգնությամբ։ Նրան նստեցրին նախագահության բյուրոյի դիմաց, բազկաթոռի մեջ և պատիվ տվեցին, ինչպես Թագավորի՝ ստիպեցին գլխարկը դնել, այն ժամանակ, երբ դեպուտատները գլխաբաց, հոտնկայս ողջունում էին նրան։ Ծերունին լուռ էր, միայն խոշոր արցունքներ էին հոսում նրա թառամած այտերով։ «Երջանիկ լինե՞ք,— ասաց նրան նախագահը,— նայելով ազատագրված հայրենիքին»։

Հիրավի, սրտաշարժ տեսարա՞ն է։ Հավանաբար, օրենսդիրները մոռացել են, որ իրենք ընդամենը մի քանի օր առաջ հրատարակեցին առաջին հակաժողովրդական օրենքները, որոնք պետք է աշխատավորների այդ նահապետի սերունդների դեմ ուղղեսիաներ սկսեին, որին իրենք այսօր ողջունում են։

Իսկապես որ, 1789 թվականի հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսներին ընդունված դեկրետները երկրի աղքատ ու չքավոր բնակչության ամբողջ զանգվածին զրկում էին ընտրական և քաղաքական մյուս իրավունքներից, որին կամայականորեն

մտցրել էին այսպես կոչված պասիվ քաղաքացիների կատեգորիայի մեջ։ Ակտիվ քաղաքացիներ համարվեցին հարկատուների վերնախավի անդամները միայն, որոնք կազմում էին երկրի բնակչության մոտավորապես մեկ վեցերորդական մասը։

Միաժամանակ բուրժուազիան ձգտում էր ժողովրդական նոր ելույթներից ապահովել իրեն։ 1789 թվականի հոկտեմբերի 21-ին, վերջին դեպքերի թարմ տպավորության տակ հաստատվեց այսպես կոչված ռազմական օրենքը, որի համաձայն մունիցիպալ իշխանություններին թույլատրվում էր «ապօրինի հավաքույթների» դեպքերում ուժ գործադրել և նույնիսկ կրակ բացել։

Այդ օրենքից բացի, ավանների ու գյուղերի բնակիչները գրեթե ոչինչ չստացան։ Ճիշտ է, նոր որոշումները կալվածատերերին արգելում էին համայնքի հողերը գրավել, սակայն դրանք արդեն կատարված հողաբաժանումներին չէին վերաբերում։ Գյուղացիներին առաջվա նման կարգադրվում էր հետագայում անշեղորեն կատարել բոլոր «ռեալ պարհակները» մինչև դրանք ետ գնելը։ Ձեռնարկատերերի կամքը կատարելու համար ժողովը հարված հասցրեց նաև աշխուժացած բանվորական շարժմանը։ 1791 թվականի հունիսի 14-ին դեպուտատ Լը Շապելյեի առաջարկությամբ ընդունվեց բանվորական միությունների կազմակերպումը և գործադուլային պայքարն արգելող դեկրետ։

Սահմանադիր ժողովի բուրժուական օրենսդրության պրոակը 1791 թվականի սահմանադրությունն է։

Սահմանադրությունը հանդիսավոր հռչակում էր ազգի ղեկավար դերի սկզբունք։ Օրենսդրական բարձրագույն իշխանությունը հանձնվում էր Օրենսդրական ժողովին՝ երկու տարով ընտրվող միապալատ օրգանին։ Գործադիր իշխանության ղեկավարը թագավորն էր, որը նշանակում էր մինիստրներին ու բարձր զորապետներին և կատեցնող վետոյի իրավունք ուներ։ Թագավորի անձն անձեռնմխելի էր հայտարարվում։ Ասամբլեայի առաջ պատասխանատվության ենթակա էին միայն գործադիր իշխանության գործակալները՝ մինիստրները։ Օրենսդրական ժողովի ընտրությունները երկ-

աստիճան էին՝ ինչպես Ժողովի, այնպես էլ ցանկացած վարչական օրգանի համար ընտրելու կամ ընտրվելու իրավունք ունեին միայն ակտիվ քաղաքացիները։ Սահմանադրությունը ապրարային հարցերը չէր լուծում և գաղութներում գոյություն ունեցող ստրկությունն օրինականացրեց։

Այդ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում Ռոբեսպիերը մշտապես հանդես էր գալիս միևնույն պլանով։ Նրա հիմնական միտքը շատ պարզ էր։

Նա պահանջում էր, որ օրենսդիրները սահմանադրության մեջ հետևողականորեն և լիակատար չափով կիրառեին Իրավունքների դեկլարացիայի սկզբունքները, և ոչ թե ամեն բայլ փոխում այդ սկզբունքներին հակասեին, որ ազատության ու հավասարության անունից հրատարակվող նոր օրենքները չնչեին ազատությունը և չխախտեին հավասարությունը ի բարբարություն մի բուռ հարուստների և ի վնաս աշխատավոր հիմնական զանգվածի, որ քաղաքացիների քաղաքական իրավունքները չկապեին նրանց գույքային դրության հետ։ Նրա բոլոր ճառերը,— իսկ նա ոչ լրիվ երեք տարվա ընթացքում ավելի քան հինգ հարյուր անգամ ելույթ ունեցավ,— նվիրված էին ժողովրդի կյանքի բարելավման և ժողովրդական իրավունքների համար մղվող պայքարին։

Երբեմն, չկար մի ուրիշ պրոբլեմ, որը Մաքսիմիլիանին այնպես հուզեր, ինչպես ընդհանուր ընտրական օրենքը։ Նա լռում էր, երբ քննարկում ու վերացնում էին ազնվականության արտոնությունները, նրա ձայնը չէր լսվում առևտրա-արդյունաբերական օրենսդրության կամ վարչական բարենորոգության մասին բանավեճերի ժամանակ։ Բայց հենց որ բարձրացվում էր ընտրական իրավունքի, ակտիվ ու պասսիվ քաղաքացիների, գենդի հարցը, նա իսկույնևեթ նետվում էր դեպի ամբիոնը և պատրաստ էր մինչև մոլեգնության հասնելը վիճել տարբեր կուսակցությունների ու խմբավորումների լիգերների հետ։ Երիտասարդ դեպուտատի գրությունը շատ բարդ էր, ոչովհետև նրա տեսակետը շատ քչերն էին պաշտպանում, նույնիսկ

նրա զինակից Պետիոնը ցենզի հարցում նրա հետ տարակարծիք էր։ Եվ այնուամենայնիվ, երբեմն բոլորովին մենակ մընալով, Ռոբեսպիերը շարունակում էր պայքարել. չսահմանափակվելով Ժողովում ունեցած ելույթներով, նա իր գաղափարները զարգացնում էր Յակոբինյան ակումբում և մամուլում։

Մաքսիմիլիանը մատնացույց էր անում այն հրեշավոր հակասությունը, որ գոյություն ուներ ապագա սահմանագրության մեջ ցենզի պրոբլեմի հարցադրման և Իրավունքների դեկլարացիայի վսեմ սկզբունքների միջև, որոնք պետք է սահմանագրությունը հիմք ընդուներ։

«... Օրենքն ընդհանուր կամքի արտահայտությունն է, ասվում է Դեկլարացիայի մեջ. բայց մի՞թե դա հնարավոր է, եթե այն մարդկանց հսկայական մեծամասնությունը, որոնց համար օրենքն ստեղծվում է, ոչ մի ձևով չի կարող ազդել նրա հրատարակման վրա... Ժողովրդի ինքնակալությունը, որի մասին խոսում է Իրավունքների դեկլարացիան, անմիտ մի ֆորմուլա է, երբ այդ ժողովրդի մեծամասնությունը զրկված է քաղաքական իրավունքներից, որոնք հենց անխզելիորեն կապված են ժողովրդական ինքնակալության հետ...»։

Ռոբեսպիերը ցասումով ջախջախում էր փաստարկները ցենզի կողմնակիցների, որոնք փորձում էին ապացուցել, թե աղքատ ու չքավոր աշխատավորները չեն կարող շահագրգռվել պետության խելացի կառավարմամբ, որովհետև նրանք իբր ոչինչ չունեն, որ օրենքների պաշտպանության ու պահպանության կարիք ունենար։

«... Ինչպե՞ս կարելի է, ասում եք դուք, քաղաքացիների բոլոր իրավունքները տալ այն մարդկանց, ովքեր ոչինչ չունեն և, հետևաբար, կորցնելու էլ ոչինչ չունեն։ Կորցնելու ոչի՞նչ չունեն։ Ինչպե՞ս ստախոս է այդ անչափ ամբարտավան լեզուն։ Ինչպե՞ս անիրավացի է նա ճշմարտության առաջ։ Ըստ երևույթին, այն մարդիկ, որոնց մասին դուք խոսում եք, ապրում են մեր մեջ առանց գոյամիջոցների. այլապես եթե նրանք այդպիսի միջոցներ ունեն, նշանակում է նրանք, ինձ թվում է, ունեն թե՛ կորցնելու, թե՛ պահպանելու բան։ Այո, այս կոպիտ հագուստը, որ ծածկում է իմ մարմինը, այս խղճուկ վարձու բնակարանը, որտեղ ընթանում է իմ խաղաղ ու մենավոր կյան-

քը, համեստ աշխատավարձս, որով ես կերակրում եմ կնոջս ու երեխաներիս,— այո, ես ընդունում եմ, որ դրանք հողեր չեն, դղյակներ չեն, կառքեր չեն, որ պերճության ու հարստության տեսակետից դրանք կարող են «ոչնչություն» համարվել, բայց մարդու իրավունքների տեսակետից դրանք ոչ թե ոչինչ են, այլ սրբազան սեփականություն, անտարակույս, հենց այնպիսի սրբազան մի սեփականություն, ինչպես և հարուստների փայլուն կալվածքները»։

Հերքելով իր ընդդիմախոսներին, որոնք պնդում էին, թե իբր աղքատին հեշտ է կաշառել և դրանով իսկ նրան սոցիալապես վտանգավոր տարր դարձնել, Մաքսիմիլիանը ցույց էր տալիս, որ ժողովրդի շահերը համընկնում են հասարակության շահերի հետ։ Նա ոչ առանց դառնության հիշեցնում է տեղատիրության սկզբնական շրջանի դեպքերի մասին։

«... Մի՞թե դուք հարուստներին և ամբարտավան պարոններին եք պարտական այն փառապանծ ապստամբության համար, որը փրկեց Ֆրանսիան և ձեզ։ Արդյոք ժողովուրդն այն ժամանակ նրա՞ համար էր պայքարում, որ ձեզ տվներ իր իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու, թե նրա՞ համար, որ ձեզ իշխանություն տար իրեն այդ ամենից զրկելու։ Արդյոք նա ֆեոդալական արիստոկրատիայի լուծը նրա՞ համար տապալեց, որ հարուստների լծի տակ ընկնի»։

Ոչ ոք չէր կարող ժխտել այս խոսքերի արդարացիությունը։ Բայց արդյոք կարո՞ղ էին ընդունել այդ խոսքերը և համաձայնել դրանց հետ հենց Ասամբլեայի աթոռներին նստած հարուստները, որոնց դեմ ուղղված էին դրանք...

Հենց այդպիսի մտքերով են համակված Ռոբեսպիերի ելույթները բանակի դեմոկրատացման և ազգային գվարդիայի կազմի մասին։ Նա անկասկած առարկում էր այն դեկրետի դեմ, որի համաձայն ազգային գվարդիայի մեջ ընդունվում էին միայն ակտիվ քաղաքացիները։ Նշելով այն մասին հոգ տանելու անհրաժեշտությունը, որ ազգային գվարդիայի մարտիկները ցինովորական կաստա չկազմեին և մեկուսամիտաբակային տրամադրությամբ չվարակվեին, որի հետևանքով ազատությունը կարող է տուժել, Մաքսիմիլիանը հիշեցնում էր, որ ազգային

գվարդիականի մեջ զինվորը պետք է միաձուլվի քաղաքացու հետ։ Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե ազգային գվարդիան կազմվի ամենալայն դեմոկրատական հիմքերի վրա, եթե այն համաժողովրդական բնույթ ունենա։

«...Քաղաքացիների մի մասին զենք կրելու իրավունքից զրկել և միաժամանակ մյուս մասին սպառազինել՝ այդ նշանակում է խախտել հավասարության սկզբունքը, հասարակական նոր դաշինքը, խախտել բնության ամենանվիրական օրենքները...»։

Ռոբեսպիերը հավասարապես բողոքում է կանոնավոր բանակի համար ընդունելություն կատարելու հին սկզբունքի դեմ, որի հետևանքով զինվորի և սպայի միջև գոյություն ուներ մշտական ու սաստիկ գժտություն. զինվորները բանակ էին ընդունվում երրորդ դասից, սպաները գրեթե բացառապես պատկանում էին ազնվականությանը։

«Երկրում ազնվականությունը ոչնչացվել է,— ասում էր Մաքսիմիլիանը,— բայց նա շարունակում է մնալ բանակում... Անթույլատրելի է Ֆրանսիայի պաշտպանությունը նրան վստահել։ Դուք հանրային բոլոր պաշտոնները նշանակեցիք ազատության ու հավասարության սկզբունքների համաձայն, և միևնույն ժամանակ դուք պահպանում եք բռնապետության ստեղծած զինված՝ պաշտոնատար անձանց»։ Ընդունելով, որ սպաների մի մասը հարել է հեղափոխությանը, Ռոբեսպիերն արդարացիորեն նշում էր, որ սպայության մեծամասնությունը թշնամաբար է տրամադրված։ Նա միաժամանակ բաղմիցս հանդես էր գալիս բանակի ու նավատորմի շարքային կազմի իրավական դրությունը բարելավելու պահանջով, բողոքելով այստեղ տիրող իրավազրկության և ավանդական դավաղանային կարգապահության դեմ։ Մովային նոր կանոնադրությունը քննարկելիս Մաքսիմիլիանը հետամուտ էր լինում, որ նավաստիները և սպաները միատեսակ հանցանքների համար հավասար պատիժ կրեին. մասնակցելով զինվորական դատարանների բնույթի շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը, նա պնդում էր, որ դրանք կազմակերպվեին ոչ միայն սպաներից, այլ լինեին հրամանատարական և շարքային կազմից ընտրվող խառը հանձնաժողովներ։

Թե այդ բոլոր հայտարարությունները որքան հարմարակոպ էին, ցույց տվեցին զինվորական խռովությունները, որ 1790 թվականի գարնանն ու ամռանը թնդացին ամբողջ երկրով մեկ։ Այդ խռովություններից ամենանշանակալիցը Նանսիի կայազորի չորս գնդերի հուզումն էր, որը գազանաբար ճնշեց արիստոկրատ-գեներալ մարկիզ Բույեն։ Սահմանադիր ժողովը, չնայած Ռոբեսպիերի վճռական բողոքին, անհրաժեշտ համարեց «ազգի անունից շնորհակալություն հայտնել» Բույյին։ Դա սեփականատերերի Ասամբլեայի միակ պատասխանն էր բանակի դեմոկրատական վերակառուցմանը վերաբերող բոլոր պահանջներին։

Հողային հարցի գծով Ռոբեսպիերի սակավաթիվ հայտարարությունները համակված են հումանիզմով և հողագործին օգնելու անկեղծ ցանությամբ։

Համայնական հողերի նկատմամբ գյուղացիների իրավունքները պաշտպանելու համար Ժողովում մի մեծ ճառով հանդես գալով, նա հետամուտ էր լինում ֆեոդալական ժամանակներից ժառանգված բոլոր շարաշահումների լիակատար վերացմանը։

Նա համառորեն պնդում էր, որ Սահմանադիր ժողովը ոչ միայն արգելեր կալվածատերերին հետագայում համայնական հողեր գրավելու, այլև միջոցներ ձեռք առներ գյուղացիներին վերադարձնելու այն հողերը, որոնք կալվածատերերի ձեռքն են ընկել «օրինական» հիմունքով։ «... Ասում են, թե կալվածատերերը վաղեմության իրավունք ունեն, բայց ժողովրդի վաղեմության իրավունքն ավելի հին է. վարեցնում են կալվածատիրական սեփականությանը դիպչելուց, բայց հենց բաժին տալու իրավունքն այլ բան չէ, քան օրինականացված կողոպուտի իրավունք, իսկ կողոպտելը երբեք չի կարող հափշտակածի սեփականության իրավունք տանել։ Այդ պատճառով բոլորովին բավական չէ հետագայի համար բաժին տալն արգելելը. այս դեպքում օրենքը պետք է ունենար հետադարձ ուժ։ Այլ կերպ վարվելը կնշանակեր կողոպտիչներին թողնել հանգիստ տիրելու իրենց հափշտակածին...»։

Ռոբեսպիերը խորապես կարեկցում էր քաղաքային մանր բուրժուազիային՝ փոքրիկ կրպակների տերերին, ինքնուրույն արհեստավորներին, առևտրի ու արհեստավորական բնագավառի այդ բոլոր փոքր մարդկանց, որոնք սնանկանում էին, հնարավորություն չունենալով դիմանալու խոշոր ձեռնարկատերերի ու առևտրականների մրցակցությանը։ Նա հանդես էր գալիս փոքր մարդկանց կյանքին սպառնացող գույքային անհավասարության մեղմացմանն ուղղված նախագծով։ Սակայն նա բանվորներին չնկատեց։

Նա մյուս դեպուտատների հետ միասին քվեարկեց Լե-Շապելյեի հակաբանվորական նախագծի օգտին և գրանով իսկ աջակցեց ավելի քան յոթանասուն տարով մի օրենքի հաստատմանը, որը, Մարքսի խոսքերով, «... կապիտալի ու աշխատանքի միջև մղվող կոնկուրենցիան պետական ոստիկանական ձեռնարկում» խցկեց «կապիտալի համար հարմար շրջանակների մեջ»... օրենք, որը բոլոր հեղափոխություններից և դինաստիաների հաջորդափոխումներից երկար ապրեց...»[1]։

Ժողովրդի ջերմ պաշտպան լինելով, Ռոբեսպիերը բավականաչափ պարզ չէր պատկերացնում, թե ժողովուրդն ինչ է։ Նրա ըմբռնողությամբ, ժողովրդի առանձին խավերը, նրա կազմի մեջ մտնող առանձին դասակարգերը գրեթե չեն շերտավորվում։ Նա «նարոդնիկ» է բառիս ամենալայն ու իսկական իմաստով. նա այդպիսին էլ կմնա մինչև իր կյանքի վերջը։

Ռոբեսպիերը Սահմանադիր ժողովի՝ Ֆրանսիայի գաղութների գունավոր բնակչության իրավունքների համար պայքարող սակավաթիվ դեպուտատներից մեկն էր։

Սամբլեայում սարկավաճառության վերացման առաջին առաջարկությունն արվեց արդեն 1789 թվականի նոյեմբերին։ Բակայն Հաիթիում և Մարտինիկում հողեր ու ստրուկներ ունեցող շատ դեպուտատներ առանձնապես շահագրգռված էին ստրկության պահպանմամբ։ Ստրկատեր դեպուտատների թվին էին պատկանում նաև Լամետ եղբայրները, իսկ նրանց բարեկամ Ֆոշնայը բազմիցս հանդես էր գալիս ստրկության և

---

[1] Գ. Մարքս, Կապիտալ, I հատոր, «Հայպետհրատ», 1954, էջ 774—775։

մուլատների ոչ լիիրավ գրության վերացման առաջարկությունների դեմ։

Ռոբեսպիերն իր ճառում դեպուտատներին բացատրեց, թե քանի որ սահմանադրությունը քաղաքական իրավունքներ է տալիս սահմանված հարկերը վճարող բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց մաշկի գույնից, ուստի մուլատները պետք է օգտվեն նույն իրավունքից, ինչ որ սպիտակամորթները։ Իսկ այդ հարցի լուծումը միայն սպիտակամորթներից կազմված գաղութային ժողովին թողնելը, որի վրա համառորեն պնդում էր Բարնավը, ոչ այլ ինչ է, քան ծաղր ու ծանակ։ Ի՞նչ կասեին պարոնայք դեպուտատները, հեգնորեն հարցնում է Մաքսիմիլիանը, եթե Ֆրանսիայում երրորդ դասի ճակատագիրը թողնեին տնօրինելու միայն արտոնյալներին։ Երբ մտքերի փոխանակության ընթացքում մի դեպուտատ ուղղում առաջարկեց, որի մեջ հիշատակվում էր «ստրուկ» բառը, Ռոբեսպիերը դայրույթով բացականչեց.

— Հենց այն պահից, երբ դուք ձեր դեկրետների մեջ «ստրուկ» բառը կմտցնեք, դուք ձեզ կխայտառակեք։ Դուք անդադար խոսում եք մարդու իրավունքների մասին և միաժամանակ ձեր սահմանադրությամբ ստրկությունը սրբագործում։ Ավելի լավ է գաղութները կործանվեն, եթե նրանց հեռավոր գոյությունը պետք է գնել մեր պատվի, փառքի և ազատության կորստի գնով միայն...

Ռոբեսպիերը պայքարում էր անդադար, առանց հանգստի մասին մտածելու։ Նա ճառեր էր արտասանում դինվորական օրենքի դեմ, մամուլի և հանրագրերի ազատության մասին, դատարանի կազմակերպման մասին, հոգևորականության քաղաքացիական կազմակերպվածության մասին, թագավորի իրավունքների մասին, ժառանգության հավասար բաժանման մասին, մահապատժի դեմ և ուրիշ շատ թեմաներով։ Եվ ամենուրեք նա միևնույն Անկաշառելին էր, Անհողդողդը, Անդրդվելին։

Շարունակ ավելի հաճախ ու ավելի վստահորեն հռետորական ամբիոն բարձրանալով, նա ավելի ու ավելի աչքի է ընկնում իր ճառերի հետևողականությամբ ու սկզբունքային կառուցվածքով, որոնք ծաղրասեր չաբակամ անձանց ստիպում

են հետզհետե լռել ու նսեմանալ և ընդհանուր ճանաչում գտած լիդերներին տարակուսանքի մեջ գցում։ Միրաբոն մտածմունքի մեջ ընկավ, Բարնավը հոնքերը կիտեց, Լամետ եղբայրները, որ դեռ վերջերս համարվում էին Ժողովի ձախ թևի պարագլուխները, իրար հետ մտահոգությամբ փսփսում են։ Այո՛։ Նրանք թերագնահատել են նրան։ Զվարճալի խեղկատակություն ողբերգություն դուրս եկավ։ Ակնհայտորեն չհաջողվեց «Առասի մոմը» մարել։

Այժմ նրա անունը լայնորեն հոչակվել է Ասամբլեայի սահմաններից դուրս։ Նրան ճանաչում ու խորապես հարգում էր ամբողջ հեղափոխական Ֆրանսիան։ Նրան ծափահարում էին, նրա վրա հույս էին դնում, նրան խնդրում էին։ Ամեն հարմար առիթով ընտրված անձինք և մասնավոր թղթակիցները նրան վստահությամբ հաղորդում էին իրենց կարիքներն ու հոգսերը, վստահություն ու շնորհակալություն հայտնում։ Նրա գրասեղանը շարունակ ծածկված է նամակներով։ Ահա Ավինյոնից ստացված մի նամակ՝ պաշտոնատար անձինք ջերմորեն շնորհակալություն են հայտնում Ֆրանսիային միանալու մասին ավինյոնցի քաղաքացիների հանրագրի պաշտպանման ճառ արտասանելու համար։ Հինգ նամակ ստացվել են Մարսելի տեղական յակոբինականներից և քաղաքապետարանից. նամակներում գանգատներ են, օգնության հույս, շնորհակալություն։ Չորս նամակ ստացվել են Տուլոնից. դրանցից մեկում մունիցիպալիտետը հաղորդում է, որ Ռոբեսպիերի քաղաքացիական խիզախությունը և այն անձնվիրությունը, որ նա բազմիցս ցուցաբերել է քաղաքային կոմունայի նկատմամբ, գլխավոր խորհրդին հուշեցին նրան Տուլոնի քաղաքացու կոչում շնորհելու։ Նամակներ են գրում Առասից, Վերսալից, Բուրժից, Լոնդոնից, Մանտից. գրում են բելգիացի դեմոկրատները և հեռավոր Կայեննայի դեպուտատները, խանդավառ երկրպագուհիներ և անծանոթ խնդրատուներ։ Նախկին արիստոկրատուհի և այժմյան յակոբինական տիկին Շալաբրը Մաքսիմիլիանին հրավիրում է «հայրենասերների ընկերակցությամբ կազմակերպվող մի փոքր ճաշկերույթի», խնդրելով նրան ընտրելու այնպիսի մի օր, որն ավելի քիչ կխանգարի իր գործերին։

ժիրոնդիստների ապագա ոգեշնչող տիկին Ռոլանը նրան դիտում էր որպես իր սկզբունքներին նվիրված քաջարի մի մարդու, «որը վճռականությամբ անդուլորեն պայքարում է բռնակալության խարդավանքների, նկրտումների և հնարքների դեմ»։ Իսկ ահա... այս ի՞նչ է։ Սեն-Ժյուստի, նրա ապագա համախոհի և բարեկամի նամակն է, Սեն-Ժյուստի, որին առայժմ չի ճանաչում ոչ ոք, այդ թվում նաև հենց Ռոբեսպիերը։ Նամակի հեղինակը խնդրում է պաշտպանել Ասամբլեային ուղղված իր դիմումը։ Սեն-Ժյուստն ակնհայտ հիացմունքով է խոսում իր հասցեատիրոջ մասին։

«Ես իմ խնդրանքով ձեզ եմ դիմում, ձեզ, որ պաշտպանում եք ուժասպառ հայրենիքն ընդդեմ բռնակալության ու խարդավանքների հեղեղի, ձեզ, որին ես ճանաչում եմ իր հրաշքներով՝ իբրև միայն աստծու...»։

«... Ես անձամբ ձեզ չեմ ճանաչում, բայց դուք մեծ մարդ եք, դուք միայն մի նահանգի դեպուտատ չեք, դուք ամբողջ մարդկության դեպուտատն եք»։

Մի ուրիշը, նույնպես ապագայի առայժմ անհայտ մի գործիչ, ուշադրությամբ հետևում է Ռոբեսպիերի հաջողություններին։ Դեռևս բոլորովին պատանի Ֆրանսուա Նոյել Բաբյոֆը խանդավառությամբ արտագրում է Անկաշառելիի ճառերի ամբողջ էջեր, դրանց մեջ գտնելով ազատագրված մարդկանց հավասարության ու երջանկության մասին իր ոսկե երազանքին համահնչյուն դաղափարներ։

Այդ բոլոր փաստերը կատարված փոփոխությունների վառ վկայություն են։ Ռոբեսպիերն այնքան ականավոր էր դարձել, որ ժողովուրդը, անկախ նրա դեպուտատական պարտականություններից, սկսում է իր տրիբունին առաջ քաշել վարչական կարևոր պաշտոնների։

Դեռևս 1790 թվականի հոկտեմբերին Վերսալի բնակիչները Ռոբերտիլիանին իրենց դիստրիկտի դատարանի նախագահ ընտրեցին։ 1791 թ. հունիսի 10-ին նրան նորից մի հաճելի անակնկալ էր սպասում՝ Փարիզի դեպարտամենտի ժողովը նրան Փարիզի քրեական դատարանի հասարակական մեղադրող ընտրեց։ Դա մեծ պատիվ ու վստահություն էր։

Բանն առանց բնորոշ միջադեպի չանցավ. Բարնավի բարեկամ Դյուպորը, որը միաժամանակ միևնույն դատարանի նախագահ էր նշանակված, անհապաղ հրաժարվում է պաշտոնից, չցանկանալով կողք-կողքի աշխատել իր համար ատելի մի մարդու հետ։ Քամիլ Դեմուլենն իր թերթի էջերում նշավակեց այդ վարմունքը։ «Անարգ կեղծավո՞ր,— դիմում է նա Դյուպորին։— Դու վանում ես Ռոբեսպիերին, ազնվության մարմնացմանը, և, չկարողանալով նրան հեռացնել, թողնում ես պաշտոնդ, որ քեզ տվել է համաքաղաքացիներիդ վստահությունը, ավելի ճիշտ, մոլորությունը։ Դու գիտե՞ս, թե նրա և քո հայրենասիրության միջև ինչպիսի հսկայական տարաձություն է ընկած։ Դու հարյուր անգամ վկա ես եղել միահամուռ ծափահարությունների, որ յակոբինականների շրջանում առաջացնում էին նրա ճառերը և նույնիսկ լոկ նրա ներկայությունը»։

Սակայն այդ փաստը Ռոբեսպիերի կողմնակիցների օգտին ծառայեց. ընտրողները դավաճան Դյուպորի տեղի համար առաջ քաշեցին Պետիոնին։ Իսկ դա գեմոկրատիայի ուժերի կրկնակի հաղթանակ էր։

Այսպես, ժողովրդական կարծիքի բնագավառում հաղթանակներ նվաճելով, նորանոր համակրանքներ շահելով, Մաքսիմիլիանը պետք է անխուսափելիորեն հաղթեր իր թշնամիներին։ Ժողովում նրա հետևողական սկզբունքային պայքարը, մի պայքար, որն այնքան ավելի ապշեցուցիչ էր, որքան նա հաջողության ավելի քիչ հույս ուներ, մարդկանց համակրանքն էր գրավում։ Նրան մեծարում էին, նրան արդեն սիրում էին։ Եվ ժողովրդական սիրո առաջին վկան դարձավ նրա երկրորդ՝ Անկաշառելի, անունը։

ԳԼՈՒԽ 8

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՎԱՃԱՌԸ

1790 թվականի ամռանը Փարիզում նշում էին հոբելյանական երկու տարեթվեր։ Հունիսի 17-ին լրացավ ուղիղ մեկ տարի այն պահից, երբ Գլխավոր շտատների երրորդ դասը

հանդգնեց իրեն Ազգային ժողով հռչակել։ Բուրժուազիան այդ օրն իրենն էր համարում։ Որոշեցին այն տոնել փայլուն կերպով։ Պալե-Ռոյալի հարուստ ապարանքների երկրորդ հարկում ճոխ ճաշկերույթ տրվեց։ Երկու հարյուր հոգու համար պիրճորեն սպասքավորված ճաշասեղանի շուրջը տեղավորվեցին 1789 թվականի ընկերության անդամները[1] և հրավիրված մարդիկ։ Անուշեղեն մատուցելու ժամանակ տիկնայք վարդի ու վարդակակաչի փնջեր նվիրեցին Սիեյսին, Լաֆայետին, Լը-Շապելյեին, Միրաբոյին և Տալեյրանին։ Ամենից ավելի շատ մեծարանքներ բաժին ընկան Բայիին, որի գլխին ծաղկեպսակ դրեցին։

Իսկ պալատի լուսամուտների տակ խռնվել էին սովահար ռամիկներ։

Առատ ընթրիքից հետո հյուրերը դուրս եկան պատշգամբները՝ «բարեգութ մարդկանց» դիտելով մի քիչ հաճույք վայելելու և այգիների երեկոյան բույրով հագեցած օդ շնչելու։ Ինչ-որ մեկն սկսեց թեթևսոլիկ մի երգ երգելով բազմությանը զվարճացնել, մի ուրիշը, թերևս, հարբած վիճակում հանդես եկավ, առաջարկելով Լյուդովիկոս XVI-ին կայսերական թագով պսակել...

Իսկ մեկ ամիս անց, հուլիսի 14-ին, Փարիզը զմայլվում էր մի նոր հանդեսով, որը բուրժուազիայի տոնահանդեսին բոլորովին նման չէր։ Բաստիլի գրավման տարեդարձը վերածվեց հեղափոխական ժողովրդի հզորության վիթխարի ցույցի։ Դա ֆեդերացիայի տոնն էր[2]. տարբեր մարզերի ու նահանգների աշխատավոր բնակչությունն առաջին անգամ հանդիպում է իր մայրաքաղաքում այն օրը, որն առհավետ պետք է մնար որպես ամբողջ երկրի օրը։ Փարիզի փողոցներում բրետոնցիները գրկախառնվում էին պրովանսցիների հետ, գասկոնցիները ողջունում էին բուրգունդցիներին, օվերնցիները առատարկում էին Իլ-դը-Ֆրանսի բնակիչների կենացը։ Կազմակերպվեց ֆեդերատների հանդիսավոր շքերթ։ Մարսյան դաշտում

---

[1] Այսպես էր կոչվում 1790 թվականի ապրիլին սահմանադրականների հիմնադրած ակումբը։

[2] Այսինքն՝ ամբողջ երկրի միավորման, հեղափոխական միասնության տոնը։

կառուցեցին «հայրենիքի զոհասեղան», որի մոտ պատգամավորները հանդիսատեսների կես միլիոնանոց զանգվածի խանդավառ աղաղակների տակ հավատարմության երդում տվեցին ազգին, օրենքին և... թագավորին։ Այո՛, թագավորին։ Պատրանքները դեռևս չէին վերացել, բուրժուազիան լարում էր իր բոլոր ուժերը դրանք պահպանելու համար։ Այստեղ կարելի էր տեսնել թե՛ գահի խղճուկ մի նմանակ՝ իր մշտական շուշաններով, թե՛ խոժոռադեմ թանձրամարմին միապետին, թե՛ նրա քմահաճորեն փքված կնոջը, թե՛ ամբողջ պալատական մռայլ կամարիլյան։

Անցյալի այդ ուրվականները ի՞նչ ընդհանուր բան ունեին ժողովրդական տոնի հետ։ Ինչպիսի՞ շարանենգ ցնծությամբ նրանք այդ տոնախմբությունը կհեղեղեին այդ բոլոր բանվորների և արհեստավորների արյունով, որոնց առաջ այժմ ստիպված են ստատիստների դեր կատարելու։ Բայց ժամը դեռ չի հասել։ Ժողովուրդը ցնծում էր, հրճվելով իր հզորությամբ, քաղաքագլուխը ժպտալով ողջունում էր ֆեդերատներին։ Իսկ ժողովրդի արյունը... Այն կթափվի, կթափվի հենց այս սրբազան տեղում, հանուն հենց այդ թանձրամարմին միապետի, հենց այդ ժպտացող Բայիի հրամանով, բայց ոչ այսօր։ Այդ տեղի կունենա մեկ տարի հետո...

Ինչ-որ մի անգամ, 1791 թվականի փետրվարին, Ասամբլեայի նիստի ժամանակ նախագահը հրապարակեց թագավորից ստացված մի երկտող, որով նա ծանուցում էր, որ ինքը կգա Ժողովին, և խնդրում էր իրեն ընդունել «առանց էտիկետի»։

Բոլոր կողմերից ծափահարություններ լսվեցին։ Միապետին ընդառաջ մի պատգամավորություն ուղարկեցին։ Նախագահը հոտնկայս սպասում էր օգոստափառ անձնավորությանը։ Վերջապես մի քանի դրանիկների առաջնորդությամբ և մինիստրների ուղեկցությամբ մտնում է Լյուդովիկոս XVI-ը։ Նա շքանշաններ ու ռեգալիաներ չի կրել, հագել է հասարակ սև ֆրակ։ Դահլիճը թնդում է ուրախ գոռում-գոչումներով։ Բոլորը շարունակում են հարգալից կեցվածքով կանգնած մնալ։ Թագավորը ճառ է արտասանում։ Սքողված տրտունջները հրմտորեն միահյուսվում են Ժողովի հասցեին ուղղված հաճոյա-

խոսություններին ու ռեֆերանսների հետ։ Թագավորը խոստանում է պաշտպանել, պահպանել ու պահել սահմանադրական ազատությունը, որի սկզբունքները սրբագործված են բոլորի կամքով ու համաձայնեցված իր ցանկության հետ... Նա հավաստիացնում է, որ հենց մանկուց թագաժառանգի միտքն ու հոգին կնախապատրաստի իրերի նոր կարգ ու կանոնին համապատասխան։ Այնուհետև Լյուդովիկոսը և նրան ուղեկցող անձինք հեռանում են։ Ժողովը, հավատարիմ հպատակի զգացմունքներով համակված, նրանց հրաժեշտ է տալիս խանդավառ բացականչություններով։ Հասարակական փրկության կոմիտեի ապագա անդամ Բարեր դը Վյեզակը խանդաղատանքի արցունք թափելով, բացականչում է. «Օ՜հ, ինչ բարի թագավոր է։ Դե, նրա համար պետք է ադամանդասփյուռ ոսկյա գահ պատրաստել»։

Եվ օրենսդիրներն այդ ռեպլիկան անուշադրության չմատնեցին։ Ժողովը կեղծավոր խանդավառության մթնոլորտում, առանց քննարկման ու մտքերի փոխանակության, «թագավորի ապրուստի միջոցները հայթայթելու համար» ընդունեց գահաթերթ՝ տարեկան քսանհինգ միլիոն լիվր գումարով, դրան ավելացրած չորս միլիոն՝ թագուհու կարիքների համար։

Հասարակական կարծիքը վրդովվեց։ Մի ժուռնալիստ գայրույթով նշում էր, որ թագուհու քմահաճույքներն այնքան թանկ կնստեն, որքան Ասամբլեայի և նրա բոլոր հանձնաժողովների, կոմիտեների և ենթակոմիտեների ծախսը։

Բայց սեփականատերերը չէին ափսոսում գահաթերթի ֆոնդին հատկացված ժողովրդական դրամը, որովհետև նրանք դահը դեմոկրատիայի ելույթների դեմ մի խոչընդոտ էին համարում, որովհետև նրանց հարկավոր էր մի թագավոր ժողովրդի դեմ պայքարելու համար, հարկավոր էր բուրժուազիայի թագավոր։ Իսկ այդպիսի թագավորին, եթե նա հլու-հնազանդ գործիք լինի, կարելի է և ոսկեզօծել...

Կույրե՜ր։ Նրանք մոռացել են մի պարզ ճշմարտություն՝ ինչպես էլ ոսկեզօծես վանդակի ձողիկները, այն, միևնույն է, վանդակ էլ կմնա։

Իսկ թագավորը, թագուհին, նրանց մերձավորները, նրանց արքունիքի բեկորները՝ նրանք բոլորն էլ իրենց գերված էին

զգում։ Միամտություն կլիներ հուսալ, թե Լյուդովիկոս XVI-ը, որը մանկությունից իրեն աստվածածայալ թագավոր էր համարում, շրջապատված էր փայլուն ու ստրկամիտ ազնվականությամբ, մի միապետ, որ յուրացրել էր ամեն ինչ և ամենքին արհամարհող «պետությունը՝ դա ես եմ» ամբարտավան միտքը, կհամաձայնի բուրժուազիայի թագավորը դառնալ, մի թագավոր՝ առանց ազնվականության ու հոգևորականության, զրկված իր վեհությունից ու առանձնաշնորհությունից, դատապարտված՝ նոր իշխանության ձեռքում լծակի գեր կատարելու։

Թագավորը և թագուհին ոչ մի բոպե լրջորեն չէին մտածում իրերի նոր կարգ ու կանոնի հետ հաշտվելու մասին։ Երբ ժողովուրդը վիժեցրեց ուժ գործադրելու բոլոր փորձերը, որոշվեց կեղծ հնազանդություն ցույց տալ և հեղափոխության թշնամիների հետ գաղտնաբար բանակցություններ վարել։ Դրա համար դրամ էր պետք. այժմ գահաթերթն առատորեն դրամ էր տալիս։ Օրենսդիրները միապետությանը միջոցներով ապահովեցին, որ այն նրանց դեմ պլանավորված դավ նյութեր։ Գաղտնի գործակալությունն սկսեց աշխատել։ Միաժամանակ արքունիքը գործողությունների պլան կազմեց. որոշվեց, որ թագավորը և նրա ընտանիքը թաքուն Փարիզից կգնան, կըհանձնվեն սահմանի մոտ գտնվող հակահեղափոխական գեներալ Բույեի հովանավորությանը, իսկ հետո օտարերկրյա թագավորների օգնությամբ հեղափոխության ուժերը կջախջախեն և նախկին բացարձակ միապետությունը կվերականգնեն։

1791 թվականի հունիսի 21-ին Փարիզն արթնացավ տագնապի աղգանշանից և թնդանոթի երեք կրակոցից։ Կատարվեց՝ թռչնակները թռան գնացին, ոսկեզօծ վանդակն ամայացավ։

Սահմանադիր ժողովը մի փակ ծրար ստացավ։ Մրարից հանեցին թագավորի հրովարտակը։ Միապետը պատռում էր երկրենանության քողը և, առանց արտահայտություններից ամաչելու, հեղափոխության բոլոր գործողությունները բա-

նադրանքի էր ենթարկում։ Նա նշում էր, որ ինքը 1789 թվականի հոկտեմբերից ի վեր ազատությունից զրկված է եղել և այդ պատճառով բողոքարկում է այդ ժամանակվանից հետո իր հաստատած բոլոր վավերագրերը։ Նա գանգատվում էր ժողովրդի բռնի գործողություններից, գահաթերթի աղքատիկությունից, ակումբների ամենազորությունից, հոգևորականության նկատմամբ գործադրվող ճնշումներից։ Նա ֆրանսիացիներին կոչ էր անում «խռովարարների թելադրանքներին չհավատալ», իսկ մինիստրներին արգելում էր «մինչև հետագա կարգադրություններն իր անունից որևէ փաստաթուղթ ստորագրել»։

Երկերեսանիության այդ ստացագիրն ընթերցվեց մեռելային լռության մեջ։ Դրանից հետո Ասամբլեան իրեն բարձրագույն գործադիր իշխանություն հռչակեց, բայց միաժամանակ հայտարարեց միապետությունը պահպանելու մտադրության մասին։ Չնայած թագավորի հրովարտակին, հրապարակվեց մի կոչ, որը խոսում էր թագավորի ոչ թե փախուստի, այլ «առևանգման» մասին։ Դեպուտատ Ռեգերերի բողոքարկող բացականչությունը, որ «Դա սո՞ւտ է։ Նա ստորությամբ լքե՞ց իր պաշտոնը»,— անպատասխան մնաց։

Բայց ժողովուրդը թագավորի փախուստին այլ վերաբերմունք ցույց տվեց, քան ժողովը։

Զայրույթն ու վրդովմունքը համակեցին փարիզեցիներին։ Մեղադրում էին Լաֆայետին և ազգային գվարդիային, ջարդուփշուր անում թագավորի կիսանդրիները, ամենուրեք զենք էին փնտրում։

Կորդելյերների ակումբը Ասամբլեային մի ուղերձ հղեց, պահանջելով միապետությունն անհապաղորեն ոչնչացնել։ Կորդելյերների հանրագրին միացան առաջադիմական շատ ժուռնալիստների ձայները։

«Արդյոք դուք նկատե՞լ եք,— գրում էր ժուռնալիստ Բոնվիլը,— թե եղբայրական ինչպիսի զգացմունքներ են բարձրանում ձեր մեջ, երբ տագնապի ազդանշան է տրվում, երբ հավաք են շեփորում և թագավորները փախուստի են դիմում։ Այլևս հարկավոր չեն ո՛չ թագավորներ, ո՛չ դիկտատորներ, ոչ՛ կայսրներ, ո՛չ պրոտեկտորներ, ո՛չ ռեգենտներ։ Մեր թրդ-

նամին մեր տիրակալն է, ասում եմ ձեզ այս բանը պարզ ֆրանսերեն լեզվով։ Պե՛տք չէ Լաֆայետը, պե՛տք չէ Օռլեանցին»[1]։

Մաքսիմիլիանը մատները սեղմում էր հոդերը ցավեցնելու չափ։ Տխուր մտքերը պաշարել էին նրան։ Ամբողջ առավոտը մենակ տանջվելով, նա ցերեկը չդիմացավ և վազեց Պետիոնի մոտ։ Բրիսոն արդեն այնտեղ էր։ Բրիսոն և Պետիոնը, որ շատ հուզված էին, բերկրանքով բարևեցին իրենց զինակցին։ Նրանք լիահույս են՝ թագավորը փախչելով, միայն տեղն ազատեց հանրապետության համար։ Հաղթանակը մոտ է։ Բայց Ռոբեսպիերը տարակուսանքով է նայում նրանց։ Նա տխուր ու մըտախոհ է։ Ի՞նչ է հեղափոխությունը, երբ իշխանությունը կենտրոնացված է ռեակցիայի դրածոների ձեռքում...

Հունիսի 21-ի երեկոյան Մաքսիմիլիանը եկավ Յակոբինյան ակումբ։ Նա անուշադիր լսում էր առաջին ելույթները։ Բարնավը ձգտում էր մի որոշում ձեռք բերել, որով ակումբը հավանություն տար Սահմանադիր ժողովի ձեռք առած միջոցներին։ Մաքսիմիլիանը թոթվում է ուսերը։ Բան է գտել յակոբինականների ուշադրությունը շեղելու։ Մի՞թե այժմ դա է գլխավորը... Նա խոսք է վերցնում, նշում է, որ ժողովուրդը բոլոր կողմերից շրջապատված է ծուղակներով, մեղադրում է թագավորին, նրա հանցակիցներին, հակահեղափոխական վտարանդիությանը, մինիստրներին, վերջապես, ժողովին, որը փորձում է ժողովրդին խարել։ Նա խորապես զայրացած է, որ Ասամբլեան երկրի կառավարումը թողնում է խայտառակված դահի սպասարկուների ձեռքին։ Նա արյունոտ դեպքեր է կանխատեսում։ Թերևս, շատ հայրենասերներ կզոհվեն... Ռոբեսպիերը տխուր աչքերը հածելով նայում է ներկա գանվողներին։ Արդյոք նրանք կանսա՞ն իր նախազգուշացումներին։

— Ես կուզենայի համենայն դեպս ձեր արձանագրության

---

[1] Ժողովի անդամների մի որոշ մասը, գահից Լյուդովիկոս XVI-ի հրաժարվելու դեպքում, Օռլեանի դուքս Ֆիլիպին՝ Լյուդովիկոսի հոր եղբոր որդուն, նկատի ուներ ռեգենտի կամ թագավորի պաշտոնի համար։

մեջ մի հիշատակություն թողնել այն մասին, ինչ ձեզ կվիճակվի... Իմ գրեթե բոլոր պաշտոնակիցներին, Ասամբլեայի անդամներին մեղադրելով այն բանի մեջ, որ նրանք հակահեղափոխականներ են՝ ոմանք վախից, ուրիշներն անգիտությունից, երրորդները՝ ոխակալությունից, չորրորդները՝ վիրավորված հպարտությունից կամ կույր դյուրահավատությունից դրդված,— ես գիտեմ, գիտեմ, որ ինձ խոցելու հազարավոր դաշույններ եմ սրում։ Բայց եթե դեռևս հեղափոխության սկզբին, երբ Ազգային ժողովում ինձ վրա հազիվ էին ուշադրություն դարձնում, երբ ինձ հաշվի էր առնում միայն իմ խիղճը, ես կյանքս զոհաբերեցի ճշմարտությանը, ապա այժմ, այն բանից հետո, երբ այդ զոհողության համար իմ համաքաղաքացիների ձայներն ինձ լավ հատուցեցին, ես գրեթե իբրև մի բարերարություն կընդունեմ մահը, որն ինձ թույլ չի տա, իմ կարծիքով, անխուսափելի աղետների վկա լինել։

Ակումբի ներկա գտնվող անդամները ցնցվեցին։ Դահլիճն ասես քար կտրեց։ Բայց ահա տեղից վեր թռավ ծփացող մազերով մի երիտասարդ և, բոցավառ հայացքը հռետորին հառելով, ձեռքը բարձրացրեց, երդման կոչով։

— Ռոբեսպիե՛ր։ Մենք քո պատվա՛ր կլինենք։ Մենք բոլորս քեզանից առա՛ջ կմեռնենք։

Եվ ակումբի ութ հարյուր անդամներ մեկ մարդու նման Դեմուլենի ետևից ոտքի ելան։ Աջ ձեռքը բարձրացնելով, յուրաքանչյուրը ազատության անունով երդվեց համախմբվել Անկաշառելիի շուրջը և պաշտպանել նրա կյանքը։

Այդ նիստում Ռոբեսպիերը տիրեց յակոբինականների սրտերին։

Հունիսի 22-ի առավոտյան փարիզեցիները, ճմլկոտալով ու հորանջելով, ասում էին.

— Մենք թագավոր չունենք, այնինչ շատ լավ քնեցինք։

Փողոցներով վազվզում էին լրագրավաճառները, թարմ թերթիկներ տարածելով։

... Ժամանակը հասավ,— գրում էր Մարատը,— գլխատենք մինիստրներին և նրանց ստորագրյալներին, գլխավոր չտարի բոլոր ոճրագործներին և հակահայրենասիրական բոլոր

դեներալներին, քաղաքագլուխ Բայիին, քաղաքային վարչության բոլոր հակահեղափոխական անդամներին, Ազգային ժողովի բոլոր դավաճաններին»։ Ժողովրդի Բարեկամին արձագանքեց կրակոտ Դեմուլենը, որն իրեն հանրապետության համոզված կողմնակից էր համարում։

Այնինչ Սահմանադիր ժողովն աշխատանքը շարունակում էր։ Օրենսդիրները խմբագրեցին սպաների երդմնագիրը և կազմեցին Լյուդովիկոս XVI-ի հրովարտակի պատասխան ուղերձը, որտեղ նորից կրկնեցին թագավորական ընտանիքի առևանգման վերսիան։ Ժամանակը դանդաղ էր ընթանում։ Հանկարծ ժամը տասի կեսին մոտ խլրտում առաջացավ։ Միջանցքով վազեց հևացող սուրհանդակը։ Ինչ-որ մեկը գոռում էր։

— Նա կալանավորվա՛ծ է...

Թագավորին ճանաչեցին նրա երթուղու վերջնակետին շատ մոտ ընկած Սեն-Մենու ավանում։ Նրան ճանաչեց փոստատան պետ Դրուեն, որն իսկույնևեթ թագավորական ընտանիքի կալանավորման միջոցներ ձեռք առավ։ Փախստականների ծածկակառքը կանգնեցրին Վարենում, գրեթե Բույեի առաջավոր ջոկատների աչքի առաջ։ Հարևան գյուղերից հազարավոր գյուղացիներ ազգային գվարդիայի տեղական ջոկատներին օգնության եկան։ Զինված հայրենասերների մեծաթիվ բազմությամբ շրջապատված, հուսահատված փախստականներն ստիպված եղան դեպի ետ ճամփա ընկնել։

Սահմանադիր ժողովը գեբիներին ուղեկցելու համար երեք կոմիսար նշանակեց։ Նրանց թվում էին Բարնավը և Պետիոնը։ Պետիոնն իրեն մեծ արժանապատվությամբ էր պահում և ներողամտություն չէր ցուցաբերում իր խնամարկյալների նկատմամբ հատուկ ծիսականություններ կատարելով։ Այլ կերպ էր իրեն պահում Բարնավը։ Շատ լավ զարգացած, արտոնյալ հասարակությանը ճանաչող այդ լպտված պճնամոլը չհապաղեց օգոստափառ անձնավորությունների առաջ իր շարժումների նրբինությամբ փայլելու. նա նստել էր ծածկակառքում, թագուհու կողքին և,— արդյոք խոսք ու զրույցին հավատա՞նք,— նրանով հմայվեց։ Մարիա Անտուանետան իր ամ-

բողջ հրապույրը գործի դրեց՝ Ասամբլեայի նշանավոր մի դեպուտատի հմայելու։ Ինչպես էլ լինի, Վարենի ճգնաժամի շրջանում ժողովի ձախ թևի նախկին պարագլուխը լինելով, որն արդեն դրանից առաջ զգալիորեն աջացել էր, նա բոլորովին մոռացավ իր հին դիրքերը և ընդհուպ մինչև կառափնարան մնաց թագավորի և գահի հավատարիմ կողմնակիցը։

Հուլիսի 13-ին Ասամբլեան սկսեց քննարկել միապետի ճակատագրի հարցը։ Լսվեց փախուստի հանգամանքները հետաքննող հանձնաժողովի զեկուցումը։ Զեկուցողը հետևություն արեց, որ թագավորի անձի անձեռնմխելիության ըստ կրզբունքի պատճառով Լյուդովիկոս XVI-ը պետք է անմեղապարտ հայտարարվի. նրան պետք է նորից գահ բարձրացնել. միաժամանակ, զեկուցողի կարծիքով, պետք է պատասխանատվության ենթարկել գեներալ Բույեին (արտասահման փախած) և թագավորին ուղեկցող անձանց, որոնք իբր մեղապարտ էին «առևանգման» գործում։

Վիճաբանությունները շատ թեժ բնույթ ունեին և երեք օր շարունակվեցին։ Հուլիսի 14-ին Ռոբեսպիերը հանդես եկավ.

— Դուք ասում եք, թե թագավորն անձեռնմխելի է. նրան պատժել չի կարելի՝ այդպես է օրենքը։ Դուք ինքներդ ձեզ զրպարտո՛ւմ եք։ Ո՛չ, դուք երբեք այնպիսի դեկրետ չէիք հրատարակի, որով մեկ մարդ օրենքից վեր կանգնած լիներ և անպատիժ կերպով ոտնձգություն աներ ազատության դեմ, ազգի գոյության դեմ։ Ո՛չ, դուք այդ բանը չէիք անի, և եթե դուք հանդգնեիք այդպիսի օրենք հրատարակել, ապա ֆրանսիական ժողովուրդը զայրույթի ընդհանուր գոռոցով ձեզ կըհիշեցներ, որ սուվերենը մնո՛ւմ է իր իրավունքների մեջ...

Թագավորի ձեռքին ուրիշնե՞բն էին ուղղություն տալիս։ Բայց մի՞թե թագավորն այս կամ այն արարքը կատարելու ինքնուրույնություն չունի։ Իսկ եթե թագավորն սպառնո՛ւմ է ժողովրդի երջանկությանը և նույնիսկ նրա կյանքին։ Եթե նա երկրի վրա թափում է ներքին և արտաքին պատերազմի բոլոր սարսափները, եթե նա, ինտերվենտների գլուխն անցնելով, հարձակվում է հեղափոխության նվաճումների և ազատության վրա, նա դարձյա՞լ անձեռնմխելիություն է պահպանում։

Անշուշտ, դա անհեթեթություն է։ Իհարկե, այդպիսի «սկզբունքներ» կարող են արտահայտել միայն հեղափոխության թշնամիները կամ այնպիսի մարդիկ, ովքեր իրենց հաշիվ չեն տալիս...

Վերջում հռետորն ապացուցեց այն մարդկանց լիակատար անսկզբունքայնությունը, ովքեր առաջարկում էին արդարադատության ամբողջ ուժը գործադրել «առևանգողների», այսինքն՝ փախուստի մասնակիցների գլխին։

Աջերն այդ ճառից այն աստիճան շշմել էին, որ Ռոբեսպիերին... խելագար հայտարարեցին։ Արտասահմանյան որոշ դիվանագետներ համապատասխան զեկուցագրերով դիմեցին իրենց կառավարություններին և մի քանի օրից հետո ստիպված եղան դրանք հերքել։

Ի միջի այլոց, Ռոբեսպիերն այդ ճառում կիսաբերան մի խոսք ասաց, որն արձագանքում էր թագավորի փախուստի օրվանից՝ իրեն անընդհատ անհանգստացնող մի մտքին։

— Բավական չէ բռնակալին տապալել, եթե հետո պետք է նոր բռնակալության լծի տակ ընկնես...

Լյուդովիկոս XVI-ը ցույց տվեց, որ ինքը բռնակալ է, ուխտադրուժ ու անպետք միապետ։ Նրան պետք է հեռացնել։ Այդ բանում Մաքսիմիլիանը ամենևին չէր կասկածում։

Բայց հետո ի՞նչ անել։ Հանրապետությո՞ւն ստեղծել, ինչպես կարծում էին Բրիսոն և Պետիոնը։ Ահա հենց դրանում էլ նա կասկածում էր։ Նա համոզված չէր, որ ստեղծված պայմաններում հանրապետությունը միապետությունից ավելի լավ կլինի։

Եվ իսկապես, խորհում էր Ռոբեսպիերը, տվյալ մոմենտում ի՞նչն է ամենասարսափելին, ամենից ավելի վտանգավորը։ Հարուստների բռնակալությունը, Սահմանադիր ժողովի ռեակցիոն տարրերի բռնակալությունը։ Իսկ այս դեպքում ի՞նչ կլինա հանրապետության անհապաղ ստեղծումը։ Ոչինչ, բացի այդ «նոր դեսպոտիզմի» իշխանության լեգալացումից։

Ռոբեսպիերը վախենում էր, որ ժողովրդի անբավարար կազմակերպվածության դեպքում միապետության ոչնչացումն ամբողջ իշխանությունը կհանձնի խոշոր բուրժուազիա-

յի ձեռքը, մինչդեռ միապետության առկայությունն ինչ-որ չափով կսահմանափակի այդ իշխանությունը և դրանով իսկ մասսաների համար կհեշտացնի գալիք պայքարում վճռական հաղթանակ տանելու հնարավորությունը։

Այս միտքն անհետևողական ու սխալ էր։ Բայց այն ժամանակ շատերն էին այդպես մտածում։ Վարենի ճգնաժամի շրջանում Անկաշառելին հանրապետության և միապետության հարցում չկարողացավ դեմոկրատական լագերում իշխող պատկերացումների մակարդակից վեր բարձրանալ։

Ժողովի այրերը վերցրին Ռոբեսպիերի նետած ձեռնոցը։ Հաջորդ օրը մեծամասնության անունից հանդես եկավ Անտուան Բարնավը։ Օրենսդիրները գիտեին, թե ում պետք է հակադրել Անկաշառելիին։ Միրաբոյի մեռնելուց հետո[1] Բարնավը համարվում էր Ասամբլեայի գրեթե ամենալավ հռետորը։ Նա չոր, ձգված, զուսպ, դոգմատիկ մարդ էր։ Նա Ռոբեսպիերին, որը Յակոբինյան ակումբում հաղթել էր, իր անձնական թշնամին էր համարում։ Բարնավն իր ընդարձակ ճառը նվիրեց թագավորի անձեռնմխելիության սկզբունքի պաշտպանությանը։ Նա միաժամանակ, և դա նրա ճառում առանձնապես նշանակալից տեղն է, ակամայից մատնեց հեղափոխական զանգվածների նոր ելույթների նկատմամբ խոշոր բուրժուազիայի մեծ սարսափը։

— Մեզ հսկայական շարիք են պատճառում, երբ անվերջ շարունակում են հեղափոխական շարժումը, որն արդեն կործանեց այն ամենը, ինչ հարկավոր էր կործանել, և մեզ հասցրեց այն սահմանը, որտեղ պետք է կանգ առնել... Մտածեցե՛ք պարոնայք։ Մտածեցե՛ք այն մասին, թե ձեզանից հետո ինչ տեղի կունենա։ Դուք կատարեցիք ազատությանն ու հավասարությանը նպաստելու ընդունակ ամեն ինչ... Այստեղից հետևում է այն մեծ ճշմարտությունը, որ եթե հեղափոխությունը ևս մի քայլ անի դեպի առաջ, ապա այդ քայլը կանի ոչ այլ կերպ, քան վտանգի ենթարկվելով։ Առաջին բանը, որ տեղի կունենար դրանից անմիջապես հետո, կլիներ թագավորական իշխանության վերացումը, իսկ հետո

[1] Միրաբոն մեռավ 1791 թվականի ապրիլին։

կհաջորդեր ոտնձգությունը սեփականության դեմ... Այսպիսով, պարոնայք, բոլորը պետք է զգան, որ ընդհանուր շահն այն է, որ հեղափոխությունը դադարի...

Դժվար էր ավելի ճշտորեն արտահայտել այն, ինչը սաստիկ տանջում էր բուրժուազիայի դեպուտատներին։ Վերականգնված թագավորը պետք է օգներ դադարեցնելու այդ երիցս նզովյալ հեղափոխությունը, որն արդեն այնպես զզվեցրել և նորանոր վտանգներ էր սպառնում փողի տոպրակի արիստոկրատներին։

Հենց նույն օրն ընդունվեց մի դեկրետ թագավորի «առևանգողներին» դատական պատասխանատվության ենթարկելու մասին, որոնք մեղադրվում էին սահմանադրության դեմ դավադրություն կազմակերպելու և արտասահմանյան ներխուժում նախապատրաստելու մեջ։ Դրանով անուղղակիորեն Լյուդովիկոս XVI-ը ամեն մի մեղավորությունից ազատվում էր։

Հանդուցալուծումը մոտենում էր։ Կորդելյերների ակումբը կազմեց մի նոր հանրագիր, որը կոչ էր անում դավաճան թագավորին հեռացնել։ Հուլիսի 16-ին կորդելյերները դիմեցին յակոբինականներին, օգնություն խնդրելով։ Յակոբինյան ակումբի ներսում պայքարը բորբոքվեց։ Բայց նրա արդյունքը նախընթաց դեպքերի լույսի տակ պարզ էր. յակոբինականների մեծամասնությունը որոշեց հանրագիրը պաշտպանել։ Այն ժամանակ յակոբինական դեպուտատները Բարնավի գլխավորությամբ ակումբից հեռացան։ Յակոբինականների աջ մասը ոչ միայն փաստորեն, այլև ձևականորեն իր կապերը խզեց ակումբի հետ և Ֆելյանների վանքի շենքում հիմնեց մի նոր ընկերություն, որը կոչվեց Ֆելյանների ակումբ։ Նրա կազմի մեջ մտավ 1789 թվականի ընկերության անդամների մեծ մասը։ Նրա լիդերներն էին Բարնավը, Դյուպորը, Լամետը, Լաֆայետը և Բային։ Ֆելյանների ակումբը դարձավ խոշոր բուրժուազիայի արտապառլամենտական կենտրոնը։

Պառակտումը տեղի ունեցավ Յակոբինյան ակումբի բոլոր բաժանմունքներում։ Մայրամասի յակոբինականների մեծամասնությունը պահպանեց հավատարմությունը Բրիսոյի,

Պետությունի և Ռոբեսպիերի կողմից ղեկավարվող իր հիմնական միջուկի նկատմամբ։

Մնում էր արյունը... Հայրենասերների արյունը, որի մասին խոսում էր Ռոբեսպիերը, որի թափվելը նա անիուսափելի էր համարում և որը դեռևս չէր թափվել։ Այդ արյունն էր պակասում իրերի նոր կարգ ու կանոնն ամրապնդելու, նախկին երրորդ դասը վերջնականապես և անվերադարձ կերպով անջատելու համար։ Եվ այն, հասարակ մարդկանց այդ նվիրական արյունը թափվեց։

Լյուդովիկոս XVI-ի տապալման մասին կորդելյեբների հանրագիրը պաշտպանելով, Անկաշառելին միաժամանակ լավ էր հասկանում, որ ժողովի և քաղաքապետարանի բուրժուական տերերը կարող են այն պրովոկացիայի հարմար առիթ դարձնել։ Ռոբեսպիերն իր կասկածները չթաքցրեց և ակումբում հուլիսի 16-ին դրանք արտահայտեց։

Օրենսդիրները հենց այդպես էլ վարվեցին։ Նրանք շտապ կերպով թագավորին ռեաբիլիտացիայի ենթարկող մի դեկրետ հրատարակեցին։ Դեկրետը, իր հիմնական նշանակությունից բացի, նպատակ ուներ հանրագիրը խռովարարական փաստաթուղթ դարձնելու. կառավարության տեսակետից, նոր օրենքի ամեն տեսակ վիճարկում հակակառավարական խռովություն էր համարվում, որը կարելի է և պետք է պատժել։ Մաքսիմիլիանը, իբրև հիանալի օրենսգետ ու հեռատես դիտորդ, չէր կասկածում, որ ռեակցիոն դեպուտատները հենց այդ փաստարկից էլ կկառչեն, որոնք վաղուց էին փափագում իրենց համար ատելի ժողովրդի հետ հաշվեհարդար տեսնել։ Այդ պատճառով, հենց որ դեկրետը հայտնի դարձավ, Յակոբինյան ակումբի կոմիտեն Ռոբեսպիերի խորհրդով որոշեց դադարեցնել հանրագրի տեքստի տպագրումը։

Սակայն արդեն ուշ էր։

Հուլիսի 17-ի առավոտվանից ժողովուրդը լեփ-լցվել էր Մարսյան դաշտը։ Ինչպես լինում է տոն օրերին, տղամարդիկ ման էին ածում իրենց կանանց, մայրերը՝ իրենց երեխաներին։

Քաղցրաբլիթներ ու կարկանդակներ վաճառող կանայք իրենց ապրանքն էին առաջարկում։ Երիտասարդությունը ուրախանում, զվարճանում էր երգելով ու պարելով։ Բոլորը լավ էին հիշում ֆեդերացիայի փառապանծ և ուրախ տոնը, որը տեղի էր ունեցել այստեղ մեկ տարի առաջ։

Կեսօրին եկավ յակոբինականների պատգամաբերը։ Նա հայտնեց իրենց ակումբի որոշման մասին։ Այն ժամանակ կորդելյերների վեկավարներ Բոնվիլի, Ռոբերի, Շոմետի առաջարկությամբ տեղնուտեղը, «Հայրենիքի զոհասեղանի» վրա, կազմվեց նոր հանրագիր։ Հանրագիրը վերջանում էր այս խոսքերով. «Մենք պահանջում ենք նկատի առնել, որ Լյուդովիկոս XVI-ի հանցանքն ապացուցված է և որ այդ թագավորը գահից հրաժարվել է։ Մենք պահանջում ենք, որ նրա հրաժարականն ընդունվի։ Անհրաժեշտ է նոր Սահմանադիր ժողով գումարել՝ մեղապարտների դատավարությունն սկսելու և նոր գործադիր իշխանություն կազմակերպելու»։ Հանրագիրն ստորագրեց վեց հազարից ավելի մարդ։

Ցերեկվա ժամը երկուսին մոտ մունիցիպալիտետի աստիճանավորներ եկան՝ բազմության տրամադրությունը հետազոտելու։ Նրանք գոհ մնացին ընդհանուր հանգստությունից, որի մասին, վերադառնալով, զեկուցեցին մունիցիպալիտետին։ Սակայն արյունոտ ձեռքն արդեն բարձրացել էր ժողովրդի վրա։ Ժամը երկուսի կեսին քաղաքապետարանի խորհուրդը ստացավ լամետի, ժողովի նախագահի համառ պահանջը՝ ուժ գործադրել. փոքր-ինչ հետո այդ պահանջը կրկնվեց։ Ժամը հինգի մոտերը մունիցիպալիտետի խորհուրդը որոշեց՝ զինվորական օրենքը գործողության մեջ դնել։ Եվ ահա Բային, եռագույն սպայագոտի կապած, իջնում է քաղաքապետարանի աստիճաններից։ Նա անցնում է նախապես Գրևյան հրապարակ կանչված ազգային գվարդիականների շարքերի միջով և յուրաքանչյուր սպայի ականջին ինչ-որ բան շշնջում։ Հրամանները տրվեցին, հրացանները լցվեցին, և բուրժուական գվարդիան քաջարի Լաֆայետի գլխավորությամբ ճամփա ընկավ, թնդանոթները սալահատակի վրայով դղրդացնելով քարշ տալով։

Երբ ժողովուրդը թմբկահարություն լսեց և զորքի շոկատները տեսավ, զարմանքի բացականչություններ լսվեցին։ Ինչ-

չո՞ւ ելքերը փակում են։ Ի՞նչ են ուզում անել։ Դաշտի մի մասում լսվեցին «Կորչե՛ն սվինները» բղավոցներ, և մի քանի քարեր թռան դեպի գվարդիականները։ Լսվեց մի կրակոց... Իսկ այդ ո՞վ կրակեց։ Մի պրովոկատո՞ր։ Բային մի կողմ քաշվեց։ Լսվեց առաջին համազարկը։ Գվարդիականների հրացաններն ուղղված էին դեպի վերև։ Բազմության մեջ թնդյուն բարձրացավ, լսվեցին բացականչություններ. «Տեղից մի՛ շարժվեք։ Անգնդակ լիցքեր են կրակում»։ Բայց հենց այդ պահին հաջորդեց երկրորդ համազարկը, որը բոլոր կասկածները ցրեց՝ «Հայրենիքի զոհասեղանը» կանանց ու երեխաների արյունով ներկվեց։ Օդը լցվեց հուսակտուր աղաղակներով։ Անգեն բազմությունը փախուստի դիմեց։ Ու՞ր։ Ջորքերը անցատեղերը նախապես գրավել էին։ Գործի անցավ հեծելազորը։ Մխրճվելով խուճապահար բազմության մեջ, գվարդիականները գործում էին թրերով...

... Ամեն ինչ վերջացավ մութը վրա հասնելու հետ։ Դաշտում մնացին մի քանի հարյուր սպանվածներ ու վիրավորներ. «հաղթողներից» ոչ մեկը չընկավ նրանց համար անվրտանգ այդ ճակատամարտում...

Վերադարձի ճանապարհին ազգային գվարդիականները, իրենց զոհերի արյունով արբեցած, սպառնալով լուտանքներ էին թափում դեմոկրատների հասցեին։ Սենտ-Օնորե փողոցն անցնելիս զինվորներն սպառնում էին Յակոբինյան ակումբին։ Լսվեցին ակումբը թնդանոթային կրակոցներով ավերելու առաջարկություններ։

Նիստը հենց նոր էր վերջացել, և յակոբինականներն սկսել էին ցրվել։ Նրանց ուղեկցում էին անեծքներով ու ծաղրուծանակով։ Հանկարծ ակումբի շեմքին երևաց Ռոբեսպիերը։ Գրեթե միաժամանակ լսվեցին «Կեցցե՛ Ռոբեսպիերը» բացականչություններ և լկտի հայհոյանքներ... Ի՞նչ էր սպառնում Անկաշառելիին։ Թեև նա անմիջականորեն կապված չէր Մարսյան դաշտի դեպքերի հետ, նրան շատ լավ էին ճանաչում որպես դեմոկրատիայի առաջնորդի։

Այն պահին, երբ Մաքսիմիլիանը ողջույնների և չարամիտ կոչոցների ուղեկցությամբ անցնում էր Սենտ-Օնորե փողոցը,

ինչ-որ մի մարդ նրա ձեռքը բռնեց և տարավ իր տունը։ Դա հյուսն, հայրենասեր ու յակոբինական Մորիս Դյուպլեն էր։ Նա Ռոբեսպիերին համոզեց մնալ իր տունը, մինչև որ այդ ժամերն անցնեին։ Անկաշառելին համաձայնեց։ Երբ նա հետո ուզեց գնալ, դա հնարավոր չեղավ. նրան սկսեցին չիմորեն խնդրել մնալու ոչ միայն ինքը՝ հյուսնը, այլև նրա ընտանիքի անդամները։ Երկար համոզելու հարկ չեղավ. Ռոբեսպիերին դուր եկավ Դյուպլեի համեստ կենսաձևը, դուր եկան այդ մարդիկ, որոնք այդպես հոգատարությամբ վերաբերվեցին իրեն, և նա առանց ափսոսալու հեռացավ Սենտոնժ փողոցի իր անհարմարավետ բնակարանից։ Այդպես Դյուպլեի տունը դարձավ նրա տունը, իսկ այն ընտանիքը, ուր նա այնքան անսպասելիորեն մտավ, դարձավ նրա ընտանիքը։

Հաջորդ օրը Բային Ժողովի ամբիոնից զեկուցեց Մարսյան դաշտի իրադարձությունների մասին։ Դա հերյուրանքի և գնդակահարության զոհերի հասցեին ուղղված ծաղրանքի մի խառնուրդ էր։ Ժողովը ողջունեց քաղաքագլխին, իսկ Բարնավը վերամբարձորեն երկարաբանեց ազգային գվարդիայի նվիրվածության ու խիղախության մասին։

Ընդունվեց «խոովարարներին» խստորեն պատժելու մասին մի դեկրետ։ Սկսվեցին ռեպրեսիաների օրերը։ Շատ թերթեր, այդ թվում նաև Դեմուլենի թերթը, փակվեցին։ Մարատը նորից ընդհատակ անցավ։ Դանտոնը գաղթեց Անգլիա։

Դեմոկրատական շրջանները համակած շփոթվածության վիճակն ազդեց նաև Ռոբեսպիերի վրա։ Այդ օրերին նա մի քանի օրով քայլ է անում։ Թվում է, թե նա իբր հաշտություն է փընտրում։ Ո՞ւմ հետ։ Ա՛յն մարդկանց հետ, որոնց դեմ նա անհաշտելիորեն պայքարել էր և պետք է պայքարեր... Ռոբեսպիերը ֆելյանների մոտ բանագնացներ ուղարկելու նախաձեռնողներից մեկն է։ Ի՞նչ նպատակով։... Վերամիացում առաջարկելու։ Նա կազմում է յակոբինական մասնաճյուղային ընկերություններին ուղղված նամակի նախագիծը, որի մեջ հուլիսի 17-ի արյունոտ դեպքերի մասին խոսվում է քրիստոնեական լիակատար ներման ոգով. «Մենք մտադիր չենք կշտամբելու... Մենք կարող ենք արցունք թափել միայն» և այլն։ Հետ

այդպիսի սիրտանքով է համակված Ցակոբինյան ակումբի անունից Սահմանադիր ժողովին նրա ուղարկած նամակը. այդ նամակը կարդալով, չես ուզում հավատալ, որ այն պատկանում է մի մեկնաբանող տրիբունի, որը հունիսի 21-ին հենց նույն «իմաստուն», «անդրդվելի», «զգոն» դեպուտատներին նշավակեց որպես հակահեղափոխականների, գահի սպասարկուների և ժողովրդի շահերի թշնամիների։

Ի՞նչ է նշանակում այս ամենը։ Իմաստուն քաղաքականությո՞ւն, ինչպես կարծում էին ոմանք, թե՞ ոգու և ուժերի բոսկական անկում, ինչպես ենթադրում էին ուրիշները։ Եթե քաղաքականություն է, ապա այն Անկաշառելիի ձեռքի գործը լինելու համար արդեն շատ ճկուն ու կեղծավոր է։ Իսկ եթե թուլությո՞ւն է...

Ռոբեսպիերը թուլության այդպիսի պահեր հաճախ էր ունենում։ Կրթությամբ ու կոչումով իրավաբան, Մաքսիմիլիանը խստապահանջ օրենսգետ էր։ Նա օրենքը հարգում էր նույնիսկ այն դեպքում, երբ այն անարդար էր համարում։ Նա կարող էր շատ խիստ ձևով հանդես գալ օրինագծի դեմ, բայց օրենքի դեմ շատ հազվադեպ էր ձայն բարձրացնում։ Նա արիստոկրատ չէ և, հետևաբար, չի կարող օրենքին հակադրվելու գրգել. հանգստություն և կարգ ու կանոն՝ ահա, նրա կարծիքով, հեղափոխության բարեկամների սկզբունքները։ Նա սիրում էր կարգ ու կանոն, կարգ ու կանոն ամեն ինչում. այդ մասին էին վկայում նաև նրա արտաքին կերպարանքը և նրա ամբողջ կենսաձևը։

Եվ միաժամանակ նա կրակոտ մարտիկ էր։ Արդյոք մեկը մյուսին հակասո՞ւմ էր։ Եվ այո, և ոչ։ Համենայն դեպս, անտարակույս, Մաքսիմիլիանի կյանքում լինում էին պահեր, երբ այդ երկու, ընդհարման մեջ գտնվող սկզբունքների առկայությունը հանգեցնում էր կարճատև շփոթվածության, հոգեկան անկման։ Գրեթե շարունակ մարտիկը հաղթում էր օրենսգետին, և այդ էր Ռոբեսպիերի մեծությունը։ Երբեք անձամբ ժողովրդական շարժմանը չմասնակցելով, երբեք փողոցում բռնությանը չղեկավարելով, մեծ դեմոկրատը ժողովրդին հիշտ էր ցույց տալիս նրա նպատակը և այդ նպատակին հասնելու միջոցները։ Իբրև օրենքի ջատագով, բոլոր հին հիմքերը

տապալող ապստամբության հանդեպ որոշ շփոթություն ըմբռնելով, նա ժամանակին խիզախորեն հանդես էր գալիս որպես այդ ապստամբության ավետաբեր, արդարացնում այն և իր ամբողջ եռանդն ուղղում նրա արդյունքների ամրապնդմանը։

Այդպիսի երկվությունը, ինչպես և Մաքսիմիլիան Ռոբեսպիերի ծրագրի ու գործունեության մի ամբողջ շարք ուրիշ հակասություններ ու թույլ կողմեր, վերջին հաշվով բխում էր նրա դասակարգային պատկանելիությունից, այն սոցիալական խավի ընդհանուր դիրքից ու տեղից, որի շահերը նա և նրա ղեկավարած կուսակցությունը առաջին հերթին պաշտպանում ու պահպանում էին։

Մարսյան դաշտում տեղի ունեցած գնգակահարությունը քաղաքական մեծ կարևորություն ունեցող իրադարձություն էր։ Դրանով ավարտվեց հեղափոխության առաջին փուլը։ Այն, պայքարն սկսվելուց ի վեր առաջին անգամ, ցույց էր տալիս նախկին երրորդ դասի իսկական պառակտումը. նրա մի մասը զենքը ձեռքին փորձում էր մյուս մասին ճնշել և նրա արյունը թափեց։ Դա մոռանալ չէր կարելի։ Մինչև այժմ ժողովուրդն աջակցում էր խոշոր բուրժուազիային և նրա համար իշխող դիրք ապահովեց։ Այժմ Բաստիլը գրավողների աչքերից քողն ընկել էր, նրանց պատրանքները վերացել էին, պարզ էր դարձել, որ ժողովրդի և խոշոր սեփականատերերի ճանապարհները տարբեր են։

Ինչ որ Ռոբեսպիերը իր ճառերով ժողովրդին հաղորդել էր, բուրժուազիայի արյունոտ գործողությունները գործով ցույց տվին։ Պայքարը նոր փուլ էր թևակոխում։ Բարնավի և Դյուպորի նման ահաբեկված գաղափարախոսները զուր էին վայնասուն բարձրացնում, թե հեղափոխությունը պետք է դադարեցնել։ Այն դադարեցնել չէր կարելի...

Սահմանադիր ժողովի նիստերն անշեղորեն մոտենում էին իրենց ավարտին։ Նրա աշխատանքների հիմնական նպատակը՝ սահմանադրության մշակումն ավարտվեց։

Սեպտեմբերի 13-ին սահմանադրությունը տվեցին ռեաբիլիտացիայի ենթարկված թագավորին՝ ստորագրելու։ Լյուդովիկոս XVI-ը առիթն օգտագործեց՝ գրավոր ձևով ներկայաց-

նելու իր նախընթաց արարքների, ներառյալ փախուստի փորձի ամենակեղծ բացատրությունը։

Ժողովը, սովորականի պես, հավատարիմ հպատակի ըղձացմունքներ ցուցադրեց՝ ամեն ինչ մոռացան ու ներեցին։ Ոգեշնչված հակահեղափոխականները միապետական ցույցեր սարքեցին։ Թատրոններում վերսկսեցին միապետական պիեսներ բեմադրել։ Սեպտեմբերի 30-ին, Սահմանադիր ժողովի փակման օրը, դեպուտատները Լյուդովիկոս XVI-ին դիմավորեցին «Կեցցե՛ թագավորը» բացականչություններով։

Թագավորն իր հերթին շտապեց շնորհել նույնը, ինչ քիչ առաջ բարբառել էր Բարնավը՝ «Հեղափոխության վերջը եկավ»։

Եվ միայն մեկ դեպուտատ համարձակվեց հայտարարել. «Մենք պետք է նորից ընկնենք նախկին ստրկության մեջ կամ նորից զե՛նք վերցնենք»։

Այդ դեպուտատը Մաքսիմիլիան Ռոբեսպիերն էր։

ՄԱՍ II

ԺԻՐՈՆԴԱՑԻ ԴԵՄ

ԳԼՈՒԽ 1

ԲԱՐԵԿԱՄՆԵ՞Ր ԵՆ, ԹԵ՞ ԹՇՆԱՄԻՆԵՐ

1791 թվականի հոկտեմբերի 1-ին նոր Օրենսդրական ժողովն սկսեց իր նստաշրջանը։

Հոկտեմբերի 13-ին Մաքսիմիլիան Ռոբեսպիերը փոստատար ծածկակառքով մեկնեց Հյուսիս՝ հանգստանալու։ Անգուլ ու անդադար աշխատանքի երկուսուկես տարիները երազի նման անցան։ Բայց դա ի՞նչ երազ էր։ Դա մարմինը ջարդող և հոգին քրքրող մղձավանջ էր, մի պայքար՝ շատ պարտություններով դառնությամբ և հաղթանակի աղոտ պատրանքով։ Նա հավատում էր նրան, փափագելի ու անխուսափելի հաղթանակին, բայց այն դեռ որքա՞ն հեռու էր...

Մաքսիմիլիանն աչքերը փակեց և լուռ ծիծաղեցի։ Իսկ գուցե՞ այնքան էլ հեռու չէ։ Գուցե՞ շատ ավելի մոտիկ է, քան առաջին հայացքից թվում է։ Քանի որ ամբարտավանությունից փքված Սահմանադիր ժողովը օձառի պղպջակի նման պայթեց։ Այն իր եսապաշտական գործունեությունն ավարտեց ինքնասպանությամբ, և դրա պատճառը նա՝ Ռոբեսպիերը եղավ։ Չէ՞ որ հենց նրա ճառից հետո ընդունվեց այն դեկրետը, որի համաձայն հին ժողովի անդամները վերընտրվել չէին կարող։ Իսկ այդ նշանակում էր, որ ամեն տեսակ բարնավներ, լամետներ, լը-շապելյեներ և նրանց համախոհներ պետք է քաղաքական գլխավոր ասպարեզից անհետանային։ Այն բոլոր մարդիկ, ովքեր ուզում էին հեղափոխությունը դադարեցնել, ստիպված եղան իրենք հեռանալ նրա ճանապարհից, իրենց տեղը ուրիշներին տալով։ Հուլիսի 17-ի արյունոտ օրվա «հերոսների» հաղթանակը նույնպես կարճատև եղավ։ Առաջինը հատուցում ստացավ փայլուն Լաֆայետը. նրան հեռացրին ազգային գվարդիայի պետի պաշտոնից, պատրվակ բե-

ելով այդ պաշտոնի վերացումը, և գեներալը արհամարհական կատակների ուղեկցությամբ մեկնեց իր կալվածքը։ Սուրը կորցնելով, երկար չդիմացավ նաև բազմիմաստուն Բային՝ նա հրաժարական տվեց։ Շատ շանսեր կային, որ փարիզեցիները նրա փոխարեն Պետիոնին կընտրեն։

Մաքսիմիլիանը բավականությամբ է հիշում սեպտեմբերի 30-ը՝ Սահմանադիր ժողովի աշխատանքի վերջին օրը։ Ժողովրդի բազմությունները երկար ժամանակ շարունակ սպասում էին իրենց սիրելի դեպուտատներին։ Եվ երբ Ռոբեսպիերն ու Պետիոնը երևացին շեմքին, Փարիզի աշխատավորները խանդավառ բացականչություններով ողջունեցին նրանց։ Նրանց գլխներին կաղնու սաղարթներից հյուսված պսակներ դրեցին, նրանց ձեռքերի վրա բարձրացրին։ Ամեն կողմից լսվում էին «Կեցցե՛ անդրդվելի օրենսդիրները։ Կեցցե՛ անկաշառելի դեպուտատները»։ Ժողովրդի շնորհակալության հետագա արտահայտություններից խուսափելով, երկու դեպուտատներն էլ փորձեցին թաքնվել վարձու մի ծածկակառքում. բայց նրանց շրջապատող մարդիկ իսկույնևեթ ձիերն արձակեցին, որ իրե՛նք ծածկակառքով տանեն իրենց ընտրյալներին։ Մաքսիմիլիանը բավական մեծ ճիգերով բազմությանը համոզեց այդ մրտրից հրաժարվել. դեպուտատները կառքից հեռացան և ոտքով գնացին, իսկ ցուցարարները նրանց երգելով ուղեկցեցին մինչև նրանց բնակարանների դուռը։

«Օրենսդիր ժողովի աշխատանքի երրորդ թե չորրորդ օրը,— գրում է Անտուան Բարնավը,— ես գնացի դիտելու այն։ Վերնասրահներում նստած բոլոր մարդիկ բարյացակամության ակնհայտ զգացմունքով շուռ եկան դեպի իմ կողմը, և եթե որևէ մեկն սկսեր, թերևս ընդհանուր ծափահարություններ առաջանային։ Երեք շաբաթ անց ես երկրորդ անգամ գնացի Ժողով և բոլորովին ծաղր ու ծանակի ենթարկվեցի, հատկապես, երբ դուրս էի գալիս Ֆելյանների ակումբի դռնից...»[1]։

---

[1] Ֆելյանների ակումբը գտնվում էր նույն շենքում, որտեղ Ասամբլեան էր։

Այս էր նախկին կուսակցությունների ճակատագիրը՝ նրանց ծաղրանք ու մոռացում էին սպասում։

Տյուիլրյան ձիամարզարանում նոր մարդիկ տեղավորվեցին. նոր կուսակցություններն ու խմբավորումները անհամբերությամբ ձգտում էին իրենց ուժերը չափելու։

Օրենսդիր ժողովն աչքի էր ընկնում իր կազմի համեմատական միատարրությամբ։ Նրա անդամները, որպես կանոն, դուրս էին եկել նախընթաց տարիներին ստեղծված ընտրովի ադմինիստրացիայի շարքերից։ Դա բուրժուական նոր մտավորականությունն էր՝ գրողներ, ժուռնալիստներ, փաստաբաններ։ Միաժամանակ, ի տարբերություն հին Ասամբլեայի, այստեղ գրեթե աղնվականներ ու եպիսկոպոսներ չկային։

Ժողովի ձախ թևը կազմված էր հարյուր երեսունվեց դեպուտատներից, գլխավորապես Յակոբինյան ակումբի և Կորդելյերների ակումբի անդամներից բաղկացած փոքրամասնությունից։ Այն տրոհվում էր երկու խմբի՝ յակոբինականների մեջ առաջացած խմբավորումներին համապատասխան։ Նրա ճնշող մասը կազմում էին Բրիսոյի կողմնակիցները, որոնց հետագայում սկսեցին ժիրոնդիստներ անվանել[1]։

Ռոբեսպիերի համախոհների խումբը կազմում էին միայն մի քանի դեպուտատներ։ Նրանցից շուտով աչքի ընկավ խելացի ու խորաթափանց Ժորժ Կուտոնը։ Ո՛չ Մարատը, ո՛չ Դեմուլենը, ո՛չ Դանտոնը նոր Ասամբլեայում չընտրվեցին։

Բրիսոն և նրա ընկերները Ռոբեսպիերին շատ էին անհանգստացնում։ Ովքե՞ր են նրանք։ Բարեկամնե՞ր են, թե՞ թշնամիներ։ Մինչև այժմ նրանք միևնույն ճանապարհով էին ընթանում։ Նրանք միասին էին պայքարում սահմանադրականների դեմ, միասին պատռում Բարնավի գիմակը, միասին պաշտպանում սահմանադրության բարեկամների միասնությունը և գաղափարական պատգամները։ Իսկ հետո՞։ Ի՞նչ կլինի հետո։ Ինչպե՞ս կպահեն իրենց այդ մարդիկ, գլխավորելով Օրենսդիր ժողովի ձախ թևը...

Ժիրոնդիստները տնտեսապես կապված էին Ֆրանսիայի

---

[1] Ժիրոնդա դեպարտամենտի անունով, որտեղից ընտրվել էին այդ խմբի ականավոր շատ դեպուտատներ։

հարավի և հարավ-արևմուտքի ուժեղ ու հարուստ բուրժուազիայի հետ։

Նրանց մեջ կային ականավոր կազմակերպիչներ, իսկ հեռոտորական արվեստի ասպարեզում նրանց առաջնորդները իրենց հավասարները չունեին։

Միայն Բրիսոն մի ամբողջ բանակ արժեր։ Անձնական կյանքում անհոգ մի մարդ, նա կուսակցական գործերում խիստ էր, փառասեր, նենգության, կեղծավորության և ամեն տեսակ խարդավանքի ընդունակ։ Սակայն Բրիսոն իր բնավորության ամբողջ «բազմակողմանիությունը» միանգամից չբացահայտեց։ Մասսաները, նրա ամբոխավարությամբ հափշտակված, երկար ժամանակ հավատում էին ժիրոնդիստների առաջնորդի հայացքների և արարքների անբասիրությանը։

Բայց նրանց հռետորական գլխավոր ուժը, անտարակույս, Պիեռ Վերնյոն էր։ Այդ անճոռնի, արտաքնապես ոչ մի գրավչություն չունեցող մարդը ամբիոնի վրա բոլորովին վերափոխվում էր, իր խոսքի հզորությամբ ու կրքոտությամբ ունկնդիրներին նվաճելով։ Ժամանակակիցները նրան հաճախ էին Միրաբոյի հետ համեմատում։ Շատ ժիրոնդիստներ Վերնյոյին իրենց ղեկավարն էին համարում, սակայն նա կուսակցության ղեկավարի դեր կատարելու համար բոլորովին հարմար մարդ չէր։ Ալարկոտ ու անտարբեր, նա տեսական համառ պայքարի համար ընդունակ չէր, նրա տաղանդը դրսևորվում էր կիսատուն վիճակի հետ հերթագայող շանթափայլատակումների ձևով։

Վերնյոյից հետո ժիրոնդայի ամենանշանավոր հռետորը Էյի Գուադեն էր։ Ի տարբերություն Վերնյոյից, շարունակ կյանքով լի, նա գործունեության մարդ էր թվում։ Բորբոքվող, բարկացկոտ ու դյուրագրգիռ, Գուադեն անկեղծորեն ատում էր թշնամիներին և ձգտում նրանց որքան կարելի է ավելի շատ չարիք պատճառել։ Նրան համարում էին կուսակցության ամենավտանգավոր լիդերներից մեկը։

Հռետորական արտասովոր ընդունակություններ ունեին նաև բորդոյի Ժանսոնեն և պրովանսցի Ինարը։

Ժիրոնդիստների մեջ փոքր-ինչ առանձնակի դիրք ուներ մաթեմատիկոս և փիլիսոփա, Փարիզի և Պետերբուրգի գի-

տությունների ակադեմիաների անդամ, նոր-ակին մարկիզ Կոնդորսեն։ Էնցիկլոպեդիստների փայլուն համաստեղության վերջին ներկայացուցիչը լինելով, նա ծանոթ էր եղել դեռևս Վոլտերին, դ'Ալամբերին, Դիդրոյին և աշխատակցել էր նրանց հետ։ Վարենյան ճգնաժամի ժամանակաշրջանում Կոնդորսեն հանրապետական շարժման ռահվիրաների թվում էր։ Օրենսգիր ժողովում նա պետք է մտերմանար XVIII դարի փիլիսոփայության առաջ գլուխ խոնարհող ժիրոնդիստների հետ և իսկապես մտերմացավ նրանց հետ։ Իբրև վատ հռետոր, շարունակ ամբիոնի վրա իրեն ճնշված զգալով, նա ժիրոնդիստներին օգնում էր իր խելքով և գիտելիքներով, դառնալով, ինչպես և Բրիսոն, կուսակցության գաղափարախոսներից մեկը։

Սրանք էին այն մարդիկ, ովքեր շուտով պետք է իշխանություն ձեռք բերեին և դրության տերը դառնային։ Նրանք այնքան ավելի շուտ էին ժամանակակիցների հիշողությունից դուրս մղում Միրաբոյից, Բարնավից կամ Բայիից ստացած տպավորությունները, որքան ավելի եռանդով ու լայնորեն էին յուրացնում մասսաների վրա ազդելու ամբոխավարական ձևերը։

Մաքսիմիլիանն իրեն հատուկ քաղաքական սուր հոտառությամբ ապագան կանխատեսեց։ Հենց այդ պատճառով էլ նա Փարիզից ճնշված սրտով հեռացավ։ Սակայն այժմ նա աշխատում էր իրենից տհաճ մտքերը վանել։ Առաջիկայում նա տեսնելու է հայրենի Առասը, նրա դաշտերի, անտառների լայնարձակ տարածությունները, վայելելու է իր փափագած հանդիստը սիրելի ու մտերիմ մարդկանց շրջանում։

Նա Շարլոտային նախօրոք հայտնեց իր ժամանելու օրվա մասին։ Սակայն ավելորդ աղմուկից ու հանդիսավոր դիմավորումից խուսափելով, խնդրեց այդ բանը գաղտնի պահել։ Նախազգուշությունը չօգնեց։ Քույրը չհամբերեց և գաղտնիքը հայտնեց տիկին Բյուիսարին։ Բերնեբերան հաղորդվող նորությունը բոլորի սեփականությունը դարձավ։

Ռոբեսպիերը գնում է Առաս։ Անկաշառելին պատրաստվում է իր արձակուրդը հայրենի նահանգում անցկացնելուց։ Այդ լուրն ուրախացնում է ոչ բոլորին։ Արտուայի խորհրդի

դատական արիստոկրատիան, որը երիտասարդ փաստաբանին շարունակ ատում էր, սրում է իր չարախոսությունը և աշխատում «ավագ դը Ռոբեսպիերի» համար արժանի դիմավորում նախապատրաստել։ Պարոնայք Դեյենը, Լիբորելը, Ռյուլեն և ուրիշները վերհիշում էին, թե այդ «Ռուսոյի սնածուն» իր գործն ինչպես դժգույն սկսեց։ Խղճուկ փաստաբանիկը ութ տարվա ընթացքում դատարանում հազիվ հարյուր անգամ հլուլթ ունեցավ, տասն անգամ՝ հայցահրաժարում ստացավ և երեսուն անգամ ծախսերի վճարման դատապարտվեց։ Մի սրան տեսե՛ք, թե ինչպես է վեր-վեր թռչում։ Բոլորը հիշում են, որ այդ մուրացիկը, երբ նրան Գլխավոր շտաբներում ընտրեցին, Վերսալ գնալու միջոցներ չուներ, և ստիպված եղավ վանքի ուսուցիչ Ֆուշեից մի ճամպրուկ և տասը լուիդոր փոխ առնել։ Ճիշտ է, նրան,— հա՛, հա՛,— Ազգային ժողովում մի լավ շշպռեցին ... Դատախազ Ռյուզեն խնամքով պահում և անգիր էր անում այն թերթերի առանձին կտրածները, որոնց էջերում նախկին Ասամբլեայի հռետորները «Առասի մոմին» ցեխն էին կոխում... Բայց նա անգա՛մ չէր մտածում ողջամիտ դառնալու։ Նա իր ասածն է շարունակում։ Եվ այդ դուրսպրծուկ մարդը լավ դիմավորման հույս ունի։ Նա սխալվո՛ւմ է։ Նրան կատարյալ արհամարհանքով կդիմավորեն...

Սակայն Արտուայի հասարակ մարդիկ այլ կերպ էին մտածում, և Մաքսիմիլիանին հակակրող մարդիկ շուտով ստիպված եղան համոզվել դրանում։

Փարիզից Առաս տանող ճանապարհը իսկական հաղթական մի շքերթ էր։ Բապոմ հասնելով, Մաքսիմիլիանը տեղացի հայրենասերների և ազգային գվարդիականների հսկայական մի բազմություն տեսավ, որը նրան քաղաքացիական ծաղկեպսակ մատուցեց և ցանկություն հայտնեց նրան ուղեկցել մինչև տեղ հասնելը։ Այստեղ, Բապոմում, նրան արդեն երկրորդ օրը սպասում էին Շարլոտան և Օգյուստենը։ Ճանապարհն անմիջապես շարունակել չհաջողվեց. ադմինիստրացիան, որ ստիպված էր ժողովրդի պահանջները հաշվի առնել, Անկաշառելիի պատվին ճաշկերույթ կազմակերպեց։ Բապոմից մինչև Առաս, հինգ լյեից ավելի մեծ տարածության վրա, Մաքսիմի-

լիանի կառքը ազգային գվարդիայի ուղեկցությամբ առաջ էր շարժվում շրջակայքի բոլոր վայրերից հավաքված բազմության միջով։ Ողջույնները, «Կեցցե՛ Ռոբեսպիերը, կեցցե՛ ժողովրդի պաշտպանը» բացականչությունները չէին լռում։ Առասից կես լյե հեռավորության վրա բազմությունն այնքան խըտացավ, որ ստիպված եղան վարգից ձիաքայլի անցնել։ Չընայած թշնամիների ամբողջ դիմադրությանը, Առասը իր մեծ քաղաքացուն բացառիկ ջերմությամբ էր դիմավորում։ Ինչպես և Փարիզում սեպտեմբերի 30-ի օրը, նրա կառքի ձիերը արձակեցին, որ այն իբենք տանեն։ Ռոբեսպիերը կառքից դուրս եկավ։ Այն ժամանակ հազարավոր «կեցցե»-ների տակ նրան ձեռքերի վրա բարձրացրին։ Երեկոյան, չնայած քաղաքի իշխանությունների կտրական արգելքին, հայրենասեր դեպուտատի պատվին հրավառություն կազմակերպվեց։

— Նայեցե՛ք, տեր իմ,— ասում էր լավ հագնված մի պարոն իր տղաց Հարևանին,— նրան ավելի մե՛ծ հանդիսավորությամբ են դիմավորում, քան թագավորին։

— Այո՛, դուք իրավացի եք,— դառնությամբ պատասխանեց հարևանը։

— Մեզ ո՛չ ոք այդպիսի պատիվ չէր տալիս, երբ մենք ստանձնում էինք մեր պաշտոնը։

Ռոբեսպիերը Առասում երկար չմնաց։ Նա գնաց հարևան մի գյուղ՝ ձանձրալի ցնծություններից խուսափելու և ազատ ժամանակ անցյալի ու ապագայի մասին խորհրդածելու։ Նա այդ գյուղում մնաց մոտավորապես մեկ ամիս։ Դա նրա կյանքում վերջին հանգիստն էր։

Բայց դա կարելի՞ է արդյոք հանգիստ համարել։ Բացի այդ, կարո՞ղ էր արդյոք Անկաշառելին հանգստանալ, իմանալով, որ ժողովուրդը, որի երջանկության համար ինքը պայքարում էր, շարունակում է տառապանքներ կրել։

Մաքսիմիլիանն իր մենավոր զբոսանքների ժամանակ ակամայից վերհիշում էր մանկությունը. նա նորից իսկական վիշտ ու կարիք էր տեսնում։ Նա անձամբ համոզվեց, թե ժողովրդի համար որքան չնչին էին Սահմանադիր ժողովի հողային օրենսդրության արդյունքները։ Նա տեսնում էր հողային այնպիսի

նեղվածություն, որի մեջ չքավորները շնչահեղձ էին լինում, լսում էր ազգային ունեցվածքը ծախծխելու միջոցով հարբեցողացած կալվածատերերի ու բուրժուաների հասցեին ուղղված անեծքներ։ Նա չէր կարող չնկատել, որ գյուղացին առաջվա նման ֆեոդալական չվերացված պարհակների լծի տակ ուժասպառ է լինում... Իսկ քա՞ղցը։ Իսկ օրեցօր աճող թանկությո՞ւնը։ Քաղաքն ու գյուղը հեղեղող թղթադրամի արժեզրկո՞ւմը, շաքարի, սուրճի, թեյի և ուրիշ ապրանքների անհետացո՞ւմը... Եվ գլխավորը՝ հացը, հացը, որն առաջվա նման չէր բավականացնում, որը կավի նման էր դարձել և ավելի ու ավելի թանկանում էր։ Ո՞րն է դրա պատճառը։ Ինչպե՞ս հաղթահարել այդ անհավատալի դժվարությունները։ Մաքսիմիլիանի ուղեղը լարված աշխատում էր։ Գուցե՞ հենց այդ օրերին վերացան Անկաշառելիի միապետական պատրանքները, գուցե՞ հենց այժմ նա սկսեց խորհրդածել հանրապետության մասին։ Եվ իսկապես որ, կարելի՞ էր արդյոք հետևանքները վերացնել, առանց պատճառը վերացնելու։ Կարելի՞ էր արդյոք երկրում դրությունը կայունացնել, առանց վերացնելու հիմնական խոչընդոտը, որը շարունակ խանգարում էր, որի համար հակահեղափոխությունը անընդհատ ավելի ու ավելի խոր արմատներ է գցում։

Նրա գլխավոր միջնաբերդը, անտարակույս, մնում էր թագավորի արքունիքը՝ գահաթերթի և մեծաթիվ գաղտնի գործակալության հետ։ Արքունիքի գործակալները ոչ միայն կաշառում էին դեպուտատներին և ձգտում տիրել օրենսդրական իշխանության տրամադրություններին։ Նրանք տնտեսական սաբոտաժ էին առաջացնում, պրովոկացիոն լուրերի տարածմանն աջակցում, լայնորեն օգտագործելով սովահար չքավորության դրությունը։ Արքունիքի մարտական ջոկատներից մեկը քահանաների լեգիոնն էր։ Սահմանադրությանը երդում յուված հոգևորականությունը իր քարոզներով անարգում էր նոր կարգերը։

Մաքսիմիլիանը սեփական աչքերով տեսնում էր, թե ինչպես չերդված քահանաները «ապաքինման հրաշքների» միջոցով որսում էին գյուղացիներին։ Նա համոզվում էր, որ

Փարիզում շատ քիչ բան գիտեին գավառական հոգևորականության ազդեցության և նրա քայքայիչ գործունեության մասին։

«... Ազգային ժողովի գրեթե բոլոր հռետորները,— գրում էր նա մայրաքաղաքում գտնվող իր բարեկամին,— սխալվում էին հոգևորականության հարցում։ Նրանք կրոնական պաշտամունքների ազատության և կրոնի հանդուրժողականության մասին որպես ճառախոս էին մտածում։ Նրանք միայն փիլիսոփայության և կրոնի հարցեր էին տեսնում այնտեղ, ուր գործը վերաբերում էր հեղափոխությանն ու քաղաքականությանը։ Նրանք չէին նկատում, որ ամենուրեք, որտեղ արիստոկրատ քահանան ունկնդիր է գտնում, նա բռնապետություն ու հակահեղափոխություն է քարոզում, ձևացնելով, թե իբր կրոնական հայացքներ է պաշտպանում...»։

Արդյոք Փարիզի մամուլում հրապարակված հենց այս տողե՞րը չեղան Օրենսդրական ժողովի կողմից չերդված քահանաների դեմ ուղղված դեկրետի ընդունման խթաններից մեկը։

Բայց արքունիքը միայն ներքին հակահեղափոխության բնական կենտրոնը չէր. թագավորի ընտանիքից և նրա շրջապատից անտեսանելի շատ թելեր էին ձգվում դեպի արտաքին հակահեղափոխությունը, որի սպառնալիքն սկսել էր ավելի ու ավելի ռեալ դառնալ։

Ֆրանսիական հեղափոխությունը հարևան երկրների վրա հսկայական տպավորություն գործեց։ Անգլիայի, Իսպանիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Գերմանիայի, Միացյալ Նահանգների առաջավոր մարդիկ այն համակրանքով ու խանդավառությամբ ընդունեցին։ Հեղափոխությունն անմիջական ազդեցություն գործեց Բելգիայում ավստրիական Հաբսբուրգների ճնշման դեմ ուղղված ազգային պայքարի զարգացման վրա, պայքար, որն այնուհետև վերածվեց բելգիական բուրժուական հեղափոխության։ Հեղափոխական շարժում ծավալվեց Գերմանիայի մի շարք մարզերում, Հյուսիսային Իտալիայում, Հունգարիայում, Չեխիայում, Լեհաստանում։ Բնական է, որ եվրոպական պետությունների ռեակցիոն կառավարություն-

Նրան, առաջին հերթին Ավստրիայի, Պրուսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կառավարություններն անհանգստացան Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձություններից։ Դրությունը բարդացնում էր վտարանդիների անվերջ հոսանքը, որոնք մտնում էին Եվրոպական միապետների շեմքերը, աղերսելով արշավի դուրս գալ «ապստամբած ամբոխի» դեմ։ 1791 թվականի մոտերքը փախստական արիստոկրատների կուտակման և ամենաակտիվ գործունեության տեղը սահմանամերձ Կոբլենց քաղաքը դարձավ։ Կոբլենցի վտարանդիներին գլխավորող թագաժառանգներն ու իշխաններն իրենց զայրացուցիչ կերպով էին պահում։ Թագավորի եղբայրը, Պրովանսի կոմսը, այն հիման վրա, որ Լյուդովիկոս XVI-ը իբր խռովարարների մոտ գերության մեջ էր գտնվում, իրեն Ֆրանսիայի ռեգենտ հայտարարեց։ Արքայազն Կոնդեն տասնհինգ հազարանոց բանակ ստեղծեց և սպառնում էր երկիր ներխուժել։ Թագավորի ընտանիքը և հատկապես Մարիա Անտուանետան վարենյան անհաջողությունից հետո իրենց բոլոր ակնկալություններն ու հույսերը արտասահմանյան օգնության հետ էին կապում։ Վտարանդիների և նրանց հովանավորների գործողություններն առերևույթ հրապարակորեն դատապարտելով, թագավորն ու թագուհին նրանց հետ գաղտնի կապեր էին պահպանում և անհամբերությամբ սպասում նրանց ներխուժմանը սովատանջ, արյունաքամ երկիրը։

Եվրոպական տերություններն ինտերվենցիայի էին նախապատրաստվում։ Նրանք այդ բանն սկսեցին Բելգիայում հեղափոխության ճնշումից, և այդ առաջին հաջողությունը նրանց թևավորեց։ 1791 թվականի օգոստոսի 27-ին Սաքսոնիայում, Պիլնից դղյակում ավստրիական կայսրը պրուսական թագավորի հետ ստորագրեց ֆրանսիական գահին օգնելու համատեղ գործողությունների վերաբերյալ դեկլարացիան։ Այդ փաստաթուղթը նախապատրաստեց Եվրոպայի միապետական ուժերի առաջին կոալիցիայի ստեղծումը։ Ավստրիային և Պրուսիային պաշտպանում էին Անգլիայի, Ռուսաստանի և ուրիշ պետությունների ռեակցիոն կառավարությունները, որոնք համաձայն էին վտարանդիներին աջակցելու և «խռովության» ջախջախմանը մասնակցելու։

Այս ամենն անվճռական ժողովին ստիպեց հակագրոհի անցնելու։

Այն ժամանակ, երբ Ռոբեսպիերը դեռևս գյուղում էր գտնվում, 1791 թվականի նոյեմբերի սկզբին, Օրենսդիր ժողովի ձախ թևը բարձրացրեց վտարանդիների հարցը։ Ժիրոնդիստների գլխավոր լիդերները՝ Բրիսոն, Վերնյոն, Ինարը, այդ պրոբլեմի քննարկման ժամանակ ցույց տվեցին իրենց փայլուն պերճախոսությունը։ Նրանք կառավարությունից պահանջում էին վտարանդիների դեմ վճռական միջոցներ ձեռք առնել։ Չնայած ֆեյլյանների դիմադրությանը, նրանք ձեռք բերեցին մի դեկրետ, որը բոլոր չարանենգ վտարանդիներին հայրենիքի դավաճան հայտարարեց։ Թագավորը վետո դրեց այդ դեկրետի, ինչպես նաև երդում չտված քահանաների դեմ ուղղված դեկրետի վրա։ Մթնոլորտը շիկանում էր։ Հորիզոնի վրա ավելի ու ավելի պարզ էր երևում պատերազմի ուրվականը։

Մաքսիմիլիանը, որն իր խուլ մեկուսատեղից ամեն ինչի անհանդստությամբ հետևում էր, այլևս անդործության մատնվել չէր կարող։ Նա նոյեմբերի 17-ին Մորիս Դյուպլեին գրում է, որ ինքը մտադիր է մայրաքաղաք վերադառնալ, և իրոք տասնմեկ օր հետո փոստատար հանրակառքի ոտնատեղից իջնում է Փարիզի սալարկափողոց։ Նոյեմբերի 28-ի ցերեկը նա ճաշում է քաղաքապլխի՝ Պետիոնի շքեղ առանձնատանը և գալիս այն եզրակացության, որ իր զինակցի հոգին «առաջվա նման պարզ ու անաղարտ է», իսկ երեկոյան, վեցշաբաթյա ընդմիջումից հետո, նորից ներս է անցնում յակոբինյան վանքի գրադարանի շեմքից։ Յակոբինականներն իրենց առաջնորդին ցնծությամբ են դիմավորում։

Բայց օվացիաները Անկաշառելիին երբեք չէին արբեցնում։ Նա ուշադրությամբ զննում, հաշվի է առնում շուրջը տեղի ունեցող ամեն ինչ։ Այս ի՞նչ է կատարվում։ Ամենուրեք պատերազմով են սպառնում... Սրե՞ր։ Թնդանոթնե՞ր... Դրոշակնե՞ր... Հաղթանակնե՞ր...

Ռոբեսպիերը լսում և իր նոթատետրում նշումներ է անում։

Հաջորդ օրը ժիրոնդիստ Ինարն Ասամբլեայի ամբիոնից մի ճառ է արտասանում, որը շատերի հոգում արձագանքում է իրրև պատերազմի կոչող շեփորի ձայն.

— Չկարծեք, թե իբր մեր դրությունը մեզ թույլ չի տալիս հուժկու հարվածներ հասցնելու. հեղափոխություն կատարող ժողովուրդն անպարտելի է. ազատության դրոշը հաղթանակի դրոշ է. այդ դրոշով ժողովրդի խանդավառվելու պահը զոհողությունների պահ է, բոլոր շահերից հրաժարվելու պահ, մարտական ցնծության ահեղ պոռթկման պահ։

... Եվրոպային ասենք, որ եթե կառավարությունները թագավորներին ընդդեմ ժողովուրդների պատերազմի մեջ ներգրավեն, մենք ժողովուրդներին ընդդեմ թագավորների պատերազմի մեջ կներգրավենք։

... Ասենք, որ ազատության հրով տոչորվող, սրով, գրչով, բանականությամբ, պերճախոսությամբ զինված տասը միլիոն ֆրանսիացիներ՝ եթե նրանց զայրացնեն, միայն իրենց սեփական ուժերով կկարողանան երկրի դեմքը փոխել և բոլոր բռնապետներին ստիպել դողալու իրենց կավե գահերի վրա...

Ծափահարություններն ընդհատում են հռետորի ձայնը։ Ժողովը որոշում է ճառը տպագրել և ուղարկել դեպարտամենտներին։

Եվ հանկարծ ռազմատենչ ցնծությունների աղմուկի, արբեցնող կոչերի ու հաղթանակի նախագուշակումների մեջ անսպասելիորեն լսվում է սառն ու հանգիստ մի ձայն։

— Ամենատարօրինակ միտքը, որ կարող է քաղաքագետի գլխում ծագել,— դա այն հավատն է, թե բավական է, որ ժողովուրդը զենքը ձեռքին մուտք գործի հարևան ժողովրդի մոտ, որպեսզի նրան ստիպի իր օրենքներն ու պետական կառուցվածքն ընդունելու։ Ոչ ոք զինված միսիոներներին չի սիրում, և առաջին խորհուրդը, որ տալիս են բնությունն ու խոհեմությունը, դրանց, որպես թշնամիների, դուրս քշելն է...

Եվրոպայի թագավորների քաղաքականությանը միջամտելուց և նրանց տիրությունները ներխուժելուց առաջ ձեր հայացքը հառեցեք երկրի ներքին դրությանը. ուրիշներին ազատություն բերելուց առաջ ձեր գործերը կարգի բերեք...

Այս խոսքերը, որ, ինչպես մի ունկատակառ սառը ջուր, թափվեցին տաքացած գլուխների վրա, պատկանում էին Մաքսիմիլիան Ռոբեսպիերին։ Դրանցով էլ Անկաշառելին սկսեց իր նշանավոր ելույթները Ժիրոնդայի դեմ։

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ Է

Ռոբեսպիերի դիրքավորումը որոշվում էր շատ լուրջ նրկատառումներով։

Մաքսիմիլիանը հասկանում էր, որ պատերազմն անխուսափելի է։ Հակահեղափոխական կոալիցիա էր ստեղծվում. այն հաստատապես մտադիր էր ոչնչացնելու իր համար ստեղծված հեղափոխական վարակի օջախը։ Ամբողջ հարցը միայն այն էր, թե պատերազմը երբ, ինչ պայմաններում կսկսվի և ինչպիսին կլինի այն։

Թագավորը և նրա շրջապատը ձգտում էին անհապաղորեն պատերազմը սանձազերծել։ Ժողովրդի հայրենասիրությունն ու վճռականությունը թերագնահատելով, միապետականները պատերազմը մի հարմար պատրվակ էին համարում, որ բանակն արքունիքը շրջապատեր։ Նրանց կարծիքով, միապետը սպայակազմի վրա հենվելով, իր ներկայությամբ ու խորամանկ առատաշնորհությունններով զինվորների համակրանքը կնվաճեր, և այն ժամանակ նրա համար պատերազմի ելքը նշանակություն չէր ունենա. եթե պատերազմը հաղթական լինի, ապա նա հեղափոխությունը կճնշի՝ բանակի վրա հենվելով, իսկ եթե պատերազմն անհաջող լինի, ապա նա հեղափոխությունը կճնշի՝ ինտերվենտների վրա հենվելով։

Ժիրոնդիստներն էլ էին ուզում շուտափույթ պատերազմ սկսել, ընդ որում, իբր թե երազում էին համաշխարհային հեղեղի մասին։ Նրանք ուզում էին դահերը սասանել և հեղափոխությունն արտահանել հարևան ժողովուրդների մոտ։ Նրանց պրոպագանդան կարող էր բորբոքել և իսկապես բորբոքեց աշխատավոր զանգվածների ռազմատենչ խանդավառությու-

նը։ Սակայն ժիրոնդիստական պերճախոսության արտաքին փայլի տակ թաքնվում էր նրանց եսապաշտական և նրբորեն մտածված, ժողովրդին արկածախնդրության մղող քաղաքականությունը։ Խոսքով բռնապետության տապալման և հեղափոխական շարժման ծավալման մասին հոդ տանելով, ժիրոնդիստները փաստորեն մտածում էին հյուսիս-արևելյան սահմանամերձ տերիտորիաները զավթելու հաշվին իրենց տնտեսական հնարավորություններն ընդլայնելու մասին միայն։ Խոսքով ազգի փրկության կոչ անելով, նրանք փաստորեն ձգտում էին մասսաների ուշադրությունը ներքին պրոբլեմներից շեղել և դրանով իսկ հեշտացնել իրենց տիրապետության հաստատումը։

Ռոբեսպիերը շատ լավ էր հասկանում թե՛ թագավորին, թե՛ ֆելյաններին, թե՛ ժիրոնդիստներին։ Նա հեռու էր Ինարի և նրա բարեկամների արբեցումից։ Նա խորապես դարշում էր լանի կերպով ուրիշ ժողովուրդների վզին նրանց համար խորթ հասարակարգ փաթաթելու մտքից։ Միաժամանակ պատերազմն ամենևին շեփորանվագի տակ տեղի ունեցող կիրակնօրյա զբոսանք չհամարելով, Ռոբեսպիերը նրա արագացումը շատ անխոհեմ բան էր համարում։ Անկաշառելին Յակոբինյան ակումբում չորս անգամ պատերազմի դեմ ելույթ ունեցավ։ Դեկտեմբերի 18-ին նա առանձին հստակությամբ ձևակերպեց իր տեսակետը և բացահայտեց ռեակցիոներների մեքենայությունների իսկական պատճառը։

— Ես նույնպես պատերազմ եմ ուզում,— ասաց նա,— բայց այնպիսի պատերազմ, որ պահանջում են ազգի շահերը. Նախ հաղթենք մեր ներքին թշնամիներին, իսկ հետո դուրս գանք արտաքին թշնամիների դեմ...

— Արդյոք մեզ մոտ երկրի ներսում թշնամիներ կա՞ն,— կիմում էր նա ժիրոնդիստներին։— Դուք դրանց դոյությունը չեք ընդունում, դուք ընդունում եք միայն Կոբլենցը... Դե ուրեմն իմացեք, որ բոլոր շրջահայաց ֆրանսիացիների կարծիքով իսկական Կոբլենցը Ֆրանսիայում է գտնվում...

Նշելով, որ ամենավտանգավոր թշնամուն պետք է փնտրել մոտերքում, Փարիզի կենտրոնում, դահի մոտ, բուն դահի վրա, Անկաշառելին բացահայտեց արքունիքի և ֆելյանների

կազմած դավադրության պատկերը։ Նա մերկացրեց ռազմական մինիստր Նարբոնին, որը ձգտում էր բանակն ստեղծել որպես հեղափոխությունը ճնշելու մի ուժ։ Նա ցույց տվեց, թե ինչպես ստեղծված պայմաններում, երբ թագավորի վետոնները խրախուսում են ռեակցիոն հոգևորականությանը և դավաճան ազնվականներին, ցանկացած արտաքին պատերազմը անխուսափելիորեն կբարդանա ներքին, երկպառակչական, ինչպես նաև կրոնական պատերազմով, մի հանգամանք, որ հաղթանակը շատ քիչ հավանական կդարձնի։ Եվ նա, պատերազմ հայտարարելու դեմ առարկելով, պահանջում էր առաջին հերթին ժողովրդին գինել։

Ռոբեսպիերի այդ ելույթը ժիրոնդիստներին կատաղեցրեց. այն չէր կարող չթուլացնել նրանց բորբոքող կոչերի արդավորությունը։ Բրիսոն Մաքսիմիլիանին հայհոյանքով ու զրպարտությամբ պատասխանեց. միաժամանակ նա արդարացնում էր Նարբոնին ու պաշտպանում արքունիքը։ Այն ժամանակ Անկաշառելին 1792 թվականի հունվարի 11-ին մի նոր ճառով հանդես եկավ։ Նրանում չկար ո՛չ հայհոյանք, ո՛չ զրպարտություն։ Այդ ճառը կառուցված էր այն երկաթե տրամաբանության սկզբունքներով, որ տրիբունը դործի էր դնում ամեն անդամ, երբ առանձնապես լուրջ պրոբլեմով էր զբաղվում։

Ռոբեսպիերը հայտարարեց, որ պատրաստ է համաձայնվելու ժիրոնդիստների պահանջների հետ։ Դեռ ավելին, այժմ նա ինքն է պատերազմ պահանջում, եթե ոչ իբրև խելացիության, ապա գեթ որպես հուսահատության մի ակտ։ Բայց նա մի պայման է դնում, որը համընկնում է այն բանին, ինչի մասին բազմիցս աղաղակում էին նրանց հռետորները. նա պահանջում է, որ պատերազմը հայտարարի ազատության ոգին և որ այն մղի հենց ֆրանսիական ժողովուրդը։

Այսպիսի ելույթը բոլորին ստիպում է զգուշանալ. մի՞թե Անկաշառելին դիրքերը հանձնում է։ Մի՞թե նա իսկապես ուզում է իր երեկվա հակառակորդների հետ համաձայնության գալ։ Այդ միտքն իսկույնևեթ վերանում է, հենց որ հռետորն

սկսում է կետ առ կետ քննարկել իր դրած պայմանի կատարման ունակությունը։

Իսկական ժողովրդա-ազատագրական պատերազմ մղելու համար անհրաժեշտ է բանակ ու զորապետ ունենալ։

Բայց ո՞ւր է այն զորապետը, որը լիներ ժողովրդի իրավունքների հավատարիմ պահապանը և բռնապետության թշնամին։ Ո՞ւր է այն զորահրամանատարը, որի ձեռքերն արատավորված չլիներին արյունով ու արքունական նվերներով։ Հռետորը նրան չի տեսնում...

Բանակը պետք է կազմել հեղափոխությանը նվիրված մարդկանցից, Բաստիլը գրավողներից, առաջինն ազատության կողմն անցած զինվորներից։ Բայց ո՞ւր են նրանք։ Նրանք չկան։ Նրանց ցիրուցան են արել քաղցը, ծայրահեղ աղքատությունը, հալածանքները, նրանք դնդակահարվել են Մարսյան դաշտում կամ տանջվում են շղթայակապ... Այս դեպքում դուք հավատե՞նք բոլոր ազգային գվարդիականներին։ Բայց, պարզվում է, որ նրանք ո՛չ համագգեստ ունեն, ո՛չ զենք, նրանց պետերն ամեն ինչ արել են՝ նրանց ուժասպառ անելու...

Լա՜վ։ Թող այդ ամենն այդպես լինի։ Հռետորը հավատում է Ժողովրդի ոգու անընկճելի ուժին։ Թող հավաքվեն բոլորը, բոլոր մերկ ու քաղցած, արհամարհված ու անզեն մարդիկ։ Կարելի է ամբողջ ունեցվածքը միացնել ու զենք գնել. կարելի է դեմարդկային ճիգեր գործադրել և կռվել մերկ ու բոբիկ վիճակում։ Միայն թե ժողովուրդն ինքը հայտարարեր և ինքը մղեր այդ պատերազմը...

Այստեղ Ռոբեսպիերը հանկարծ լռում է և ձևացնում, թե ինչ-որ բանի ականջ է դնում։ Նրա դեմքը զարմանք է արտահայտում։

Բայց այդ ի՞նչ է։ Պարզվում է, որ պատերազմի կողմնակից բոլոր հռետորներն ինձ ընդհատում են։ Ահա պարոն Բրիսոն ինձ ասում է, թե մեզ պետք է կոմս Նարբոնը զեկավարի, թե արշավանքը պետք է կատարել մարկիզ Լաֆայետի հրամանատարությամբ, թե վայել է, որ դ ո ր ծ ա դ ի ր ի շ խ ա ն ու թ յ ու ն ն ազդին հաղթանակի տանի...

Օ՜հ, ֆրանսիացիներ։ Այդ խոսքերն իմ բոլոր երազանք-

ները խորտակեցին, իմ բոլոր պլանները ոչնչացրին։ Մնաս բարո՞վ, ժողովուրդների ազատություն...

Ուղղակի ասում եմ՝ եթե պատերազմն այն ձևով, ինչպես ես այն բնորոշեցի, անիրագործելի է, եթե մենք պետք է հանդուրժենք արքունիքի, մինիստրների, պատրիկների, բանսարկուների կողմից մղվող պատերազմը, ապա ես, համաշխարհային ազատությանն ամենևին չհավատալով, չեմ հավատում նույնիսկ նաև ձեր ազատությանը։ Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել, հայրենիքը ներքին թշնամիների ուխտագրժությունից պաշտպանելն է, որոնք ձեզ մեղրածոր երգերով քընեցնում են...

Յակոբինյան ակումբում, որտեղ Անկաշառելին նորից հաղթանակ տարավ, Փարիզում և երկրում ամեն տեղ այդ ճառը խորը տպավորություն գործեց։ Նույնիսկ Ժիրոնդայի լիդերները մի պահ լռեցին։ Ակումբի հաջորդ նիստում Բրիսոն, իր դիրքավորման երկդիմությունն զգալով, հուզված ասաց.

— Պարոն Ռոբեսպիերին աղաչում եմ վերջացնել այնքան սկանդալային պայքարը, որն օգտավետ է հանրային բարօրության թշնամիների համար միայն...

Այն ժամանակ Մաքսիմիլիանը Բրիսոյին դրկեց, և թշնամիները համբուրվեցին։

Բայց իր քաղաքական հակառակորդի առաջ դիրկը բացելով, Մաքսիմիլիանը միայն ուզում էր ցույց տալ, որ ինքը անձնական և կուսակցական հարաբերությունները չի շփոթում։

— Թող մեր դաշինքը,— ասաց նա,— խարսխվի հայրենասիրության ու առաքինության սրբազան հիմքի վրա. մենք կպայքարենք, ինչպես ազատ մարդիկ, եռանդուն կերպով, ջեշտակիորեն, բայց հարգանքով ու բարեկամության զգացումով։

Անկաշառելին ևս մեկ անգամ հաղթահերոս դուրս եկավ։ Եվ եթե պատերազմի դեմ մղվող իր պայքարի սկզբում նա միայնակ էր, ապա այժմ նրան աջակցում էին այնպիսի կոփված յակոբինականներ, ինչպես Մաքատը, Դեմուլենը, Սանտերը և Բիլո-Վարենը։

Սակայն ռեալ ուժը դանդաղորեն, բայց հաստատապես կենտրոնացվում էր ժիրոնդիստների ձեռքին։ Նրանց պերճախոսությունը և, գլխավորը, նրանց քաղաքականության ուղղությունն արդեն սկսում էին Ժողովը հմայել։ Գավառներում ու մայրաքաղաքում գլխավոր մունիցիպալ պաշտոնները նրանց ձեռքում էին. ինքը՝ Փարիզի քաղաքագլուխը նրանց նկատմամբ բարեհաճություն էր ցույց տալիս։ Եթե նոր Ասամբլեայի նստաշրջանի սկզբին նրանց լիդերների մեծամասնությունն աչքի չընկած մարդիկ էին, ապա այժմ նրանց ձայները թնդում էին թե՛ Ժողովում, թե՛ Յակոբինյան ակումբում։ Արքունիքը, իր նվիրական երազանքի մոտալուտ իրականացումը նախաճաշակելով, առերևույթ պատրաստ էր բոտորաքարշություն անել այն մարդկանց առաջ, ովքեր ձգտում էին նրա երազանքն իրականացնել։ 1792 թվականի մարտին թագավորը համաձայնեց ժիրոնդիստներից մինիստրություն կազմել։ Դա նրանց հզորության գագաթնակետն էր։ Նոր մինիստրությունում գլխավոր դերերը խաղում էին ներքին գործերի մինիստր Ռոլանը և արտաքին գործերի մինիստր Դյումուրյեն։ Սակայն նրանցից առաջինը հռչակվել էր առավելապես իբրև տիկին Ռոլանի ամուսին։ Անհեռատես ու սահմանափակ մի մարդ, նա Բրիսոյի և իր կնոջ դրածոն էր։ Այլ տիպ է Դյումուրյեն։ Մեղմ ու կեղծ նայվածքով, շողոմ, բայց վրճռական խոսվածքով ու նուրբ սիրալիր շարժուձևերով այդ կարճահասակ թխամորթ մարդը շնորհք ուներ և, որ գլխավորն է, կարողանում էր շրջապատող մարդկանց վրա տպավորություն գործել։ Իհարկե, նոր մինիստրությունը արքունիքին շփոթեցնում էր։ Այն «խռովարարների մինիստրություն» անվանեցին։ Երբ սպալած մազերով, սև ֆրակով ու երիզահանդույց կիսակոշիկներով լողլող Ռոլանն առաջին անգամ երևաց մինիստրների խորհրդի նիստում; շփոթված արարողապետը մոտեցավ Դյումուրյեին և, աչքով ցույց տալով էտիկետից կատարված այնքան անհարմար շեղումը, կամացուկ ասաց.

— Ա՜խ, նույնիսկ կոշիկները ճարմանդներ չունեն։

— Օ՜հ,— կատարյալ հանգստությամբ պատասխանեց արտաքին գործերի մինիստրը։— Ամեն ինչ կորա՛վ։

Ժիրոնդիստները արբենում էին իրենց փառքով։ Նրանց

քաղաքական կենտրոնը դարձավ տիկին Ռոլանի, խելացի, փառասեր ու դեղեցիկ մի կնոջ սալոնը, որը կարողանում էր մի բաժակ սուրճի շուրջը անբռնազբոսիկ զրույցով կազմակերպել ժիրոնդիստական կուսակցության քաղաքականության ու տակտիկայի հետ կապված հարցերի քննարկումը։ Մանոն Ռոլանը հաճախակի ճաշկերույթներ էր տալիս, որտեղ հանդիպում էին նոր մինիստրները և Ժողովի լիդերները՝ Ժիրոնդայի առաջատար դեպուտատները։ Նրանց ազդեցությունն օրեցօր ավելանում էր, և մինիստրությունն իրեն նրանց պերճախոսության, որպես քարակոփ մի պարսպի, պահպանության տակ էր զգում։

Բայց եթե ժիրոնդիստներն ուժեղ էին Ասամբլեայում ու քաղաքապետարանում իրենց ազդեցությամբ, եթե մինիստրական պաշտոնները նրանց ձեռքում էին կենտրոնանում, ապա նրանց գլխավոր հզորությունը ժողովուրդն էր ստեղծում իր աջակցությամբ, որը հափշտակված էր նրանցով և առայժմ նրանց կատարելապես հավատում էր։

Տնտեսական ծանր դրություն, որի մեջ արդեն վաղուց գտնվում էր Ֆրանսիան, նոր տարվա, 1792 թվականի սկզբից խիստ վատթարացավ։ Հոգևոր և աշխարհիկ արիստոկրատիայի արտագաղթը պերճանքի առարկաների պահանջարկն իջեցրեց, որոնց արտադրությունն առաջներում ֆրանսիական արդյունաբերության մեջ դրավում էր առաջին տեղերից մեկը։ Մանր ու միջակ ձեռնարկատերերն սկսեցին սնանկանալ։ Միաժամանակ կրճատվեց շինարարական աշխատանքների ծավալը։ Հազարավոր բանվորներ կորցրին իրենց ընչին աշխատավարձը և փողոց նետվեցին։ Անշեղորեն շարունակում էր իջնել գյուղական բնակչության կենսամակարդակը։ Գներն անդադար աճում էին, հաց չկար, շաքարն անհետացել էր։

Արդեն 1792 թվականի հունվարին բանվորների ու արհեստավորների հուզումներ սկսվեցին։ Մայրաքաղաքի մի շարք թաղամասերում սովահար չքավորները ավերեցին խանութներն ու պահեստները, պահանջելով, որ առևտրականները մթերքները կայուն գներով վաճառեին։ Պարենային հուզումները երկրի շատ շրջաններ ընդգրկեցին։ Փարիզում և գավառ-

ներում գյուղական ու քաղաքային բնակչությունը պահանջում էր հացի, հացահատիկի, շաքարի նորմավորված դներ։

1792 թվականի մարտի 9-ին էտամպի քաղաքագլուխ Սիմոնոն հրաման տվեց բազմության վրա կրակել։ Ջայրացած չքավորները նրան սպանեցին։ Սիմոնոյի դործն ինչ-որ ժամանակ ընդհանուր ուշադրություն դրավեց։ Յակոբինական քահանա Դոլիվյեն էտամպի քաղաքացիների անունից Ասամբլեային մի նամակ ուղարկեց, որն արդարացնում ու տեսակետորեն հիմնավորում էր չքավորության շարժումը։ Նա դատապարտում էր մասնավոր անձանց ձեռքում հարստությունների անչափ կուտակումը, դները նորմավորելու կոչ էր անում և բողոքում խոշոր սեփականատերերի հողատիրությունների անձեռնմխելիության դեմ։

Բայց Օրենսդիր ժողովը ժողովրդի արդար պահանջների հանդեպ խուլ մնաց։ Չնայած Ռոբեսպիերի և Մարատի բողոքներին, ժողովը էտամպի քաղաքագլխի հիշատակը հավերժացրեց, բայց Դոլիվյեի նամակը մոռացության տվեց։

Միայն Ռոբեսպիերը «Սահմանադրության պաշտպան» թերթում, որ նա այդ ժամանակ սկսել էր հրատարակել, տպագրեց էտամպի քահանայի հանրագիրը, նրան ավելացնելով իր մեկնաբանությունները։

Ինչ վերաբերում է ժիրոնդիստներին, ապա նրանք որոշեցին ժողովրդի աղետն իրենց ձևով օգտագործել։ Նրանք բրոնեցին բացահայտ ամբոխավարության ուղին։ Համատարած կարիքի թեթևացման համար ոչինչ չանելով, քաղցի աքցանի թուլացման ոչ մի միջոց չառաջարկելով, նրանք անհապաղ պատերազմ սանձազերծելու պրոպագանդա սկսեցին, այն համարելով սոցիալական ցավոտ հարցերից մասսաների ուշադրությունը շեղելու հզոր մի միջոց։ Այստեղ ևս նրանք նպատակին խփեցին։ Ժողովուրդը տեսնում էր վտարանդիների և նրանց աջակցող եվրոպական ռեակցիոն կառավարությունների կոպիտ պրովոկացիաները։ Ժողովուրդը հավատում էր, որ իր ամբողջ աղքատությունը, իր բոլոր աղետները այդ պրովոկացիաների անմիջական արդյունքն են։ Եվ մի՞թե դժվար էր հայրենասիրությամբ և ուխտադրուժ թշնամուն հակահարված տալու ջերմ ցանկությամբ համակված մարդկանց ապացու-

ցել, թե այդ հակահարվածը պետք է տալ անհապաղորեն, ներքին պրոբլեմները լուծելուց առաջ։

Միաժամանակ, և դա էր ժիրոնդիստական ամբոխավարության մյուս կողմը, ի տարբերություն ֆելյանների, որոնք ցուցադրում էին հասարակ մարդկանց նկատմամբ իրենց արհամարհանքը, ժիրոնդիստները կարողանում էին հարմարվել բազմության տրամադրություններին։

Նրանք լույս ընծայեցին Բյուզոյին ուղղված՝ Պետիոնի նամակի ձևով յուրահատուկ մի հրովարտակ, որով ժողովրդի և բուրժուազիայի դաշինքը համարում էին հասարակական փրկության գլխավոր միջոցը։ Այդ հրովարտակի համաձայն, «Բուրժուազիան և ժողովուրդը պետք է միաձուլվեին»։ Եթե նախկին պարոնները՝ լիբերալ բուրժուազիան և ազնվականությունը, Մարսյան դաշտում մարդկանց գնդակահարելով, առաջացրին երրորդ դասի պառակտումը, ապա նոր սեփականատերերը՝ ժիրոնդիզմի դրոշով առաջ ընթացող բուրժուազիան, ամբոխավարորեն նորից փորձում էին այն միացնել։

Եվ ահա մի արտահայտություն, որը պետք է ուշադիր ընթերցողին ավելի զգաստ դարձներ. «Բուրժուազիան և ժողովուրդը,— գրում էր Պետիոնը,— հեղափոխություն կատարեցին. միայն նրանց միասնությունը կարող է պահպանել այն»։ Նշանակում է, պահպանե՛լ, և ոչ թե ավարտե՛լ։ Որովհետև ժիրոնդիստները, իշխանության գլուխ անցնելով, արդեն ըսկըսում էին ձեռք բերվածի պահպանության մասին մտածել. ժամանակը կգա, և Պետիոնն ու Բրիսոն այդ մասին պակաս վճռականությամբ չեն հայտարարի, քան մի ժամանակ Բարնավը։

Ժողովրդին բուրժուազիայի հետ միավորվելու կոչ անելով, ժիրոնդիստները նրան զբաղեցնում էին անմիտ բաներով և նրա ուշադրությունը շեղում։

Նրանք «սանկյուլոտ» բառը մոդա դարձրին՝ իրենց «սանկյուլոտիզմով», իրենց դեմոկրատիկությամբ պարծենալու. նրանք կարմիր թասակը մոդա դարձրին, որ այդ գլխարկը մարդկանց և իրենց դլխին դնելով, ձևացնեին, թե իրենք ինչպե՛ս մոտ են ժողովրդին։ Բրիսոն կարմիր թասակն իր թերթում գովում էր, «որովհետև այն զվարճացնում, նկատելի, ավելի

արտարաց, ավելի վճռական է դարձնում մարդուն, նրա գլուխը ծածկում, առանց այն թաքցնելու, դեղեցիկ կերպով նրբերանգում նրա բնածին բարեմասնությունը և կրում ամենն տեսակ զարդեր...»։

Իբրև իսկական դեմոկրատ, Ռոբեսպիերը մինչև հոգու խորքը զայրանում էր այդ ամբողջ խեղկատակությունից և ժողովրդին ցույց տրվող ստորաքարշությունից։ Նա պարզ տեսնում էր, որ ժիրոնդիստները մեկ նպատակ ունեին՝ պատերազմ սանձազերծել և որքան կարելի է՝ շուտ սանձազերծել։

Ռոբեսպիերը հասկանում էր, որ նրանց կոչերը լոկ արկածախնդրություն են։ Նա գիտեր, որ պատերազմով քաղցն ու չարաշահումները չեն նվազի, այլ, ընդհակառակը, միայն կավելանան։ Նա տեսնում էր, որ ժողովուրդը պատերազմ մղելու համար պատրաստ չէ, որ երկրի ներսում հակահեղափոխությունը գլուխ է բարձրացնում, որ բանակի ղեկավարներ են նշանակում դավաճան գեներալներին։ Նա չէր կասկածում, որ այդ պայմաններում պատերազմը հենց սկզբից պարտություններ կունենա, որոնք ռեակցիայի ուժերը խրախուսելով, կարող են հանգեցնել քաղաքացիական պատերազմի և հեղափոխության ճնշման։ Նա այդ ամենն զգում էր և սրտի արյունով գրված իր անմահ ճառերով ժողովրդին զգուշացնում։

Բայց ինչ որ նա չտեսավ, իսկ դա աւայժմ ոչ ոք չէր տեսնում, ապա դա ժողովրդի խանդավառության ամբողջ ուժն է, ժողովրդի հայրենասիրության ամբողջ խորությունը, ժողովրդի համբերության ամբողջ վեհությունը և ժողովրդի ցասման ամբողջ հզորությունը։ Ժիրոնդիստների առաջացրած կեղծ ավյունով ոգեշնչված ժողովրդին վիճակված էր հաղթանակ ձեռք բերելուց առաջ շատ ավելի դժվարին, անհամեմատ ավելի վտանգավոր և զգալիորեն ավելի արյունոտ մի ճանապարհ անցնելու, քան այն ճանապարհը, որն անցնելու կոչ էր անում նրան Անկաշառելին։

Պատերազմը հայտարարվեց 1792 թվականի ապրիլի 20-ին։ Ավստրիայի կայսրին պատերազմ հայտարարելով, Օրենսդիր ժողովը ողջունեց ձախ թևի հռետոր տիրոնվիլցի Մերլենի «Հայ-

տար արենք պատերազմ թագավորներին և խաղաղություն ժողովուրդներին» արտահայտությունը։

Այսպես ուրեմն, պատերազմն սկսվեց։ Ռոբեսպիերին և նրա համախոհներին չհաջողվեց կանխել նրա չափազանց արագ դալուստը։ Բայց քանի որ գործը կատարված է, անցածի համար ափսոսալու ժամանակը չէ։ Եվ այժմ Անկաշառելին իր ամբողջ եռանդն ուղղում է ժողովրդի ոգեշնչմանը՝ հակառակորդի դեմ խիզախ պայքար մղելու, արագ ու լիակատար հաղթանակ տանելու։ Այժմ հանգամանքների բերումով պլանը փոխվեց. քանի որ չհաջողվեց արտաքին թշնամու հետ ընդհարվելուց առաջ ներքին թշնամուն չախչախել, մնում էր բոլոր ուժերը մոբիլիզացնել կոալիցիայի դեմ, կրծքով պաշտպանել ազատությունը և հետո հեղափոխությունը վարել դեպի հանրապետություն տանող ուղիով։

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ է

Պատերա՞զմ։ Որքա՞ն խորհրդավոր իմաստ կա այս կարճ չարագուշակ բառի մեջ։ Որքա՞ն սարսափ, արցունք, արյուն, վհատություն։ Ավերված քաղաքներ, այրված գյուղեր, լքհնձած արտեր, իրենց կերակրողներից զրկված սովատանջ ընտանիքներ... Վիշտը, մահը, ոչնչացումն ամենուրեք ուղեկցում են պատերազմի ճակատագրական ուրվականին և մնում այնտեղ, որտեղով այդ ուրվականն անցնում է։

Արդյոք ֆրանսիական ժողովուրդն այս ամենը տեսնո՞ւմ էր այն օրը, երբ պատերազմի մասին դեկրետն ընդունվեց։ Արդյոք նա կռահո՞ւմ էր, որ այդ օրվանից սկսած պատերազմը քառորդ դար շարունակ պիտի Եվրոպան սասանի։ Ֆրանսիական ժողովուրդը դեկրետը ցնծությամբ ու խանդավառությամբ ընդունեց։ Ժողովին ու ժիրոնդիստներին ծափահարող հայրենասերները հաղթական ու կարճատև պատերազմ էին սպասում, որը դահերը կխորտակի և ժողովուրդներին խաղաղություն կտա։ Բրիսոյի և նրա բարեկամների գուշակությամբ,

ռոնապետների բանակը առաջին իսկ օրերից պետք է սասանվեր ու նահանջեր։ Բայց այլ կերպ ստացվեց։ Սկսեց նահանջել ֆրանսիական բանակը, ընդ որում մի շարք դեպքերում նահանջեց, նույնիսկ առանց հակառակորդի հետ շփման մեջ մտնելու։

Ռոբեսպիերը գիտեր, թե ինչ պետք է անել, երբ խոսում էր «ներքին Կոբլենցի» մասին, երբ պահանջում էր գեներալական կազմը պաշտոնաթող անել և ժողովրդին զինել։ Անկաշտելիի վատթարագույն երկյուղը անհապաղորեն հաստատվեց։

Հակառակ ռազմական մինիստրի հավաստիացումներին, ֆրանսիական բանակը պատերազմելու համար պատրաստ չէր։ Այն նույնիսկ ամբողջովին չէին զորահավաքել։ Զինվորների զենքն ու հանդերձանքը չէին բավականացնում։ Կամավորների վաշտերին դիտավորյալ չէին սովորեցնում և շարք չէին մտցնում։ Արքունիքը կարողացավ գաղտնաբար ավստրիացիներին հանձնել պատերազմի պլանը։ Բանակները ղեկավարող գեներալները՝ Ռոշամբոն, Լաֆայետը և Լյուկները, դավաճաններ էին։ Ռոշամբոն՝ ավստրիական գլխավոր շտաբի առաջ գլուխ խոնարհող հիվանդ, անտարբեր մի ծերունի, գրում էր թագավորին, թե հարկավոր էր պատերազմական գործողությունները մի քանի օրով ուշ սկսել, մինչև որ ավստրիացիների ուժերը լիովին ծավալվեին։ Շուտով նա հրաժարական տվեց։ Լաֆայետին շատերը Կրոմվել էին անվանում. իրականում նա պատրաստվում էր խաղալու Մոնկի դերը[1], դեռևս պատերազմական գործողություններն սկսվելուց առաջ նա կազմեց թագավորին փրկելու և «խռովարարներին» ցրելու պլանը։ Հակահեղափոխական սպայությունն օգնում էր դավադիր գեներալներին։ Պատերազմի համար չնախապատրաստված զինվորները, որոնց դավաճանում էին իրենց հրամանատարները, նահանջում էին ամբողջ ռազմաճակատով, և Ֆրանսիային անխուսափելի աղետից փրկեց միայն Ավստրիայի ու Պրուսիայի միջև հստակ համաձայնեցվածության բացակայությունը, որոնք չկարողացան ռազմական ուժերը ծավալել ու կենտրոնացնել Հռենոսի շրջանում և Նիդեռլանդիայում։

[1] Անգլիացի ռեակցիոն գեներալ, որն աջակցեց Սթյուարտների դինաստիայի վերականգնմանը (1660 թ.)։

Ռազմաճակատից ստացված լուրերը շշմեցուցիչ տպավորություն գործեցին։ Ժողովուրդը անսահմանորեն զայրացած էր։ Շփոթվեցին նաև ժիրոնդիստները։ Նման և, որ կարևոր է, այդպիսի արագությամբ կատարվող մի բան նրանք չէին սպասում։ Այժմ անմիջական սպառնալիք էր ստեղծվում նրանց՝ իշխանության համար, այն ամենի համար, ինչ նրանք, վերջապես, ձեռք բերեցին։ Պարզվում է, որ Անկաշառելին իրավացի էր, երբ դավաճանություն էր նախագուշակում։ Պարզվում է, որ նա չէր սխալվում, երբ պահանջում էր Լաֆայեթին հեռացնել։ Այժմ ժիրոնդիստներին խեղդում էր կատաղի չարությունը։ Այնքան վճռական քայլ անելով դեպի առաջ, նրանք չէին կարողանում անմիջապես ետ քաշվել։ Հենց նոր Լաֆայեթին դրվատելով, նրանք չէին կարող հանկարծ խոստովանել, որ իրենց դավաճանել են, որովհետև, եթե նրանք այդ բանը բացահայտորեն խոստովանեին, ժողովրդի համակրանքը նրանց իսկույն կլքեր։ Բայց Բրիսոյի և նրա բարեկամների դրության ամբողջ սարսափելիությունն այն էր, որ, ինչպես էլ նրանք այժմ վարվեին, միևնույն է, հաղթանակողը Ռոբեսպիերն էր մնում։ Նրանց ձեռքում էին կենտրոնացել Ասամբլեան, քաղաքապետարանը, մամուլը. նրանց դրածոներն էին մինիստրները և Փարիզի քաղաքագլուխը. նրանք ունեին առաջնակարգ հռետորներ, քաղաքական մեծ մտածողներ, իսկ Ռոբեսպիերի ժողովրդականությունն ավելի ու ավելի աճում էր։ Նա դառնում էր, նրանց արտահայտությամբ, ժողովրդի պաշտամունքի առարկան։

Այդ այլևս հանդուրժել չի կարելի... Անկաշառելին իրավացի է՝ նրա համար ավելի՛ վատ։ Նրան պետք է ջախջախե՛լ։ Եվ ահա սկսվեց մի հալածանք, որի հանդեպ նսեմացան Միրաբոյի և Ռոմեցի երբեմնի հարձակումները։

Գրոհ սկսելու առիթն իսկույն գտան։ Երբ 1791 թվականի հունիսին Մաքսիմիլիանը համաձայնվեց հասարակական մեղադրողի պաշտոնն ստանձնել, նա մի վերապահում արեց, որ կարող է հրաժարվել այդ պաշտոնից, եթե ավելի նվիրական պարտականություններ իրեն ստիպեն այդ անելու։ Այժմ եկել

էր այդ ժամանակը։ Այժմ նրա եռանդն ու խելքը հարկավոր էին ուրիշ ասպարեզի համար։ Եվ նա, առանց տատանվելու, հենց ապրիլին հրաժարվեց մեղադրողի պաշտոնից, հրաժարվեց, նրա խոսքերով, ճիշտ այնպես, ինչպես որ դրոշակը ձեռքից դցում են, որ ավելի հարմար լինի հակառակորդի դեմ մարտնչելու։

Դրա համար նրա վրա իսկույնևեթ հանցանք բարդեցին։ Նրան մեղադրեցին հպարտության ու դասալքության մեջ։ Յակոբինյան ակումբի նիստում ապրելի 25-ին Բրիսոն, որը քիչ առաջ Ռոբեսպիերին համբուրում էր, հանդես եկավ հիստերիկ երկարաշունչ մի ճառով։ Նա Լաֆայետին պաշտպանության տակ առավ և Անկաշառելիի վրա լուտանքներ թափեց։ Ավելի որոշակիորեն արտահայտվեց Գուադեն։

— Ես ի դեմս Ռոբեսպիերի մերկացնում եմ մի մարդու, որը փառասիրությունից կամ դժբախտության հետևանքով ժողովրդի կուռքն է դարձել։ Ես հանձին նրա մերկացնում եմ մի մարդու, որը իր հայրենիքի ազատության սիրուց, թերևս, պետք է ինքն իրեն օստրակիզմի ենթարկեր, որովհետև ժողովրդի կողմից իրեն ցույց տրվող կռապաշտությունից հեռանալ նշանակում է նրան ծառայություն մատուցել...

Դժվար էր ավելի պարզ արտահայտվել։ Նրանք նրան առաջարկում էին հեռանալ, չնկատելով այն կոպիտ հակասությունը, որի ստրուկներն էին դարձել նրանք. Մաքսիմիլիանին դասալքության մեջ մեղադրելով, նրանք պահանջում էին, որ նա հասարակական գործունեությունից հրաժարվի։

Անկաշառելին պատասխանեց խելացիորեն, մեծահոգաբար, համեստորեն.

— Թող ապահովվի ազատությունը, թող հաստատվի հավասարության թագավորությունը, թող անհետանան բոլոր բանտարկուները, այն ժամանակ դուք կտեսնեք, թե ես ինչպիսի հապճեպությամբ կհեռանամ այս ամբիոնից... Հայրենիքից կարելի է հեռանալ, երբ այն երջանիկ է և ուրախության մեջ, իսկ երբ այն խոշտանգված է, ճնշված, նրանից չեն հեռանում. նրան փրկում են կամ թե մեռնում... Ես ցնծությամբ եմ ընդունում այդ ճակատագիրը։ Թե դուք ինձանից ուրիշ զոհողություն եք պահանջում։ Այո, կա մի զոհողություն, որ դուք դեռ

կարող եք ինձանից պահանջել։ Զոհաբերում եմ այն հայրենիքին. դա իմ համբավն է։ Այն ձեր ձեռքն եմ հանձնում...

Նրա համբա՞վը։ Հենց դա էլ պետք էր դաժան հետապնդողներին։ Եվ նրանք կառչեցին այդ համբավից, սկսեցին այն արատավորել, բզկտել, խայտառակել։ Բրիսոն, Գուադեն և ուրիշներ, ձգտելով միմյանց ձայնակոխ անել, իրենց թերթերում, բրոշյուրներում, ճառերում կատաղի ոռնոց բարձրացրին։ Նրան մեղադրում էին բռնակալության ձգտելու մեջ, նրան վերագրում էին արյունռուշտություն, դաժանություն, հիմարություն, վախկոտություն, զրպարտիչ գործողություններ և այլն, և այլն։ Ռեկորդը խփեց Բրիսոն, որն Անկաշառելիին մեղադրեց ոչ ավելի, ոչ պակաս, քան այն բանում, թե նա վաճառվել է արքունիքին։

Հալածում էին ոչ միայն Ռոբեսպիերին, այլև նրա կողմնակիցներին։ Նրանց ամեն կերպ ճնշում էին և աշխատում վարկաբեկել։ Ընդհակառակը, Մաքսիմիլիանի թշնամիների համար բոլոր գերատեսչությունների դռները լայնորեն բաց էին։ «Ապա Ռոբեսպիերի դեմ մի ճառ արտասանեցեք,—ասում էր մի դիտորդ,— և ես երաշխավորում եմ, որ մեկ շարաթից էլ շուտ ձեզ լավ պաշտոն կտան»։

Ի՞նչ վերաբերմունք էր ցույց տալիս նա այդ ամենին։ Նա երկար ժամանակ իրեն զսպում էր, երկար ժամանակ հավատում, որ կարելի է սկզբունքային հարցերի շուրջը պայքարել, առանց անձնական հողի վրա կանգնելու։

Եվ նա առաջինը չէր, որ հանդես եկավ իր պաշտպանությամբ։ Հանդես եկավ Դեմուլենը, որը զրպարտիչներին կծու ծաղրի ենթարկեց իր թերթում և «Մերկացված Բրիսո» բրոշյուրում, որի յուրաքանչյուր էջը դաշույնի հարվածի էր նման։ Հանդես եկավ ժողովրդի Բարեկամը՝ Մարատը, որին ժիրոնդիստները նորից ընդհատակ էին քշել։ Հանդես եկավ Դանտոնը։ Ցակոբինյան ակումբում Ռոբեսպիերին մեղադրող մի ռեպլիկայի դեմ առարկելով, Դանտոնն ասաց.

— Պարոն Ռոբեսպիերն այստեղ շարունակ միայն բանականության բռնակալություն է ցույց տվել։ Նշանակում է նրա հակառակորդներին նրա դեմ է հանում ոչ թե հայրենիքի

ները, այլ ստոր նախանձը և բոլոր ամենավնասակար կրքերը...։ Թերևս, կգա ժամանակը,— և այն արդեն հեռու չէ,— երբ շանթ ու կայծակ կթափեն այն մարդկանց վրա, ովքեր արդեն երեք ամիս է, ինչ հարձակվում են ամբողջ հեղափոխությամբ օրհնված առաքինի մի մարդու վրա, որին նախկին թշնամիները համառ ու փառասեր էին անվանում, բայց երբեք այնպիսի զրպարտություններով չէին ծածկում, ինչպես այժմյան թշնամիները։

Ժուռնալիստ Էբերը իր «Հայր Դյուշեն» թերթում մի բնորոշ մանրամասնություն նշեց։ «Ռոբեսպիերի վրա այնպես բարձրաձայն հաչող անձինք,— գրում էր նա,— շատ նման են լամետներին և բարնավներին այն պահին, երբ ժողովրդի այդ պաշտպանը նրանց դիմակը պատռում էր։ Նրանք այն ժամանակ նրան խռովարար, հանրապետական էին անվանում։ Այդպես էլ նրան անվանում են նաև այժմ, որովհետև նա բացահայտում է բոլոր խորագաղտնիքները...»։

Յակոբինականների ակումբը վճռականորեն պաշտպանեց իր առաջնորդին, ընդունելով Բրիսոյի և Գուադեի հարձակումները դատապարտող մի որոշում. միաձայն ընդունված այդ որոշումն ուղարկվեց ակումբի բոլոր մասնաճյուղերին։

Իսկ ինչ վերաբերում է այդ կամպանիայի պատճառ հանդիսացողին, ապա նա իրեն շատ ավելի զուսպ էր պահում, քան նրա թշնամիներն ու բարեկամները։ Ռոբեսպիերը «Սահմանադրության պաշտպան»-ի էջերում ընդգծում էր, որ ամբոխավարների ու բանսարկուների վրա չափից դուրս ուշադրություն դարձնել հարկավոր չէ։ Նրանք ժողովրդին անբարոյացնել չեն կարող, ինչպես որ օվկիանոսը թունավորել չի կարելի։ Նրանք իրենք իրենց կմերկացնեն՝ թող ժամանակ անցնի։ Այժմ շատ ավելի կարևոր է մի ուրիշ բան։ Այժմ բոլոր հայրենասերների ուշադրության կենտրոնում պետք է դտնվեն պատերազմը և նրա հետ կապված պրոբլեմները։ Եվ Անկաշառելին խոսում ու գրում է ամենից առաջ այդ հրատապ պրոբլեմների մասին։

Այո, անկասկած, պատերազմը ժամանակին չսկսվեց։ Բայց բանի որ այն սկսվել է, այն պետք է միայն շահել՝ ուրիշ ելք

լկա։ Այն պետք է ավարտել վճռական հաղթանակով և կարճ ժամանակամիջոցում։ Արդյոք կարելի՞ է դրան հասնել, բանակի ղեկավարությունը թողնելով հին դեներալների ձեռքին։ Ռոբեսպիերը առաջվա նման պնդում է, որ ամենամեծ վտանգը դավաճան գեներալներն են։ Բայց բանը միայն այդ չէ։ Այժմյան պատերազմը բոլորովին այլ բնույթ ունի, քան նախկին պատերազմները. նրա առաջ ժողովրդական նպատակներ են դրված, ուստի և զինված ժողովուրդը պետք է նոր ձևով կազմակերպվի և նոր կարգապահություն ունենա։ Եվ, զարգացնելով մի ժամանակ Սահմանադիր ժողովի ամբիոնից արտահայտած մտքերը, Մաքսիմիլիանն ապացուցում է, որ առանց հեղափոխական կարգապահության չի կարող լինել հեղափոխական զինվոր. եթե կարգապահությունը հաստատվում է միայն գավազանի խստավարժությամբ, զինվորը մոռանում է իր քաղաքացիական պարտքի մասին և բնաջնջման հասարակ գործիք դառնում։

Ռոբեսպիերը բանակն ամրապնդելու մի շարք գործնական միջոցներ է առաջարկում։ Նա խորհուրդ է տալիս ստեղծել յուրաքանչյուրը վաթսուն հազար մարդուց կազմված առանձին լեգիոններ, որոնք հեղափոխության առաջավոր ջոկատների դեր խաղային և բանակում նոր ոգու կոփմանն աջակցեին։

Նա պաշտպանում է նույնիսկ իր հակառակորդներին ամեն անգամ, երբ նրանց գործողությունները ժողովրդի համար, հաղթանակի համար օգտակար է համարում։

Հունիսի 4-ին ռազմական մինիստր Սերվանը մի առաջարկ մոցրեց Ասամբլեա. Ֆրանսիայի յուրաքանչյուր կանտոնից կանչելու համազգեստ հագած ու հանդերձված հինգ ֆեդերատ։ Փարիզ գալով, նրանք կկազմեին քսան հազար մարդուց բաղկացած ազդու մի բանակ։

Այդ նախագիծը կազմեցին ժիրոնդիստներն իրենց նպատակներով։ Դեպարտամենտների ունևոր բնակչության վրա հույս դնելով, նրանք ուզում էին այն մի ուժ դարձնել, որը նրանց օգներ իրենց բոլոր թշնամիներին սարսափի մեջ պահելու, ճնշում գործադրելով թե՛ թագավորի, թե՛ դեմոկրատական ակումբների վրա։ Մաքսիմիլիանը հենց այդպես էլ դնահատեց ժիրոնդիստական լիդերների պլանները և սկզբնական շրջանում

նախագծին դիմադրություն ցույց տվեց։ Սակայն նա շուտով հասկացավ, թե ինչպիսի հեղափոխական կարևոր ուժ կարող է դառնալ հայրենասիրությամբ խանդավառված և ի մի հավաքված ֆեդերատների լագերը։ Եվ Անկաշառելին իսկույնևեթ տակտիկան փոխում է։ Նախագծին դիմադրելու փոխարեն նա դառնում է նրա ջերմ կողմնակիցներից մեկը։

Այդ օրերին ժողովրդի ճնշման տակ, ռազմաճակատներում ստեղծված դրության հետևանքով սաստիկ շփոթված Սահմանադիր ժողովը փոքր-ինչ դեպի ձախ թեքվեց։ Ընտրողների առաջ իրենց որևէ կերպ արդարացնելու համար ժիրոնդիստական լիդերները երեք դեկրետներն էլ պաշտպանեցին։ Բացի ֆեդերատների լագերի վերաբերյալ հրամանագրից, որոշվեց հրատարակել չերդված քահանաների դեմ ուղղված մի նոր օրենք և ցրել թագավորի՝ հակահեղափոխական խառնամբոխից կազմված պահակախումբը։

Բայց այժմ թագավորն ու արքունիքը հակված չէին ժիրոնդիստներին ընդառաջելու։ Ռազմաճակատներում կրած պարտությունները դավադիրներին թևավորեցին։ Թվում էր, թե ոչինչ չի խանդարի կոալիցիայի զորքերի առաջխաղացմանը՝ մնում էր հանդիստ սպասել նրանց գալստյանը։ Լյուդովիկոս XVI-ը սկսեց ուրիշ լեզվով խոսել։ Նա միտք էլ չուներ հաստատելու ներկայացված օրինագծերը։ Իսկ երբ Ռոլանը նրան հանդիմանական նամակ ուղարկեց, նա ժիրոնդիստ մինիստրներին պաշտոնաթող արեց։ Դա տեղի ունեցավ հունիսի 13-ին։

Դյումուրյեն փորձեց առաջացած կոնֆլիկտն օգտագործել, որը, սակայն, նրան չհաջողվեց. մի քանի օր հետո նա ինքը հրաժարական տվեց և մեկնեց հյուսիսային բանակ։ Ֆելյանները, որոնք իշխանության գլուխն անցան, նորից հաղթանակ տարան։

Ռեակցիան դադարեց վարանելուց։ Դյուպորը Լյուդովիկոս XVI-ին խորհուրդ տվեց Օրենսդիր ժողովն արձակել և ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնել։ Միապետականները կոչ էին անում փակելու Յակոբինյան ակումբը «որպես բոլոր անկարգությունների աղբյուր»։ Լաֆայետը Ա-

սամբլեային սպառնալիքներով լի մի նամակ ուղարկեց, պահանջելով յակոբինականներին սանձահարել և «հայրենիքը ներքին բռնակալությունից ազատել»։ Այսպես «երկու աշխարհամասերի հերոսը», վերջապես, ներկայացավ իր իսկական կերպարանքով։ Ռոբեսպիերի «Սահմանադրության պաշտպան»-ը նախկին մերկացումներն ամփոփեց։ Նա հիշեցնում է հեղափոխականների դեմ Լաֆայետի խարդավանքների մասին, ազատության թշնամի գեներալ Բույեին նրա ցույց տրված աջակցության մասին, չմոռանալով հիշեցնել նաև Մարսյան դաշտում տեղի ունեցած սպանդի մասին... Վերջում, ակնարկելով Բրիսոյին և նրա բարեկամներին, Անկաշառելին գրում էր. «Ես հարյուր անգամ ապարդյուն կերպով մատնանշել եմ պետության պաշտպանությունն ազատության ամենավտանգավոր թշնամիներին հանձնելու անմիտ անհետևողականությունը։ Ժիրոնդայի պարագլուխներին տված նոր հրապարակային մի ապտակ։

Նրանց ոչինչ չէր հաջողվում, ամեն ինչ ձեռքից գնում էր։ Երկերեսանի քաղաքականությունը ցույց էր տալիս իր հակառակ կողմը։ Նրանք ժողովրդին շողոքորթում էին և աշխատում միապետին իրենց բուռը հավաքել. դրա հետևանքով ժողովուրդը նրանցից հիասթափվում էր, իսկ միապետը նրանց վանեց։ Նրանք «Հանուն ազգի» լոզունգով պատերազմ սանձազերծեցին, հուսալով չքավորության ուշադրությունը շեղել ներքին հրատապ պրոբլեմներից և ավելացնել իրենց հարստությունն ու իշխանությունը։ Դրա հետևանքով նրանք իշխանությունը կորցրին, հարստությունը չավելացավ, իսկ պատերազմն անհաջող էր ընթանում, չքավորությանն ստիպելով մտածել հենց այդ ներքին պրոբլեմների շուրջը։ Նրանք հույսը դրին Լաֆայետի վրա, նրան գուրգուրեցին, նրա համար հայրենասերի հռչակ ստեղծեցին, իսկ նա նրանց դավաճանեց, ծաղր ու ծանակի ենթարկեց և Անկաշառելիի անարգանքին մատնեց։

Կատաղելու և վհատվելու շա՛տ պատճառներ կային։ Բայց ժիրոնդիստները ամենադառն արցունքները թափում էին մինիստրական իշխանությունը կորցնելու պատճառով. դա առանձնապես ցավալի էր։ Ասամբլեան «հայրենասեր մինիստրներին» կարեկցություն հայտնեց, բայց կարեկցությունից

ի՞նչ օգուտ։ Ժիրոնդիստներին շատ ավելի էր հետաքրքրում այն, որ մինիստրների հրաժարականը արվարձաններում և կենտրոնի որոշ տեղամասերում հուզում առաջացրեց։ Նշանակում է, ժողովուրդն իրենց լքել է ոչ բոլորովին։ Նշանակում է, կարելի է շարունակել ամբոխավարության խաղը և, ժողովրդին բորբոքելով, թագավորի վրա ճնշում գործ դնել, հասնել մինիստրական պորտֆելների վերադարձման։ Այդ պլանը մեկ անգամ առաջանալով, նրանց հանգիստ չէր տալիս։ Նրանք որոշեցին արքունիքին վախեցնելու համար ցույց կազմակերպել, բնդ որում, ժամանակավորապես մոռանալով Անկաշառելիի դեմ իրենց քիչ առաջվա գրոհները, հույս էին դնում նրա աջակցությանն, ինչպես և դեմոկրատիայի մյուս առաջնորդների օգնության վրա։ Բայց Ռոբեսպիերը միտք չուներ նրանց համար կրակից շագանակներ հանելու։ Վերջապես, հեղափոխական դեմոկրատներն ի՞նչ գործ ունեին ժիրոնդիստ մինիստրների հետ։ Այժմ Անկաշառելին և նրա զինակիցները ուրիշ բանի մասին էին մտածում։ Նրանք տեսնում էին, որ մթնոլորտը շիկանում է, որ գրգռությունն աճում է, որ մոտ է այն ժամանակը, երբ կարելի կլինի միապետության դեմ ապստամբություն բարձրացնել։ Եվ եթե կարիք չկա ժողովրդի խանդավառությունը վառելու, չի՞ն նպատակներ հետապնդող անմիտ ցույցերի վրա։ Ռոբեսպիերը համոզված էր, որ այդպիսի կիսատ-պռատ միջոցառումը շոշափելի արդյունքներ չի տա։ «Մասնակի ապստամբությունները ժողովրդական գործն ուժասպառ են անում մինչև,— հայտարարեց նա Յակոբինյան ակումբում։ Սակայն ժիրոնդիստները մտածում էին իրենց պլանի մասին։ Եվ ահա հունիսի 19-ին քաղաքագլուխ Պետիոնը արվարձանների դեկտարների հետ հանդիպում կազմակերպեց։ Որոշվեց ցույցն անցկացնել հաջորդ օրը։

Ցույցին մասնակցեցին մոտավորապես քսանհինգ հազար փարիզեցիներ։ Սենտ-Օնորե փողոցի երկայնությամբ տոպանցող շարասյուների մեջ կարելի էր տեսնել նիզակներով, սրերով, եղաններով զինված բանվորների, ինչպես նաև կեսարեսնակիրների և ածխագործների, ազգային գվարդիականների, երիտասարդ օրիորդների և քրջազգեստ երեխաներով

մայրերի։ Այդտեղ կային նաև երաժիշտներ, լսվում էին «Մա թրա»—«Ամեն ինչ հաջող կգնա» հռչակավոր երգի հնչյունները։

Օրենսդիր ժողովն ստիպված եղավ պատգամավորությունն ընդունել ու նրան լսել։ «Մենք դժգոհում ենք,— հայտարարեց պատգամավորության հռետորը,— մեր բանակների անգործությունից։ Մենք պահանջում ենք, որ անգործության պատճառը պարզվի։ Եթե այդ պատճառը գործադիր իշխանությունն է, ուրեմն թող այդ իշխանությունը ոչնչացվի՛։ Հայրենասերների արյունը չպե՛տք է թափվի արքունիքի գոռոզությունն ու փառասիրությունը գոհացնելու համար... Մեկ մարդը չպե՛տք է ազդեցություն գործի քսանհինգ միլիոն մարդու վրա...»։

Հետո բազմությունը լցվեց Տյուիլրիի զբոսայգին։ Պալատը պահպանում էր ազգային գվարդիան, բայց այն դիմադրություն ցույց չտվեց։ Ցուցարարներին հաջողվեց մուտք գործել թագավորի բնակարանը։ Պալատականները դողում էին։ Լյուդովիկոս XVI-ը ստիպված եղավ գնալ բազմության մոտ և մոտավորապես չորս ժամ շարունակ, քրտնակոխ, կեղծավոր ժպիտով ձևացնել, թե ինքն ատելի «խաժամուժի» երեսը տեսնելով հրճվում է։ Թագավորին կարմիր թասակ տվեցին՝ նա այն գլխին դրեց. նրան զինվորի տափաշշից գինի տվեցին՝ նա խմեց փարիզեցիների կենացը։

— Դուք ուխտադրուժ եք,— ասաց Լեժանդրը միապետին։— Դուք շարունակ մեզ խաբում էիք, այժմ նույնպես խաբում եք։ Բայց զգուշացեք՝ համբերության բաժակը լցվել է, և ժողովուրդը հոգնել է իրեն ձեր խաղալիքը տեսնելուց։

Թագավորն ի պատասխան մոմոթաց, թե սահմանադրությունը ոչ մի բանում չի խախտում։

Ներկայացումը ձգձգվում էր, իսկ արդյունքները չէին երևում։ Ժիրոնդիստների լիդերները, անհանգստացած, թե չլինի մարդիկ թագավորին վնասեն, վճռեցին, որ ժամանակն է վերջացնելու։ Շտապ կերպով պալատ եկան Ինարն ու Վերնյոն։ Նրանց հետևից անմիջապես հայտնվեց Պետիոնը։ Նրանք բոլորն էլ սկսեցին ցուցարարներին համոզել պալատից հեռանալ ու ցրվել։ Դրան հասնելը դժվար չէր, որովհետև մարդիկ առանց այն էլ ձանձրացել էին թագավորի բնակարանի սենյ-

յակներում թրև գալուց։ Երեկոյան ժամը ութի մոտերը պալատն ամայացավ՝ ցույցը վերջացավ։

Ինչպես և Ռոբեսպիերն սպասում էր, լեռը մուկ ծնեց։ Ժիրոնդիստների ակնկալությունները չկատարվեցին. ցույցը վանդված մինիստրներին իշխանության գլուխը չվերադարձրեց։ Ընդհակառակը, այն միայն կատաղեցրեց արքունիքին։ Ասամբլեային մի խիստ բողոքագիր ուղարկեց։ Պետիոնը քաղաքագլխի պաշտոնից ազատվեց։ Ովքեր հունիսի 20-ի դեպքերն առաջացրին, դրանց հետևանքով էլ ձախողվեցին։ Բայց ժողովրդական ցույցն ինքնըստինքյան մի նշանակալից գործողություն հանդիսացավ։ Այն ցույց տվեց ժողովրդի ու նրա տրամադրության հզորությունը. այն ավելի լուրջ գործերի նախերգանքը եղավ։ Ռոբեսպիերը և դեմոկրատիայի մյուս առաջնորդները անձամբ համոզվեցին, որ ժողովուրդը խանդավառված է և վճռականությամբ լի. հարկավոր էր միայն նրա շարժումն ուղղել ապահով հունով։

Իր անքուն գիշերներից մի գիշեր թագուհին զվարճանում էր սիրելի սենեկապանուհու հետ զրուցելով։ Տյուիլրիի պալատը սուզված էր անդորրության գրկում։ Լուսնի աղոտ լույսը ներս էր ընկել կիսով չափ իջեցված վարագույրի արանքից։

— Ընդամենը մեկ ամիս հետո,— շշնջաց Մարիա Անտուանետան, կկոցած աչքերով նայելով բաց-կապտավուն շողին,— ես ու թագավորն այս լուսնին կնայենք մեր շղթաներից ազատագրված...

Օրեր էին հաշվում նաև պալատականները, հաշիվ էին անում, թե թշնամին երբ կգրավի Լիլը, երբ կընկնի Վերդենը։ Դավաճան գեներալները թափում էին բոլոր ջանքերը՝ արքունիքի հույսերն արդարացնելու։ Լյուկների բանակն առանց ակնհայտ պատճառների թողնում էր քաղաք քաղաքի ետևից, Լաֆայետը զորքերից հեռացավ՝ մայրաքաղաքի ազգային գվարդիայի խռովությունը բարձրացնելու և թագավորի ընտանիքը դուրս տանելու։ Այդ պլաններից առաջինը տապալվեց, գեներալը շատ մեծ հույս էր դրել իր կորցրած համբավի վրա, բայց երկրորդը չիրականացավ թագուհու մեղքով միայն՝ նախկին մարկիզի նկատմամբ անձնական հակակրանք տածող Մա-

բիա Անտուանետան չուզեց նրա ձեռքից ազատություն ստանալ, մանավանդ որ սիրելի ինտերվենտներն այնքան մոտիկ էին գտնվում։

Կամազուրկ, անվճռական Օրենսդիր ժողովն իրեն զգում էր մուրճի և զնդանի արանքում. բուրժուազիայի դեպուտատները չէին կարող չտեսնել արքունիքի պլաններն ու գավերը, բայց իրենց նախորդների, Սահմանադիր ժողովի անդամների նման, նրանք ժողովրդից սաստիկ վախենում էին և ապստամբության սպառնալիքի տակ պատրաստ էին միապետության հետ ուզած համաձայնության գալ։ Ժիրոնդիստների լիգերներն ամենից ավելի շատ տենչում էին նորից իշխանության գլուխ անցնել։ Հունիսի 20-ի անհաջողությունից հետո նրանք իրենց երկդիմի խաղը չէին դադարեցնում։ Այլևս Լաֆայետին պաշտպանելու հնարավորություն չունենալով, նրանք լքեցին նրան, որով անուղղակիորեն ընդունեցին իրենց կողմից զրպարտված Ռոբեսպիերի արդարացիությունը։ Նրանք շարունակում էին միապետին զգուշորեն սպառնալ։ Հուլիսի 3-ին նրանց գլխավոր հռետոր Վերնյոն Լյուդովիկոս XVI-ի ուխտադրժությունը մերկացնող մի խիստ ճառ արտասանեց։ Սակայն հռետորը որևէ վճռական հետևություն չարեց։ Ընդհակառակը, Բրիսոն և նրա բարեկամները, որոնք դողում էին գալիք դեպքերի առաջ, պատրաստ էին արքունիքին ամեն ինչ ներել, եթե նա համաձայներ իրենց հաշվի առնել։

Բայց հայրենասիրական շարժումը, հակառակ ամեն ինչի ու ամենքի, օրեցօր ծավալվում էր։ Պատահական չէ, որ ժիրոնդիստներն այնպես հեշտությամբ սարքեցին հունիսյան ցույցը։ զայրացած ժողովուրդը պայքարից հրաժարվելու միտք չուներ։ Կառավարությունը նրանից հրաժարվում էր, գեներալները նրան դավաճանում էին. դե ինչ, նա պատրաստ էր հեղափոխության ու երկրի ճակատագիրն իր ձեռքը վերցնելու։ Եվ որքան վերնախավերի շրջանում դավաճանությունն ու տրամադրություններն ավելի ակնհայտ էին դառնում, այնքան մասսաները Ռոբեսպիերի և մյուս դեմոկրատ-գաղափարախոսների պարզաբանումներն ավելի մեծ ուշադրությամբ էին լսում, այնքան ցասման անդիմադրելի ալիքն ավելի ուժգին ու հզոր թափով

էր տարածվում ամբողջ Ֆրանսիայում։ «Հեղափոխական» և «հայրենասեր» բառերը հոմանիշներ էին դարձել. այսուհետև հայրենիքի սերը, թշնամու դեմ տարած հաղթանակը միաձուլվում էին հեղափոխության և հանրապետության պատկերացումների հետ։ Այժմ շատ հարմար է Անկաշառելիի տված և մասսաների լսած այս լոզունգը. «Այսպիսի կրիտիկական հանգամանքներում սովորական միջոցները բավական չեն։ Ֆրանսիացիներ՛, ինքնե՛րդ փրկեցեք ձեզ»։

Հայրենիքը վտանգի մե՛ջ է։ Այս գոչը մրրիկի արագությամբ տարածվեց խռովահույզ երկրում. այն լսվում էր և՛ Ֆլանդրիայի հարթավայրերում, և՛ Շամպանիի դաշտերում, և՛ Վոգեզների բարձունքներին, և՛ արևավառ Պրովանսի ծալկափթիթ հովիտներում։ Այն լսում էին Էլզասի հանքագործները և Լիոնի յուլհակները, Նանտի և Մարսելի ծովայինները, Լիլի, Սենտ-Էտյենի և Կրեզոյի բանվորները։

Հայրենասիրական ընդհանուր վերելքը տատանվող ժողովին ստիպեց հուլիսի 11-ին զորակոչման մասին դեկրետ ընդունել։ Դրանից առաջ որոշվեց մինչև հուլիսի 14-ը ֆեդերատներին հավաքել Փարիզում։ Թագավորը սիրտ չարեց մերժել այդ օրինագծերը, ինչպես նաև չընդունել Ասամբլեայի որոշումը՝ Պետիոնի ազատումը ճանաչելու։ Սկսվեց ընդհանուր զորակոչ։ Զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդիկ ենթակա էին զորակոչման։ Կանոնավոր բանակի նոր կազմավորումները կամավորների՝ ֆեդերատների ջոկատների հետ միասին առաջ շարժվեցին դեպի արևելյան սահմանները։ Արտաքին թշնամին պետք է ե՛տ շպրտվի և ե՛տ կշպրտվի։ Իսկ ներքին թշնամի՞ն... Ինչպես և քիչ առաջ կանխագուշակել էր Բարնավիները, առաջինը չէր կարելի անջատել երկրորդից, նրանք միմյանց հետ կապված էին անխզելի կապերով։

Մի ժամանակ թագավորը հույս ուներ, որ պատերազմն իրեն թույլ կտա բանակի վրա հենվել՝ ժողովրդին ջախջախելու համար։ Կատարվեց հակառակը. բանակը միաձուլվեց ժողովրդի հետ՝ միապետությունը ջախջախելու համար։ Այժմ երկար ժամանակ զսպված զայրույթը թափվում էր ոչ միայն

ինտերվենտների, այլև նրանց վրա, ովքեր նրանց ճանապարհ էին տալիս։ Մասսաների հեղափոխական բնազդը նրանց ճշտորեն ցույց էր տալիս Տյուիլրիի պալատը։ Անկաշառելին իրավացի էր՝ անհրաժեշտ էր ամենից առաջ ոչնչացնել «ներքին Կոբլենցը», և քանի որ դա չհաջողվեց պատերազմն սկսվելուց առաջ անել, պետք էր շտապ կերպով կատարել այժմ։ Հայրենիքը վտանգի մե՛ջ է։ Եվ այդ վտանգը չի՛ վերանա, քանի դեռ չի՛ փշրվել միապետության ողնաշարը։

ԳԼՈՒԽ 4

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մինչև Հուլիսի կեսը առաջանում են ապագա ապստամբության երկու օջախ։ Նրանցից առաջինը դարձավ մայրաքաղաքի սեկցիաների կոմիսարների ժողովը, երկրորդը՝ ֆեդերատների կենտրոնական կոմիտեն։

Սեկցիաները վաղուց արդեն գործում էին։ Հունիսի 23-ից նրանց կոմիսարներն սկսեցին կանոնավոր կերպով հանդիպումներ ունենալ քաղաքապետարանում, ինքնակամորեն մայրաքաղաքի նոր հեղափոխական օրգանի իրավունքներ վերապահելով իրենց։ Հուլիսի սկզբից սեկցիաների պահանջները ավելի ու ավելի վճռական բնույթ են ստանում։ Ասամբլեա են ուղարկվում անթիվ հանրագրեր, որոնք պահանջում են ոչ միայն դավաճան գեներալներին պաշտոնաթող անել, այլև սահմանադրությունը խախտող և հայրենիքին ստորությամբ դավաճանող թագավորին տապալել։

Միաժամանակ Փարիզում կազմակերպվում է զինված ֆեդերատների ճամբար։ Մինչև հուլիսի 11-ը գրանցվեց ավելի քան հազար վեց հարյուր, իսկ մինչև հուլիսի 24-ը՝ արդեն մոտավորապես չորս հազար մարդ։ Ժողովի կամքի համաձայն ֆեդերատները պետք է Փարիզում տոնեին Բաստիլի գրավման օրը, իսկ հետո տեղափոխվեին Սուասոն։ Բայց դեմոկրատիայի առաջնորդները համառորեն պահանջում էին, որ ֆեդերատների ճամբարը մայրաքաղաքում մնար։ Հուլի-

սի 16-ին այդ բանի անհրաժեշտությունը համոզիչ կերպով ապացուցում է Ռոբեսպիերը։ Հաջորդ օրը նա ֆեդերատների անունից մի ուղերձ է գրում Օրենսդիր ժողովին։ Նա պահանջում է արձակել գործադիր իշխանությունը, հեռացել ռազմական ու վարչական պաշտոնատար անձանց, թարմացնել դատարանների կազմը։

Նպատակն առաջադրված է։ Մնում է այն կատարել։

Ժիրոնդիստները սասանվեցին, և նրանց ծանր, տանջալից խոհեր պաշարեցին։ Դարձյալ այն չէ, ինչ որ նրանք ցանկանում էին, այն չէ, որին այնպես համառորեն ձգտում էին։ Նրանք ուզում էին միապետությանը վախեցնել միայն, որ նրան իրենց ազդեցության տակ գցեին, իսկ նրան պատրաստվում են ոչնչացնելու։ Նրանք ֆեդերատներին Փարիզ կանչեցին, որ վերջիններս իրենց պաշտպանեին յակոբինականներից, իսկ ֆեդերատները յակոբինականների ղեկավարությամբ պատրաստվում են գրոհով վերցնել Տյուիլրիի պալատը։ Բայց եթե միապետությունը տապալվի, բուրժուազիային ո՞վ կպաշտպանի ժողովրդից։ Որտե՞ղ է հեղեղի տարերքի առաջը պահող ամբարտակը։ Որտե՞ղ է դժվարություններից հմտորեն խուսանավելու հնարավորություն տվող հակակշիռ ուժը։ Ո՛չ, ոչ մի՛ կարելի թույլ տալ։ Եվ ժիրոնդիստների առաջնորդներն Ասամբլեայում, ակումբում, մամուլում սկսում են մի նոր կամպանիա՝ թագավորի իշխանությունը փրկելու կամ-պանիան։

Հունիսի 24-ին Վերնյոն պատասխանելով ծայրահեղ ձախ մի դեպուտատի՝ թագավորի հարցով զբաղվելու կոչին, ասում է չհամակվել անհիմն վախով ու աննպատակ ոգևորությամբ։

Մեկ օր հետո Բրիսոն, որն այնպես քիչ առաջ հանրապետական շարժման պիոներներից մեկն էր, շանթ ու կայծակ է թափում «արքայասպանների, հանրապետության հաստատման ձգտող կուսակցության վրա»։ «Եթե գոյություն ունեն այնպիսի մարդիկ,— գոռում է նա,— որոնք ցանկանում են այժմ սահմանադրության փլատակների վրա հանրապետություն ստեղծել, ապա արդարադատության սուրը նրանց պետք

է խոցի ճիշտ այնպես, ինչպես որ բոլոր... կոբլենցյան հակահեղափոխականներին։ Սեփական միտքն ավելի պարզ արտահայտել հնարավոր չէր. գահի տապալման սպառնալիքի հանդեպ ժիրոնդիստները հայտարարում էին, որ «հանրապետական» և «հակահեղափոխական» բառերը միևնույն նշանակությունն ունեն։ Այդ վատ էր, բայց համենայն դեպս ասված էր անկեղծորեն։ Շատ ավելի նողկալի էր մի ուրիշ բան, որի մասին առայժմ մանրամասնորեն ոչ ոք ոչինչ չգիտեր և որը տեղի էր ունենում խիստ գաղտնի։

Պալատական նկարիչ Բոզեի աջակցությամբ ժիրոնդիստների ղեկավոր առաջնորդներ Վերնյոն, Գուադեն և Ժանսոնեն մի նամակ հանձնեցին թագավորին։ Նրանք Լյուդովիկոս XVI-ին հորդորում էին պատրաստվող ապստամբության մասին, որի ընթացքում նա կկորցնի թագը, և, թերևս, նաև կյանքը։ Փրկության միակ միջոցը, պնդում էին գահի նոր խորհրդականները, Լաֆայետին հրաժարական տալն է, ազատված մինիստրներին իրենց պաշտոնին վերադարձնելը և ժիրոնդիստների խնամակալությանն ապավինելը։ Այսպես երեկվա հեղափոխականները բռնեցին հակաժողովրդական դավադրությունների կեղտոտ ճանապարհը, որով նրանցից առաջ գընում էին սահմանադրականներն ու ֆեյլյանները։

Արքունիքը հպարտորեն հրաժարվեց նրանց օգնությունից, հրաժարվեց, չնայած որ երկրորդ անգամ այն առաջարկվեց։ Թագավորը և նրա մերձավորները դեռ էլի հույս էին դընում ինտերվենտների վրա. եթե նրանք չցանկացան Լաֆայետի ծառայություններն օգտագործել, ապա նրանց համար է՛լ ավելի պակաս ընդունելի էր ժիրոնդիստների հետ դաշնակցելը, որոնց նրանք արհամարհում էին և չէին ուզում նվաստանալ՝ նրանց հետ բանակցություններ վարելով։ Բայց, իհարկե, ահազանգը հաշվի առան։ Այն ժամանակ, երբ Լյուդովիկոս XVI-ի գործակալներն արտասահմանում դաշնակից հրամանատարությանն շտապեցնում էին, պահանջելով սպառնացող մի հրովարտակ հրատարակել և միաժամանակ բոլոր ռազմաճակատներում հարձակում սկսել, արքունիքը ժիրոնդիստներից լուր ստանալով, շտապ միջոցներ էր ձեռք առնում։ Փարիզ կանչվեցին արտոնյալ գնդերի մոտավորապես յոթ հազար զինվոր

Տյուիլրիի պալատի ձեղնահարկում տեղավորում էին շարժական մահճակալներ, զենք և համազգեստ։ Բոլոր տեղերից ազնվականներ էին հավաքվում, որոնք պատրաստ էին կռվել ու մեռնել իրենց թագավորի համար։ Հույս էին դնում ազգային գվարդիայի որոշ գումարտակների վրա, սրիկաներից ու պրովոկատորներից ստորաբաժանումներ էին ստեղծում, որոնց կարգադրում էին ժողովրդական բանակի շարքերը խըռովություն ու պառակտում մտցնել։ Ֆելյանները, իրենց կողմից, ուժեր էին կուտակում, որ հարկավոր պահին արքունիքին աջակցություն ցույց տան։

Փարիզում մթնոլորտը սաստիկ շիկացել էր։ Երկու կողմերն էլ պատրաստվում էին վճռական հարված հասցնելու։ Ժիրոնդիստների կողմից ղեկավարվող ժողովը, զուր փորձելով կանգնել պայքարող կողմերի միջև, դեպի աջ գլորվեց և իր անկումով բարոյալքվելով, սկսեց կորստի մատնված միապետության թափթփուկի դեր խաղալ։ Իսկ ինչի՞ էին սպասում։ Կողմերից յուրաքանչյուրը՝ իրենը։ Միապետությունը սպասում էր ռազմաճակատներից իր համար լավ լուրերի և ինտերվենտների ղեկավարությունից՝ խրախուսիչ ազդանշանների, հեղափոխության ուժերը չէին ուզում հանդես գալ, մինչև Ֆեդերատների գումարտակները լրիվ կազմով հավաքվեին. դեռևս Բրեստից կամավորները չէին ժամանել։ Բայց բոլորի համար պարզ էր՝ շուտով ժամը կհնչի։

Դա պարզ էր նաև Անկաշառելիի համար, ծայր աստիճան, դավեցնելու չափ պարզ։ Այո, հուլիսի երրորդ տասնօրյակում նրա հոգին ցավով է համակվում։ Նա առաջվա նման շարժման ավանգարդում է, թեև այդ օրերին նրան ոչ ոք փողոցում չի տեսնում. նա ժողովրդական ջոկատների նախապատրաստմանը չի մասնակցում, Դանտոնի նման սեկցիաներում ագիտացիա չի անում։ Նա այժմ ակումբի նիստերից ազատ ժամանակի մեծ մասն անց է կացնում իր խցիկում, գրասեղանի մոտ։ Նա մտածում է, կշռադատում, գրում... Ահա և այսօր, հենց որ մտքերի փոխանակությունը վերջացավ, Մաքսիմիլիանը շտապում է հեռանալ Յակոբինյան վանքի գրադարանից։ Նա մռայլված է և գնում է արագ քայլերով։

Սենտ-Օնորե փողոց։ Վերափոխման եկեղեցի։ Դիմացը մի դարպաս։ Ճաքճքված փոքրիկ տախտակի վրա խնամքով գրված է № 366։ Դա ազնիվ յակոբինական, Մաքսիմիլիանը հարգող ու նրա բարեկամ հյուսն Մորիս Դյուպլեի տունն է։ Մաքսիմիլիանն անցնում է բակը, ճռռում են երկրորդ հարկը տանող սանդուղքի աստիճանները։ Ահա՛ այն, առաքինության համեստ ապաստարանը, ժողովրդի իրավունքների համար մաքառող մարտիկի օթևանը։ Դա Անկաշառելիի սենյակն է, իսկական մի խցիկ՝ մերկ պատերով, որոնց միակ զարդը սոճենու դարակներն են՝ նրանց վրա եղած գրքերով, թերթերով, ձեռագրերով։ Կոշտ վերմակով ծածկված հասարակ մի մահճակալ, մի բազկաթոռ, որի մեջ լցված ծղոտը երևում է մաշված պաստառի արանքներից, լուսամուտի գոգին դրված երկու ծաղկաման։

Ահա գրասեղանը, որի մոտ նստած նա շարունակ մտածում ու գրում է երկար երեկոներ ու անքուն գիշերներ։ Այստեղ, այս սեղանի մոտ ծնունդ կառնեն այն ճառերը, որոնք կսասանեն Ֆրանսիան ու Եվրոպան, և դրանց ծնվելու միակ վկաները կլինեն հին կապարե թանաքամանը և աղոտ լույս արձակող լամպը։ Նրա խցիկի տակ այն սրահն է, որտեղ քքնում են աշխատողները, խցիկի լուսամուտը նայում է բակին, որտեղ չորացնում են սպիտակեղեն, խզխզում են սղոցները և թխկթխկացնում կացինները։ Այսպիսին է Անկաշառելիի կացարանը՝ նրան շրջապատող ամեն ինչի հետ միասին։ Պարզությունը, համեստությունը, աղքատությունը, արժանապատվությունը՝ սկզբունքներ, որ նա քարոզում է իր ուսմունքով, որոնք ուղեկցում են նրա ամբողջ կյանքին, այստեղ առկա են։

Բայց դա պարզապես միայն աշխատասենյակ, միայն քքնելու մի անկյուն չէ։ Դա կյանքի մի կտոր է այն տանը, որը հանդիսանում է նրա տունը, այն ընտանիքում, որը հանդիսանում է նրա ընտանիքը։ Այստեղ բոլորը նրան խորապես հարգում են և ջերմորեն սիրում, նա ուրիշ ոչ մի տեղ չէր գտնի աշխատանքի այդպիսի, հոգատար ձեռքերով ստեղծվող պայմաններ։

Տիկին Դյուպլեն, առաջավոր հայացքներ ունեցող, սրտա-

բայց, հյուրասեր մի կին, հինգշաբթի օրերին իր փոքրիկ «սալոնում» հավաքում էր իրենց հայացքներով Ռոբեսպիերին մոտիկ մարգկանց մի խմբակ, նրա բարեկամներին ու զինակիցներին։ Այստեղ կարելի էր հանդիպել Քամիլ Դեմուլենին իր երիտասարդ կնոջ հետ, Անկաշառելիի մոտ վստահելի անձի դեր կատարող Պանիսին, Սահմանադիր ժողովի նախկին անդամ Անտուանին, նիհարակազմ չոր մի մարդու, որին Դյուպլեն նույնպես ապաստան էր տվել։ Այստեղ հաճախ գալիս էր Դանտոնը, մշտական հաճախորդներ էին Սանտերը և Լեժանդրը։ Անկաշկանդ զրույցով քննարկվում էին երկրին հուզող պրոբլեմները։ Իհարկե, խմբակի հոգին Մաքսիմիլիանն էր։

Բայց այդ օրերին նա քչերին էր պատմում իր տպավորությունների ու կարծիքների մասին։ Նա մռայլ էր, մտախոհ, ձգտում էր մեկուսանալ։ Բոլորի համար պարզ էր, որ նրան համառորեն ինչ-որ տխուր մտքեր են հետամտում։

Իրականում հենց այդպես էր։ Իր գրասեղանի մոտ նստած, Ռոբեսպիերը լարված մտածում էր, և նա որքան ավելի էր մտածում, այնքան ավելի էր սարսափում։ Նորից վերակենդանացան այնպիսի կասկածներ, որոնք նրան անհանգստացնում էին Մարսյան դաշտում տեղի ունեցած ջարդի հաջորդ օրերին։

Արդյոք հաղթանակի համար ամեն ինչ նախապատրաստվա՞ծ է... Արդյոք ժողովուրդը կկարողանա՞ միաժամանակ հաղթել ներքին ռեակցիային և արտաքին թշնամուն։ Արդյոք ուժերը կբավականացնե՞ն... Իսկ եթե ոչ...

Նա միայն երկու մարդու է ուզում պատմել իր կասկածների մասին։ Նրանցից մեկը դեպուտատ Ժորժ Կուտոնն է, իր բարեկամն ու զինակիցը։ Այդ մարդը Անկաշառելիին ճիշտ կհասկանա. նա խելոք ու խորաթափանց մարդ է և հեռատես միտք ունի։ Երկրորդը Մաքսիմիլիանի առասցի հին թղթակից Ֆյուիսարն է։ Բայց Կուտոնը հիվանդ է։ Եվ Անկաշառելին նրան հուլիսի 20-ի թվագրով նամակ է գրում։ Այդ նամակը պարզ է տալիս նրա հեղինակի հոգեկան խռովքի ամբողջ խորությունը։

«... Մենք մոտեցել ենք սահմանադրական դրամայի հան-

գուցալուծմանը։ Հեղափոխությունն ավելի արագ տեմպով կընթանա, եթե չգլորվի ռազմական ու դիկտատորական բռնակալության անդունդը։

Այն դրության մեջ, որ մենք գտնվում ենք, ազատության բարեկամները չեն կարող ո՛չ կանխատեսել դեպքերը, ո՛չ ղեկավարել դրանք։ Թվում է, Ֆրանսիայի ճակատագիրը նրան թողնում է խարդավանքների ու պատահականությունների կամքին։ Մեր սփոփանքը կարող են լինել Փարիզում և շատ դեպարտամենտներում հասարակական ոգու ուժը և մեր գործի արդարությունը...»։

Բյուիսարին նամակն ավելի ուշ ուղարկվեց։ Այն անթվագիր էր, շատ համառոտ, գրված ընդհատվող ձեռագրով։ Այդ նամակում կան այնպիսի մտքեր, որոնք նման են Կուտոնին ուղարկված նամակի մտքերին։

«... Թող մեզ բոլորիս վիճակվի զոհվել մայրաքաղաքում, բայց դրանից առաջ մենք կգործադրենք ամենահուսահատական միջոցներ։ Նախապատրաստվում են այնպիսի դեպքեր, որոնց բնույթը կանխատեսել դժվար է։

Ցտեսություն, թերևս, մնաք բարով»։

Այդ ժլատ խոսքերում ներքին զարմանալի հակասություն կա։

Մի կողմից, Ռոբեսպիերը տեսնում է մայրաքաղաքի և գավառների ժողովրդի համոզվածությունը, սկսած գործի արդարությունը, հավատում է սեկցիաների վճռականությանն ու իմաստությանը, խոսում է ծայրահեղ միջոցների մասին, որ պատրաստ են գործադրելու դեմոկրատները, այսինքն՝ կարծես թե հաջողությանը չի կասկածում։

Մյուս կողմից, նա հայտարարում է, որ գալիք դեպքերի բնույթը կանխատեսել դժվար է, որ դեմոկրատիայի առաջնորդներն այդ դեպքերը ղեկավարել չեն կարող, որ խարդավանքներից ու պատահականություններից երաշխիքներ չկան, որ հեղափոխությունը կարող է գլորվել «ռազմական ու դիկտատորական բռնակալության անդունդը»։

Այդ հակասությունները միանգամայն բացատրելի են։ Չի կարելի մոռանալ, որ Ռոբեսպիերը ելնում էր միաժամանակ ներքին և արտաքին պատերազմ մղելու անհնարինությու-

նից։ Իր ժամանակին նա ժողովրդին կոչ էր անում ներքին թշնամուն ջախջախելու, այն հաշվով, որ նրա դեմ հաղթանակ տանելուց հետո ժողովուրդն արտաքին թշնամիով զբաղվեր։ Այդպես չստացվեց։ Պատերազմն սկսվեց։ Այժմ, Անկաշառելիի կարծիքով, հարկավոր էր ամեն ինչ նվիրել նրա շուտափույթ ավարտմանն այն հաշվով, որ հետո, մասսաներին ազատելով, հարված հասցնեին ներքին հակահեղափոխությանը։ Գործողությունների ընթացքում պետք է թշնամի գեներալներին մեջտեղից վերացնել, բանակն ամրապնդել, գործադիր իշխանությունը վնասազերծել. այդ ամենը միասին վերցրած կնախապատրաստի միապետության տապալումը և կապահովի վճռական հաղթանակը։

Բայց դեպքերը շատ արագ զարգացան, Ռորեսպիերի պլաններից առաջ անցնելով։ Ժողովուրդը տեսնում էր, որ առանց միապետությունը տապալելու ինքը ռազմաճակատներում բեկում ձեռք չի բերի։ Միապետությունը, իր կողմից, իր պլանների իրականացումն արագացնելով, միտք չուներ սպասել մինչև պատերազմի վերջանալը։ Եվ ահա կողմերը ձգտում էին արյունոտ պայքար սկսել այն ժամանակ, երբ ինտերվենտները հարձակվում էին, երբ խուսավարար գեներալները հայրենիքին դավաճանում էին, երբ իշխանությունը սեակցիոն մինիստրների ձեռքում էր գտնվում, իսկ Ասամբլեան արքունիքի գարշապարի տակ էր։ Հենց այդ ամենն էլ առաջացնում էր Անկաշառելիի ծանր կասկածները։ Նա հավատում էր ժողովրդին, բայց նրան լավ չէր ճանաչում։ Նա տեսնում էր թշնամու ուժերը և մինչև վերջը վստահ չէր հեղափոխության ուժերին։ Նա հեռուն ավելի լավ էր տեսնում, քան մոտիկը, և երբ հարկավոր էր լինում շտապ որոշում ընդունել, նա հաճախ շփոթված կանգ էր առնում։ Այդ էր նրա թուլությունը։ Հենց այդ թուլությունը նկատի ուներ Մարատը, երբ գրում էր Ռորեսպիերի հետ տեղի ունեցած զրույցներից մեկի մասին։

«... Այդ հանդիպումը հաստատեց իմ այն կարծիքը, որ նրա մեջ իմաստուն օրենսդրի լուսավորյալ մտքի հետ զուգակցվում էին իսկական հայրենասերի ամբողջականությունն ու անկաշառելիությունը, բայց որ նա հավասարապես չուներ

պետական գործի համար անհրաժեշտ ո՛չ հայացքների լայնություն, ո՛չ խիզախություն»։

Բնորոշումը խիստ է, ոչ բոլորովին արդարամիտ, բայց մի՞թե այն ճշմարտության բաժին չունի։ Արդյոք ժողովրդի Բարեկամը մի քիչ ավելի շատ ու խորը չէ՞ր տեսնում, քան Անկաշառելիի մնացած զինակիցները...»։

Ռոբեսպիերն ապստամբության գործնական նախապատրաստմանը չէր մասնակցում։ Դրանով ուրիշ մարդիկ էին զբաղվում։ Յակոբինականներն իրենց առաջնորդին պահպանում էին ապագայի համար և չէին ուզում նրան վտանգավոր, արյունոտ գործի մեջ ներգրավել։

Բայց և այնպես այդ ժամանակաշրջանում նա շատ բան արեց։ Առաջ նայելով, նա մտածում էր այն մասին, թե հաղթանակից հետո ինչպես պետք է վարվել։ Այդ պրոբլեմին նվիրվեց Յակոբինյան ակումբում հուլիսի 29-ին նրա արտասանած ճառը։

Ռոբեսպիերը նշում էր, որ հեղափոխությունն ավարտելու համար թագավորին տապալելը բավական չէ։ Նա իր ունկընդիրների ուշադրությունը դարձնում էր Օրենսդիր ժողովի վրա։ Ի՞նչ է այդ, եթե ոչ քաղաքական ատավիզմ։ Այն ընտրվել է ակտիվ քաղաքացիների կողմից, ցենզային սիստեմով, ժողովրդի հիմնական զանգվածի մեկուսացման պայմաններում։ Եվ ահա արդյունքը՝ մշտական տարաբերումներ, տատանումներ, իսկ վերջին հաշվով՝ ժողովրդի գործի լիակատար դավաճանություն։ Ասամբլեան պետք է ժողովրդի համար օգտակար օրենքներ հրապարակի, իսկ իրականում այն զբաղվում է խուսավարումով ու ամբոխավարությամբ։ Այդ դրությունից դուրս գալու միայն մեկ միջոց կա։ Հաղթանակից հետո պետք է հրավիրել ժողովրդին, այս անգամ ամբողջ ժողովրդին, առանց նրան «ակտիվ» և «պասիվ» քաղաքացիների բաժանելու։ Ժողովուրդը պետք է իր ճակատագիրն ինքը որոշի, ընտրելով Ազգային Կոնվենտ, որը կզբաղվի նոր սահմանադրության մշակմամբ, որովհետև Ֆելյանների տիրապետության օրոք կազմված հին սահմանադրությունը ցույց է տվել իր կատարյալ անպետքությունը։

Այս էր յակոբինականների առաջնորդի նշած ծրագիրը։

Պատանի Ռոբեսպիեր

Ժան Ժակ Ռուսո

Այն աչքի էր ընկնում խորը կշռադատվածությամբ. նրան կյանքի կոչեցին հեղափոխության բոլոր նախընթաց փուլերի իրադարձությունները։

Օգոստոսի 3-ին հրապարակվեց ինտերվենտների բանակի հրամանատար Բրաունշվեյգի դուքսի հրովարտակը։ Հրովարտակը բացահայտում էր օտարերկրյա ներխուժման իսկական նպատակները։ Ավստրիայի կայսրի և Պրուսիայի թագավորի անունից հայտարարվում էր, որ միացյալ բանակները մտադիր են Ֆրանսիայում վերջ գնել տիրող անարխիային, վերականգնել «օրինական իշխանությունը» և պատժել «խռովարարներին»։ Եթե թագավորին և նրա ընտանիքին ամենափոքր իսկ վիրավորանք հասցվի, ապա Փարիզը քարուքանդ կարվի և ամբողջովին կավերվի... Լյուդովիկոս XVI-ը հենց այդպիսի հրովարտակ էր սպասում։ Արքունիքը հրճվում էր՝ այժմ վախեցած ժողովուրդը կսասանվի՝ և կենթարկվի՝։ Այժմ փարիզեցիները չե՞ն համարձակվի հակառակվել իրենց թագավորի կամքին։ Դրանք զուր հույսեր էին։ Հրովարտակը ժողովրդի ցասման պոռթկում առաջացրեց և միայն արագացրեց հանգուցալուծումը։

Հենց նույն օրը Պետիոնը Փարիզի կոմունայի պատգամավորների ուղեկցությամբ Ասամբլեայի դահլիճը մտավ։ Քաղաքագլուխը շփոթված էր։ Իբրև պաշտոնատար անձ նա ստիպված էր կարդալու քառասունյոթ սեկցիաների հայտարարությունը։

— «Գործադիր իշխանության ղեկավարը հակահեղափոխական շղթայի առաջին օղակն է,— կարդում էր Պետիոնը։— Նա մասնակցում է Պիլնիցում ծավալվող դավադրություններին, որոնց մասին նա այնպես ուշ հայտնեց մեզ։ Նրա անունը մի կովախնձոր է ժողովրդի և իշխանությունների միջև, զինվորների և գեներալների միջև։ Նա իր շահերը բաժանում է ժողովրդի շահերից։ Քանի դեռ մեզ մոտ այդպիսի թագավոր լինի, ազատությունը չի կարող ամրապնդվել, իսկ մենք ուզում ենք ազատ լինել... Լյուդովիկոս XVI-ը շարունակ վկայակոչում է սահմանադրությունը. մենք նույնպես կվկայակոչենք այն. մենք պահանջում ենք նրան տապալել»։

Ասամբլեան որոշեց այդ հանրագիրը հանձնել իր կոմիտեներից մեկին, այսինքն՝ մոռացության մատնել։ Հանգըստացած ցաղաքաղությունը հոգոց հանելով, որոշեց, թե բանը որևէ կերպ ինկարդավորվի։ Բայց ժողովուրդն արդեն վաղուց օրենսգիրքների վրա հույս չէր դնում. հանրագիրը միայն ցուցադրական մի փաստաթուղթ էր։ Սեկցիաները բացահայտորեն պատրաստվում էին ապստամբություն սկսել։

Իսկ օգոստոսի նույն 3-ի երեկոյան և գիշերը բնությունն ասես ուզեց նյութել այն գործերի նախերգը, որ մարդիկ կատարեցին մի քանի օր հետո։

Փարիզի վրա անսպասելիորեն հավաքվեցին պղնձակարմիր ամպեր։ Անտանելի տոթ էր, երկինքը այնքան չարագուշակ տեսք ուներ, որ բնակիչներն շտապում էին փակել տների ու խանութների լուսամուտները։ Կեսգիշերվա մոտերքը հանչարծ սարսափելի մրրիկ բարձրացավ։ Այն պոկում-տանում էր ծխնելույզները, տանիքները, ցանկապատերը։ Կայծակը պատառոտում էր երկինքը, որտեղ թնդանոթաձգության նման գոռգոռում։ Փողոցները վայրկենապես լցվեցին ոռնացող հեղեղներով, որոնք ուշացած հետիոտներին սրբեցին տարան։ Այդ սոսկալի գիշերը մոտ երկու տասնյակ մարդ կործանվեցին։

Եվ ահա այն ժամանակ, երբ երկինք ու երկիր իրար էին խառնվել, իսկ ջուրը և կրակը կատաղի մենամարտությամբ միմյանցից իրենց զոհերն էին խլում, լսվեց երգեցողության հեռավոր մի ձայն։ Այն գալիս էր Պալե-Ռոյալից։ Երգի ձայնն աստիճանաբար ավելի ու ավելի բարձրանում էր։ Քամու սուլոցը չէր կարողանում երգի մեղեդին խլացնել, փոթորկի աղմուկը չէր կարող ծածկել մի քանի տասնյակ երիտասարդ ձայներ։

«Հառա՜ջ, զավակներ սիրասուն հայրենիքի, օրն է գալիս ձեր փառքի...»

Ձեռք ձեռքի տված և ծովային լապտերներով զինված մի խումբ մարդիկ հեղեղը կտրելով առաջ էին գնում։ Թվում էր, թե նրանց խիզախությունը մարտահրավեր էր նետում տարերքի մոլեգնությանը։ Եվ փարիզեցիները, փոթորիկը մոռացած, լսում էին անսովոր երգիչներին։

Դա Փարիզ եկած Մարսելցի ֆեդերատների շրջանակներից մեկն էր, և այն երդում էր հեղափոխության հիմնը դարձած «Մարսելիեզը»։

ԳԼՈՒԽ 5

ԱՇԽԱՐՀԻ ԲՌՆԱԿԱԼՆԵՐ, ԴՈՂԱՑԵԳ

Օգոստոսի 4-ին Դյուպլեի տանն ամբողջ օրը անհանգստություն էր տիրում։ Գալիս ու գնում էին ինչ-որ մարդիկ։ Պանիսը շարունակ բարձրանում էր Անկաշառելիի մոտ։ Երբ Մաքսիմիլիանը գուրս եկավ ճաշելու, տիկին Դյուպլեն իր փորձառու հայացքով իսկույն նկատեց, որ ոչ ամեն ինչ է բարեհաջող։ Նրա կենվորն արտակարգ հուզված է և հարցերին անպատեհ պատասխաններ է տալիս։ Ճաշից հետո մի քանի ժամ ամեն ինչ կարծես հանդարտվեց։ Իսկ հետո աներևակայելի աղմուկ բարձրացավ։ Դռները շրխկացնում էին, տասնյակ ոտքեր թխկթխկացնում միջանցքում, մի քանի ձայներ խոսում միաժամանակ։ Տիկին Դյուպլեն, իր սենյակից դուրս վազելով, ականջ դրեց։ Այո, այդ աղմուկն իր երկրորդ տնվորի, Սահմանագիր ժողովի նախկին դեպուտատ, մսյո Անտուանի մոտ է։ Տիկին Դյուպլեն անհամեմատ ավելի բան գիտեր, քան նրանք բոլորը կարծում էին։ Նրան քաջ հայտնի էր, որ մսյո Անտուանը պատրաստվող ապստամբության կազմակերպիչների շրջանում կարևոր դեր է խաղում։ Մի՞թե այսօր նրա մոտ հավաքվում է ապստամբության ամբողջ կոմիտեն։ Դա սարսափելի կրքերը։ Չէ՞ որ նրանք կարող են Անկաշառելիին վարկաբեկել։

Կինն ականջ է դնում։ Դուռը շրխկաց վերջին անգամ։ Բայց աղմուկը չի դադարում։ Նրանք գոռգոռում են, բռունցքով թրխկ-թրխկացնում սեղանին։ Հո կահույքը չե՞ն ջարդում։ Աստված իմ, ի՞նչ է լինելու...։ Ի՞նչ սոսկալի ժամանակ է։ Արդեն մի քանի օր է, որ բոլորովին հանգիստ չկա։ Որքա՞ն է աղմկում հենց միայն այդ Դեմուլենը։ Ահա այժմ էլ ինքը պարզորոշ լսում է նրա ձայնը։

Տիկին Դյուպլեն գլուխը շրջում է դեպի հակառակ կողմը։

Իսկ նրա, մյուսի մոտ ամեն ինչ լուռ է։ Երբեմն մեղմ ճռռոց է լսվում։ Ինքը գիտի, որ դա Անկաշառելին է իր փոքրիկ սենյակում անկյունից անկյուն անցուդարձ անում։ Բայց նա սենյակից դուրս չի գալիս։ Եվ դուրս էլ չի գա։ Եվ լավ կանի։

Սոսկալի մի ճիչ ընդհատեց պատվարժան տիկնոջ խորհրդածությունները։ Նրանք բոլորովին խելագարվե՛լ են։ Նրանք նավահանգստի կեռաբեռնակիրների նման գոռգոռում են։ Մի՞թե չի կարելի մի քիչ կամաց խոսել։

Տանտիրուհին վազելով մոտենում է մսյո Անտուանի դռանը և բախում այն։ Վայրկենապես ամեն ինչ լռում է, և հենց Անտուանը դուռը մի քիչ բաց է անում։

— Խելագարնե՛ր,— ֆշշացնում է տիկին Դյուպլենն։—Դուք ի՞նչ է, ուզում եք Ռորեսպիերին բոլորովի՞ն կործանել։

Անտուանը նայում է անտարբեր հայացքով։ Հետո հասկանում է։ Նրա գեմքը խիստ արտահայտություն է ստանում։

— Ռորեսպիերի՞ն։ Նրան ո՞վ է սպառնում։ Մի՛ անհանդգստացեք։ Դե, եթե որևէ մեկն էլ սպանվի, ապա, համենայն դեպս, այդ նա չի լինի...

Դուռը կոպիտ կերպով շրխկալով փակվում է Անկաշառելիի հոգատար պահապանուհու քթի առաջ։

Այդ երեկո Սենտ-Օնորե փողոցի № 366 տանը կարևոր մի որոշում ընդունվեց։ Թեժ վիճաբանություններից հետո վերջնականապես հաստատեցին գործողությունների ընդհանուր պլանը։ Ապստամբությունը նշանակվեց 1792 թվականի օգոստոսի 10-ին։

Մայրաքաղաքը մեծ եռանդով պատրաստվում էր գրոհելու դարավոր պատվարների վրա։

Սեկցիաների ժողովները միմյանց ետևից հայտարարում էին, որ այլևս Լյուդովիկոս XVI-ին թագավոր չեն ճանաչում։ Օգոստոսի 5-ին այդ որոշումն ընդունեց սեկցիաների երկու երրորդական մասը։ Փարիզի դեմոկրատական բոլոր ակումբներն ու կազմակերպությունները բացահայտորեն ապստամբության կոչ էին անում։

Պատրաստվում էին նաև ֆեդերատները։ Մարսելցիները

հրացանները մաքրում էին և վառոդի պաշար տեսնում։ Զորանոցները ամրոցներ էին դառնում։

Ժիրոնդիստները զուր էին դեսուդեն ընկնում։ Ժողովն իզուր էր փորձում հզոր պոռթկումը կասեցնել։ Բրիսոն զուր էր վայնասուն բարձրացնում, պահանջելով Անտուանին և Ռոբեսպիերին պատասխանատվության ենթարկել։

Միապետության վախճանը մոտենում էր։

Ժերոմ Պետիոնը՝ Փարիզի քաղաքագլուխը, տանջալից պահեր էր ապրում։ Չէ՞ որ, թվում է, դեռ բոլորովին վերջերս ամեն ինչ այնպես լա՞վ էր։ Նա տեղափոխվեց շքեղ մի առանձնատուն և ուզեց ապրել, ինչպես մի կարգին մարդ, իրեն ոչինչ չմերժելով։ Նա ուներ սիրող կին, հիանալի բարեկամներ։ Ժողովուրդը նրան պաշտում էր, իսկ այն կուսակցությունը, որի հետ նա կապեց իր ճակատագիրը, հաջողություն է ձեռք բերում։ Բոլորը նրան ամենահիանալի և ամենակարգին մարդ էին համարում։

Եվ հանկարծ՝ վերջ ամեն ինչի...

Այսօր արդեն Պետիոնին չեն ուրախացնում ո՛չ տաք լոկանքը, ո՛չ հյուրասենյակի առաստաղի ծեփազարդարանքները, ո՛չ կնոջ փազաքշանքները։ Նրան այլևս ոչինչ չի ուրախացնում։ Նա իր առջև բացատարած անգունդ է տեսնում։

Նա այդ վերջին օրերին էլ ի՛նչ ասես, որ չարեց, էլ ի՛նչ յանքեր չթափեց։ Նա գնում էր սեկցիաների ժողովները և ապացուցում շտապողականության անխելացիությունը։ Նա պարզաբանում էր, համոզում, աղերսում, վերջապես, սպառնում։

Անհասկացող ժողովուրդը նրան լսել չէր ցանկանում։ Նրան, որին բոլորովին վերջերս ծաղիկնե՛ր էին պարգևում, որին ձեռքերի վրա՛ էին տանում։ Այս ի՞նչ է։ Ընդհանուր կատաղությո՞ն։ Թե՞ կուրություն։ Թե՞ չարաղետ անձանց ագիտացիա...

Ագիտացիա՞... Եվ Պետիոնը հանկարծ հիշում է իր հին գինակցի՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի մասին։ Ահա թե նա ո՛ւմ է մոռացել, ահա թե ո՛ւմ մոտ պետք է գնալ։ Այժմ Ռոբեսպիերն Անկաշառելի անուն է ստացել, և ժողովուրդը լսում է

Նրա ամեն մի խոսքը։ Ռոբեսպիերն զգույշ, խելացի մարդ է։ Նա կարող է շատ բան ուղղել։ Նա կարող է փրկել Պետիոնի ապագան, և՛ նրա համբավը, և՛ նրա դրությունը։ Ճիշտ է, վերջին ժամանակներս նրանք միմյանց նկատմամբ մի քիչ անտարբեր են դարձել, բայց այդ ոչինչ չի նշանակում։ Ռոբեսպիերը չի կարող իրեն չհասկանալ։ Նա, իբրև խելացի մարդ, կհամաձայնի իր տեսակետի հետ։ Եվ նա, անշուշտ, այդ անիծյալ խռովությունը կդադարեցնի։

Օգոստոսի 7-ին Անկաշառելին շատ աշխատանք ուներ։ Նա ավարտում էր «Մահմանագրության պաշտպան»-ի համար պատրաստվող մի հոդված և կշռադատում էր այն ճառի մանրամասնությունները, որ պատրաստվում էր յակոբինականների մոտ արտասանելու։ Նա իր մտքերի մեջ խորասուզված, մի կապոց դրոտած թղթեր աչքի էր անցկացնում, երբ նրան հայտնեցին, որ եկել է Պետիոնը։ Ռոբեսպիերն ուրախ էր իր հին բարեկամի գալուն։ Նա արագ գրասեղանի ետևից վեր թռավ և թափով գրկեց ներս մտած Պետիոնին։

Որքա՜ն երկար ժամանակ նրանք միմյանց չեն հանդիպել։ Իսկ չէ՞ որ մի ժամանակ նրանք անբաժան ընկերներ էին թվում։

Առաջին ողջույններից հետո քաղաքագլուխն անցավ իր այցելության նպատակին։ Նա հանգամանորեն շարադրեց իր տեսակետը։ Այո, նա իսկապես ժողովում կարգացել է քառասունյոթ սեկցիաների ուղերձը, թեև չի կարելի ասել, որ այդ ուղերձն իրեն առանձնապես դուր է եկել։ Սակայն այժմ կարծես չեն ուզում սպասել նրա արդյունքներին։ Դա առնվազն անզգուշություն է։ Նրա բարեկամ Ռոբեսպիերը շարունակ օրինականության պահապան է եղել։ Նա, իհարկե, կհամաձայնի այն բանի հետ, թե զինված ապստամբությունը որքան վտանգավոր ու անժամանակ է։ Նա կօգնի, որ ապստամբությունը հետաձգվի այնքան ժամանակ, մինչև որ Ռամբլեան թագավորի հարցը քննարկի։

Մաքսիմիլիանը ուշադիր լսեց հյուրի երկարաշունչ մենախոսությունը։ Նա ոչ մի անգամ նրան չընդհատեց։ Նա Պետիոնը վերջացնելուց հետո երկար ժամանակ լռեց։ Վերջապես, քա-

ղաքաղլխի վրա իր հոգնած հայացքը բարձրացնելով, նա կամաց ասաց.

— Բարեկամս, ես ձեզ հետ համաձայնվել չեմ կարող։ Ժողովուրդն իմաստուն է, բարի և արդար։ Մի՞թե դուք, հին հանրապետականդ, որ մի ժամանակ այնպես հմտորեն իմ միապետական պատրանքները ջարդուփշուր արեցիք, մի՞թե դուք, որ թագավորի փախուստի օրերին ցնծում էիք, այժմ կցանկանայիք հեղափոխությունը կանգնեցնել...

Պետիոնը կարմրեց և ունքերը ցնցեց։

— Դուք ինձ չհասկացաք։ Ես ուզում եմ կանգնեցնել ոչ թե հեղափոխությունը, այլ անիմաստ ու վտանգավոր խռովությունը։

— Խռովությո՞ւն... Անիմա՞ստ և վտանգավո՞ր։ Եվ այդ ասում եք դո՞ւք, իմ Պետիոն, դո՞ւք, որ այնքան տարիներ պայքարում էիք ժողովրդի իրավունքների համար։ Մի՞թե դուք չեք տեսնում, որ այժմ ուրիշ ելք չկա։ Մի՞թե ձեզ համար պարզ չէ, որ Ասամբլեան, որի վրա դուք այդպիսի հույսեր եք դնում, հիմնովին փտել է և արքունիքի հավելուկ դարձել։

Պետիոնը համբերությունը կորցնում էր։ Նա նրա համար չի եկել այս խղճուկ բնակարանը, նրա համար չի մտել այս խավար ձեղնասրահը, որ լսի ժողովրդի մասին այդ ամբողջ դատարկաբանությունը։ Նա այդ ամենն ինքն էլ կարող էր որևէ ժողովում բարբառել։ Մի՞թե Ռոբեսպիերն այնքան հիմար է, որ գլխավորը չի հասկանում։ Թե՞ նա ձևանում է...

— Սիրելիս,— դիմեց նա Ռոբեսպիերին, իրեն հազիվ զսպելով,— ես ձեզ հետ չեմ վիճի։ Այդ ամենը ճիշտ է, այդ ամենը լավ է՝ ժողովուրդ, իրավունքներ, արդարություն և այլն և այլն... Բայց հասկացեք դուք, հասկացեք անվիճելի ճշմարտությունը. եթե այդ խելագարությունն անհապաղորեն չդադարեցվի, այն ամեն ինչ կհեղեղի, ամեն ինչ կկործանի... Կոկովի թագավորի տապալումից, իսկ կվերջանա սեփականության ոչնչացումով... Մի մտածեցեք, մենք ձեզ հետ այդ սանձարձակ ամբոխի ինչի՛ն պետք կլինենք, որը միայն կողոպուտների ու հրդեհների մասին է մտածում։ Մտածեցե՛ք դուք, ղկաստամիտ և խելացի մարդ։

Ռոբեսպիերը կանգնել է, ձեռքերը կրծքին խաչած, և ու-

շաղիր նայում է իրեն կորցրած Պետիոնին։ Ահա թե ի՛նչ։ Մի՞թե այդ ճիշտ է։ Մի՞թե բոլոր ազնիվ ու օրինավոր մարդիկ ազնվությունն ու օրինավորությունը կորցնում են, հենց որ նրանց տիրում է իրենց հարստությունն ու դիրքը կորցնելու վախը։ Որտե՞ղ, որտե՞ղ է ինքը լսել հենց նույն խոսքերը, որ այժմ ասաց Պետիոնը...

Հիշե՞ց։ Սահմանադիր ժողովի ամբիոնից։ Մեկ տարի առաջ գրեթե նույն խոսքերն ասում էր Բարնավը, որի դեմ այն ժամանակ մարտնչում էին ինքը և Պետիոնը միասին...

Արժե՞ արդյոք խոսակցությունը շարունակել։ Չէ՞ որ դա մի պայքար է գոյություն չունեցող խոշընդոտների դեմ։ Եվ, նայելով ուղիղ Պետիոնի աչքերի մեջ, Ռոբեսպիերը դանդաղորեն ու պարզորոշ ասում է.

— Բարեկամս, ըստ երևույթին, մենք ձեզ հետ այսօր տարբեր տեսակետներ ունենք, և դժվար թե հնարավոր է դրանք հաշտեցնել։ Բայց ուզում եմ ձեզ միայն մեկ բան ասել։ Եթե ես նույնիսկ ձգտեի ձեզ օգնել, անզոր կլինեի...

Ռոբեսպիերը մոտենում է լուսամուտին։

— Նայեցեք այդ բազմությանը։ Նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ դա գրասենյակային ծառայող է, օրավարձու բանվոր, արհեստավոր, խանութպան։ Բայց նրանք բոլորը միասին կազմում են մեծազոր ժողովուրդը։ Եվ դրանք անմիտ խոսքեր չեն։ Դրանք կործանված Բաստիլն են, թուլացած բռնապետությունը, դրանք մենք ենք ձեզ հետ և հեղափոխության ստեղծած հազարավոր ուրիշները։ Եվ նկատի ունեցեք՝ ով ժողովրդի հետ ընթանում է միևնույն ճանապարհով և նրան օգնում, ում ժողովուրդը վստահում է և ում պատգամավոր է ուղարկում, նա կարող է լինել Ասամբլեայի դեպուտատ, Փարիզի քաղաքագլուխ, գեներալ կամ մինիստր։ Իսկ ով ժողովրդի վստահությունը կորցնում է,— Անկաշառելիի դեմքը հանկարծ խիստ արտահայտություն է ստանում, իսկ նրա ձայնի մեջ պողպատյա երանգներ են լսվում,— նա կճզմվի ու կոշընչացվի, ինչպես էլ որ նրան անվանեին՝ Լյուդովիկոս, Ռոբեսպիեր, թե Պետիոն...

Զարմացած Պետիոնը աչքերը չորս արած նայում է այն մարդուն, որը շարունակ նրան այնպես հասկանալի էր թվում-

և որին նա, ինչպես երևում է, երբեք չի հասկացել։ Նա սարսափում է։ Կարճատև դադարից հետո նա հանում է ժամացույցը։

... Հին զինակիցները հրաժեշտ են տալիս բարյացակամության բոլոր ակնհայտ նշաններով, բայց հենց որ բաժանվում են, յուրաքանչյուրը խորասուզվում է իր մտքերի մեջ։

Եկավ օգոստոսի 9-ը։ Փարիզի քաղաքագլուխը տեսնում է, որ ինքը չի կարող որևէ բան ձեռնարկել։ Ամեն ինչ արվում էր առանց նրա գիտության և հակառակ նրա ցանկության։ Այսօր երեկոյան լրանում էր սեկցիաների վերջնագրի ժամկետը։ Ինչպե՞ս վարվել։ Թերևս, փորձել ակումբների վրա ճնշո՞ւմ գործադրել... Նա կանչեց սեկցիաների մի քանի ղեկավարների՝ նրանց հանդիմանություն անելու։ Երբ եկան Շաբոն, տիոնվիլցի Մերլենը և Բազիրը, նա տեղից վեր կացավ, ամբարտավան տեսք ընդունեց և խիստ պաշտոնական ձևով հարցրեց.

— Դե, ի՞նչ կասեք։ Դուք այնուամենայնիվ մտադի՞ր եք անխոհեմորեն գործել։ Ուշքի՛ եկեք։ Ժիրոնդիստները Բրիսոյի միջոցով ինձ խոստացել են, որ թագավորը գահընկեց կարվի։ Ես խոսվություն թույլ չեմ տա։ Պետք է սպասել, թե ժողովն ինչ կասի։

— Ձեզ խաբում են,— պատասխանեց Շաբոն։ Ժողովը ժողովրդին փրկել չի կարող, ասենք, ձեր ժիրոնդիստ բարեկամներն այդ մասին չեն էլ մտածում։ Այսօր երեկոյան արվարձաններն ահազանգ կխփեն։

— Այդ դեպքում ես ձեզ կալանավորում եմ,— չոր-չոր ասաց Պետիոնը։ Ներկա գտնվողները ուրախ հայացքներ փոխանակեցին։

— Դուք ինքներդ կկալանավորվեք,— պատասխանեց Շաբոն և, քաղաքագլխին ծաղրանքով գլուխ տալով, իր ուղեկիցների հետ միասին սենյակից դուրս եկավ։

Ի՞նչ պետք էր անել։ Անզոր կատաղությունից լա՞ց լինել։ Ժողո՞վ գնալ։ Թե՞ արքունիք... Ուր էլ որ գնար, նա այժմ ամենուրեք պետք է դիտորդի դերում հանդես գար, նա՝ Փարիզի քաղաքագլուխը, որը դեռ մի քանի օր առաջ իրեն այնպիսի իշխանությամբ օժտված մարդ էր համարում...

Քամիլ Դեմուլենը մի քանի մարսելցիների ճաշի էր հրավիրել։ Բոլորը շատ ուրախ տրամադրության մեջ էին։ Ընդամենը մեկ ամիս առաջ Քամիլը երջանիկ հայր էր դարձել։ Նա իր սղային կոչեց Հորացիո և հրաժարվեց նրան կնքելուց։ Այսօր նա ցանկանում էր ճաշել անպայման իր որդու ընկերակցությամբ։ Լյուսիլը մանկիկին պահում էր իր ծնկներին, իսկ Քամիլը ամեն անգամ, մի կում գինի խմելուց առաջ, ինչպիսով երիտասարդ մոր զայրույթին, բաժակը մոտեցնում էր պոտիկ վարդագույն շրթնիկներին։ Բանը վերջացավ նրանով, որ երեխան սկսեց ճչալով լալ, և նրան օրորոցի մեջ դրեցին։

Նրա մի քանի շիշ խմեցին, էլ ավելի ուրախ տրամադրություն առաջացավ։ Քամիլը փորձում էր ինչ-որ բան արտասանել։ Հյուրերն աղմկում էին։ Լյուսիլը խելագարի նման քրքջում էր և ամենևին իրեն զսպել չէր կարողանում։ Երբ գինովությունը մի քիչ անցավ, որոշեցին ամբողջ խմբով գնալ Դանտոնի մոտ։

Դանտոնը դարձել էր Դեմուլենի նոր կուռքը։ Դա կիկլոպի արտաքինով մի մարդ էր։ Կաղնու պես վիթխարահասակ, դրժոխքի ծնունդի պես զարհուրելի, նա փոփոխակի կերպով թվում էր մերթ դաժան, մերթ բարեհոգի։ Շատերը նրան հարբեցող, ցոփ, կորած մարդ էին համարում։ Իրականում Դանտոնը արտակարգ խելք և քաղաքական նուրբ հոտառություն ուներ։ Նա քիչ էր գրում, բայց չգերազանցված հռետոր էր։ Դեմուլենը Միրաբոյից հետո այդպիսի յուրօրինակ մարդու չէր հանդիպել։ Արդյոք նա կարո՞ղ էր գիտակցությունը կորցնելու չափ չսիրահարվել նրան...

Դանտոնն անկոչ հյուրերին սիրալիր կերպով դիմավորեց։ Նա վճռականությամբ համակված էր թվում։ Խոսում էին գիլոտինի և հաջորդ ցերեկվա մասին։ Շուտով պետք է ահազանգը հնչի։

Երեկոյան գնացին զբոսնելու։ Անհանգստացած Լյուսիլն աչքերը չորս արած նայում էր հեծելակներին, «Կեցցե՞ ժողովուրդը» բացականչող հասարակ մարդկանց, շարունակ ավելացող բազմությանը։ Սարսափը պատեց նրան։ Նա հիշեց իր ցերեկվա ծիծաղը և է՛լ ավելի վախեցավ։ Չէ՞ որ ասում են, թե անզուսպ ծիծաղելուց հետո անպայման արցունքներ են

թափում։ Եվ, սեղմվելով իր Քամիլին, նա իսկապես լացը հազիվ էր զսպում։

Երեկոյան ժամը 8-ի և 9-ի միջև սեկցիաներն սկսեցին հավաքվել։ Նիստերն անսովոր բնույթ ունեին։ Առաջին անգամ ամենուրեք ակտիվ քաղաքացիների հետ միասին մասնակցում էին նաև պասիվ քաղաքացիները։ Հրապարակեցին Պետիոնի նամակը, որով քաղաքագլուխը կոչ էր անում կարգ ու կանոն պահպանել։ Նամակը հաջողություն չունեցավ։

Ժամը 11-ին Քենզ-Վեն սեկցիան որոշեց «ընդհանուր գործը պաշտպանելու» համար ապստամբություն սկսել։ Սեկցիային պաշտպանեց Սենտ-Անտուանի արվարձանը։ Աստիճանաբար սկսեցին միանալ նաև մյուս շրջանները։ Ապստամբությունը ղեկավարելու համար որոշվեց յուրաքանչյուր սեկցիայից երեք կոմիսար ընտրել։ Ընտրվածների թվում էին Բիլո-Վարենը, Էբերը, Ռոսինյոլը և մի շարք ուրիշ նշանավոր հայրենասերներ։ Կոմիսարները պետք է հավաքվեին քաղաքապետարանի շենքում։

Կոմիսարների հրամանին չսպասելով, ֆրանսիական թատրոնի սեկցիայի քաղաքացիները ժամը 12-ին մոտ ահազանգ խփեցին։ Իսկույնևեթ ահազանգը հնչեց ամբողջ Սենտ-Անտուանի արվարձանում։

Կեսգիշերին Գրևյան հրապարակում հայտնվեցին քսանութ սեկցիաների ներկայացուցիչները։ Նրանք ազգային գվարդիականների շարքերի միջով անցնելով, քաղաքապետարանի աստիճաններով վեր բարձրացան։ Հին մունիցիպալիտետն ըստիպված եղավ իր տեղը նրանց զիջելու։ Նախկին Կոմունայի որոշ անդամներ, այդ թվում Դանտոնը, միացան նոր ընտրված անդամներին։ Այսպես օգոստոսի 10-ին առաջացավ Փարիզի Հեղափոխական կոմունան։

Հենց այն պահին, երբ Քենզ-Վեն սեկցիան իր կոչով ժողովրդին դիմեց, քաղաքագլուխ Պետիոնը, վերջապես, որոշում ընդունեց։ Նա կգնա արքունիք և կիմանա, թե «վերնախավերի շրջանում» ինչպիսի տրամադրություններ կան, իսկ հետո կերևա, թե ինչ պետք է անել։

Կարուսելի հրապարակին մոտենալով, քաղաքագլուխը

ուշադրություն դարձրեց կամուրջի մոտ և Տյուիլրիի պարիսպների երկայնությամբ տեղավորված հսկայական թվով զորքերի վրա։ Այստեղ հավաքվել էին ազգային գվարդիականներ, հետևակ և հեծյալ ժանդարմներ, շվեյցարական ընտիր զորամասեր։ Տասնմեկ հրանոթ էին բերում։ Պալատի դարպասների մոտ խոնվել էին «նախկինները». ատլասե բաճկոնակները, սպիտակ մետաքսե գուլպաները, ցուպերը մերթ ընդ մերթ երևում էին այս ու այնտեղ, հիշեցնելով անցած ժամանակների մասին։

Երբ քաղաքագլուխն անցնում էր սպաների ու պալատականների բազմության միջով, նա սարսուռ զգաց։ Նրան կատաղի հայացքներով էին ուղեկցում։ Թագավորը նրան խստորեն գիմավորեց։

— Ասում են, քաղաքում մեծ հուզո՞ւմ է սկսվել։

Մոտեցավ ազգային գվարդիայի գլխավոր հրամանատար, սահմանադրական և արքունիքի կողմնակից Մանդան։

— Ոչի՛նչ։ Ես ամեն միջոց ձեռք եմ առել։ Խռովարարներին ոզբալի ճակատագիր է սպասում։

Շոգը պատճառ բռնելով, Պետիոնը հրաժեշտ տվեց և իջավ զբոսայգի։ Քաղաքագլխի դեմքն իսկապես պատել էր քրտինքը, բայց դա սառը քրտինք էր... Այժմ նա պարզորեն հասկանում էր, որ ինքը նստած է երկու աթոռի միջև։

Առավոտյան ժամը հինգի կեսն էր։ Հեղափոխական Կոմունան ժամանակ չէր կորցնում։ Նա Պետիոնին տնային կալանքի ենթարկեց և Սանտերին ապստամբների բանակի հրամանատար նշանակեց։ Նոր կամուրջից արագորեն հեռացրին արքունիքի հրամանով այնտեղ դրված հրանոթները։ Հետո բացատրություններ տալու համար հրավիրվեց Մանդան։ Հարկ եղավ հրավերը երկու անգամ կրկնել, բայց վերջ ի վերջո, խուսափելու հնարավորություն չունենալով, գլխավոր հրամանատարը եկավ քաղաքապետարան։ Նա ապշեց նոր անձնավորություններ տեսնելով։ Եվ իսկույն հասկացավ, որ ինքը կորած է։ Նրան հարցաքննեցին։ «Ինչո՞ւ պալատում պահազորը կրկնապատկվել է։ Ինչո՞ւ հրամայել եք հրանոթներ դնել։ Արքունիքն ի՞նչ մտադրություններ ունի»։ Նա մի կերպ փորձում էր արդարանալ և ամբողջ հանցանքը Պետիոնի վրա էր բարդում։

Դանտոնը դավաճանի համար մահ պահանջեց։ Այն պահին, երբ Մանդան պահակախմբի ուղեկցությամբ քաղաքապետարանի սանդղամուտքից ցած էր իջնում, Ռոսինյոլը դիմահար կրակոցով նրա գլուխը ջնջեց։

Արքունիքում ոչ ոք քնած չէր։ Միայն նորին մեծությունը, օրվա ընթացքում սաստիկ հոգնելով, իր ամբողջ զգեստավորությամբ ու կեղծամով բազմոցին պառկեց՝ մի քիչ նիրհելու։ Նրան երկար քնել չհաջողվեց։ Ժամը վեցի կեսին թագուհու համառ պահանջով նրան արթնացրին։ Թագավորը պետք է անձամբ ստուգի պահակախմբերը, հավատացնում էին պալատականները։ Այդպիսի զորատեսը զորքերին մի քիչ կքաջալերի։ Ինչ արած, թագավորն ստիպված վեր կացավ։ Միապետի զգեստը մի քիչ ճմրթվել էր, շքանշանները մի կողմ ծռվել, կեղծամը կոլոլված թեքվել, որի մի կողքից պուդրան բոլորովին թափվել էր։ Նա տնքտնքալով իջավ բակը։ Թրմբուկները զարկեցին, և լսվեցին «Կեցցե՞ թագավորը» բացականչություններ։

Լյուդովիկոսը փնթփնթաց մի քանի անկապ խոսքեր։

— Ասում են, նրանք այստեղ են գալիս... Ես չգիտեմ, թե նրանք ինչ են ուզում... Իմ գործը իմ բարի քաղաքացիների գործն է... Մենք նրանց անսասանորեն կդիմավորենք, ճիշտ չէ՞։

Շարքերի երկարությամբ նրա առաջ անցնելու զուգընթաց ողջույններն ավելի ու ավելի ալարկոտ էին դառնում և ի վերջո բոլորովին դադարեցին։ Եվ ահա հանկարծ լսվեցին «Կեցցե՞ ժողովուրդը» բարձրաձայն բացականչություններ։ Այդ գոռում էին հրետանավորները և Կարմիր խաչի գումարտակը։ Լյուդովիկոսը քար կտրած կանգնեց և սկսեց աչքերը արագ-արագ թարթել։ Հետո, սարսափած, նա արագորեն ետ գնաց։ Նրա հետևից լսվեցին «Կորչի՛ վետոն, կորչի՛ դավաճանը» բարձրաձայն բացականչություններ։

Երբ սփրթնած, հուսալքված թագավորը վերադարձավ պալատ, թագուհին, որ լուսամուտից ամեն ինչ տեսել էր, զայրույթից վառվելով, գիմեց պալատականներին։

— Ամեն ինչ կորավ, պարոնա՛յք։ Թագավորը մինչև իսկ

ամենաանշան վճռականություն չցուցաբերեց։ Զորատեսի այդ խղճուկ նմանակը մեզ ավելի շուտ վնաս տվեց, քան օգուտ։

Մարիա Անտուանետան չսխալվեց։ Շուտով ազգային գվարդիայի ամբողջ զորամասեր սկսեցին իրենց տեղերից հեռանալ։ Պալատականները, աշխատելով գործը շտկել, միայն օգնում էին պառակտմանը։ Ազնվազարմ անձինք իրենց լրկտիությամբ ու ոսկեզօծ կոստյումներով առաջացնում էին հասարակ գվարդիականների ատելությունն ու զայրույթը։

Գումարտակներից մեկին մոտեցավ ատլասե բաճկոնով ու սպիտակ գուլպաներով, անուշահոտությամբ օծված մի պրճնամոլ։

— Դե՛հ, պարոնայք ազգային գվարդիականներ, հասել է ձեր խիզախությունը ցույց տալու ժամը։

— Դրա համար մենք պատրաստ ենք,— պատասխանեց գումարտակի զայրացած հրամանատարը,— բայց մենք այդ խիզախությունը ցույց կտանք ոչ ձեր կողքին կռվելով։— Եվ կտրուկ շուռ գալով, սպան իր զինվորներին տարավ Կարուսելի հրապարակը։

Այդ ժամանակ մունիցիպալիտետի մի քանի անդամներ հրետանավորներին համոզում էին քաջարի լինել և աննահանջ կերպով կատարել իրենց պարտքը։ Հրետաձիգները մի կողմ քաշվեցին և սկսեցին երկնքին նայել, ձևացնելով, թե ոչինչ չեն լսում։ Նրանցից մեկը բարձրաձայն հոդոց հանելով, մոտեցավ հրանոթին, բռնկիչը հանեց, նրանից վառոդը դուրս թափեց և պատրույգը ոտքով տրորեց։

Միայն շվեյցարական վարձու զորքերն անխորտակելի պատի պես պաշտպան կանգնեցին, պատրաստվելով մեռնել իրենց խորթ գործի համար։

«Մարսելիեզի» հնչյունները սավառնում էին հրապարակի վրա։ Ֆեդերատներից հետո հայտնվեցին ժողովրդական մարտիկների առաջին ջոկատները։ Նրանք վատ էին զինված, բայց լի էին արիությամբ։ Նրանց ողջունում էին ազգային գվարդիականները և Տյուիլրիից հեռացած հրետաձիգները։ Մոտե-

ցան դարպասներին։ Նիզակների և հրացանի կոթերի հարվածների տակ դարպասներն սկսեցին ճարճատել։ Պահնորդներն սկսեցին ժողովրդի հետ բանակցել։

Այդ ժամանակ դեպարտամենտական իշխանության ներկայացուցիչ, Սահմանադիր ժողովի նախկին անդամ Ռեգերերը թագավորին համոզում էր պալատը թողնել և Օբենադիր ժողովի պաշտպանության տակ անցնել։

— Բայց ես չեմ տեսնում,—առարկում էր թագավորը,—որ խռովարարներն առանձնապես շատ լինեին։

— Ձերդ մեծություն, այնտեղ տասներկու հրանոթ է դրված, իսկ արվարձաններից ամբողջ բանակներ են դալիս։

Թագավորը շուտ եկավ դեպի Մարիա Անտուանետան։ Թագուհու դեմքը դալկա-կապտավուն գույն ուներ, իսկ աչքերի տակի կապույտները սևին էին տալիս։ Նա գլուխը բացասաբար տարուբերեց։

— Բայց, ձերդ մեծություն,— պնդում էր Ռեգերերը,— նկատի ունեցեք՝ շուտով ամբողջ Փարիզը այստեղ կդա։

Լյուդովիկոսը հանկարծ գլուխը բարձրացրեց, ակնապիշ նայեց Ռեգերերին և ասաց, դիմելով թագուհուն.

— Գնա՛նք։

Տյուիլրիի զբոսայգում զով էր, բայց արդեն զգացվում էր ամառվա շոգ ցերեկվա մոտեցումը։ Ժամը 7-ն էր։ Մի փոքր խումբ մարդիկ գնում էին պալատից ձիամարզարան տանող ծառուղով։ Խմբի առջևից գնում էր իր հավատարիմ պալատականներին ու շվեյցարացիներին լքած Լյուդովիկոսը։ Թագուհուն թևանցուկ արած տանում էր մինիստրներից մեկը։ Փոքրիկ թագաժառանգը, ուրախանալով, որ ազատություն է դուրս եկել, տերևները խփիտ է անում և գցում բոլորի ոտքերի տակ։ Թագավորը դիտում էր այդ զվարճությունը։

— Որքա՞ն շատ տերև կա,— հանկարծ ասաց նա։— Այս տարի տերևներն ինչպե՞ս շուտ սկսեցին թափվել։

Ձիամարզարան դալով, թագավորի ընտանիքը և մինիստրները տեղեր դբավեցին նախագահի բազկաթոռի կողքին։ Թագավորը դիմեց դեպուտատներին.

— Ես եկա այստեղ, որ զարհուրելի մի հանցագործություն

կանխեմ։ Ես կարծում եմ, որ կարող եմ անվտանգության մեջ լինել միայն ձեր շրջանում, պարոնայք։

Պատասխանեց այն առավոտյան նախագահող Վերնյոն.

— Ձերդ մեծություն, դուք կարող եք ապավինել Ազգային ժողովի հաստատակամությանը. նրա անդամները երդվել են մեռնել, պաշտպանելով ժողովրդի իրավունքները և սահմանադրական իշխանությունները։

Թագավորի գնալուց հետո պալատում ընկճված տրամադրություն էր տիրում։ Գնացին ազգային գվարդիայի ևս մի քանի գումարտակներ։ Ազնվականները լալիս էին անզոր զայրույթից։ Շվեյցարացիները տատանվում էին։ Էլ ո՞ւմ պետք էր պաշտպանել, եթե միապետը պալատից հեռացել է։ Բայց նրանց հրամանատարները վառվում էին «կեղտոտ խուժանին» վերջ տալու ցանկությամբ։

Այժմ ապստամբների ջոկատները դրավում էին ամբողջ հրապարակը։ Գալիս էին նոր օգնական ուժեր։ Ազգային գվարդիականները քայլում էին գավազաններով զինված մարդկանց կողքին։ Քաղքենիները և բանվորները, Մարսելի և Բրեստի ֆեդերատները, քաղաքամերձ բնակավայրերի և արվարձանների աղքատները՝ բոլորը ոգեշնչված էին միասնական մտքերով։ Դա անպարտելի մի բանակ էր։

Բայց ժողովուրդը բարյացակամորեն էր տրամադրված և, ըստ երևույթին, արյունահեղություն չէր ուզում։ Երբ բարապանը դարպասը բացեց, պաշարողները, իրենց նիզակներն ու հրացանները բարձր պահած, ողջունեցին շվեյցարացիներին, հրավիրելով, որ նրանք միանան իրենց։ Մի քանի զինվոր ողջույններին պատասխանեցին և ոկսեցին փամփուշտները դեն նետել։ Չորս զինվոր իրենց շարքերից հեռացան և վճռականորեն ուղղվեցին դեպի ապստամբները։ Թնդաց «ուռա»-ն։ Բայց այդ պահին վերին հարկաբաժիններից, որտեղ ամրացել էին ազնվականները, կրակոցներ լսվեցին, և ժողովրդի կողմն անցած երկու շվեյցարացի մեռած վայր ընկան։ Վայրկենական շփոթություն տիրեց։ Իսկ հետո առմուտքում կանգնած շվեյցարացիների տողանը սպաների հրամանով համազարկ տվեց։

Սալահատակը դիակներով ծածկվեց։ Համազարկերը հաջորդում էին միմյանց։ Շուտով և՛ բակը, և՛ հրապարակն ամայացան, միայն դիակույտեր էին երևում այս ու այնտեղ...

Պալատի պաշտպանները տոնում էին իրենց թեթև հաղթանակը։ Բայց ջախջախվել էր դյուրահավատ ժողովրդի առաջապահ ջոկատը միայն։ Արվարձանների հիմնական ուժերը պատրաստվում էին վճռական դրոհի անցնելու։

Զիամարզարանում ականջ էին դնում կրակոցներին... Բոլորին անհանգստացնում էր միևնույն միտքը՝ ինչո՞վ կվերջանա... Միապետությունն ի՞նչ ճակատագիր կունենա։ Միայն մի մարդ էր բոլորովին անխռով ու անտարբեր մնում։ Այդ մարդը հենց միապետն էր։ Այն մարտի թեժ պահին, որ նրան զրկեց իր թագից ու կյանքից, նա քաղց զգաց և պահանջեց, որ իրեն միրգ տան։ Նա մի հասած դեղձ ընտրեց։ Եվ ահա, նայելով զարմացած հայացքներին, նա հանգիստ ուտում էր այդ դեղձը, ուտում ակնհայտ հաճույքով ու ախորժակով։

Իսկ արյունը թափվում էր ու թափվում...

Լյուդովիկոսին սկսեցին համառորեն խնդրել վերջ տալ անտեղի կոտորածին։ Ստացվող լուրերից պարզվում էր, որ շվեյցարացիները հաղթանակ տանել չէին կարող. նրանց որդեն պալատից դուրս էին քշում։ Բայց նրանք դիմադրում էին, պաշարողների ցասումը կրկնապատկելով։ Հարկավոր էր, որ թագավորը Տյուիլրիի պաշտպաններին գրավոր հրամայեր զենքը վայր դնելու։ Թագավորը դեղձը կերավ, վերցրեց և հրամանը ստորագրեց։ Բայց այն պալատականը, որ պետք է հրամանը հանձներ, նախազգուշացրեց, որ իր ստացած հանձնարարությունը կկատարի, «... երբ այդ առավել հարմար կհամարի»։

Հաղթանակի հույսը դեռևս լիովին չէր կորել, և քանի դեռ այն պահպանվում էր, ո՛չ թագավորը, ո՛չ նրա շրջապատն ավելորդ արյունահեղության մասին չէին անհանգստանում։

Մարդիկ փախչում էին, վրիժառության կոչելով։

Մեզ դավաճանեցի՞ն։ Մեր գլխին գնդակների կարկուտ տեղացին այն ժամանակ, երբ մենք նրանց հետ ընկերաբար խոսում էինք, երբ մենք նրանց մեր եղբայրներն էինք համարում։

Փողոցներում, գետափնյա վայրերում, զբոսայգիներում նոր ջոկատներ էին ստեղծվում։

— Վա՜յ օտարերկրացիներին, որոնք եկել են ամայացած պալատը պաշտպանելու համար ֆրանսիացիներին ապանելու։

Լուվրի բակում գտնվող հեծյալ ժանդարմներն իրենց պահակակետերը շտապ թողեցին և ժողովրդի կողմն անցան։ Մոտ բերեցին մի թնդանոթ և նրա փողաբերանն ուղղեցին դեպի պալատ։

Գրոհը վերսկսվեց։ Այն դաժան ու արյունոտ էր, բայց վերջացավ ապստամբների լիակատար հաղթանակով։ Տյուիլրիի պաշտպաններից միայն քչերին հաջողվեց իրենց կյանքը փրկել։

Միապետության վերջին պատվարը՝ Տյուիլրիի պալատը, ժողովրդի տիրապետության տակ էր։ Ինչ-որ բզկտված ու աբյունաշաղախ մի մարդ, թագավորի սենյակներից դուրս գալով, հայացքը դեպի ձիամարզարանի կողմը դարձնելով, բղռունցքով սպառնաց և բարձրաձայն ասաց.

— Թող անիծյա՛լ լինի բռնակալությունը, որ աշխատավորներից այնքան արյուն ու քրտինք խլեց։ Բռնապետը տապալվե՛ց։ Թո՛ղ ուրեմն դողան բոլոր բռնապետները, իրենց ճակատագիրը տեսնելով։

Առավոտյան ժամը 11-ին հրանոթների որոտը բոլորովին լռեց։

Ժիրոնդայի ղեկավարները, հռետորական ամբիոնի վրա միմյանց հաջորդելով, իրենց այնքան էլ լավ չէին զգում։ Նրանք սպասում էին մինչև վերջին պահը։ Երբ ժողովուրդը Տյուիլրիի գրավեց, նրանք հասկացան, որ հին երգը վերջացավ։

— Ավա՜ղ, ձերդ մեծություն, մենք ձեզ համար այլևս ոչինչ անել չենք կարող։

Թագավորի վրա ուշադրություն չդարձնելով, նրանք նրա ժամանակավոր տապալման մասին մի դեկրետ ընդունեցին։ Հետո դահլիճից թագավորի ընտանիքը դուրս հանեցին։ Դե՛հ, ինչ արած։ Անցած դնացածը ետ չես վերադարձնիլ։

Պետք է հարմարվել ստեղծված դրությանը և նրանից կորզել այն ամենը, ինչ որ կարելի է։

Եվ ժիրոնդիստները լուրջ գործերով զբաղվեցին։

Իսկ հաջորդ դիշերը Քամիլ Դեմուլենը և Ֆաբր դ'Էգլանտինը՝ նրա նոր ընկերներից մեկը, քնած Դանտոնին միահամուռ կերպով գնքստում էին։

— Թշվառակա՛ն։ Դու քնով անցնելով, աշխարհում ամեն ինչ, ներառյալ նաև քո մինիստրական պորտֆելը, ձեռքիցդ բաց կթողնես։

Դանտոնը վայրկենապես արթնացավ և մահճակալին նըստեց։

— Դու պետք է ինձ մինիստրության քարտուղաբ նշանակես,— հայտարարեց Ֆաբրը։

— Իսկ ինձ քո անձնական քարտուղարներից մեկը,— ավելացրեց Դեմուլենը։

— Դե սպասեցե՛ք, ի սեր աստծո, անբան շաղակրատներ։ Արդյոք դուք համոզվա՞ծ եք, որ ինձ մինիստր ընտրեցին։

— Դա այնպես անվիճելի է, ինչպես երկու անդամ երկու՝ չորս։

Դանտոնը վերջնականապես արթնացավ և, ժպտալով, շոյեց իր վիթխարի կզակը։ Այո, դրողը տանի՛։ Կյանքը հիանալի՞ է։ Թնդանոթների ողորմածությամբ ինքը մինիստր դարձավ։

Դա ճշմարիտ էր։

Միևնույն օրը Ռոբեսպիերը հեղափոխական Կոմունայի անդամ ընտրվեց։

Բոլորին թվում էր, թե ծանր մղձավանջից հետո նոր կյանք է սկսվում։

ԳԼՈՒԽ 6

«ՌՈԲԵՍՊԻԵՐԻԱԴԱ»

Հրացանային համազարկերի որոտը դադարեց, թնդանոթները լռեցին։ Բռնակալության նկատմամբ տարած հաղթանակը աշխատավորությունից շատ արյուն խլեց։ Բայց ժողո-

վրդի արյունը զուր տեղը չթափվեց։ Միապետությունը տապալվեց։ Ահաբեկված Ասամբլեան սկզբնական շրջանում ընտրված եղավ ոչ միայն թագավորին գահընկեց անել, այլև մասսաների կենսական պահանջներին համապատասխանող մի շարք բարենորոգություններ կատարել։ Վերացվեցին ֆեոդալական որոշ պարհակներ, հաստատվեց ապստամբության նախօրյակին Ռոբեսպիերի առաջադրած ծրագիրը, հայտարարվեց Ազգային կոնվենտի գումարում, վերջ էր դրվում մարդկանց ակտիվ և պասսիվ քաղաքացիների անպետք բաժանմանը։

Դեպքերի դագաթին գտնվում էր հեղափոխական Կոմունան։ Կայուն յակոբինական դեմոկրատներից կազմված լինելով, Կոմունան ղեկավարում էր ապստամբությունը։ Հաղթանակից հետո նույնպես սեկցիաների վրա հենվելով, Կոմունան շարունակում էր մնալ ժողովրդական իշխանության գլխավոր օջախը։ Կոմունայի գործողությունները բազմատեսակ բնույթ ունեին։ Նա փակում էր միապետական թերթերը, կալանավորում հակահեղափոխականներին, կասկածելի անձանց մոտ խուզարկություններ կատարում։ Կոմունան ժողովրդի թշնամիների դեմ պայքարելու համար Արտակարգ տրիբունալ ստեղծեց։ Նրան էր պատկանում ինտերվենտների դեմ մղած մարտերի ժամանակ առաջին հաջողությունների կազմակերպման ծառայությունը։

Երբ օգոստոսի 19-ին պրուսա-ավստրիական բանակը Բրաունշվեյգի դուքսի հրամանատարությամբ ներխուժեց Ֆրանսիայի տերիտորիան, իսկ հետո գրավեց Լոնգվայի կարևոր ամրոցները և Վերդենը, Կոմունան ստանձնեց ազգային պաշտպանության ղեկավարությունը։ Եվ այն ժամանակ, երբ վախեցած «օրենսդիրները» իրենց ճամպրուկները կապկպելով, պատրաստվում էին Փարիզից հեռանալ և իրենց նիստերը Լոկբի խորքը տեղափոխել, Կոմունան «Ի զե՞ն։ Թշնամին դարպասների մոտ է» լոզունգը տալով, ընդհանուր զորահավաք հայտարարեց, վաթսուն հազար մարտիկ զորակոչեց, ինտերվենտների դեմ մի նոր բանակ դուրս բերեց, և ահա Վալմիի մոտ սեպտեմբերի 20-ին տարած հաղթանակը թշնամուն

կանգնեցրեց, նախաձեռնությունը ֆրանսիացիների ձեռքը հանձնեց և նորից հայրենիքն ու հեղափոխությունը փրկեց։

Այդ բոլոր համարձակ գործողությունների կազմակերպմանը Մաքսիմիլիան Ռոբեսպիերն ամենաակտիվ ու անմիջական մասնակցություն էր ցույց տալիս։

Մարատի հետ միասին, որը նույնպես Կոմունայի նոր կազմի մեջ մտավ, Ռոբեսպիերը նրա ամենաազդեցիկ ղեկավարներից մեկը դարձավ։ Շարունակ շարքային սանկյուլոտների հետ շփվելով, պայքարի նրանց պլեբեյական մեթոդները յուրացնելով, Անկաշառելին հրաժարվում էր իր նախկին վերացական հասկացություններից, ավելի լավ էր հասկանում կենդանի իրականությունը, դառնում իսկական պրակտիկ հեղափոխական։ Նա շատ էր աջակցում Կոմունայի ազդեցության ու հեղինակության աճմանը։

Բայց հեղինակություն վայելելով, Կոմունան լիիշխանություն չուներ։ Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ հիմնական իշխանությունը ժիրոնդիստների ձեռքում կենտրոնացավ։

Օգոստոսի 10-ի ապստամբությունը ֆելյաններին ջախջախեց։ Նրանց առաջնորդները՝ Լաֆայետը, Դյուպորը և ուրիշներ, Ֆրանսիայից փախան հակահեղափոխական վտարանդիների շարքերը համալրելու։ Սակայն ֆելյանների տեղն իսկույնևեթ գրավեցին Բրիսոն և նրա բարեկամները՝ այդ բոլոր «սպետական մարդիկ», ինչպես ոչ առանց հեգնանքի նրանց մկրտեց Մարատը։

Այն ժամանակ, երբ ժողովուրդը փողոցներում մարտնչում էր և Տյուիլրին գրոհով գրավում, ժիրոնդիստները, որոնք օգոստոսի 10-ի հեղաշրջման թշնամիներն էին, կարողացան այն օգտագործել, մինիստրական պաշտոններ գրավելով և գերակշռություն ձեռք բերելով նախ Օրենսդիր ժողովում, իսկ հետո նաև Կոնվենտում։

Դրա հետևանքով Փարիզում երկու իշխանություն հաստատվեց. բուրժուական խավերը, որոնք ներկայացնում էին Ժիրոնդիստները, պատսպարվեցին Ասամբլեայում և գործում էին անմիջականորեն Գործադիր խորհրդի (մինիստրների խորհրդի) միջոցով. ժողովրդական զանգվածները, որոնք ի-

բենց ձեռքում պահում էին օգոստոսի 10-ին վերցրած զենքը, համախմբվեցին Յակոբինյան ակումբի և հեղափոխական Կոմունայի շուրջը։

Ժիրոնդիստների կառավարությունը վախենում էր Կոմունայից և ատում նրան։ Նա ամեն մի առիթ օգտագործում էր՝ Կոմունայի հեղինակությունը գցելու։ Ապստամբությունից ընդամենը երկու շաբաթ հետո Սանսքյուլան Կոմունան ցրելու հարց դրեց. համապատասխան դեկրետ նախապատրաստվեց, բայց այն հաստատել ու գործի դնել սիրտ չարեցին։ Զինված ժողովրդից վախենալով, կառավարությունը միաժամանակ միասնություն չէր զգում սեփական միջավայրում։ Թեև մինիստրությունը «պետական մարդկանց» ձեռքում էր գտնվում, այնտեղ ամենաազդեցիկ դեմքը արդարադատության մինիստր Ժորժ Դանտոնն էր, որը լիովին պաշտպանում էր Կոմունան և ազգային պաշտպանության գործում գլխավոր դերերից մեկը կատարեց։

Ժողովի և Կոմունայի միջև մղվող պայքարն արտացոլում էր հակասությունների հետագա զարգացումը, որոնք ամբողջովին երևան եկան նախընթաց ժամանակաշրջանում և իրենց գագաթնակետին հասան Կոնվենտում։ Դա Լեռան և Ժիրոնդայի պայքարն էր։

Ազգային Կոնվենտի ընտրություններն անցնում էին բարդ իրադրության մեջ։ Իր զավակների աջյունով հանրապետություն նվաճած Փարիզը ձայները յակոբինական դեմոկրատներին էր տալիս։ Մայրաքաղաքի առաջին դեպուտատ ընտրվեց Մաքսիմիլիան Ռոբեսպիերը։ Նրա հետևից ամենամեծ թվով ձայներով ընտրվեց Դանտոնը։ Փարիզն ընտրեց նաև Մարատին, Դեմուլենին, Լեժանդրին, Բիլո-Վարենին, Կոլո դ'Էրբուային, Օգյուստեն Ռոբեսպիերին, նկարիչ Դավիդին։ Գավառական դեպուտատների կողմից ընտրված տեղական յակոբինականների անունների թվում նշված էին Կուտոնի և Սեն-Ժյուստի անունները։ Սակայն մայրաքաղաքից տարբերվելով, գավառները դեռ էլի ժիրոնդիստների ամբոխավարության ազդեցության տակ էին գտնվում։

Ժիրոնդիստների դիրքերն առանձնապես ուժեղ էին արևմտա-

յան, հարավ-արևմտյան և հարավային մի քանի դեպարտամենտներում։ Հարավի և հարավ-արևմուտքի առևտրական ու արդյունաբերական բուրժուազիան իր ամբողջ հույսը «պետական մարդկանց» վրա էր դնում։ Դրա հետևանքով Կոնվենտ ընդունվեցին ոչ միայն ժիրոնդիստական բոլոր նախկին լիդերները, այլև մի շարք նոր լիդերներ, այդ թվում Սահմանադիր ժողովից Ռոբեսպիերի զինակից Բյուզոն և մարսելցի Բարբարուն։

Յակոբինական դեմոկրատներն առաջին իսկ նիստերի ժամանակ գրավեցին ամֆիթատրոնի վերևի աթոռները։ Դրա հետևանքով նրանց Լեռան կուսակցություն (մոնտանյարներ) անվանեցին։ Այդ կուսակցությունը կազմված էր Սահմանադրության բարեկամների ընկերության հին կոփված անդամներից և այն մարդկանցից, ովքեր իրենց պայքարի ճանապարհով ընթանում էին նրանց դրոշով։ Կոնվենտի յակոբինական բլոկը սոցիալական տեսակետից բավական խայտաբղետ էր։ Մոնտանյարների կազմի մեջ մտնում էին միջին և մանր բուրժուազիայի, դյուղացիության, քաղաքի և գյուղի չքավոր մարդկանց ներկայացուցիչները։ Այդ բոլոր տարատեսակ խավերը հեղափոխության ընթացքում դեռևս իրենց պահանջների լիակատար բավարարում չէին ստացել և այդ պատճառով նրանք ձգտում էին ոչ միայն ամրապնդել նրա հաջողությունները, այլև այն է՛լ ավելի զարգացնել լայնությամբ ու խորությամբ։

Ժիրոնդան զգալիորեն ավելի միատարր էր։ Խոշոր սեփականատիրական խավերը ներկայացնելով, ժիրոնդիստները վախենում էին դեմոկրատների աճող ազդեցությունից և ամենից ավելի շատ ցանկանում, ինչպես մի ժամանակ սահմանադրականներն ու ֆեյլյանները, փակել հեղափոխության հետագա զարգացման ճանապարհը։ Իրենց թվակազմով նրանք գերակշռում էին մոնտանյարներին, ունենալով հարյուր վաթսունհինգ դեպուտատական մանդատ՝ իրենց հակառակորդների ոչ լրիվ հարյուր մանդատի դիմաց։ Սկզբում ժիրոնդիստները իրենց ետևից տարան նաև այն անձն, բայց մեծաթիվ խումբը (մոտ հինգ հարյուր մարդ), որը «ճահիճ» կամ «փոր» քնարոշ անունն ստացավ։

«Ճահճի» դեպուտատների մեջ պատահում էին վանահայր Սիեյեսի նման արտասովոր մարդիկ, որն իրեն դրսևորել էր Սահմանադիր ժողովի տարիներին։ Բայց «ճահճի դոդոշների» ճնշող մեծամասնությունը պարզապես գործամոլներ ու ճարպիկ մարդիկ էին, որոնք ձգտում էին ժողովրդի անձնվեր պայքարն անձնական նպատակներով օգտագործել։ Քաղաքական քաղքենիները՝ «դոդոշները», որոնք ավելի շատ իրենց մորթու համար էին դողում, ամեն անգամ միանում էին ամենաուժեղ կուսակցությանը և սպասում իրենց ժամին։

Կոնվենտը նիստերն սկսեց 1792 թվականի սեպտեմբերի 21-ին։ Այդ օրը հայտարարվեց նոր դարաշրջանի՝ հանրապետության դարաշրջանի առաջին ամսաթիվը։

Երկրի ներքին և արտաքին դրության բարդությունը հաշվի առնելով, մոնտանյարների առաջնորդները չէին ուզում անմիջապես պայքարը վերսկսել։ Ընդհակառակը, ժիրոնդիստները, ելնելով իրենց ձևական մեծամասնության առավելություններից և իմանալով, որ հլու-հնազանդ «ճահիճն» իրենց ետևից կգնա, առաջինը գրոհի նետվեցին։ Դեռևս սեպտեմբերի 15-ին ժիրոնդիստների թերթերից մեկը յակոբինականներին անվանեց «գազազած հրոսակախումբ, որը չի փայլում ո՛չ տաղանդներով, ո՛չ ծառայություններով, բայց, միատեսակ ճարպկությամբ տիրապետելով և՛ վրիժառության դաշույնին, և՛ զրպարտության սվինին, ուզում է տեռորի միջոցով տիրապետություն ձեռք բերել»։ Մոնտանյարների առաջնորդների երեսին մեղադրանք շպրտվեց, թե իբր նրանք հրահրեցին «սեպտեմբերյան սպանությունները»[1], թեև դեռ շատ առաջ հենց ժիրոնդիստները հավանություն տվեցին ժողովրդական արդարադատության այդ գործողությանը։ Ռոբեսպիերին, Դանտոնին և Մարատին կազմալուծողներ էին անվանում, նրանց վերագրելով իր կամքը Կոնվենտին ու երկրին թելադրող հռապետություն հիմնելու ձգտում։

---

[1] Այսպես էին անվանում ժողովրդի տարերային դատաստանը օտարերկրյա ներխուժման խիստ վտանգի օրերին (1792 թվականի սեպտեմբերի 2—5-ին) Փարիզի բանտերում կալանավորված միապետականների նկատմամբ։

Միաժամանակ մոնտանյարների հիմնական հենարանից՝ Փարիզի աշխատավոր բնակչությունից վախենալով ու նրան ատելով, ժիրոնդայի պարագլուխները շարունակում էին Կոմունայի դեմ դավեր նյութել։ Կոմունայի կամայականության մասին վայնասուն բարձրացնելով, նրանք գավառներից իրենց համար «դեպարտամենտական պահազոր»՝ հատուկ զինված ուժեր պահանջեցին, որ նրանք ուզում էին հակադրել հեղափոխական Փարիզին։ Եվ ահա մայրաքաղաքի փողոցներում արդեն թրև են գալիս ճարպակալած սրի՛աներ, օդը թնդացնելով գոռգոռոցներով՝ «Մարատին, Դանտոնին և Ռոբեսպիերին գիլյոտինով գլխատել։ Կեցցե՛ Ռոլանը»։

Մոնտանյարներն ստիպված եղան պատասխանել։ Կոնվենտում մեծամասնություն չունենալով, բայց վստահորեն հենվելով Կոմունայի վրա, նրանք առաջին մարտը տվեցին Յակոբինյան ակումբի պատերի մեջ։ Հոկտեմբերի 10-ին բուռն վիճաբանություններից հետո Բրիսոն ակումբից վտարվեց։ Հետո ակումբից հեռացան նաև մյուս ժիրոնդիստները։

— Նրանք հարգարժան մարդիկ են և կարդին հանրապետականներ,— հեգնանքով ուղեկցում էր Անկաշառելին իր թշնամիներին։— Իսկ մենք սանկյուլոտներ ու սրիկանե՞ր...

Ժիրոնդիստների հեռացումով ակումբը հեղափոխական դեմոկրատիայի մարտական քաղաքական կազմակերպություն դարձավ։

Ռոբեսպիերի ուժը նախազգալով և նրա համբավն իմանալով, ժիրոնդիստների պարագլուխները որոշեցին կրակը նրա վրա կենտրոնացնել։ Հիշեցին բոլոր հին զրպարտությունները, ի մի հավաքեցին ամբողջ նախկին կեղտը, որ մարդիս-հունիսին առատորեն շպրտում էին Անկաշառելիի վրա։ Տիկին Ռոլանի՝ Մաքսիմիլիանի նախկին երկրպագուհու հյուրասենյակում, տիկին Ռոլանի, որը դեռ բոլորովին վերջերս նրա համար հեղափոխության ճանապարհին փայլուն վերասլացում էր նախագուշակում, այդ ամենից թխեցին «Ռոբեսպիերիադա»՝ մեղադրանքների ամենակեղծ մի կծիկ։ Որոշվեց նրան ուղղակի Կոնվենտի ամբիոնից ցած գցել։ Իբրև գործիք ընտրեցին ասպետ Ֆոբլազի սիրո պատմության հեղինակ վիկոմտ Լուվենը։

Հոկտեմբերի 29-ին ամբիոն բարձրացավ ճաղատ գլխով, թուլակազմ, խարտյաշ մի մարդ։ Նա իր ճառն այսպես սկսեց.

— Փարիզ քաղաքի վրա երկար ժամանակ կախված էր մի խոշոր դավադրություն. եղավ մի պահ, երբ այն քիչ էր մնացել, որ ամբողջ Ֆրանսիան ընդգրկեր...

Կոնվենտը լսում էր։ Վերջապես, հռետորը հասավ հետևյալ նշանակալից խոսքերին.

— Ռոբեսպիե՛ր, ես քեզ մեղադրում եմ։— Եվ հետո նա իր երկար ճառի յուրաքանչյուր պարբերություն նորից սկսում էր հենց այդ խոսքերով։

Ինչի՞ մեջ էին մեղադրում ժիրոնդիստները Անկաշառելիին։

Այն բանի մեջ, որ նա Յակոբինյան ակումբի ամենահամբավավոր հռետորն էր, այն բանի մեջ, որ յակոբինականները նրան պաշտում էին, հայտարարելով Ֆրանսիայում միակ առաքինի մարդը. այն բանի մեջ, որ նա համաձայնվեց մտնել Կոմունայի ղեկավարության կազմի մեջ. այն բանի մեջ, որ նա սպառնում էր Օրենսդիր ժողովին և նրա առանձին անդամների. վերջապես, այն բանի մեջ, որ նա այն «պրովոկատորների» թվումն էր, որոնք Ֆրանսիային մղեցին «սեպտեմբերյան սպանություններին»։

Լուվեի, ըստ էության թույլ, ճառն արտասանվեց շատ բարձր տոնով, կատաղությամբ և գրգռվածությամբ։ Այն բարեհաճությամբ ընդունվեց Կոնվենտի զգալի մասի կողմից։

Ռոբեսպիերը կարող էր տեղնուտեղը, առանց մեծ ջանքերի հերքել իրեն մեղադրողին։ Իր սովորական շրջահայացությանը հավատարիմ մնալով, նա այլ կերպ վարվեց։ Նա պատասխանելու համար մեկ շաբաթվա ժամկետ խնդրեց։ Թշնամիները հրճվում էին, կարծելով, թե իրենց զոհը շփոթվել ու ոչնչացվել է։ Իրականում Անկաշառելին շատ լավ գիտեր, թե ինչ է անում։ Նա իսկույն տեսավ թշնամու թույլ տեղը։ Արտաքին էֆեկտների վրա կառուցված ճառը կարող էր ոչնչական տպավորություն գործել։ Հարկավոր էր ժամանակ տալ, որ այդ տպավորությունը վերանար։ Թող արտահայտվի ընկերությունը, ելույթներ ունենան յակոբինականները, իրենց տեսակետները որոշեն սեկցիաները։ Այդ ամենն ինքնաստինքյան կորոշի գործի ելքը։ Իսկ նա առայժմ հանգիստ կերպով կնախապատ-

բաստվի իր հակառակորդների բոլոր փաստարկներն ու թեզիսները մանրազնին ուսումնասիրելու համար։ Ժիրոնդիստները փորձեցին նրան զրպարտելով նեղել նաև առաջ. այն ժամանակ նա, ուրիշ գործով զբաղված լինելով, իր պաշտպանությունը թողեց բարեկամներին ու համախոհներին. զրպարտիչները՝ խայտառակվեցին և ժամանակավորապես ձեռք քաշեցին։ Բայց դա նրանց խելամիտ չդարձրեց։ Դեհ, ինչ կա որ, նա անձամբ կպատասխանի նրանց։ Նա կաշխատի նրանց այնպես շշպռել, որ այլևս այդ թեմային չվերադառնա։

Նոյեմբերի 5-ի առավոտվանից Կոնվենտի շենքը պարեկներով օղակվեց։ Ձիամարզարանը շրջապատեց անթիվ բազմությունը։ Ե՛վ բարեկամները, և՛ թշնամիներն անհամբեր ըսպասում էին։

Ռոբեսպիերը ներկայացավ միայն կեսօրվա դեմ։ Նրա բոլոր շարժումներն առանձնապես հանգիստ էին։ Վերնասրահներից գոռոցներ լսվեցին.

— Անկաշառելի, ամբիոն բարձրացի՛ր։

Անկաշառելին չէր շտապում։ Նա սպասում էր, որ լարվածությունն իր գագաթնակետին հասներ։ Վերջապես, նախագահի նշանով նա վեր կացավ և դանդաղորեն, մռայլ գնաց դեպի ամբիոն։ Նա իր ճառի սկզբից վերցրեց նույն համաչափ-հանգիստ տոնը։

Հեշտությամբ ցույց տալով անձամբ իր դեմ ուղղված բոլոր մեղադրանքների կեղծությունը, հռետորը պաշտպանության տակ առավ հեղափոխական Կոմունան և ժողովրդի հայրենասիրական գործունեությունը։ Նա միաժամանակ իր սեփական դերը բնորոշեց մեծ համեստությամբ.

— Ես հպարտանում եմ նրանով, որ այստեղ պետք է պաշտպանեմ Կոմունային և իմ սեփական գործը,— ասաց նա։— Ոչ, ես պետք է միայն ուրախանամ այն բանի համար, որ շատ քաղաքացիներ ինձանից ավելի լավ ծառայեցին հասարակական գործին։ Ես ամենևին ինձ չպատկանող փառքի հավակնություն չունեմ։ Ես ընտրվեցի ամսի տասին միայն. իսկ ովքեր ավելի լուս ընտրվեցին՝ հավաքվեցին քաղաքապետարանում այն

ահեղ գիշերը. հենց նրանք են իսկական հերոսները, որոնք ազատության համար պայքարեցին...

Ես այստեղ տեսա այնպիսի քաղաքացիների, որոնք ճոռում խոսքերով ներկայացրին Փարիզյան կոմունայի խորհրդի գործելակերպը՝ Ապօրինի ձերբակալություններ։ Բայց մի՞թե կարելի է օրենքների ժողովածուով գնահատել այն բարերար միջոցները, որ հասարակական փրկության համար անհրաժեշտ է լինում հենց օրենքի անզորության հետևանքով առաջացած ծայրահեղական պահերին գործադրել... Այդ ամենը հիշտ այնպես ապօրինի էր, ինչպես հեղափոխությունը, ինչպես գահի տապալումը, ինչպես Բաստիլի կործանումը, ինչպես ապօրինի է հենց ազատությունը...

Քաղաքացիներ, մի՞թե դուք ուզում եք հեղափոխությունն առանց հեղափոխության...

Բացատրելով ու արդարացնելով սեպտեմբերի 2-ից մինչև 5-ը տեղի ունեցած ժողովրդական արդարադատությունը, հռետորը հիշեցրեց, որ այն ժամանակ հենց ժիրոնդիստական մինիստր Ռոլանը հավանություն տվեց ժողովրդի գործողություններին, դրանք շրջահայաց ու արդար անվանելով։

Եվ այստեղ Ռոբեսպիերը հայացքը սևեռելով ուղղակի իր թշնամիներին, նրանց մի նախազգուշացում է նետում, որի ամբողջ կարևորությունը նրանք առայժմ չէին ուզում, ասենք, չէին էլ կարող հասկանալ։

— Բայց մտածեցեք հենց ձեր մասին. նայեցեք, թե դուք ինչպես եք խճճվում ձեր իսկ սեփական ցանցում։ Դուք արդեն վաղուց եք աշխատում ժողովից սպանության գրդիչների դեմ ուղղված օրենք պոկել՝ թող այն հրատարակվի։ Իսկ ո՞վ կլինի նրա առաջին զոհը։ Արդյոք դուք չե՞ք լինի, որ այնպես ծիծաղելիորեն ինձ զրպարտեցիք, թե իբր ես բռնապետության եմ ձգտում։ Արդյոք դուք չե՞ք լինի, որ Բրուտոսով երդվեցիք, թե բռնապետներին կկոտորեք։ Այսպես ուրեմն, ձեր սեփական խոստովանությունը ձեզ մերկացնում է, որ դուք բոլոր քաղաքացիներին կոչ եք անում ինձ սպանելու։ Մի՞թե ես հենց այս ամբիոնից ի պատասխան ձեր հորդորների կատաղության գոռգոռոցներ չեմ լսել։ Իսկ զինված մարդկանց այդ գրոսանքնե՞ը, որոնք վկայում են օրենքը և իշխանությունների հեզինա-

կությունը չհարգելու մասին։ Իսկ ժողովրդի որոշ ներկայացուցիչների գլուխները պահանջող այդ գոռգոռոցնե՞րը, որոնց մեջ իմ գլխին թափվող նզովքներին միանում են ձեզ ուղղված գովասանքներ և Լյուդովիկոս XVI-ի գովաբանություն։ Ովքե՞ր են դրանք առաջացնում։ Ովքե՞ր են ժողովրդին մոլորության մեջ գցում։ Ովքե՞ր են նրան հրահրում։ Եվ դուք դեռ խոսում եք օրենքների մասին, առաքինության մասին, ագիտատորների մասին...

Սակայն ապագայի համար այդ ակնարկն անելով, հռետորը շեշտում է, որ անձամբ ինքը հեռու է վրիժառության ստոր զգացմունքներից։ Ո՛չ, ինքը չի պատրաստվում իրեն հալածողներին նրանց անարգ զենքով պատասխանել։ Ինքը միայն հաշտություն ու ազատություն է ուզում և այդ սկզբունքների համար պատրաստ է զոհաբերել ոչ միայն իր համբավը, այլև կյանքը։

Ռոբեսպիերի ճառը լսվեց համընդհանուր ուշադրությամբ։ Ոչ մի թշնամի չհանդգնեց նրան ընդհատել։ Ահա նստած են նրանք՝ Վերնյոն, Բրիսոն, Ժանսոնեն՝ մռայլ, մտախոհ, գլխահակ։ Նրանց տակտիկան դարձյալ պարտություն կրեց, Անկաչառելին դարձյալ հաղթեց նրանց, և ոչ միայն հաղթեց՝ նա նրանց նվաստացրեց, առանց հայհոյելու, և սարսափեցրեց, առանց սպառնալու։

Զրպարտիչ Լուվեն՝ քիչ առաջվա հաղթահերոսը, որին Ռոբեսպիերն ամենակատարյալ արհամարհանքով վերաբերվեց, փորձեց խոսք վերցնել, բայց այդ նրան չհաջողվեց։ Այն ժամանակ տեղից վեր ցատկեց Մաքսիմիլիանին կատաղի կերպով ատող, դյուրաբորբոք Բարբարուն։ Նա պահանջում է, նա վայնասուն է բարձրացնում, ձգտելով խլացնել վերնասրահների ծափահարությունները, նա շարությունից շնչահեղձ է լինում։ Բայց նրան լսել չեն ուզում։ Գազազած մարսելցին վազում է դեպի ցած, Կոնվենտի վանգակապատի մոտ։ Լսեցե՛ք։

Նա ուզում է նոր մերկացումներ անել։ Նա պատրաստ է իր խոսքերի տակ ստորագրել, նա պատրաստ է այդ խոսքերը մարմարի վրա փորագրել։ Բայց նրան այնուամենայնիվ չեն լսում. ոմանք զարմանքի ժեստեր են անում, ուրիշները՝ գայրանում, երրորդները՝ ծիծաղում... Ի՜նչ խայտառակություն։

Բարբարուն, պոռթկալու հետևանքով ուժասպառ, ընկճված, վերադառնում է իր տեղը։ Հաղթանակը կատարյալ է։ Ժողովի մեծամասնությունը, թեկուզ կարճ ժամանակով, Անկաշառելի կողմն է։

Սակայն Ռոբեսպիերին իսկական հաղթանակն սպասում էր Կոնվենտի պատերից դուրս։ Նրա մուտքի մոտ մի հոծ բազմություն էր սպասում։ Հազարավոր հասարակ մարդիկ «Մարսելիեզ» և «Կարմանյոլա» երգելով նրան ուղեկցեցին մինչև Յակոբինյան ակումբի դռները։ Այս էր «սանկյուլոտների և սրիկաների» պատասխանը Ժիրոնդայի «կարգին հանրապետականներին» և «հարգարժան մարդկանց»։

Մի կաթիլ դառնություն թունավորում է հաղթանակի ուրախությունը։ Ռոբեսպիերի հին բարեկամը, նրա գրեթե երեք տարվա զինակիցը, Փարիզի նախկին քաղաքագլուխ Ժերոմ Պետիոնը նոյեմբերի 5-ի նիստի համար մի ճառ պատրաստեց։ Նա Կոնվենտի հուզված վիճակի պատճառով այդ ճառն արտասանել չկարողացավ։ Նա այն տպագրեց։

Դրանից առաջ Պետիոնը, վաղուց արդեն թեքվելով ժիրոնդիստների կողմը, գոտեպնդվում էր. մայիս-հունիսի փոթորկոտ օրերին նա աշխատում էր Բրիսոյին և Ռոբեսպիերին հաշտեցնել։ Այժմ, վերջապես, նա համբերությունից դուրս եկավ։ Նա իր ճառում ամենից առաջ ձգտում էր հունիսի 20-ի, օդոստոսի 10-ի, սեպտեմբերի 2—5-ի համար իրենից ամեն տեսակ պատասխանատվություն գցել։ Նա Բրիսոյին գովաբանում էր, Մարատին պարսավում։ Իսկ ինչ վերաբերում է Անկաշառելիին, ապա նախկին բարեկամը չզլացավ նրան սև գույներով բնութագրել։ Նա Ռոբեսպիերին բնութագրեց իբրև կասկածելի և միաժամանակ ոչ մի ամենափոքր իսկ կասկած չներող մի մարդու, որը չափազանց հակամետ է բարձրացնելու իր ծառայությունները, հակասություններ չի հանդուրժում, ծափահարություններ է փափագում և ժողովրդի երկրպագության ետևից ընկնում։ Այստեղից էլ հետևում էր դիկտատուրայի մասին միտքն անկախ այն բանից, Մաքսիմիլիանն այդ ցանկանում էր, թե ոչ։

«... Ինչպե՞ս փոփոխական են մարդկային գործերը, սի-

ռելի Պետիոն,— պատասխանում էր Անկաշառելին իր նախկին համախոհին,— քանի որ շուտով դուք, որ վերջերս իմ զինակիցն էիք և ամենախաղաղասեր մարդը, անսպասելիորեն ինձ մեղադրողներից ամենամոլեգինը դարձաք...

... Դուք ձեր նոր բարեկամներին, ժիրոնդիստներին զոհաբերեցիք ձեր փառքը, տա աստված, որ դուք գոնե առաքինությունը պահպանեք...»։

Բայց նման պայմաններում առաքինությունը պահպանելը դժվար է։

Եվ Մաքսիմիլիանը զարմանալի նրբամտությամբ նշում է տարբերությունը գլխավորի մեջ, որը նրան, նույնպես զգույշ ու շրջահայաց մի մարդու, բաժանում է նրա նախկին զինակցից, որին ժողովուրդը մի ժամանակ «անկաշառելի օրենսդիր» էր անվանում։

«... Պատահում է, որ մի մարդ, որը հանրապետական էր թվում այն ժամանակ, երբ հանրապետություն չկար, դադարում է հանրապետական լինելուց, երբ հանրապետություն կա։ Նա պատրաստ էր նվաստացնելու այն, ինչ իրենից բարձր էր կանգնած, բայց ինքը չի ուզում իջնել այն բարձունքից, ուր բարձրացվել է։ Նա սիրում է միայն այն հեղափոխությունները, որոնց ժամանակ ինքը հերոս է, և անարխիայից ու անկարգությունից բացի ոչինչ չի տեսնում այնտեղ, որտեղ նա ինքը չի ղեկավարում։ Նա ժողովրդին խռովարար է համարում եթե ժողովուրդը հաղթանակել է առանց նրա...»։

«... Ազատվենք, սիրելի Պետիոն, այդ խայտառակ թուլություններից...»։

Այո, ցավալի է մտերիմ մարդուց հիասթափվելը, է՛լ ավելի ցավալի, երբ հեռանում է հին բարեկամը։ Դեռ քանի՞-քանի անգամ Մաքսիմիլիանը կապրի ամենամոտիկ, ամենաթանկագին, իր հետ անխզելի կապերով կապված թվացող մարդկանց հետ պառակտվելու ցավը...

Այդ օրերին, երբ նախկին կապերը խզվում են, նա ավելի ու ավելի է կապվում իր նոր ընտանիքին, իր նոր տանը։ Ճիշտ է, այստեղ ևս բանն առանց ընդհարումների, երբեմն էլ առանց ոտնձ ու ճնշող ընդհարումների չի անցնում։ Նա ապրում է

Մորիս Դյուպլեի ընտանիքում իր կրտսեր եղբոր հետ միասին, որը նույնպես Կոնվենտի անդամ է։ Դեռ շատ առաջ, հայրենի Առասը թողնելով, այստեղ է գալիս նրանց քույր Շարլոտան։ Նա տեսնում է, թե իր մեծ եղբայրը ինչպիսի սիրով է շրջապատված։ Նա նկատում է, թե տնարար տիկին Դյուպլեն ինչպիսի հոգացողությամբ է խնամակալում նրան, թե հյուսնի դուստրերն ինչպիսի ուշադրությամբ են ականջ դնում նրա յուրաքանչյուր խոսքին։ Իսկ ավագ դուստրը, Էլեոնորան, արդյոք Մաքսիմիլիանի նկատմամբ ավելի քնքուշ ու խորն զգացումներ չի՞ տածում, քան մնացածները։ Իր գործերի ու խոհերի մեջ խորասուզված տիրքունը, թերևս, գա չի էլ նկատում։ Բայց Շարլոտայի խանդոտ աչքն ամեն մանրուք նկատում է։ Ա՜խ, ահա թե ի՞նչ։ Նրանք, այդ հիմար Դյուպլեները իր սիրելի եղբորը, որն այժմ դարձել է երկրում ամենանշանավոր մարդկանցից մեկը, ուզում են իրենց բուռը հավաքել։ Նրանք նրան որպես կենվոր են պահում և իրենց ավագ դստերը նրան հրապուրելու միջոց դարձնում։ Բավական է մոմենտը բաց թողնի, ամեն ինչ կվերջանա։ Թակարդը շրխկացնելով կփակեն։ Բայց ո՞չ։ Ինքը հո տեսնում է և բավականաչափ լավ հասկանում, ինքը թույլ չի տա, որ այդպիսի անհարմար դրություն ստեղծվի։

Սկսվում է կանանց ընտանեկան մի կռիվ, որի օբյեկտը գառնում է գահեր ու կուսակցություններ սասանող մի մարդ։ Ինչպես հայտնի է, մեծից մինչև ծիծաղաշարժը մի քայլ է միայն։ Մեծ քաղաքականության ասպարեզում անհողդողդ ու անդրդվելի, Մաքսիմիլիանն ընտանիքում, կանանց շրջանում փոքր երեխայից էլ թույլ է։ Նա երկչոտ ու խոնարհ է, նա իրեն սիրողներից ոչ մեկին չի ուզում վիրավորել։ Շարլոտան ոգևորությամբ ապացուցում է, որ Մաքսիմիլիանի դիրքով հանգերձ նրա համար ձրիակյացի վիճակում լինելը պարզապես անհարմար է։ Նրա զբաղեցրած բարձր պաշտոնը նրան պարտավորեցնում է սեփական բնակարան ունենալ, և արդյոք նա իր համար ավելի լավ տնտեսուհի կգտնի՞, քան ինքը, նրան սիրող Շարլոտան, որը նրա համար պատրաստ է անձնական կյանքից հրաժարվել և իրեն ամբողջությամբ նրա օջախի հոգսերին նվիրել։



Գլխավոր շտաբների բացումը 1789 թվականի մայիսի 7-ին

Միրաբո

Բարնավ

Մարսիմիլիանն ընդունում էր այդպիսի փաստարկների արդարացիությունը, բայց դրանց դժկամորեն էր տեղի տալիս։ Սակայն նրա հաստատակամ քույրիկն այնպիսի ոգևորությամբ ու համառությամբ էր գործում, որ վերջ ի վերջո իր նպատակին հասավ։ Սեն-Ֆլորանտեն փողոցում մի բնակարան վարձվեց, և Ռոբեսպիերներն անհապաղորեն այնտեղ բնակություն հաստատեցին։ Շարլոտան ամեն ջանք թափեց Մաքսիմիլիանի համար պատշաճ խնամք ապահովելու։ Ապարդյուն փորձեր։ Տրիբունը ձանձրանում էր ու կարոտում այն, ինչից ինքն այնպես անշնորհակալ կերպով հրաժարվեց։ Վերջ ի վերջո նա նույնիսկ թեթևակի հիվանդացավ։

Երբ տիկին Դյուպլեն այդ մասին իմացավ, նա կատաղի ֆուրիայի նման սլացավ Սեն-Ֆլորանտեն։ Ահա՛ թե ինչ։ Այստեղ շատ են խոսում, իսկ մեծ մարդու հանդիստն ու առողջությունը պահպանել չեն կարողանում։ Սաստիկ զայրացած տիկինը չարամտորեն սրած բազմաթիվ նետեր է արձակում իր մտակցուհու սրտին։ Տեղի է ունենում նոր դաժան մի պայքար՝ և դրա պատճառ հանդիսացող անձը նորից հայտնվում է Սենտ-Օնորե փողոցի իր խցիկում։ Արդյոք պե՞տք է ասել, որ այժմ նրան առաջվանից ավելի մեծ հոգատարությամբ ու սիրով շրջապատեցին։ Պե՞տք է ասել, որ այժմ նա այնտեղից այլևս երբեք և ոչ մի տեղ չի գնա։ Այո, այն դառն օրերին ու ժամերին, երբ Լուվեն նրա վրա ցեխ է նետում, երբ Պետիոնը նրան դավաճանում է, երբ օղակ օղակի ետևից քանդվում է «Ռոբեսպիերիադայի» ժանգոտ շղթան, նա այստեղ, այս համեստաշխ բնատանիքում, նվիրված սրտերի շրջանում գտնում է լարված աշխատանքի համար այնքան անհրաժեշտ մոռացում ու հանգիստ։

Բայց ոչինչ առանց հետևանքի չի անցնում։ Կաթիլ-կաթիլ ընկնող ջուրը քար է ծակում։ Ջղաձգական չարությունն ու դրդարտությունը երեք տարի շարունակ, մխվելով ուղեղն ու սիրտը, աննկատելիորեն անում էին իրենց գործը, իսկ վերջին կոմպանիաները ճակատագրական ամփոփում կատարեցին։ Այդ՝ դեպքերով այնքան հարուստ 1792 թվականի վերջերին

Մաքսիմիլիան Ռոբեսպիերն արդեն այն չէր, ինչպիսին նրան նրա ժամանակակիցները տեսել էին հեղափոխության սկզբին։ Ճիշտ է, նա ներքուստ իր սկզբունքներով ու իդեալներով առաջվա նման մնում էր Անկաշառելի, Անդրդվելի, Անհողդողդ։ այստեղ նրան ոչինչ չէր կարող փոխել։ Բայց նայեցեք նրա արտաքին տեսքին, փորձեցեք ուշադրությամբ զննել նրա բնավորությունը։

Ահա նա գնում է դեպուտատական տեղերի շարքերի միջով, մոտենալով ամբիոնին։ Նա գունատ է՝ կապտավուն երանգով, նրա պայծառ աչքերը կիսախուփ են, դեմքը ջղաձգորեն ցնցվում է։ Ճակատին երևում է երկու զույգ ակնոց՝ տեսողությունն անուղղելիորեն թուլացել է։ Նրա ժպիտը, եթե այն երբեմն երևում է, անբնական է թվում, դեմքի բնածին մեղմ արտահայտությունը չարացածության երանգ ունի։

Մի ժամանակ նա բարեհոգի էր, դյուրահավատ, հաղորդասեր։ Եվ ի՞նչ վարակիչ ծիծաղ ուներ։ Այժմ ոչ ոք նրա ծիծաղը չէր լսում։ Թշնամիները նրան պարսավում էին կասկածամտության համար։ Այո, նա խիստ կասկածամիտ էր դարձել, բայց դրա պատճառն ո՞վ էր։

Նա իր ճակատագրի նկատմամբ պատրանքներ չի ստեղծում։ Նա գիտեր, որ ինքը նահատակի մահով կզոհվի, և, թվում էր, տենչում էր այդ մահով մեռնել։ Համենայն դեպս, նրա որոշ նամակներում ու ճառերում նշմարվում է այդպիսի միտք։ Բայց կար մի բան, որի մասին երբեք չէր մտորում՝ դա նահանջ կատարելն էր։ Մարտնչել մինչև վերջ, եթե գործի համար պետք է, մեռնել, բայց հասնել սեփական իդեալների իրականացման։ Ապրել ազա՛տ կամ մեռնե՛լ։ Հեղափոխության այս նշանաբանը նաև նրա նշանաբանն էր։

Եվ ահա այժմ նա, տանջված, բայց առանց նահանջելու, հենց նոր հաղթանակ տանելով, պատրաստվում է նոր, է՛լ ավելի ծանր ու դաժան պայքար սկսելու։

ԳԼՈՒԽ 7

ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍԸ ՊԵՏՔ Է ՄԵՌՆԻ

Ռոբեսպիերի հիվանդությունը, որի ընթացքում նրան խնամող կանանց մրցակցությունն իր գագաթնակետին հասավ, տևական էր։ Նոյեմբերի 5-ի նիստից անմիջապես հետո անկողին ընկնելով, նա պառկեց մինչև ամսի վերջը։ Բայց հիվանդությունը չթուլացրեց ժողովրդական տրիբունի զգոնությունն ու եռանդը։ Նա լարված ուշադրությամբ հետևում էր այն բանին, ինչ տեղի էր ունենում Կոնվենտում, Փարիզում, երկրում։ Եվ պատրաստում էր իր խոսքը՝ հարկավոր մոմենտին այն արտասանելու։

Մոմենտը մոտենում էր։ Հերթի էր դրված թագավորի դատավարությունը։

Կոնստանտությունը, որ որոշեց միապետության ճակատագիրը, միապետի ճակատագիրը չորոշեց։ Ժողովրդի պահանջով Լյուդովիկոս XVI-ը տապալվեց և ընտանիքի հետ միասին բանտարկվեց Տամպլի աշտարակում։ Իսկ հետո... Իշխանության գլուխ անցած ժիրոնդիստներն ուզում էին այդ հարցից խուսափել։ Հեղափոխության հետագա զարգացումից՝ ինչպես կրակից վախենալով, հանրապետության գոյության հաստատունությանն ու տևականությանը չհավատալով, Բրիսոյի և Ռոլանի զինակիցներն աշխատում էին Լյուդովիկոսի ճակատագրի որոշումը հետաձգել և վերջին հաշվով նրան փրկել։ Օրենսդիր կոմիտեն, որին հանձնարարվեց գործն ուսումնասիրել ու նախապատրաստել, ժամանակը վատնում էր դատական պրոցեդուրայի նրբությունները քննարկելու և անվերջ երկար զեկուցումներ լսելու վրա։ Ժիրոնդիստները հույս ունեին թագավորին թաքցնել 1791 թվականի սահմանադրության հետևում, ապացուցելով, թե նա անձեռնմխելի է, հետևաբար և դատվել չի կարող։

Այն օրերին, երբ Ռոբեսպիերը դեռևս գամված էր անկողնուն, «պետական մարդկանց» պլանների վրա միմյանց հետևից երկու հարված տեղացին։

Դրանցից առաջինը մոնտանյար-դեպուտատ Սեն-Ժյուստի ճառն էր։ Նոյեմբերի 14-ին այդ խստաբարո, սառնարյուն պատանին ապացուցեց ժիրոնդիստների իրավաբանական ապարդյուն ճիգերի անհիմնավորությունը։ Թագավորին, պրն-դում էր Սեն-Ժյուստը, պետք է դատել ամենևին ոչ սովորական իրավունքի նորմաների տեսակետից։ Տվյալ դեպքում խոսքը ոչ թե դատական վճռի, այլ քաղաքական մի ակտի մասին է. Լյուդովիկոսը մի ամբողջ ազգի թշնամին է, և նրա նկատմամբ պետք է կիրառել միայն մեկ օրենք՝ պատերազմական ժամանակվա օրենքը։

Կոնվենտը ցնցվեց։

Ժիրոնդայի լիդերները փորձեցին խուլս տալ։ Նրանք առաջադրեցին այն թեզիսը, թե բռնապետի համար տապալվելը մահից ավելի սարսափելի է։ Արդյոք բռնակալին ճանկերը պոկած կենդանի թողնելը վատագույն պատիժը չէ՞։ Արդյոք նախկին թագավորի ստորացումն ու նշավակումը, որը դատապարտված է ազատ ժողովրդի մեջ ողորմելի գոյություն քարշ տալու, ժողովուրդների ու տիրակալների համար կենդանի մի օրինակ չէ՞։

Բայց Սեն-Ժյուստի ճառից վեց օր հետո միապետության պաշտպաններին մի նոր աղետ պատահեց։ Տյուիլրիի պալատում պատի մեջ տեղավորված երկաթե մի պահարան հայտնաբերվեց։ Նրա մեջ գտան Լյուդովիկոս XVI-ի գաղտնի դրագրությունը և մի շարք այլ գաղտնի փաստաթղթեր։ Այդ փաստաթղթերը հաստատեցին Միրաբոյի և Լաֆայետի դավաճանությունը, մերկացրին թագավորի կապերն իր վտարանդի եղբայրների հետ, բացահայտեցին կաշառման բազմաթիվ դեպքեր և Վարեն կատարված փախուստի գաղտնի կազմակերպումը։ Ժիրոնդիստների դժբախտությունը սաստկանում էր նաև նրանով, որ ժողովրդի մեջ ապրում էր այն համոզմունքը, թե իբր ներքին գործերի մինիստր Ռոլանը հայտնաբերված փաստաթղթերի մի մասը թաքցրել է։

Զգտելով ժամանակ շահելու, ինչպես նաև Փարիզի սանկյուլոտների ցասումն ու զայրույթը ուրիշ կողմի վրա ուղղելու, Ժիրոնդայի այրերը մի հուսահատական քայլ արեցին։ Նրանք աշխատեցին օրենսդիրների ուշադրությունը պարենային հար-

ցի վրա բևեռել։ Սովատանջ ժողովրդին օգնելո՞ւ համար։ Ամենեվին ոչ։ Դժգոհ մարդկանց դեմ ճնշումն ուժեղացնելու համար։

Վաղուց արդեն գավառներից Կոնվենտի հասցեով տեղացող ուղերձներում թագավորին դատելու պահանջների հետ միասին տրտունջներ էին երևում կարիքի, թանկության, մթերքներ չլինելու մասին։ Մի շարք դեպարտամենտներում հուզումներ էին սկսվում։ Եվ ահա այժմ, հասարակայնության ուշադրությունը թագավորի անձնավորությունից շեղելով, բրիսոյականներն սկսեցին վայնասուն բարձրացնել «խռովարարների», «կազմալուծիչների», «խառնակիչների» մասին, պատասխան խիստ միջոցառումներ պահանջելով։

Ռոբեսպիերը այդ քայլը հասկացավ և շտապեց այն մերկացնել։

Նոյեմբերի 30-ին նա հիվանդությունից հետո առաջին անգամ երևաց Կոնվենտի ամբիոնի վրա։ Նա իր ճառով սովորական խորաթափանցությամբ ու տրամաբանությամբ դեպուտատների ուշադրությունը վերադարձրեց քաղաքական գլխավոր պրոբլեմին։

Սովատանջ մարդկանց դեմ ուղղված ռեպրեսիանե՞ր։ Կանխարգելման միջոցառումնե՞ր։ Գոյություն ունեն ավելի ընդհանուր, հայրենիքի համար շատ ավելի գործուն ու փրկարար միջոցառումներ։ Որովհետև դավերն ու գժտությունները նյութում են բռնապետի կամակատարները, իսկ բռնապետը դեռևս պատասխանատված չէ։

Հռետորի վերջին խոսքերը լսվեցին իբրև հանդիմանություն.

— Քանի դեռ Կոնվենտն այդ դատավարությունը կհետաձգի, այդքան ժամանակ նա դավադրություններին կօգնի և միապետականների հույսերը կփայփայի։ Դուք սննդամթերքների հարցի քննարկմանը կանցնեք թագավորի գործն ավարտելուց հետո միայն։

Պրոբլեմն առաջադրվեց։ Արդյոք ժիրոնդիստները կարո՞ղ էին նրանից հրաժարվել։ Անկաշառելին նրանց հնարավորություն չտվեց այդ բանն անելու։ Երկու օր հետո նա մի նոր ճառով հանդես եկավ։ Սեն-Ժյուստի գլխավոր միտքն օգտագոր-

ծելով ու զարդացնելով, Ռոբեսպիերը տվեց քննարկվող հարցի խորն ու համակողմանի վերլուծությունը։ Իր ձևով անտարբեր, հանգիստ կերպով արտասանված այդ ճառը ժիրոնդայի պլանների համար պետք է հնչեր իբրև թաղման զանգի զողանջ։

— Ժողովն աննկատելիորեն շեղվեց հարցի էությունից։ Այստեղ հարկ չկա դատավարություն ստեղծել, Լյուդովիկոսը մեղադրյալ չէ։ Դուք էլ դատավորներ չեք, դուք պետական գործիչներ եք, ազգի ներկայացուցիչներ, և որևէ ուրիշ բան լինել չեք կարող։ Դուք չպետք է հայտնի անձնավորության «թեր» կամ «դեմ» դատավճիռ կարդաք, այլ հասարակական փրկության միջոցներ ձեռք առնեք, ազգի պաշտպանների դեր կատարեք։

Ձեզ զբաղեցնող տխրահռչակ հարցը լուծվում է մի քանի խոսքով։ Լյուդովիկոսն իր հանցագործությունների համար գահից զրկվեց։ Նա ֆրանսիական ժողովրդին խռովարար հայտարարեց և որպես պատիժ իր եղբայրակից բռնապետներին նրա դեմ հանեց։ Հաղթանակը և ժողովուրդը որոշեցին, որ խռովարարը նա էր։ Հետևաբար, Լյուդովիկոսը դատվել չի կարող. նա արդեն դատապարտված է կամ թե հանրապետությունը չի արդարացված։ Լյուդովիկոս XVI-ին որևէ ձևով դատի ենթարկել՝ նշանակում է վերադառնալ միապետական և սահմանադրական բռնակալությանը. դա հակահեղափոխական գաղափար է, որովհետև այն կասկածի տակ է դնում բուն հեղափոխությունը։

Հռետորը նշում է, որ նույնիսկ անկախ այն բանից, Լյուդովիկոսը կարդարացվի, թե կդատապարտվի, հենց ժողովրդի կողմից ոչնչացված թագավորին վերակենդանացնելը, հենց դատավարության կազմակերպումը մի նոր պատրվակ է գրժտությունների ու խռովությունների համար։ Դատավարությունը Լյուդովիկոս XVI-ի ջատագովների ձեռքը զենք է տալիս, թույլ է տալիս հանրապետությանն ու ժողովրդին վատաբանել, որովհետև բռնապետին պաշտպանելու իրավունքը միապետական հայացքներ պրոպագանդելու իրավունք է։ Այսպիսով, տևական դատավարությունը միայն ռեակցիան ուժեղացնելուց, միապետության վերականգնման հույսերը վերադարձ-

նելուց, բոլոր մութ, հակահեղափոխական ուժերի իրարանցումից բացի ուրիշ ոչ մի բանի հանգեցնել չի կարող։

Լյուդովիկոսին ուզում են թաքցնել 1791 թվականի սահմանադրության հովանու տակ, նրան տխրահռչակ անձեռնմխելիությամբ պաշտպանելով։

Բայց ինչպե՞ս կարելի է թագավորին պաշտպանելու համար սահմանադրությունը վկայակոչել, եթե հենց թագավորն այդ սահմանադրությունը ոչնչացրեց։

Հռետորի հայացքը կանգ է առնում ժիրոնդիստական լիդերների վրա։ Նրա ձայնում կծու հեգնանք է լսվում։

— Բայց սահմանադրությունը ձեզ արգելում էր այն ամենը, ինչ որ դուք նրա նկատմամբ արեցիք։ Եթե նա կարող է պատժվել միայն տապալվելով, ապա դուք առանց դատավարության այդ միջոցը ձեռք առնելու իրավունք չունեիք. դուք նրան բանտում պահելու ոչ մի իրավունք չունեիք. դեռ ավելին, նա լիակատար իրավունք ունի ձեզանից պահանջել իրեն ազատելու և իր կորուստները հատուցելու։ Սահմանադրությունը ձեզ դատապարտում է։ Դե, ուրեմն, նետվեցե՛ք Լյուդովիկոսի ոտքերի մոտ՝ աղերսելով նրա ներումն ստանալու...

Դահլիճում լսվում են ծիծաղ ու ծափահարություններ։ Նա ձեռք բերեց իր ակնկալած տպավորությունը։ Նրա միտքն ասամբլեագույն չափով պարզ է։ Ի՞նչ կարելի է նրան հակադրել...

Մնում է պատժաչափի հարցը։

Հռետորը հիշեցնում է, թե ինչպես մի ժամանակ, դեռևս առաջին Ասամբլեայում, հենց ինքը պահանջում էր մահապատիժը վերացնել ու արգելել։ Բայց տվյալ դեպքը առանձնահատուկ դեպք է։ Նույնիսկ եթե մահապատիժը բոլորի համար վերացվեր, այն անհրաժեշտ կլիներ բռնապետի համար պահպանել։

Երբ խոսքն այն հեղափոխության փոթորկի հետևանքով գահից ցած նետված թագավորի մասին է, որը դեռ ամենավին արդար օրենքներով ամրապնդված չէ, մի թագավորի մասին, որի միայն անունն ապստամբած ազգի համար պատերազմի պատուհաս է առաջ բերում, այն ժամանակ ո՛չ բանտը, ո՛չ արտաքսումը նրան վնասազերծել չեն կարող։ Եվ սովորական օրենքներից կատարվող, արդարամտությամբ թույլատրը-

վող այդ դաժան բացառությունը պայմանավորվում է նրա հանցագործությունների բուն էությամբ։ Յավով արտահայտում եմ ճակատագրական ճշմարտությունը՝ ավելի լավ է թող մեռնի Լյուդովիկոսը, քան հարյուր հազար առաքինի քաղաքացի։ Լյուդովիկոսը պե՛տք է մեռնի, եթե հայրենիքն ուզում է ապրել...

... Հռետորը վերջացրեց։ Նա հանգիստ հավաքում է իր ճառի թերթերը, առանց շտապելու դրանք դնում թղթապանակի մեջ, ամբիոնից իջնում։ Դահլիճը լուռ է։

Եվ հանկարծ լսվում են որոտալից ծափահարություններ։ Ծափահարում են բոլորը՝ թե բարեկամները, թե թշնամիները, ծափահարում են ժիրոնդիստների առաջնորդները և «ճահճային դոդոշները»։ Ինչո՞ւ նրանք այդպիսի խանդավառությամբ ծափ են տալիս։ Մի՞թե ոգևորությունն այնքան մեծ է, որ համակեց նաև նրանց, հակառակ այն բանի, որ հենց նրանք պետք է զգային հարվածի ամբողջ ուժը։ Թե՞ հասկանալով, որ իրենք պարտվել են, աշխատում են կեղծավորությամբ իրենց փրկել... Համենայն դեպս այժմ «որովայնի» դեպուտատները մի քիչ կզգուշանան անխոհեմաբար ժիրոնդիստների ետևից գնալուց։

Այդ օրը ժիրոնդիստները նորից Կոնվենտում մեծամասնությունը կորցրին։

Ռոբեսպիերը գիտեր, թե ինչ է անում՝ մահապատիժ պահանջելով, նա դատավարություն ձեռք բերեց։ Նրա ճառի անմիջական տպավորության տակ անհապաղ ընդունվում է մի դեկրետ, որ «Ազգային Կոնվենտը Լյուդովիկոս XVI-ին կդատի»։

Նախկին նորին մեծությունը, այժմ պարզապես Լյուդովիկոս Կապետը, իր ընտանիքի հետ միասին ապրում էր Տամպլի մռայլ աշտարակում։ Տամպլի կալանավորները Կոմունայի խիստ հսկողության տակ էին գտնվում։ Սակայն նրանց ամենևին չէին նեղում։ Լյուդովիկոսի տրամադրության տակ հարուստ մի գրադարան կար։ Այն ժամանակ, երբ հեղափոխություն կատարած մարդիկ թեփով էին սնվում, տապալված թագավորի ճաշասեղանին մատուցում էին հատուկ թխված

սոխուտակ հաց, մի քանի տեսակ գինի, միրգ, կարկանդակ և պարոսիմատ։ Թագավորի ընտանիքի հագուստն ու սնունդը Կոմունային ամսական շուրջ քսան հազար լիվր էր նստում։

Դեկտեմբերի 11-ին Տամպլի կյանքի միապաղաղությունը խախտվեց։ Առավոտվանից տագնապ զարկեցին, և մի քանի հրանոթների ետևից հեծելազորային մի ջոկատ մտավ աշտարակի բակը։ Այդ օրը Լյուդովիկոսին պետք է տանեին Կոնվենտ հարցաքննության։

Եվ ահա նա կանգնած է Կոնվենտի վանդակապատի առջև։ Ոչնչից չի երևում, որ նա նախկին թագավորն է. չկան ո՛չ շքանշաններ, ո՛չ զդեստի ոսկեթել ասեղնագործություն. այտերը մազակալել են, հայացքն անկենդան է, անտարբեր։

Ժողովը լուռ է։ Դեպուտատները նայում են այն մարդուն, որի առջև դեռ բոլորովին վերջերս հանում էին գլխարկները, որին նրանցից շատերը խանդավառությամբ ծափահարում էին որպես իրենց տիրակալի։ Հո տապալված թագավորի նկատմամբ խղճահարության զգացմունք չի՞ սողոսկում նրանց հոգին...

Բայց հենց որ նա սկսեց խոսել, խղճահարության ամեն մի ստվերում անդառնալիորեն վերացավ։

Լյուդովիկոսը պաշտպանության բոլոր եղանակներից ընտրեց ամենաանհաջող եղանակը։ Նա բռնեց անհիմն ժխտման ճանապարհը, ակնհայտ, անսքող ստի ճանապարհը։

Նրա բոլոր պատասխանները միևնույն ձևն ունեին՝ «Դա տեղի է ունեցել սահմանադրությունն ընդունելուց առաջ», «Ես այն ժամանակ դրա համար իրավունք ունեի», «Դա վերաբերում է մինիստրներին», «Ես չեմ հիշում», «Ես այդ մասին ոչինչ չունեմ»։

Երբ նրան վարկաբեկող փաստաթղթեր ներկայացրին, Լյուդովիկոսը դրանց իսկությունը ժխտեց։ Երբ նրան հարցրին երկաթե չհրկիզվող պահարանի մասին, նա պատասխանեց, որ դրա մասին ոչինչ չի իմացել։

Խաբեությունն ակներև էր։ Այդ հանգամանքը պետք է թագավորին թշնամաբար վերաբերվող դեպուտատներին զայրույթներ և ավելացներ այն մարդկանց դժվարությունները, ովքեր ուզում էին նրան փրկել։

Կոնվենտից դուրս գալիս Լյուդովիկոսը տեսավ Կոմունայի դատախազին, որը սև հաց էր ուտում։ Թագավորը, որը սովորականի պես քաղց էր զգում, մի պատառ հաց խնդրեց։

— Խնդրեմ,— պատասխանեց Շոմետը,— վերցրեք, սա սպարտացու նախաճաշ է...

Երբ թագավորը քաղաքագլխի ծածկակառքը նստեց՝ Տամպլ մեկնելու, մի պատառ ժողովրդական հացը դեռ նրա ձեռքին էր։ Չնայած ուտելու ցանկությանը, հացի՝ մածկան հիշեցնող այդ փափուկ սևավուն միջուկը նրա կոկորդը չէր մտնում... Քաղաքագլխի տեղակալը, տեսնելով, որ հացը նեղություն է տալիս նախկին միապետին, պատառը Լյուդովիկոսի ձեռքից վերցրեց և փողոց նետեց։

Ժիրոնդիստների վստահությունը սաստիկ խախտվեց։ Բայց նրանք չէին ուզում իրենց պարտված ճանաչել։ Դեկտեմբերի 10-ի և 26-ի միջև ընկած ժամանակամիջոցը, քանի դեռ կազմում ու կարդում էին մեղադրական երկար ակտը, հարցաքննում Լյուդովիկոսին և լսում փաստաբանի ճառը, նրանք օգտագործում էին այն բանի համար, որ ուժեր հավաքեին և գործողությունների նոր պլան մշակեին։ Այլևս թագավորի անձեռնմխելիության և դատավարությունից հրաժարվելու վրա պնդելու հնարավորություն չունենալով, ժիրոնդիստների լիդերները առաջադրեցին ժողովրդին դիմելու թեզիսը։ Կոնվենտի անդամները,— պնդում էին նրանք,— չեն կարող լինել միաժամանակ և՛ մեղադրողներ, և՛ դատավորներ. թագավորի ճակատագրի վերջնական որոշման համար հարկավոր է ավելի բարձր մի ինստանցիա։ Այդպիսի ինստանցիա կարող է լինել միայն ինքը ժողովուրդը։ Կոնվենտին առաջարկելով արտահայտվել Լյուդովիկոսի մեղավորության հարցի շուրջը միայն, ժիրոնդիստ Սալը նշում էր, թե այդ օրդանի համար հավասարապես վտանգավոր է թագավորին և՛ մահապատժի դատապարտելը, և՛ նրան կենդանի թողնելը. առաջին դեպքում ժողովուրդները Լյուդովիկոսին նահատակի լուսապսակով կշրջապատեն, իսկ Եվրոպայի միապետները մահապատիժը կօգտագործեն որպես Ֆրանսիայի հետ նոր պատերազմ սկսելու մի պատրվակ։ Երկրորդ դեպքում հրեշավոր հանցագործություններն անպա-

տիվ կմնան։ Ուստի, եզրակացնում էր Սալը, Կոնվենտին միայն մնում է դատավճիռ կայացնելու գործում իրեն անձեռնհաս ճանաչել և դիմել ժողովրդին։ Ժողովուրդը պետք է արտահայտվի ըստ սեկցիաների ու դեպարտամենտների՝ սկզբնական ժողովներում, իսկ քվեարկության արդյունքները կամփոփվեն Կոնվենտում։

Սալին ջերմորեն պաշտպանեց Բյուզոն։

Այդ առաջարկությունը շատ սրամիտ մի արարք էր, որ կատարվեց, նպատակ ունենալով տառացիորեն վերջին մոմենտին ձախողել դատավճռի կայացումը, որն արդեն բոլորի շուրթերին էր։

Այս անգամ Անկաշառելին ցասկոտ է... Այժմ նա միայն չի բացատրում, այժմ նա մեղադրում է, ընդ որում մեղադրում է հայացքը ուղիղ մեղադրվողի երեսին սևեռելով։ Բայց հռետորի դայրույթի ամբողջ ուժը երևան է գալիս ոչ միանգամից, այդ ուժն աճում է այն բանի համեմատ, թե ինչպես ունկնդիրների առաջ կետ առ կետ մերկացվում է ժիրոնդիստների նոր պլանի լությունը։

Ռոբեսպիերը իր ճառն սկսում է, զարմանալով, որ բոլոր տեսակետներից քննարկված, ինքնին պարզ հարցը հանկարծ նոր վեճեր առաջացրեց։

Դատավարությունն ավարտվեց։ Ինքը մեղադրյալը խոստովանեց, որ բոլոր ձևականությունները կատարվել են, որ ինքն այլևս ասելու ոչինչ չունի։ Մի շարք դեպուտատներ ցանկացան տարկետում ստանալ, որ հնարավորություն ունենան ազատ կերպով կարծիքների փոխանակություն կատարելու, այդ տարկետումն էլ տրվեց։

Թվում էր, թե ամեն ինչ վերջացավ։ Բայց ոչ, հենց այժմ է մտցվում մի առաջարկություն, որն սպառնում է դատավարությունն անվերջ շարունակելու, իսկ հանրապետությունը կորստյանման հասցնելու։

Նոր նախագծի համաձայն թագավորի ճակատագիրը պետք է քննարկվի քառասունչորս հազար սկզբնական ժողովներում։ Գրանցից յուրաքանչյուրը անողոք պայքարի ասպարեզ կը-դառնա։ Այդ ժողովներն անխուսափելիորեն մուտք կգործեն

ֆելյանները, որոնք իրենց բոլոր ուժերը կլարեն՝ բռնապետի օգտին պարզամիտ մարդկանց գուլը շարժելու։ Իսկ ժողովրդի իսկական ներկայացուցիչներն այդ ժողովները չեն ընկնի։ Արդյոք հողագործը կցանկանա՞ իր արտից հեռանալ, արհեստավորը կհամարձակվի՞ իրեն հանապազօրյա հաց տվող իր աշխատանքը թողնել՝ քրեական օրենսգրքի թավուտներում խորանալու և Լյուդովիկոս Կապետի համար պատժատեսակ գտնելու։ Հավանաբար, ոչ։ Իսկ եթե այդպես է, ապա այդ ժողովների թուլությունը կծառայի միապետական բոլոր ուժերի համախմբմանը միայն։ Ժողովրդին ուղղված վճռափոխության գանգատը կդառնա ժողովրդի դեմ, ժողովրդի բոլոր թշնամիներին ուղղված վճռափոխության գանգատ։

Դահլիճում լարված ուշադրությունն ուժեղանում է։ Հռետորը նոր է միայն վերլուծություն կատարում, սառնարյուն ու զուսպ, նա նոր է միայն իր դրույթները կշռադատում, բայց արդեն զգացվում է, թե ինչպես յուրաքանչյուր նոր արտահայտության հետ ամպրոպը մոտենում է։ Ահա նա, վերջապես, ձևակերպում ու նետում է զարհուրելի մի մեղադրանք, որից խուսափել չեն կարող նրանք, որոնց դեմ այն ուղղված է։

— Այս է այն սարսափելի պլանը, որ լկտիաբար առաջարկում են մեզ՝ իրերն իրենց անուններով կոչենք, ամենաանամոթ կեղծավորություն և ամենալպիրշ խարդախություն, նրանց համար ատելի ժողովրդական ինքնակալության դրոշով քողարկված։

Եվ այդ խելացնոր միջոցն առաջարկում են հասարակական անդորրության համար, այն քողարկում են քաղաքացիական պատերազմից խուսափելու ցանկությամբ։

Հռետորը վերափոխվում է։ Այժմ նա արդեն ճշմարտության սառնասիրտ հետազոտող չէ, նա կրակոտ մերկացնող է։

— Իսկապես, մի՞թե պարզ չէ, որ այստեղ դատավարություն է տեղի ունենում ոչ այնքան Լյուդովիկոս XVI-ի, որքան ազատության ամենաջերմ պաշտպանների դեմ։ Մի՞թե այստեղ ըմբոստանում են Լյուդովիկոսի բռնակալության դեմ։ Ամենևին ոչ, այստեղ զայրանում են մի խումբ ճնշված հայրենասերների բռնակալությունից։ Մի՞թե այստեղ սարսափում են արիստոկրատիայի դավադրություններից։ Ամենևի՛ն։

Մեզ վախեցնում են ժողովրդի ինչ-որ ներկայացուցիչների գիկտատուրայով, որոնք իբր թե ուզում են նրա իշխանությունը հափշտակել։ Այստեղ ուզում են բռնապետին պահել, որ նրան զինաթափված հայրենասերների դեմ հանեն։ Դավաճանե՛ր։ Նրանց տրամադրության տակ են ամբողջ ռազմական ուժը, ամբողջ պետական գանձարանը՝ և դեռ նրանք էլ մեզ մեղադրում են բռնակալության մեջ։ Հանրապետությունում ոչ մի գյուղակ չկա, որտեղ նրանք մեզ չզրպարտեն. նրանք հասարակական սեփականությունը վատնում են իրենց զրպարտչագրերի վրա. նրանք համարձակվում են դավաճանել հասարակական վստահությանը, գրագրության գաղտնիքը խախտելով, որ կիսաճամփին հայրենասերների ճեպագրերը լռեն ու ճշմարտության ճիչը լռեցնեն, և հենց նրանք էլ գոռգոռում են զրպարտության մասին։ Նրանք մեղանից խլում են նույնիսկ ձայնի իրավունքը և հենց մեզ էլ բռնակալի անունով նշավակում։ Նրանք անլուր դավաճանությամբ վիրավորված հայրենասիրության թախծոտ պոռթկումների մեջ խռովություն են տեսնում, նրանք այս սրբավայրը թնդացնում են կատաղության ու վրիժառության աղաղակով...

Բայց ահա Անկաշառելին նորից հանգիստ է։ Նա ամփոփում է։ Նա արձանագրում է։ Եվ այդ անտարբեր, զուսպ արձանագրումը այստեղ նստած մարդկանցից շատերի համար ամենակրակոտ կոչերից էլ ավելի զարհուրելի է։

— Այո, դա անտարակուսելի է՝ նախագծի հեղինակներն ուզում են Կոնվենտը ստորացնել և, թերևս, նաև ոչնչացնել այն, օգտագործելով այդ անվերջ դատավարությունը։ Եվ դատաճանությունը բույն է դնում ո՛չ այն մարդկանց մեջ, ովքեր աննահանջ կերպով պաշտպանում են ազատության ըսկզբունքները, ո՛չ ժողովրդի մեջ, որը նրա համար զոհաբերում էր ամեն ինչ, ո՛չ Ազգային Կոնվենտում, որը ձգտում է բարեկործության ու ճշմարտության, և նույնիսկ ո՛չ այն անձնավորությունների մեջ, ովքեր՝ միայն շարաբաստիկ խարդավանքի խաղալիքներ են և ուրիշների կրքերի կույր գործիքներ. դավաճանությունը բույն է դնում մեկ-երկու գյուժին սրիկաների մեջ, ովքեր դավադրության բոլոր թելերն իրենց ձեռքում են պահում։ Օրվա կարևորագույն հարցերը քննար-

կելիս լռություն պահպանելով, նրանք գաղտնաբար խռովություն են սերմանում, որն այժմ մեզ տանջում է, և աղետներ են պատրաստում, որ մեզ սպառում են հետագայում...

Հռետորը վերջացնում է, զգոնության կոչ անելով, և կըրկնում Լյուդովիկոսին մահվան դատապարտելու պահանջը։

Այդ ճառից հետո անցյալ անդամվա նման ծափահարությունների միահամուռություն չկա։ Դեպուտատների մի մասն ասես քարացել է։ Սարսափը մարմնի անդամները կաշկանդել է, համրությունը լեզուները կապել է։ «Պետական մարդիկ» ջախջախվել են։ Նրանց իսկական պլանները մերկացվել են։ Նրանք զուր էին կարծում, թե կարելի է թաքնվել ժողովրդին ուղղված բողոքարկման ետևում, հենց «ժողովուրդ» բառի հետևում։ Անկաշառելին, նրանց կառույցի հիմքում քարը քարի վրա չթողնելով, համոզիչ կերպով ապացուցեց, թե նրանք ժողովրդին որքան թշնամաբար են վերաբերվում։ Եվ ամենասարսափելին այն էր, որ յակոբինականների հռետորը խոսում էր ոչ թե իր, ոչ թե իր կուսակցության, այլ այն ժողովրդի կողմից, որի անունը ժիրոնդիստները փորձում էին այնպես անհաջող կերպով չարաշահել և որից նրանք, ըստ էության, աշխարհում ամեն ինչից ավելի շատ էին վախենում։ Ուստի և նրանց խոցում է ոչ միայն ճառը։ Նրանց վերջնականապես ջախջախում է այն, որի վկան նրանք դառնում են ամենամոտիկ օրերին, դեկտեմբերի 28-ի նիստից հետո։

Ժողովուրդը Ռոբեսպիերին լսեց։ Նրա ճառը տպագրվեց հասարակության հաշվին, փարիզեցիների մեջ տարածված բաժանորդագրությամբ։ Այն արձագանք գտավ նույնիսկ դեպարտամենտներում, որտեղ ժիրոնդիստները դեռևս իրենց դիրքերը պահպանում էին։ Երկրի տարբեր ծայրերից նորից սկսեցին հանրագրեր ստացվել, պահանջելով Լյուդովիկոս XVI-ին մահվան դատապարտել։ Վերջապես, դեկտեմբերի 30-ին Կոնվենտն ազդու և տխուր մի տեսարանի վկա դարձավ։ Փարիզի տասնութ սեկցիաներից մի պատգամավորություն ներկայացավ։ Նրա շարքերում կային հեղափոխության՝ օգոստոսի 10-ին հաշմանդամ դարձած վետերաններ, այդ օրը զոհված քաղաքացիների այրի կանայք և որբեր։ Նրանց հռետորի

համառոտ զայրալից խոսքից հետո սեկցիաների պատգամավորները դահլիճի միջով անցան, նրա շուրջը պտտվելով։ Դա մի զարհուրելի տեսարան էր։ Իրենց որբացած մանկիկներին գնալի դեպուտատները բարձրացնող կանայք, հենակներով քայլող պատանիներ, սայլակներով ման եկող անոտք մարդիկ... Մի քանի բոլորովին խեղված մարդկանց տանում էին պատգարակով, մյուսներին, տեսողությունը կորցրած մարդկանց՝ ձեռքից բռնած...

Ներքևի աթոռներին նստած դեպուտատներն աշխատում էին չնայել անցնողներին, աչքերով չհանդիպել նրանց փնտրող կրակոտ հայացքներին։

Այժմ արդեն ոչինչ չէր կարող ժիրոնդիստների դիրքերը փրկել։ Ապարդյուն էր Վերնյոյի պերճախոսությունը, որի ճառը, ուշացումով մեջ բերվելով որպես ծանր հրետանի, ըզբաղեցրեց դեկտեմբերի 31-ի ամբողջ նիստը, ապարդյուն էին Բրիսոյի խստորեն կշռադատված ելույթը և Ժանսոնեի թունոտ դիպարտությամբ համակված համառոտ, բայց թշնամական ճառը։ Պերճախոսությունը դեպքերի ընթացքը փոխել չէր կարող։

Ժողովրդի աճող զայրույթից զգուշանալով, ժիրոնդիստներն այդ վերջին ելույթներից հետո լռեցին ու սկվեցին։ Կոմպանիան տանուլ տրվեց։ Միապետությունը պաշտպանելու համար մեղադրանքներ ստանալուց վախենալով, որ իսկապես այս ու այնտեղ լսվում էին, «պետական մարդիկ» պետք է ինքնապահպանության համար Լյուդովիկոսին զոհաբերեին։

Հունվարի 16-ին սկսվեց դատավճռի անվանական քվեարկումը։ Այն շարունակվեց երեսունվեց ժամ անընդմեջ։

Ինչպես և կարելի էր կանխատեսել, դողացող ժիրոնդիստները թագավորին դավաճանեցին, որի կյանքի համար դրանից առաջ այնպես հուսահատությամբ պայքարում էին։ Նրանց մեծամասնությունը չհանդգնեց մահապատժի դեմ հանդես գալ։ Լյուդովիկոսը մահվան դատապարտվեց 721 քվեարկող դեպուտատների առկայությամբ՝ 387 ձայների մեծամասնությամբ։

Ռոբեսպիերին վիճակված էր վիժեցնելու նաև Բրիսոյի գլխավորությամբ գործող քսանվեց ժիրոնդիստների խմբի վերջին թույլ փորձը՝ հետաձգելու եթե ոչ դատավճիռը, դատավճիռն արդեն կայացվել էր, ապա գոնե բուն մահապատիժը։

Երկու օր շարունակ, հունվարի 18-ի և 19-ի նիստերին, Բրիսոն, Բյուզոն, Կոնդորսեն, ամբիոնի վրա միմյանց փոխարինելով, ոգևորությամբ ապացուցում էին, թե դատավճիռը չպետք է իսկույնևեթ ի կատար ածել։ Դատավճռի իրագործման շտապողականությունը, հավատացնում էին նրանք, ամբողջ Եվրոպան Ֆրանսիայի դեմ կհանի և ֆրանսիացիների գլխին անլուր աղետներ կբերի. այդ շտապողականությունը ոտքի կհանի ոչ միայն թագավորներին, այլև ազգերին, որոնք այն կվերագրեն մի խումբ բանսարկուների վրիժառության տենչանքին ու ճնշմանը. երկրի ներքին հանգստության համար նույնպես ավելի լավ կլիներ մահապատիժը հետաձգել մինչև նոր սահմանադրության ընդունումը։

Ռոբեսպիերը իր համառոտ ելույթով սովորական տրամաբանությամբ ցույց տվեց այդ բոլոր փաստարկների թուլությունը։ Դատավճիռը կայացվում է իրագործելու համար։ Իսկապես որ, արժե՞ր արդյոք հարցն այնպես եռանդով քննարկել, այնպես դատավարությունն շտապեցնել, վերջապես, արժե՞ր վերջին երկու ամսում շարունակ զբաղվել բացառապես թագավորի գործով, եթե, վերջապես, դատավճիռը կայացնելով, այն պետք է անուշադրության մատնվեր։ Մահապատժի իրագործումը հետաձգելով չի կարելի բարելավել երկրի ո՛չ ներքին, ո՛չ էլ արտաքին դրությունը։ Ընդհակառակը, դա հանցավոր ու կործանիչ հույսեր կներշնչեր և փոքրոգի կարեկցության զգացում կառաջացներ, մի հանգամանք, որ կարող է հանգեցնել հուզումների, առանց արտաքին թշնամիների ատելությունն ու չարությունը թուլացնելու։ Բռնապետներն այդ փաստը կընդունեն որպես վախկոտության արտահայտություն և միայն է՛լ ավելի կամրապնդվի ֆրանսիական ժողովրդին ստրկացնելու նրանց հույսը։

Դեպուտատների մեծամասնությունը մերժեց Բրիսոյի խմբի առաջարկությունը։

Հունվարի 21-ի առավոտյան Մորիս Դյուպլեն իր տան դարպասը պինդ փակեց և փողոցի վրա բացվող լուսամուտների փեղկերը ծածկեց։

— Դուք այդ ինչո՞ւ եք անում,— հարցրեց Էլեոնորան։

— Ձեր հայրը ճիշտ վարվեց,— հյուսնի փոխարեն պատասխանեց Ռոբեսպիերը,— շուտով այստեղ ինչ-որ բան կըկատարվի, որ դուք չպետք է տեսնեք։

Իրոք որ, առավոտյան մոտ ժամը տասին № 366 տան բնակիչները լսեցին անիվների դղրդյուն և ձիերի դոփյուն։ Դա նորից թագավորն էր Սենտ-Օնորե փողոցով ճամփորդում, անցնելով իր վերջին ճանապարհը Տամպլից մինչև կառափնարան։

Ժամը 10-ն անց 20 րոպեին դահիճը «Կեցցե՛ հանրապետությունը, կեցցե՛ ազգը» միահամուռ բացականչությունների տակ ժողովրդին ցույց տվեց թագավորի կտրած գլուխը։

Այսպես վերջացավ այդ դատավարությունը, որ տեղի ունեցավ ամբողջ ազգի և մի մարդու միջև, ինչպես այն անվանեց Լյուդովիկոս XVI-ի դատապաշտպանը, կամ թե, ավելի ճիշտ, երկու գլխավոր կուսակցությունների միջև՝ հեղափոխության վճռական փուլում։

Մաքսիմիլիան Ռոբեսպիերի համառության ու հաստատակամության շնորհիվ ևս մեկ քայլ մոտեցան մոնտանյարները հաղթանակին, ժիրոնդիստները՝ կործանման։

ԳԼՈՒԽ 8

ԺԻՐՈՆԴԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Անկաշառելին բացառիկ մեթոդիկությամբ էր գործում։ Սկզբում նա միայն պաշտպանվում էր։ Նոյեմբերի 5-ին նա նախազգուշացրեց, դեկտեմբերի 3-ին՝ իրադրությունը բացատրեց, 28-ին՝ վճռական հարվածը հասցրեց։ Պլանաչափորեն Մյնամու վրա հարձակվելով, նա Մարատի, Սեն-Ժյուստի և մյուս դեմոկրատների աջակցությամբ պաշարման օղակը սեղմում էր։ Բայց հետո նրա գրոհների ցասումը ժամանակավորապես թուլացավ։ 1793 թվականի ձմռան վերջին և գար-

նան սկզբին ժիրոնդայի դեմ Լեռան հարձակողական երթը դադարեց։ Դրա պատճառը «կատաղիների» ակտիվացումն էր։

Ժիրոնդիստները «կատաղիներ» անվանեցին դեմոկրատների լագերում ամենաձախ թևը ներկայացնող ժողովրդական ագիտատորների խումբը։ Նրանց մեջ գլխավոր տեղը գրավում էր ժակ Ռուն։ Իբրև քահանա, որ մի ժամանակ Ֆրանսիայի հարավում քարոզ էր կարդում, ժակ Ռուն լավ ծանոթ էր քաղաքի ու գյուղի չքավորների անհույս կարիքին։ Կորդելյերների ակումբի նշանավոր անդամ դառնալով, նա շատ մտերմացավ Մարատի հետ և մի ժամանակ նրան նույնիսկ իր բնակարանում թաքցնում էր։ Գրավիլյեի սեկցիան Ռուին Կոմունայի գլխավոր խորհրդի անդամ առաջարկեց։ «Կարմիր քահանան» անողոքաբար մերկացնում էր ժիրոնդիստների տնտեսական քաղաքականությունը։ «Ավելի մեծ հանցագործություն չկա,— ասում էր նա,— քան ժողովրդի աղետների հաշվին հարստություն գիզելը և վաշխառուական գործարքներ կնքելը, առաջացնելով ժողովրդի արցունքներն ու աղքատացումը։ Բոնապետի լուծը թոթափած աղգը պետք է հարձակվի հարստության արիստոկրատիայի դաժան մեքենայությունների վրա»։

Ռուն միայնակ չէր։ Նրա կողքին հանդես էին գալիս ժան Վալլեն, Թեոֆիլ Լեկլերը, դերասանուհի Քլեր Լակոմբը։ «Կատաղիները» մահապատիժ էին պահանջում սպեկուլյանտների համար, խիստ օրենքներ հացի առևտրի նկատմամբ, մաքսիմում (առավելագույն հաստատուն գներ) մթերքների և առաջին անհրաժեշտության առարկաների համար։ Մասնավոր սեփականության ոչնչացման հարց չդնելով, «կատաղիները» միաժամանակ սոցիալական հավասարության համար մյուս բոլոր դեմոկրատական խմբավորումներից շատ ավելի հետևողականորեն էին պայքարում։ 1793 թվականի ձմռանը-գարնանը «կատաղիների» ագիտացիան համապատասխանում էր ժողովրդական լայն զանգվածների, առաջին հերթին Փարիզի բնակչության ամենաաղքատ խավերի պայքարին ու ակնկալություններին։ Մաքսիմումի պահանջը մայրաքաղաքի սանկյուլոտների գլխավոր լոզունգը դարձավ։

Այդ ամենը բարդացրեց Կոնվենտում եռացող պայքարը։ Քանի որ Լուն և նրա ընկերներն իրենց կոչերով ուղղակի ժիրոնդիստներին էին հարվածում, թվում էր, թե ինքնաբերաբար մոնտանյարների և «կատաղիների» դաշինքի միտքն էր առաջանում։ Բայց մոնտանյարների լիդերներն այդ մտքին հանգեցին ոչ անմիջապես։ Ճիշտ է, նրանք տնտեսական հարաբերություններին պետության չմիջամտելու ժիրոնդիստական տեսությունը չէին ընդունում։ Նրանք հավասարապես չէին պաշտպանում նաև ժիրոնդիստների սոցիալական միջոցառումները։ Դեռևս 1792 թվականի դեկտեմբերին Սենժյուստը հարձակվեց թղթադրամի չապահովված թողարկումների կառավարական մեքենայությունների վրա։ Հենց այդ ժամանակ էլ Ռոբեսպիերը մի ուժեղ ճառով դատապարտեց «պետական մարդկանց» տեսական հորինվածքները։ Ժիրոնդիստների տնտեսական լիբերալիզմը քննադատելով, Անկաշառելին ապացուցում էր, որ առևտրի ոչնչով չսահմանափակված ազատության պաշտպանները երկիրը սովահարության են հասցնում։ «Մարդու համար անհրաժեշտ սնունդը, նշում էր Ռոբեսպիերը, ճիշտ այնպես նվիրական է, ինչպես և նրա կյանքը։ Այս վերջինի պահպանման համար անհրաժեշտ ամենը ինչ ամբողջ հասարակության սեփականությունն է. միայն ավելցուկն է մասնավոր սեփականություն կազմում, միայն այն կարելի է տալ առևտրականներին։ Ի վնաս իր նմանների կատարվող ամեն տեսակ չարաշահություն ոչ թե առևտուր է, այլ կոլոպուտ։ Ոչ ոք իրավունք չունի իր մոտ հացահատիկի չկշռեր կուտակելու, երբ կողքին մարդիկ սովից մեռնում են։ Բոլոր իրավունքներից առաջինը գոյության իրավունքն է, համակեցության առաջին օրենքը հասարակության բոլոր անդամների համար գոյամիջոցների ապահովումն է»։ Սակայն չակոբինականների առաջնորդի հետևություններն ավելի խուլ էին, քան կարելի էր սպասել նրա ճառից ելնելով։ Ռոբեսպիերը պահանջում էր, որ Կոնվենտը գոյություն ունեցող հացահատիկի պաշարների հաշվառում կատարեր, հոգ տաներ շուկաները դրանցով ապահովելու և չարաշահումների համար խիստ պատիժներ նշանակեր. Անկաշառելին հաստատուն գներ սահմանելու գաղափարը չէր շոշափում։ Լինելով Ռուսոյի

աշակերտը, նա վախենում էր, որ «կատաղիների» պրոպագանդան կարող է անուղղելի հարված հասցնել մասնավոր սեփականության սկզբունքին, մասնավոր սեփականության, որը նա հասարակության հիմքերից մեկն էր համարում։ Սոցիալական հավասարության պահանջները Մաքսիմիլիանին հանգեցրին նրա համար ատելի «հողային օրենքի»՝ հողի լիակատար վերաբաժանման մտքին, «հողային օրենքի», որը, նրա կարծիքով, օրինականության և բնական իրավունքի սկզբունքների հետ աղաղակող հակասության մեջ էր գտնվում։ Այս բոլոր կշռադատությունների ազդեցության տակ Ռոբեսպիերը ոչ միայն դատապարտեց Ժակ Ռուին և նրա զինակիցներին, այլև փետրվար-մարտին մեղմացրեց ժիրոնդիստների դեմ իր ելույթների սրությունը։ Անկաշառելիի տեսակետը բաժանում էին մյուս յակոբինական-դեմոկրատները։ Մարատն ափսոսում էր, որ Փարիզի ավերված խանութների դռներից, խբբատելու համար, մի քանի մեծադնորդների չեն կախել, սակայն նա նույնպես «կատաղիների» պահանջները լրիվ չափով չէր ընդունում։ Իսկ ինչ վերաբերում է Դանտոնին, ապա նա այժմ համաձայն էր նույնիսկ հաշտվելու «պետական մարդկանց» հետ, և նրա հանցանքով չէր, որ այդ հաշտությունը չհաջողվեց։

Ժիրոնդիստները դադարի ժամանակամիջոցն օգտագործել չկարողացան։ Ընդհակառակը, ասես մոտ անցյալի հարվածները մոռանալով, նրանք օրեցօր լկտիանում էին։ Նրանց հատկապես խրախուսեց այն, որ յակոբինականները չպաշտպանեցին մարտի 9—10-ին «կատաղիների» ղեկավարությամբ կատարված ժողովրդական ապստամբության փորձը։

Սակայն շուտով ամեն ինչ փոխվեց։ Հենց նույն մարտին անսպասելիորեն տեղի ունեցան չնախատեսված դեպքեր, որոնք մոնտանյարներին ստիպեցին իրենց ստրատեգիան ու տակտիկան վերաիմաստավորել։ Այդ դեպքերն էին Վանդեայի ապստամբությունը և Դյումուրյեի դավաճանությունը։

Վանդեյան և նրա հարևան մարզերը երկրի տնտեսապես հետամնաց ծայրամասերն էին։ Նահապետական գյուղացիու-

թյունը, նրանց հիմնական բնակչությունը ամուր կապերով կապված էին իրենց կալվածատերերի հետ։ Արագորեն հարբեցուցած բուրժուազիային նախանձող և կուլակային խավի կողմից հրահրվող, այդ ծայրագավառները շատ թույլ կերպով թափանցող հեղափոխական դաղափարներից գրեթե մեկուսացած վանդեացի ծեծկված գյուղացիները ազնվականության ու հոգևորականության հակահեղափոխական պրոպագանդայի նկատմամբ շատ ընկալունակ եղան։ Այստեղ գործող վտարանդի-միապետականներին Անգլիան առատորեն դրամական ոգնություն էր ցույց տալիս։ Խռովության առաջին իսկ օրերին ապստամբները Նանտը զավթեցին և կոտորած սարքեցին, որի ընթացքում հեղափոխության ավելի քան հինգ հարյուր կողմնակիցներ զոհվեցին։ Շուտով ապստամբությունը տարածվեց Նորմանդիայում և Բրետանում։

Դյումուրյեի դործը դրանից էլ ավելի վատ էր։ Ժիրոնդիստների այդ կուռքը վաղուց արդեն երկդիմի խաղ էր խաղում։ Հոլանդիայի դրավման մասին Կոնվենտի հրամանը չկատարելով, նախկին ռազմական մինիստրն ամբողջ ձմռանը ոչինչ չարեց, ավստրիացիներին հնարավորություն տալով իրենց բանակը վերակազմելու և ուժեղացնելու։ Հետո նա թշնամու հետ գաղտնի բանակցությունների մեջ մտավ, իսկ Փարիզ մի լկտի նամակ ուղարկեց, որով Կոնվենտը «հիմարների խառնաժողով» էր անվանում և պահանջում Յակոբինյան ակումբը ոչնչացնել։ Սրիկան ռազմական դիկտատուրա էր երազում։ Բայց նա սխալվեց, դերադնահատելով իր ազդեցությունը գինվորների վրա։ Լաֆայետի հետքերով գնալով, նա ստիպված եղավ բաժանել նաև նրա ճակատագիրը։ Երբ դավաճանությունը բացահայտվեց, բանակը Դյումուրյեից երես դարձրեց, և մարտի վերջին նա մերձավոր մարդկանց մի փոքր խմբի հետ փախավ ավստրիացիների մոտ։ Ֆրանսիացիներն ըստիպված եղան Բելգիան թողնել։ Ինտերվենտների զորքերը նորից հայտնվեցին հանրապետության սահմանի մոտ։

Թե՛ Վանդեայի խռովությունը, թե՛ առանձնապես Դյումուրյեի դավաճանությունը ժիրոնդիստներին խիստ վարկաբեկեցին։

Այդ պարոնները խռովությունը սաղմնային վիճակում ճնշելու համար որևէ գործուն միջոց ձեռք չառան։ Ընդհակառակը, նրան թույլ տվեցին ամրապնդվել ու տարածվել հարևան շրջաններում։ Դրանում զարմանալու ոչինչ չկար. «պետական մարդկանցից» շատերը գաղտնաբար համակրում էին հակահեղափոխական ապստամբությանը։ Ժիրոնդիստներին հավասարապես շփոթեցնել չէր կարող Դյումուրյեի դավաճանությունը, որն ամենևին պատահական բան չէր. այն խորհրդանշում էր խոշոր բուրժուազիայի տրամադրությունները, որը վերջնականապես հեռացել էր հեղափոխությունից և ձգտում էր միանալու միապետականների հետ։ Այո, այժմ Ժիրոնդայի լիդերները հանրապետության պարտության մեջ էին դտնում իրենց և այն խավերի միակ փրկությունը, որ նրանք ներկայացնում էին։ Դա ակներև էր։ Եվ դրա ակներևությունն արտահայտվեց առաջին հերթին «կատաղիների» ազդեցության շեշտակի աճումով։ Այնուհետև նրանց օգնում էին ոչ միայն պլեբեյական զանգվածները, այլև մանր բուրժուազիայի զգալի մասը։ Այսուհետև նրանց սոցիալական ու քաղաքական ծրագիրը թվում էր հեղափոխության անկախության ու նվաճումների փրկության համար միակ պիտանի ծրագիրը։

Ջախ յակոբինականները Շոմետի գլխավորությամբ արդեն վաղուց ժակ Ռուի հետ շփման կետեր էին գտնում։ Այժմ, ապրիլի սկզբին, Կոմունան վճռականորեն պաշտպանեց մաքսիմումի պահանջը և դրանով իսկ ձեռք մեկնեց «կատաղիներին»։

Դանտոնը ևս սթափվեց։ Ասես ամաչելով իր անցյալի թուլակամության համար, նա սկսեց խանդավառ կրքոտությամբ աշխատել, մանավանդ, որ ժիրոնդիստների լիդերները, մեղքն ուրիշի վրա գցելով, փորձում էին նրան մեղադրել Դյումուրյեի հետ դավաճանական մեքենայություններ կատարելու մեջ։ Ապրիլի 1-ին Կոնվենտում հանդես գալով, նա պահանջեց, որ մոնտանյարները հրաժարվեն «պետական մարդկանց» հետ որևէ համաձայնության գալուց։ Նա հակահեղափոխության դեմ պայքարելու համար Արտակարգ տրիբունալի վերականգնման նախաձեռնողներից մեկն էր, որ շուտով վերանվանվեց Հեղափոխական տրիբունալ։ Վերջապես, Դանտոնը դարձավ ապրիլի 6-ին կազմված Հասարակական փրկության կոմիտեի,

այն նոր օրգանի ամենաազդեցիկ անդամը, որն ստացավ շատ լայն լիազորություններ, ընդհուպ մինչև Գործադիր խորհրդին վերահսկելու իրավունքը։

Հերթը Անկաշառելիինն էր։

Անկաշառելին, թվում էր, թե հարմար ժամանակի էր ըսպասում։ Նա լուռ կերպով դիտում էր տեղի ունեցող ամեն ինչ։ Դանտոնի ելույթից հետո նա երկու օր էլ սպասեց։ Հետո ապրիլի 3-ին նա մռայլ վճռականությամբ ամբիոն բարձրացավ։

— Ժամանակն է վերջացնելու խեղկատակությո՛ւնը։ Անհրաժեշտ է, որ Կոնվենտը հեղափոխական միջոցներ ձեռք առնի՝ ողբատությունը սպառնալիքի տակ է...

Հռետորը նշավակեց պաշտպանության ժիրոնդիստական կոմիտեին, այն Դյումուրյեի խորհուրդ անվանելով։ Նա հարձակվեց խռովարար գեներալի հանցակիցների վրա և պահանջեց Բրիսոյի դեմ գործ հարուցել։

Դա նախերգանքն էր։ Մեղադրական ակտի՝ իսկական մեղադրական ակտի ամբողջական բնագիրը, որը կազմվեց շատ օրերի ու գիշերների ընթացքում, «սլետական մարդիկ» սատացան ապրիլի 10-ին։

Ռոբեսպիերն իր երկար ճառն սկսեց այս խոսքերով.

— Մի ուժեղ կուսակցություն եվրոպական բռնապետների հետ միասին դավադրություն է պատրաստում, նպատակ ունենալով մեզ թագավոր ու արիստոկրատական սահմանադրություն տալու։

Եվ այնուհետև հռետորը ցույց տվեց այդ «ուժեղ կուսակցության» ամբողջ գործունեությունը Օրենսդիր ժողովի առաջին իսկ քայլերից մինչև Դյումուրյեի դավաճանությունը։ Նա նրանց հիշեցրեց և՛ մինիստրական պաշտոններ ստանալու համար գահի առաջ ստորաքարշություն անելը, և՛ հայրենասերներին հաճախակի հալածելը, և՛ ռեակցիոն գեներալներին հովանավորելը, և՛ թագավորի դավադրության ժամանակ ցուցադրված ստոր խաղը, և՛ այժմյան խռովարարների հետ վարվելի բարեկամությունը։ Նա չմոռացավ ոչ մի փաստ, բաց չթողեց ոչ մի կարևոր մանրամասնություն։ Ամբողջ երկու ժամ շարունակ Ժիրոնդայի լիդերները տանջանքի ենթարկ-

վեցին։ Մոնտանյարներն անհամբերությամբ սպասում էին եզրափակիչ մասին։

Եզրակացությունը կարծես թե առաջանում էր ինքնաբերաբար. այն պետք է զուգադիպի «կատաղիների» պահանջին։ Բայց Մաքսիմիլիանը վերջնական եզրակացություն չի անում, նա միայն ակնարկում է այդ։

Պահանջելով Դյումուրյեի բոլոր հանցակիցներին պատժել, հռետորը հանկարծ լռում է։ Նրա հայացքը ծաղրող արտահայտություն է ստանում։ Նա հեգնական ուշադրությամբ ակնոցների տակից նայում է ներքևի աթոռներին սակված դեպուտատներին։

— Արդյոք ես կարո՞ղ եմ տալ այնպիսի վ ա ս տ ա կ ա վ ո ր հ ա յ ր ե ն ա ս ե ր ն ե ր ի անունները, ինչպես պարոնայք Վերնյոն, Գուադեն և ուրիշներ... Ես համոզված եմ, որ այդ «փառապանծ» անդամներին վերաբերող ամեն ինչում իմ ջանքերն ապարդյուն կլինեն։ Ես ապավինում եմ Կոնվենտի իմաստությանը։

Իհարկե, այդ օրերին «Կոնվենտի իմաստության» մասին կարելի էր միայն հեգնական իմաստով խոսել։ «Ճահճի» երկչոտ, անվճռական լռության պայմաններում Ժիրոնդան և Լեռը մոլեգնությամբ հարձակվում էին միմյանց վրա։

— Մենք կմեռնե՛նք, բայց ոչ մենակ,—բղավում են մի քանի ձայներ։— Մեր մահվան վրեժը մեր զավակները կլուծե՛ն։

— Դուք ոճրագործնե՛ր եք,— նրանց պատասխանում է Դանտոնը առյուծի մռնչոցի նման ձայնով։

— Դիկտատուրան քո վերջին հանցագործությունը կլինի՛,— նետում է Դանտոնին ժիրոնդիստ Բիրոտոն։— Ես կմեռնեմ որպես հանրապետական, իսկ դու՝ որպես բռնակալ։

Ահա չարագուժորեն ինչ-որ բան է փնթփնթում Գուադենը։ Նա հառաբակական կարծիքը նմանեցնում է դոդոշների կռկռոցի։

— Լռի՛ր, կեղտոտ թռչուն, չի դիմանում Մարատը։

Ռոբեսպիերի մեղադրանքներին փորձում է պատասխանել Վերնյոն։ Բայց ինչո՞վ։ Հին, ծեծված, վաղուց անպետքացած ու մերկացված զրպարտչական հարձակումներով։

Լուվեն, Գուադեն, Լեկուանտրը և ուրիշներ դոռդոռում են,

աշխատելով միմյանց ձայնակոխ անել։ Վեր են բարձրանում բռունցքներ։ Ժիրոնդիստ Դյուպերեն սուրը արագ դուրս է քաշում։ Պետիոնը, նույն պատկառելի, շարունակ հանդիստ ու բոլորին հաշտեցնել ջանացող Պետիոնը, գրեթե կատաղության է հասնում։ «Տգան մեկ ու մի քառորդ ժամ շարունակ ջղաձգության մեջ էր,— այդ մասին հիշելով, գրում է Մարատը։— Մոտենում եմ նրան, իսկ նրա աչքերը հածում են, դեմքը մեռելագույն է, բերանին փրփուր նստած...»

Այո, ոչ թե «Կոնվենտի իմաստությունը», այլ ժողովրդի ուժն ու խիզախությունը պետք է լուծեին պատմական այն վիճը, որն արդեն ավելի քան մեկ տարի երկիրը ծվատում էր։ «Կատաղիներն» իրավացի էին։ Ռոբեսպիերն իր տեղից նայելով նիստերի դահլիճում տիրող քաոսին, այդ բանը չհասկանալ չէր կարող։ Եվ այնուամենայնիվ նա կարծում էր, թե պետք է մի քիչ էլ սպասել։ Դեռևս նոր սահմանադրության նախագծերը չէին քննարկվել։ Թո՛ղ ժիրոնդիստները ներկայացնեն ու պաշտպանեն իրենց նախագծերը։ Թո՛ղ ժողովուրդը տեսնի, որ Կոնվենտում եռացող պայքարը ոչ միայն կրքերի, այլև գաղափարների պայքար է...

Ժիրոնդիստները որոշեցին պատասխան հարվածի ամբողջ ուժը կենտրոնացնել Մարատի վրա։ Ժողովրդի Բարեկամին առանձնապես ատում էին «պետական մարդիկ», որոնց նա անողոքաբար մերկացնում ու խայտառակում էր։ Նա ամենայտառումնալից եռապետն էր, խոնարհ «ճահիճը» նրանից ավելի էր վախենում, քան մյուսներից։ Այժմ պետք է հենց նրա վրա հարձակվելով ստեղծված դրությունից դուրս պրծնել։ Դանտոնն ուզում էր հաշտվել՝ նրան կարելի է ռեզերվում թողնել։ Ռոբեսպիերին տապալելն անհուսալի բան է, անցյալի պրակտիկան այդ է ասում։ այժմ, մեղադրական ակտից անմիջապես հետո, այդ մասին մտածելն ավելորդ է։ Ուրիշ բան է Մարատը։ Թվում էր, թե նրա դատաստանը տեսնելն ավելի հեշտ է նրանով, որ ո՛չ Դանտոնը, ո՛չ Ռոբեսպիերը նրա նկատմամբ անձնական համակրանք չէին տածում։ Ինչպես միշտ, ժիրոնդիստները հաշվի չառան նրան, ով գլխավոր ուժն էր՝ հասարակ ժողովրդին, մայրաքաղաքի աշխատավորներին։

Հարվածը հասցվեց ապրիլի 12-ին։ Այդ օրը Գուադեն կար-

դաց Ցակորինյան ակումբի՝ Մարատի ստորագրությամբ գավառներն ուղարկված նամակից միտումնավոր կերպով բերված քաղվածքներ։ Նամակը կոչ էր անում Կոնվենտից ժիրոնդիստներին հեռացնել։ Հռետորը մի արտահայտություն մեջ բերեց, որը Կոնվենտը... «անդլիական արքունիքին վաճառված խարդավանքի» տեղ էր անվանում։

Չնայած նրան, որ ժողովրդի Բաստիլամը հանգիստ կերպով բոլոր մեղադրանքներից արդարացավ, չնայած նրան, որ հաջորդ օրը մյուս մոնտանյարները նրան ջերմորեն պաշտպանեցին, հայտարարելով, որ իրենք բոլորը պատրաստ են հրաչակավոր նամակի տակ ստորագրելու, Կոնվենտի մեծամասնությունը հլու կերպով շտամպեց մի դեկրետ ճշմարտության իր համար ատելի ազդարարին կալանավորելու և դատի տալու մասին։

Մարատի դատավարությունը, որ տեղի ունեցավ ապրիլի 24-ին, նրա ապոթեոզը դարձավ։ Հեղափոխական տրիբունալը ժողովրդի բաստիլամին արդարացրեց։ Բազմությունը, որ դրավել էր դատարանի շենքի բոլոր մատույցները, իր պաշտպանին ձեռքերի վրա բարձրացրեց, նրան դափնեպսակով զարդարեց և առատորեն ծաղիկներ պարգևեց։ Հարյուր հազարանոց բազմության առջևից գնալով, որ իր զգացմունքներն արտահայտում էր «Կեցցե՞ հանրապետությունը, ազատությունը, Մարատը» բացականչություններով, ժողովրդի Բաստիլամը մտավ Կոնվենտ, որտեղ այդ ժամանակ քննարկվում էր սահմանադրության նախագիծը։ Ժիրոնդիստների մեջ խուճապ սկսվեց։ Նրանցից շատերը շտապ կերպով նիստերի դահլիճից հեռացան։ Հաղթանակը տանող Մարատը գրավեց իր տեղը։ Նա հայտարարեց, որ առաջվա նման իր ամբողջ ավյունով, որին միայն ընդունակ է, կպաշտպանի ժողովրդի իրավունքները։ Այսպես ժիրոնդիստների այդ «միջոցառումը» ևս վճռականորեն շուռ եկավ նրանց դեմ։ «Այդ օրը,— հետագայում ասում էր Մարատը,— ես նրանց վզին կախաղանի պարան գցեցի...»։

Եվ իսկապես, ի պատասխան սիրեցյալին ուղղված սպառնալիքի, երեսունհինգ սեկցիաներ պահանջեցին Կոնվենտը մաքրել ժիրոնդիստական կուսակցության ղեկավարներից։

Ապրիլի 24-ին Կոնվենտում սկսվեցին սահմանադրության

վերաբերյալ մտքերի փոխանակությունները, որոնց այնպես անհամբերությամբ սպասում էր Ռոբեսպիերը։ Նա ուզում էր սահմանադրության նախագիծը քննարկելիս ամբողջ ժողովրդին առավելագույն պարզությամբ ցույց տալ ժիրոնդիստների քաղաքական ու սոցիալական գաղափարների իսկական էությունը։ Միաժամանակ նա պետք է հենց այժմ նույնպիսի պարզությամբ բացատրի իր հավատո հանդանակը, սեփականության և իրավունքի մասին իր հայացքները։ Անցյալում նա այդ թեմաները զարգացնում էր Սահմանադիր ժողովի ամբիոնից ելույթներ ունենալով, բայց այն ժամանակ դեռևս ոչ ամեն ինչ էր պարզ, և ինչպե՞ս դժվար էր խոսել նրա, մի անհայտ ակնակի համար, որին ծաղրում էին և լսել չէին ուզում։ Այժմ նա ամեն ինչ մինչև վերջ կշռադատել է։ Այժմ նրա հավատո հանդանակը կլինի նաև նրա ամբողջ կուսակցության հավատի խորհրդանիշը, իսկ ժողովրդի աջակցության վրա հենվող նրա կուսակցությունն այժմ այն ուժն է, որին վիճակված է պատմության ասպարեզը նվաճելու։

Ռոբեսպիերի ելույթի մեկնակետը նրա դրած Իրավունքների դեկլարացիան էր, որ Կոնվենտում մտքերի փոխանակությունն սկսվելուց երկու օր առաջ Յակոբինյան ակումբում քննարկվեց։ Նա ամենից առաջ շտապեց հանգստացնել այն բոլոր մարդկանց, ովքեր վախենում էին «հողային օրենքից» և սեփականության նկատմամբ յակոբինականների ոտնձգություններից։

— Ստոր հոդինե՛ր, որ միայն ոսկի եք սիրում։ Ես ամենևին ձեր դանձերին ձեռք տալ չեմ ուզում, որքան էլ դրանց տերությունը կեղտոտ լինի... Ինչ վերաբերում է ինձ, ապա ես գույքային հավասարությունը անձնական երջանկության համար է՛լ ավելի պակաս անհրաժեշտ եմ համարում, քան հասարակական բարեկեցության համար։ Շատ ավելի կարևոր է տրամիտ աղքատությունը հարգել, քան հարստությունը ոչընչացնել...

Կակայն այդ «հանդստացուցիչ» ներածությունից հետո Ռոբեսպիերն իր ճառի ամբողջ կրակը կենտրոնացնում է Ժիրոնդիստների՝ Կոնդորսեի կազմած իրավունքների դեկլարացիայի վրա։ Հռետորի ուշադրության գլխավոր օբյեկտը դառ-

նում է սեփականության հասկացության ձևակերպումը։ Եվ այստեղ նա այնպիսի կարծիքներ է արտահայտում, որոնք ցույց են տալիս սոցիալական ու տնտեսական գաղափարների բնագավառում Լեռան և Ժիրոնդայի տարաձայնությունների ամբողջ խորությունը։

Ժիրոնդիստական նախագիծը հայտարարում էր, թե սեփականության իրավունքը յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է՝ առանց սահմանափակումների տնօրինելու իր դույքը, կապիտալը, եկամուտը, արտադրությունը։

Ռոբեսպիերը ցույց է տալիս, որ «սեփականություն» տերմինը պայմանական հասկացություն է, որ յուրաքանչյուր սոցիալական խավ նրա մեջ իր իմաստն է դնում։ Ժիրոնդիստների ձևակերպումն ընդունել՝ կնշանակի ի վնաս քաղաքացիների հիմնական զանգվածի քչերին հարստացման անսահմանափակ լայն ասպարեզ տալ, որովհետև ժիրոնդիստական նախագիծը սեփականության ոչ մի սահման չի դնում, որովհետև այդ նախագծով ամբողջ հասարակության շահերը զոհաբերվում են նրա առանձին անդամներին։ Ժիրոնդիստների ձևակերպումը փաստորեն ապահովում էր թե՛ ստրկավաճառների սեփականությունը, թե՛ ֆեոդալի սեփականությունը, թե՛ նույնիսկ ժառանգական միապետի սեփականությունը...

— Ձեր դեկլարացիան,— նշում էր Ռոբեսպիերը,— ըստ երևույթին, գրված է ոչ թե բոլոր մարդկանց, այլ միայն հարուստների, մեծատնորդների, բռնապետների և չարաշահողների համար...

Իսկ Անկաշառելին ժիրոնդիստների դեկլարացիային ի՞նչ է հակադրում։ Եթե նրանք առաջին տեղում դնում են սեփականության իրավունքը, ապա նա մարդու հիմնական իրավունքները համարում է գոյության ու ազատության իրավունքը։ Իսկ սեփականության մասին խոսելով, նա այն պայմանավորում է որոշակի սահմաններով, որոնցից այն դուրս գալ չի կարող։

— ... Սեփականության իրավունքը յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է՝ օգտագործելու և տնօրինելու իր գույքի այն մասը, որ օրենքով երաշխավորվում է նրա համար։

Սեփականության իրավունքը, ինչպես և մյուս բոլոր իրա-

վունքները, սահմանափակված է ուրիշ մարդկանց իրավունքները հարգելու անհրաժեշտությամբ։

Այն չի կարող վնաս պատճառել մեր մերձավորների ո՛չ անվտանգությանը, ո՛չ ազատությանը, ո՛չ գոյությանը, ո՛չ սեփականությանը։

Այս սկզբունքը խախտող ամեն տեսակ սեփականություն ու գործարք անբարոյական և ապօրինի են...

Ռոբեսպիերի այս ձևակերպումը, ըստ էության, սահմանադրական հիմք էր տալիս հետապնդելու մեծագնորդներին և ժիրոտերերին՝ այն բոլոր մարդկանց, որոնց գործարքներն ու մեքենայությունները խախտում էին նրա սահմանած հիմնական սկզբունքը։

Էլի ի՞նչ կարելի է դրան ավելացնել։ Ռոբեսպիերի դեկլարացիան հռչակում էր աշխատանքի և գոյամիջոցների իրավունք այն մարդկանց համար, ովքեր աշխատանք գտնել չէին կարողանում, ուներ քաղաքացիներին պրոգրեսիվ հարկով հարկելու անհրաժեշտություն, բանականության առաջադիմությանը և հանրամատչելի կրթությանը ցույց տրվող աջակցություն, ժողովրդի դերադույն սուվերենություն և յուրաքանչյուր քաղաքացու՝ պետական ուղած պաշտոն գրավելու իրավունք, կառավարության և պաշտոնատար անձանց բոլոր միջոցառումների հրապարակայնություն։

Դեկլարացիայի եզրափակիչ դրույթներն ընդգծում էին բոլոր ժողովուրդների համերաշխությունը իրենց լավագույն ապագայի համար մղվող պայքարում։

Ռոբեսպիերի դեկլարացիան, ինչպես և ապրիլի 24-ի ամբողջ նախագիծը, բացատրելու կարիք չուներ։ Բոլոր դեմոկրատները նոր դեկլարացիան խանդավառությամբ ընդունեցին, իսկ Ֆրանսուա Բաբյոֆը, «Հավասարների դավադրության» ապագա կազմակերպիչը, այն իր գաղափարական մանիֆեստն էր համարում։ Ժողովրդին պարզ կերպով ցույց տվեցին, թե ովքեր են նրա բարեկամները և ովքեր՝ թշնամիները։ Անկաշառելին և նրա զինակիցները ձգտում էին ըստ հնարավորին ավելի լրիվ ապահովել ժողովրդական զանգվածների դեմոկրատական նվաճումներ։

Սահմանադրության ժիրոնդիստական և յակոբինական նա-

խագծերի շուրջը ծավալված պայքարն արագացրեց ժիրոնդիստների դեմ բոլոր դեմոկրատական ուժերի միասնական ճակատի ստեղծումը։

Այդպիսի կարճ ժամանակամիջոցում այնքան շատ պարտությունները նրանց սաստիկ կատաղության վիճակի հասցրին։ «Պետական մարդիկ» ձեռքները գլխի գցեցին։

Մայիսի 18-ին երկերեսանի Բարերի նախաձեռնությամբ նրանք ստեղծեցին Տասներկուսի հանձնաժողովը։ Հանձնաժողովն սկսեց Կոնվենտին ահաբեկել, նրան գոյություն չունեցող դավադրություններով վախեցնելով և գաղտնի ամբաստանություններով հեղեղելով։ Այն մի մեծ դավադրություն բաց անելու պատրվակով մայիսի 23-ին Կոնվենտին առաջարկեց արտակարգ միջոցներ ձեռք առնել և ուժեղացնել բուրժուական սեկցիաներին հանձնարարված պահպանությունը։ Հենց նույն օրն էլ հանձնաժողովը կալանավորեց «կատաղի» Վարլենին և Կոմունայի անդամ, Շոմետի տեղակալ, ժուռնալիստ Էբերին։ Էբերի կալանավորումը Կոմունային ու հեղափոխական սեկցիաներին ստիպեց զգուշանալ. Մարատի դեպքից հետո ժողովրդական ներկայացուցիչների անձեռնմխելիությունն արդեն երկրորդ անգամ էր խախտվում։ Բացի այդ, ժուռնալիստի կալանավորումը, որին մեղադրում էին իր հոդվածի համար, մամուլի ազատության դեմ ուղղված իսկական մի ոտնձգություն էր։

Մայիսի 25-ին Կոմունայի պատգամավորությունը պահանջեց Էբերին անմիջապես ազատել։

Կոնվենտի նախագահ Ինարը, ժիրոնդիստական կուսակցության ամենաղյուրաբորբոք ու ամենաթշնամական լիդերներից մեկը, մերժումով պատասխանեց։ Նա զսպված կատաղությունից դողացող ձայնով հայտարարեց.

— Լսեցեք մի ճշմարտություն, որ հիմա ես կասեմ ձեզ։ Ֆրանսիան մեզ համար ապրելու վայր ընտրեց Փարիզը... Եթե փորձեին մեր դեմ ոտնձգություն կատարել, ապա ամբողջ Ֆրանսիայի անունից հայտարարում եմ ձեզ, որ Փ ա ր ի զ ը... կ ո չ ն չ ա ց վ ե՛ ր։

Մի պահ Կոնվենտը քարացավ։ Հետո վերևի աթոռների

կողմից բողոքի ցասկոտ ձայներ լսվեցին։ Մարատը բացականչեց.

— Նախագա՛հ։ Հեռացե՛ք ձեր տեղից։ Դուք ժողովը խայտառակո՛ւմ եք։

Բայց Ինարը ժիրոնդիստների կատաղի ծափահարությունների տակ մռայլ շարունակեց.

— Շուտով մարդիկ Սենայի ափերին կփնտրեին այն տեղը, ուր Փարիզը կանգնած էր...

Հենց այդ ժամանակ Յակոբինյան ակումբում հրապարակվեց Վերնյոյի նամակը, որի մեջ ասվում էր. «Ժիրոնդայի դեպարտամենտի այրե՛ր։ Պատրաստ եղեք. եթե ինձ ստիպեն այդ բանն անելու, ես ամբիոնից կկոչեմ, որ գուք գաք մեզ պաշտպանելու և ազատության համար բռնապետներին բնաջնջելով վրեժ լուծելու։ Ոչ մի բոպե կորցնել չի՛ կարելի»։

Այսպես ուրեմն, ժիրոնդիստները բացահայտորեն քաղաքացիական պատերազմ էին սանձազերծում։ Նրանց ազդանշանով Փարիզ սլացան բազմաթիվ ուղերձներ Մարսելից, Վերսալից, Ավինյոնից, Նանտից, Բորդոյից, ուղերձներ, որոնք սպառնում էին մոնտանյարներին և Փարիզի պլեբեյներին. Վանդեայում նրանց կոմիսարները խռովության դեմ այնքան չէին պայքարում, որքան այն հրահրում. Լիոնում, Տուլոնում և Հարավի ուրիշ քաղաքներում նրանց բարեկամները պատրաստվում էին իրենց համար առելի հեղափոխությունը հայրենասերների արյունով ողողել։ Իսկ Փարիզում նրանց դորձակալները բուրժուական սեկցիաների բնակչությունից ջոկատներ էին ստեղծում, որպեսզի Կոնվենտը շրջապատեին ֆեյանների անտառով։

Այս ամենը հանգեցրեց այն բանին, ինչի և պետք է հանգեցներ։ Ժողովուրդը ոտքի ելավ։ Փարիզի հասարակ մարդիկ [illegible] ուզում իրենց համար նոր շղթաներ պատրաստող պայքարի հանդիսատեսը լինել։ Հուլիսի 14-ին և օգոստոսի 10-ին, [illegible] հանգույցը կտրելով, մեծաքոր սյուզերենը նորից [illegible] իր ամբողջ հասակով մեկ ոտքի ելավ և նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց։

Ապստամբության առաջին օջախը դարձավ եպիսկոպոսի

պալատը, որտեղ հավաքվում էին «կատաղիները»։ Սեկցիաների մեծամասնությունը պալատ ուղարկեց իր լիազորներին։ Փոթորկալից խորհրդակցությունից հետո որոշվեց «արտակարգ միջոցների» դիմել։ Աշխատում էին «ապստամբություն» բառը չարտասանել, բայց բոլորն էլ հասկանում էին, թե խոսքն ինչի մասին է։

Ստեղծվեց կազմակերպական նոր կենտրոն՝ Հեղափոխական կոմիտե։ Կոմիտեն շտապ կերպով Փարիզի կոմունայի հետ կապ հաստատեց։ Գործողությունների միասնություն ստեղծելու համար բանակցություններ սկսվեցին։

Կոմունայի այնպիսի ղեկավարներ, ինչպես Շոմետը, շատ վճռականորեն էին տրամադրված։ Սակայն «կատաղիների» հետ համաձայնվելով, որ ժիրոնդիստները հեղափոխության համար վտանգավոր են դարձել, Կոմունան նույնպես, ինչպես և Յակոբինյան ակումբը, սկզբում կասկածում էր անհապաղ «արտակարգ միջոցներ» կիրառելու նպատակահարմարությանը։ Յակոբինական դեմոկրատները չէին ուզում դեպուտատների անձեռնմխելիությունը խախտել, կարծելով, թե հեղափոխական ուժերի մոբիլիզացման ու բարոյական ճնշման միջոցով կարելի է խաղաղ ճանապարհով Կոնվենտում ժիրոնդիստներին ղեկավար դերից զրկել։ Այդ պլանի ոգեշնչողներից մեկը Ռոբեսպիերն էր։

Անկաշառելին իրեն հավատարիմ էր մնում։ Նա՝ որի համար վաղուց արդեն պարզ էր, որ ժիրոնդիստական լիդերները պետք է մեկուսացվեն, նա, որ քանի-քանի անգամ նրանց մերկացրեց, իսկ ապրիլին իր մեղադրական ակտով և նրանց գաղափարական ծրագիրը ջախջախելով նրանց վրա խաչ քաշեց, նա դեռ էլի շարունակում էր կասկածել և Յակոբինյան ակումբում մայիսի 8-ի և 12-ի իր ելույթների ժամանակ ժողովրդին նախազգուշացնում էր վճռական քայլ անելուց։

Առանց անհրաժեշտության օրենքի սահմաններից դուրս գալու սովորություն չունենալով, Մաքսիմիլիանը շարունակ ապստամբությունը ամենածայրահեղ միջոցն էր համարում, որին կարելի է դիմել, երբ մյուս բոլոր հնարավորություններ ամբողջովին սպառված կլինեն։ Արդյոք այժմ դրանք սպառվա-

են։ Նա դրանում համոզված չէր։ Կոնվենտի զիջողականությունը, որ համաձայնվեց հակառակ ժիրոնդիստների հաստատել ամբողջ Ֆրանսիայի համար հացահատիկի հաստատուն գների միասնական մաքսիմում, ինչպես նաև հարուստներից ստացած հարկադրական փոխառությունը, թվում էր, ակնարկում էին, թե հնարավոր է լեգալ միջոցներով «պետական մարդկանցից» ազատվել։ Բացի այդ, Ռոբեսպիերի կարծիքով, ապստամբությունը պետք էր սկսել միայն այն ժամանակ, երբ կարելի էր ամենամեծ հավանականությամբ հաջողության հույս ունենալ։ Իր ժամանակին նա հունիսի 20-ի ապստամբության դեմ բողոքեց, գտնելով, որ միապետությունը տապալող ապստամբության նախօրյակին չպետք է ժողովրդական ուժերն անտեղի վատնել։ Ճիշտ այդպես, նա այսօր էլ կես ճանապարհին ընդհատվող կիսատ-պռատ ելույթներ չէր ուզում։ Իսկ այնքան ժամանակ, քանի դեռ ժիրոնդիստները լուրջ օգնություն էին սպասում փարիզեցիների մի մասից, չիմանալով արդեն դավառացիների մասին, այնքան ժամանակ, քանի դեռ նրանց նկատմամբ ատելությունն իր վերին սահմանին չէր հասել, կարելի էր զգուշանալ հենց ապստամբության անավարտությունից։ Հաստատուն կերպով իշխանության գլուխ կանգնած և Փարիզի ու դավառների բուրժուազիայի բավական մեծ ուժերի վրա, ինչպես նաև դեպարտամենտների խաբված ժողովրդի մի զգալի մասի վրա հենվող կուսակցությունը տապալելն արդեն այնքան էլ հեշտ ու հասարակ բան չէր։ Թերևս, դա միապետությունը տապալելուց պակաս դժվար չլինի։ Եվ Մաքսիմիլիանը, օգոստոսի 10-ի նախօրյակին տատանվելով, բնականաբար, տատանվում էր նաև այժմ։

Սակայն մայիսի վերջին օրերին այդ կասկածները վերացան։ Յակոբինականների առաջնորդը տեսնում էր, թե ժողովրդի դայրույթն ինչպես հասունանում էր, տառացիորեն ամիսամ ավելանալով։ Միաժամանակ ժիրոնդայի լիգերների վարվելաձևը և առանձնապես մայիսի 25-ին Կոնվենտում նրանց դեմարշը պայքարի լեգալ մեթոդները բոլորովին անհարիր էին գարձնում։ «Պետական մարդիկ» մոլեգնությամբ մարտի էին նետվում։

Բավակա՛ն է։ Վե՛րջ կասկածներին ու տատանումներին, վճռական ժամը մոտ է։ Ժիրոնդիստները մահու և կենաց պատերազմ են ուզում. դե ի՛նչ, թո՛ղ ստանան այն։ Ինքը երկար է սպասել։ Ինքն այժմ ամեն ինչ կանի՝ հանգուցալուծումն արագացնելու։

Մայիսի 26-ին Յակոբինյան ակումբում հանդես գալով, Ռոբեսպիերը ժողովրդին ապստամբության կոչ է անում։ Բոլոր օրենքները խախտվեցին, բռնակալությունն իր վերջնակետին հասավ, և արդեն ամենևին բարեխղճություն կամ ամոթի զգացում չկա։ Ավելի լավ է հանրապետականների հետ մեռնել, քան ոճրագործների հետ հաղթանակ տոնել։ Թող Կոմունան միանա ժողովրդին, եթե իր պարտքը գրժել չի ուզում։ Երբ ակներև է դառնում, որ հայրենիքին մեծագույն վտանգ է ըսպառնում, ժողովրդի ներկայացուցիչները պետք է կա՛մ ազատության համար զոհվեն, կա՛մ նրա հաղթանակը ձեռք բերեն...։ Հենց այդ տրամադրություններով է տոգորված նաև Անկաշառելիի մայիսի 29-ի ճառը։

Ռոբեսպիերի հայացքները լիովին համընկնում էին Կոմունայի և Յակոբինյան ակումբի պրակտիկ գործունեության հետ։ Մայիսի վերջին կաղմակերպական բոլոր կենտրոնները միավորվեցին։ Ապստամբությունը պատրաստվում էր գրեթե բացահայտորեն։ Ինչպես և օգոստոսի 10-ի նախօրյակին, ժողովուրդը զինվում էր։ Մարատը եռանդուն գործունեություն էր ծավալում։

Տասներկուսի հանձնաժողովը հասունացող գեպքերին ոչինչով խանգարել չէր կարող։

Մայիսի 31-ի առավոտյան ժամը 6-ին Փարիզի Աստվածամոր տաճարից լսվեցին ահազանգի առաջին զողանջները։ Հեղափոխական կոմիտեն Կոմունայի համաձայնությամբ ազգային գվարդիայի պետ նշանակեց ձախ յակոբինական Անրիոյին, որը մայրաքաղաքի հայրենասերներին արագորեն կազմակերպեց։ Կոնվենտը շրջապատվեց։

Ապստամբների պատգամավորությունները, նիստերի դահլիճում միմյանց փոխարինելով, պահանջում էին ժիրոնդիս-

տական լիդերներին կալանավորել, հարավային դեպարտամենտներում հակահեղափոխականներին սանձահարել, հացի գներն իջեցնել։ Բարերը Հասարակական փրկության կոմիտեի անունից ճիզվիտական մի նախագիծ առաջարկեց, որը նպատակ ուներ ապստամբությունը գլխատելու։ Նա առաջարկեց Տասներկուսի հանձնաժողովը լիկվիդացնել և ազգային գլվարդիան Կոնվենտի տրամադրության տակ դնել։ Տասներկուսի հանձնաժողովը վերացնելու միջոցով, որն առանց այդ էլ արդեն փաստորեն վարկաբեկվել էր, Բարերն ուզում էր Ժիրոնդայի պարագլուխների կալանավորումը կանխել։ Պահանջելով մայրաքաղաքի զինված ուժերը Կոնվենտի ձեռքը հանձնելու, նա ուզում էր ուժասպառ անել ապստամբներին և գլխության տերը դարձնել Կոնվենտի մեծամասնությունը, այսինքն՝ «ճահիճը» և հենց այն ժիրոնդիստներին, որոնց դեմ ապստամբություն էր բարձրացել։ Անկաշառելին այդ պլանն անմիջապես հասկացավ և իր մի կարճ ելույթով այն մերկացրեց Կոնվենտի առաջ։

Ժիրոնդիստներն իրենց աթոռներին նստած տխուր քարացել էին։ Նրանք լռությամբ լսում և սպասում են։ Վերնյոն, որը դրանից քիչ առաջ փութկոտությամբ փորձում էր ժողովի ուշադրությունը գրավել, վառվող հայացքով հետևում է հռետորին։ Երբ Անկաշառելին հասնում է վերջին խոսքերին, Վերնյոն չի դիմանում։

— Դե, վերջապես, արե՛ք ձեր եզրակացությունը,— պրոված բղավում է նա։

— Այո, ես իսկույն կանեմ իմ եզրակացությունը,— հանգիստ պատասխանում է Ռոբեսպիերը,— և այն ձե՛ր դեմ կուղղվի։ Իմ եզրակացությունը մեղադրական մի դեկրետ է Դյումուրյեի բոլոր հանցակիցների և այն բոլոր մարդկանց դեմ, ովքեր հենց նոր այստեղ մերկացվեցին։

Բարերի և մյուս համաձայնողականների ջանքերով մայիսի 31-ի ցերեկն ապստամբությունը կես ճանապարհին դադարեց։ Կոնվենտը հրաժարվեց ժողովրդի և Ռոբեսպիերի պահանջը կատարելուց։ Տասներկուսի հանձնաժողովը ցրելով, Կոնվենտը ժիրոնդիստ դեպուտատներին պահեց իր կազմում։

Մոնտանյարները շատ լավ էին հասկանում, որ ձեռք բերված նվաճումների վրա կանգ առնել հնարավոր չէ։

— Գործի միայն կեսն է արված,— ասում էր ակումբում Բիլո-Վարենը։— Ժողովրդին չպետք է թողնել հանգստանալու։

Բայց ժողովուրդը հանգստանալու միտք էլ չուներ։ Ապրստամբները զենքը ցած չդրեցին։ Քաջ Անրիոն իր զորքերը կազմ ու պատրաստ էր պահում։ Խիստ կարգապահություն և կարգ ու կանոն պահպանելով, իրենց ամենօրյա աշխատանքը շարունակելով, արվարձանների բանվորները պատրաստ էին առաջին իսկ ազդանշանով պայքարը վերսկսելու։

Հունիսի 1-ին Հեղափոխական կոմիտեն մի թռուցիկ հրապարակեց, որով Փարիզի քաղաքացիներին զգոնության կոչեց։ Մարատը Կոմունայում ոգևորիչ ճառ արտասանեց, որից հետո խանդավառ ծափահարությունների տակ բարձրացավ քաղաքապետարանի աշտարակը և ահազանգ խփեց։ Բոլոր սեկցիաներում հավաքի ազդանշան խփեցին։

Ահազանգը շարունակ զողանջում էր։ Հունիսի 2-ի վաղ առավոտյան ազգային գվարդիան նորից Կոնվենտը շրջապատեց։ Հարյուր վաթսուներեք հրանոթներ ուղղվեցին ձիամարզարանի վրա, հարյուրհազարանոց ժողովրդական բանակը գրավեց բոլոր մերձակա փողոցներն ու նրրանցքները։ Շատ լավ, եթե քաղաքացի դեպուտատներն իրենք չեն կարող անհրաժեշտ որոշում կայացնել, ժողովուրդը պատրաստ է նրանց օգնելու։

Այդ օրը Ռոբեսպիերը Կոնվենտում ելույթ չունեցավ։ Եվ սակայն ամեն ինչ վերջացավ մայիսի 31-ի նիստին նրա առաջադրած պահանջի կատարմամբ։ Կուտոնի պահանջով Կոնվենտը գեկրետավորեց քսանինը ժիրոնդիստ դեպուտատների, այդ թվում Վերնյոյի, Բրիսսոյի, Գուադեի, Պետիոնի, Ինարի, Ժանսոնեի, Բյուզոյի, Լուվեի, Լանժյունեի և Բարբարուի կալանավորումը։

Դա Ժիրոնդայի վերջն էր։

Դա Լեռան և նրա առաջնորդի՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի ապոթեոզի նախերգանքն էր։

ՄԱՍ III

ԼԵՌԱՆ ԳԱԳԱՓԻՆ

ԳԼՈՒԽ 1

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԻ ԹՆԴՅՈՒՆԻ ՏԱՆ

— Մեռավ Մարատը... Ժողովրդի բարեկամն այլևս չկա մեզ հետ։ Նրանք սպանեցի՛ն նրան...

Մարսելիի լուրը տարածվում էր բերնեբերան։ Փարիզի տարբեր ծայրերից հաղարավոր մարդիկ իրար ետևից շտապելով գնում էին դեպի Կորդելյերների փողոցը։ № 18 տան առաջ բազմությունն այնքան հոծ էր, որ ժանդարմների ջոկատը ոստիկանական կոմիսարի գլխավորությամբ հազիվ կարողացավ մոտենալ մուտքին։ Բոլորի դեմքերը, հասարակ մարդկանց այդ հոգնած, տանջահար դեմքերը վիշտ, հուսահատություն, ցասում էին արտահայտում։ Նոր եկողներին պատմում էին այն, ինչ հաջողվել էր իմանալ։

... Նա եկել է Նորմանդիայից, ժիրոնդիստական խռովության որջից։ ...Նրան ուղարկել են Հունիսի 2-ից հետո Փարիզից փախած դավաճանները... Նա խաբեությամբ սողոսկել է խեղդողներին դյուրահավատությամբ տանն ընդունող՝ ժողովրդի հիվանդ Բարեկամի մոտ և նրան դանակի մահացու տրված հասցրել...

Ինչ-որ մեկը բղավեց. «Նրան տանո՞ւմ են»։ Դռնից մի խումբ դուրս եկավ կոմիսարի ետևից, որը թեթևակի բռնել էր նուրբ, ձվաձև դեմքով և երկար, շագանակագույն մազերով բարեկազմ մի օրիորդի կապված ձեռքերը։ Նա նայում էր լայն բացած աչքերով։ Բազմությունը տեսնելով, նա ետ ցատկեց։

Մա՛հ մարդասպանին... Գլխատե՛լ ոճրագործին... Թող նա անմիջապես պատժվի՛ իր հանցագործության համար...

Բազմաձայն մռնչոցն սկսեց մտրակել փողոցը։ Կալանավորի սայլիկը ուշաթափվելու մոտ էր։ Բայց կոմիսարը, ձեռքը բարձրացնելով, կատաղած, խռովահույզ մարդկանց հորդորեց։

— Ժողովրդի Բարեկամի հիշատակի նկատմամբ մեր ունեցած հարգանքից ոչ ոք օրենքը խախտել չի հանդգնի։ Ով Մարատին սիրում էր, պետք է իրեն արժանապատվությամբ պահի։ Արդարադատությունը շուտափույթ ու արդարացի կլինի...

Եվ բազմությունը, հանկարծ հանդարտվելով, հնազանդությամբ ետ քաշվեց՝ բանտային ծածկակառքը բաց թողնելուց։

Մարատի մարմինը գրեցին Կորդելյերների եկեղեցում եռագույն գեղեցիկ կտորեղեններով զարդարված բարձրադիր տախտամածի վրա։ Գլխին դափնյա պսակ դրին։ Երկու մարդ, սնարի մոտ կանգնած, մարմինն ու դագաղի ծածկոցը թրջում էին բուրավետ քացախով։ Այրում էին անուշահոտ նյութեր։

Մարատի մահվան անկողինը ծաղիկներով ծածկեցին։ Սեկցիաները մեկը մյուսի ետևից գնում էին իրենց առաջնորդին հրաժեշտ տալու։ Ժամերն անցնում էին միմյանց ետևից, բայց մարդկային հոսանքը չէր վերջանում,— թվում էր, թե այն վերջ չի ունենա։ Վիշտն ամեն ինչ պատել էր։ Կրծքին բացվել էր զարհուրելի վերքը։ Մարդասպանի՝ արյունից սևացած շեղբը դրված էր հենց այդտեղ։ Մարատի սրբազա՞ն արյունը։ Մարդիկ երդվում էին Մարատի հետքերով գնալ։ Եվ նրա համար վրեժ լուծել։ Երդումը տալիս էին սևացած դանակի՝ որպես ավետարանի առաջ։

Նկարիչ Դավիդն ավարտում էր Մարատի գլխի ուրվանկարը։ Այդ էսքիզը կազմեց համաժողովրդական դիտման համար Լուվրի բակում կախված նկարի հիմքը։ «Օ՞հ, ես այդ մարդուն սրտիս թրթիռով էի նկարում»,— ասում էր Դավիդը։ Բաց երանգներով կատարված, բեմական էֆեկտներից զերծ նկարն ապշեցնում էր իր անտիկ խստությամբ ու պարզությամբ։ Եվ մարդիկ նորից գնում էին Դավիդի նկարի մեջ մարմնավորված իրենց բարեկամին տեսնելու։ Նա ապրո՞ւմ է։ Նա կապրի՛ հավիտյան։ Նրան սպանողներն իրենց հաշիվների մեջ սխալվեցին։ Մարատն անմահ է, ինչպես ազատության դաղափարը։

Ժողովրդի Բաստիլիայի թաղումը տեղի ունեցավ հուլիսի 16-ի գիշերը։ Սգո թափորին մասնակցում էր Կոնվենտն իր լրիվ կազմով։ Մարատի աճյունը ժամանակավորապես թաղվեց Կորդելյերների եկեղեցու այգում՝ առանձին դամբարանում։ Ջահերը վառ կերպով հուրհրատում էին։ Կոնվենտի նախագահը բաց շիրիմի առաջ արտասանում էր վերջին խոսքը։ Ներկա գտնվողները գլխարաց լսում էին հռետորին։

Ռոբեսպիերի դեմքը անսովոր լուսավորության տակ ասես մոմի գույն ուներ։ Նրա աչքերը կիսախուփ էին։ Մտքերը սրընում էին արտասովոր արագությամբ...

Այսպես ուրեմն, հարվածը հասցվեց։ Թաքուն, հուդայական դավադիր հարվածը... Ինքը նրանց խնայում էր, ինքը կարծում էր, թե կարելի է պայքարել ճակատը բաց։ Նույնիսկ հունիսի 2-ի ժողովրդական ապստամբությունից հետո բանը սահմանափակվեց ղեկավարների համար ոչ խիստ տնային կալանքով։ Սեն-Ժյուստն իր ճառում Անկաշառելիի միտքն արտահայտելով, խոսում էր մեծամասնությանը ներելու և այն մասին, որ Լեռը չի ցանկանում սխալը հանցանքի հետ շփոթել։ Ինքը նրանց խնայում էր, չնայած ամբողջ անցյալին, ինքը շատ երկար ժամանակ հավատում էր, թե կարելի է առանց արյուն թափելու կառավարվել։ Եվ ահա արդյունքը։ Այնուամենայնիվ արյուն թափվեց, բայց ո՞ւմ արյունը...

Նախագահը շարունակ խոսում էր։ Բայց Մաքսիմիլիանը նրան չէր լսում։ Նա մտածում էր մոտիկ անցյալի մասին։ Արքա՞ն շարիք պատճառեցին ժիրոնդիստներն իրենց ամբոխավարությամբ, ինչպե՞ս էին նրանք դանդաղեցնում հեղափոխության հաղթական ընթացքը։ Ահա դրա վառ ապացույցը. դեռ նոր էին հեռացրել նրանց լիդերներին, և մեկուկես ամսում յակոբինականները ժողովրդի համար ավելի շատ բան արեցին, քան ժիրոնդիստներն ու ֆեյլյաններն իրենց իշխանության բոլոր տարիներին։ Երկու շաբաթում քննարկվեց ու հաստատվեց մեծ Ռուսոյի ուսմունքով ոգեշնչված և քաղաքական լայն ազատության անկեղծ ձգտումով համակված նոր սահմանադրության տեքստը։ Ռոբեսպիերը նոր սահմանադրությունը կատարյալ չէր համարում։ Նա ինքը համաձայնվեց ունևոր տարրերին որոշ զիջումներ անել և Իրավունք-

ների դեկլարացիայի մի շարք հոդվածները նրանց օգտին մեղմացրեց։ Դա անհրաժեշտ էր անել, որպեսզի այնքան ծանր մի ժամանակաշրջանում մոնտանյարներից ետ չմղվեին բուրժուական խավերը, որոնց այլապես կարող էին իրենց կողմը գրավել ժիրոնդիստ խոսվարարները։ Բայց իր այժմյան ձևով էլ նոր սահմանադրությունը չէր կարելի համեմատել ո՛չ 1791 թվականի ցենզային սահմանադրության, ո՛չ ժիրոնդիստների նախագծի հետ։ Այն խանդավառությամբ ընդունվեց և միահամուռ հավանություն ստացավ. նրա օգտին քվեարկեցին նույնիսկ այն դեպարտամենտներում, որտեղ տեր ու տնօրինություն էին անում ժիրոնդիստները։ Բայց յակոբինականները սահմանադրությամբ չսահմանափակվեցին։ Նրանք համարձակորեն զբաղվեցին հիմնական՝ հողային հարցով, որից նրանց բոլոր նախորդ կուսակցություններն ու խմբավորումները խուսափում էին։ Արդեն Ժիրոնդայի տապալման հաջորդ օրը Կոնվենտը կարգադրեց վտարանդիների բոլոր կալվածքները բաժանել փոքր մասերի։ Առաջացած հողամասերը պետք է վաճառքի հանվեին արտոնյալ պայմաններով, երկար ժամանակ մաս-մաս վճարելու ձևով։ Մեկ շաբաթ անց ընդունվեց մի նոր օրենք, որը համայնքի հողերը գյուղացիներին հանձնեց։ Վերջապես, միտք ունեին առաջիկայում անցկացնել միանգամայն նախապատրաստված ու քննարկված մի դեկրետ ֆեոդալական բոլոր պարհակների լիակատար ու վերջնական վերացման մասին։ Այս համարձակ գործողությունները պետք է գյուղացիների լայն զանգվածներին Լեռան շուրջը համախմբեին։ Գյուղացիությունը դառնում էր նոր հանրապետության հզոր հենարանը օտարերկրացիների բանակների և ներքին թշնամու դեմ ուղղված նրա պայքարում։

Այո, դրանք հիանալի գործեր էին։ Եվ չի կարելի մոռանալ, որ այդ բոլոր գործերը կատարվում էին ճակատամարտերի դղրդյունի տակ, իսկապես անօրինակ դժվարությունների ժամանակաշրջանում։ Այն ժամանակ, երբ օտարերկրյա հին բանակներ նետում էին ֆրանսիական արյունաքամ ղորքերին, Վանդեայի ապստամբությունը ծավալվում էր, ընդգրկելով ամբողջ արևմուտքը, անգլիացիներն ուժեղացնում էին բլոկադան և դեսանտներ իջեցնում, իսկ վաթսուն դեպարտամենտ

ներում մոլեգնում էին ժիրոնդիստների կազմակերպած հակահեղափոխական խռովություններ։ Կրակե օղակը սեղմում էր յակոբինական հանրապետությունը...

... Նախագահն ավարտեց իր ճառը։ Շատ ջահեր այրվելով հանգան, դրանք փոխարինեցին նոր ջահերով։ Տների բարձր ուրվապատկերները, որ ծառերի արանքներից հազիվ նշմարվում էին սև երկնքի ֆոնի վրա, հեքիաթային տպավորություն էին թողնում։ Լսվեց հեռավոր մի դղրդյուն։ Մնաս բարո՞վ, ժողովրդի Բարեկամ, մնաս բարո՞վ, վաղեմի զինակից... Այն գործը, որի համար դու զոհվեցիր, մենք կշարունակենք, մենք այն լիակատար հաղթանակի կհասցնենք...

Անկաշառելին հետևում էր անվերջ ժապավենի շարժմանը։ Ահա գնում են նրանք, Կոմունայի անդամները, ակումբների, տրիբունալի, հեղափոխական կոմիտեների ներկայացուցիչները, շարքային սանկյուլոտները։ Նրանց հոսանքը մինչև առավոտ չի վերջանա։ Ըստ երևույթին, նրանք հանգուցյալին շատ էին սիրում։ Իսկ ահա Մաքսիմիլիանը նրան չէր սիրում։ Չափազանց տարբեր մարդիկ են, չափազանց տարբեր խառնվածքներ։ Նրանք շատ բաների մասին տարբեր կարծիքներ ունեին և երբեք մինչև վերջ միմյանց հասկանալ չէին կարողանում։ Բայց նրանք միևնույն ջոկատի մարտիկներ էին, նրանք ուս-ուսի պայքարում էին ընդհանուր գործի համար, և արդյոք այդպիսի կոփվածքի դեռ շա՞տ հեղափոխականներ են մնում, ինչպես ժողովրդի Բարեկամն էր։ Օ՜հ, ժիրոնդիստները գիտեին, թե Շարլոտա Կորդեի ձեռքով ում սիրտն էին դանակ խրում։ Նրանք Մարատին սպանեցին հենց այն պահին, երբ նրա հախուռն եռանդը առանձնապես պետք էր։ Մի ժամանակ նրանք Լեռան իրենց դեմ պայքարող երեք առաջնորդներին եռապետներ անվանեցին։ Մարատ, Դանտոն, Ռոբեսպիեր՝ ահա երեք անուններ, որոնք Կոնվենտի առաջին նիստերի ժամանակ մեծամասնության մեջ սարսափ ու ատելություն էին առաջացնում։ Ժողովրդի վստահությամբ օժտված եռապետությունն անվախ կերպով իր գործն էր կատարում։ Եթե երբեմն էլ երեք առաջնորդները մասնակի հարցերում տարաձայնում էին, հիմնականում անփոփոխ կերպով միաբանություն էին պահպանում։ Նրանք պաշտպանում էին Փա-

րիզի կոմունան «պետական մարդկանց» հարձակումներից, նրանք պարենային հարցում անհրաժեշտ մի գիծ մշակեցին, նրանք Ժիրոնդայի ջախջախման օրերին միասնաբար էին գործում։

Եվ ահա այժմ եռապետությունն այլևս գոյություն չունի։ Մարատն ընդմիշտ հեռացավ։ Իսկ Դանտոնը...

Անկաշառելին խեթ-խեթ նայում է Դանտոնի վիթխարի կերպարանքին։ Ինչպիսի՞ վանող արտաքին ունի նա։ Ինչպիսի՞ զարհուրելի չեչոտ երես՝ ջարդված քթով։ Ձուր չեն նրան կիկլոպ անվանում։ Ջահերի լույսի տակ ակնաբները սև փոսեր են թվում՝ փոքրիկ խորն ընկած աչքերը բոլորովին չեն երևում։ Միաժամանակ չափազանց մեծ են երևում ծնոտները, ցլաշան սարսափելի ծնոտները։

Թվում էր, թե այդ ծնոտները պայքարելու համառություն են ցույց տալիս։ Բայց ո՛չ։ Ցլաշունն այնքան էլ սարսափելի չէ, ինչպես կարելի է կարծել։ Ռոբեսպիերը լավ գիտեր, որ նա շատ բարեհոգի է լինում։ Բարեհոգի՞։ Ո՛չ, դա այն բառը չէ։ Ավելի ճիշտ կլինի ասել՝ թույլ, անվճռական, կոմպրոմիսի հակամետ։ Նա սիրում էր կյանքը, բայց կյանքը միայն իր համար։ Մաքսիմիլիանը չի կարող առանց զզվանքի հիշել այն, ինչ նա վերջերս լսեց Դանտոնի մասին։ Իր բարեկամների շրջանում ճաշելիս հարբած լինելով՝ կիկլոպը բացվեց։ Նա հայտարարեց, որ կյանքը վայելելու իր հերթը հասավ։ Շքեղ հյուրանոցներ, նրբահամ կերակուրներ, ոսկեթել նախշակարով մետաքսե զգեստներ, պճնագեղ կանայք՝ ահա թե ի՛նչը պետք է նրան հատուցի հեղափոխությանը նվիրված լինելու համար։ Ռոբեսպիերը չէր ուզում հավատալ այդպիսի լկտիությանը։ Նա չէր հավատում նաև Դանտոնի կաշառվածության, նրա գանձադողության վերաբերյալ խոսակցություններին։ Թեև փաստը փաստ է մնում. Դանտոնը չկարողացավ փակել այն դրամական միջոցների հաշիվը, որ հանձնված էին նրա տնօրինությանը, երբ նա արդարադատության մինիստր էր։ Դանտոնի կարողությունը հեղափոխության տարիներին շատ անգամ աճեց, մինչդեռ Մարատը մեռավ ծայրահեղ աղքատության մեջ։ Իսկ քաղաքական սրիկաների հետ շարունակ Դանտոնի բարեկամությունն անե՞լը։ Իսկ Բարերի հետ նրա համա-

ակ գործունեությունը Հասարակական փրկության առաջին կոմիտեում, որ Մարատը հասարակական կործանման կոմիտե անվանեց։ Բոլորին հայտնի է, որ այդ կոմիտեն չցուցաբերեց ո՛չ կամք, ո՛չ ընդունակություն՝ հաղթահարելու երկրին սպառնացող վտանգը, Ժիրոնդայի շատ առաջնորդների թույլ տվեց փախչելու և աչքից բաց թողեց դեպարտամենտներում խռովությունների մի ամբողջ շղթայի առաջացումը։ Ինչպե՞ս բացատրել այդ ամենը։ Դանտոնն իր ժամանակին հանրապետության համար շատ բան արեց։ Բայց արդյոք նա այժմ չի՞ ուզում ասել ճակատագրական «Կա՛նգ առ» խոսքը, հենց այն խոսքը, որ մի ժամանակ ասացին Բարնավը և Բրիսոն։

Ո՛չ, Անկաշառելին չի կարող առաջվա նման վերաբերվել Դանտոնին։ Թեկուզ ինչ-որ բան էլ չափազանցված լիներ, բայց... Բայց իր հեղափոխական խիղճը, իր փափկանկատությունը, իր քաղաքացիական առաքինությունը թույլ չեն տալիս այդպիսի մարդուն իր զինակիցների ու բարեկամների շարքը դասելու։ Ռոբեսպիերին կասկածամտության հակամետ մարդ են համարում։ Այո, նա կասկածամիտ է այն մարդկանց նկատմամբ, ովքեր ժողովրդին ծառայելիս իրենց վարկաբեկել են, ովքեր իրենց մասին ավելի շատ են մտածում, քան հայրենիքի բարօրության մասին... Տեսնենք... Ժամանակը ցույց կտա։ Նրա դատը, ինչպես մի ժամանակ ասում էր տիկին Ռոլանը, մոտալուտ չէ, բայց արդար է։ Իսկ առայժմ յակոբինականները համառորեն պահանջում էին վերընտրել Հասարակական փրկության անկայուն կոմիտեն։ Մարատի մահից քիչ առաջ, հուլիսի 10-ին Դանտոնը Կոմիտեից վտարվեց, և նրա կազմի մեջ մտան Ռոբեսպիերի մոտիկ քաղաքական բարեկաները՝ Կուտոնը և Սեն-Ժյուստը։

Ահա նրանք իր կողքին են։ Երկուսն էլ երիտասարդ են, երկուսն էլ անձնուրացաբար հեղափոխության գործին նվիրված։ Նրանք ուրիշ կերտվածքի մարդիկ են, քան Դանտոնը։ Նրանք իրենց անձնական բարօրությանը փոքր նշանակություն են տալիս։ Նրանց հարուստ պարգևներով կամ լավ հաշիվերությամբ կաշառել չի կարելի։ Կուտոնը՝ վաղեմի բարեկամը, հեղափոխության իսկական ասպետ է։ Ինչպե՞ս սրաթափանց է նրա հայացքը, ինչպե՞ս նրբագեղ դեմքի արտա-

գայությունը... Նա իսկական հումանիստ է, նա ժողովրդին սիրում է խորը սիրով։ Նա կարող է լինել մեղմ ու մեծահոգի, բայց երբ անհրաժեշտ է, նա անողոք է դառնում։ Անձնական վիշտը չընկճեց նրա ուժեղ հոգին։ Կուտոնը ծանր հիվանդ է։ Հիվանդությունը ոտքերը կաթվածահար է արել, նա տեղաշարժվում էր անվավոր բազկաթոռով։ Բայց դա նրան անզոր չի դարձնում։ Հիվանդ մարմինը մարտիկի անզուսպ հոգի ունի։ Կուտոնը շարունակ իր դիրքում է և այնտեղ կմնա մինչև իր կյանքի վերջին օրը։

Իսկ Սեն-Ժյո՞ստը։ Օ՜հ, Մաքսիմիլիանը նրան նայել չի կարող առանց սրտի թեթև թրթիռի։ Սեն-Ժյուստը բնության արտասովոր, անկրկնելի մի երևույթ է։ Ահա նա կանգնած է Կոնվենտի անդամների առաջին շարքում։ Նա քսանվեց տարեկան է։ Նա վայելչակազմ է, նրբագեղ, նրա դեղեցիկ երկար մազերը թափվում են ուսերին։ Աջ ականջը գինդ ունի։ Նուրբ բատիստե փողկապը հասնում է կզակին։ Կոստյումը հիանալի է։ Դեմքը հունական աստծու՝ դեղեցիկ, սառը, խիստ։ Ո՞վ է նա։ Ոսկի երիտասարդության մի ներկայացուցի՞չ։ Մի կնամո՞լ։ Թե՞, դուցե, պարզապես մարմարե արձան։ Ո՛չ, նա կըրակոտ, տաղանդավոր, համառ, անհողդողդ մի մարտիկ է։ Սուրբ Լյուդովիկոսի շքանշանի ասպետի որդին, Անտուան Սեն-Ժյուստը պատանեկությունից իրեն հեղափոխության գործին նվիրեց։ Մի անգամ, ձեռքը այրվող ածուխի վրա դնելով, նա երդում տվեց հաղթել կամ մեռնել։ Նրա իդեալը դարձավ Ռոբեսպիերը։ Մաքսիմիլիանի մոտ պահվում էր 1790 թվականի օգոստոսի թվագրով նամակը, որով այն ժամանակ դեռ անհայտ Սեն-Ժյուստը նրան հրաշագործ աստված էր անվանում։ Նա քսաներեք տարեկան հասակում Կոնվենտի անդամ ընտրվեց։ «Կյանքում ուժեղ է միայն նա, ով մահից չի վախենում»,— ասում էր Սեն-Ժյուստը։ «Խիզախել՝ այս է ամբողջ հեղափոխական քաղաքականությունը»։ Եվ նա մահից չէր վախենում։ Նա խիզախում էր։ Նրա համարձակությունը հանգիստ էր, լավ կշռադատված։ Նա հարվածներ էր հասցնում առանց նախազգուշացնելու։ «Նրա ճառերը կացնի նման կտրում են»,— վկայում էին նրանք, ովքեր լսում էին երիտասարդ տրիբունին։ Սեն-Ժյուստը, ինչպես և Ռոբեսպիերը, ամբողջությամբ

պատկանում էր հասարակական գործին։ Ինչպես և Ռոբեսպիերը, նա ընտանիք և անձնական կյանք չէր ճանաչում։ Մի ժամանակ, պատանեկության աբշալույսին նա բուռն կերպով սիրում էր։ Բայց սիրած աղջիկը հարս չդարձավ։ Աղջկա ծնողները զգացմունքների փոխադարձությունն անտեսելով, իրենց դստերն ուրիշին տվեցին։ Այն ժամանակվանից բոլոր կանայք Սեն-Ժյուստի համար մեռան... Ինքնամփոփ ու խստաբարո, նա գործում էր միայն բարձրագույն սկզբունքների համար։ Նրա անհողդողդությունը երբեմն վախեցնում էր նույնիսկ Անկաշառելիին...

... Մաքսիմիլիանն սթափվեց մտքերից։ Լուսադեմի խոնավությունը մեջքը տհաճ խտղտեց։ Ամեն ինչ վերջացավ։ Գերեզմանը ծածկված է։ Հրաժեշտ տվողների ժապավենը շարունակում է շարժվել։ Կյանքն ընթանում է իր կարգով։ Նոր օրը նոր խնդիրներ է դնում։

Մարատի սպանությունը «պետական մարդկանց» պլանի մի մասն էր միայն։ Այն օրը, երբ Փարիզում ժողովրդի Բաստիլամին թաղում էին, խռովարար Լիոնում տեղական յակոբինականների առաջնորդ Ժոզեֆ Շալյեն մահապատժի ենթարկվեց։ Հայրենասերներին սպանում էին ամենուրեք։ Դանակներ էին սրում Ռոբեսպիերի և Դանտոնի համար։ Ջախջախված ժիրոնդան բացահայտ սպիտակ տեռորի ուղին էր բռնում։

Այդ ամենը եռանդուն պատասխան միջոցներ էր պահանջում։ Եվ այդ միջոցները ձեռք առնվեցին։ Մասսաների ճնշման տակ, պարզորեն գիտակցելով պայքարի հսկայական դժվարությունները, յակոբինականներն արագորեն և արմատապես վերակառուցեցին պետական իշխանությունը։

Արդեն հուլիս-օգոստոս ամիսներին շեշտակիորեն աճեց Հասարակական փրկության կոմիտեի դերը։ Նրան իրավունք տրվեց կասկածելի անձանց կալանավորել և մինիստրների գործունեությունը կարգավորել։ Կոնվենտը նրան հիսուն միլիոն լիվր հատկացրեց։ Վերջապես, նրա կազմի մեջ մտավ Անկաշառելին, դառնալով Կոմիտեի հոգին, Կոմիտեի՝ որը շուտով իսկական «Ռոբեսպիերի մինիստրություն» դարձավ։

Դրա հետ միաժամանակ, ընդունելով, որ հանրապետու-

թյանն սպառնացող դավադրությունների իրագործման պայմաններում խաղաղ ժամանակվա համար նախատեսված օրենքների հասարակ կատարումը բավական չէր լինի, Կոնվենտը հետաձգեց նոր սահմանադրության գործադրումը։

Հեղափոխական կառավարություն կազմելու գործում վճռական դեր խաղացին սեպտեմբերի 4—5-ի դեպքերը։

Սեպտեմբերի 4-ին Սենտ-Անտուանի արվարձանում բանվորական հուզումներ սկսվեցին, որոնք հետո ընդգրկեցին Փարիզի ամբողջ չքավորությունը։ «Կատաղիների» նախապատրաստած այդ շարժումը ընթանում էր հեղափոխական տեռորի և ընդհանուր մաքսիմումի լոզունգով։ Շոմետը կարողացավ ելույթին լեգալ բնույթ տալ, զինված ցուցարարներին համոզելով «սրբազան լեռանը» հավատալու։

Սեպտեմբերի 5-ին Շոմետի գլխավորությամբ Կոնվենտ ներկայացան քառասունութ սեկցիաների ներկայացուցիչները։ Կոմունայի դատախազն իր ճառով Կոնվենտին կոչ արեց վճռական պայքար մղելու ժողովրդական կարիքի հաշվին շահույթ ստացող հարուստների դեմ։ Նա մատնանշում էր, որ պայքարի միակ մեթոդը տեռորն է։ Նա առաջարկում էր կազմակերպել առանձին մի բանակ, որն զբաղվեր դեպարտամենտներում դավադրությունների և տնտեսական սաբոտաժի վերացմամբ։ Սեկցիաների հռետորները Շոմետին պաշտպանեցին։ Սլույթ ունեցողների ընդհանուր պահանջը հանգում էր այս մտքին. «Տեռորն օրակարգում դրեք։ Հեղափոխությունը պաշտպանենք, որովհետև մեր թշնամիների բանակում հակահեղափոխություն է տիրում»։ Շատերը պահանջում էին կալանավորված ժիրոնդիստների նկատմամբ արագ դատաստան տեսնել։ Ռոբեսպիերի առաջարկությամբ Փարիզի պատգամավորները հրավիրվեցին Կոնվենտի նիստին մասնակցելու։ Անկաշառելին հրավիրվածներին հավաստիացրեց, որ Կոնվենտը նրանց ուղերձներն ուշադրության կառնի և ժողովրդի օրինական պահանջները կբավարարի։

Եվ իրոք, Կոնվենտը հեղափոխության խորացմանն ուղղված մի շարք կարևոր միջոցառումներ կիրառեց։ Ամենից ա-

ոչ Հեղափոխական տրիբունալը վերակառուցեցին, նրա դատավարությունը պարզեցվեց ու արագացվեց։ Յուրաքանչյուր սեկցիային առընթեր կազմեցին բնակչության կողմից ընտրվող հեղափոխական առանձին կոմիտեներ։ Այդ կոմիտեները, որ ստեղծվեցին նաև տեղերում, պետք է հսկեին ժողովրդի բոլոր գաղտնի թշնամիներին և կենսագործեին Կոնվենտի դիրեկտիվները։ Կոմիտեների գործունեությունը հեշտանում էր «կասկածելիների» մասին դեկրետի հրապարակմամբ, որի համաձայն կալանավորման ենթակա էին այն բոլոր անձինք, ովքեր «իրենց գործելակերպով, ճառերով կամ գրվածքներով իրենց ցուցաբերում էին որպես բռնապետության կողմնակից»։ Ստեղծվեց լայն սպառման ապրանքները թաքցնելու գործում մեղավոր անձանց դեմ պայքարող հեղափոխական առանձին բանակ։ Ձախ յակոբինականները հասան այն բանին, որ կառավարության մեջ մտան. արդեն սեպտեմբերի 6-ին Հասարակական փրկության կոմիտեն համալրվեց Շոմետին և էբերին մոտիկ գործիչներով՝ Բիլո-Վարենով և Կոլո դ'Էրբուայով։ Միաժամանակ Կոմիտեից դուրս եկավ նրա կազմում մնացած վերջին դանտոնիստը՝ Տյուրիոն։ Կոմիտեն Կորդելյերների ակումբի և սեկցիաների կազմակերպությունների հետ ավելի սերտ կոնտակտ հաստատեց։ Նոր կառավարությունը կոչված էր կատարելու մասսաների կամքը, որոնց վրա նա հենվում էր, որոնցից ստանում էր իր ամբողջ ուժը։ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, ամուր սեղմելով նուրբ շուրթերը, կանգնած էր ղեկի մոտ։

— Հեղափոխական կառավարության տեսությունը,— ասում էր նա Յակոբինյան ակումբում,— այնպես նոր է, ինչպես հենց հեղափոխությունը, որն այն ստեղծեց։ Ապարդյուն կլիներ այն փնտրել քաղաքական գրողների աշխատություններում, որոնք բնավ չեն կանխատեսել մեր հեղափոխությունը, կամ այն օրենքներում, որոնց օգնությամբ բռնապետները կառավարում են։ Սահմանադրական կառավարության խնդիրը հանրապետության պահպանումն է, հեղափոխական կառավարության խնդիրը՝ նրա հիմնադրումը...

Հեղափոխությունը ազատություն նվաճելու պայքար է, նրա բոլոր թշնամիների դեմ մղվող պայքարը, սահմանադրու-

թյունը՝ արդեն հաղթանակ տարած ազատության խաղաղ ռեժիմը։ Հեղափոխական կառավարությունը պետք է բացառիկ ակտիվություն ցուցաբերի հենց այն պատճառով, որ նա ասես պատերազմական դրության մեջ է գտնվում։ Նրա համար պիտանի չեն խիստ միատեսակ կանոնները, նկատի ունենալով այն փոթորկալից, շարունակ փոփոխվող հանգամանքները, որոնց պայմաններում նա գործում է, և առանձնապես այն պատճառով, որ ավելի ու ավելի նոր ու սպառնալից վտանգների առկայությամբ նա ստիպված է անդադար նորանոր միջոցներ գործի դնել։

Հեղափոխական կառավարությունը պարտավոր է բոլոր քաղաքացիների համար ազգային լիակատար պահպանություն ապահովել. նա պետք է ժողովրդի թշնամիներին միայն մահվան դատապարտի...

Սակայն Ռոբեսպիերն այդ տեսությունն այդպիսի հստակությամբ ու սրությամբ ձևակերպեց 1793 թվականի դեկտեմբերի վերջին միայն։ Արդյոք նա սեպտեմբերի սկզբին այդքան վճռական և շիտակ էր։ Դրանում կարելի է կասկածել։ Այն օրերին, երբ հեղափոխական օրենքի սուրն արդեն վեր էր բարձրացվել և տեռորը ժողովրդի համառ պահանջով օրակարգի մեջ մտել, Անկաշառելին տատանվում էր։ Նա հեռացավ Կոնվենտի սեպտեմբերի 5-ի փոթորկալից նիստից, չսպասելով սեկցիաների պատգամավորների առաջ քաշած հարցերի քննարկմանը։ Սանկյուլոտների ծրագիրն ընդունելով, նա աշխատում էր նրանց բաժանել իրենց առաջնորդներից՝ «կատաղիներից», որոնց հենց այդ օրերին մոնտանյարները ջախջախեցին[1]։ Համաձայնվելով Շոմետին օգնել, Ռոբեսպիերը միաժամանակ տեռորի հարցում ավելի չափավոր կարծիքների էր հետևում, քան ձախ յակոբինականները։ Նրան հաջողվեց հեղափոխական տրիբունալից փրկել Ժիրոնդայի լիդերների կա-

[1] Ռոբեսպիերը «կատաղիների» հետ կապերը խզեց դեռևս յակոբինական սահմանադրության հաստատման ժամանակաշրջանում։ Նա Կոնվենտում և Յակոբինյան ակումբում բազմիցս հանդես էր գալիս Ռուի և Վարլեի դեմ։ Սեպտեմբերի 5-ին ժակ Ռուն կրկին անգամ կալանավորվեց և հետագայում բանտում ինքնասպան եղավ։

լանավորման կապակցությամբ ներկայացված բողոքագիրն սատրագրած յոթանասունհինգ ժիրոնդիստների՝ Կոնվենտի անդամների։ «Հարկ չկա կուսակցության շարքային անդամների վրա հարձակվել՝ բավական է ոչնչացնել նրա առաջնորդներին»,— այդպես էր հիմնավորում Անկաշառելին այդ վարմունքը, չմտածելով, որ դիլյոտինից փրկում է իր ամենաոխերիմ թշնամիներին։ Ռոբեսպիերի նախաձեռնությամբ որոշում ընդունվեց՝ ամեն անգամ կալանավորներին նրանց կալանավորման ճշգրիտ պատճառները բացատրելու անհրաժեշտության մասին։ Օրենսգետ Ռոբեսպիերի բերանով արտահայտված այդպիսի ցանկությունը միանգամայն հասկանալի է, բայց այն կենսագործելը ամենադաժան պայքարի ժամանակաշրջանում, երբ հարվածները հասցվում էին հազարավոր բացահայտ և դաղտնի խռովարարներին, գործնականապես հրնարավոր չէր։ Այդ բանը պարզորեն տեսնում էին հեղափոխական կոմիտեները։ Կոմիտեների պարզաբանումները և, գլխավորապես, բուն կյանքը աստիճանաբար Անկաշառելիի աչքերը բաց արին։ Նա ամեն ինչ հասկացավ և հենց ինքն էլ հասավ իր նախաձեռնությամբ ընդունված դեկրետի վերացմանը։

— Այժմ հեղափոխական հանդը թուլացնելու ժամանակը չէ,— հայտարարեց նա, իր դեմարշը հիմնավորելով։

Հոկտեմբերի 24-ին դեկրետը վերացվեց։ Հենց այդ օրն էլ սկսվեց ժիրոնդիստների դատավարությունը։

Այսպես պատմությունն ավարտում էր իր ճանապարհը։ Նրանք, այդ բոլոր Բրիսոները, Վերնյոները, Գյուադենները, որոնք դեռ բոլորովին վերջերս հրճվում էին իրենց լիիշխանությամբ, պետք է իրենց գլուխը դնեին կառափնարանում. իսկ նա, որին նրանք մի ժամանակ արհամարհում ու անարգում էին, փառքի և հզորության գագաթնակետին էր հասնում։

ԳԼՈՒԽ 2

ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Այո, այժմ նա կանգնած էր կառավարման ղեկի մոտ։ Նրա կողքին էին իր անհոլդողդ բարեկամներն ու համախոհները՝ Կուտոնը և Սեն-Ժյուստը։ Նա բարձր պաշտոններ չէր գրավում, իրավաբանորեն նրա իշխանությունն իր պաշտոնակիցների իշխանությունից ավելի մեծ չէր։ Բայց նա շատ մեծ ուժ ուներ, որն ստիպում էր դողալ։ Այդ ուժն առաջ էր գալիս իր գործի արդարության վստահությունից։ Անցյալում, այն ժամանակ, երբ Սահմանադիր ժողովի ամբարտավան դեպուտատները ծաղրում էին առասցի փոքրիկ փաստաբանին, եղավ մի մարդարե, որը նրան ճիշտ գնահատեց։ Միրաբոն, արտասովոր տաղանդով մի հռետոր, ապագան պատկերացրեց և Ռոբեսպիերի համար հաջողություն կանխագուշակեց. ոչնչի չընհավատացող Միրաբոն հասկացավ մի մարդու գերազանցությունը, որը հավատում էր այն ամենին, ինչ որ ասում էր։ Բարոյական համոզվածության այդ ուժը դյուրում էր Անկաշառելիի ունկնդիրներին, այն նրա խոսքերին ու գործողություններին բարոյական հսկայական կշիռ էր տալիս։ Յակոբինյան ակումբում նրան արդեն վաղուց էին աստվածացնում և նրա յուրաքանչյուր հայտնվելը օվացիաներով դիմավորում։ Այժմ նրա անբեկանելի իշխանությունը տարածվել էր նաև Կոնվենտում։ Բայց նրա հիմնական միջնաբերդը, նրա «մինիստրությունը» դարձավ հեղափոխական կառավարության գլխավոր օրգանը՝ Հասարակական փրկության կոմիտեն։ Կոմիտեում Ռոբեսպիերը, ի տարբերություն իր պաշտոնակիցների, որոշակի ֆունկցիաներ չուներ. նա իր վրա վերցրեց ընդհանուր ղեկավարությունը, ուղղություն տվող, գլխավոր գծի մշակումը։

Նա ամենից առաջ յակոբինյան կուսակցության գաղափարախոսն էր։ Նրա մտքին ու գրչին էին պատկանում այն գլխավոր փաստաթղթերը, որոնք կազմեցին յակոբինյան դիկտատուրայի հիմքը։ Նա մշակեց Իրավունքների դեկլարացիան, որը դարձավ 1793 թվականի սահմանադրության հենքը, հենց նա էլ Սեն-Ժյուստի հետ միասին ստեղծեց հեղափոխական կա-

ռավարության տեսությունը։ Ամեն անգամ վճռական պահին, երբ անհրաժեշտ էր լինում հիմնավորել կառավարության այս կամ այն կարևոր քայլը, հանդես էր գալիս Ռոբեսպիերը կամ թե նրա հետ պայմանավորվելով՝ նրա մերձավորագույն զինակիցներից մեկը։

Բայց նա ամենևին կյանքից կտրված տեսաբան չէր։ Նրա տեսությունն ամենաանմիջական առնչություն ուներ պրակտիկայի, կյանքի հետ, այն գործուն տեսություն էր, իսկ այստեղից էլ առաջ էր գալիս թե՛ նրա բարոյական համոզվածությունը, թե՛ նրա նկատմամբ հասարակ ժողովրդի սերը։ Բացենք այդ ժամանակաշրջանի նրա հուշատետրերից մեկը։

«Կառավարության համար գոյություն ունեցող չորս կետ,— կրում էր Ռոբեսպիերը,— 1) պարենամթերք և մատակարարում, 2) պատերազմ, 3) հասարակական կարծիք և դավադրություններ, 4) դիվանագիտություն։ Պետք է ամեն օր ստուգել, թե այդ չորս բաներն ինչ դրության մեջ են գտնվում»։

Մեր առջև է Հասարակական փրկության կոմիտեի դիրեկտիվը։ Արդյոք հենց այդ չէ՞ կյանքը։ Արդյոք իրականում հենց Անկաշառելիի թվարկած կետերը չէի՞ն ժամանակի կարևորագույն հարցերը։ Եվ դիրեկտիվն իրականացվում էր։ Յակոբինականներն իրենց առաջնորդի ղեկավարությամբ անշեղորեն լուծում էին օրվա պրոբլեմները։

Պ ա ր ե ն ա մ թ ե ր ք ը և մ ա տ ա կ ա ր ա ր ա ր ու մ ն առաջնահերթ կետ են Ռոբեսպիերի գրառումների մեջ։ Իրոք, պարենային հարցն ամենադժվարին, ամենատանջալից հարցն էր, և հեղափոխությունն առանց դրա լուծման չէր կարող իրականացնել իր առջև ծառացած խնդիրներից և ոչ մեկը։

Ռոբեսպիերը և նրա գլխավորած յակոբինականների խումբը մինչև 1793 թվականի մայիսն առևտրի սահմանափակման և գների սակորոշման հակառակորդներ էին։ Մինչդեռ հենց միայն այդ ճանապարհով գնալով կարելի էր արդյունքներ ձեռք բերել՝ հաղթահարել սպեկուլյացիան և սաբոտաժը, կազմակերպել բանակի մատակարարումը, իրենց կողմը գրավել սովահար չքավորությունը։ Եվ կառավարությունն այդ բանը հասկացավ։ Սեպտեմբերի 11-ին Կոնվենտը հաստատեց

հացահատիկի, այլուրի և անասնակերի միասնական գներ։ Ագմինիստրացիան իրավունք ստացավ հացահատիկ ու ալյուր բռնագրավելու։ Օրենքը խախտելու համար խիստ պատասխանատվության էին ենթարկվում։ Սեպտեմբերի 29-ին Կոնվենտն ամբողջ երկրի սահմաններում սպառման գլխավոր առարկաների հաստատուն գների մասին դեկրետ հրապարակեց։ Այսպես սահմանվեց ը ն դ հ ա ն ու ր մ ա ք ս ի մ ու մ ը։

Նոր օրենքը զարգացնելով, ձեռք առնվեցին քաղցի դեմ մղվող պայքարին ուղղված մի շարք տնտեսական ու կազմակերպական միջոցներ։ Փարիզում և մյուս քաղաքներում կիրառեցին հացի, մսի, յուղի, օճառի, աղի պարենային քարտերը։ Հացավաճառներին պատվիրեցին թխել բոլորի համար միևնույն «հավասարության հաց»։ Ամբողջ երկրում մատակարարումը կարգավորելու ու կենտրոնացնելու համար, ընդհանուր մաքսիմումի կիրառմանը վերահսկելու համար ստեղծվեց լայն լիազորություններով օժտված և հեղափոխական բանակի վրա հենված կենտրոնական պարենային հանձնաժողով։

Այսպես իրականությունը հերքեց առևտրի ազատության գոկտրինան։ Ռոբեսպիերը և նրա համախոհները, գիտակցելով իրենց սոցիալական «հավատամքից» ժամանակավորապես հրաժարվելու երկաթյա անհրաժեշտությունը, համաձայնվեցին մասնավոր սեփականության սահմանափակմանը։ Եվ մեկ անգամ որոշում ընդունելով, նրանք չվախեցան այն կենսագործել պլեբեյական մեթոդներով, հեղափոխական օրենքների ամենայն խստությամբ։

Պ ա տ ե ր ա զ մ ը Ռոբեսպիերի գրառման երկրորդ կետն է։ Երկրորդն ըստ կարգի, և ոչ թե ըստ կարևորության, որովհետև պատերազմը պարենային հարցից պակաս կարևոր գործ չէր։ Հազիվ թե որևէ մեկն այդ բանն Անկաշառելիից ավելի լավ էր հասկանում. չէ՞ որ նրա գլխավորած պայքարի ելքը վերջին հաշվով որոշվում էր եվրոպական կոալիցիայի դեմ մղվող ճակատամարտի դաշտերում։ Ժիրոնդիստները պատերազմի մասին շատ էին գոռգոռում և նրա նախաձեռնողներն էին, բայց հանրապետության պաշտպանության խնդիրը նրանց ուժերից վեր եզավ։ Միայն յակոբինական բլոկի հաղթանակը փոխեց

գրությունը։ Եվ այնուամենայնիվ վճռական բեկումը հը-նարավոր դարձավ այն պատճառով, որ յակոբինականները նրբազգացորեն հաշվի առան մասսաների պահանջները և պաշտպանեցին նրանց նախաձեռնությունը։

Այսպես, սկզբնական ժողովների նախաձեռնությամբ ա-ռաջացավ ընդհանուր զորահավաքի գաղափարը։ Այդ գաղա-փարը Կոմիտեն պաշտպանեց։ Ժողովուրդը խանդավառու-թյամբ ողջունեց կառավարության որոշումը։ Կարճ ժամա-նակամիջոցում կատարեցին առաջին հավաքը, որը հանրա-պետությանը տվեց չորս հարյուր քսան հազար մարտիկ, իսկ 1794 թվականի վերջերին բանակն արդեն ուներ մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդ։ Նոր բանակը նոր ձևով կազմա-կերպվեց. այն ուներ հեղափոխական ռազմական ոգի, գիտակ-ցական կարգապահություն։ Ճիշտ է, զինվորները ոչ միշտ էին կոշիկ ու համազգեստ ունենում, ճիշտ է, նրանք ոչ միշտ էին կուշտ լինում, բայց կառավարությունն ու նրա կոմիսար-ները շարունակ մարտիկներին օգնության էին հասնում, կանգ չառնելով ամենամեծական միջոցառումների առաջ։ Ահա, օրի-նակ, Սեն-Ժյուստի այն ժամանակվա հրամաններից մեկը, երբ նա էլզասի կոմիսարն էր։

«Տասը հազար զինվոր ոտաբոբիկ են. հանեցեք Ստրասբուր-գի բոլոր արիստոկրատների ոտնամանները, և վաղն առավոտ-յան ժամը տասին տասը հազար զույգ սապոգ պետք է ուղարկ-վեն դլխավոր հրամանատարի զորակայանը»։

Նոր բանակը նոր գեներալներ ու սպաներ ուներ։ Նրան-ցից շատերը հասարակ ժողովրդի ծոցից էին դուրս եկել։ Այս-պես, հեղափոխական գեներալ Ռոսինյոլը արծաթագործ բան-վոր էր, տաղանդավոր Կլեբերը որմնադիրի ընտանիքից էր սե-րում, Լանի և Հոշի ծնողները գյուղացիներ էին։ Յակոբինական կառավարությունը համարձակորեն լուծեց հրամանատարա-կան կադրերի ստեղծման խնդիրը. նա զինվորական բարձրա-գույն պաշտոններ գրավելու հնարավորություն ստեղծեց ա-մեն մեկի համար, ով կարող էր գործնականապես ապացուցել հեղափոխության նկատմամբ իր նվիրվածությունը և հաղթելու հմտությունը։

Այժմ, վերջապես, հանրապետությունն սկսեց ռազմաճա-

կատներում վճռական հաղթանակներ տանել։ Գոնդսհոոտի և Վատինյիի մոտ (սեպտեմբեր-նոյեմբերին) տեղի ունեցած ճակատամարտերից հետո ֆրանսիական զորքերը նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրին։ 1793—94 թվականի ձմռան մոտերքն արևելյան սահմանը վերականգնվեց։ Դեկտեմբերին Տուլոնն ազատագրվեց անգլիացիներից։ Ֆրանսիայի տերիտորիան թշնամուց ամբողջովին մաքրվեց։ Փառքի ճանապարհը բացվեց։

Ռոբեսպիերն ամենաէական պրոբլեմներից երրորդը համարում էր հասարակական կարծիքը և դավադրությունները։ Եվ իսկապես, քանի դեռ ներքին հակահեղափոխությունն ընդգրկում էր երկիրը, քանի դեռ սպիտակ տեռորն արգելակում էր յակոբինյան դիկտատուրայի բոլոր միջոցառումները և սպառնում նրա բուն սրտին, ոչ մի արտաքին հաղթանակ չէր կարող հանրապետությունը փրկել։ Այստեղ ևս վճռական խոսքը ժողովուրդն ասաց։

Ռոբեսպիերը պաշտպանեց ժողովրդի կոչը և դարձավ հեղափոխական տեռորի սիստեմի կազմակերպիչներից մեկը։ Հետագայում պատմությունն այդ սիստեմը հենց նրա անվան հետ կկապի։

Հասարակական կարծիքն ստեղծվում էր կյանքի պահանջով և շտկվում Յակոբինյան ակումբի կողմից։ Ժողովուրդն աջակցում էր յակոբինականներին և նրանց համար հենարան հանդիսանում, սեփականատերերը նրանց ատում էին, բայց ստիպված էին գաղտնաբար գործել։ Ահա հենց այդ գաղտնիքն էլ անհրաժեշտ էր բացահայտել՝ թշնամուն վնասազերծ անելու համար։ Հասարակական կարծիքի ստուգմամբ զբաղվում էին հեղափոխական կոմիտեներն ու սեկցիաները։ Ներքին գավազրությունների ճնշման գործում գլխավոր դերը կատարում էր Հասարակական անվտանգության կոմիտեն, որը ղեկավարում էր ոստիկանությունը և գիտող գործակալությունը, այդ կոմիտեի գործունեությունն ընթանում էր Հասարակական փրկության կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ։ Քաղաքական բնույթի գործերի բնագավառում դատական

պարտականությունները գրվեցին Հեղափոխական տրիբունալի վրա։

1793 թվականի աշնանը հեղափոխական օրենքի սուրն սկսեց մեծ արագությամբ ու թափով իջնել։ Այն անդթաբար իջնում էր ժողովրդի թշնամիների գլխին։ Մարատին սպանող Շարլոտա Կորդեից հետո կառափնարան ոտք դրեց մի ուրիշ կին՝ Լյուդովիկոս XVI-ի այրին, նախկին թագուհի Մարիա Անտուանետան։ Նրանից հետո հերթը հասավ Ժիրոնդայի առաջնորդներին։

Դատավարության ժամանակ ժիրոնդիստներն իրենց վատ էին պահում։ Նրանք ամբողջ հանցանքը գցում էին բացակայողների կամ միմյանց վրա։ Նրանցից ոմանք փորձում էին հանդիսատեսներին կաշառել, նրանց կողմը դրամ նետելով։ Բայց մարդիկ թղթադրամը կոխկրտում էին։ Բոլոր մեղադրյալները՝ Բրիսոն, Վերնյոն, Ժանսոնեն և նրանց տասնութ զինակիցները, դատապարտվեցին մահապատժի։ Մահապատիժը կայացավ հոկտեմբերի 31-ին։ Դատապարտյալները մահը տրիաբար դիմավորեցին։ Ի՞նչ ասել նրանց բարեկամների մասին, որոնք այդ օրն ապրեցին։ Գրեթե նրանց բոլորին միևնույն ճակատագիրն էր սպասում։ Նոյեմբերի սկզբին գիլյոտինը գլխատեց Օռլեանի նախկին դուքսին։ Նրանից երկու օր հետո հասավ Մանոն Ռոլանի հերթը։ Խռովարար Նորմանդիայում թաքնված նրա ամուսինը չկարողացավ տանել կնոջ մահապատժի լուրը և ինքնասպան եղավ։ Դեկտեմբերին մեռան նրա պաշտոնակիցները, նախկին ժիրոնդիստական մինիստրներ Լեբրենը և Կլավերը։ Հաջորդ, 1794 թվականի գարնանը թույն ընդունեց փիլիսոփա Կոնդորսեն։ Ինչ վերաբերում է դեպարտամենտները փախած ժիրոնդիստներին, ապա նրանցից ողջ մնալով, յակոբինյան դիկտատուրան անցկացրին միայն Ռոբեսպիերին վիրավորող Լուվեն և բաղմադեմ Ինարը։ Գուադոն և Բարբարուն գիլյոտինով գլխատվեցին Բորդոյում 1794 թվականի ամռանը։ Սահմանադիր ժողովից Ռոբեսպիերի զինակիցներ Պետիոնը և Բյուզոն հակահեղափոխությունը ջախջախվելուց հետո հարավում թաքնվելու անհաջող փորձ կատարեցին. նրանք մեռան փախուստի ճանապարհին, և գայլերը նրանց դիակները հոշոտեցին։

Ժիրոնդայի ղեկավարներին կառափնարան ուղարկելով, յակոբինականները զիջողություն չէին անում նաև նրանց նախորդների՝ սահմանադրականների և ֆեյյանների համար։

Այն օրերին, երբ Օռլեանի դուքսի և տիկին Ռոլանի գլուխները գետին էին տապալվում, Հեղափոխական տրիբունալը հիշեց մի նշանավոր գործչի, Մարսյան դաշտի կոտորածի հերոս Ժանե Բայիի մասին, որն այժմ փորձում էր մոռացության ստվերի տակ թաքնվել։ Արդյոք կարելի՞ էր մոռանալ այդ մասին, եթե անմեղ զոհերի արյունը վրիժառություն էր պահանջում։ Տրիբունալը զառամյալ Բայիին դատեց նոյեմբերի 10-ին. երկու օր հետո նրան գլխատեցին այն տեղի մոտ ընկած մի փոսում, ուր մի ժամանակ նրա հրամանով հարյուրավոր հայրենասերներ գնդակահարվեցին։ Երկու օր անց հասավ նաև դավաճան Բարնավի հերթը։ Նա բաժանեց Բայիի ճակատագիրը, որի հետ մի ժամանակ դափնեպսակներ էր բաժանում։

Այսպես էր գործում հեղափոխության Նեմեզիդան։ Նրա ձեռքը պատժում էր առանց վրիպելու։ Ովքեր դավաճանել էին ընդհանուր գործին, ովքեր ինտրիգներ էին սարքել, աշխատել ազատության հաղթական երթը ետ շուռ տալ կամ թուլացնել, այժմ իրենց գլուխները կառափնարան էին տանում։ Ազատագրված ժողովուրդը սպիտակ տեռորին պատասխանում էր հեղափոխական կարմիր տեռորով։ Եվ առաջին փրկարար արդյունքներն իրենց սպասեցնել չտվեցին։ Արդեն օգոստոսի 25-ին հանրապետական զորքերը մտան Մարսել։ Հոկտեմբերի սկզբին գրավվեց Լիոնը։ Հոկտեմբերին Կոնվենտի իշխանությանը ենթարկվեց Բորդոն։ Բարենպաստ լուրեր էին ստացվում Վանդեայից։ Գավառներում ժիրոնդիստական խռովությունը վերջանալու վրա էր։ Թշնամիների կրակի օղակը ճեղքվեց։ Զմռան մոտերքը Կոնվենտի իշխանությունը վերականգնվեց գեպարտամենտների մեծ մասում։ Հակահեղափոխությունը ընդհատակ էր սողում։

Դիվանագիտությունը Ռոբեսպիերի գրառման չորրորդ և վերջին կետն է։ Կշռադատված արտաքին քաղաքականությունը պետք է պսակեր յակոբինականների պատերազ-

մական հաջողությունները և ներքին հակահեղափոխության դեմ նրանց տարած հաղթանակը։ Արտաքին քաղաքական պրոբլեմները Անկաշառելիին առանձնապես հուզում էին 1793 թվականի աշնան վերջին և ձմռան սկզբին, ռազմաճակատում վերջնական բեկման օրերին։ Մաքսիմիլիանը իր զեկուցումներում առավելագույն պարզությամբ նշեց այն սկզբունքները, որ պետք է կազմեին հարևան պետությունների հետ Ֆրանսիայի փոխհարաբերությունների հիմքը։

Այդ սկզբունքներն են համբերատարությունը, ներքին գործերին չմիջամտելը, պետական անկախությունը և սուվերենությունը փոխադարձաբար հարգելը։

Ֆրանսիացիներին կոչ անելով ինտերվենտներին չախչախել, նրանց զորքերը երկրի սահմաններից դուրս քշել, Ռոբեսպիերը շեշտում էր, որ ֆրանսիական ժողովրդի այդ ազգային խընդիրը համապատասխանում է ամբողջ մարդկության շահերին։

«Եթե Ֆրանսիայում ազատությունը կործանվի,— ասում էր նա,— բնությունն անդամ մեռելաթաղման քողով կծածկվի, իսկ մարդկային բանականությունը կնահանջի դեպի տգիտության ու բարբարոսության ժամանակները։ Բռնակալությունն անեզր ծովի նման կողողի երկրագունդը... Մենք պայքարում ենք ապրող մարդկանց համար և նրանց համար, ովքեր պետք է ապրեն...»։

Անկաշառելիի կազմած Իրավունքների դեկլարացիային ձայնակցող այս խոսքերը ցույց են տալիս, թե նա ինչպիսի հիանալի կանխատեսությամբ հասկացավ ֆրանսիական մեծ հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը։ Եվ սակայն, շեշտելով նրա դերը մյուս երկրների համար ոչ միայն այժմ, այլև ապագայում, Ռոբեսպիերը թշնամաբար էր վերաբերվում էբերտիստ Կլոտսի ծրագրին, որը հանրապետությունների համաշխարհային միություն ստեղծելու համար հեղափոխական պատերազմ էր քարոզում։ Յակոբինականների առաջնորդն այդ ծրագիրը վնասակար ու անիմաստ ուտոպիա էր համարում։ Ընդունելով, որ դրսից հեղափոխություն չի բերվում այն ժողովուրդներին, որոնց մոտ նրա համար դեռևս պայմաններ չեն հասունացել, Ռոբեսպիերը համոզված էր, որ այդպիսի պատերազմը, հանրապետության

թշնամիների թիվն անընդհատ ավելացնելով, կարող է անվերջ ձգձգվել։ Միաժամանակ, Կլոտսին առարկելով, Անկաշառելին չէր ուզում համաձայնվել նաև Դանտոնի բարեկամների հետ, որոնք հակամետ էին կոմպրոմիսային հաշտություն կնքելու։ Երբ 1793 թվականի դեկտեմբերին Պրուսիան և Ավստրիան բանակցությունների համար հող շոշափեցին, յակոբինյան կառավարությունը նրանց չպատասխանեց։ Հանրապետության համար օգտակար հաշտության ժամանակը դեռ չէր եկել, իսկ կոմպրոմիսային հաշտությունը կարող էր հանգեցնել միայն կապիտուլյացիայի։

Սրանք էին Ռոբեսպիերի և նրա համախոհների դիվանագիտության հիմունքները ինտերվենտների դեմ մղվող պատերազմի բարդ պայմաններում։ Նրանք ձգտում էին բարեկամական հարաբերություններ հաստատել նրանց հետ, ովքեր խաղաղասիրությանը պատասխանում էին խաղաղասիրությամբ, բայց բացառում էին Ֆրանսիայի ամբողջականության և նրա հեղափոխական անկախության նկատմամբ ոտնձգություն թույլ տված թշնամիների հետ բանակցությունների ամեն մի հնարավորություն։

Բայց հանրապետության կյանքն այս ամենով չէր սահմանափակվում։ Ճակատամարտերի թնդյունի և գիլյոտինի թրխկոցի տակ ընթանում էր անընդհատ ստեղծագործական մի պրոցես։ Աշխարհում այդ հեղափոխությունից առաջ դեռևս երբեք և ոչ մի տեղ այնքան շատ բան չի վերանայվել ու կատարվել, որքան յակոբինյան դիկտատուրայի մի քանի ամսվա ընթացքում։ Եվ ստեղծագործության այդ հոսանքում ժողովրդի ազատ նախաձեռնությունը նույնպես առաջընթաց դեր կատարեց։ Հասարակական փրկության կոմիտեն Ռոբեսպիերի և Սեն-Ժյուստի գլխավորությամբ նրբաղդացորեն հաշվի էր առնում երկրի կարիքները և յակոբինական համարձակությամբ դրանց անդրադառնում։ Անձամբ Ռոբեսպիերի կազմած կամ խմբագրած բազմաթիվ որոշումներ վերաբերում էին հեղափոխական Ֆրանսիայի հասարակական ու կուլտուրական կյանքի գրեթե բոլոր կողմերին։

Յակոբինականները շատ էին զբաղվում ժողովրդական կըր-

թության հարցով։ 1793 թվականի հուլիսի 13-ին Ռոբեսպիեր հանդես եկավ մի պլանով, որը նախատեսվում էր արտադրական աշխատանքի հետ, հանրապետության բոլոր աճող քաղաքացիների համար անհրաժեշտ ֆիզիկական ու բարոյական զարգացման հետ զուգակցված ընդհանուր լայն կրթություն։ Անկաշառելին առաջարկեց, որ հինգից մինչև տասնմեկ-տասներկու տարեկան երեխաները դաստիարակվեն միասին, առանց զանազան խտրությունների ու բացառությունների, առանձին ինտերնատներում, պետության հաշվին։ Այդպիսի դաստիարակությունը, զեկուցողի կարծիքով, կաջակցեր հավասարության գաղափարի հաղթանակին։ Կոնվենտը խանդավառությամբ պաշտպանեց նախագիծը։ Եվ թեպետ բազմօրյա վիճաբանություններից հետո այն իրոք կըրճատվեց՝ բուրժուական հասարակության մեջ այդպիսի պլանի իրականացումը հնարավոր չէր, այնուամենայնիվ նույն թվականի վերջին օրենսդիրները դեկրետավորեցին միասնական ծրագրով տրվող պարտադիր և ձրի եռամյա տարրական կրթություն, որ նույնպես մեծ հաղթանակ էր։

Զգալի վերակառուցման ենթարկվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունը։ Եկեղեցուց նյութական ու գաղափարական կախման մեջ գտնվող հին համալսարանները վերացվեցին։ Վերացման ենթակա էին նաև թագավորական ակադեմիաները՝ մեկուսախմբային ոգով համախմբված և հեղափոխությանը ծառայելու անընդունակ գիտական հիմնարկությունները։ Դրա փոխարեն որոշվեց Փարիզում ստեղծել պահոցների ու թանգարանների օբյեկտներում ուսուցման դիտողական մեթոդներ կիրառող բարձրագույն ժողովրդական կրթության կենտրոնական լիցեյ։ Կոնվենտը հաստատեց պոլիտեխնիկական բարձրագույն դպրոցի կազմակերպումը, որը պետք է ինժեներներ ու ճշգրիտ գիտությունների մասնագետներ տար, ինչպես նաև Նորմալ դպրոցի կազմակերպումը, որը ուսուցչական նոր կադրեր էր պատրաստում։ Ստեղծվում էին մասնագիտական՝ ռազմական, նավագնացության, բժշկական դպրոցներ ու դասընթացներ։ Քաղաքական լուսավորության մասին, կրոնական նախապաշարմունքների

դեմ պայքարելու մասին, գիտական գիտելիքների տարածման մասին հոգ տանելով, Կոնվենտն աջակցում էր գրադարանների, արխիվների ու թանգարանների նոր կազմակերպմանը, որը գիտության ու արվեստի գանձերը ժողովրդի համար մատչելի էր դարձնում։

Գիտնականների մի ամբողջ համաստեղություն կապված էր հեղափոխության աշխատանքների հետ։ Մաթեմատիկոսներ Մոնժը և Լագրանժը, աստղագետ ու ֆիզիկոս Լապլասը, քիմիկոսներ Լավուազիեն, Բերտոլեն, Լեբլանը, կենսաբաններ Լամարկը և Սենտ-Իլերը, ինչպես նաև գիտության տասնյակ ուրիշ առաջատար գործիչներ թե՛ հետազոտողներ էին, թե՛ մանկավարժներ, թե՛ պրակտիկներ՝ գիտական հիմնարկությունների և պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների կազմակերպիչներ։ Հասարակական փրկության կոմիտեն և Կոնվենտը գիտնականների հետ սերտ կապ էին պահպանում, պաշտպանելով ամեն տեսակ հայտնագործություն ու գյուտ, լիներ դա կաշվի գաբաղման մի նոր մեթոդ, թե օդապարիկային օդագնացություն, զանգերը թնդանոթների վերածելու եղանակ, թե օպտիկական հեռադրասարք։

Յակոբինյան հանրապետության անմահ գործերից մեկը չափերի մետրական սիստեմի կիրառումն էր։ Մետրական սիստեմի մասին դեկրետն ընդունվեց օգոստոսի 1-ին՝ Կոնվենտի հենց այն նիստում, որը որոշեց Մարիա Անտուանետային գատի տալ, բանագրավել վտարանդիների գույքը և բոլոր ուժերը մոբիլիզացնել Վանդեան գրավելու։ Եվ զուր չէ, որ հետագայում մետրի էտալոնի վրա փորագրվեց «Բոլոր ժողովուրդներին՝ բոլոր ժամանակների համար» հպարտ նշանաբանը։ Նոր սիստեմը շարունակեց ապրել առհավետ և դարձավ ամբողջ մարդկության սեփականությունը։

Հեղափոխական կառավարությունն զգալի ազդեցություն գործեց թատրոնի, գրականության, երաժշտության, նկարչության զարգացման վրա։ Գրականությունից և արվեստից անողոքաբար վերացվում էին թեթևամիտ, անպարկեշտ մոտիվները, գրանց փոխարինեցին քաղաքացիական խիզախու-

թյան խստապահանջ թեմատիկան, քաղաքական վոդևիլը, հայրենասիրական փառաբանությունը։ Պայքարելով կուլտուրայի ասպարեզում ամեն մի հնացած ու հետադիմական բանի դեմ, յակոբինականները նրբաղդացողությամբ և ուշադրությամբ էին վերաբերվում արվեստի իսկական հուշարձաններին, դրանք պահպանելով ու պաշտպանելով։ Այս ուղղությամբ առանձնապես շատ բան արեց մի մոնտանյար, Ռոբեսպիերին մոտիկ մի մարդ, հիանալի նկարիչ և ականավոր կազմակերպիչ Ժակ Լուի Դավիդը։ Դավիդը և արվեստի ուրիշ գործիչներ, Կոնվենտին աշխատակցելով, մասնակցում էին գեղարվեստական ցուցահանդեսների, գեղանկարչության, բանդակագործության և ճարտարապետության լավագույն ստեղծագործությունների մրցանակաբաշխությունների կազմակերպմանը, հեղափոխական տոնահանդեսների ձևավորմանը։

Վիթխարի աշխատանք կատարվեց հեղափոխական իրավունքի ասպարեզում։ Գլխավոր ուշադրությունը նվիրելով սահմանադրությանը և հեղափոխական կառավարության տեսության հետ կապված խնդիրներին, Ռոբեսպիերը և նրա պաշտոնակիցները չէին մոռանում նաև քաղաքացիական իրավունքը։ Կոնվենտը քննարկեց և կիրառության մեջ դրեց քաղաքացիական նոր օրենսգրքի մի շարք հոդվածներ, որը սահմանում էր ապահարզանի ազատություն, ամուսինների իրավահավասարություն, ամուսնական պայմանագրերի ազատություն, ծնողների իշխանության վերացում։ Գործադրության մեջ դրվեցին իրավաբանական բոլորովին նոր կատեգորիաներ, որոնցից մի քանիսը՝ նվազագույն չափով արմատական կանոնադրիաներ, այնուհետև հաստատապես մտան ամենաուշ ժամանակաշրջանի բուրժուական օրենսդրության ֆոնդի մեջ։

Յակոբինականները ձգտում էին հայրենի երկրի կենցաղն ու բարքերը փոխել իրենց հանրապետական-դեմոկրատական իդեալներին համապատասխան։ Իրենց ժամանակը երչանիկ ապագայի ճանապարհը բացող նոր դարաշրջանի սկիզբը համարելով, նրանք այդ ապագան պատկերում էին անտիկ պարզության ձևով։ Անտիկ աշխարհի հերոսական կերպարներով և քաղաքացիական առաքինությամբ հրապուրվելն իր կնիքը

դրեց Հանրապետության կյանքի արտաքին ձևերի վրա։ Կոնվենտը հատատեց դիմելու «դուք» ձևը «դու» ձևով փոխարինելը։ Շատ գործիչներ իրենց անունները փոխում էին հին ժամանակների սիրած հերոսների անուններով։ Այսպես, Շոմետն իրեն Անաքսագորաս էր անվանում, Կլոտսը՝ Անաքարսիս, Բաբյոֆը՝ Գրակքոս։

Նոր դարաշրջանը հավերժացնելու նպատակով հեղափոխական օրացույց մտցվեց։ Տարին բաժանվում էր 12 ամիսների՝ յուրաքանչյուրը 30 օրից, հինգ լրացուցիչ օրերը կոչվում էին սանկյուլոտային օրեր։ Հանրապետության հռչակման օրը՝ սեպտեմբերի 22-ը, համարվում էր առաջին օրը առաջին ամսվա՝ վանդեմիերի, որից հետո, հոկտեմբերի 22-ից գալիս էր բրյումերը, հետո հաջորդաբար՝ ֆրիմերը, նիվոզը, պլյուվիոզը, վանտոզը, ժերմինալը, ֆլորեալը, պրերիալը, մեսիդորը, տերմիդորը, ֆրյուկտիդորը։ Յուրաքանչյուր ամիսը բաժանվում էր երեք տասնօրյակի, որոնց օրերը նշվում էին բույսերի, բանջարեղենի և կենդանիների անուններով։

Նոր օրացույցը պարտադիր ուժ ստացավ։ Սակայն այն բնավ էլ ոչ ամենուրեք միատեսակ խանդավառությամբ ընդունվեց։ Գյուղացիությունը, որի մեծամասնությունը կրոնասեր ու անգրագետ էր, հետևում էր օրերի և ամիսների ավանդական անուններին, չցանկանալով հրաժարվել քրիստոնեական տոներից։

Ռոբեսպիերը, նրբազգացությամբ հաշվի առնելով մասսաների տրամադրությունները, կասկածում էր հեղափոխական օրացույցի նպատակահարմարությանը և նույնիսկ իր հուշատետրում նշեց, որ պետք է արգելակել նրա գործածությունը։ Անկաշառելիի այդ կարծիքը կապված էր 1793 թվականի աշնանը երկրում տարածված այսպես կոչված «ապաքրիստոնեացման» նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի հետ։

«Ապաքրիստոնեացման» շարժումը, որն առաջացավ հակահեղափոխական հոգևորականության դեմ պայքարելու ընթացքում, իրեն նպատակ դրեց լիովին ոչնչացնել կրոնն ու եկեղեցիները։ Այն գլխավորեցին ձախ յակոբինականները և էբերտիստները (Շոմետ, Կլոտս, Էբեր, Ֆուշե)։ «Ապաքրիստոնեացնողները» քաղաքներում ու գյուղական վայրերում

փակում էին եկեղեցիները, դրանք «բանականության պաշտամունքի» տոնակատարությունների վայրեր դարձնելով. շատ հոգևորականներ, այդ թվում նաև այնպիսի բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես Փարիզի եպիսկոպոս Գոբելը, հանդիսավոր կերպով հրաժարվեցին իրենց հոգևոր աստիճանից։

Թեև «ապաքրիստոնեացումը» պաշտոնապես թույլատրված չէր, Ռոբեսպիերը և նրա զինակիցները սկզբում նրա իրականացումը չէին արգելակում, ցանկանալով իմանալ, թե ժողովուրդն այն ինչպես կընդունի։ Շուտով պարզվեց, որ այդ շարժումն անժամանակ էր։ Այն դժգոհություն առաջացրեց քաղաքային և առանձնապես գյուղական բնակչության շրջանում։ Հասարակական անվտանգության կոմիտեի գաղտնի գործակալները զեկուցում էին, որ «կրակը մարմրում էր մոխրի տակ» և կարելի էր զգուշանալ լուրջ անկարգություններից։ Ժողովրդի կրոնական տրամադրությունները ուզում էին օգտագործել թե՛ ինտերվենտները, թե՛ միապետականները։ Այդ բանը հաշվի առնելով, Ռոբեսպիերը նոյեմբերի վերջին հանդես եկավ «ապաքրիստոնեացման» դեմ, այն դատապարտելով պետական ու քաղաքական տեսակետից։ Այն ժամանակ Շոմետը, շարժման նախաձեռնողներից մեկը լինելով, առաջինը հրաժարվեց նրանից. Կոմունայի դատախազին հետևեցին նաև ուրիշները։ Դեկտեմբերի 5—8-ին Կոնվենտը Ռոբեսպիերի զեկուցման հիման վրա պաշտամունքների ազատության մասին դեկրետ ընդունեց։

Այսպես հեղափոխական կառավարությունը կրոնական հարցով զբաղվելով, զգաստորեն հաշվի առավ ռեալ դրությունը, ճշտորեն գնահատելով ժողովրդի տրամադրությունները և ընդառաջ գնալով դրանց։

Հասարակական կարծիքի ազդեցությունն ավելանում էր հասարակական կյանքի աննախընթաց թափին համապատասխան, իսկ հասարակական կյանքը, առանձնապես մայրաքաղաքում, հորդում էր աղբյուրի պես։ Սանկյուլոտները գործուն կերպով մասնակցում էին ակումբների, սեկցիաների, հեղափոխական կոմիտեների աշխատանքին, Կոնվենտի նիստերի ժամանակ լցնում էին հասարակությանը հատկացված

վերնասրահները, հավաքվում էին Հեղափոխական տրիբունալի շենքում։ Կանայք ձգտում էին տղամարդկանցից ետ չմնալ։ Քաղաքական կրքերը հաճախ այնքան էին բորբոքվում, որ վերնասրահների հաճախորդները օրենսդիրներին ստիպում էին նիստն ընդհատել։ Ռոբեսպիերի ելույթի ժամանակ ընդհատող մարդն իսկույն սպառնալիքներ ու վիրավորական մականուններ էր լսում։ Փողոցներում, սրճարաններում, լրագրակրպակների մոտ՝ ամենուրեք ոգևորությամբ քննարկում էին օրվա դեպքերը՝ ռազմաճակատից ստացված լուրերը, Կոնվենտի հերթական դեկրետը, Հեղափոխական տրիբունալի դատավճիռը, Յակոբինյան ակումբում արտասանված նշանավոր ճառը։ Ագահությամբ հարձակվում էին թերթերի վրա։ Խռնվում էին մայրաքաղաքի կենտրոնական թաղամասերի պատերին փակցված խայտաբղետ աֆիշների և բազմերանգ պլակատների մոտ։ Տների դռների մոտ կարելի էր տեսնել մեծ սեղաններ, որոնց շուրջը նստած ճաշում և ընթրում էին տվյալ թաղամասի քաղաքացիները։ Դա նոր երևույթ էր՝ եղբայրական հացկերույթ։ Տղամարդիկ, կանայք, երեխաներ, տարբեր դիրքի և ունեցվածքի տեր մարդիկ հավաքվում էին այդ սեղանների շուրջը, նախապես բերելով իրենց մթերափայը։ Ուտելու ժամանակ քաղաքական աշխույժ վեճեր էին ունենում, հայրենասիրական երգեր երգում, երեխաներն անդիր ասում էին սահմանադրության հոդվածները...

Այո, շատ բան արվեց, և ամեն ինչ փոխվեց արմատապես։ Հեղափոխությունը կյանքը վերից վար տակնուվրա արեց։ Մեծ էին գործերը, է՛լ ավելի մեծ՝ պլանները։

Իսկ մինչդեռ հասունանում էին այն դեպքերը, որոնք պետք է պառակտեին յակոբինյան կառավարությունը և խախտեին թվացող միասնությունը, որը բավականաչափ հաստատուն հիմք չուներ։

Անկաշառելին այդ բանը չդգալ չէր կարող։

Բայց առայժմ նա անխուսափելիի մասին մտածել չէր ուզում։ Այդպես ուրախալի էր հավատալ ժողովրդի առաքինությանն ու երջանկությանը։ Անկաշառելին ընտելացել էր այդ մտքին։ Նա ինքն առաջվա նման աղքատ էր ապրում։ Դյուպ-

Սահմանադիր ժողովի հայրենասիրական եռապետություն՝ Ինդիբեր-Պետիոն-Իոբեսպիեր (ժամանակակից փորագրանկար)

Սարեան

Բրիսն

Վերոյ

Թոքեսպիեր (Գելպէշի փոքրադրանկար)

Դանտոն

Քամիլ Դեմուլեն

Լյուսիլ Դեմուլեն

Օգյուստեն Ռորեսպիեր։ Մեդալիոն՝
գործ Դավիդ դ'Անժերի։

Ռոբեսպիեր (ժամանակակից փորագրանկար)

Գիլո-Վարեն

Պալո դ'Էրբուա

Տարբ

Պարեր

Շարբ

Էրբ դը Սեշալ

Անատոլ Սեն-Ժյուստ (մարմարե կիսանդրի)

Ժորժ Կուտոն (ժամանակակից դիմանկար)

Մաքսիմիլան Ռոբեսպիեր (բրոնզե մեդալիոն՝
անհայտ վարպետի գործ)

Ռոբեսպիեր (ժամանակակից նկար)

լեի տանը նույն պստլիկ խցիկը նրա ապաստարանն ու աշխատասենյակն էր։ Նույն աղոտ լամպը նրա գիշերային արթնության միակ վկան էր։ Նույն մարդկանց հետ նա հանդիպում էր տիկին Դյուպլեի «սալոնում»։ Ասենք, ոչ, ոմանք այստեղ այլևս չէին երևում։ Անհետացել էր Դանտոնը։ Միայն մեկ-մեկ գալիս էր Դեմուլենը։ Նա այժմ շարունակ Դանտոնի հետ էր լինում, որը նրան քարշ էր տալիս Պալե-Ռոյալի պանդոկներում։ Մաքսիմիլիանը չէր կարողանում մոռանալ Քամիլի մի հիմար արարքը։ Մի անգամ, երբ նա տանը չէր, Քամիլը եկավ, թևատակին մի գիրք բերելով։ Նա խորհրդավոր կերպով այն տվեց Դյուպլեի կրտսեր դստերը, խնդրելով թաքցնել ու պահել։ Ելիզավետան հետաքրքրությամբ գիրքը բացեց։ Այն կազմված էր Արետինոյի երկերից՝ ամենաանպարկեշտ բովանդակությամբ փորագրանկարների հետ։ Խեղճ աղջիկը սաստիկ շփոթվեց, դա իսկույն նկատեց վերադարձած Մաքսիմիլիանը։ Երբ նա իմացավ տեղի ունեցած երևույթի մասին, նրան զայրույթը համակեց.

— Մոռացիր այդ մասին,— հուզված ասաց նա Ելիզավետային։—Առաքինությունն արատավորվում է ոչ թե նրանով, որ պատահմամբ ակամայից տեսնում ես, այլ սրտումդ եղած վատ դիտավորություններով։

Նա Դեմուլենին ամենախիստ հանդիմանություն արեց։ Ասենք, այդ դատարկապորտի համար հանդիմանություններն ի՛նչ նշանակություն ունեին։ Նա անպիտան մի տղա է, որին պետք է քոթակել։ Թեև արդեն այնքան էլ փոքր տարիք չունի։ Քամիլը Ռոբեսպիերից ընդամենը միայն երկու տարով էր փոքր, և այժմ նա երեսուներեք տարեկան էր։ Ինչ ասել կուզի, կրակոտ և անկայուն Քամիլն արդեն բոլորովին այն Քամիլը չէր, որը մի ժամանակ, Բաստիլի գրավման նախօրյակին, ժողովրդի առաջ ճառախոսում էր։ Բոլորը գիտեին, թե նա վերջերս Կոնվենտում ինչպես խայտառակվեց մի մերկացված դավաճանի պաշտպանելով, և արդեն լսվում էր նրա հասցեին ասվող «կասկածելի է» խոսքը։ Ռոբեսպիերին հայտնի էր, որ Քամիլը հրապարակորեն լալիս էր, լալիս էր դառն արցունքներով, երբ Ժիրոնդայի լիդերներին դատապարտում էին, և գոռում էր այն մասին, որ զզջում է «Մերկացված Բրիսոն»

պարսավագիրը գրելու համար։ Այդ ամենը գառն ու ցավալի էր։ Մաքսիմիլիանը սիրում էր հին բարեկամին։ Մի՞թե բանը դեպի պառակտում է գնում։ Ոչ, նա դեռ կպայքարի Քամիլի համար, նրան այնպես հեշտությամբ թշնամիներին չի տա։

Եթե Դանտոնն ու Դեմուլենը հեռացան, ապա նրանց փոխարեն հայտնվեցին նոր մարդիկ։ Մորիս Դյուպլեն Հեղափոխական տրիբունալի անդամ ընտրվեց, և այժմ նրան հաճախակիորեն այցելում էր տրիբունալի նախագահ Էրմանը, Ռոբեսպիերի հայրենակիցը, «ազնիվ ու կրթված մի մարդ», ինչպես նրան բնութագրում էր Մաքսիմիլիանը։ Նրա հետ միասին գալիս էին նաև իր տեղակալները՝ անկեղծ հայրենասեր Դյուման և խանդավառ հոգով ու Հերկուլեսի արտաքինով անվախ Կոֆինալը։ Ավելորդ է ասել, թե որքան հաճախակի հյուրեր էին Սեն-Ժյուստը և Կուտոնը, ինչպես նաև նրանց բարեկամ ու համախոհ, Հասարակական անվտանգության կոմիտեի անդամ Ֆիլիպ Լեբան. վերջինս սիրահետում էր Ելիզավետա Դյուպլեին և շուտով պետք է նրա ամուսինը դառնար։ Անկաշառելիին չէր մոռանում նաև նրան նվիրված երկրպագու, նկարիչ Դավիդը։ 1793 թվականի սկզբից տիկին Դյուպլեի «սալոնում» կարելի էր հանդիպել Ֆիլիպ Բուոնարոտին, Միքելանջելոյի հետնորդին, «Հավասարներին դավադրության» ապագա մասնակցին և պատմագրին։ Նա շատ լավ երգում և կլավեսին էր նվագում։ Նրա նվագակցությամբ երգում էր նաև Լեբան, որը բուռն կերպով սիրում էր իտալական երաժշտությունը։ Մաքսիմիլիանն այդ հանպատրաստից երեկույթների մասնակիցներին հաճույք էր պատճառում Ռուսինի լավագույն ողբերգությունների ընթերցանությամբ։

Մի ժամանակ Դյուպլեին սկսեց հաճախակի այցելել տարօրինակ մի անձնավորություն. դա Ժոզեֆ Ֆուշեն էր, անկենդան աչքերով, դժգույն, աննշան տեսքով մի մարդ։ Նա իրեն համեստ էր պահում և շարունակ լուռ էր մնում։ Ինչպես և Էրմանը, Ռոբեսպիերի հայրենակիցը, այդ գործիչը ծայրահեղ մոնտանյար էր ձևանում։ Նա սկսեց Շարլոտայի հետ սիրախաղով զբաղվել։ Նա իր սիրալիր վերաբերմունքով հմայեց պառաված օրիորդին։ Սկսեցին խոսել ամուսնության մասին։ Մաքսիմիլիանն այդ պլանին չէր դիմադրում, մանավանդ որ

քույրը բավականաչափ թունավորել էր նրա ընտանեկան կյանքը։ Բայց հարսանիքն ստիպված հետաձգեցին՝ Ֆուշեին Կոլո դ'Էրբուայի հետ միասին ուղարկեցին խռովարար Լիոնը ճնշելու։ Իսկ հետո այնպիսի դեպքեր կատարվեցին, որոնք բոլորովին ամուսնությունը խափանեցին։

Մաքսիմիլիանի համար ավելի ու ավելի դժվար էր քրոջ հետ հաշտ ու համերաշխ ապրել։ Քույրը մոռանալ չէր կարողանում, որ իր նշանավոր եղբայրը հեռացավ Սեն-Ֆլորանտեն փողոցի ընակարանից։ Տիկին Դյուպլեի և Շարլոտայի միջև մղվող գաղտնի պայքարը բացահայտ պայքար էր դառնում։ Բանը վերջացավ աղմկոտ վիճաբանությամբ և լիակատար պառակտումով։ Բարեբախտաբար, 1793 թվականի օգոստոսին Օգյուստենին տեսական գործուղումով ուղարկեցին Հարավային Ֆրանսիա, և նա, Մաքսիմիլիանի հանգիստը փրկելու համար իրեն նվիրաբերելով, համաձայնվեց քրոջը իր հետ տանել։

Այդ բոլոր գործերն ու դեպքերը գաղտնի չէին մնում։ Հնարավորվող բամբասասեր կանայք անտեղի շատախոսում էին։ Փարիզում ամեն տեսակ բամբասանքներ էին տարածվում։ Ի միջի այլոց, խոսում էին նաև Անկաշառելիի մոտալուտ ամուսնության մասին։ Օ՜հ, եթե կարողանային իմանալ, թե նա այժմ որքան հեռու էր այդ մտքից։ Լրացել էր Էլեոնորա Դյուպլեի 23 տարին։ Դա հաճելի, հանգիստ դեմքով և պայծառ հայացքով, բարձրահասակ վայելչակազմ մի աղջիկ էր։ Նրա և Մաքսիմիլիանի միջև վաղուց հաստատվել էր քնքուշ մի բարեկամություն, այն առանձնահատուկ բարեկամությունը, որը հատուկ է ինքնամփոփ և ամաչկոտ մարդկանց։ Ռոբեսպիերը սովորել էր Էլեոնորայի ուղեկցությամբ զբոսնել, հաճախ նրա հետ զրուցում էր։ Նրանք կես խոսքից հասկանում էին միմյանց։ Բայց սեր, ամուսնություն... Ոչ, Մաքսիմիլիանն այդ մասին անգամ չէր մտածում։ Արդյոք նա դրա համար ժամանակ և ուժ ունե՞ր։ Նա փոթորկվում էր հոգին ու մարմինը ուժասպառ անող սարսափելի կրակով։ Հաճախակի հիվանդանալով, նա ամեն անգամ շատ օրեր անկողնում էր մնում։ Դրա համար էլ նա ավելի թանկ էր դնահատում յուրաքանչյուր պահը, երբ առողջ էր լինում, յուրաքանչյուր վայրկյանը, որ կարող էր տալ ընդհանուր գործին, որի համար ապրում էր, որի համար

պատրաստ էր մեռնելու։ Ոչ, Անկաշառելին չէր դայթակղվում. ընտանեկան իդիլիան նրա համար չէր։ Նա անվախորեն ընդառաջ էր գնում անխուսափելի ճակատագրին, առանց հանգիստ ու մոռացություն փնտրելու, առանց կյանքի նպատակի հետ փոխադարձ զիջում անելու միջոցով հանգստություն ու անձնական երջանկություն գտնելու մասին մտածելու. ասենք, նրա անձնական երջանկությունն էլ հենց պայքարն էր, միմիայն պայքարը։

ԳԼՈՒԽ 3

ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՖՐԱԿՑԻԱՆԵՐ

«Երկրային կյանքիս կեսն ապրելով, ես մթին անտառում հայտնվեցի...»։ Որոշ ժամանակից ի վեր Դանթեի այս խոսքերը պետք է ավելի ու ավելի հաճախակի անցնեին Մաքսիմիլիան Ռոբեսպիերի մտքով։ Նրա առաջ հանկարծ «մթին անտառ» երևաց, երբ նրա երեսունհինգ տարին դեռ նոր էր բոլորել. զարհուրելի անդունդ բացվեց նրա ոտների մոտ, երբ նա բարձրանալով՝ գրեթե հասել էր ուղղաբերձ լեռան բուն գագաթը։

Ռոբեսպիերը ժողովրդի հետ միասին դժվարին, բայց ուղիղ ճանապարհով էր գնում և հաղթեց։ Եվ ահա, վերջապես, ժողովուրդը դրության տերը դարձավ, իսկ Ռոբեսպիերը կառավարության գլուխ կանգնեց։

Բայց դրա հետևից ի՞նչ տեղի ունեցավ։

Հանկարծ երևան եկան դժվարություններ, հազիվ թե ոչ ավելի մեծ, քան այն դժվարությունները, որ հաջողվեց հաղթահարել։ Հանկարծ Ռոբեսպիերը հասկացավ, որ իր պատկերացումով ժողովուրդը ինչ-որ անորոշ, անձև, իդեալական մի բան էր։ Ակներև դարձավ, որ ժողովուրդը շատ անմիատարր է, որ այն տրոհվում է տարբեր խմբավորումների։ Պարզվեց որ, հեղափոխության ընթացքում նրանից առաջացել են ամեն տեսակ «նորահարուստներ»[1], որոնք լիովին գոհացան ձեռք բե-

[1] Նոր հարստացածներ, այսինքն՝ նոր բուրժուազիա։

բանով և այժմ պատրաստ են ասելու «բավական է»։ Պարզվեց, մյուս կողմից, որ գոյություն ունի փոքր կարողություն ունեցող մարդկանց մի զանգված, որը հեղափոխությունից դեռ ոչինչ չի ստացել, ուստի և պահանջում է այն շարունակել։

Այս ամենը նշանակում էր, որ ուղիղ ճանապարհը վերջացել է։ «Ժողովուրդը» ներկայացնող յակոբինյան բլոկը ներսից պայթեց։ Նրա ղեկավար, ռոբեսպիերական խմբից ավելի ու ավելի որոշակիորեն բաժանվում էին աջ և ձախ ֆրակցիաներ, որոնք հանդես են գալիս իրենց պահանջներով և պատրաստ են անհաշտելի պայքարի ուղին բռնելու։

Հետագայում աջերը ստացան «զիջողամիտներ» կամ «չափավորականներ» մականունը։ Դրանք նոր, սպեկուլյատիվ բուրժուազիայի լիդերներն էին։ Նրանց ճանաչված ղեկավարը համարվում էր Ժորժ Ժակ Դանտոնը։

Անցյալում Դանտոնը հեղափոխական զգալի ծառայություններ էր ունեցել, որոնց մասին Ռոբեսպիերը և նրա զինակիցները շատ լավ հիշում էին։ Սակայն Դանտոնը երբեք բարոյական ազնվությամբ աչքի չէր ընկնում։ Նրա ունեցվածքի աճմանը զուգընթաց նա ավելի ու ավելի էր սեփականատերերի փաստաբան դառնում։ Հենց նրա կոչով Կոնվենտը հռչակեց, որ «ամեն տեսակ՝ հողային, անձնական, արդյունաբերական սեփականություն պետք է առհավետ անձեռնմխելի մնա»։ Հենց նրա առաջարկությամբ «հողային օրենքը» պրոպագանդելու համար մահապատիժ սահմանվեց։ Իր հոգում Դանտոնը երբեք Ժիրոնդայի թշնամին չի եղել, անկեղծորեն ցանկացել է նրա ղեկավարների հետ հաշտվել, և միայն նրանց անհեռատես քաղաքականությունը խանգարեց այդ հաշտության կայացմանը։

Դանտոնի բնորոշ առանձնահատկությունը նրա մեծ օպորտունիզմն էր, շարունակ և ամեն ինչի հարմարվելու նրա հրմատությունը։

Հեղափոխական կառավարության թշնամի, նա քանի՞-քանի անգամ կեղծավորաբար պաշտպանում էր նրան, իր խոսկան դիրքավորումներն այնքան նրբորեն քողարկելով, որ նույնիսկ իրեն լավ ճանաչող Անկաշառելիին մոլորության մեջ էր

գցում։ Իր կեղծ բարեհոգությամբ, բնավորության առերեսություն-լայնությամբ և արտասովոր պերճախոսությամբ Դանտոնը սրտեր էր նվաճում։ Բայց նա կարողանում էր վճռական պահերին ստվերում մնալ և ուրիշներին կրակի գիծը քշել։ 1793 թվականի աշնանը Դանտոնը գնաց իր կալվածքը՝ Արսի-սյուր-Օբ։ Թվում էր, թե նա ամբողջովին մասնավոր ապրելակերպ անցավ, սակայն Փարիզում գտնվող իր համախոհների հետ կապ էր պահպանում, ֆրակցիայի բոլոր գործերից տեղյակ մնում։

Դանտոնի ամենամոտիկ բարեկամներն էին Դեմուլենը և Ֆաբրը։

Քամիլ Դեմուլենը, ինչպես և նրա թևարկուն, կարող էր իր հեղափոխական անցյալով պարծենալ։ Նախկին տարիներին այդ կրակոտ և սրամիտ ժուռնալիստը հայրենիքի բարօրության համար շատ էր աշխատել։ Բայց հեղափոխությունը չուներ այնքան դյուրահավատ, անկայուն, հնազանդվող, ըստ էության, անսկզբունք մի ուրիշ զավակ, ինչպես քմահաճ և հաջողությունից երես առած Քամիլը։ Ինչպե՞ս հաճախ էր նա իր համոզմունքները փոխում։ Եվ ինչպիսի՞ հեշտությամբ էր ուրիշների ազդեցությանը ենթարկվում։ Դեմուլենը շարունակ մի կուռք էր ունենում, որին նա պաշտում էր և որից, որպես կանոն, հիասթափվում էր։ Այդպիսի կուռքեր էին եղել Միրաբոն, Շառլը, Լամետը, Բարնավը, Ռոբեսպիերը։ Այժմ Քամիլը պաշտում էր Դանտոնին և ճշտորեն նրա թելադրանքով էր գործում։

Դանտոնը Ֆաբրի հետ մտերմացավ 1792 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների դեպքերի ժամանակաշրջանում։ Հեղափոխությունից առաջ Ֆաբրը գավառական դերասան էր։ Հետո սկսեց առևտրով զբաղվել։ Ռոբեսպիերին հայտնի էր, որ տասը հազար զույգ զինվորական կոշիկի կապալ վերցնելով, որոնք նա անպետք հումքից պատրաստեց, Ֆաբրը կարողացավ պատվերի արժեքի համեմատությամբ կրկնակի վաստակել։ Այստեղից սկսվեց նրա նյութական հաջողությունը։ Շուտով նա կառք ձեռք բերեց, սիրուհիների և զանազան քմահաճույքների վրա անհաշիվ փող էր վատնում և, ի միջի այլոց, պիեսներ էր գրում։ Հետագայում, ի պատասխան այն նա-

խաղերի, որ ինքը պերճության մեջ էր ապրում. Ֆաբրը պատասխանում էր. «Ես ամբողջ հոգով սիրում եմ արվեստը։ Ես նկարում եմ, ծեփագործությամբ, փոքագրմամբ զբաղվում, բանաստեղծություններ գրում, հինգ տարում տասնյոթ կոմեդիա եմ գրել։ Իմ բնակարանը սեփական ձեռքերովս եմ զարդարել։ Ահա իմ պերճությունը»։ Այդ «արվեստի սիրահարը» խորամանկ և նրբաքող ինտրիգան էր։ Ուրիշների ետևում թաքնվելով, նա նպաստավոր պահի էր սպասում՝ ամենայուղոտ պատառը թռցնելու։ «Նա խաղում էր,—ասում էր Ֆաբրի մասին Սեն-Ժյուստը,— մարդկանց հոգու ու սրտի հետ, նախապաշարմունքների ու զգացմունքների հետ, ինչպես կոմպոզիտորը երաժշտական գործիք է նվագում»։

«Զիջողամիտներին» հարող մյուս գործիչները Ֆաբրի ուսանողներն էին։ Կոնվենտի անդամ Դելակրուան, արտասահմանյան հանձնարարություններ կատարելու ժամանակ Դանտոնի ուղեկիցը Բելգիայում, հափշտակություններով էր զբաղվում։ Նրանց կնգուղակիր կաթոլիկ վանական Շաբոն, որը հաճախ Կոնվենտում և ակումբներում ճղճղան ճառեր էր արտասանում, սպեկուլյանտ և խաղամոլ էր. կաշառվող և վերին աստիճանի անբարոյական մի գործիչ, նա, ի միջի այլոց, մասնակցեց թագավորին փրկելու փորձին, որի համար օտարերկրացիներից հինգ հարյուր հազար լիվր ստացավ։ Շաբոյից ետ չէր մնում նրա բարեկամ Բազիրը։ Տարբեր տեսակի կասկածելի գործերի մեջ խառնված էին նաև Ֆիլիպոն, Բուրդոնը, Տրուրիոն և ուրիշ շատ դանտոնիստներ։

Մինչև 1793 թվականի ձմեռը «զիջողամիտները» ոիսկ չէին անում հեղափոխական կառավարության դեմ բացահայտորեն հանդես գալ։ Ընդհակառակը, Դանտոնը բազմիցս օգնում էր Ռոբեսպիերին և նույնիսկ ձախ յակոբինականներին։ Սակայն աշնանը և ձմռանը դրությունը շեշտակիորեն փոխվեց։ Ամենից առաջ զգալի փոփոխություններ տեղի ունեցան յակոբինյան բլոկի ամենաձախ թևում, որը դանտոնիստների հետևանքով ավելի ու ավելի անհաշտելի դիրքեր էր գրավում։

Ռոմենի գլխավորությամբ գործող ձախ յակոբինականների 1793 թվականի ամռան—աշնան սկզբի դեպքերի ժամանակ հիմնական գեր էին կատարում։ Ժառանգելով «կատաղիների»

գաղափարները, հանդես գալով որպես քաղաքի ու գյուղի աշխատավորների լայն խավերի պաշտպան, նրանք առաջինը տեռորն օրակարգում դրեցին և իրենց հզոր ճնշմամբ ազդեցին հեղափոխական կառավարության արագ կազմելուն։ Այս գործում անձամբ Պիեռ Գասպար Շոմետը շատ բան արեց։

Շոմե՛տ։ Այժմ Փարիզում այս անունն ավելի ու ավելի շատ էր տրվում։ Այն մի առանձին սիրով էր տրվում հասարակ մարդկանց բերանով։ Անշուշտ։ Ո՞վ ավելի լավ գիտեր ժողովրդի վշտերն ու հույսերը, քան բարեհամբույր դեմքով և խանդավառ անկեղծ սրտով այդ թիկնավետ երիտասարդը։ Նոր էր բոլորել Շոմետի ընդամենը երեսուն տարին, բայց նա ինչպիսի՞ երկար ու դժվարին ճանապարհ էր անցել։ Նեվերցի կոշկակարի որդին բազմաթիվ պրոֆեսիաներ գիտեր՝ եղել էր կրտսեր նավաստի, դեղաբույսեր հավաքող, բուժակ, դպրոցական ուսուցիչ, գրագիր։ Շոմետը հեղափոխությունն ընդունեց իբրև տոն։ Կորդելյերների ակումբի կրակոտ մի հռետոր, նա հանդես եկավ հանրապետական շարժման պիոներների թվում, օգոստոսի 10-ին մարտնչում էր բռնակալության դեմ, իսկ հետո պայքարում էր Լեռան կողմում Ժիրոնդայի դեմ։ 1792 թվականի նոյեմբերին Շոմետը Փարիզի կոմունայի դատախազ ընտրվեց։

Ռոբեսպիերը զուսպ էր վերաբերվում Շոմետին, ի դեմս նրա տեսնելով ամենից առաջ «կատաղիների» ժառանգորդին։ Բայց ձախ յակոբինականների առաջնորդին չհամակրելով, Անկաշառելին, որպես հեղափոխական կառավարության ղեկավար, հասկանում էր նրա ընտրած կուրսի ճշտությունը և հիմնականում գնում էր նույն ուղիով։

Սակայն նոյեմբեր-դեկտեմբերից ձախ յակոբինականներից սկսեց ավելի ու ավելի պարզ կերպով բաժանվել լիդերների մի խումբ, որի ղեկավարն էր Էբերը, Կոմունայի դատախազի պաշտոնի գծով Շոմետի տեղակալը։ Այդ խումբը թեև շատ բանով ձախ յակոբինականներին մոտիկ էր, թեև նրանց շատ լոզունգներ ու պահանջներ բաժանում էր, միաժամանակ նրանցից էականորեն տարբերվում էր, տարբերվում էր հիմնական կետում։ Եթե Շոմետը, լինելով սեպտեմբերի 4—5 դեպքերի կազմակերպիչներից մեկը, ջերմորեն պաշտպանում

էր հեղափոխական կառավարությունը, ապա էբերը նախ գաղտնաբար, իսկ հետո նաև ակնհայտորեն պայքարում էր նրա դեմ, անհրաժեշտ համարելով տապալել ոչ միայն դանտոնիստներին, այլև սորբոնպիերիստներին։ Այս հիմնական տարաձայնություններ հանգեցնում էր մի ամբողջ շարք ուրիշ, ավելի մասնակի տարաձայնությունների։

Ժակ Ռենե էբերը քչերին էր համակրանքի զգացում ներշնչում։ Մաղրասեր ու անպատկառ, որն արհամարհանքով էր վերաբերվում նույնիսկ իր ամենանվիրված երկրպագուներին, նա կեղծավոր էր, վախկոտ և դատողությունների ու վարմունքների հետևողականությամբ աչքի չէր ընկնում։ Բայց նա հրապարակախոսի արտասովոր ընդունակություններ ուներ։ Նրա «Հայր Դյուշեն»-ը ամենալայն ժողովրդականություն ուներ։ Ընթերցող չքավորությանը դուր էր գալիս թերթի լեզուն՝ գռեհիկ բառերով համեմված, ճոռոմ, ռամիական լեզվի կոպտավուն նմանությունը։ Իհարկե, է՛լ ավելի մեծ ազդեցություն էր գործում թերթի հոդվածների բովանդակությունը, որոնց մեջ էբերը, շարունակ հրատապ պրոբլեմներին արձագանքելով, արտահայտում էր քահանաների և արիստոկրատների, սպեկուլյանտների և մեծագնորդների նկատմամբ մասսաների մեջ կուտակված ատելությունը։

Էբերը խորհուրդ էր տալիս հեղափոխության բոլոր դժվարությունները վերացնել «ազգային ածելու», այսինքն՝ «սրբազան գիլյոտինի» միջոցով։ Էբերն անհրաժեշտ էր համարում «սրբազան գիլյոտինի» համար մշտական սնունդ ապահովելու նպատակով հիմնովին վերափոխել դատավարության դոյություն ունեցող սիստեմը, Հեղափոխական տրիբունալը փոխարինելով ժողովրդի տարերային ինքնադատաստանով։ Միաժամանակ, առևտրականներին և սպեկուլյանտներին մահվան դատապարտելով, էբերը տարբերություն չէր դնում խոշոր մեծավաճառորդների և փողոցային մանր փերեզակների միջև։ Այդպիսի տեսակետները էբերտիստների համար «ծայրահեղ հեղափոխականների» համբավ ստեղծեցին։ Սակայն, ակներևորեն իր գերարմատական պլաններին հակասելով, էբերը պահանջում էր վերագառնալ սահմանադրական գործադիր իշխանությանը, այսինքն՝ ձգտում էր հեղափոխական դիկ-

տատուրան վերացնելու։ Այդ ամբողջ խառնաշփոթությունից ամբոխավարության և արկածախնդրության սասսիկ հոտ էր դալիս։ Զարմանալու ոչինչ չկա, որ էբերտիստներին միանում էին Ռոբեսպիերի հին ծանոթի՝ Ֆուշեի նման մութ անձնավորություններ, որոնք «հեղափոխական վճռական միջոցառումների» քաղաքականության դրոշի տակ հափշտակություններով էին զբաղվում և քաղաքական կապիտալ շահում։ Մյուս կողմից, ճիշտ է, էբերտիզմը հրապուրեց նաև պլեբեյության աղնիվ ու անկեղծ պաշտպաններից մի քանիսին. նրանց թվին էր պատկանում, օրինակ, տպարանի աշխատող Մոմորոն, որն ամբողջովին զերծ էր էբերի պրակտիկ գործունեությունից ու մտադրություններից։ Խոշոր էբերտիստների թվում առանձնապես աչքի էին ընկնում անարխիստ ու կոսմոպոլիտ, նախկին վեստֆալյան բարոն Անաքարսիս Կլոտսը, որն իրեն հայտարարեց «տեր աստծու անձնական թշնամի» և «մարդկային ցեղի հռետոր», հեղափոխական բանակի հրամանատար փառամոլ Ռոնսենը և նրա հետ սերտորեն կապված՝ ռազմական մինիստրության աշխատող Վանսենը. էբերտիզմին մոտիկ էին կանգնած նաև Հասարակական փրկության կոմիտեի անդամներ Բիլո-Վարենը և Կոլո դ'Էրբուան։

Չէր կարելի չնկատել, և Անկաշառելին այդ շատ շուտով նկատեց, որ երկու առերևույթ անհաշտելի ֆրակցիաների միջև գոյություն ունեին շփման կետեր։ Ամենից առաջ երկու ֆրակցիաներն էլ ընդհանուր և հավասար ատելություն էին տածում ռոբեսպիերիստների ու նրանց կողմից գլխավորվող Հասարակական փրկության կոմիտեի նկատմամբ։ Մյուս կողմից, Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստը նյութեր էին ստանում, որոնք վկայում էին էլ ավելի զարհուրելի գործի մասին՝ և՛ «չափավորները», և՛ «ծայրահեղները» կապված էին կասկածելի օտարերկրացիների, ինչպես նաև յակոբինյան հանրապետության մահացու թշնամի արտասահմանյան շրջանների հետ։

1793 թվականի հուլիսի վերջին հայտնաբերվեց և Հասարակական փրկության կոմիտեին հանձնվեց անգլիական լրտեսի կորցրած մի թղթապանակ։ Թղթապանակում եղած փաստա-

թկթերից երևում էր, որ ամբողջ Ֆրանսիայով մեկ ցրված անգլիական գործակալների միջև զգալի գրամագումարներ էին բաշխվել։ Լիլը, Նանտը, Դյունկերկը, Ռուանը, Առասը, Սենտ-Օմերը, Բուլոնը, Տուարը, Կանը, այսինքն՝ հատկապես այն քաղաքները, ուր հակակառավարական խռովություններ էին տեղի ունեցել, ինչպես պարզվեց, առատորեն Պիթից դրամ էին ստանում։ Թղթապանակում հայտնաբերված հրահանգը պատվիրում էր զինանոցներում և կերի պահեստներում հրդեհներ առաջացնել։ Այդ հրահանգի լույսի տակ պարզվեցին Դուեում և Վալանսենում, Լորիանի առագաստի արհեստանոցներում և Բայոնայի փամփուշտի գործարաններում առաջացած հրդեհների պատճառները։ Ուրիշ հրահանգներ երկրում տնտեսական նոր դժվարություններ ստեղծելու նպատակով գործակալներին հանձնարարում էին իջեցնել թղթադրամի կուրսը և բարձրացնել մթերքների գները, կատարել ճարպի, մոմի և այլ մթերքների մեծաքանակ գնումներ։

Իհարկե, գործակալները չնչին մարդուկներ էին զգալիորեն ավելի խոշոր դեր կատարող գործիչների ձեռքում։

Հեղափոխական Ֆրանսիան իր դռները հյուրընկալորեն բաց էր անում եվրոպական բռնակալների կողմից ճնշվող ու հալածվող բոլոր մարդկանց առաջ։ Ազատության համար մղված իրենց պայքարով հռչակված որոշ օտարերկրացիներ նույնիսկ Կոնվենտի անդամ ընտրվեցին։ Բայց այդպիսի մարդկանց հետ միասին հանրապետություն սողոսկեցին ծայրահեղ սանկյուլոտիզմով ու հայրենասիրությամբ քողարկված օտարերկրացի շատ գործամոլներ ու բանկիրներ։ Այդ պարոնները, սողոսկելով բոլոր ճեղքերը, սկսեցին գերակշռել ժողովրդական որոշ ընկերություններում, սերտ կապեր էին հաստատում Կոնվենտի դեպուտատների, ականավոր յակոբինականների և նույնիսկ կառավարական կոմիտեների անդամների հետ։ Ընդ որում նրանք բոլորն էլ շարունակում էին ռեզիդենտրատների դեր կատարել հօգուտ Ֆրանսիային թշնամի այն պետությունների, որոնք իրը թե նրանց արտաքսել էին։

Սեպտեմբեր-հոկտեմբերին «կասկածելիների» մասին օրենքները կիրառելով, կառավարությունը հանկարծ հարձակվեց

«ազատության» նոր «ջատագովների» վրա։ Եվ այդ ժամանակ պարզվեց, որ նրանցից շատերը սերտորեն կապված էին դանտոնիստների և էբերտիստների լիդերների հետ, ընդ որում երկու ֆրակցիաների պարագլուխներն սկսեցին անհապաղ ազատել իրենց խնամարկյալներին։

Այսպես, դանտոնիստ Շարոն, այն ժամանակ Հասարակական անվտանգության կոմիտեի անդամ լինելով, բանկից վերցրեց անգլիական լրտես և Պիթի անձնական ֆինանսիստ Բոյդի կնիքները, իսկ հետո նրան օգնեց Ֆրանսիայից փախչելու։ Նույն Շարոն եռանդուն մասնակցություն էր ցույց տալիս ավստրիական լրտեսների՝ Դորրուակի մորավյան ֆինանսիստների, ճակատագրի տնօրինմանը։ Այդ երկու եղբայր սրիկաները, ավստրիական կայսրից «հատուկ ծառայությունների համար» բարոնի տիտղոս և Շենֆելդ ազգանուն ստանալով, հալածվող Ֆրեյ («ազատ») հայրենասերների անվան տակ պատերազմի սկզբից հիմնավորվեցին Ֆրանսիայում։ Ֆրեյ եղբայրները կոնտակտներ հաստատեցին Լեռան մի շարք ազդեցիկ դեպուտատների հետ և գաղտնաբար աշխատակցում էին ժիրոնդիստ մինիստր Լեբրենին։ Նրանք Շարոյին ամուսնացրին իրենց գեղեցկուհի քրոջ հետ, որի հետ նախկին կնգուղակիր կաթոլիկ վանականին երկու հարյուր հազար լիվր օժիտ տվեցին։ Բնական է, որ սիրահարված Շարոն աշխատում էր նրանց ազատել կառավարության ճնշումից։

Առանձնապես խրատական էր Պրոլիի խմբի դեպքը։

Բելգիացի բանկիր, ավստրիական հպատակ Պրոլին Փարիզում ստեղծեց և մինչև պատերազմն սկսվելը հրատարակում էր անգլիական քաղաքականությունը պաշտպանող «Կոսմոպոլիտ» թերթը։ Պրոլին մոտիկ հարաբերությունների մեջ էր Դեմուլենի և Հասարակական փրկության կոմիտեի անդամ Էրո դը Սեշելի հետ, որն այդ գործամոլին օգտագործում էր որպես անձնական քարտուղարի և լրատուի։ Պրոլին կատարում էր նաև հենց Դանտոնի դիվանագիտական գաղտնի հանձնարարությունները, Կոնվենտի շատ դեպուտատների հետ բարեկամություն էր անում և իր օգնական Դեֆյեի միջոցով Յակոբինյան ակումբի գաղտնիքներն իմացավ։ Նույն Դեֆյեի, բորդոցի հրեա Պերեյրայի և դրամատուրգ Դյուբյուիսոնի օգ-

Նուիրամբ Պրոլին սեկցիաների ժողովրդական ընկերությունները միավորեց և կենտրոնական կոմիտե ստեղծեց, որի մեջ իրեն առաջատար դեր հատկացրեց։ Ժողովրդական ընկերությունների կենտրոնական կոմիտեն դարձավ Յակոբինյան ակումբի և Կոմունայի հետ մրցակցող հզոր մի կազմակերպություն։ Պրոլին, Պերեյրան և նրանց հանցակիցները չէին թաքցրնում իրենց արհամարհանքը Կոնվենտի նկատմամբ, ցանկանալով նրան ամբողջովին իրենց ցանցերի մեջ խճճել։ Սեպտեմբերի վերջին լրտեսական խումբը հարված ստացավ. գործամոլները մասնակիորեն մերկացվեցին ու կալանավորվեցին։ Բայց ոչ երկար ժամանակով։ Նրանք իրենց հովանավոր Լրս դը Սեշելի միջնորդությամբ ռեաբիլիտացիայի ենթարկվեցին և ազատվեցին։

Բնորոշ մի մանրամասնություն. Պրոլին և Դեֆյլն իրենց կալանավորված ժամանակ կարողացան գործարար կապ հաստատել ականավոր էբերտիստներ Ռոնսենի և Վենսանի հետ, որոնք ժամանակավորապես գտնվում էին միևնույն բանտում։ Դրանում զարմանալու ոչինչ չկար։ «Ծայրահեղների» պարագլուխները չխուսափեցին արտասահմանյան ֆինանսիստների ազդեցությունից, և նույնիսկ հենց էբերը սերտ բարեկամություն էր անում հոլանդացի բանկիր Կոկի հետ։

Սրիկաների այս երկար շարանում գլխավոր անձնավորություններից մեկը անորսալի արկածախնդիր, լրտես ու գործամոլ բարոն դը Բատցն էր, իր տեսակի մեջ նշանավոր մի մարդ։ Ինքնակոչ ազնվական, չարաշահությամբ ստեղծված վիթխարի հարստության տեր, Բատցը հավատարմորեն և անձնվիրաբար ծառայում էր միապետության գործին։ Նա մի քանի անգամ տարագրվեց, կռվում էր թշնամիների բանակում, իսկ հետո անհավատալի հանդգնությամբ նորից հայտնվեց Ֆրանսիայում։ Նա կարողացավ շողոքորթությամբ ժիրոնդիստական կառավարության վստահությունը շահել, փորձեց կատարինարանի ճանապարհին թագավորին փրկել, բանտից թագուհուն և ժիրոնդայի պարագլուխներին ազատելու նպատակով դավադրություններ էր կազմակերպում։ Բատցը օտարերկրյա շատ բանկիրների և Կոնվենտի դեպուտատների հետ մոտիկ հարաբերությունների մեջ էր գտնվում։ Նրա հետ հաճախ

Ճաշում էր Դանտոնը։ Շարսնում նրա քաղաքամերձ տունը դավադիրների կազմակերպական կենտրոնի դեր էր կատարում։ Նա կաշառեց ոստիկանության աստիճանավորներին, որոնք նրան դաղտնաբար հովանավորում էին և ժամանակին վտանդի մասին նախազդուշացնում։ Բատցի անվան հետ էր կապված այն ժամանակվա ամենաշատ աղմուկ հանած խարդախություններից մեկը՝ Արևելա-Հնդկական ընկերության տխրահռչակ գործը։

Մի անգամ վաղ առավոտյան Ռոբեսպիերի քունը խանգարեցին։ Եկել էր դեպուտատ Շարոն. նա սաստիկ հուզված էր՝ նրա դեմքը ցնդվում էր, ձեռքերը դողում։

— Ես քեզ արթնացրի, բայց դա արեցի հայրենիքը փրկելու համար. իմ ձեռքին զարհուրելի մի դավադրության թելեր կան։

— Եթե այդպես է, դու պարտավոր ես օգնել նրա մերկացմանը։

— Դրա համար ես պետք է դավադիրներին հանդիպեմ, որովհետև նրանք ինձ ընդունեցին իրենց շրջանը և առաջարկեցին իրենց ավազակային ձեռնարկման օգուտների մի մասը։ Հանդիպում է նշանակված, ես կարող եմ այնպես անել, որ նրանց բռնեն հանցանքի վայրում։

— Դու չպետք է տատանվես։ Իսկ ապացույցնե՞րը։

— Ահա դրանք։— Շարոն ցույց տվեց մի հաստ կապոց թղթադրամներ։—Այս կապոցն ինձ տվեցին Լեռան անդամներից մեկին կաշառելու, որի կողմից դավադիրները դիմադրություն են սպասում։ Ես այդ հանձնարարությունն ընդունեցի, բայց միայն այն նպատակով, որ դավադրության գաղտնիքն իմանալով, դավաճաններին մերկացնեմ։

— Ուրեմն իսկույն գնա Հասարակական անվտանգության կոմիտե։

— Այո, բայց ես չեմ ուզում, որ դավադիրների շրջանում իմ ներկայության փաստից հետևություն անեին, թե իբր ես ինքս դավադիր եմ։ Ես երաշխիքներ եմ ուզում։ Ես պատրաստ եմ հայրենիքի համար մեռնելու, բայց ոչ հանցագործի գերում։

— Կոմիտեն անհրաժեշտ միջոցներ ձեռք կառնի դավադր-

թյունը բացահայտելու համար։ Քո երաշխիքը կլինեն քո մատակարարությունները ու տված նյութերը։

Շարոն հեռացավ, հայտարարելով, որ իսկույն կգնա Հատուցական անվտանգության կոմիտե։ Եվ իրոք, նա նույն օրն ինքնթ եղավ այնտեղ։ Նրա զեկույցը Բաղիրը պաշտպանեց։

Իր հայտարարության մեջ Շարոն խոսում էր մի մեծ դավադրության մասին, որի կենտրոնը կազմում էր Բատցը։ Դավադրությունն իբր թե երկու ճյուղ ուներ։ Դրանցից մեկը ներգրավում էր իրենց քաղաքական չափավորությամբ հայտնի գեղուտատներին, այդ թվում Դելոնեին և տուլուզցի Ժյուլենին. այդ խումբը, որի մեջ փորձում էին ներգրավել նաև նրան, Շարոյին, միավորվում էր Արևելա-Հնդկական ընկերության խարդախ գործի շուրջը։ Մատնության համաձայն, դավադիրների մյուս մասին և նրանց ղեկավար էբերին կաշառեց Բատցը, նպատակ ունենալով անվանարկել այն գեղուտատներին, որոնք չէին համաձայնվել կաշառվելու. էբերտիստները պետք է նրանց անդադար քննադատեին և աջակցեին նրանց կործանմանը։ Ամբողջ գործողությունը միասին առած նպատակ ուներ երկրում ֆինանսական քաոս առաջացնել և այժմյան կառավարությունը տապալել։

Բաղիրը հաստատեց մատնության՝ Արևելա-Հնդկական ընկերության գործին վերաբերող մասը։ Նա իր հայտարարությամբ մասնակիորեն վարկաբեկեց Դանտոնին, ցույց տալով, որ կոնսպիրատորները նրա աջակցության վրա հույս էին գրնում։

Կոմիտեների անդամները չէին կասկածում, որ մատնիչների պատմածների մեջ ճշմարտության զգալի մաս կա։ Եթե էբերտիստներին վերաբերող ամեն ինչ կարելի էր վերագրել նրանց նկատմամբ Շարոյի տածած ատելությանը, որն ուզում էր նրանց մշտական հարձակումների համար վրեժ լուծել, ապա խարդախության վերաբերյալ վերսիան բավական համոզիչ էր թվում և լիովին հաստատվում այն նյութերով, որ կոմիտեներն ունեին իրենց ձեռքում։ Ահա թե այդ վերսիան ինչ պատկեր ուներ։

Մի անգամ Բատցի ամառանոցատանը սրիկաների մի բուռմ ճաշկերույթի հավաքվեց։ Ներկա գտնվողների մեջ էին դեպուտատներ Ժյուլյենը, Շարոն, Բազիրը և Դելոնեն։ Քննարկվում էր հեշտ ու արագ հարստանալու հարցը։ Դելոնեի մտքով մի շատ հասարակ միջոց անցավ։

— Պետք է ֆինանսական ընկերությունների բոլոր արժեթղթերի գներն իջեցնել և, այդ հանգամանքն օգտագործելով, դրանք մեծ քանակությամբ գնել, իսկ հետո գները բարձրացնել և վերականգնել դրանց սկզբնական արժեքը։

— Բայց,— առարկեց Բազիրը,— դրանք գնելու միջոցներ որտեղի՞ց վերցնել։

— Դրանից ավելի հեշտ բան չկա. բանակի մատակարար արբա դ'էսպանյակը չորս միլիոն է խնդրում. եթե մեզ հաջողվի օրինական կանալների միջոցով ապահովել այդ դումարի ստացումը, դ' էսպանյակը թույլ կտա այն որոշ ժամանակ օգտագործել...

Պլանն ընդունվեց։ Ժյուլյենը գերները բաշխեց. Դելոնին պետք է Կոնվենտում հանդես գար և արժեթղթերի կուրսի իջեցում ձեռք բերեր, ինքը՝ Ժյուլյենը հանձն առավ ադմինիստրատորներին և բանկիրներին ահաբեկել, մնացածները պետք է լքեին և բոլոր միջոցներով օգնեին ընդհանուր նպատակներին։ Օգուտը որոշեցին հավասար բաժանել։

Սկզբում ամեն ինչ հարթ էր գնում։ Արբա դ'էսպանյակը ստացավ խնդրած դրամը, իսկ գործամոլներն զբաղվեցին ֆինանսական ընկերություններով։ Արժեթղթերի գներն իջեցնելը շատ հեշտ գործ էր թվում։ Ընկերությունները, առանձնապես Արևելա-Հնդկական ընկերությունը մեծ չարաշահումներ էին կատարում, որի հետևանքով Կոնվենտի անդամների շրջանում շատ թշնամիներ ունեին. դրանց թվում էր նաև Ֆաբր դ' էգլանտինը։ Այդ բանն իմանալով և հարմար պահ գտնելով, Դելոնեն Կոնվենտի ամբիոնից ջախջախեց Արևելա-Հնդկական ընկերությունը, մանրամասնորեն շարադրելով նրա հանցանքները, և վերջում առաջարկեց վերացնել նման տեսակի բոլոր ձեռնարկությունները, ինչպիսի պիտակ էլ որ նրանք ունենային։ Նրա առաջարկած օրենքի նախագծում նշվեցին մանրամասնությունները, ընդ որում՝ այդ էր դավադիրների

գլխավոր նպատակը,— լուծարքը հանձնարարվում էր հենց ընկերություններին և պետք է կատարվեր անորոշ ժամկետներում։

Այդ առաջարկությունը խիստ զարմացրեց Ֆաբրին, որը ինտրիգին տեղյակ չէր։ Դելոնեից հետո հանդես գալով, նա պահանջեց, որ լուծարքը կատարվի ա ն հ ա պ ա ղ ո ր ե ն և ոչ թե ընկերությունների, այլ կ ա ռ ա վ ա ր ու թ յ ա ն կ ո ղ մ ի ց, ընդ որում, որպեսզի ամենից առաջ ընկերությունների ապմինիստրացիայի բոլոր փաստաթղթերը կնքափակի տակ առնվեին։ Ֆաբրին պաշտպանեց Ռոբեսպիերը։ Այդ կշռադատությունների ոգով էլ առաջարկվեց մի դեկրետի նախագիծ, որի վերջնական խմբագրման համար հատուկ հանձնաժողով նշանակվեց։

Հեշտ է պատկերացնել, թե դավադիրների պլաններին ինչպիսի հարված հասցրեց գործի այդքան սնսպասելի ընթացքը։ Դելոնեն իր նախագծով հանդես գալով, հույս ուներ գնելով Արևելա-Հնդկական ընկերության բաժնետոմսեր գնել, իսկ հետո, մինչև այն կկարողանար իր գործերը լուծարքի ենթարկել, միջոց գտնել բարձրացնելու արժեթղթերի կուրսը և օգուտով վերավաճառելու դրանք։ Իսկ այժմ պարզվում է, որ ընկերությունն ուզում են պարզապես վերացնել։

Առաջին պահին ածիոտերերը բոլորովին ընկճվեցին։ Նրանք իրենց նախատում էին անզգուշության համար, որ Ֆաբրին ժամանակին գործի մեջ չներգրավեցին։ Սակայն, Ֆաբրի համբավը հաշվի առնելով, նրանք որոշեցին, որ դեռ ամեն ինչ կորած չէ, որ սխալը կարելի է ուղղել։ Մանավանդ որ Ֆաբրի հետ միասին խմբագրական հանձնաժողովի կազմի մեջ մտան Դելոնեն և Շաբոն։ Այժմ նրանց պլանը նոր տեսք ստացավ։ Նրանք որոշեցին Ֆաբրին կաշառել և, նախապես նրա համաձայնությունն ստանալով, դեկրետը կեղծել, այն հրապարակել ոչ թե Կոնվենտի առաջարկած ձևով, այլ այն վիճակով, որը հարմար էր նրանց նպատակների համար։

Կաշառելու նրբաբնույթ գործը, ինչպես նշեց Շաբոն, նրան հանձնարարվեց։ Դրա համար հատկացրին հարյուր հազար լիվր, այդ գումարն էլ հանձնեցին կամավոր միջնորդին։ Այնուհետև Շաբոն հաստատում էր, թե ինքը սիրտ չարեց

Ֆաբրին կաշառել։ Այդ բանը մյուս սրիկաներից թաքցնելով և, ըստ երևույթին, ցանկանալով դրամը յուրացնել, նա գործողությունների ուրիշ եղանակ ընտրեց։ Նա հաջորդ օրը դեկրետի մաքուր արտագրած նախագիծը բերեց Ֆաբրին, հուսալով, որ նա նրա մեջ առանձնապես խորամուխ չի լինի։ Հետագայում Ֆաբրը երդվում էր, որ ինքը փաստաթուղթը ստորագրել է հապճեպ, առանց կարդալու։ Իհարկե, դեկրետը կեղծվեց Դելոնեի և Ընկ.-ի ոգով, և Ֆաբրի ստորագրելուց հետո այն հանձնեցին շարելու հենց այդպիսի վիճակում։ Թվում էր, թե ամեն ինչ հարթ անցավ և դավադիրները իրենց ցանկացածը ձեռք բերեցին։ Մնում էր սպասել։

Բայց այստեղ Շաբոյի նյարդերը չդիմացան։

Նրա մոտ անսպասելիորեն բոլորովին ուրիշ առիթով անախորժություններ սկսվեցին։ Հարստանալու քաջարի ասպետը հանկարծ շատ կատաղի հարձակումների օբյեկտ դարձավ։ Ամենից առաջ նրան Յակոբինյան ակումբում սուլեցին Լեոպոլդինա Ֆրեյի հետ ամուսնանալու համար։ Հետո նրան աբբա դ՝ Էսպանյակի կալանավորման կապակցությամբ հարցաքննության ենթարկեցին, մեղադրելով մերկացված մատակարարի կեղտոտ գործարքներին աջակցելու մեջ։ Հիշվեցին նաև մի շարք ուրիշ կասկածելի գործեր, մասնավորապես նրա հարբստության արագ աճումը։ Լուրջ վախեցած Շաբոն ուզում էր փորձել Կոնվենտում Բազիրից, Տյուրիոյից, Օսելենից և ուրիշ չափավորներից իր խմբավորումը ստեղծելու, բայց էբերտիստները նրանց վճռականորեն գրոհեցին։ Դրա հետևանքով Տյուրիոն բրյումերի 23-ին ակումբից վտարվեց, իսկ Օսելենը բանտ ընկավ։ Շաբոն, որ այդ ժամանակվա մոտերքը մինչև ականջները խճճվել էր Արևելա-Հնդկական մեքենայության մեջ, սարսափից քարացավ, ենթադրելով, որ իր մոտ կարող են խուզարկություն կատարել։ Եվ ահա, կառափնարանի ուրվականը տեսնելով, սրիկան որոշեց, որ իր մորթին կարող է փրկել ամբողջ ձեռնարկումը մատնելով միայն։ Նա հենց այդ ժամանակ էլ ներկայացավ Ռոբեսպիերին, իսկ հետո Անկաշառելիի խորհրդով՝ Հասարակական անվտանգության կոմիտե։ Նրա բարեկամ Բազիրին ուրիշ ոչինչ չէր մնում, բացի նրան միանալուց։

Երբ Շարոն կատարում էր իր մերկացումը, նա անգամ չէր կասկածում, որ իրեն կանխել են։ Ընդ որում իրեն կանխել է հենց այն մարդը, որին ինքն ու Բազիրն իրենց մերկացումներում խնայել են։ Շարոն ամենևին չէր կարող կարծել, որ հոկտեմբեր-նոյեմբերի ինքը Կոնվենտում և ակումբում կրքոտ հարձակումների օբյեկտ դարձավ հիմնականում այն պատճառով, որ իրեն զրպարտել էր Ֆաբր դ՝ Էգլանտինը։ Բայց պարզվեց, որ խորամանկ ու նենգ Ֆաբրը իր բոլոր ընկերներից ավելի շուտ հասկացավ, թե քամին ուր է փչում. Շարոն մատնությունը կատարեց նոյեմբերի կեսին, իսկ Ֆաբրն իր հարպիկ աչքակապությունը կատարեց դեռ հոկտեմբերի 10-12-ին։

Տեսնելով, որ Կոնվենտում էբերտիստներն սկսեցին ոտքի ելնել, որ շատ օտարերկրացիների սկսեցին կասկածել, որ Լոպտնյակը կալանավորված է, Ֆաբրը Արևելա-Հնդկական ընկերության գործին մասնակցելու համար մեկ ձեռքով Դելոնեյից խոշոր կաշառք վերցնելով, մյուս ձեռքով շտապ դրեց լավ կշռադատված մի գեկույց։ Նա վանդեմիերի 21-ին (հոկտեմբերի 12-ին) պահանջեց, որ իրեն լսեն կառավարական երկու կոմիտեների տասը անդամներ, որոնց թվում էին Ռոբեսպիերը, Սեն-Ժյուստը, Լեբան, Դավիդը, Վադյեն և Ամարը։ Ֆաբրը հայտնեց իրը թե իր բացահայտած, արտասահմանյան գործակալության հրահրած մի դավադրության մասին։

Ֆաբրը գլխավոր հարվածը հասցրեց արտասահմանյան բանկիրներին և նրանց հետ միասին գործող որոշ անձնավորություններին։ Նա նշեց, որ դավադրության կենտրոնը կազմում են մի ամբողջ շարք ֆինանսիստների՝ Ավստրիայի և Պրուսիայի գործակալների հետ միավորված Պրոլին, Դեֆյեն և Պերեյրան։ Այդ պարագլուխները կառավարական գաղտնիքներ էին կորզում և լրտեսական նպատակներով կեղծ հայրենասիրական թերթերը ղեկավարում։ Ֆաբրի հայտարարության համաձայն, նրանց հետ, հլու գործիքների գեր կատարելով, կապված էին դեպուտատներ Ժյուլյենը և Շարոն, ինչպես նաև Հասարակական փրկության կոմիտեի անդամ Էրոդը Սեշելը։ Այստեղից էլ, ի միջի այլոց, հայտնում էր մատնիչը, առաջացան Շարոյի արտասահմանյան ամուսնությունը և եր-

կու հարյուր հազար լիվր օժիտը, որը նա ստացավ որպես իր դավաճանության վարձ։ Հետաքրքրական է, որ Շաբոյին և Ժյուլյենին մատնելով, Ֆաբրը ոչ մի խոսք չասաց Դելոնեի՝ նրանց հանցակցի մասին, որովհետև ինքը հենց նոր էր Արևելա-Հնդկական գործարքը խրախուսելու համաձայնություն տալու համար նրանից մի մեծ գումար ստացել։

Ֆաբրը իփում էր առանց վրիպելու։ Նրա հաշիվը ճիշտ էր։ Նա ի դեմս Կոնվենտի անդամների և նրանց գլխավորող Ռոբեսպիերի գտավ ամենաուշադիր, իր մատնությունն ամենևին կասկածելի չհամարող ունկնդիրների։ Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստն արդեն վաղուց անհանգստությամբ հետևում էին օտարերկրացիներին։ Որոշ ժամանակից ի վեր նրանց միաժամանակ շատ տարօրինակ էր թվում Հասարակական փրկության կոմիտեի գծով իրենց ընկերոջ՝ էրո դը Սեշելի գործունեությունը։

Էրո դը Սեշելը՝ «հիանալի էրոն», ինչպես նրան անվանում էին ժամանակակիցները, ճակատագրի իսկական սիրելին էր։ Բնությունը նրան չէր զրկել ո՛չ գեղեցիկ արտաքինից, ո՛չ տաղանդից, ո՛չ հարստությունից։ Այդ հարուստ փափկամոլը, կանացի գեղեցկության և բաքոսյան հաճույքների նուրբ գնահատողը տեսակետների հաստատունությամբ աչքի չէր ընկնում։ Անցյալում նա մոտիկ էր ֆելյաններին, բայց ժամանակին նրանցից հեռացավ և ժիրոնդիստներին հարեց, որոնցից դարձյալ ժամանակին բաժանվեց, որ հիմնովին կպչի Լեռից։ 1793 թվականի սահմանադրության բնագրի հեղինակներից մեկը լինելով, էրոն ժիրոնդիստների անկումից մեկ օր առաջ Հասարակական փրկության կոմիտեի անդամ ընտրվեց։ Սակայն նա նույն թվականի աշնանը կորցրեց քաղաքական կողմնորոշումը և սկսեց խուսավարել ֆրակցիաների միջև, բարեկամներ ունենալով ինչպես էբերտիստների, այնպես էլ չափավորների շրջանում։ Այդ հանգամանքն ինքնին չէր կարող նրա դեմ շտրամադրել կուսակցական հարցերում նրբանկատ Ռոբեսպիերին։ Պրոլիի նման մութ գործամոլների հետ էրոյի բարեկամությունը, մի կողմից, և Կոմիտեի որոշ դաղտնիքների միաժամանակյա հրապարակումը, մյուս կողմից, Անկաշառելիի կասկածները համոզվածություն էին դարձ-

նում։ «Կոմիտեի գաղտնիքների զգրելի հրապարակում,— նշում էր նա իր հուշատետրում,— կամ գրասենյակային մատակարարների, կամ ուրիշ անձնավորությունների կողմից... Ամենից առաջ վտարեցեք դավաճանին, որը ձեզ հետ միասին մասնակցում է նիստերին...»։ Հետևաբար, Ֆաբրի մատնությունը ճիշտ նպատակին էր խփում։ Այդ բոլոր տեղեկություններն ստանալով անմիջապես կոմիտեները կալանավորեցին մի ամբողջ շարք անձանց՝ էբերտիստների և էրո դը Սենլիի գործակալների։ Կալանավորվեց նաև Կլոտսի բարեկամ բանկիր Վան-դեն Իվերը։ Իսկ իրեն՝ էրոյին փաստորեն վտարեցին Հասարակական փրկության կոմիտեից, նրան տեվական գործուղման ուղարկելով։ Շաբոյի, Ժյուլյենի, Բազիրի և ուրիշների նկատմամբ խիստ հսկողություն սահմանվեց։ Այսուհետև առաջ էին գալիս հարձակումներ և հարցաքննություններ, որոնք Շաբոյին հոգեկան հավասարակշռությունից հանեցին և նրան ի վերջո ստիպեցին իր կողմից մատնության զեկույց ներկայացնելու։

Շաբոյի և Բազիրի զեկույցը ամրապնդեց կառավարական կոմիտեների անդամների մոտ առաջացած պատկերացումները։ Ֆաբրի հայտարարությունը փայլուն կերպով հաստատվում էր, ընդ որում հաստատվում էր Ֆաբրից բոլորովին անկախ, այն մարդկանց կողմից, որոնց նա մատնանշում էր որպես դավադրության մասնակիցների։ Այս ամենը շատ ճշմարտացի էր թվում։ Ֆաբրի դիրքերն ամրանում էին։ Նրան հրավիրեցին մասնակցելու Շաբոյի մատնության գործի քննարկմանը։ Դահուկակ Ֆաբրն իրեն լիակատար անվտանգության մեջ էր համարում։ Նա չէր էլ կասկածում, որ Դելոնեի փաստաթղթերում, որին շատ շուտով պետք է բանտարկեին, իր համար ճակատագրական մի փաստաթուղթ կա։

Հասարակական անվտանգության կոմիտեում իր հաղորդումն անելով, Շաբոն սկսեց տենդորեն փնտրել իր հանցակիցներից որևէ մեկին։ Նա գտավ Կուրտուային, Դանտոնին մոտիկ մի մարդու, և նրան նկարագրեց գործերի վիճակը։ Կուրտուան իսկույնևեթ տեղեկացրեց ֆրակցիայի ղեկավարին, որը դեռ հանդստանում էր Արսի-սյուր-Օբում։ Դանտոնը հաս-

կացավ դրության սրությունը և իրեն սպառնալիքի տակ զգաց։

Սարսափով ու կասկածներով համակված, նա հեռացավ իր խաղաղ ապաստանից և դրյումերի 30-ի (նոյեմբերի 20-ի) երեկոյան Փարիզում էր, պատրաստ մարտի նետվելու։

Այնինչ Կոմիտեն որոշում ընդունեց կալանավորել թե՛ մատնիչներին, թե՛ մատնությամբ մեղադրվողներին։ Շաբոն Ֆաբրի ավելի վաղ հայտարարության մասին չիմանալով, կարծում էր, որ իրեն կկալանավորեն ձևի համար միայն։ Նա խնդրեց, որ ժանդարմներն իրեն և Բազիրին այցելեն երեկոյան ժամը ութին իր բնակարանում, նշելով, որ այդ ժամին այնտեղ կհավաքվեն բոլոր դավադիրները։ Սակայն անհասկանալի պատճառներով Կոմիտեն մատնիչներին կալանավորեց առավոտյան ժամը ութին, մի հանգամանք, որ գլխավոր մեղադրյալներ Բատցին և Ժյուլյենին հնարավորություն տրվեց նախօրոք թաքնվելու։ Բատցն անհետացավ, սովորականի պես օդում չքանալով։ Ժյուլյենը որոշ ժամանակ թաքնվում էր Դանտոնի բարեկամ Դելակրուայի մոտ, իսկ հետո Փարիզից փախավ։ Բայց Դելոնեն, ի մեծ դժբախտություն Ֆաբր դ՝ Էգլանտինի, այնուամենայնիվ կալանավորվեց։ Նրա փաստաթղթերը կնքեցին։ Կոմիտեների կողմից Ամարի գլխավորությամբ կազմված հանձնաժողովն սկսեց հետաքննությունը։ Հետաքննությունը դանդաղ էր ընթանում և դաղտնի էր կատարվում։

Օտարերկրյա դավադրության կասկածն ընկավ Գոնվենտի և կառավարական հիմնարկությունների վրա։ Դեռ ճշտությամբ ոչինչ հայտնի չէր, բայց արդեն լուրեր էին տարածվում։ Բազմաթիվ ձերբակալություններ էին կատարվում։ Ֆրակցիաները և նրանց առաջնորդները պատրաստվում էին մահացու պայքար մղելու։ Ռոբեսպիերը անհանգստությամբ հետևում էր հեղափոխության նավի կուրսին։

Նրան սաստիկ շփոթեցրեց այն ամենը, ինչ տեղի ունեցավ վերջին երկու ամսվա ընթացքում։ Ճիշտ է, նա արդեն Ֆաբրի մատնության նախօրյակին կռահում էր դավադրությունների դոյության մասին, նա այդ մասին պարզորեն խոսում էր վանդեմիերի 19-ին (հոկտեմբերի 10-ին), բոլոր օտարերկրյա գործամոլներին կասկածի տակ առնելով և զգոնության ուժեղաց-

ման կոչ անելով։ Բայց նրան զարմացնում էր, որ օտարերկրյա ոստիների հետ կապված էին այնպիսի մարդիկ, որոնց նա երկար ժամանակ պայքարի ընկերներ էր համարում։ Նա այդ բանին ոչ լիովին էր հավատում։ Նա չէր ուզում գաղափարների պայքարը շփոթել դիվերսիաների և լրտեսության հետ։ Նա դեռ էլի շարունակում էր ներքին ֆրակցիոն պայքարը զսպել, որպեսզի թույլ չտար կրակը բորբոքվելու, որը կարող էր հեղափոխության ամբողջ դործը ոչնչացնել։

ԳԼՈՒԽ 4

ՅԱԿՈԲԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ

Բոլորովին նոր էր ոկսվել ձմեռը, հանրապետության երկրորդ տարվա սարսափելի սովահար ձմեռը։ Յակոբինականների ակումբը փոթորկալից օրեր էր ապրում։ Ջտում էր կատարվում։ Ազգային անդամները քննարկում էին համբավավոր լիդերների հայացքներն ու վարմունքները։ Դա սարսափելի էր։ Ակումբի վաստակները հալածանքից չէին փրկում այն մարդկանց, ովքեր այսօր հեղափոխությանը բավականաչափ նվիրված չէին թվում։ Իսկ այսօր ակումբից վտարվելը նշանակում էր հայտնվել գիլյոտինի ուղիղ ճանապարհի վրա։

Գրիմերի 13-ին (դեկտեմբերի 3-ին) հասավ Դանտոնի հերթը։ Նա տհաճ վիճակում էր։ Բոլոր կողմերից մեղադրանքներ էին թափվում։ Տրիբունին մեղադրում էին անտարբերության մեջ, այն բանում, որ նա պահանջում էր խիստ միջոցներից հրաժարվել, իսկ ինքը դոփում էր տեղում։ Չհապաղեցին հիշել նաև նրա հարստության մասին, որը հեղափոխության տարիների ընթացքում շատ արագ աճեց։

Կիկլոպը վեր կացավ։ Քրտինքի խոշոր կաթիլները գողում էին նրա վիթխարի ուռուցիկ ճակատին։ Նրա ձայնում սովորական ուժը չէր զգացվում, իսկ փաստարկները ծանրակշռություն չունեին։ Ասենք, նա ի՞նչ կարող էր պատասխանել։ Պաշտպանել անցյալի՞ն։ Հավատացնել, որ ինքն անշահախնդիր է եղել։

Պաշտպանությունը ոչ ոքի չհամոզեց։ Աղմուկը սաստկանում էր։

Բայց ահա թափով հռետորական ամբիոն բարձրացավ Ռոբեսպիերը։ Նրա ձայնը անսովոր կերպով հուզված է։ Նա պահանջում է, որ Դանտոնին մեղադրողները ճշտորեն շարադրեն իրենց բողոքները։ Ոչ ոք սիրտ չի անում այդ բանն անելուց։ Դահլիճը լռում է։

— Այդ դեպքում ես կանեմ,— ասում է Անկաշառելին։ Նա դիմում է մեղադրյալին.

— Դանտոն, մի՞թե դու չգիտես, որ ինչքան մարդ ավելի արիություն ու հայրենասիրություն ունի, այնքան հասարակական գործի թշնամիները ավելի են հետամտում նրա կործանմանը։ Մի՞թե դու չգիտես, ասենք, դուք բոլորդ էլ քաղաքացիներ, մի՞թե չգիտեք, որ դա զրպարտության սովորական միջոցն է։ Իսկ ովքե՞ր են զրպարտիչները։ Այն մարդիկ, ովքեր արատից բոլորովին զերծ են թվում, բայց իրականում ամենևին առաքինություն չեն ցուցաբերել...

Դանտոնը սրբում է երեսի քրտինքը։ Նա ապշած է։ Հռետորը կարծես ուզում է նրան ոչ թե մեղադրել, այլ պաշտպանել։ Նա այդ կողմից, այն էլ այդպիսի եռանդուն պաշտպանություն բոլորովին չէր սպասում։ Բոլորին հայտնի է, որ երկու առաջնորդների արանքով սև կատու է անցել, որ նրանք արդեն վաղուց տարբեր լեզվով են խոսում։ Եվ հանկարծ... Դանտոնը զարմացած նայում է Ռոբեսպիերին։ Բայց Մաքսիմիլիանը նրան չի տեսնում. նա դիմում է Դանտոնին, իսկ նրա հայացքը հեռանում է դեպի մի կողմ ինչ-որ տեղ, ասես հսկայի փոս ընկած աչքերից խուսափելով։ Նա շարունակում է աճող կրքոտությամբ.

— Ես նրան հսկում էի քաղաքականության ասպարեզում. մեր հայացքների որոշ տարբերության պատճառով եռանդությամբ հետևում էի նրան, երբեմն նույնիսկ զայրույթով, և եթե նա ոչ միշտ էր բաժանում իմ կարծիքը, ապա մի՞թե ես դրանից պետք է հետևություն անեմ, թե նա հայրենիքին դավաճանում էր։ Ոչ, ես շարունակ տեսնում էի, որ նա եռանդով ծառայում էր նրան։ Դանտոնն ուզում է, որ իրեն դատեն, և

նա իրավացի է, թող դատեն նաև ինձ։ Թող առաջ գան այն մարդիկ, ովքեր ավելի մեծ չափով հայրենասեր են, քան մենք։

Իհարկե, ոչ ոք առաջ չեկավ։ Դանտոնի համբավը փրկվեց։ Նրան ակումբից վտարելու հարցը հանվեց՝ Անկաշառելիի բարոյական հեղինակությունը ամեն ինչից ավելի բարձր էր։ Բայց ոմանք տարակուսում էին՝ ինչո՞ւ, ինչո՞ւ այդպես վարվեց յակոբինականների առաջնորդը։ Նա ո՞ւմ էր իրեն հավասար համարում։

Ուշ երեկոյան Մաքսիմիլիանը ակումբից տուն էր վերադառնում։ Նրա դեմքը լարված պայքար էր արտացոլում։ Արդյո՞ք նա արեց այն, ինչ որ պետք է։ Արդյոք դա ինքնարդարադատություն չէ՞ր։ Արդյոք դա չէ՞ր հակասում նրա հայացքներին։ Ոչ, այլ կերպ վարվել չէր կարելի։ Նա վաղուց արդեն Դանտոնին չէր հավատում, նա գիտեր, որ իրենց բաժանում է ավելի ու ավելի մեծացող անդունդը, բայց նա պետք է նրան պաշտպաներ, որովհետև ավելի լավ է Դանտոնը, քան շատ ուրիշներ։ Դանտոնը հեղափոխության թշնամի չէ։ Պետք է Դանտոնին փրկել, որ էբերը հաղթանակելու հնարավորություն չստանա։

Այսպես ուրեմն, նա սկսում էր խուսավարել։ Նա, Անկաշառելին, Անդրդվելին... Ասպագան անորոշ էր երևում։ Բայց ինչ գնով էլ լիներ, ճիշտ ճանապարհ պետք էր գտնել։ Այլ կերպ ամեն ինչ կկործանվեր...

Այժմ յակոբինականների ակումբը ավելի ու ավելի մեծ դեր էր կատարում։ Նրա ամբիոնը ոչ միայն լրացնում էր Կոնվենտի ամբիոնը, այն որոշում էր Ժողովի և նրա անդամների գործունեության ընդհանուր գիծը։ Յակոբինականների ղատարանը բարոյական բարձրագույն ատյանն էր, որը ժողովրդական ներկայացուցչի, աստիճանավորի, հանրապետության ուսած քաղաքացու համար համբավ էր ստեղծում։

Դանտոնից հետո շուտով զոհման ստուգումն անցավ նաև նրա ամենամոտիկ բարեկամը՝ Քամիլ Դեմուլենը։ Ֆրիմերի 31 ին (դեկտեմբերի 14-ին) նա, գունատ ու հուզված, կանգնեց յակոբինական դատարանի առաջ։ Նրան մեղադրում էին

կասկածելի մարդկանց հետ կապված լինելու և ժիրոնդիստներին կարեկցելու մեջ. այդ նա չէ՞ր, որ գրեց «Մերկացված Բրիտոն» պարոավագիրը, ժիրոնդայի պարագլուխների դատապարտման օրը լաց էր լինում և անվայել ռեպլիկաներ տալիս։ Քամիլը վատ էր պաշտպանվում։ Նա համառորեն ժխտում էր այն, ինչ բոլորին հայտնի էր։ Յակոբինականներն իրար էին նայում և ուսերը թոթվում։ Ժուռնալիստի դրությունը կանխորոշված էր թվում։ Բայց արդյոք Դանտոնին փրկող Ռոբեսպիերը կարո՞ղ էր Քամիլի կործանումը թույլ տալ։

Եվ ահա նա դարձյալ տիրում է ամբիոնին և ունկնդիրների ուշադրությանը։ Նա Դեմուլենին իր հովանավորության տակ է վերցնում։ Այո, նա նրան ճանաչում է, ճանաչում է շատ լավ։ Ասենք, Քամիլին ո՞վ չի ճանաչում։ Նա անկայուն է, դյուրահավատ, հաճախ արի և միշտ հանրապետական։ Նա հեղափոխական ճիշտ բնազդ ունի։ Նա ազատությունը սիրում է ներքմբբռնողությամբ, մտովի, նա ոչինչ ու երբեք ավելի չի սիրել, չնայած կենցաղային բոլոր գայթակղություններին։ Այս գրքավորն է։ Իսկ ինչ վերաբերում է սիալներին, ապա դրանք կան, դրանք չնկատել չի կարելի։ Քամիլը պետք է ապագայում լրջորեն զգուշանա։ Նա պետք է զգուշանա իր մտքի անկայունությունից և մարդկանց մասին եզրակացություններ անելիս չափից դուրս շտապողականությունից։

Ռոբեսպիերի պարզ, անկեղծ խոսքերը ծափահարություններով դիմավորեցին։ Քամիլը փրկվեց։

Բայց, ինպես հայտնի է, դիտությունը երբեք օգուտ չի տալիս նրան, ով սովորել չի ուզում։ Ուշքի գալու փոխարեն, Դեմուլենը կատաղեց։ Այդ ինպե՛ս, նրան համարձակվում են դատե՞լ, նրան ուզում են սովորեցնե՞լ։ Դեհ լավ, նա նրանց ցույց կտա։ Ջարախինդ բարեկամները, որոնք սովոր էին ուրիշների հետևում թաքնվել, նյարդային ժուռնալիստին հանդիստ չեն տալիս։ Եվ նա հախուռն կերպով մարտի է նետվում։

Դրանից քիչ առաջ Դեմուլենն սկսեց լույս ընծայել «Հին կորդելյեր» թերթը։ Այդ անունը պատահական չէր։ Ժուռնալիստը կարծես թե հին կորդելյերը, այն ժամանակների կորդելյերը, երբ ակումբում իշխում էին Դանտոնը և նրա բարեկամ-

Ներբ, հակադրում էր նոր կորդելյերին, այսինքն՝ ակումբի այժմյան օրերին, երբ այնտեղ գլխավոր դերն էբերտիստներն էին կատարում։ Թերթի առաջին երկու համարները, որ լույս տեսան մինչև Ֆրիմերի 24-ը, փառաբանեցին Ռոբեսպիերին, որ Դանտոնին պաշտպանեց, և առատորեն հայհոյանքներ թափեցին էբերի կողմնակիցների հասցեին։ Բայց «Հին կորդելյերի» երրորդ համարը, որ լույս տեսավ Քամիլի «վերջին դատաստանի օրից» հետո, ստիպում էր զգուշանալ։

Դեմուլենն այդ համարում զետեղեց Տակիտոսի «Տարեգրությունից» մեջ բերված մի շարք հատվածների մի հավաքածու և դրանց թարգմանությունը։ Անշուշտ, ժուռնալիստն այդ բանն արեց ոչ պատմության նկատմամբ ունեցած սիրուց։ Տակիտոսից փոխ առած յուրաքանչյուր արտահայտությունն այժմեականության մասին թշնամական ակնարկ էր պարունակում։

Ո՞ւմ դեմ էր ուղղված այդ նենգ հարվածը։ Էբերտիստների՞։ Ոչ։ Դեմուլենը խփում էր հեղափոխական տրիբունալին, հեղափոխական կառավարությանը, այսինքն՝ Անկաշառելիին և նրա զինակիցներին։ Տակիտոսին հանդիստ թողնելով, Դեմուլենն ուղղակի մեղադրում ու նշավակում էր ամբողջ հեղափոխական հասարակարգը, Կոնվենտը, նրա կոմիտեները, ժողովրդական ընկերությունները։

Իհև, ցանկանալով տպավորությունը փոքր-ինչ մեղմել, ժուռնալիստը հոդվածի վերջում հայտարարում էր, որ իր բոլոր ակնարկները կվերաբերեին Ֆրանսիային, եթե այնտեղ թագավորական իշխանությունը վերականգնվեր, թեև նա ասում էր, որ «... այնուամենայնիվ հեղափոխությունը ծայրահեղության հասցնելն ավելի պակաս վտանգավոր է, քան նրա նկատմամբ անտարբեր լինելը», այդ բոլոր վերապահումներն ամենևին չէին վերացնում այն, որի համար հոդվածը գրվել էր։

Այդ համարը կարող էր հեղափոխության թշնամիների ձեռքին թունավոր զենք դառնալ։ Եվ ճիշտ որ, միապետականները, թերթը խլխլելով, բացահայտորեն իրենց գոհունակությունն էին արտահայտում։

Ռոբեսպիերն զգաց հարվածի ամբողջ ուժը, և դառնու-

թյունը համակեց նրա սիրտը։ Ահա՛ թե ինչ։ Հեղափոխական ռեժիմը դատապարտում էր այն մարդկանցից մեկը, ովքեր մի ժամանակ մարտնչում էին նրա ստեղծման համար։ Տեսորը նշավակում էր այն մարդը, որը մի ժամանակ ժողովրդին կոչ էր անում լապտերասյուները կախաղաններ գարձնել։ Ինչպիսի՞ ուրախություն արիստոկրատների համար, ինչպիսի՞ տխրություն իսկական հեղափոխականների համար։

Քամիլի հարձակումը «ղիջոդամիտների» նշած հոծախումբ հարվածի բաղկացուցիչ մասերից մեկն էր միայն։ Որոշվեց զուգընթաց հարձակում կատարել Կոնվենտում։ «Հին կորդելյերի» երրորդ համարը լույս տեսնելու հետ գրեթե միաժամանակ մի խումբ դանտոնիստներ Ֆաբր դ՝ Էգլանտինի և Բուրդոնի գլխավորությամբ սկսեցին Հասարակական փրկության կոմիտեի դեմ դավեր նյութել։ Կոնվենտի անդամ, դանտոնիստ Ֆիլիպոն, Վանդեայի պաշտոնական գործուղումից վերադառնալով, ամեն տեղ բղավում էր դավաճանության մասին, հայհոյելով էբերտիստ Ռոնսենին և հեղափոխական դեներալ Ռոսինյոլին։ Ռոսինյոլին զրպարտելով, Ֆիլիպոն հարձակվում էր Կոմիտեի վրա, նրան մեղադրելով կարծեցյալ դավաճանին հովանավորելու մեջ։

Ֆաբրը Կոնվենտում հանդես գալով, Կոմիտեին կշտամբում էր անփութության համար, այն բանի համար, որ Կոմիտեն իբր Փարիզում տիրող «անկարգություններին» վերջ չի տվել, իր գործակալներին և «կազմալուծման» մեջ մեղավոր մյուս անձանց չի զսպել։ Բուրդոնն առաջարկում էր մինիստրներին վերացնել, ձգտելով ատելի ռազմական մինիստրի՝ ձախ յակոբինական Բուշոտի հետ հաշվեհարդար տեսնել և միաժամանակ հույս ունենալով Կոմիտեն ջախջախել նրա վրա դրած լրացուցիչ բեռի ծանրությամբ։ Մատնանշելով, որ Հասարակական փրկության կոմիտեի լիազորությունների ժամկետը ձևականորեն ֆրիմերի 20-ին (դեկտեմբերի 10-ին) լրանում է, Բուրդոնը և մյուս դանտոնիստները պահանջում էին, որ Կոմիտեի կառավարող կազմը թարմացվի։ Հաղթանակը մոտիկ էր թվում։ Արդեն կազմել էին նոր Կոմիտեի ցուցակը, արդեն խմբագրել էին համապատասխան դեկրետի բնագիրը։

Սակայն դեկտեմբերի 13-ին Կոնվենտի մեծամասնությունը հանրապետության համար այդքան կրիտիկական պահին Կոմիտեն թարմացնելու դեմ արտահայտվեց։ Ռոբեսպիերական Կոմիտեի լիազորությունների ժամկետը երկարացվեց։

Կոմիտեն ջախջախելու փորձ անելիս անհաջողություն կրելով, «գիշոդամիտները» էլ՝ ավելի մեծ եռանդով սկսեցին հարվածել նրա իշխանության տակ գտնվող անձանց։ Այստեղ նրանց ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ Շարունակելով Կոնվենտին «անկարգությունների» ուրվականով վախեցնել, նրանք հասան Ռոնսենի, Վենսանի և կառավարական երեք գործակալների կալանավորմանը։ Ցտեսնված դեպք՝ ահարեկված Կոնվենտը առանց որևէ հետաքննության, նույնիսկ առանց պատասխանատու կոմիտեների կարծիքը հարցնելու, հեղափոխական իշխանության բարձրագույն լիազորներին հարված հասցրեց։

Այն ժամանակ դեռևս հայտնի չէր, որ Դեմուլենի, Ֆիլիպոյի, Բուրդոնի և ուրիշների հետևում թաքնվում էր մի մարդ, որը լսում և սպասում էր։ Այդ մարդը դեռ ձմռան սկզբին իր պլանը կազմեց, իսկ մնացածները միայն գրգռվում էին նրա իշխանությամբ ըստ մասերի։ Պլանը չարանենգ էություն ուներ։ Ուզում էր կոմիտեներում երկպառակություններ սերմանելուց։ Դեռ Ռոբեսպիերին վնասազերծել։ Ռոբեսպիերի չեզոքացման պայմաններում կոմիտեները բաժանել, դրանք վերընտրել, անհրաժեշտության դեպքում բռնություն գործադրելով։ Վերջապես, սեփական դերակշռություն ձեռք բերելով, թեկուզ կոմպրոմիսի գնով արտաքին թշնամու հետ հաշտություն կընդունել, բանտերը բաց անել, հարուստներին վերադարձնել իրենց ստացությունը, սահմանադրությունը վերանայել և «բարեկանոն» բուրժուական հասարակարգ հաստատել։

Այդ պլանի ազդարարը, որն այն աստիճանաբար լայն հասարակության առաջ բացահայտում էր, Քամիլ Դեմուլենն էր։ Նրա հեղինակը Ժորժ Ժակ Դանտոնն էր։

Ռոբեսպիերի դրությունն ավելի ու ավելի դժվարանում էր։ Նա մենքը պարզում էր երեկվա բաբեկամներին և ընկնում

Թշնամիների գիրկը։ Նա որքան ավելի էր զիջումների հակվում հաշտություն ու համաձայնություն ցանկանալով, այնքան «զիջողամիտներն» ավելի էին լկտիանում։ Եվ ահա, շարունակելով հաշտեցման թեք մակարդակով գնալ, Մաքսիմիլիանը կատարում է ևս մեկ տակտիկական սխալ, որը, սակայն, կոչված էր հետագայում նրա աչքերը բաց անելու։ Ցանկանալով «զիջողամիտներին» հանգստացնել և նրանց կշտամբանքները հիմքերից զրկել, նա առաջարկում է կազմակերպել Արդարացիության կոմիտե՝ մի առանձին հանձնաժողով, որը պետք է անարդարացիորեն կալանավորված անձանց մասին տեղեկություններ հավաքեր և իր ստուգման արդյունքները ներկայացներ կառավարությանը։ Այդ առաջարկությունը թուլացնում էր տեռորն այնպիսի ժամանակ, երբ այն կենսականորեն անհրաժեշտ էր։ Այն կարող էր հակահեղափոխականների և նրանց ձայնակցողների համար ուժի նոր աղբյուր դառնալ։ Զախ յակորինականները և էբերտիստները միահամուռ կերպով հանդես եկան Ռոբեսպիերի առաջարկության դեմ։ Սակայն Կոնվենտը հավանություն տվեց և ընդունեց այն։

Թուլությունը՝ իրական թե թվացող, միշտ էլ հարձակվող կողմի նոր գրոհներ է առաջացնում։ Դեմուլենը և նրա բարեկամները ձեռքերն իրար էին շփում։ Անկաշառելին նահանջում է։ Պետք է նրան վերջ տալ, վերջ տալ որքան կարելի է ավելի շուտ։ Նա առաջարկում է կազմակերպել Արդարացիության կոմիտե՝ կպահանջի տեռորն ամբողջովին դադարեցնել և բանտերը բացել։ Դեմուլենը, միշտ պատրաստ օգնելու իր ֆրակցիային, նորից գրիչ է վերցնում։

Այս անգամ նա բոլորովին կորցնում է չափի զգացումը։

«Հին կորդելյերի» № 4-ում Քամիլն ուղղակի խոսում է այն մասին, որ հեղափոխությունը պետք է վերջացնել, ընդ որում վերջացնել անհապաղորեն։ Այդ պահանջը շեշտվում է համարի յուրաքանչյուր էջում, յուրաքանչյուր տողում։ Այժմ, Դեմուլենի կարծիքով, հանրապետությանն այլևս ոչինչ չի սպառնում։ Ո՞ւմ դեմ պետք է պայքարել, հարցնում է նա, վախկոտների՞ և հիվանդների՞ դեմ։ Կանա՞նց, ծերունիների՞ և հյուծված մարդկա՞նց դեմ։ Քամիլը ոչ մի տեղ դավադիր-

ներ չի տեսնում։ Նրա կարծիքով, միապետության և հանրապետության միջև մղած պայքարի ժամանակ բանտերում կայանավորված «ֆելյանների, ռանտյենների և խանութպանների ամբոխը նման է Հռոմի ժողովրդին, որի անտարբերությունը Վեսպասիանոսի և Վիտելիոսի միջև մղված պայքարի ժամանակամիջոցում, նկարագրել է Տակիտոսը։ Բայց Վեսպասիանոսը, հաղթանակ տանելով, ամենևին չէր հրամայում այդ բարոյությունը բանտերը լցնել։ Եվ ահա եզրակացությունը՝ «... Դուք ուզո՞ւմ եք, որ ես ազատությունն ընդունեմ և նրա տարին ընկնեմ։ Դեհ ուրեմն, բանտերի դռները բաց արեք հարյուրավոր քաղաքացիների առաջ, որոնց դուք կասկածելիներ եք անվանում...»։ Ռոբեսպիերին և նրա առաջարկությունը փառաբանելով, Դեմուլենը, սակայն, անհրաժեշտ է համարում Արդարացիության կոմիտեն փոխարինել Դիտության կոմիտեով։

Կրակոտ Կոլոն դ' Էրբուան, ձիերը սրարշավ քշելով, Լիոնից դեպի Փարիզ էր սլանում։ Ժամանակը թանկ էր։ Այնտեղ՝ մայրաքաղաքում, «զիջողամիտները» բացահայտորեն հաղթում էին էբերտիստներին։ Հարկավոր էր փրկել յուրայիններին, իսկ դրամամանակ նաև հենց իրեն։ Չէ՞ որ ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ նա՝ Կոլոն, Ֆուշեի հետ միասին խռովարար լիոնցիներին պատժելով, խոշոր կոտորակով կրակել է բազմության վրա։ Վերջին դեպքերի լույսի տակ այդպիսի գործողությունները կարելի էր հանցագործություն համարել։ Արդեն եթե համարձակվեցին Ռոնսենին ու Վենսանին կալանավորել, ապա նշանակում է բանը վատ տեղ է հասել։ Հատկանշական է նաև այն, որ Ռոբեսպիերը նրա նամակներից և ոչ մեկին չպատասխանեց։ Նշանակում է, Անկաշառելին դժգոհ է։ Հո նա լիովին համակերպվել «քնեցնողների» հետ։

Սեպտեմբերի 1-ին (դեկտեմբերի 21-ին) Կոլոն մայրաքաղաքում էր։

Հոկան եկավ,— բերկրանքով հայտարարեց Էբերը։

Կոլոն իր շքախմբի ուղեկցությամբ հաստատուն քայլվածքով մտնում էր գալիս Փարիզի փողոցներում։ Նա պատրաստ էր ամենամեծ գործողությունների համար։ Փարիզեցիներին

ապշեցնելու համար նա իր հետ վերցրել էր ժիրոնդիստ խռովարարների ձեռքով տանջամահ արված լիոնցի հայրենասեր Շալյեի գլուխը։ Նա այդ սրբազան մասունքը նվիրաբերեց Կոմունային։ Հայրենասերների բազմությունները Կոլոյին Բաստիլի հրապարակից ուղեկցեցին մինչև Կոնվենտը։ Կոնվենտում նա առաջինը խոսք վերցրեց։ Նա խոսում էր համոզիչ կերպով, համարձակորեն, ոչինչ չթաքցնելով և միաժամանակ ցույց տալով իր կիրառած պատժամիջոցների անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։ Ոչ ոք չհամարձակվեց նրան առարկել։ Կոնվենտը հավանություն տվեց նրա զեկուցմանը։

Առանց ժամանակ կորցնելու, նույն օրնեթ Կոլոն հանդես եկավ Յակոբինյան ակումբի ամբիոնից։ Նրան ջերմ ծափահարություններով դիմավորեցին։

— Այսօր ես հասարակական կարծիքը չեմ ճանաչում,— ասաց Կոլոն։— Եթե ես երեք օրով ուշ գայի, թերևս ինձ դատի տային...

Հռետորը երաշխավորեց Ռոնսենի հայրենասիրության համար և իր ճառն ավարտեց դանտոնիստներին խիստ դատապարտելով։

Արիությունը վարակիչ է։ Էբերտիստները, որոնք մի ամբողջ ամիս շարունակ համբերությամբ հայհոյանք ու սպառնալիքներ էին տարել, այժմ հակահարձակման անցան։ Կոլոյից հետո խոսք վերցրեց Էբերը։ Նա հարձակվեց Դեմուլենի, Ֆիլիպոյի, Ֆաբրի վրա, նրանց դավադիրներ անվանեց, պահանջեց նրանց ակումբից վտարել։

Դանտոնիստների գրոհը նորից փոխարինվեց էբերտիստների գրոհով։

Յակոբինյան ակումբում էբերտիստների հանկարծակի հաղթանակը հրաշք չէր։ Այն նաև բացառապես Կոլո դ' Էրբուայի նանդի արդյունքը չէր։ Կոլոն հաջողության չէր հասնի, եթե իր համար նախապես կառավարության պաշտպանությունը չապահովեր։ Կոլոյի գործողությունների և ճառերի ետևում երևում էր Ռոբեսպիերի ստվերը։ Անկաշառելին արդեն կարծիք էր կազմել։ Նա ձեռք էր քաշում «զիջողամիտներից»։ Նա պատ-

բատում էր «ծայրահեղների» հետ ժամանակավորապես համա-
հայնության գալու։ Թող յակոբինականները Դանտոնի բարե-
կամներին դատապարտեն։ Բարոյական դատապարտումն ա-
վելի լուրջ գործի սկիզբը կլինի միայն։

Կայանավորված դեպուտատների հարցաքննությունները,
նրանց զրույցներում հայտնաբերված փաստաթղթերը, այդ
ամենը կոմիտեներին նոր նյութեր էին տալիս, որոնք պինդ
էին հզում դավադիրների պարանոցի օղակը։ Այսպես, Դելո-
նեի փաստաթղթերի մեջ հայտնաբերվեց Արևելա-հնդկա-
կան ընկերությունը լուծարքի ենթարկելու մասին կեղծ
դեկրետի ընագիրը։ Այդ փաստաթուղթն ուշադրությամբ ու-
սումնասիրելով, հետաքննությունը գլխավորող Ամարը և
մյուսներ համոզվեցին, որ այն պարունակում է Ֆաբր դ'Էգլան-
տինի ձեռագրի հետքերը, ընդ որում հենց Ֆաբրի ձեռքով էին
կատարված սրիկաների համար շահավետ բոլոր ուղղումները։
Ռոբեսպիերը հասկացավ, որ իրեն խաբող ճարպիկ սրիկան է՛լ
ավելի մեղավոր է, քան նրանք, որոնց նա մատնել է։

Այո, այժմ Անկաշառելին արդեն չէր կասկածում։ Նա նը-
կատեց դավադրության ընդհանուր ուրվագծերը և տեսնել
նրա պարագլուխներին։ Եվ նա որոշեց՝ պայքարն սկսելուց
հետո առաջին անգամ լրջորեն նախազգուշացնել նրանց...

Նա նիվոզի 5-ին (դեկտեմբերի 25-ին) Կոնվենտում մի ճառ
արտասանեց, որը երկու ֆրակցիաներին ստիպեց ծեծկռտոցը
պապարեցնել և ուշադրությամբ լսել։

Ռոբեսպիերը խոսում էր հեղափոխական կառավարության
սկզբունքների մասին։

Նա սահմանադրական և հեղափոխական հասարակարգի
հիմնական տարբերությունից, պատերազմական դրության և
խաղաղ ժամանակվա դրության տարբերությունից մեծ հրմ-
տությամբ տեռորն արդարացնող եզրակացություն արեց։ Ռո-
բեսպիերի զեկուցումն այն տրամաբանական ձևով օժտված
ուղղակի պատասխանն էր «Հին կորդելյերին», որից միշտ
պարզ էին Դեմուլենի ստեղծագործությունները։ Միաժամա-
նակ չնշելով տեղի ունեցող դեպքերի լրջությունը և հասա-
րակական շահի գաղափարի անխորտակելիությունը, զեկու-

ցումը խուլ կերպով երկու ֆրակցիաներին նախազգուշացնում էր որպես հակառակ ծայրահեղություն ներկայացնող ֆրակցիաների. «... մոդերանտիզմը պատկանում է չափավորությանն այնպես, ինչպես անզորությունը՝ առաքինությանը, և անկարգություններին ձգտումը նման է եռանդին այնպես, ինչպես ջրդողությամբ տառապողի գիրությունը՝ առողջությանը»։

Հաջորդ օրը Անկաշառելին հրաժարվեց Արդարացիության կոմիտեի դաշափարից։ Կոնվենտի նիվոզի 6-ի (դեկտեմբերի 26-ի) նիստում Բարերի և Բիլո-Վարենի զեկուցումների առթիվ ընդունվեց բանաձև այդ կոմիտեն վերացնելու մասին։ Միաժամանակ մերկացված Ֆաբր դ՝ Էնգլանտինը հեռացվեց Շաբոյի և մյուս դավադիրների գործը քննող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելուց։

Օրերը հաջորդում էին միմյանց։ Հանրապետական օրացույցը չէր կարող փչացնել նոր տարվա տրամադրությունները։ 1793 թվականի դեկտեմբերը վերջանալու վրա էր։ Պայքարող կողմերը նոր վճռական գոտեմարտից առաջ գրեթե երկու շաբաթ հանդարտվեցին։ Բայց ահա նիվոզի 18-ին (հունվարի 7-ին) յակոբինյան դատարանը վերսկսեց իր նստաշրջանը։ Հրավիրվեցին Բուրդոնը, Ֆաբրը, Դեմուլենը և Ֆիլիպոն, հրավերը կրկնվեց երեք անգամ, բայց պատասխան չունեցավ։ Մեղադրյալները բացակայում էին։

— Քանի որ այս պայքարն սկսող անձինք մարտից խուսափում են,— ասաց Ռոբեսպիերը,— թող ակումբը նրանց հանձնի հասարակական կարծիքի դատաստանին, որը և նրանց դատավճիռը կկայացնի։

Հանկարծ ամբիոնի վրա հայտնվեց Քամիլը։ Նա սաստիկ հուզված էր և դողդոջուն ձայնով էր խոսում.

— Լսեցեք,— բացականչեց նա։— Խոստովանում եմ ձեզ, ես պարզապես չգիտեմ, թե ինձ հետ ինչ է կատարվում։ Բոլոր կողմերից ինձ մեղադրում են, ինձ զրպարտում են։ Ֆիլիպոյի մասին, անկեղծորեն խոստովանում եմ ձեզ, որ ես մաքուր սրտով հավատացի այն ամենին, ինչ նրա հիշողությու-

նր պահպանել էր... էլ ինչի՞ն հավատալ։ Ինչի՞ վրա կանգ առնել։ Ես ուղղակի գլուխս կորցնում եմ...

Սակայն այդ կցկտուր թոթովանքից անմիջապես հետո Քամիլն ավելացրեց, որ նա իր թերթի էջերում տալիս է ցանկացած մեղադրանքի պատասխանը։

Եորից Ռոբեսպիերը վեր կացավ։ Նա որոշեց իր դպրոցական ընկերոջը լրջորեն նախատել, բայց այնուամենայնիվ նրան մի անգամ ևս փրկել։ Թեթևակի ծաղրելով Ֆիլիպոյի առաջ նրա չափից դուրս խոնարհվելը և այնուհետև անցնելով «Հին կորդելյերի» հարցին, Մաքսիմիլիանը իր հեռանությունները մի քանի արտահայտություններով ամփոփեց.

Դեմուլենն արժանի չէ այն խստությանը, որ մի քանի անձինք պահանջում են նրա նկատմամբ գործադրել. ես նույնիսկ հակամետ եմ կարծելու, որ ազատության համար Ֆեոդալու չէ նրան այնպիսի խստությամբ պատժել, ինչպես մյուս հանցագործներին... Ես համաձայն եմ, որ ազատությունը Կամիլ Դեմուլենի հետ վարվեր ինչպես թեթևամիտ մի երեխայի հետ, որը լավ հակումներ ունի, բայց վատ ընկերները նրան մոլորության մեջ են գցել։ Նրանից պետք է պահանջել, որ նա ապացուցի իր զղջումը, հեռանալով իր այն ընկերներից, որոնք նրան իսկական ճանապարհից շեղեցին... Պետք է խիստ վարվել նրա թերթի հետ, որին ինքը Բրիսոն հավանություն տալ չէր համարձակվի, իսկ նրան պահպանել մեր շրջանում... Ես վերջացնում եմ, պահանջելով, որ նրա թերթի համարները մի կողմից արժանանան հենց այնպիսի վերաբերմունքի, ինչպես այն արիստոկրատները, որ դրանք գնում են. թող այդ թերթի համարների նկատմամբ արտահայտվի այն լուսանկարին արժանի արհամարհանք, որ դրանք պարունակում են. ես ընկերությանն առաջարկում եմ դրանք այրել դահլիճի մեջտեղում։

Ռոբեսպիերի ճառը, մի քանի անգամ ծիծաղի պոռթկումներով ընդհատվելով, ընդհանուր հավանությամբ ընդունվեց։

Բայց «տոնակատարության պատճառ հանդիսացողը» չպատկացավ իրեն նետված փրկության խարիսխին կառչել։ Ռոբեսպիերի առաջարկությունից վիրավորված, նա պատասխանեց ոչ առանց դառնության.

— Ռոբեսպիերն ուզում էր ինձ բարեկամական հանդիմանություն անել. ես նույնպես պատրաստ եմ բարեկամության լեզվով պատասխանել։ Ռոբեսպիերն ասաց, որ պետք է իմ թերթի համարներն այրել։ Շա՛տ լավ է ասված։ Բայց ես Ռուսոյի խոսքերով կպատասխանեմ. «Այրել՝ չի նշանակում պատասխանել»։

Այսպիսի պատասխանը Մաքսիմիլիանին մինչև հոգու խորքը զայրացնում է։ Խելառ լակոտը ոչինչ չի ուզում հասկանալ և առամները խրում է մեկնած ձեռքը։ Լավ, թող ուրեմն իրեն մեղադրի։

— Եթե այդպես է,— կասեցնում է Ռոբեսպիերը,— ապա ես առաջարկությունս ետ եմ վերցնում։ Իմացիր, Քամիլ, որ եթե դու Քամիլը չլիներիր, ես քեզ այդպիսի ներողամտությամբ չէի վերաբերվի։ Լավ, ես չեմ պահանջի Դեմուլենի թերթի համարներն այրել, բայց այդ դեպքում թող նա դրանց համար պատասխան տա։ Թող խայտառակվի, եթե այդ ցանկանում է... Գուցե նա բնավ էլ պարզապես մոլորության մեջ ընկած մի մարդ չէ. եթե նրա մտադրությունները ազնիվ լինեին, եթե նա այդ հոդվածները դրեր միամիտ սրտով, ապա նա այդպես երկար ժամանակ դրանք չէր պաշտպանի, երբ դրանք դատապարտվում են հայրենասերների և խլխլվում հակահեղափոխականների կողմից։ Նրա քաջությունը մեզ ցույց է տալիս, որ Դեմուլենը մի հանցախմբի գործիք է, որը նրա գրիչն օգտագործում էր իր թույնը տարածելու համար։ Ես այս բոլոր ճշմարտությունները չէի արտահայտի, եթե Դեմուլենը այդպիսի համառություն չցուցաբերեր, բայց այժմ անհրաժեշտ է նրան կարգի հրավիրել։ Այսպես ուրեմն, ես պահանջում եմ, որ Քամիլ Դեմուլենի թերթի համարները բարձրաձայն կարդացվեն այս ընկերության ամբիոնից։

Քամիլը, որ հենց նոր գրեթե ոգևորվել էր, դարձյալ լուրջ վախեցավ։

— Բայց, Ռոբեսպիեր, ես քեզ չեմ հասկանում,— արագորեն բլբլաց նա,— դու ինչպե՞ս կարող ես ասել, թե իմ թերթը միայն արիստոկրատներն են կարդում։ «Հին կորդելյերը» կարդում էին Կոնվենտը, Լեռը։ Նշանակում է, Կոնվենտը և Լեռը միայն արիստոկրատների՞ց են կազմված։ Այստեղ դու ին-

պատասխանում ես, բայց մի՞թե ես քեզ մոտ չեմ եղել։ Արդյոք ես իմ համարները քեզ չե՞մ կարդացել, աղաչելով հանուն բարեկամության ինձ խորհուրդներով օգնել և ցույց տալ, թե ինչ ոգիով պետք է գնամ։

Դու ինձ ցույց ես տվել ոչ բոլոր համարները,— սառը պատասխանեց Մաքսիմիլիանը։— Ես տեսել եմ ընդամենը մեկ կամ երկու համար։ Քանի որ ես վեճերի սիրահար չեմ, ուստի չուզեցի հաջորդ համարները կարդալ՝ կսկսեիք խոսել, իսկ այդ համարները ես եմ կազմել։

Դրան Դեմուլենն առարկելու ոչինչ չուներ, և նա լռեց։ Տեղից վեր թռավ Դանտոնը։ Հարկավոր էր ինչ-որ կերպ դրությունը փրկել։ Դիմելով Քամիլին, Ռոբեսպիերին և մյուս ներկա գտնվող անձանց, Դանտոնն ասաց.

Քամիլը չպետք է վախենա այն մի քանի խիստ դասից, որ տվեց նոր Ռոբեսպիերը բարեկամաբար տվեց նրան։ Քաղաքացիներ, թող շարունակ արդարացիությունն ու սառնարյունությունը ղեկավարեն ձեր վճիռները։ Քամիլին դատելով, դուք վարվեցեք՝ մամուլի ազատությանը կործանիչ հարված չտալու։

Դրանից հետո սկսեցին կարդալ «Հին կորդելյերի» չորրորդ համարը։

Ռոբեսպիերը նիվոզի 18-ի լույս 19-ի գիշերն անքուն անցկացրեց։ Նա ամփոփում էր կատարում։ Հաջորդ օրը նա արգելց յակոբինականներին ծանոթացնել դավադրության էությանը։ Ժամանակն է դիմակները պատռել։ Բավակա՞ն է հարյուր բուն էությունից դուրս թափառել։ Թող յակոբինականներն իմանան, թե իրենք ինչի և ում դեմ պետք է պայքարեն։ Վաղը նա Նեարրին կմերկացնի։ Իսկ Դանտոնի՞ն։ Ոչ, դրա համար դեռ պետք է սպասել... Նրա ժամը չի եկել։ Թող նրա շուրջն ամբոխություն առաջանա, և այն ժամանակ նա անզոր կլինի։

Հաջորդ օրը տեղի ունեցավ «Հին կորդելյերի» 3-րդ համարի քննարկումը։ Ռոբեսպիերը խոսք վերցրեց։

Անօգուտ է ընթերցումը շարունակել,— ասաց նա։ Հավանորեն բոլորն արդեն Քամիլ Դեմուլենի մասին կարծիք

կազմեցին։ Դուք տեսնում եք, որ նրա աշխատություններում ամենահեղափոխական սկզբունքները խառնված են ամենակործանիչ համաձայնողականության հետ... Դեմուլենն իր թերթում տալիս է ճշմարտության և խաբեության, քաղաքական իմաստության և ակնհայտ անհեթեթությունների, առողջ համոզմունքների և միմիայն նրան հատուկ պատրանքների տարօրինակ մի խառնուրդ։ Ուստի կարևորն այն չէ, յակոբինականները Քամիլին կվտարեն, թե իրենց շրջանում կթողնեն՝ չէ՞ որ այստեղ հարցը վերաբերում է միայն մեկ մարդու. շատ ավելի կարևոր է ազատության հաղթանակին և ճշմարտության պարզաբանմանը հասնելը։ Այս ամբողջ վիճաբանության ընթացքում առանձին անձնավորությունների վրա ավելի մեծ ուշադրություն էր դարձվում, քան ամբողջ հասարակության շահերի վրա։ Ես ոչ ոքի հետ կռվել չեմ ուզում։ Իմ կարծիքով, և՛ էբերը, և՛ Քամիլը հավասարապես արդարացի չեն...

Ռոբեսպիերը լռում է և որոշ ժամանակ անշարժ կանգնում, աչքերը փակելով։ Հետո շարունակում է ցածր, հանգիստ ձայնով, որ ներկա գտնվողներից շատերին ստիպում է քարանալ։

— Ամենասարսափելին այն է, որ այժմ տեղի ունեցող բոլոր վեճերի ընթացքում միանգամայն որոշակիորեն ուրվագծվում է արտասահմանից մեկնած ձեռքը։ Օտարերկրյա մի կլիկ ոգեշնչում է երկու խմբավորումներին, որոնք ձևացնում են, թե միմյանց դեմ պայքարում են... Այդ երկու կուսակցությունները բավական թվով պարագլուխներ ունեն, և նրանց դրոշակների տակ ազնիվ շատ մարդիկ են համախմբվում, որոնք միանում են այս կամ այն կուսակցությանը, նայած իրենց ընավորության տարբերությանը։

Քանի դեռ Ռոբեսպիերը խոսում է, ոմանք սկսում են հուսալ։ Ֆաբր դ՝ Էգլանտինը իր տեղից վեր է կենում։ Ռոբեսպիերը, նրա շարժումը նկատելով, ընկերությանն առաջարկում է Ֆաբրին խնդրել մնալու։ Այն ժամանակ Ֆաբրն ուղղվում է դեպի ամբիոնը։

Այդ տեսնելով, Ռոբեսպիերը բարձրամիտ ձևով հայտարարում է.

— Բայց Ֆաբր դ' Էգլանտինն արդեն իր ճառը պատրաստել է, բայց իմը դեռ չի վերջացել։ Ես նրան խնդրում եմ սպասել... Եվ նա շարունակում է ընդարձակորեն նկարագրել դավադիրների իր նշած երկու խմբավորումները.

— Հշմարտության ջատագովներ,— վերջացնում է հռետորը,— մեր պարտականությունն է ժողովրդի առաջ մերկացնել այս բոլոր նենգագործների մեքենայությունները և մուլիկներին ցույց տալ նրան, որոնք փորձում են նրան խաբել։ Ես իսկական մոնտանյարներին հայտարարում եմ, որ հապճեպանակը նրանց ձեռքում է և որ պետք է ճզմել միայն մի բանի օձ։ Հոգանք ոչ թե առանձին անհատների, այլ ամբողջ հայրենիքի մասին։

Հռետորը մի վայրկյան լռում է և հանկարծ այնպիսի մի հարվածում գործում, որը նրանից չէր սպասում ներկա գտնվողներից և ոչ մեկը։

Ես ընկերությանը կոչ եմ անում քննարկել միայն դավադրությանը վերաբերող գլխավոր հարցը և այլևս չվիճել Կամիլ Դեմուլենի թերթի մասին։— Ռոբեսպիերը սևեռուն նայում է իր հերթին սպասելով տեղում անհանգիստ շարժումներ կատարող Ֆաբրին։— Իսկ այժմ թող այդ մարդը, որը հարմանակ կանգնած է լոռնետը ձեռքին և որն այնպես լավ է կարողանում նենգագործներին բեմում ներկայացնել, իր բացատրությունները տա. տեսնենք նա կկարողանա՞ դուրս պրծնել այդ պատմությունից։

Հարվածն անսպասելի ու կայծակնային էր։ Ֆաբրը նախ նա գնաց, հետո հանկարծ սովորական ինքնավստահությունը կորցնելով, գրեթե խարխափելով քարշ եկավ դեպի ամբիոնը։

Ես Ռոբեսպիերի ճառից հասկացա,— կմկմաց Ֆաբրը,— միայն այն, որ գոյություն ունի մի կուսակցություն, բաժանված երկու մասի՝ ծայրահեղ հեղափոխականների և չափավորների։ Ես պատրաստ եմ պատասխանելու ամեն հարցի, երբ նա իր մեղադրանքները ճշտի. ես լռություն կպահպանեմ այնքան ժամանակ, քանի դեռ չգիտեմ, թե ինչ պետք է բացատրեմ...

Նա շարունակում է քթի տակ կցկտուր ինչ-որ բան ասել։ Բայց նրան չեն լսում։ Լսվում է պարզորոշ մի բացականչություն

թյուն՝ «գիլյոտինով գլխատե՛լ»։ Ռոբեսպիերի ետևից յակոբինականները հեռանում են ակումբից, և հեռուը շուտով ամայացած դահլիճում մենակ է մնում։

Նիվոզի 24-ին (հունվարի 13-ին) Հասարակական անվտանգության կոմիտեի օրգանները կալանավորեցին Կոնվենտի անդամ, դրամատուրգ և հանրապետական օրացույցը հնարող Ֆաբր դ'Էգլանտինին և ուղարկեցին Լյուքսեմբուրգյան բանտը։ Խուճապը տիրեց «զիջողամիտներին»։ Երբ հաջորդ օրը Դանտոնն ուզում էր հանդես գալ իր բարեկամին պաշտպանելու, Բիլո-Վարենը նրան խստորեն ընդհատեց, ասելով.

— Վա՛յ նրան, ով Ֆաբրի կողքին էր նստում։

Էբերտիստները հրճվում էին։ Բայց նրանց հրճվանքը վաղաժամ էր։ Անտեսանելի շղթան նրանց ամուր կերպով գամում էր «զիջողամիտներին»։ Դա շղթան էր օտարերկրյա դավադրության, որի առկայության մեջ այժմ Ռոբեսպիերը չէր կասկածում։ Այդ շղթայի երկու ծայրերն էլ հավասարապես իրենց զոհերին գիլյոտինի էին մատնում։ Յակոբինականների դատարանը, ինչպես և կանխատեսել էր Ռոբեսպիերը, մի ուրիշ դատարանի՝ Հեղափոխական տրիբունալի նախադանքն էր միայն։

ԳԼՈՒԽ

ՉԱԽՉԱԽՈՒՄ

Պլյուվիոզի 17-ին (փետրվարի 5-ին) Մաքսիմիլիան Ռոբեսպիերը Կոնվենտում հանդես եկավ մի մեծ ճառով։ Այդ ճառն ընդհանրացնում էր հեղափոխության վերջին ամիսների փորձը և պետք է հետագա ճանապարհի ուղղությունը որոշեր։ Ճառը նվիրված էր պետական բարոյականության սկզբունքներին։

— Ժամանակն է պարզ կերպով նշելու մեր հեղափոխության նպատակը,— ասում էր Ռոբեսպիերը,— և որոշելու այն սահմանը, որին մենք պետք է հասնենք։

Ո՞րն է այն նպատակը, որին մենք ձգտում ենք։ Դա ազատության և հավասարության խաղաղ վայելումն է։

Թող Ֆրանսիան, որը ժամանակով ստրկացված երկրների մեջ մեծ տերություն էր, իր փառքով գերազանցի երբևէ գոյություն ունեցած բոլոր ազատ ժողովուրդներին և դառնա ժողովուրդների օրինակը, բռնապետների սպառնալիքը, կեղեքվածների սփոփանքը և ամբողջ տիեզերքի զարդարանքը։ Մեր աշխատանքը մեր սեփական արյունով ամրապնդելով, մենք, թերևս, կտեսնենք համաշխարհային երջանկության արշալույսի առաջին փայլատակումը... Ահա մեր ձգտումները, ահա մեր նպատակը...

Բայց առաքինություն պետք է լինի, որ նպատակը հասանելի դառնա։ Իսկ ի՞նչ է առաքինությունը։ Դա հայրենիքի և նրա օրենքների նկատմամբ ցուցաբերվող սերն է, հանրապետության ամրապնդման և հավասարության մասին հոգալը։ Առաքինության նախապայմանը հասարակական բարոյականության բարձր մակարդակն է. անբարոյական ամեն ինչ քաղաքականապես անպետք է, հետևաբար և՝ հակահեղափոխական։

Նշելով, որ առաքինությունը պետք է գոյություն ունենա և՛ ժողովրդի, և՛ կառավարության մեջ, Ռոբեսպիերը այստեղից եզրակացնում է, որ վերջինս պարտավոր է վստահել ժողովրդին և խստապահանջ լինել իր իսկ նկատմամբ։

Բայց այժմյան պայմաններում առաքինությունը տեռորից անբաժանելի է։

— Եթե խաղաղ ժամանակ ժողովրդական ներկայացուցչության հենարանը առաքինությունն է, ապա հեղափոխության ժամանակ նրա հենարանը առաքինությունն է և տեռորը. առաքինությունը՝ որովհետև առանց նրա, տեռորը կարող է կործանարար դառնալ. տեռորը՝ որովհետև առանց նրա, առաքինությունն անզոր է։ Տեռորը ոչ այլ ինչ է, եթե ոչ արագությամբ, անշեղ կերպով ու անդրդվելիորեն իրագործվող արդարությունը. հետևապես, այն հենց առաքինության դրսևորումն է. այն ոչ թե ինչ-որ մի առանձին սկզբունք է, այլ ավելի շուտ ծայրահեղ կարիքի պայմաններում հայրենիքի կողմից

կիրառվող, դեմոկրատիայի հիմնական սկզբունքներից բխող միջոցառում։

Ռոբեսպիերը երկաթե տրամաբանությամբ պատասխանում է նրանց, ովքեր հարձակվում են տեռորի վրա, ովքեր այն ազատության գաղափարի հետ անհամատեղելի են համարում, ովքեր գթասրտություն են պահանջում։

Եվ ահա նա մոտենում է գլխավորին։ Նա ավելի մանրամասնորեն զարգացնում է այն թեզիսը, որն առաջին անգամ առաջ քաշեց Յակոբինյան ակումբում նիվոզի 19-ին։

Ժողովրդի ներքին թշնամիները բաժանվեցին երկու կուսակցությունների և դարձան ասես միևնույն բանակի երկու ջոկատներ։ Նրանք ընթանում են տարբեր ճանապարհներով և կրում տարբեր դրոշներ, բայց նրանց նպատակը մեկ է։ Այդ նպատակը ժողովրդական կառավարության կործանումն է, Կոնվենտի ոչնչացումը և, հետևապես, բռնապետության հաղթանակը։ Այդ հանցախմբերից մեկը մեղ մղում է թուլությունների, մյուսը՝ ամեն տեսակ ծայրահեղությունների. մեկն ուզում է ազատությունը մի ցոփ կին դարձնել, մյուսը՝ մի պոռնիկ։

... Իսկ ի՞նչ տարբերություն կա ծայրահեղների և նրանց միջև, որոնց դուք չափավորներ եք համարում։ Դրանք բոլորն էլ միևնույն դավադրության կամակատարներն են, որոնք ձեվացնում են, թե իրար հետ կռվել են, որպեսզի ձեզանից ավելի թաքցնեն իրենց հանցագործությունները։ Նրանց դատեցեք ոչ թե ըստ նրանց խոսքերի տարբերության, այլ ըստ նրանց նպատակների նույնականության...

Այդ ճառը ամփոփում էր։ Այն կասկած չէր թողնում, որ որոշումն ընդունված է։ Դավադրությունն ակներև է, դավադիրները հայտնի, մարդկանց անունները չեն տրվել, բայց նրանք արդեն կորստյան են մատնված։ Ով առաքինության չի հետևում, ում արարքներն ու մտքերը անբարոյական են, նա պետք է կործանվի։ Հեղափոխությունն իր խնդիրները կարող է կատարել անբարոյական մարդկանց ջախջախելով միայն. թույլերը և անբարոյականները տեղ չունեն ազատության ու հավասարության ապագա թագավորության մեջ։

Այդ ճառի զարհուրելի ուժը, ինչպես և Ռոբեսպիերի ամ-

բոլոր մտածողության առանձնահատկությունն այն էր, որ նա առաջին հայացքից վերացական թվացող դրույթներից խիստ գործնական հետևություններ էր անում։ «Առաքինություն» անորոշ ֆորմուլան նրա բերանում միանգամայն պարզորոշ, կոնկրետ հասկացություն էր դառնում, որից բխում էին ոչ պակաս կոնկրետ հետևություններ։ Այժմ թե նրանք, ովքեր պահանջում էին տեռորը վերացնել և թե նրանք, ովքեր ուզում էին կյանքի բոլոր դժվարությունները բացառապես «սրբության գիլյոտինի» միջոցով լուծել, հավասար չափով գիտեին, թե իրենց ինչ է սպասում։ Քանի դեռ Ռոբեսպիերը համոզված չէր, քանի դեռ նա իր համար միանգամայն պարզ պատկերացում չէր կազմել, նա կարող էր տատանվել ու կասկածել։ Իսկ երբ նա ձեռակերպեց այն, ինչը նրա հոգին անհանգստացնում էր, երբ նրա կասկածները պարզորոշ հասկացությունների ու սահմանումների ձև ստացան, ամեն ինչ վերջացավ։ Այժմ կորստի մատնվածները, եթե նրանք անցյալում նույնիսկ բարեկամներ եղած լինեին, նրա կարեկցության վրա հույս դնել չէին կարող։ Անկաշառելիի համար սկզբունքներն անձնավորություններից բարձր էին, անձնավորությունները նշանակություն և ապրելու իրավունք ունեին միայն այն դեպքում, եթե համապատասխանում էին սկզբունքներին։

Կառավարական կոմիտեները գործում էին եռանդով ու վճռականությամբ։ Նոր դավադիրները միանում էին առաջներում կալանավորված իրենց հանցակիցներին։ Ստարերկրյա բանկիրները, նրանց գործակալները, նրանց հովանավորները, որոնք էլ բարձր դիրք ունեցան, գնում էին միևնույն հարթված ճանապարհով։ Երկրորդ անգամ կալանավորվեցին Պրոլին և Դեֆյեն։ Նրանց միացավ իրենց դավադրակից Պերեյրան։ Հետագայում կալանավորվեց էրո դը Սեշելը։ Կոսմոպոլիտ Կլոոսը, որին Ռոբեսպիերը դեկտեմբերի սկզբին գլխովին ջախջախեց, այնուհետև վտարվեց Յակոբինյան ակումբից, հանվեց Կոնվենտի կազմից, իսկ հետո նույնպես կալանավորվեց։ Լյուքսեմբուրգյան բանտի մի մենախցում կալանավորված մատնիչ Շաբոն անհանգստությամբ և հուսահատությամբ հետևում էր այդ դեպքերին։ Նա Ռոբեսպիերի վրա տեղատա-

բափ նամակներ էր թափում, որ ուղարկում էր ամեն օր, իսկ երբեմն էլ օրական երկու անգամ, հիշեցնելով, որ իրեն, որպես դավադրությունը մերկացնողի, խոստացել են խնայել։ Նա հեղափոխությանը սիրո և նվիրվածության երդում էր տալիս, իրեն խաբող օտարերկրացիներին ու պաշտոնակիցներին նախատում, իր կնոջից բաժանվելու պատրաստակամություն հայտնում, Ռոբեսպիերին աղերսելով, որ նրան իր պաշտպանության տակ առնի և թույլ չտա կործանվելու։ Մերկացված աֆերիստի նամակներն անպատասխան էին մնում։ Անկաշառելիի համար Շաբոն և վերջին ամիսների ընթացքում կայանավորված մյուս անձնավորությունները այլևս գոյություն չունեին։ Նա ուրիշ գործով էր զբաղված։

Անկաշառելին և նրա համախոհները լավ գիտեին, որ իրենց իշխանության գլուխ կանգնեցրած ժողովուրդն իրենց միայն այն դեպքում կպաշտպանի, եթե իրենք իրենց կողմից կատարեն այդ ժողովրդի ամենատարբեր իավերի ծրագիրը։ Այնինչ քաղաքի և գյուղի չքավորությունն առայժմ հեղափոխությունից շատ քիչ բան է ստացել։ Արդյոք այդ պատճառով չէ՞ր, որ էբերտիստները, որոնք ինչ-որ չափով արտահայտում էին այդ չքավորության տրամադրությունները, չնայած իրենց ծրագրի ամբոխավարական բնույթին, ժողովրդականություն էին վայելում։ Էբերին և նրա բարեկամներին իրենց հենարանից զրկելու համար, ամբողջ ժողովրդին ցույց տալու համար, որ հեղափոխական կառավարությունը ճիշտ ճանապարհով է գնում, հարկավոր էր ոչ միայն «զիջողամիտներին» ջախջախել և օտարերկրացիներին գլխատել, հարկավոր էր առաջին հերթին ընչազուրկ սանկյուլոտին հաց ու հող տալ։ Այն ժամանակ ինքը՝ ժողովուրդը, ներառյալ ամենաչքավոր խավերը, կտեսնի, թե ովքեր են իր բարեկամները և ովքեր՝ թշնամիները։ Ռոբեսպիերը, Սեն-Ժյուստը, Կուտոնը, դեռ 1793 թվականի սեպտեմբերին բռնելով ձախ յակոբինականների առաջարկած ճանապարհը, պատրաստվում էին շարունակել առաջ գնալ այդ ճանապարհով։

Դրա հետևանքով երևան եկան վանտոզյան դեկրետները։

Վանտոզի 8-ին (փետրվարի 26-ին) Սեն-Ժյուստը Կոնվենտի ամբիոն բարձրացավ։ Նա խոսում էր Հասարակական փրկության կոմիտեի անունից։ Նրա ճառը, որը նվիրված էր հեղափոխական դիկտատուրայի հետագա ամրապնդմանը և նրա բոլոր թշնամիների ջախջախմանը, շատ բանով նման էր Ռոբեսպիերի պլյուվիոզի 17-ի ճառին. դրանք երկուսն էլ ոգեշնչված էին միատեսակ մտքերով ու տրամադրություններով։ Բայց «զիջողամիտներին» և «ուլտրահեղափոխականներին» չտեսնելով, Սեն-Ժյուստը Ռոբեսպիերից ավելի առաջ գնաց։ Նա հեղափոխության զարգացման ու խորացման կոնկրետ մի ծրագիր նշեց։ Կառավարական կոմիտեներին առաջարկվում էր 1789 թվականի մայիսի 1-ից հետո ձերբակալված քաղաքական բոլոր կալանավորների դործերը քննարկել և պարզել, թե նրանցից ովքեր կարող են ազատվել և ովքեր պետք է հեղափոխության թշնամիներ ճանաչվեն։ Վերջին կատեգորիայի անձանց ամբողջ սեփականությունը պետք է անմիջապես բռնագրավել։ Այդ սեփականությունը պետք է ծրիաբար, Հասարակական փրկության կոմիտեի կազմած ցուցակին համապատասխան հանձնվեր չունևոր հայրենասերներին։ Այսպիսով, դեկրետները պահանջում էին ժողովրդի թշնամիների ունեցվածքի հաշվին արագորեն բավարարել ամենաչքավոր խավերի կենսական պահանջները։

Սանկյուլոտների զանգվածները նոր օրենքներն ուրախությամբ ընդունեցին։ Ուրախանում էին նաև ձախ յակոբինականները, որոնց ծրագիրն իրականացնում էր Սեն-Ժյուստը։

Վանտոզյան դեկրետներն այլ կերպ ընդունեցին էբերտիստները։ Էբերը և նրա բարեկամներն իրենց դժգոհությունը չէին թաքցնում։ Դեկրետները, որոնք չքավորության համակրանքը թեքում էին Ռոբեսպիերի և Սեն-Ժյուստի կողմը, Էբերտիստների համար իրենց կոկորդին դեմ արած մի դանակ էին. չէ՞ որ այդ համակրանքը նրանց միակ հույսն էր հեղափոխական կառավարության դեմ ուղղված իրենց պայքարում։ Այժմ թվում էր, թե նրանց ոտքերի տակի հողը փախչում է։ Պետք էր պատասխանել և պատասխանել անմիջապես։

Այն օրերին, երբ Սեն-Ժյուստը Կոնվենտի ամբիոնից հեղափոխության ծավալումն էր ազդարարում, իսկ էբերտիստները ռևանշի համար ուժեր էին կուտակում թե՛ Ռոբեսպիերը, թե՛ Կուտոնը ժամանակավորապես անզոր վիճակում էին՝ երկուսն էլ հիվանդ էին։

Մաքսիմիլիանը պառկած էր իր սպարտական անկողնում և նայում էր լուսամուտին։ Նրան տանջում էր տենդը։ Հիվանդությունն անսպասելիորեն եկավ հենց այն պահին, երբ նրա ներկայությունը Կոնվենտում և ակումբում անհրաժեշտ էր։ Դեհ, մի՞թե սա ճակատագրի ծաղր չէ։ Նա այստեղ պառկած է անօգնական ու կիսակենդան վիճակում, նրան դեղ են տալիս և կոմպրեսներով պատում, իսկ այնտեղ, թերևս, վճռվում է նրա ամբողջ կյանքի նպատակի ճակատագիրը։ Դավադիրներն արդեն շրջապատված են, բայց չլինի՞ թե նրանք կտրեն իրենց կապող շղթան։ Արդյոք Սեն-Ժյուստը կկարողանա՞ երես առ երես թշնամուն հաղթել, կկարողանա՞ մինչև օդնություն ըստանալը ճնշմանը դիմանալ։ Ռոբեսպիերի համար դաղտնիք չէր, որ օպոզիցիա գոյություն ունի նաև կառավարության մեջ։ Ճիշտ է, առայժմ խուլ օպոզիցիա։ Բայց ո՞վ գիտի, թե վաղն ինչ կլինի։ Մի ժամանակ ժիրոնդիստները նրան մեղադրում էին բռնապետության ձգտելու մեջ. արդյոք այժմ նրան իր բացակայությամբ բռնապետ չե՞ն անվանում։

Այո... Ժամանակն անցել է, իսկ չարությունը՝ մնացել։ Այն թաքնվել է, քողարկվել կեղծավորությամբ, բայց դրանից ամենևին չի նվազել։ Անկաշառելին հիշում է, թե անցյալում, վաղ պատանեկության շրջանում, ինքը, սկսնակ մի փաստաբան, որքան է տուժել իր ավագ պաշտոնակիցների անբարյացակամությունից միայն այն բանի համար, որ նրանցից տարբերվում էր, որ ժողովուրդն իրեն սիրում էր։ Ժողովուրդ... Նա այժմ էլ նրա միակ սփոփանքն է։ Միայն ժողովուրդը չի կեղծավորում, միայն ժողովուրդն է նրան հավատում ու սիրում։ Ահա այժմ էլ, ամեն օր քանի՞-քանի հասարակ մարդիկ են գալիս նրա առողջության մասին հարցուփորձ անելու, հոդատարություն և ուշադրություն ցույց տալու, նոր ուժեր բարեմաղթելու... Մի՞թե կարելի է գրա նկատմամբ անտարբեր մնալ...

Մաքսիմիլիանի հայացքը աշխատում է լուսամուտից դուրս, կապույտին տվող մթնշաղի մեջ գտնել Յակոբինյան եկեղեցու սրահողը։ Ոչ, սրահողն այստեղից չի երևում։ Օ՜հ, նա ինչպես կուզենար իմանալ, թե այժմ այնտեղ, այդ սրահողի տակ ինչ է կատարվում։ Թերևս յակոբինականների մոտ պայքար է մղեցնում, կենաց ու մահու պայքար...

Տենդը տանջում է հիվանդին։ Մտքերը խառնվում են, աչքերի առաջ կարմիր շրջանակներ պտտվում, հետո հանկարծ ամեն ինչ շքանում է ինչ-որ սև կիզիչ անդունդում։

Իսկապես փոթորիկ բարձրացավ, բայց նրա տեղը ոչ թե Յակոբինյան, այլ Կորդելյերների ակումբն էր։

Վաղուց արդեն ակումբում այդքան ժողովուրդ չէր խռնվել, ինչպես այսօր, վանտոզի 14-ին։ Թվում էր, թե բոլորը ինչ-որ արտասովոր բանի են սպասում։ Եվ էբերտիստների պարագլուխներն աշխատեցին արդարացնել շաբաթային անդամների ակնկալությունները։

Բանն սկսվեց Մայատի հիշատակին նվիրված «Ժողովրդի բարեկամ» նոր թերթի ուրվագրի հրապարակումից։ Հետո բերեցին մի սև ծածկոց։ Այդ ինչի՞ համար է։ Դրանով որոշեցին վարագուրել Իրավունքների դեկլարացիան։ Վարագույրը կմնա այնքան ժամանակ, մինչև որ ժողովուրդը «զիջողամիտների» կլիկը կոչնչացնի և իր իրավունքները կվերականգնի։

Ամբիոն է բարձրանում Վենսանը։ Նա ջախջախում է «զիջողամիտներին»։ Նա հաստատում է նրանց լիդերների տեսակետների լիակատար նույնականությունը։ Նա ասում է, որ նրանց դավադրությունը Բրիսսոյի դավադրությունից ավելի վտանգավոր է։ Միայն «սրբազան գիլյոտինը» կարող է դրությունը փրկել և ազատության կործանումը կանխել։

Հետո վեր կացավ Կարյեն, Նանտի սարսափելի փոխարքան։ Նա, աչքերը փայլատակելով, մերկացնում է նրանց, ովքեր ուզում են կառափնարանները ոչնչացնել միայն այն պատճառով, որ իրենք վախենում են կառափնարան ընկնելուց։

Ապստամբությո՛ւն,— գոռում է նա,— սրբազան ապըստամբությո՛ւն, ահա թե ի՛նչը պետք է հակադրել ոճրագործներին։

Ապստամբությո՛ւն... Շատերն իրար են նայում։ Բայց ո՞ւմ դեմ։ Ո՞ւմ դեմ ապստամբել, եթե ոչ կառավարության դեմ։ Նշանակում է, «վիշտղամիտներին» խայտառակելը լոկ մի պատրվակ է Ռոբեսպիերի դեմ դրոհի անցնելու համար։ Էքերը, Կարյեին փոխարինելով, շտապում է կասկածները փարատել։

— Ամենավտանգավոր մարդիկ,— պնդում է նա,— ոչ թե գոպերն են, այլ փառասերները։ Նրանք որքան ավելի մեծ իշխանության են հասնում, այնքան ավելի անհագ են դառնում. նրանք միանձնյա իշխանության են ձգտում։

Ակնարկը միանգամայն պարզ է. խոսքն էլ ո՞ւմ մասին կարող է լինել, բացի Ռոբեսպիերից։ Զայնն ավելի ու ավելի բարձրացնելով, հռետորը շարունակում է.

— Ես կտամ ձեզ այդ մարդկանց անունները, որոնք ժողովրդական ընկերություններում հայրենասերների բերանը փակում են...

Սակայն նա ոչ ոքի անունը չի տալիս։ Մի քանի վայրկյան ճնշող լռություն է տիրում։ Կատաղությունը պայքարում է սարսափի դեմ։ Վերջապես, ինքն իրեն տիրապետելով, նա խոսում է ավելի հանգիստ տոնով, ասես ներկա գտնվող մարդկանց առաջ արդարանալով.

— Ահա արդեն երկու ամիս է, որ ես ինձ զսպում եմ, բայց սիրտս այլևս համբերել չի կարող։ Ես գիտեմ, թե նրանք ինչ մտադրություն ունեն. բայց ես պաշտպաններ կգտնեմ։

— Այո՛, այո՛,— լսվում է մի քանի ձայն,— մենք քեզ կպաշտպանենք։ Ոչնչից մի՛ վախենա, հայր Դյուշեն, խոսի՛ր բացեիբաց։ Մենք ինքներս հայր Դյուշեններ կդառնանք և հարված կհասցնենք։ Խոսի՛ր, մենք քեզ կպաշտպանենք։

Բայց ո՛չ պաշտպանելու խոստումները, ո՛չ նվիրվածության հավաստիացումները չեն կարողանում վախից այլանդակված, այդ դողացող շուրթերին ստիպել ասելու այն անունը, որին բոլորը սպասում են և վախենում այն լսելուց։ Ո՛չ, նրա ուժերը չեն ներում։ Նա կարողանում է մեծ ջանքերով իրենից միայն մեղմացված, գրեթե ներողություն խնդրող մի արտահայտություն դուրս կորզել։ Նա խոսում է «հավանաբար մոլորության մեջ ընկած մի մարդու...» մասին և շփոթված կանգ առնում։ Հետո նա արդեն առանց որևէ ոգևորության, հասկա-

տարով, որ համարձակության բացակայության հետևանքով իրեր ոչնչացրեց սկզբում առաջացած ավյունը, հիշեցնում է, որ այդ մարդը Դեմուլենին պաշտպանում էր։ Նա իր խռովահույզ մտքում որևէ ավելի լուրջ մեղադրանք գտնել չի կարողանում։

Բայց էբերը իր ճառը վերջացնում է նույն կոչով, ինչ որ Դանթոնն։

... Ապստամբությո՛ւն։ Այո, հենց ապստամբությո՛ւն։ Կորդելյերները առաջինն ազդանշան կտան, որը պետք է բոլոր կեղեքիչներին շշմեցնի։

Ճառը, ինչպես և նախորդ ճառերը, ընդունվում է ծափահարություններով։ Բայց հարմար առիթը ձեռքից փախցրին։ Խանդավառությունը վերջացավ։ Բոլորի համար պարզ է, որ եթե նա, իրենց առաջնորդը, իրենց ճանաչված ղեկավարը վախեցավ և չկարողացավ ն ու յ ն ի ս կ ա ն ու ն ն ասել, ապա էլ ի՞նչ հույս կարելի է ունենալ։

Վենսանը, որն ուշադրությամբ դիտում էր լսարանը, տեսնում է ձգված դեմքեր և հածող աչքեր։ Վախեցան։ Կամ թե, թերևս, այստեղ լրտեսնե՞ր կան։ «Ինտրիգանների դիմակները պատռելու» համար նա ակումբում շրջայց է կատարում, պահանջելով անդամատոմսերը ներկայացնել։ Ապարդյուն միջոցառում։ Մի՞թե այդպես էլ չի երևում, որ ամեն ինչ դեռ չբսկրված վերջացավ։

Էբերտիստները զուր էին մասսաների պաշտպանության հետ հույսեր կապում։ Փարիզն ամենևին չշարժվեց։ Հուսահատության մեջ ընկած պարագլուխները փորձեցին Կոմունան գրլխահան անել։ Նրանք ներկայացան քաղաքապետարան մի հայտարարությամբ, թե կազմ ու պատրաստ ամուր կկանգնեն և իրավունքների դեկլարացիան կպահպանեն այնքան ժամանակ, քանի դեռ ժողովրդի թշնամիները չեն ոչնչացված։ Ռակայն Շոմետը, ձախ յակոբինականների՝ Կոմունայի անդամների կարծիքն արտահայտելով, ոչ միայն հրաժարվեց ապստամբությանը հարելուց, այլև դատապարտեց էբերտիստների ավանտյուրան։ Նրանց չպաշտպանեցին նաև սեկցիաները։

Ամեն ինչ կործանվում էր։ Հարկավոր էր շտապ կերպով նահանջի ազդանշան շեփորել։

Այնինչ Հասարակական փրկության կոմիտեն պատրաստվում էր դավադիրներին մահացու հարված հասցնելու։ Կոմիտեի անդամ Կոլո դ՝ Էրբուան հուզված էր։ Բոլորը գիտեին էբերտիզմի նկատմամբ նրա նվիրվածության մասին։ Բայց Կոլոն ի՞նչ կարող էր անել։ Մի ծաղկով գարուն չի գա։ Էբերտիստների հետ միասին հանդես գալ՝ նշանակում էր իրեն կործանել։ Իրեն կործանել չէր ուզում։ Դեհ, ինչ արած, ինչպես հարկն է գործ բռնել չկարողացան, թող իրենք էլ պատասխան տան, իրեն մնում է միայն ձեռքերը լվանալ։ Եվ բռունցքները ջղաձգորեն սեղմելով, կամքի ուժով իր կրակոտ խառնվածքը զսպելով, Կոլոն տեղի է տալիս։ Դեռ ավելին՝ նա նույնիսկ համաձայն է յակոբինականների պատգամավորության գլուխ անցած, որպես պատժող, գնալ Կորդելյերների ակումբը։

Կորդելյերները պատգամավորությունը եղբայրաբար են ընդունում։ Կոլոն ամբիոն է բարձրանում ծափերի որոտի տակ։

— Թող նա, ով Իրավունքների դեկլարացիան վարագույրով ծածկեց,— ասում է Կոլոն,— բռնապետին մեղ ցույց տա։

Նա բացատրում է, որ ներկա ժամանակը հիմնովին տարբերվում է 1793 թվականի մայիսի 31—հունիսի 2-ի օրերից։ Այն ժամանակ ապստամբությունն անհրաժեշտ էր, որովհետև Լեռը ճնշված էր. իսկ այժմ Կոնվենտն ամբողջովին ժողովրդի շահերն է պաշտպանում։ Ընդ որում խռովություն են սերմանում այն ժամանակ, երբ պատերազմ է մղվում, երբ Պիթը ֆրանսիացիների համար հակակառավարական խռովություն է նախագուշակում։

Դողացող էբերը փորձում է ապացուցել, թե ապստամբության մասին խոսելով, ինքն իբր նկատի ուներ մոնտանյարների, յակոբինականների և բոլոր բարի հայրենասերների հետ ավելի սերտ միավորվել միայն։ Կարյեն նույնպես հավատացնում էր, թե թերթերն ամեն ինչ խեղաթյուրել են, թե խոսքը միայն պայմանական ապստամբության մասին էր։ Այդպիսի արտահայտություններն ո՞ւմ կարող էին համոզել։

Կորդելյերները հրաժարվում են մոտ անցյալի իրենց ա-

ռոչեսթերներից։ Նրանք «Կեցցե՞ հանրապետությունը» բացա-
կանչությունների տակ գրկախառնվում են յակոբինական-
ների հետ։ Իրավունքների դեկլարացիան ծածկող վարագույրը
բարձրում — հանում են և պատառ-պատառ անում։ Դրանք հանձ-
նում են Կոլոյին, որը պետք է այդ ավարը Յակոբինյան ակում-
բում ցույց տա։

Նվաստացման խայտառակությունը կործանումից փրկել
չի կարող։ Վանտոզի 23-ին (մարտի 13-ին) Սեն-Ժյուստը
մեկուսարական ճառ է արտասանում, որի յուրաքանչյուր խոս-
քը սրի նման խոցում է։

— Մեղավորներին ձերբակալելու համար արդեն միջոց-
ներ են ձեռք առնվել,— վերջացնում է հռետորը։— Նրանք լիո-
վին շրջապատված են։

Վանտոզի 23-ի լույս 24-ի գիշերը էբերը, Ռոնսենը, Մո-
մորը և ուրիշներ կալանավորվեցին։ Կարյերին առայժմ խը-
նայում էին, խնայում էին միայն այն պատճառով, որ Նան-
տում նրա գործադրած մահապատիժների ուղղությամբ ձեռ-
նարկվող ստուգումները պետք է առաջացնեին նաև լիոնյան
մահապատիժների հարցը։ Այդ բանը կդիպչեր Կոլո դ՝ Էրբուա-
յին, իսկ Կոլոյին դիպչել չէին ուզում։ Կոմիտեի անդամներն
ստիպված էին համաձայնվել որոշ փոխադարձ զիջումների։

Մաքսիմիլիանն առողջանում էր։ Նա արդեն անկողնուց վեր
էր կենում և երկար ժամանակ նստում սեղանի մոտ, բայց լու-
սամուտից գարնանային թարմ օդ շնչելով։ Երբեմն զբոսնում
էր Էլեոնորայի ուղեկցությամբ, զվարճանալով արևի ծիծա-
ղախիտ ճառագայթներով։ Մոտենում էր ժերմինալ ամիսը՝
բնության բողբոջման ժամանակը, նրա աստիճանական վե-
րակենդանացման ժամանակը, գարնան հյութերի ժամանակը։

Տնեցիներն աշխատում էին Մաքսիմիլիանին պաշտպա-
նել արտաքին ներխուժումներից։ Բայց ինչպե՞ս. մի՞թե նա
այժմ կարող էր մեկուսացված ու հանգիստ մնալ։ Նա Սեն-
Ժյուստի հետ տեսնվում էր ամեն օր։ Նա միայն այժմ էր ըս-
կրռում ինչպես հարկն է հասկանալ ու գնահատել այդ պող-
պատե մարդուն, որի ճանապարհն այդպես սերտորեն միա-

հյուսվել է իր ճանապարհի հետ։ Սեն-Ժյուստն անխոնջ ու անդրդվելի մարդ էր։ Նրա կարծիքները համընկնում էին Անկաշառելիի կարծիքների հետ։

Վանտոզի 24-ին Ռոբեսպիերը հիվանդությունից հետո առաջին անգամ այցելեց Յակոբինյան ակումբը. նրան օվացիայով դիմավորեցին։ Դեռևս շատ թույլ, նա այնուամենայնիվ խոսք վերցրեց։ Ո՞րն էր նրա մտահոգությունների առարկան։ Նա վախենում էր, չլինի թե էբերտիստներին ջախջախելով, վնասեին չափից ավելի կրակոտ, բայց անկեղծ շատ հայրենասերների։

— Եթե մարդ,— ասաց նա,— շարունակ արիաբար ու անշահախնդրաբար էր վարվում, ես համոզիչ ապացույցներ եմ պահանջում՝ հավատալու, որ նա դավաճան է... Մեծագույն վտանգավորություն կլիներ հայրենասերներին դավադիրների դործին կպցնելը...

Ինչպե՞ս ազնվաբար և խելացիորեն ասվեցին այդ խոսքերը։ Դեմոկրատիայի ուժերը, թերևս, որքա՞ն աղետներից կխուսափեին, եթե Ռոբեսպիերը հետագայում այդ խոսքերը հիշեր։

Ժերմինալի 1-ին (մարտի 21-ին) սկսվեց էբերտիստների դատավարությունը։ Դա տիպիկ քաղաքական մի դատավարություն էր, որը սկսվելուց առաջ թե՛ դատախազի, թե՛ երդվյալ ատենակալների, թե՛ դատարանի նախագահի համար ամեն ինչ պարզ էր՝ նախադրյալներից մինչև եզրակացությունները և պատժամիջոցները ներառյալ։ Մեղադրյալի աթոռին նստել էին ընդամենը քսան մարդ, որոնց թվում էին էբերը, Ռոնսենը, Վենսանը, Կլոտսը և Մոմորոն. նրանց միացրին կասկածելի օտարերկրացիների, գործարանատերերի և բանկիրների՝ Կոկին, Պերեյրային, Դեֆյեին, Պրոլիին և նրանց հետ կապված դրող Դյուբյուիսոնին։ Բացի դրանցից, դատի էին կանչվել մի շարք երկրորդական ու պատահական անձնավորություններ։ Էբերտիստներին ամենախղճուկ վիճակում ներկայացնելու համար մեղադրական ակտն այնպես կազմվեց, որ նրա մեջ քաղաքական լուրջ մերկացումները խառնվեցին մանր գողության, կենցաղային անմաքրաբարոյության և այլ նման բաների համար ներկայացվող մեղադրանքների հետ։ Այդ ա-

ա. Ինչպես վերաբերում էր էբերին, որին, ի միջի այլոց, մեղադրում էին... շատրիկներ, օձիքներ և ներքնակներ սեփականացնելու համար, որ մի կին նրան ժամանակավոր օգտագործման էր տվել նրա աղքատության օրերին։

Վիոնատը, Ռոնսենը և Մոմորը իրենց հպարտ ու անկախ էին պահում։ Էբերը ընկճված էր։ Նա հոգնատանջ ու ծերացած էր թվում։ Ահա թե ինչ է հաղորդում Հեղափոխական տրիբունալում խոնված ականատեսների խոսակցությունների մասին տեղեկություններ հավաքող գործակալը.

«Ասում են, թե էբերը իր բաղկաթոռում նստած արտասանում է, ինչպես բրիտանական պառլամենտի անդամները, միայն «այո» ու «ոչ» ասելով և որ նա ավելի շուտ նման է հիվանդի, քան խելոք մարդու։ Այժմ նրան ճնշող հասարակական պատասխանի և այն գրեթե ընդհանուր սիրո հակադրությունը, որը սարսափելի էր նա առաջ, այն բանի ամոթը, որ ընդհանուր ծաղրուծանակի օբյեկտ դարձավ, ինչպես նաև այն դիտակցությունն ունենալը, որ ինքը կործանվում է այնքան մարդկանց կործանելուց հետո՝ այդ ամենը բավական է նրան հիմարության նման ինչ-որ բանով խոցելու համար...»։

Իրոք որ, հասարակական կարծիքը ամբողջովին դավադիրների դեմ էր։ Տրիբունալը շրջապատած բազմությունը դատաքննության երեք օրվա ընթացքում բուռն կերպով ողջունում էր երդվյալ ատենակալների վճիռները և գրեթե բոլոր մեղադրյալների համար մահվան դատավճիռ կայացնելը։

Մահապատիժը տեղի ունեցավ ժերմինալի 4-ին (մարտի 24-ին) Հեղափոխության հրապարակում։ Ժողովուրդը ողողել էր այն փողոցները, որոնցով անցնում էին բանտային բանտիվ սայլերը։ Մահապարտների վրա թափվող հայհոյանքները միաձուլվում էին «Կեցցե՛ հանրապետությունը» բղավոցների հետ։ Բոլոր դատապարտյալները, բացառությամբ էբերի, մահն արիաբար ընդունեցին։

Լրկերտիստների ջախջախումն ու մահապատիժը «դիջոզաթիանների» ոգևորեցին։ Քամիլն արտահայտեց իր մոլեգին ուրախությունը, ծաղրելով վհատված «Հայր Դյուշենին»։ Նրան կրկնեցին Բուրդոնն ու Ֆիլիպոն։ Նշանակում է, ճշմարտու-

թյունը իրենց կողմն էր։ Երբեք մոլորությունն այդքան անհիմն չէր եղել։ Մի՞թե նրանք մոռացել են, թե Անկաշառելին Նիվոզի 19-ին ինչ ասաց, իսկ հետո մեկ ամիս անց կրկնեց։ Մի՞թե կարելի էր մոռանալ Սեն-Ժյուստի դեմքի արտահայտությունը, երբ նա իր վանտոզյան զեկուցման ժամանակ մի ակնարկ նետեց, որից հետո բոլորի գլուխները շուռ եկան դեպի Դանտոնի կողմը։

— Մեր մեջ կա մի մարդ,— նշեց Սեն-Ժյուստը,— որն իր սրտում դիտավորություն ունի ստիպել մեզ նահանջելու և խափանել մեր գործունեությունը։ Նա սաստիկ դիրացել է ժողովրդական աղետների հաշվին, նա հանցագործությամբ տարված վայելում է բոլոր բարիքները, վիրավորում ժողովրդին և հաղթական երթ կատարում...

Մի՞թե այդ ռեպլիկայից շատերի սրտերը չպետք է սառույց կտրեին, թեև խոսքը միայն մի մարդու մասին էր։

Սակայն, եթե Դանտոնը և նրա բարեկամները ուզում էին անցած սարսափները մոռանալ և իրենց հաղթահերոսներ զգալ, ապա Ռոբեսպիերը նրանց թույլ չտվեց այդպես վարվելու։ Ժերմինալի 1-ին, այն օրը, երբ էբերտիստների դատավարությունն սկսվեց, նա Յակոբինյան ակումբում այնպիսի խոսքեր ասաց, որոնք «զիջողամիտների» համար հույսեր չէին թողնում։

— Եթե վաղնեթ կամ նույնիսկ այսօր,— ասաց Ռոբեսպիերը,— այդ վերջին կլիկը չոչնչանա, ապա մեր գործերը կչարչարվեն, ձեր կանայք ու երեխաները կմեռնեն, հանրապետությունը մասերի կբաժանվի, իսկ Փարիզը սովից խեղդամահ կլինի։ Դուք կզոհվեք թշնամիների հարվածներից, իսկ գալիք սերունդները կտառապեն բռնապետության լծի տակ։ Բայց ես հայտարարում եմ, որ Կոնվենտը հաստատապես վճռել է ժողովուրդին փրկել և ազատության համար վտանգավոր բոլոր կլիկները ոչնչացնել։

Այն խստությունը, որով Ռոբեսպիերը դրեց «վերջին կլիկի» հարցը, շատ լուրջ հիմքեր ուներ։

Ռոբեսպիերիստների և դանտոնիստների միջև եղած հակասություններն իրենց վերջնակետին հասան և սպառնում էին

կատարությունը կատարյալ փակուղու մեջ մտցնել։ «Ջաֆֆարները» արտաքին քաղաքականության ասպարեզում տանում էին զնգի կապիտուլյանտական հաշտություն, ներքին բարոյականության ասպարեզում՝ դեպի տեռորի վերացում և հեղափոխության դադարեցում։ Այդ ամենը նշանակում էր ուղղակի հրաժարում ժողովրդի՝ այդպիսի արյան ու նյութական զոհողությունների գնով ձեռք բերված բոլոր նվաճումներից։ Եվ դանտոնիստներն այդ հակահեղափոխական ծրագիրը համառորեն առաջ էին մղում այն օրերին, երբ Ռոբեսպիերին վերջնական հալթանակը թվում էր ոչ միայն հասանելի, այլև արդեն մոտիկ։ Այդ պայմաններում երկու ֆրակցիաների դուրսկցությունը անհնարին էր դառնում։ Եվ որովհետև ժողովրդական զանգվածների վրա հենվող Ռոբեսպիերի ձեռքում շատ ավելի մեծ ուժեր էին կենտրոնանում, քան Դանտոնի ձեռքում, միայն մեկ ավարտ կարող էր լինել՝ Դանտոնը և նրա ծրագիրը պաշտպանող բոլոր մարդիկ ենթակա էին անխուսափելի վերացման։

Ուրիշներից ավելի շուտ այդ եզրակացությանը եկան երկուսին վճռականությամբ օժտված մարդիկ՝ Բիլո-Վարենը և Սեն-Ժյուստը։ Դեմուլենին սիրող և Դանտոնի անցած վաստակները շատ լավ հիշող Ռոբեսպիերը միանգամից խիստ վճիռ չարտանել չէր կարող։ Նույնիսկ «զիջողամիտներին» ամբողջովին չախջախելով, նույնիսկ նրանց կորստյան դատապարտելով, նա ինքն իր մեջ իր երկու նախկին բարեկամների համար ապաստան էր թողնում։ Երբ Բիլոն, Կոմիտեում հանդես գալով, ասաց՝ անգամ առաջարկեց Դանտոնին և Դեմուլենին ոչնչացնել, Ռոբեսպիերը կրքոտությամբ բացականչեց.

Նշանակում է, դուք ուզում եք լավագույն հայրենասերներին կործանե՞լ։

Սակայն քողն աստիճանաբար ընկնում էր Անկաշառելիի աչքերից։ Նոր դիտումները և նյութերը նրան անշեղորեն բերում էին ճակատագրական եզրակացության։ Ըստ երևույթին, արդեն 1794 թվականի փետրվարին նա լիովին գիտակցեց զոհաբերության անխուսափելիությունը։ Էբերտիստների մա-

Պապատժին հաջորդած դեպքերը ամրապնդեցին նրա ընդու-
նած որոշումը։

— Հասարակական փրկության կոմիտեն Կոնվենտում ճիշ-
թրակոտոր է անում,—Ֆաբրին կալանավորելուց հետո շուտո-
դառնորեն ասաց Դեմուլենը։

Այժմ նա նորից գրիչ վերցրեց։ Նա գրում էր «Հին կորդել-
յերի» № 7-ը։ Համարը կրում էր «Թեր և դեմ, կամ երկու հի-
կորդելյերների զրույցը» բնորոշ անունը։ Հեղինակն այս հա-
մարում չափազանց ուժեղացրեց իր հարձակումները Հասա-
րակական փրկության կոմիտեի «արտակարգ մեծ իշխանու-
թյան», հեղափոխական կոմիտեների և անձնապես Կոլո դ՝ Էր-
բուայի, Բարերի, վերջապես, Ռոբեսպիերի վրա։ Նա հասարա-
կական անվտանգության կոմիտեի անդամներին «զարհուրել-
եղբայրներ» էր անվանում, իսկ նրանց գործակալներին՝ «սա-
լարկուղիների ծովահեններ»։ Ինչ վերաբերում է Ռոբեսպիերին,
ապա Քամիլը նրա համար իր կծու ծաղրանքները չխնայել

«Եթե դու չես տեսնում, թե ժամանակն ինչ է պահանջում,
եթե դու խոսում ես առանց մտածելու, եթե դու քեզ ի ցույ-
ես հանում, եթե դու քեզ շրջապատող մարդկանց վրա ամենաչ-
ուշադրություն չես դարձնում, ապա ես քեզ զրկում եմ խելաց-
մարդու անունից»... —այսպես էր սկսում ժուռնալիստն Ան-
կաշառելիին նետված իր մարտահրավերը։ Նա նրան նմանեց-
նում էր Կատոնին, որը հանրապետականից ավելի խիստ բա-
րոյականություն պահանջելով, քան թույլ էր տալիս նրա ժա-
մանակաշրջանը, դրանով իսկ միայն ազատության կործան-
մանն աջակցեց։ Նա նրան ծաղրում էր այն բանի համար, թ
Ռոբեսպիերը քննարկում էր անգլիական սահմանադրությա-
թերությունները. նրան կշտամբում էր հակասական ելույթ-
ների, «ավելորդ բառաժայթքման» համար. ըստ էության
նա աշխատում էր ապացուցել, որ Անկաշառելին Պիթի... չ-
բաղացին ջուր էր լցնում։ Ընդ որում Դեմուլենը պարզ հասկաց-
նում էր, որ Ռոբեսպիերին ծաղրելով և նրան քաղաքակա-
վիրավորանքներ հասցնելով, ինքը վրեժ է առնում այն բա-
համար, որ Մաքսիմիլիանը, փորձելով նրան փրկել, նրա ին-
նասիրությունը վիրավորեց։ «... Ռոբեսպիեր, դու մի քա-

տարի առաջ Յակոբինյան ակումբի ամբիոնում ապացուցեցիր, որ ուժեղ կամք ունես. դա տեղի ունեցավ այն օրը, երբ դու քո սաստիկ շնորհաշրջությունի պահին ամբիոնին կառչեցիր և պոռացիր, որ քեզ պետք է սպանել կամ ուշադրությամբ լսել. բայց դու մի սարուկ էիր այն օրը, երբ թույլ տվեցիր քո առաջին իսկ խոսքից հետո քեզ այնպես շեշտակի ընդհատել «Այրելը պատասխանել չէ» արտահայտությամբ...»։ Եվ հետո հենց այդ մասին ժուռնալիստը խոսում էր ավելի պարզորոշ կերպով, ինքն իրեն դիմելով. «Արդյոք դու կհամարձակվե՞ս նման համեմատություններ անել և Ռոբեսպիերին ծիծաղելի դրության մեջ դնել իբրև պատասխան այն ծաղրանքների, որ նա մի որոշ ժամանակից ի վեր երկու ձեռքով թափում է քո գլխին»։

Դեմուլենին վիճակված չէր տեսնել իր թերթի վերջին համարը. նրա հրատարակիչ Դեգենը կալանավորվեց, իսկ թերթը բռնագրավվեց։ Բայց հենց այդ հանգամանքների հետևանքով թերթը կարդացին այն մարդիկ, որոնց դեմ այն ուղղված էր՝ երկու կառավարական կոմիտեների անդամները։

Իր բառավարժություններով Դեմուլենը վերջնականապես իր համար մահվան դատավճիռ ստորագրեց։ Նա համարձակվեց կառավարությունը վարկաբեկել, դեռ ավելին՝ նա համարձակվեց Անկաշառելիին ծաղրել, ծաղրել լկտիաբար և անարդարացիորեն։ Այդպիսի վիրավորանքը Մաքսիմիլիանը ոչ ոքի չէր ներում։ Նա հասկացավ, որ իր դպրոցական ընկերը անուղղելի է, որ ծուղակը նրան իր մեջ ամուր փակեց, որ նա ինքը ոչնչացրեց ճահճուտից իրեն փրկելու ամեն տեսակ հնարավորություն։ Բայց, Դեմուլենից ձեռք քաշելով, Ռոբեսպիերը կարո՞ղ էր արդյոք չզոհաբերել այն մարդուն, որին ճշտորեն համարում էր թշվառ ժուռնալիստին թե՛ մոլորեցնողը, թե՛ ոգեշնչողը...

Եթե Դեմուլենը մինչև վերջ պայքարում էր կատաղությամբ, ապա կար մի մարդ, որի վարմունքը հավասարապես շփոթեցնում էր ինչպես բարեկամներին, այնպես էլ թշնամիներին. այդ մարդը ֆրակցիայի առաջնորդ Ժորժ Ժակ Դանտոնն էր։ «Եթե նա բոլորովին չի կուրացել ու խլացել, ապա նա ինչի՞

մասին է մտածում»,— հարցնում էին իրենց դանտոնիստների լիդերները։ Իրոք որ, մի որոշ ժամանակից ի վեր Դանտոնի գործելակերպը թվում էր բոլորովին անհասկանալի, դեռ ավելին՝ բոլորովին անտրամաբանական։ Նա, որը գլխավորում էր ամբողջ խումբը, նա, որի համար ամբողջ շփոթն ստեղծվեց, նա կամ յուրայիններին դավաճանում էր, ինչպես տեղի ունեցավ Ֆիլիպոյի, իսկ հետագայում նաև Դեմուլենի հետ, կամ թե նույնիսկ աջակցում էր... էբերտիստներին։ Իսկ այնուհետև, էբերտիստների մահապատժից հետո նա հանկարծ լիակատար լեթարգիայի մեջ ընկավ։ «Դանտոնը քնած է,— ասում էր Քամիլ Դեմուլենը,— դա աոյուծի քուն է, նա կարթնանա՝ մեզ պաշտպանելու»։ Բայց հսկան արթնանալու միտք էլ չուներ։ Դեռ առաջներում Դանտոնը լարված խոսում էր, որ ինքը պայքարելուց հոգնել է, որ ուզում է պետական գործունեությունից հրաժարվել և գնալ իր խաղաղ դաստակերտը, իր երիտասարդ կնոջ, դաշտերի և ծառերի մոտ՝ հանգստանալու։ Կրակոտ բնավորություն ունեցող մարդու բերանից այդպիսի արտահայտություններ լսելը, երեսունհինգ տարեկան «ծերունու» մոտ այդպիսի մտքերի հանդիպելը անհավատալի էին թվում։ Ռոբեսպիերիստները նրան չէին հավատում և ճիշտ էին վարվում։

Իրականում Դանտոնը երկար ժամանակ շատ խորամանկ ու նուրբ քաղաքականություն էր վարում։ Իր ընկերներից շատ ավելի խորաթափանց լինելով, նա հասկանում էր Ռոբեսպիերի հզորությունը։ Այդ պատճառով նա երբեք բացահայտորեն նրա դեմ հանդես չէր գալիս։ Նա ձգտում էր էբերտիստների հետ ընդհանուր լեզու գտնել, ճիշտ հաշվի առնելով, որ կրիտիկական պահին նրանց հետ կնքած դաշինքը կարող է ռոբեսպիերիստներին այնպիսի մի ուժ հակադրել, որը նրանց կստիպի լրջորեն մտածել։ Դանտոնը որոշ հույս էր դնում նաև միջազգային քաղաքականության դեպքերի վրա։ Նա կողմնորոշվում էր այն բանով, որ Անգլիայում իշխանության գլուխ կանգնի լիբերալ օպոզիցիան Ֆոքսի գլխավորությամբ, որը կարող էր առաջիկա ընտրությունների ժամանակ պահպանողական Պիթին փոխարինել. Ֆոքսի կառավարություն կազմվելու դեպքում կարելի կլիներ հաշտության հարց դնել,

իսկ հաշտությունը «զիջողամիտներին» տալիս էր ռոբեսպիերիստների դիկտատուրայի համեմատությամբ բոլոր առավելությունները։ Այդ բոլոր հաշիվները չարդարացան։ Անգլիայում ընտրությունների ժամանակ Պիթը հաղթեց, որը պատերազմը շարունակել էր նշանակում, իսկ էբերտիստները իրենց անխոհեմ ելույթի և կառավարության կայծակնային պատասխանի հետևանքով միանգամից հաշվից դուրս գցվեցին։ Հենց այդ ժամանակ էլ Դանտոնի շուրջն ամայություն առաջացավ, որը նախագուշակում և այնպես ձգտում էին ստեղծել ռոբեսպիերիստները։ Դանտոնը, որը երազում էր Ռոբեսպիերին չեզոքացնել, հենց ինքը մեկուսացվեց։ Այդ բանը նա լավ հասկացավ, ավելի լավ, քան նրան շրջապատող բոլոր մարդիկ, և, հասկանալով, հուսահատության ապատիայի մեջ ընկավ։

«Ջափավորների» լիդերներից ոմանք իրենց հուսադրում էին, թե դեռ ամեն ինչ կորած չէ, թե այժմ գլխավորը Դանտոնին Ռոբեսպիերի հետ հաշտեցնելն է։ Հաշտեցման հնարավորությանը հավատալով, մի քանի հանդիպում կազմակերպեցին։ Վերջին հանդիպման ժամանակ Դանտոնը փորձեց նախաձեռնությունն իր վրա վերցնել։ Նա հավատացնում էր, թե իր համար միշտ ատելության զգացումը խորթ է եղել և ինքը չի կարողանում հասկանալ այն անտարբերությունը, որով մի որոշ ժամանակից ի վեր իրեն վերաբերվում է Ռոբեսպիերը։ Անկաշառելին լուռ էր մնում։ Այն ժամանակ Դանտոնն սկսեց քննադատել Բիլո-Վարենին և Սեն-Ժյուստին, երկու «շառլատաններին», որոնց ձեռքն էր ընկել իբր Մաքսիմիլիանը։

— Հավատա ինձ, ազատվիր ինտրիգից, միացիր հայրենասիրներին, համախմբվենք ինչպես առաջ...

Ռոբեսպիերն այդ թեման պաշտպանելու ցանկություն չբնդունեց.

— Քո բարոյախոսությամբ,— ասաց նա տեսական լռությունից հետո,— երբեք մեղավորներ չէին լինի։

— Իսկ ինչ, մի՞թե դա քեզ համար հաճելի չէր լինի,— արագ առարկեց Դանտոնը։— Պետք է միապետականներին ճնշել, բայց մեղավորին չշփոթել անմեղի հետ։

Ռոբեսպիերը մռայլ պատասխանեց.

— Իսկ քեզ ո՞վ ասաց, թե մահվան է տրվել թեկուզ մեկ անմեղ մարդ։

Այդպիսի պատասխանն սպառնալից էր հնչում։ Դանտոնը ձայնը կտրեց։ Լռեցին նաև բոլոր մնացածները։ Շուտով Անկաշառելին ընկերությունից հեռացավ։ Մնացածները իրար նայեցին։

— Սատանան տանի՛,— դացականչեց Դանտոնը։— Դրությունը վատ է. մենք պետք է մեզ ցո՛ւյց տանք, առանց մեկ բոպե իսկ կորցնելու։

Բայց այս խոսքերն ասող մարդը շարունակում էր անգործության մատնված մնալ։ Միաժամանակ կոմիտեները գործում էին և գործում էին ամենայն վճռականությամբ։ Հաշվի առնելով, որ դանտոնիստները Կոնվենտում զդալի ազդեցություն ունեն, որ նրանց դրածո Տալյենը Կոնվենտի նախագահ ընտրվեց, այն ժամանակ, երբ Դանտոնի բարեկամ Լեժանդրը Յակոբինյան ակումբի նախագահ դարձավ, կոմիտեները որոշեցին հարվածը հասցնել արագորեն, հանկարծակի և բուն սրտին։ Ռոբեսպիերը Դանտոնից և Դեմուլենից հեռանալով, Սեն-Ժյուստին հարուստ նյութեր տվեց մեղադրական ակտը կազմելու համար։

Ժերմինալի 10-ի (մարտի 30-ի) երեկոյան կայացավ երկու կոմիտեների համատեղ նիստը։ Հենց այստեղ էլ կազմվեց ծրարի մի պատառիկի վրա գրված այն հրամանը, որը վավերացվեց տասնութ ստորագրությամբ և որոշեց «զիջողամիտների» ֆրակցիայի հետադա ճակատագիրը։

Ժերմինալի 10-ի լույս 11-ի գիշերը Քամիլ Դեմուլենը, երբ պառկում էր քնելու, մի քանի հրացանի կոթի շխկոց լսեց։ Կասկած լինել չէր կարող՝ այդպիսի ժամանակ միայն մեկ նպատակով էին դալիս։ Քամիլը նետվեց կնոջ գիրկը, գորովանքով համբուրեց օրորոցում խաղաղ քնած մանկանը և անձամբ գնաց դուռը բաց անելու Հասարակական անվտանգության կոմիտեի պատգամավորների առաջ։ Նրան տարան Լյուքսեմբուրգյան բանտը։ Հենց այդտեղ էլ միևնույն ժամին և նույն հրամանի հիման վրա բանտարկեցին Դանտոնին, Յի-

լիպոյին և Դելակրուային։ Դանտոնը, որն սկզբում կալանավորման հնարավորությանը չէր հավատում, կարծելով, թե իր նկատմամբ ոտնձգություն անել չեն համարձակվի, հետագայում հաշտվեց իր ճակատագրի հետ։ Երբ բարեկամներից մեկը նրան խորհուրդ տվեց փախչելու, նա պատասխանեց.

Ինձ ավելի շատ դուր է գալիս գիլյոտինվել, քան ուրիշներին գիլյոտինել,— և ապա ավելացրեց՝ «Մի՞թե կարելի է սենտիկան կոշիկների ներբաններով հայրենիքը հետը տանել» հեռապայում անմահ դարձած արտահայտությունը։

Այդքան վճռական քայլ անելով, կոմիտեները բնավ համոզված չէին, որ լիակատար հաջողություն կունենան։ Նրանք ապստամբում էին Կոնվենտի դիմադրությանը, և սպասելիքները նրանց չիասեցին։ Դելակրուային հաջողվեց նամակ ուղարկել Լեժանդրին, և արդեն վաղ առավոտյան նախկին մսագործը գործից տեղյակ էր։ Նա շատ ակտիվ գործունեություն ծավալեց և ամենից առաջ նախապատրաստեց իր համախոհին, Կոնվենտի նախագահ Տալյենին։ Ժերմինալի 11-ի (մարտի 31-ի) նիստի հենց սկզբին դեպուտատներից մեկը պահանջեց, որ երկու կոմիտեները նիստին ներկա լինեն։ Ժողովը համապատասխան հրաման տվեց։ Այն ժամանակ Լեժանդրն ամբիոն բարձրացավ և հուզված ասաց.

Քաղաքացիներ, այս գիշեր կալանավորել են այս ժողովի չորս անդամների. նրանցից մեկը Դանտոնն է։ Ես մյուսների անունները չգիտեմ, դե մեր ինչի՞ն են պետք անունները, եթե նրանք մեղավոր են։ Բայց ես առաջարկում եմ նրանց կանչել այստեղ՝ Կոնվենտ, և նրանց մենք ինքներս կմեղադրենք կամ կարդարացնենք... Ես հավատում եմ, որ Դանտոնն այնպես անբասիր է, ինչպես ես ինքս։

Տրտունջ լսվեց, և ինչ-որ մեկը պահանջեց, որ նախագահը կարծիքների ազատություն պահպանի։

Այո,— պատասխանեց Տալյենը,— ես կարծիքների ազատություն կպահպանեմ, յուրաքանչյուրը կարող է ասել ինչ-որ մտածում է, մենք բոլորս այստեղ մնում ենք, որ ազատություն փրկենք։

Դա ուղղակի մի խրախուսանք էր Լեժանդրին և սպառնա-

լիք նրա թշնամիների համար։ Հանդես եկավ դեպուտատ Ֆաբյոն՝ զայրացած Լեժանդրի առաջարկությունից. այդ առաջարկությունն արտոնություն էր ստեղծում։ Չէ՞ որ ժիրոնդիստներին և շատ ուրիշների չլսեցին նրանց բանտ տանելուց առաջ։ Էլ ինչո՞ւ պետք է երկու տարբեր մոտեցում լինի։

Աղմուկ սկսվեց։ Եվ այդ ժամանակ հանկարծ գոռոցներ լսվեցին.

— Կորչե՛ն դիկտատորները։ Կորչե՛ն բռնապետները։

Ռորեսպիերը, գունատ, բայց հանգիստ, սպասում էր և ուշադրությամբ ականջ դնում։ Երբ դրությունն սկսեց սպառնալից բնույթ ստանալ, նա խոսք վերցրեց.

— Այստեղ տիրող հուզմունքից հեշտ է նկատել, որ քննարկվող հարցը բավական կարևոր է. և իրոք, խոսքը այն բանը պարզելու մասին է, թե արդյոք այժմ մի քանի մարդ հայրենիքին կհաղթե՞ն... Լեժանդրը, ըստ երևույթին, կալանավորված անձնավորությունների ազգանունները չգիտի, բայց ամբողջ Կոնվենտը դրանք գիտի։ Կալանավորվածների թվում է Լեժանդրի բարեկամը՝ Դելակրուան։ Իսկ ինչո՞ւ նա ձևանում է, թե այդ չգիտի։ Նա այդ բանն անում է հուսկանալով, որ Դելակրուային չի կարելի պաշտպանել առանց լսիրշություն կատարելու։ Նա Դանտոնի անունը տվեց այն պատճառով, որ, հավանորեն, կարծում է, թե իբր այդ անվան հետ ինչ-որ արտոնություն է կապված։ Ոչ, մենք ոչ մի արտոնություն չենք ուզում, մենք ոչ մի կուռք չենք ուզում։ Այսօր մենք կտեսնենք, կկարողանա՞ արդյոք Կոնվենտը խորտակել կարծեցյալ, վաղուց փտած կուռքը, թե վերջինս, կործանվելով, կճզմի Կոնվենտն ու ֆրանսիական ժողովուրդին... Ես հայտարարում եմ, որ ամեն ոք, ով այս պահին դողում է, հանցավոր է, որովհետև անմեղապարտ մարդիկ երբեք հասարակական հսկողությունից չեն վախենում։

Թնդաց ծափահարությունների որոտը։ Հռետորը տիրում է Կոնվենտի տրամադրությանը։ Նա շարունակում է.

— Ինձ էլ էին ուզում վախեցնել. ինձ ուզում էին հավատացնել, թե Դանտոնին մոտեցած վտանգը կարող է դիպչել նաև ինձ։ Դանտոնի բարեկամները ինձ նամակներ էին ուղարկում, իրենց խոսքերով ինձ ձանձրացնում։ Ես հայտարարում

եմ, որ եթե, իսկապես, իբր Դանտոնի վտանգը պետք է դառնա նաև իմ վտանգը, ապա ես դա հասարակական աղետ չեմ համարի։ Ես ի՞նչ գործ ունեմ վտանգի հետ։ Իմ կյանքը պատկանում է Հայրենիքին, իմ սիրտը երկյուղ չունի, և եթե ինձ վիճակվեր մեռնել, ապա ես կմեռնեի առանց նախատինքի ու անարգանքի։

Է՛լ ավելի միահամուռ ծափահարություններ ծածկեցին Անկաշառելիի վերջին խոսքերը։ Նա արդեն լիովին տիրել էր լսարանին։

— Հենց այժմ,— վերջացնում է Ռոբեսպիերը,— մեզ հարկավոր են մի որոշ արիություն և հոգու վեհություն։ Ստոր ու հանցագործ մարդիկ շարունակ վախենում են իրենց նմանների կործանումից, որովհետև իրենց առաջ իբրև անջրպետ մի չարք մեղապարտներ չունենալու դեպքում նրանք վտանգի համար ավելի մատչելի են մնում. բայց եթե այս ժողովում ստոր հոգիներ կան, ապա այստեղ հերոսական հոգիներ էլ կան, որովհետև դուք տնօրինում եք աշխարհի ճակատագիրը...

Այդ շատ հմտորեն կառուցված և ժամանակին արտասանված ճառը վճռեց Կոնվենտում տեղի ունեցող պայքարի ելքը։ Ոչ ոք չհամարձակվեց Ռոբեսպիերի խոսքերին առարկել։ Սարսափահար Լեժանդրն իր նախագծից հրաժարվեց և ներողություն խնդրելու մի քանի երկչոտ խոսքեր փնթփնթաց։

Այն ժամանակ Սեն-Ժյուստը վեր կացավ և մեռելային լռության մեջ մեղադրական ակտը կարդաց։

Այդ փաստաթղթի հիմքը կազմում էին Ռոբեսպիերի նախնական ուրվագրերը։ Մեղադրական ակտն այնպես էր կազմվել, որ Դանտոնը և նրա բարեկամները ներկայացվեին որպես դավաճաններ հեղափոխության առաջին իսկ օրերից սկսած։ Հանրությունը հաստատում էր, որ Դանտոնը Միրաբոյի հետ ինտրիգներ էր սարքում, որ նա վաճառվել էր արքունիքին և փորձում էր թագավորի ընտանիքը փրկել, որ նա Դյումուրյեի հետ դավանի բանակցություններ էր վարում և իր վարմունքով Ժիրոնդիստներին աջակցում։ Այնուհետև Սեն-Ժյուստը ցույց տվեց օգոստոսի 10-ի, մայիսի 31-ի և հունիսի 2-ի մեծ օրերի ընթացքում շատ դանտոնիստների դիրքավորումների երկիմաստությունը։ Նա չմոռացավ հիշելու մեղադրյալների կամպա-

նիան հօդուտ «հաշտության» ու «դիմադրության», նրանց գաղտնի դիմադրությունը հեղափոխական բոլոր միջոցառումներին, նրանց կապը սրիկաների և կասկածելի օտարերկրացիների հետ։ Սեն-Ժյուստն առանձնապես խստորեն նշավակեց Դանտոնի օպորտունիզմը։

— Իբրև տափակամիտ մի հաշտարար, դու ամբիոնում քո բոլոր ճառերն սկսում էիր որոտալից ճայթյունով, բայց վերջացնում ճշմարտության և ստի գործարքներով... Դու ամենին չի հարմարվում էիր... —Դժվար էր ավելի դիպուկ խոսքերով բնութագրել Դանտոնի քաղաքական գծի հիմքը։

Սեն-Ժյուստի մեծ ճառի վերջավորությունը սարսափելի մի նախազգուշացում էր այն մարդկանց համար, ովքեր չէին հասկանում ընթացիկ ժամանակի սրությունը։

— Հանցագործության օրերն անցան. վա՜յ նրանց, ովքեր կսկսեին նրան պաշտպանել։ Հանցագործների քաղաքականությունը մերկացված է. ուրեմն թող կորչեն բոլոր հանցագործ մարդիկ։ Հանրապետությունն ստեղծում են ոչ թե թուլակամության միջոցով, այլ դավաճանության մեջ մեղավոր բոլոր մարդկանց դեմ ուղղված մոլեգնորեն խիստ, անդրդվելիորեն խիստ միջոցներով։

Ժողովը տվեց պահանջված գլուխները։ Կոնվենտում պարտիան շահեցին։

Մնում էր խաղալու զարհուրելի խաղի վերջին մասը՝ Հեղափոխական տրիբունալի պարտիան։

Իհարկե, Դանտոնի դատավարությունը նույն չափով քաղաքական մի դատավարություն էր, ինչպես և էբերի գործը։ Իհարկե, այստեղ, ինչպես և այնտեղ, մեղադրյալների ճակատագիրը նախօրոք վճռված էր, և նրանց դատավճիռն արդեն վաղուց կազմել ու ստորագրել էին։ Ըստ էության, Հեղափոխական տրիբունալը պետք է միայն կատարեր այն, ինչ կառավարական կոմիտեները վճռել էին և Կոնվենտը հաստատել։ Եվ այնուամենայնիվ, դանտոնիստների դատավարությունն անցկացնելն անհամեմատ ավելի բարդ գործ էր թվում, քան էբերին և նրա կողմնակիցներին գիլյոտինման ուղարկելը։ Այստեղ

սակայն էր ամենից առաջ ինքը՝ Ժորժ Դանտոնը, կրքոտ, աչքի բռնող, տաղանդավոր և անվախ մի մարդ, մի տրիբուն, որը վայելում էր հեղափոխության ամենատականավոր գործիչներից ու հեռատեսներից մեկի փառքը։ Այստեղ էր կրակոտ ու անհամբերակիր, բայց ընդունակ ու սրամտորեն ծաղրող Քամիլ Դեմուլենը։ Այստեղ էր խորամանկ ու նենգ Ֆաբր դ՝ Էգլանտինը, կային նաև քաղաքական ինտրիգանների և հռետորական պերճախոսության գործում փորձված ուրիշ գործիչներ։ Այդպիսի մարդկանց սպանել հնարավոր էր, բայց նրանց մահից առաջ լեգենդն զգալիորեն ավելի դժվար էր թվում։ Այդ հանգամանքը Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստը կանխատեսեցին, ժամանակին մեր առնելով բոլոր միջոցները՝ խանգարելու, որ դատավարությունը դաժան պայքարի մի ասպարեզ չդառնար։ Եվ այնուամենայնիվ նրանք երկուսն էլ, հավասարապես նաև կոմիտեների մյուս անդամները, սաստիկ զգուշանում էին դատական նիստերի ընթացքի համար։

Դատախազ Ֆուկյե-Թենվիլի խնդիրը հեշտացնելու համար, որը պետք է դատապարտյալներին միանգամից շատ կետերի ու տարվածների գծով հարվածեր, այստեղ, ինչպես և էբերտիստների դատավարության ժամանակ, կազմեցին յուրօրինակ մի «ամբաստանություն», մի ամբողջության մեջ միացնելով տարբեր մեղադրանքների մի քանի առանձին խմբավորումներ։ Գլխավոր «քաղաքական» խմբի մեջ մտնում էին Դանտոնը, Դեմուլենը, Ֆիլիպոն, Էրոն, Դելակրուան և Ֆաբր դ՝Էգլանտինը։ Ֆաբրի միջոցով այդ խումբը կապվում էր սրիկաների՝ Շաբոյի, Բազիրի և Դելոնեի հետ. Էրոն դը Սեշելի միջոցով, որը հավասարապես մոտիկ էր թե դանտոնիստներին, թե էբերտիստներին, նրանց միավորում էին «ուլտրահեղափոխականների»՝ արդեն միասնական դավադրության խմբավորումներից մեկի հետ։ Վերջապես, Դանտոնի և Շաբոյի միջոցով բոլոր դատապարտյալներին մոտեցնում էին օտարերկրյա կասկածելի բանկիրների՝ Ֆրեյ եղբայրների և Գուզմանի հետ, մի հանգամանք, որը գոմագրությանը «օտարերկրյա» երանգավորում էր տալիս։ Բազի դրանից, այդ դատավարությամբ դատվում էր դորմաշոյ և ոգեշիստ, մատակարար դ՝ Էսպանյակը, ինչպես նաև գեներալ Վեստերմանը, որը մասնակցում էր Դյումուրյեի և

Դանտոնի բոլոր ինտրիգներին և հայտնի կողոպտիչի ու պոռ
համբավ ուներ։ Այսպիսով, մեղադրյալների լրակազմը բա
ընտրվեց, և կարելի էր գործն սկսել։

Ժերմինալի 12-ի լույս 13-ի գիշերը Դանտոնին, Դեմուլենին, Դելակրուային և Ֆաբրին Լյուքսեմբուրգյան բանտից տեղափոխեցին Կոնսյերժերի, անմիջականորեն Հեղափոխական տրիբունալի տնօրինության տակ։ Բանտում մեղադրյալները, որ տեղավորված էին առանձին, բայց հարևան մենախցերում, իրենց պահում էին յուրաքանչյուրն իր բնավորության ու խառնվածքին համապատասխան։ Դեմուլենը, հուսալի վիճակից հուսահատության մեջ ընկնելով, նամակներ էր գրում իր սիրելի Լյուսիին, դրանք արցունքներով ողողելով. Դելակրուան շփոթված տեսք ուներ և չգիտեր, թե իրեն ինչպես պահի. թվում էր, թե Ֆաբրը ամենից ավելի շատ անհանդստացած էր իր նոր հինգ գործողությամբ ողբերգության ճակատագրով. Դանտոնը անդադար խոսում էր, և նրա որոտալից ձայնը լսվում էր բոլոր հարևան խցերում։ Նա ափսոսանք էր հայտնում, որ Հեղափոխական տրիբունալի կազմակերպիչներից մեկն է եղել, իր պաշտոնակիցներին «Կայենի եղբայրներ» էր անվանում և իր նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի մասին ամենևին պատրանքներ չէր ստեղծում. «Օ՜հ, գարշելի գազաններ՝։ Նրանք գոռալու են «Կեցցե՞ հանրապետությունը», երբ ինձ տանեն գիլյոտինելու»։

Հենց այդտեղ, Կոնսյերժերիին կից զինվորական հիվանդանոցում պառկած էր մատնիչ Շաբոն։ Երբ նա հասկացավ, որ ամեն ինչ կորած է, որոշեց իրեն թունավորել։ Սակայն նրան բուժեցին, պահելով գիլյոտինի համար։

«... Ռոբեսպիեր, արդյոք դու կկարողանա՞ս կատարել կործանարար մտադրություններդ, որ, անտարակույս, ներշնչեցին քեզ շրջապատող ստոր մարդիկ։ Մի՞թե դու մոռացել ես այն օրերը, որոնց մասին Քամիլն առանց զմայլանքի չէր կարող հիշել։ Ո՞րն է իմ Քամիլի հանցանքը...»։

Գրիչը ձեռքից դուրս սահեց։ Հայացքը կանգ առավ մոմի թրթռացող բոցի վրա։ Լյուսիլը մտածմունքի մեջ ընկավ։

Այո, սա վերջին շանսն է։ Բոլորն իրեն շարունակ ասում են, որ Ռոբեսպիերն իր նկատմամբ անտարբեր չէ։ Հէ՞ ինքը ասում էր նման սիրուն է՝ արցունքները կցամաքեն, իսկ երեսը կարելի է մի թեթև դիմափոշի քսել։ Օ՜հ, իմ Քամիլ։ Ես ի՞նչ չէի անի քեզ համար... Դու պե՛տք է ապրես, դու կապրե՛ս...

Մարերն արագ հաջորդում էին իրար։ Լյուսիլը հիշում է իր պատկերությունը, հետո հանդիպումները։ Ռոբեսպիերը շարունակ իր նկատմամբ այնպես ուշադիր էր, թվում էր, թե իր ներկայությունը նրան ուրախություն էր պատճառում։ Այն մոմանակ ինքն այդ մասին չէր մտածում...

Լյուսիլն աշխատում էր պատկերացնել Ռոբեսպիերին՝ նրա [illegible] տարումը, դեմքը, աչքերը... Աչքե՞րը... Կինը ցնցվում է։ Այդ [illegible] ուշադիր աչքերը, անհատա՛կ ու... անողո՛ք... Ոչ, [illegible] աչքերով մարդը իր ագերսները չի լսի։ Ոչ, նա իրեն [illegible] չի սիրել, նա իրեն սիրել չէր կարող, նա սիրել չի կա[illegible] Քամիլը կորավ։ Կորավ նաև ինքը։ Ամեն ինչ։ Մոմը վառ[illegible] կմարի, և սենյակը կսուզվի անթափանց խավարի մեջ...

Հանդիսատեսն այդ նամակը երբեք չստացավ. այն չուղարկվեց։

Դատավարությունը չորս օր տևեց։ Առաջին օրը Ֆինանսական կավադրության դատաստանը տեսան։ Երկրորդ, հիմնականում Դանտոնի հարցաքննությանը նվիրված օրը քիչ էր մնում ամբողջ դատավարությունը վիժեցման հասցվեր։ Դանտոնը, վերջապես, անգործությունից սթափվելով, իր ճառին նվիրեց ամբողջ կատաղությունն ու ուժը, որոնց միայն նա ընդունակ էր։ Նա ծաղրում էր, սպառնում, անպատկառ խոսքերով պատասխանում։ Նախագահ Էրմանը զուր էր փորձում նրան ընդհատել։ Դանտոնի ձայնը խլացնում էր զանգակի զրնգոցը և վրդովում փողոցում հավաքված բազմությանը։ Նախագահը և դատավորները իրենց շատ վատ էին զգում։ Հասարակական փրկության կոմիտեն, գործի ընթացքին հետևելով, ստիպված անհանգստացավ, որ նույնիսկ Անրիոյին հրաման տրվեց նախագահին ու դատախազին կալանավորել, կասկածելով, որ նրանք փոքրոգություն են ցուցաբերում. սակայն հետո Կոմիտեի անդամները իրենց մտադրությունը փոխեցին և հր-

ռամանը կասեցրին։ Հասարակական անվտանգության կոմ
տեի մի քանի ներկայացուցիչ գնացին տրիբունալ՝ իրենց նե
կայությամբ դատավորներին ու երդվյալ ատենակալներ
աջակցելու։ Դրությունը փրկվեց նրանով, որ Դանտոնը,
ճառի մեջ չափազանց շատ եռանդ ներդնելով, վերջ ի վերջ
ուժասպառ եղավ և սկսեց ձայնը կորցնել։ Նախագահը նրա
առաջարկեց հանգստանալ, խոստանալով հետո նորից խոս
տալ, և հոգնած տրիբունը դրան համաձայնեց։

Այսպես ուրեմն, Ռոբեսպիերի և Սեն-Ժյուստի կասկած
ներն ամենևին էլ նրանց երևակայության ծնունդը չէին՝ «վա
ղուց փտած կուրը» խորտակելն իրականում բոլորովին
հեշտ գործ չէր։

Դատավարության երրորդ օրը սկզբում դատարանին ավ
լի մեծ բարդություններ էր սպառնում, քան նախորդ օր
Բայց հանկարծ նիստը վերջանալու մոտ հոգնատանջ դա
տախազը փրկարար օգնություն ստացավ։

Կառավարությունը Լյուքսեմբուրգյան բանտի մի կալա
նավորից տեղեկություն ստացավ մի դավադրության մասի
որը գլխավորում էր Դեմուլենի բարեկամ գեներալ Արթո
Դիլոնը։ Դավադիրները նպատակ էին դրել բանտն ավերե
տրիբունալում գտնվող դանտոնիստներին փրկել և իշխանու
թյունը գրավել։ Պարզվեց, որ Լյուսիլ Դեմուլենը դավադիր
ներին դրամական օժանդակություն է ցույց տվել, բանտում
գտնվող Դիլոնին հազար էկյու ուղարկելով։ Սեն-Ժյուստը տե
ունեցած դեպքի մասին իսկույնևեթ Կոնվենտին զեկուցեց
Կոնվենտը, որը գրեթե միաժամանակ ստացավ դատապարտ
յալների հախից հազիվ եկող Ֆուկյե-Թենվիլի հուսահատ
կան հարցապնդումը, ընդունեց մի դեկրետ, որը տրիբունալի
թույլ էր տալիս ազգային արդարադատությունն անարգ
ամեն մեկին զրկել վիճաբանություններին մասնակցելուց։

Դեկրետն անմիջապես տրիբունալ հասցրին։ Դա հանգ
ցալուծումն արագացրեց։

Հաջորդ օրը վիճաբանությունները չվերսկսվեցին։ Դատ
խազը երդվյալ ատենակալներին հարցրեց, թե արդյոք նրա

գործի մասին պատկերացում կազմե՞լ են։ Դանտոնը և Դելակրուան խիստ բողոքեցին.

Մեզ ուզում են դատապարտել առանց լսելո՞ւ։ Թո՛ղ դատավորները չխորհրդակցեն։ Մենք բավական ապրել ենք՝ փառքի դրկում հանդչելու, թո՛ղ մեզ կառափնարան տանեն։

Քամիլ Դեմուլենն այն ասոիճան համբերությունը կորցրեց, որ իր պաշտպանական ճառը պատառոտեց, ճմռթեց և գետինը շպրտեց Ֆուկյե-Թենվիլի դլխին։ Այն ժամանակ տրիբունալը, դեկրետը կիրառելով, մեղադրյալներին զրկեց վիճարանությունների մասնակցելու իրավունքից։ Նրանք գրեթե բոլորը մահապատժի դատապարտվեցին։

Մահապատիժը տեղի ունեցավ նույն օրը, ժերմինալի 16-ին (սեպտեմբերի 5-ին)։ Երբ քառանիվ սայլերը բանտից դնում էին կառափնարան, էքսպանսիվ Դեմուլենը, իր հագուստը ծվենոտին անելով, բղավում էր ծաղրող բազմությանը։

Ժողովո՛ւրդ։ Քեզ խաբո՛ւմ են։ Սպանո՛ւմ են քո լավագույն պաշտպաններին։

Դանտոնը փորձեց իր թշվառ բարեկամին խելքի բերել։

Հանգստացի՛ր,— ասում էր նա,— և ձեռք քաշիր այդ սոսկալի խուժանից։

Երբ թափորն անցնում էր Սենտ-Օնորե փողոցով, Դանտոնը, իր արտահայտիչ դեմքը բարձրացնելով դեպի Դյուպլեի տան լուսամուտների փակ փեղկերը, բացականչեց.

Ես սպասո՛ւմ եմ քեզ, Ռոբեսպիեր։ Դո՛ւ կհաջորդես ինձ։— Իր վերջին խոսքերը Դանտոնն ասաց կառափնարանում։

Դու իմ գլուխը ցույց կտաս ժողովրդին,— հրամայական ասաց տրիբունը, դիմելով դահճին։— Նա արժանի է դրան։

Եվ դահիճը հնազանդությամբ կատարեց նրա պահանջը։

Դանտոնի և նրա գլխավոր զինակիցների մահապատժով ավարտվեց «միջին ճանապարհի» որոնումների ժամանակաշրջանը։ Ռոբեսպիերիստները հատեցին յակոբինական նախկին բլոկի ծայրաթևերը։ Դա անհրաժեշտ միջոցառում էր։ Ուստի դանտոնիստներին վերացնելու, որոնք դարձել էին ռեակցիայի ուղերվը, հեղափոխությունը չէր կարող զարգա-

նալ. ընդհակառակը, նրան հետաքրքիր էր սպառնում։ Էբերտիստական ֆրակցիայի ամբոխավարական տարրերը, որոնք մասսաների ուշադրությունը շեղում էին նրանց կենսական խնդիրներից, նույնպես խոչընդոտ էին յակոբինականների հեղափոխական կառավարության համար։ «Ձիջողամիտների» և «ուլտրահեղափոխականների» մերձեցման հնարավորությունը ռեալ վտանգ էր ներկայացնում, որը կարող էր վերջին հաշվով հանգեցնել յակոբինյան հանրապետության կործանման։ Օտարերկրյա գործակալների հետ ներքին պայքարի կապը բարդացնում էր դրությունը, եվրոպական ռեակցիայի ուժերին օգնելով հեղափոխական Ֆրանսիայի դեմ մղվող նրանց պատերազմում։

Սակայն արդյոք օտարերկրյա միասնական դավադրություն գոյություն ունե՞ր, ինչպես կարծում էր Ռոբեսպիերը։ Տվյալներ չկան, որոնք թույլ տային այդ բանը հաստատելու։ Կարելի է կարծել, որ Անկաշառելին իր համար սովորական կասկածամտության հետևանքով չափազանցնում էր իրականում գոյություն ունեցող որոշ հանգամանքների դերը և լիովին ճիշտ չէր պատկերացնում ընդհանուր վիճակը, որը հետո նրանից փոխ առան Սեն-Ժյուստը, Բիլո-Վարենը և ուրիշներ։ 1794 թվականի ձմռան և գարնան դեպքերի մեջ գլխավորը ֆրակցիաների պայքարն էր, որոնց հետևում սոցիալական տարբեր խմբավորումներ էին կանգնած։ Իսկ ինչ վերաբերում է օտարերկրացիներին՝ լրտեսներին և աֆերիստներին, ապա նրանք այդ պայքարն օգտագործում էին իրենց նպատակների համար, կառչելով նրան, բորբոքելով այն և ամեն կերպ նպաստելով Ֆրանսիային թշնամի կառավարությունների մտադրությունների իրականացմանը, կառավարություններ, որոնց նրանք ծառայում էին։

Ժերմինալի առաջին կեսի դատավարություններն ունեցան իրենց շարունակությունը։ Ժերմինալի 21-ին (ապրիլի 10-ին) Հեղափոխական տրիբունալի առաջ կանգնեցին Լյուսիլ Դեմուլենը, Արթուր Դիլոնը և ուրիշներ, որոնք մեղադրվում էին «բանտերում դավադրություն» կազմակերպելու գործով։ Նրանց միացվեցին Էբերի այրին, Փարիզի նախկին եպիսկոպոս

Պարիզ և Անաքսագորաս Շոմետը... Ինչո՞վ կարող էր մ'զանչել այդ աննկուն հայրենասերը, ազքատների ու ճնշվածների պաշտպանը, հեղափոխական կառավարության այդ ամենաչկամ կողմնակիցը։ Մի՞թե մոռացան, որ յակոբինական դիկտատուրան իր ամրապնդման համար զգալի չափով հենց նրան էր պարտական, որ հենց նա հուշակեց այն գաղափարը, որը Ֆրանսիայում դարձրեց վանտոզյան դեկրետների հիմքը։

Ռոբեսպիերը Շոմետին չէր սիրում և նրա հետ ծայրահեղ պայուչությամբ էր վարվում։ Արդյոք նա նախանձո՞ւմ էր նրա ամբավին։ Վախենո՞ւմ էր նրա մրցակցությունից։ Կամ, թերևս, չ՝ կարողանում ներել էբերի հետ ունեցած նրա նախկին մտերմությունը։ Ինչպես էլ լիներ, տվյալ դեպքում Անկաշառին հեղափոխության ամենահավատարիմ զավակներից մեկը մահվան էր տալիս։ Շոմետին ծիծաղելի մեղադրանքներ չ՝ սարքեցին։ Նրան մեղադրում էին Կոմունան Կոնվենտին սպրելու, Պիթից դրամ ստանալու և իր «ապաբրիտանական» գործունեության մեջ։ Չնայած որ Շոմետն իր վրա բերված զրպարտություններից իրեն փայլուն կերպով արդարացրեց, նա ժերմինալի 24-ին (ապրիլի 13-ին) գիլյոտինվեց։ Ինչո՞ւ Ռոբեսպիերն այս դեպքում չհիշեց հայրենասերներին արհեստականորեն դավադիրների գործին միացնելու վտանգի մասին ուղիղ մեկ ամիս առաջ Յակոբինյան ակումբում ասած իր ազնիվ խոսքերը։ Նա կատարեց լուրջ սխալներից մեկը, որի համար հետագայում ստիպված թանկ վճարեց։

Շոմետի հետ միասին մահապատժի ենթարկվեցին Գորսիը, Լյուսիլ Դեմուլենը և դատի ենթարկված ուրիշ անձինք։

Չախչախումն ավարտվեց։ Վանտոզ-ժերմինալի ճգնաժամը հաղթահարվեց։ Սակայն իրականում պայքարը միայն մի պահ դադարեց, բայց արդյոք դադարե՞ց այն։ Ռոբեսպիերը և նրա կողմնակիցները, չնայած իրենց ամբողջ ջանքերին, չկարողացան երկու չախչախված ֆրակցիաների դեմ մղվող պայքարն իր ավարտին հասցնել։ Նշանավոր էբերիստներ Կոլո դ'Էրբուան, Ֆուշեն, Կարյեն և նրանց մոտիկ Բիլո Վարենը ոչ միայն խուսափեցին իրենց բարեկամների ճակատագրից, այլև պահպանեցին նախկին ազդեցությունը։

Ճիշտ այդպես էլ շարունակում էին մնալ Կոնվենտում և քա-
դաքական դեր խաղալ Դանտոնի ամենամոտիկ համախոհ-
ները՝ Լեժանդրը, Տալյենը, Բուրդոնը, Տյուրիոն։ Միաժամա-
նակ Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստը ձախ յակոբինականներ-
նկատմամբ հետևողականություն չցուցաբերեցին, որոնց հե-
դաշնակցելը նրանց համար ուժ ու կայունություն էր ապա-
հովում։ Շոմետի մահապատիժը և մի քանի ուրիշ ձախ յակո-
բինականների կալանավորումը, որ հեղափոխության պաշտ-
պաններին ու բարեկամներին հարված հասցրին, կառավա-
րությունից վանում էին նրան պաշտպանող ժողովրդի ամենա-
չքավոր խավերի զգալի մասին։ Այդ ամենը պետք է ամենա-
մոտիկ ապագայում բարդացներ յակոբինյան դիկտատուրայ-
դրությունը։ Առաջիկայում պետք է նոր մահացու գոտե-
մարտեր լինեին։ Այն, ինչ վերջն էր թվում, իրականում միայ-
սկիզբն էր։ Անկաշառելին պետք է բաժակը մինչև մրուրը խմեր

ԳԼՈՒԽ

ՊՐԵՐԻԱԼԻ ՍԽԱԼՆԵՐ

Ժերմինալն իր հետ տարավ ֆրակցիաները։ Կառավարա-
կան կոմիտեները ազատվեցին իրենց ճնշող օպոզիցիաներից։
Կոնվենտը դարձավ հնազանդ ու երկչոտ. դեկրետներն ընդուն-
վում էին գրեթե առանց վիճաբանությունների։ Դեպուտատ-
ներն աշխատում էին նախաձեռնություն հանդես չբերե-
«Ազգային ածելուն» ուրվականն ստիպում էր լռել և իր մեջ ա-
փոփվել։

Ռոբեսպիերը և նրա զինակիցները ձգտում էին հաղթանակ-
ամրապնդել։ Ուժեղացվեց պետական իշխանության կենտրո-
նացումը։ Մինիստրությունների փոխարեն կազմեցին ամբո-
ջովին Հասարակական փրկության կոմիտեին ենթարկվող տա-
ներկու հանձնաժողով։ Փարիզի կոմունան «զտման» ենթարկ-
վեց, ընդ որում ընտրովիության սկզբունքը սահմանափակվե-
Կոմունայի ղեկավարը վերացված դատախազի փոխարեն դա-
նում էր ազգային գործակալ։ Այդ պաշտոնում նշանակվ-

Պելլանը, փոխարինելով մահապատժի ենթարկված Շոմետին։ Ապա յակոբինական Պաշին Փարիզի քաղաքագլխի պաշտոնում փոխարինեց Ֆլերիո-Լեսկոն։ Սակայն Կոմունայի սոցիալական պատկերը չփոխվեց՝ առաջվա նման նրա մեծամասնությունը ներկայացնում էին Փարիզի պլեբեյական խավերը։ Էբերտիստների մահապատժից հետո շուտով հեղափոխական բանակը վերացվեց, որը, Ռոբեսպիերի կարծիքով, աջակցում էր անարխիային ու ապակենտրոնացմանը։ Ցդուշանալով այն բանից, որ հակակառավարական տարրերը կսողոսկեն ժողովրդական ընկերություններն ու սեկցիաները, զգալիորեն կրճատեցին դրանց թիվը և սահմանափակեցին նիստերի քանակը։ Ըստ էության, Կորդելյերների ակումբը իր գործունեությունը դադարեցրեց։ Յակոբինյան ակումբը իր մասնաճյուղերի հետ միասին մնաց հեղափոխական կառավարության խոսափողն ու դաղափարների միակ տարածողը։

Ամբողջ երկրում կարգ ու կանոնը և հեղափոխական օրինականությունն ամրապնդելու նպատակով գավառական տրիբունալները վերացվեցին. այսուհետև բոլոր լուրջ գործերը ենթակա էին բացառապես Փարիզի հեղափոխական տրիբունալի քննարկմանը։ Վերջինս գործում էր չթուլացող եռանդով։ Ժողովրդի թշնամիների, «նախկին» սպեկուլյանտների և գանձապետների գլուխները մեջընդմեջ թափվում էին գիլյոտինի պատվանդանի մոտ։ Մեկը մյուսի հետևից կառափնարան բարձրացան Սահմանագիր ժողովի դեպուտատներ դ'Էպրեմենիլը, Բարեն, Լը-Շապելյեն՝ տխրահռչակ հակաբանվորական օրենքի հեղինակը, մինիստր, իսկ հետո Լյուդովիկոս XVI-ի պաշտպան Մալերբը և մահապատժի ենթարկված թագավորի քույրը՝ տրքայադուստր Ելիզավետան։

«Հին կորդելյերի» տխուր պատմությունը հիշելով, կոմիտեներն ուժեղացրին մամուլի ճնշումը։ Մամուլը կորցրեց անկախությունը։ Այսուհետև լույս էին տեսնում կառավարության կողմից ֆինանսավորվող կիսապաշտոնական թերթեր միայն։ Թատրոններում բեմադրում էին գրաքննության հավանություն ստացած հայրենասիրական պիեսներ միայն։

Մատակարարման բնագավառում կենտրոնացած միջոցառումների հետևանքով հեղափոխության տարիների ընթաց-

քում առաջին անգամ կարիքն ու քաղցը փոքր-ինչ մեղմացան։ Ամերիկայի Միացյալ Նահանգներից ստացվեց պարենամթերքի առաջին մասնաքանակը։ Ընդլայնվում էին գնումները չորք երկրներում։ 1794 թվականի գարնանացանը հաջողությամբ կատարվեց և լավ բերք էր խոստանում։

Երկրի տնտեսական վերելքի ապահովմանը ձգտելով և պաշտպանունակության բարձրացման մասին հոգալով, հեղափոխական կառավարությունը արդյունաբերության խրախուսման ճանապարհը բռնեց։ Գործին ազնվորեն վերաբերվելու պայմանով արդյունաբերողներին վարկեր ու դրամական նպաստներ էին տրամադրում, նրանց ձեռնարկությունները պետական պահպանության տակ էին առնվում։ Եվ արդեն 1794 թվականի գարնանը կարելի էր նշել արդյունաբերական սրտադրանքի ծավալի զգալի ավելացում, առանձնապես արտադրության՝ պատերազմի հետ կապված ճյուղերում։

Այդ ամենն ուրախացնում էր Անկաշառելիին, նրան ուժ ու կայտառություն տալով։ Նշանակում է, զուր չեն պայքարել։ Նշանակում է, հայրենասերների սրբազան արյունը և թշնամիների սև արյունը անտեղի չեն թափվել։ Ահա այն, անորոշ երազանքը, ավետյաց երկիրը, որը Սահմանադիր ժողովի տարիներին թվում էր այնպե՞ս հեռու, գրեթե անհասանելի։ Այն արդեն շատ մոտիկ է, նրան հասնելու համար բոլորովին քիչ բան է մնում անելու։ Հանրապետական բանակը վճռական հաղթանակ կտանի. ևս մեկ-երկու խումբ դավադիրներ կգիլոտինվեն. ևս մի քիչ ջանքեր կգործադրվեն տնտեսության բնագավառում, ևս մի փոքր անձնազոհություն այնքան երկար ժամանակ համբերած չքավորների կողմից՝ և վե՛րջ։ Ֆրանսիական հաղթանակած ժողովուրդը կգտնի ազատության, հավասարության, եղբայրության փափագելի թագավորությունը, որտեղ խաղաղությունը, արդարությունը և առաքինությունը կլինեն ընդհանուր սկզբունքներ, կեցության հիմքը։ Այն ժամանակ կվերջանան բոլոր սահմանափակումները, բոլոր մաքսիմումները, այն ժամանակ չի լինի կարիք, չի լինի նաև անչափ մեծ հարստություն։ Այն ժամանակ ֆրանսիացիները, ամբողջ մարդկությանը նմանողության համար օրինակ տա-

լով, կոկսեն ապրել ինչպես միասնական, համերաշխ մի ընտանիք։ Այդ ամենը կլինի և կլինի ջուտով։ Բայց առայժմ պետք է պայքարել։ Առանց պայքարի, առանց լարված ջանքերի, առանց նոր զոհաբերությունների երջանկությունը ձեռք չի բերվի։

Այդ երեկո Մաքսիմիլիանը Յակոբինյան ակումբում սովորականից զգալիորեն ավելի երկար մնաց։ Երբ նա հայտնվեց փողոցում, անթափանց խավարը պատեց նրան։ Աստղերի ոսկի կետերը սփռվել էին բոլորովին սև երկնքում. թույլ շողշողում էր Ծիր Կաթինը։ Երկար նայելով գիշերվա այդ անհունությանը, Մաքսիմիլիանի մտքերն ակամայից պտտվում էին հավիտենականության, հիանալի և անհասկանալի Բնության շուրջը, որի ներդաշնակ մասն էր Մարդը. Մարդը, որը խիզախեց հասարակական կեցության հիմքերը սասանել, Մարդը, որի մեջ այնպես սերտորեն գոյակցում էին չարն ու բարին, ատելությունն ու առաքինությունը։ Գարնանային զով հովիկը թեթևակի շարժեց թիկնոցը, թույլ սարսուռ առաջացնելով։ Թիկնոցի մեջ պինդ փաթաթվելով, Մաքսիմիլիանը քայլերն արագացրեց։ Ի՞նչ լավ է, որ տունն այդպես մոտիկ է...

... Լամպը երկար ժամանակ չի ուզում կպչել։ Տանջված արիրունը թիկնոցը գցում է և ամբողջ մարմնով մեկնվում անկողնի վրա։ Սակայն քնել չի կարելի։ Ասենք, նա քնել չի էլ կարող։ Նա միայն մի քանի բոպե կհանգստանա։ Նա վարժվել է աշխատել գիշերը, երբ ամեն ինչ լուռ է, երբ ոչնչով չխախտվող երանավետ անդորրությունն առավելագույն չափով կենտրոնանալու հնարավորություն է տալիս, միտք է ծնում։ Վերջապես վառված լամպի լույսի տակ Մաքսիմիլիանը գրասեղանի ծայրին տեսնում է մի կույտ սպիտակ թերթիկներ։ Նամակներ են։ Նա ձեռքը մեկնում է։ Այսպես... Թիոնվիլից՝ Մերլենի. մի դանտոնիստի անձնական խնդրագիրը... Առտից՝ Ռերուկ Բյուիսարի նամակը՝ հավանորեն կշտամբանքներով հագեցած. իհարկե, հենց այդպե՛ս է։ Ինչո՞ւ նա, Ռոբեսպիերը, նամակ չի գրում, չի պատասխանում։ Օ՜հ, եթե մարդ երկու կյանք ունենար, եթե ամեն ինչի համար ուժերը բավականացնեին... Սիրելի Առաս, ինչպե՞ս հեռու ես դու, ինչպե՞ս անսահ-

ման հեռու ես դու... Ահա դարձյալ խնդրագրեր, զեկույցներ, բողոքագրեր... Անտեղի վատնած թուղթ։ Նա չի կարող կարդալ այդ ամբողջ բարբաջանքը։ Ահա՛ թե ինչ... Հետաքրքրա՞կա՛ն է... Նանտից երիտասարդ մի կին իր նամակով նրան առաջարկում է իր ձեռքն ու սիրտը և միաժամանակ... տարեկան քառասուն հազարի եկամուտ... Տրիբունը ծիծաղում է։ Վերջին ժամանակներս նա այդպիսի քանի՞-քանի նամակներ է ստացել։ Երևակայեցեք, քառասուն հազարի՞ տարեկան եկամուտ։ Օ՞հ, եթե նրանք իմանային, թե ինչպես իրենք բոլորն էլ խղճուկ ու ծիծաղելի են իրենց դրամով, գնելու, վաճառելու, կուտակելու, զավթելու իրենց ողորմելի տենչանքներով... Նրանց կարծիքով, դրամով վաճառվում է ամեն ինչ, դրամով կարելի է գնել նաև նրան՝ Անկաշառելիին, գնել որպես շքեղ հյուրասենյակի մի զարդ։ Մաքսիմիլիանը աչքի անցկացրած թերթիկները մի կողմ է նետում։ Իսկ ահա և Օգյուստենի նամակը։ Եղբայրը նրան չի մոռանում և իր բոլոր գործերի մասին մանրամասնորեն հայտնում է։ Ոչ այնքան շատ առաջ Օգյուստենը Փարիզ եկավ որպես հաղթահերոս. նա անձամբ Թուլոնի մոտերքում պաշարողական բոլոր գործողությունները ղեկավարեց և փայլուն հաղթանակ տարավ։ Այդ ամենը վերհիշելիս Մաքսիմիլիանը չի կարողանում չժպտալ։ Իր ժամանակին հարավ մեկնելով, Օգյուստենը բարի գործ կատարեց և Շարլոտային իր հետ տարավ։ Բայց Թուլոնի մերձակայքում տեղի ունեցան միաժամանակ թե՛ ծիծաղելի, թե՛ տհաճ դեպքեր, առանձնապես եթե դրանք համադրենք պաշարված քաղաքի մոտ մղված կենաց ու մահու պայքարի հետ։ Օգյուստենի պաշտոնակիցը՝ Ռիկորը, հետը բերել էր իր երիտասարդ, սիրունիկ պճրասեր կնոջը, որին սկսեցին սիրահետել Օգյուստենը և հրետանու երիտասարդ գեներալ Նապոլեոն Բոնապարտը, որ սակայն, նրան և Օգյուստենին չխանդարեց արագորեն մոտենալու։ Շարլոտան չհապաղեց գժտվել նախ տիկին Ռիկորի, իսկ հետո նաև եղբոր հետ։ Օգյուստենը զայրացել էր նրա կռվարարությունից և ամբողջ վարքից։ Վա՛հ։ Ահա այժմ էլ Նիցայի մոտերքից Օգյուստենը հայտնում է հենց դրա նման ինչ-որ մի բան. նրա նամակը զայրույթով ու բնական չարությամբ է համակված։

Ըստ երևույթին, քույրը մեղմաբարո և բարեսիրտ Բոն Բոնին շատ խիստ անախորժություն է պատճառել, եթե նա նրա մասին այդպիսի զայրույթով է գրում։ Զարհուրելի բան է թշնամությունը։ Ինչպե՞ս ձեռք բերել ներդաշնակություն ու սեր պետության քաղաքացիների մեջ, եթե նույնիսկ մեկ ընտանիքում ոչ մի կերպ չի կարելի խաղաղություն ու հանգստություն հաստատել...

Այս միտքը Մաքսիմիլիանին իսկույնևեթ հիշեցնում է անհետաձգելի մի բանի մասին։ Նա արագ վեր է թռչում, գրասեղանի մոտ նստում և ակումբից հետը բերած թղթապանակը բաց անում։

Սարսափելի՜ բաներ։ Այժմ Շարլոտայի և Օգյուստենի հարաբերությունների մասին մտածելու ժամանակը չէ, եթե երկրում այդպիսի բաներ են կատարվում։ Ռոբեսպիերը գրությունները աչքի է անցկացնում և կանգ առնում մի գրության վրա, որը նրան առանձնապես ապշեցնում է։

«Իմ ժամանելու նախօրյակին,— գրում է Պեյյանին նրա բարեկամներից մեկը,— ժամը մոտ տասի կեսին վեց ծպտված մարդիկ հայտնվեցին քաղաքացի Գրայի, մի ազնիվ հայրենասերի ամառանոցում, որին դու, թերևս, ճանաչում ես, նրա ծառաներին բռնեցին, մի սենյակում փակեցին, իսկ իրեն՝ Գրային տարան նկուղը և գնդակահարեցին նրա փոքրիկ երեխայի աչքերի առաջ, որին ստիպեցին լամպը պահել...»։

Սա երկրի հարավից ստացված բազմաթիվ տեղեկություններից մեկն է։ Ժիրոնդիստների ֆեդերալիստական կառավարությունը ճնշվելուց հետո նրա արձագանքները մնացին և շարունակ իրենց մասին զգացնել են տալիս։ Մարդու կերպարանքով գազաններ՝ բանդիտներ՝ խռովարարներ՝ որոնք կուպիին պատմության անիվը շուռ տալ։ Նրանք մոլորեցնում են անկայուն հայրենասերներին, վրդովում հասարակ մարդկանց, դրդարտում հեղափոխությանը...

Ահա ևս մեկ փաստաթուղթ։ Վոկլյուզ դեպարտամենտի Բեզուեն գյուղը գրաված է դավադիրների ղեկավար կայանը։ Անտեղ հավաքվում են երդում չտված քահանաներ և միապետականներ, որոնք ոգեշ մարդկանց դրդում են բաժանվելու հանրապետությունից։ Այստեղ նամակագրություն ունեն վր-

տարանդիների հետ, պահում են հակահեղափոխական կրծքանշաններ, սպիտակ գլխարկանշաններ և նույնիսկ Լյուդովիկոս XVI-ի զինանշանով վահան։ Ցլորեալի 12-ի լույս 13-ի գիշերը խռովարարները արմատախիլ արեցին ազատության ծառը, ոտքերով տրորեցին նրա կարմիր ծայրագագաթը, ցեխի մեջ ցրիվ տվեցին Կոնվենտի դեկրետները։ Բայց սա հո ազատության ուղղակի անարգումն է, հեղափոխության, հայրենասերների զոհաբերությունների ծաղր ու ծանակը։

Այս ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ խռովությունների օրերին հարստացած սրիկաները այնտեղ, հարավում չնչին գնով ազգային գույք են գնում և նոր կալվածատերեր դառնում։ Եվ այդ ի՞նչ մարդիկ են։ Դրանք «գլուխ կտրող» անունով հորջորջվող ոճրագործ ու մարդասպան Ժուրդանն է, Կոնվենտի անդամ, նախկին մարկիզ Ռովերը և նրանց նմանները։ Նրանք կազմակերպում են «սև բանդաներ», նրանք ըստեղծում են հարյուրավոր պաշտոնատար անձնանց ներգրավող կողոպտիչների խմբեր... Եվ այդպիսիներին մենք պետք է ինայե՞նք։

Ռոբեսպիերը ջղային շարժումով, շրխկոցով թղթապանակը փակում է։ Նրա դեմքը ցնցվում է։ Նա վեր է կենում և սկսում սենյակում արագ քայլել։ Ինչպե՞ս մեղմաբար են վարվում ճնշողների և անողոքաբար՝ ճնշվողների հետ։ Գթասրտություն ոճրագործների՞ն։ Ո՛չ։ Գթասրտությո՛ւն անմեղներին, գթասրտությո՛ւն թույլերին, գթասրտությո՛ւն դժբախտներին, գթասրտությո՛ւն մարդասերներին։ Վիշտ ու դժբախտություն՝ ինտրիգաններին։ Նրանց պետք է երկաթո՛վ պատժել։ Քանի դեռ կենդանի կմնա թեկուզ մեկ սրիկա, հանրապետության գործը ամրապնդել չի լինի, առաքինությունը չի հաղթանակի, ազատության թագավորությունը հեռու և անհասանելի կմնա։ Հարավում խռովությունը պետք է ճնշել, և այն կճնշվի։ Ռոբեսպիերը նորից նստում է սեղանի մոտ։ Նա երկար ժամանակ գրում է, հետո գրիչը գցում և թափով մեջքը տալիս բազկաթոռի թիկնակին։ Նրա մտքերը ուրիշ ուղղություն են ստանում։

Լավ, խռովությունները՝ խռովություններ, դրանք վերջ ի վերջո կարելի է ճնշել։ Բայց կա նաև ինչ-որ ավելի վատ բան։

Կա ինչ-որ մի բան, որը լռում է, բայց ծածուկ մարմրում, նշողում և պատրաստ է ցանկացած հարմար դեպքում բռնկվելու։

Այժմ հանրապետությունը ամուր ու հզոր է ինչպես երբեք։ Կոնվենտը միասնական է, Կոմիտեն, որ գլխավորում էր Անկաշառելին, կատարյալ լիիշխանություն ուներ։ Բայց նա պիտի՝ խուլ դժգոհություն, բողոք, թշնամություն, այս ամենը պայթություն ունի ամենուրեք, ոչ միայն հարավում, այլև այստեղ, Փարիզում, շարունակ և ամեն տեղ։ Գյուղացիները դժգոհում են պարենամթերքի բռնագրավումից, իսկ առանց բռնագրավման ինչպե՞ս ապահովել հայրենիքը պաշտպանող մարտիկներին։ Բանվորները դժգոհում են աշխատավարձի մարսիմումից, իսկ այլ կերպ ինչպե՞ս կարելի է մթերքների կայուն գներ պահպանել։ Սեփականատերերը դժգոհում են կառավարական կարգավորումից, մեծագնորդների և սպեկուլյանտների դեմ ուղղած օրենքներից, իսկ առանց այդ ամենի ինչպե՞ս կարելի է հասնել քաղցի վերացման և վերջին հաշվով թշնամու դեմ հաղթանակի։ Կարծես թե ամեն ինչ պարզ է. այնուամենայնիվ խուլ դժգոհությունը հասունանում է, բանվորական շարժումը տարածվում է ամբողջ երկրով մեկ, բուրժուազիան տարբեր եղանակներով ցույց է տալիս իր դժգոհությունը։ Մի՞թե նրանք բոլորը չեն տեսնում, որ Կոմիտեն ուժերի ներածին չափ միջոցներ է ձեռք առնում։ Չէ՞ որ այս գարնանը տընտեսական կյանքն աշխուժացնելու միջոցներ կիրառելով, փոքրիկ թուլացրին մանր առևտրի սահմանափակումները. ավելացրին ռազմական ձեռնարկությունների բանվորների աշխատավարձը, պատրաստվում են չքավորներին նպաստ տալու նախագծեր։ Բայց, ըստ երևույթին, այդ ամենը բավական չէ. իսկ գլխավորը, ինչպե՞ս հաշտեցնել բանվորներին ձեռնարկատերերի, չքավոր գյուղացիներին՝ հարուստների հետ։ Չէ՞ որ ամենից ընդառաջ գնալով, անխուսափելիորեն վատացնում են մյուսների դրությունը։ Եվ ահա, բնակչության տարբեր խավերի դժգոհությունն օգտագործելով, կարող են նորից աշխուժանալ այժմ նիրհող ուժերը՝ դանտոնիստների և էբերտիստների տականքները։

Իսկ ի՞նչ անել։ Ըստ երևույթին, անհրաժեշտ է գտնել ինչ-որ

մի բան, որ շահագրգռեր բոլորին, որ համախմբեր ինչպես չքավորներին, այնպես էլ հարուստներին, որ միավորեր ամբողջ ազգը։ Այդ ինչ-որ բանը կարող է լինել զուտ գաղափարների բնագավառում միայն. գաղափարների ուժը հսկայական է, այն ընդունակ է սգեշնչելու, հաշտեցնելու դժվարությունների հետ, ստիպելու զոհողություններ անելու։ Բայց որտե՞ղ է այդպիսի գաղափարը։ Փորձեցին «Բանականության պաշտամունք» ստեղծել, բայց դրանից ոչինչ չստացվեց, այդ դիտավորությունը միայն բարկացրեց ժողովրդին։ Ոչ, այստեղ հարկավոր է մի ինչ-որ բոլորովին ուրիշ բան... Ժողովուրդը մեծ մասամբ կրոնասեր է։ Պետք է օգտագործել այդ կրոնասիրությունը, այն կտրել մոլեռանդությունից և ուղղել ճիշտ հունով։ Եվ Մաքսիմիլիանը հիշում է Վոլտերի ասույթը. «Եթե աստված չլիներ, այն պետք կլիներ հնարել»։ Այո, ֆերնեյյան պատրիարքն իրավացի է։ Աստված հույս է ներշնչում, աստված փարատում է վիշտը, աստված հաշտեցնում է։ Բայց մեզ հարկավոր է ոչ հին ձևի աստված և ոչ էլ Վոլտերի աստվածը։ Ո՛չ։ Ռոբեսպիերը դարակից վերցնում է մի գիրք և արագ գտնում էջը։ Դա Ռուսոյի «Հասարակական դաշինքն է»։ Ահա թե ինչ է գրում ուսուցիչը.

«Գոյություն ունի զուտ քաղաքացիական դավանություն, որի հոդվածները թագավորը պետք է սահմանի ոչ իբրև կրոնական դոգմաներ, այլ որպես հասարակայնության մտքեր... Քաղաքացիական կրոնի դոգմաները պետք է լինեն պարզ, փոքրաթիվ, ճշտորեն արտահայտված... Դրական դոգմաները սրանք են՝ հզոր, խելացի, բարեգործ, հեռատես և հոգատար աստվածության գոյություն, ապագա կյանք, արդար մարդկանց երջանկություն, չար մարդկանց համար պատիժ, հասարակական դաշինքի և օրենքների սրբություն...»։

Հիանալի՛ է։ Ուսուցիչը, ինչպես միշտ, գտել է հարկավոր ձևը, հարկավոր խոսքերը։ Ո՛չ, փիլիսոփայությունը ժողովրդի համար չէ։ Թող նրանով փիլիսոփաներն զբաղվեն։ Մեզ հարկավոր է բոլորին հարազատացնող և միավորող գերագույն էակ՝ Բնության աստված։

Ռոբեսպիերը մտասևեռ նայում է լուսամուտից դուրս, սև անսահմանությանը։ Ինչպե՞ս դու անըմբռնելի ես, Բնություն։

Մարդ դու բանական ես, դու արդար ես, դու տալիս ես ապագա էլանը, ատաքինի մարդկանց երջանկություն, չար մարդկանց՝ պատիժ, դու վավերացնում ես երկրային և երկնային օրենքները։ Այո։ Դա փրկություն է։ Դրությունից դուրս գալու միջոցը հայտնաբերվեց։ Խոր գոհունակությունը համակում է Մաքսիմիլիանին։ Խաղաղված, նա հանգիստ քնում է մինչև առավոտ մնացած փոքրաթիվ ժամերը։

Մի քանի օր հետո, ֆլորեալի 18-ին (մայիսի 7-ին), Ռոբեսպիերն ելույթ ունեցավ նոր մտքերով տոգորված մի ճառ։ Այն համակված էր ոգևորությամբ և լավատեսությամբ, որ անասելը կարողացավ հաղորդել իր ունկնդիրներին։

«Ֆրանսիական հանրապետության հիմնադիրնե՛ր,— բացականչում էր Անկաշառելին, դիմելով Կոնվենտի անդամներին,— զգուշացե՛ք մարդկության նկատմամբ հույսը կորցնելուց կամ ձեր մեծ ձեռնարկման հաջողության նկատմամբ մի կուպ մեկ վայրկյան կասկած տանելուց։ Աշխարհը փոխվեց։ Ամենը պետք է է՛լ ավելի փոխվի...

Հիշեցնելով հանրապետության փայլուն հաղթանակների մասին, այն մասին, որ ֆրանսիական ազատ ժողովուրդը ոտքի կանգնեց և իրենից դեն նետեց միապետության և դասային արտոնությունների հետ կապված բոլոր նախապաշարմունքները, Մաքսիմիլիանը առաջադրեց մի ամբողջ շարք հռետորական հարցեր, որոնք կանխորոշեցին հռետորի կողմից Ռուսոյի ոգով հատակորեն ձևակերպված պատասխաններ.

«Միայն աթեիզմի գաղափարով ոգեշնչված և հայրենիքի համար երբեք չոգեշնչվող մա՛րդ, քեզ ո՞վ հանձնարարեց ժողովրդին քարոզել, թե աստվածություն գոյություն չունի։ Մի թե լավ է մարդուն համոզել, թե նրա ճակատագիրը զեկավարում է պատահականորեն մերթ հանցագործությունը, մերթ ատաքինությունը պատժող կույր մի ուժ և թե նրա հոգին գերեզմանի շեմքին անհետացող թեթև մի շունչ է միայն։

Ո՞թե չգոյության միտքը նրա մեջ ավելի ազնիվ ու վսեմ զգացմունքներ կառաջացնի, քան անմահության գաղափարը։ Մարդասիրության հարվածների տակ մեռնող դժբախտնե՛ր, ձեր վերջին հառաչը հավիտենական արդարադատության կդոշի։ Կատաստրոֆների բարձրացրած անմեղապաբտությունն ստիպում է

իր հազթակառքում նստած բոնապարտին գունատվել. էլ ի՞նչ առավելություն է մնում նրան, եթե գերեզմանը հավասարեցնում է և՛ ճնշողին, և՛ ճնշվողին։

Եվ Ռոբեսպիերը շատ լավ է ցույց տալիս, որ իր գրական ծրագիրն առաջադրելով, նա հետաքրքրվում է գործի ո՛չ թե փիլիսոփայական, ո՛չ թե տեսական, այլ բացառապես գործնական կողմով։

— Օրենսդիրներ, դուք ի՞նչ գործ ունեք զանազան հիպոթեզների հետ, որոնց օգնությամբ առանձին փիլիսոփաներ բացատրում են բնության երևույթները։ Այդ բոլոր հարցերը դուք կարող եք թողնել որպես նրանց անվերջ վեճերի առարկա. դուք այդ հարցերը չպետք է քննարկեք ոչ իբրև մետաֆիզիկներ, ոչ իբրև աստվածաբաններ. օրենսդիրների կարծիքով, ճշմարտություն է այն ամենը, ինչ օգտակար է կյանքում և լավ՝ գործնականում։

Գերագույն էակի և հոգու անմահության գաղափարը արդարացիության մասին մշտական հիշեցումն է. հետևաբար, այդ գաղափարը հանրապետական և համաժողովրդական բնույթ ունի։

Ապացուցելով գերագույն էակի նկատմամբ հավատի ռացիոնալությունն ու գործնական օգտակարությունը, Անկաշառելին Կոնվենտին նախազգուշացնում է «ապաքրիստոնեացման» շարժման նման սխալներից։ Միաժամանակ, շեշտում է նա, նոր պաշտամունքը հին պաշտամունքի հետ ընդհանուր ոչինչ չունի. վերադառձ լինել չի կարող, և կաթոլիկ տերտերները չպետք է իրենց զուր պատրանքներով սփոփեն։

— Գերագույն էակի իսկական քուրմը բնությունն է, նրա տաճարը՝ տիեզերքը, նրա պաշտամունքը՝ առաքինությունը, նրա տոները՝ համաշխարհային եղբայրության բերկրալի կապերն ամրապնդելու և զգայուն ու ուժեղ սրտերի խորքից նրան գովք մատուցելու նպատակով նրա աչքերի առաջ հավաքված մեծ ժողովրդի ուրախությունը։

Եվ իր ճառի վերջում, նորից ու նորից առաջացող ծափահարությունների տակ Ռոբեսպիերը առաջարկում է երեխաներին բարոյական նոր սկզբունքների ոգով գաստիարակել և ազգային տոնակատարությունների սիստեմ սահմանել։

Դեպուտատները հոտնկայս ողջունում են Անկաշառելիին։ Կոնվենտը հռչակում է գերագույն էակի և հոգու անմահության ընդունումը ֆրանսիական ժողովրդի կողմից. նա հայտարարում է, որ «գերագույն էակին արժանի պաշտամունքը մարդու կողմից իր քաղաքական պարտականությունների կատարումն է»։ առանձին տոներ պետք է քաղաքացուն հիշեցնեն աստվածության և նրա վեհության գաղափարի մասին։

Ռոբեսպիերի ճառը և Ֆլորեալի 18-ի դեկրետը ամբողջ Դերանոխայում բազմաթիվ արձագանքներ ունեցան։ Կոնվենտում ուղարկվում ողջույնի ուղերձներ, շնորհավորանքներ էին գալիս ժողովրդական տարբեր ընկերությունների պատգամավորությունները։ Բայց միաժամանակ ուժեղանում էր նաև դիմադրությունը։

Ռոբեսպիերի նոր փորձը ձախողման էր դատապարտված։ Ոչ ոք չէր կարող մանր բարեգործությամբ չէր կարելի բանվորական դասը վերացնել, այնպես էլ կրոնը չէր կարող սոցիալական էական պրոբլեմները լուծել։ Միայն տոտալիտար Ռոբեսպիերը կարող էր հուսալ, թե նոր հավատը կհամախմբի ֆրանսիական ժողովուրդին և կվերացնի բուրժուական հասարակության խզումները։ Ասենք, նա էլ իր կասկածներն ուներ։ Գերագույն էակի պաշտամունքի համար պայքարելով, Անկաշառելին տեսորը թուլացնել չէր ուզում։ Նրա պահանջով Ժուրդան տոտալիտար դատի կանչվեց. նրան չփրկեց Ռովերի պաշտպանությունը, և ոճրագործը մահապատժի ենթարկվեց։ Ռոբեսպիերը ստանձնեց տվեց այրելու դավադիրների որջը, Բեդուեն խառվարար գյուղը։ Հենց նա էլ Ֆլորեալի 18-ից ընդամենը երկու օր հետո կազմեց խառվարար հարավը սանձահարելու համար Հասարակական փրկության կոմիտեի կազմակերպած Օրանյան ամենը հանձնաժողովի հրահանգի նախագիծը։ Այդ հանձնաժողովը, որը դատում էր առանց երդվյալ ատենակալների, միայն «... դատավորի՝ արդարացիության ու հայրենիքի սիրով գնահատվող խղճի» հիման վրա, օրինակելի խստապահանջությամբ էր գործում. 591 մեղադրյալներից, որոնց գործերը նա քննեց, 332-ը մահվան դատապարտվեցին։

Եվ այնուամենայնիվ հոգու գաղտնարանում ինչ-որ տե
Անկաշառելին հույս էր փայփայում, թե իր նոր գաղափար
պայքարը կհեշտացնի և ապագայի ճանապարհը ցույց կտա։

Երբեմն մարդու կյանքում լինում է արտասովոր երջանի
մի օր, որը դառնում է կյանքի գագաթնակետը։ Այն փոխհա
տուցում է անցած շատ տարիների վիշտն ու հուսահատու
թյունը, հոգսերն ու զոհողությունները, գորշությունն ո
տրամությունը։ Այն նման է լույսի անակնկալ ճաճանչի
այն հիշեցնում է դարնան կենարար ուժը, այն տալիս է բարձ
բագույն վերափոխող բերկրանք։ Այդ օրն անկրկնելի է. ան
ցավ այն, էլ մի՛ սպասիր նրան նորից։ Էլ երբեք արևն այնքա
պայծառ չի փայլի, երբեք երկինքն այնպես մով, իսկ սաղարթ
այնպես կանաչ չի լինի. բարձրագույն երջանկության գագաթ
նակետից, ստեղծագործական, հոգևոր բոլոր ուժերի վայրկե
նական վերապրացքից հետո ամեն ինչ նսեմացավ, թառամեց.

Ռոբեսպիերի համար այդպիսի օր եղավ գերագույն էակ
մեծարման տոնի համար նշանակված պրերիալի 20-ը (հու
նիսի 8-ը)։

Թվում էր, թե հենց բնությունը իր շնորհավորանքներն է
բերում Անկաշառելիին։ Ամեն ինչ պայծառ էր, շլացուցի
Փարիզը վաղուց այդպիսի հրաշալի արևոտ եղանակ չէր տե
սել։ Քաղաքը երիտասարդացել և ավելի շքեղազարդ էր դա
ձել. տները զարդարվել էին կանաչ ոստերով ու ծաղկաշղթա
ներով, փողոցները ծածկվել էին ծաղիկներով, լուսամուտ
ներից կախվել էին եռագույն ժապավեններով հյուսապատ
դրոշներ։ Առավոտյան ժամը 8-ին թնդանոթային կրակոց
ներ որոտացին, և ժողովրդի բազմությունները սրընթաց շարժ
վեցին դեպի Տյուիլրիի զբոսայգին։ Մարդիկ տոնական զգեստ
էին հագել։ Կանայք ծաղկեփնջեր էին տանում, տղամարդի
կաղնու ոստեր։ Բոլորը բարձր տրամադրություն ունեին. դե
երեկ միմյանց չճանաչող քաղաքացիները այսօր գրկախառնվ
վում էին և փոխադարձաբար երջանկություն մաղթում։

Աստիճանաբար սկսեցին հավաքվել Կոնվենտի անդամներ
Նրանք տոնական զգեստով էին՝ ցցունքավոր շլյապայով
եռագույն շարֆով։ Նրանց համար կառուցել էին փայտաշ

ամֆիթատրոն, որի դիմաց բարձրանում էր Անաստվածության, Նատպաշտության, Երկպառակությունների և Փառասիրության հրեշների հսկայական մի խումբ։ Գլխավոր կարգադրիչ Դավիդի պլանի համաձայն, այդ խումբը պետք է հրդեհվեր և բաց աներ ոչնչացված արատների մնացորդները ոտնատակ տված Իմաստության արձանի տեսարանը։ Ժողովուրդը ողջունում էր իր դեպուտատներին։ Ռոբեսպիերը, որին հատկապես Կոնվենտի նախագահ էին ընտրել, ինչ-որ պատճառով ուշանում էր։

— Նա թագավո՛ր է ձևանում,— փնթփնթաց ինչ-որ մեկը։ Բայց ահա նա էլ երևաց։ Այդ ի՞նչ է։ Անկաշառելին անճանաչելի էր։ Թվում էր, թե նա տասը տարով երիտասարդացել է։ Նրա քայլվածքն արագ ու ձգված էր դարձել, նրա կուզիկությունը ինչ-որ տեղ անհետացել։ Նոր կոստյումը՝ կապույտ ֆրակ, ոսկեփայլ շալվար, սպիտակ ժաբո և նույնպիսի բաճկոն, ինչ-որ զարմանալիորեն ներդաշնակում էր երկնքի, արևի, լույսի հետ։ Նա ձեռքին բռնել էր ծաղիկներից ու հասկերից կազմած մի փունջ։ Բայց ամենաապշեցուցիչը նրա դեմքն էր։ Բերկրությամբ ու գորովանքով ոգեշնչված, այն շատ գեղեցիկ էր թվում. բոլոր մանր խորշոմիկները հանկարծ անհետացել էին, իսկ աչքերը դարձել էին երկնքի նման կապույտ ու խորը։ Նրանց մեջ արտացոլվում էր ինքը բնությունը։

Ժողովուրդը Ռոբեսպիերին աղմուկով ու սիրալիր գիմավորեց. բայց դրա փոխարեն պաշտոնակիցները նրան թշնամական հայացքներ ու ոխակալ ժպիտներ էին պարգևում։

— Նայեցե՛ք, թե նրան ինչպես են ողջունում,— իրար հետ փսփսում էին դեպուտատները, և այդ խոսքերում նախանձը միաձուլվում էր կծու ծաղրանքի հետ։ Բայց նա ոչինչ չէր նկատում։

Նա ողջույնի համառոտ ճառ արտասանեց։ Հետո, ամֆիթատրոնի աստիճաններից ցած իջնելով, մոտեցավ հրեշների խմբին և վառեց դրանք։ Կրակը բոցավառվեց։ Ստվարաթուղթն ու ֆաներան արագորեն ածխանում և փոշի էին դառնում։ Նա կանգնած ուշադրությամբ նայում էր Զարիքը խժռող կրակին։ Բայց այս ի՞նչ է։ Խարույկն սկսեց մեծ թափով վառվել, կրակն այրեց Իմաստության արձանի քողը և այն հանդիսականների առաջ երևաց բոլորովին սև ու ծխացող տեսքով... Մի վայրկյան

Ռոբեսպիերի դեմքը ցնցվեց ու այլանդակվեց։ Բայց դա միայն մի վայրկյան էր։

Կոնվենտը ժողովրդի ուղեկցությամբ ուղևորվեց դեպի Մարսյան դաշտը։ Արտասովոր մի տեսարան երևաց հանդիսականների աչքի առաջ, որոնք ծածկել էին Տյուիլրիի դարպասներից մինչև Հաղթական կամարը ձգվող ճանապարհը։ Առջևից գնում էին թմբկահարները, հեծյալ փողհարները, երաժիշտները, հետո գնում էին նիզակներով զինված մարդիկ, հրելով տանում էին թնդանոթները, դանդաղորեն տեղաշարժվում էր ազատության ծառով ու բերրիության խորհրդանշանով կառքը. երկու շարասյունով տողանցում էին քսանչորս սեկցիաներ. շքերթը վերջափակում էին կանոնավոր բանակի զինվորները։ Իսկ հետո հանկարծակի բացվում էր ամայի մի տարածություն։ Եվ ահա այդ տարածության մեջ բազմության ողջույնի աղաղակների տակ դանդաղորեն ու միայնակ քայլում էր սպիտակ կեղծամով ու բաց գույնի կոստյումով փոքրիկ մի մարդ։ Նրա թշնամիները, դիտմամբ իրենց քայլը դանդաղեցնելով, ետևից եկողների շարժումը կասեցնելով, աշխատում էին որքան կարելի է ավելի մեծացնել նրա և իրենց միջև եղած հեռավորությունը։

— Մարդի՛կ։ Նայեցեք ամբարտավանի՛ն, նայեցեք դիկտատորի՛ն։

Բայց նա առաջվա նման կարծես թե ոչինչ չէր նկատում։ Արդեն երկու ժամ շարունակ նա լող էր տալիս ծաղիկների և հարյուր հազարավոր կրծքերից, բուն Փարիզի ընդերքից դուրս եկող ողջույնների գետում։ Դա մի ամբողջ ազգի ձայնն էր։ Եվ այդ ձայնը գոռում էր.

— Կեցցե՛ հանրապետությունը։ Կեցցե՛ Ռոբեսպիերը։

Մարսյան դաշտի մեջտեղը սիմվոլիկ մի լեռ սարքեցին։ Երբ Կոնվենտը նրա վրա տեղավորվեց, ժողովուրդը և նրա ներկայացուցիչները կատարեցին գերագույն էակի հիմնը։ Շեփորների ձայները միաձուլվեցին հինգ հարյուր հազար մարդու երգեցողության հետ։ Երիտասարդ աղջիկները ծաղիկներ էին նետում։ Պատանիները մերկացրած սրերը վեր էին բարձրացնում, երդվելով այսուհետև դրանցից չբաժանվել մինչև Ֆրան-

սիան փրկելը։ Եվ այդ ամբողջ հուզիչ վեհության մեջ երևում էր բոլոր կողմերից ամայի տարածությամբ շրջապատված փոքրիկ մի մարդ։

Արևը թեքվում էր դեպի մայրամուտ։ Բոլորը տանջվել ու հոգնել էին։ Առաջինը բազմությունը ետ հրդեց, շտապելով Մարսյան դաշտից հեռանալ և իրենց տները քաշվել։ Անարևակայելի հրմշտոց ստեղծվեց։ Այս ու այնտեղ թափված էին դեն գցած հասկեր ու ճզմած խորհրդանշաններ։ Մայրերի թոշնած, հոգնատանջ դեմքերը հիշեցնում էին մեծ քաղաքում սպասող հոգսերի մասին։ Տոնահանդեսը վերջացավ։ Թանձրացող մթնշաղին վերադարձի ճամփան ընկան նաև Կոնվենտի անդամները։ Առջևից գնում էր Ռոբեսպիերը։ Նրա ետևից, որոշ հեռավորությամբ, խանգարված շարքերով առաջ էր շարժվում ճմռթված հագուստով, թոշնած ծաղկեփնջերով դեպուտատների բազմությունը։

Մաքսիմիլիանը քայլում էր աչքերը կիսախուփ։ Նա սասարկ հոգնել էր։ Այժմ ցերեկվա հսկայական լարվածությունը ամեն քայլում զգացվում էր քունքերում։ Մտքերը խառնվում էին... Եվ հանկարծ... Արդյոք նա սխալ չլսե՞ց... Արդյոք գա գոչյախաբություն չէ՞, հոգնած ուղեղի զառանցանք չէ՞։ Ոչ... Ետևից շարունակ ձայներ են լսվում։ Դրանք ինչ-որ դևերի միահամուռ ձայներ են։ Դրանք թշնամական ոռնոց են։ Դրանք անեծքներ են... Իսկ ո՞ւմ հասցեին։ Ուշադրությամբ լսելով, Ռոբեսպիերը որսում է առանձին բառեր, ամբողջ արտահայտություններ։

— Տեսնո՞ւմ ես այդ մարդուն։ Նրա համար տիրակալ լինելը քիչ է, նա ուզում է աստվա՛ծ լինել...

— Մեծ քո՛ւրմ։ Տարպեյան քարափը հեռո՛ւ չէ...

— Բրուտոսները դեռ չե՛ն անհետացել...

— Դիկտատո՛ր։ Բռնակա՛լ։ Դու քո պատիժը կստանա՛ս...

— Անիծյա՛լ լինես դու...

— Մա՛հ չարագործին...

Ոչ, դա լսողության պատրանք չէր։ Ձայները գրեթե փրսփրում էին, բայց հենց այդ պատճառով էլ տարբերվում էին ընկհանուր աղմուկից։ Նա նույնիսկ այդ ձայներից մի քանիսը

ճանաչում էր։ Սարսափելի ընդարմացումից նրա հոգին սառույց կտրեց։ Դիկտատո՛ր։ Բռնակա՛լ։ Նշանակում է, նրանք ոչինչ չհասկացան։ Նշանակում է, իր պլանը չհաջողվեց. սերը բոլորին ի մի չհամախմբեց։ Նշանակում է, մնաց զարհուրելի թշնամությունը, թշնամությունը և արյունը, արյունը և մահը։ Գերագույն էակը, չնայած բոլոր ջերմագին աղերսանքներին, Անկաշառելիին չանսաց։ Ամեն ինչ կործանվո՛ւմ է...

Սալարկափողոցով անցնող մի քանի հարյուր մարդկանց քայլերը գղրդալի ձայներ են հանում։ Բոլորովին բթացած, ուժասպառ, հուսալքված վիճակում առջևից գնում էր Ռոբեսպիերը։ Խուլ ցավը կաշկանդել էր մարմինն ու հոգին։ Ե՞տ նայել։ Ոչ, հարկավոր չէ, դա իմաստ չունի...

... Դյուպլեի ընտանիքը խնդությամբ իր կենվորին ընդառաջ նետվեց, լսելով նրա քայլերի ձայնը։ Բայց հենց որ նա դուռը բաց արեց, բոլորն ապշած կանգ առան։ Բաց գույնի ճմռթված կոստյումով փոքրիկ, կորացած մի մարդ շեմքից ներս էր անցնում, սաստիկ հոգնածությունից իրեն հազիվ ոտքի վրա պահելով։ Նրա տանջահար, քրտնքի կաթիլներով ծածկված գեմքը հիվանդ ու ծեր էր թվում։ Նայելով իր մերձավորներին, որոնցից նա այսօր առավոտյան հեռացել էր այնպիսի բարձր տրամադրությամբ, Մաքսիմիլիանը կամաց ասաց.

— Բարեկամներս, դուք արդեն ինձ տեսնելու քիչ ժամանակ ունեք...

Պրերիալի 20-ի և 22-ի միջև ընկած են ընդամենը մեկ ցերեկ և երկու գիշեր։ Բայց Ռոբեսպիերի համար այդ կարճ ժամանակամիջոցը մի հավիտենականություն էր։ Որքա՞ն նա խորհեց։ Քանի՞-քանի անգամ նա հուսահատությունից անցնում էր հուսագրման և հուսագրումից նորից հուսահատության։ Ամբողջ տեղի ունեցածը նրան ընկճեց։ Բայց նա տեղի տալու բնավորություն չուներ։ Նա հաշտություն էր բերում։ Հաշտությունը չընդունեցին։ Լավ, թող պատերազմ լինի։ Նա իր կյանքի համար չի դողում, բայց նրա կյանքը հարկավոր է նրան, ում նա այն նվիրել է՝ ժողովրդին։ Հեռաարար, անհրա-

Ուշադրությունը պայքարը շարունակել։ Այժմ նա իսկությամբ շատ բան գիտի, որի մասին առաջ միայն կռահում էր։ Նա պրերիալի 20-ի երեկոյան իրեն անիծող դիվային ձայների մեջ որոշակիորեն ճանաչեց Բուրդոնի, Տիրիոնի, Լեկուանտրի ձայները... Անտարակույս, նրանց հետ կապված են նաև ուրիշներ։ Ռոբեսպիերը համադրում է փաստերը։

Պրերիալի 3-ին Հասարակական փրկության կոմիտեն Ռոբեսպիերի նախաձեռնությամբ Տալլենի բարեկամուհու՝ արկածախնդիր Թերեզա Կաբառյուսի կալանավորման մասին հրաման տվեց։ Դրա հետևից անմիջապես մոտակա օրերին Անդաշառելիի դեմ երկու մահափորձ կատարվեց, և միայն պատահականությունը նրան մահից փրկեց։

Նրան բուռն կերպով շնորհավորում էին վտանգից փրկվելու առթիվ, նրան ծափահարում էր Կոնվենտը, նրան հատուկ պահակախումբ էին առաջարկում, օ՜հ, ոճրագործներ... Կեղծավոր Բարերը փորձում էր ամբողջ պատասխանատվությունը Պիթի վրա գցել։ Բայց արդյոք այստեղ Անգլիան մեղավոր չէ։ Արդյոք զգալիորեն ավելի մոտիկ չէի՞ն գտնվում մարդասպան Անեքը զենք տվող մարդիկ... Քանի որ արդեն հաջորդ օրը (Ռոբեսպիերը գաղտնի կերպով ստացված տեղեկության շնորհիվ այդ մասին գիտեր) անարգ Լորան Լեկուանտրը, հենց այն Լեկուանտրը, որի ձայնը երեկ երեկոյան նա շատ լավ ճանաչեց, նրա դեմ Կոնվենտի ութ անդամների ստորագրությամբ և ուղղակի «բռնակալին» սպանելու կոչ անող մեղադրական ակտ կազմեց... Մի՞թե այդ ամենը բավական չէ։ Մի՞թե գործի էությունը պարզ չէ։ Դավադրությունը, նոր, նենգ, անողոք ու անդրդվելի դավադրությունը Կոնվենտը կաշկանդել էր։ Նոր խուովարարները պատրաստվում էին գրավելու Դանտոնի և էրների տեղը։ Արդյոք նրանք շա՞տ են։ Էլ ո՞ւմ են գրավել իրենց կողմը։ Նրանք պետք է ոչնչացվեն, և որքան կարելի է՝ ավելի շուտ։ Նրանց պետք է ամենից առաջ վնասազերծել։ Նրանց պետք է զրկել ոչ միայն հարձակվելու, այլև պաշտպանվելու հնարավորությունից։ Իսկ դրա համար անհրաժեշտ է բուն դատական պրոցեդուրան փոխել։

Մինչև այժմ հանցագործներին օգնում էին դատավարական խարամանկությունները, փաստաբանական պատրանքները։

Սղքատ մարդն իրավաբանին դիմելու հնարավորություն չունի. հարուստ ոճրագործը իրեն պաշտպանելու համար օգտագործում է կաշառվող փաստաբաններին։ Ժամանակակից ամբողջ դատավարությունը մի կեղծ կոմեդիա է, որը ճարպիկ հանցագործին օգնում է պատժից խուսափելու։

Ժողովրդի մերկացված թշնամին ապավինում է փաստաբանի օգնությանը ոչ թե պաշտպանվելու, այլ հարձակվելու համար. նա վկաների պատրվակով իր բոլոր կողմնակիցներին շուրջն է հավաքում և փորձում դատական նիստը իսկական մարտադաշտ դարձնել, ինչպես այդ արեց Դանտոնը։

Պետք է թշնամու ձեռքից զենքը խլել։ Պետք է դատարանը պատժի և պատ'ժի հնարավոր արագությամբ։ Անհրաժեշտ է դավաճաններին հայտնաբերել և մահվան մատնել, այլապես հեղափոխությունը կկործանվի։

Ռոբեսպիերն արդեն վաղուց էր հղացել Հեղափոխական տրիբունալի բարենորոգման միտքը։ Մեկ ամիս առաջ նա կազմեց Օրանյան հանձնաժողովի հրահանգը։ Հրահանգն արդյունքներ տվեց։ Այժմ նա հրահանգի հիմնական գաղափարը դնում է Հեղափոխական տրիբունալի բարենորոգման նախագծում։ Այսպես է աշխարհ գալիս պրերիալի 22-ի սարսափելի օրենքը։

Պրերիալի 22-ի (հունիսի 10-ի) Կոնվենտի նիստը հանդիսավոր իրադրության մեջ էր անցնում։ Հրավիրվեցին երկու կոմիտեները, և նրանց գրեթե բոլոր անդամները ներկայացան։ Ջեկուցումով հանդես եկավ Կուտոնը։ Դեռևս բռնակալության ժամանակվանից հիմնականում պահպանված հին դատական օրենսդրությունը դատապարտելով, հռետորը նախազգուշացրեց դավադրությունը ճնշելու համար հանրապետության ձեռք առած միջոցները մասնավոր հանցագործություններ քննող դատարանների սովորական ֆունկցիաների հետ շփոթելուց։

— Դավադիրների հանցագործությունները,— ասում էր Կուտոնը,— անմիջականորեն սպառնում են հասարակության գոյությանը կամ նրա ազատությանը, որ միևնույն բանն է։ Այստեղ ոճրագործների կյանքը կշեռքի նժարների վրա է դրվ-

վում ժողովրդի կյանքի հետ, և ամեն մի հապաղում հանցագործություն է, ամեն մի ներողամիտ ձևականություն ավելորդ է և հասարակական վտանգ է ներկայացնում։ Հայրենիքի թշնամիներին պատժելու ժամանակամիջոցը պետք է լինի նրանց ճանաչելու համար հարկավոր ժամանակը միայն։ Խոսքը ոչ այնքան պատժելու, որքան ոչնչացնելու մասին է...

Կուտոնի առաջարկած նախագիծը հանգում էր հետևյալին։

Հեղափոխական տրիբունալը ենթակա էր վերակազմման։ Երդվյալ ատենակալների քանակը կրճատվում էր, դատապաշտպանների ինստիտուտը վերացվում։ Վերացվում էր նաև մեղադրյալների նախնական հարցաքննությունը. դատավճիռներ կայացնելու չափանիշը համարվում էր «դատավորների՝ հայրենիքի սիրով ղեկավարվող խիղճը»։ Հեղափոխական տրիբունալը պետք է ժողովրդի թշնամիներին դատեր և կարող էր որոշել միակ պատժատեսակը՝ մահապատիժ։ «Ժողովրդի թշնամի» հասկացությունը շատ լայնորեն էր մեկնաբանվում։ Այդ կատեգորիայի մեջ մտնում էին ոչ միայն պետական հանցագործությունների մեջ մերկացված մարդիկ՝ հայրենիքի դավաճանները, միապետականները, մեծագնորդները, սպեկուլյանտները, այլև կեղծ տեղեկություններ ու լուրեր տարածողները, բարքերն ու հասարակական խիղճն արատավորողները, այսինքն՝ ոչ այնքան շատ որոշակի այնպիսի գործերի մեջ մեղավոր հանցագործները, որոնց կատեգորիայի տակ էին գցվում ամեն ինչ, որ ցանկալի էր ավյալ օրենքն պատպարծող անձանց համար։

Կարելի է երևակայել, թե Կոնվենտի որոշ անդամներ ինչպես ցնցվեցին, երբ Կուտոնն իր զեկուցումը կարդում էր։ Մարդերին համակած բոսկական քարացումից հետո դեպուտատ Ֆյուանը վեր կացավ և բացականչեց.

Ես պահանջում եմ քվեարկությունը հետաձգե՛լ։ Եթե իմ առաջարկությունը չընդունվի, հայտարարում եմ՝ ես ինքնասպանություն կգործեմ։

Ֆյուանին պաշտպանեց Լեկուանտրը։ Բարերը, որը շարունակ կարողանում էր արագորեն իրադրությանը հարմարվել, առաջարկություն արեց, որ հետաձգումը երեք օրից չանցնի.

նա դրանով ասես շեշտում էր, որ հետաձգման ընդունումն ընդհանրապես կասկած չի հարուցում։ Բիլո-Վարենը և Կոլ դ'Էրբուան լուռ էին։ Բայց Ռոբեսպիերը չէր ուզում իր հակառակորդներին նախապատրաստվելու ժամանակ տալ։ Նա մեծ կրքոտությամբ սկսեց համառորեն պնդել, որ դեկրետը քվեարկվի և ընդունվի հենց այդ նիստին, եթե նույնիսկ հարկ լինի այդ մինչև գիշեր ձգձգել։ Նրա պահանջը բավարարվեց, և շփոթված ժողովը դեկրետը հաստատեց։

Սակայն դրանով գործը չվերջացավ։ Հաջորդ օրվա սկզբին շատերն սթափվեցին։ Պրերիալի 23-ին դանտոնիստ Բուրդոնը դեկրետի դեմ լուրջ առարկություններ բերեց։ Նրան պաշտպանեց տիոնվիլցի Մարլենը։ Կառավարական կոմիտեները բացակայությունն օգտագործելով, հանդես եկողները ձգտում էին օրենքի վերանայման հասնել։ Այնինչ մարտ էր սկսվում նաև Հասարակական փրկության կոմիտեում։ Իր գոյության ամբողջ ժամանակաընթացքում առաջին անգամ Կոմիտեն ակնհայտ պառակտում դրսևորեց։

Ռոբեսպիերի պաշտոնակիցների շրջանում վաղուց արդեն լիակատար միասնություն չկար։ Այսպես, դեռևս ժերմինալին Կոմիտեի անդամ Ռոբեր Լենդեն հրաժարվեց Դանտոնին կալանավորելու հրամանի տակ իր ստորագրությունը դնելուց։ Ֆլորեալի սկզբին բացահայտ գժտություն տեղի ունեցավ Սեն-Ժյուստի և Կարնոյի միջև, ընդ որում վերջինս կիսածաղրանքով, կիսաշարահնդորեն նետեց «դիկտատուրա» բառը։ Սակայն Անկաշառելիի դեմ դեռևս ոչ ոք բացահայտորեն հանդես գալ չէր խիզախում։ Ինչ տեղի ունեցավ պրերիալի 23-ին, նախադեպ չուներ։

Այդ առավոտ արևն առանձնապես սաստիկ էր տաքացնում։ Տյուիլրիի պալատի բոլոր լուսամուտները կրնկի վրա բաց էին։ Խոսակցության ընթացքում վեճ առաջացավ։ Բիլո-Վարենը Ռոբեսպիերին և Կուտոնին կշտամբում էր, որ հուշագրավոր օրինագիծը Կոնվենտ մտցնելուց առաջ Կոմիտեում քննարկման չդրվեց, ինչպես սովորաբար վարվում էին։ Ռոբեսպիերը առարկեց, որ մինչև այժմ Կոմիտեում ամեն ինչ փոխադարձ վստահությամբ էր արվում, և որովհետև դեկրետը լավն է, իսկ բացի այդ՝ արդեն ընդունված, ուստի նի-

գակներ կոտրելու հարկ չկա։ Բիլոն սկսեց բողոքել և ձայնը բարձրացրեց։ Ռոբեսպիերը տարակուսանքով նայեց նրան և, պատասխանելով, ավելի բարձր բղավեց.

— Ես ոչ ոքից պաշտպանություն չե՛մ տեսնում,— դայրացավ նա։— Ես պաշարված եմ գավադրություններով։ Ես գիտեմ, որ Կոնվենտում մի խումբ կա, որն ուզում է ինձ կործանել, իսկ դու,— նա դիմում է Բիլոյին,— դու պաշտպանում ես նրա լիդերներին։

— Նշանակում է,— առարկեց Բիլոն,— դու ուզում ես ամբողջ Ազգային կոնվենտը գիլյոտինելու ուղարկել։

Այդ խոսքերը Ռոբեսպիերին կատաղության հասցրին, և նրա բարձր ձայնն էլ ավելի սրվեց։

— Այստեղ դուք բոլորդ վկա՛ եք,— բղավեց նա,— որ ես չասացի, թե իբր ուզում եմ Ազգային կոնվենտը գիլյոտինել։

Կոմիտեի շփոթված անդամները լուռ էին մնում։ Բարերը ննջասենյակում ժպտում էր։

— Այժմ ես քեզ ճանաչում եմ...— շարունակեց Ռոբեսպիերը, ակնապիշ նայելով Բիլոյին։

— Ես նույնպես,— ընդհատեց նրան Բիլոն,— ես նույնպես ճանաչում եմ քեզ, որ դու... հակահեղափոխակա՛ն ես։

Անկաշառելին այնքան ապշեց, որ չդիմացավ։ Նրա դեմքն սկսեց ջղաձգորեն ցնցվել, նա մատները խրեց սեղանի երեսպաշի մահուդը և սկսեց հեկեկալ։

Այդ ժամանակ սենյակ ներս վազեց Կոմիտեի ծառայողներից մեկը.

— Քաղաքացիներ,— բղավեց նա,— դուք մոռացե՛լ եք։ Նայեցե՛ք։ Բարերը նայեց բաց լուսամուտից և ոչ առանց բավականության տեսավ Տյուիլրիի պատշգամբում հավաքված մի մեծ բազմություն։ Լուսամուտներն անմիջապես աղմուկով փակվեցին, բայց ամեն ինչ արդեն ասվել էր։ Անկաշառելին լալիս էր։ Մնացածները, ապշած, լուռ նայում էին միմյանց։ Ամբարտակը ճեղքվեց։ Ռոբեսպիերը հասկացավ, որ Կոմիտեում թշնամիները իրեն և իր խմբին շրջապատել են։

Այսպես ուրեմն, նրա դեմ էր ոչ միայն Կոնվենտում կազմակերպված խումբը, ոչ միայն Հասարակական անվտանգության կոմիտեի անդամների մեծ մասը։ Նա չէր հավատում իր

Կոմիտեի լիակատար միասնությանը, բայց երբեք չէր կասկածում, որ կարող է այդպիսի բան տեղի ունենալ։ Պարզվում է, այստեղ էլ հողն սկսեց երերալ։ Բայց ի՞նչ որոշել։ Նահանջե՞լ. ո՛չ, այժմ նահանջելը հավասարազոր է կործանման։ Եվ այդ բանը տեսնելով, Ռոբեսպիերը կատաղությամբ առաջ է նետվում։ Նրա ամենամոտիկ զինակից Կուտոնը (Սեն-Ժյուստն այն ժամանակ Փարիզում չէր) պաշտպանում է նրան։

Պրերիալի 24-ին Կոնվենտում առաջինը դարձյալ հանդես է գալիս Կուտոնը։ Նա խայտառակությամբ նշավակում է ուխտագրուժ և վախկոտ զրպարտիչներին, որոնք նրանց բացակայության ժամանակ փորձեցին ընդունված դեկրետը վարկաբեկել ու վիժեցնել։ Ստատիկ վախեցած Բուրդոնն սկսում է արդարանալ և շփոթված թոթովել, որ ինքը հարգում է Կուտոնին, հարգում է Կոմիտեն, հարգում է անհողդողդ Լեոը, որ ազատությունը փրկեց։ Բայց նրան տիրաբար ընդհատում է Ռոբեսպիերը, հայտարարելով, որ Կոմիտեն չի կարելի բաժանել Լեոից, որովհետև Կոնվենտը, Լեոը, Կոմիտեն միևնույն բանն են։

— Հայրենիքի համար վիրավորական կլիներ,— ավելացրեց Ռոբեսպիերը,— թույլ տալ, որ մի քանի ինտրիգան, որոնք մյուսներից ավելի անարգ են, որովհետև նրանցից ավելի կեղծավոր են, աշխատեին Լեոան մի մասը գրավել և կուսակցության պարագլուխները դառնալ։

Բուրդոնը, իր հերթին, ընդհատում է Ռոբեսպիերին։

— Ես պահանջո՛ւմ եմ,— բղավում է նա,— որ ապացուցեն այն, ինչ այստեղ ասում են։ Հիմա բավական պարզ կերպով տվեց, որ ես ոճրագործ եմ։

Անկարելի պատասխանը կարճ ու զարհուրելի էր։

— Ես Բուրդոնի անունը չտվեցի։ Վա՜յ նրան, ով ինքն է տալիս իր անունը։

Բուրդոնն ուզում էր առարկել, բայց չկարողացավ։ Նա ասստիկ հուզվելուց շնչահեղձ եղավ և ընկավ աթոռին։ Նրան այնպիսի սարսափ համակեց, որ բարեկամները կարծեցին, թե նա գիտակցությունը կորցրեց։ Համենայն դեպս, նա այդ միջադեպից հետո մեկ ամիս անկողնում պառկեց, և բժիշկները

նրա կյանքի համար անհանգստանում էին։ Ավելի լավ չէր նաև նրա համախոհների վիճակը։ Մերլենը խոհեմաբար բերանը ջուր առավ, իսկ Տալլենը, որը նույնպես Ռոբեսպիերից հանդիմանություն ստացավ, շտապեց աղիողորմ նամակով պատասխանել, շողոմ ու կեղծավոր արտահայտություններով ապաշխելով իրեն գթալու։

Կարծես թե Կոնվենտում Ռոբեսպիերի և Կուտոնի վճռականությամբ լիակատար հաղթանակ ձեռք բերվեց։ Անկաշառելին ծափահարում էին բոլորը՝ թե՛ բարեկամները, թե՛ թշնամիները, թե՛ վախկոտ, անմռունչ «ճահիճը»։

Պրերիալի 22-ի օրինագիծն օրենք դարձավ։

Անկաշառելին ուրախանում էր։ Բայց արդյոք նա կատարելապես հասկանո՞ւմ էր, թե ինչ էր անում։ Թշնամիների կողմից անողոքաբար հետապնդվելով, զգալով, որ ոտքերի տակ հողը տարուբերվում է, բայց համոզված, որ ինքն իրավացի է, նա, ինքն էլ չգիտակցելով, աստիճանաբար սկսում էր իրեն նույնացնել այն գործին, որի համար պայքարում էր։ Բայց այն ժամանակվանից, երբ Ռոբեսպիերը իրեն նույնացրեց հեղափոխության հետ, տեսորը պետք է նրա համար բացառապես ինքնապաշտպանման, ինքնապահպանման միջոց դառնար։ Պրերիալի 22-ի օրենքն էլ առաջին հերթին այդպիսի ինքնապաշտպանման մի ակտ էր։ Դա ինքնին հանգեցնում էր այն բանից շատ հեռու հետևանքների, որի մասին Անկաշառելին մի ժամանակ երազում էր։ Բայց առանց այդ էլ ամեն ինչ սատանիկ բարդանում էր։

Իհարկե, պրերիալի օրենքը կարող էր մի ինչ-որ ժամանակ ռոբեսպիերական կառավարության ձեռքին ջախջախիչ ուժ դառնալ, եթե այդ կառավարությունը միասնական լիներ։ Սակայն օրենքն ընդունելու ժամանակվա մոտերքը միասնություն որպես գոյություն չուներ, ընդ որում կառավարական կոմիտեներում մեծամասնությունը Ռոբեսպիերի կողմը չէր։ Նրա մերին դեռևս մի հզոր ուժ էր մնում. նա Յակոբինյան ակումբի կուռն էր, նրա առաջ գողում էր Կոնվենտը։ Բայց նրա ամբողջ ողբերգությունն այն էր, որ նա կորցնում էր իր իշխանությունն այն միակ ինստանցիայում՝ Հասարակական փրկության կո-

միտեում, որի միջոցով ուղում էր իր սարսափելի օրենքը գործադրել։ Երբ նա պայքարի թեժ պահին այդ բանը հասկացավ, քայլն արդեն արված էր։ Եվ նա այժմ էլ ի՞նչ կարող էր անել։ Այնպես ստացվեց, որ իր համար ահեղ մի զենք կռելով, նա շուտով այդ զենքն իր դեմ ուղղված տեսավ։ Այդ բանը նրա թշնամիներն ավելի շուտ հասկացան, քան նա։ Նիստերի դահլիճից դուրս գալով, Կոմիտեի անդամ Ռոբեր Լենդեն նենգ վաղյեին ասաց.

— Անկաշառելին մեր ձեռքում է։ Նա ինքն է իր համար գերեզման փորում։

Դա ճշմարիտ էր։ Միշտ հեռատես, շրջահայաց և իմաստուն Ռոբեսպիերը հանկարծ սխալ քայլ գցեց։ Հանգամանքները նրան մտրակահարում էին։

Նա գնում էր երկար ճանապարհով։ Սկզբում այն նետի նման ուղիղ էր, հետո սկսեց գալարվել, իսկ այժմ նրա ուրվագծերը ավելի ու ավելի կորչում էին մացառուտներում։ Դա մի ճանապարհ էր, որը ոչ մի տեղ չէր տանում։ Եվ նա այդ բանը չզգալ չէր կարող։

ԳԼՈՒԽ 7

ՈՉ ՄԻ ՏԵՂ ՉՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ

Սակայն ի՞նչ տեղի ունեցավ։ Ինչո՞ւ ամեն ինչ այդպես արագորեն փոխվեց։ Դեռ երեկ ընդհանուր ճանաչում գտած առաջնորդ, կառավարության ամենահեղինակավոր անդամ այսօր Անկաշառելին հանկարծ դարձավ արհամարհվող ինքնակոչի՞կ, ատելի բռնակա՞լ, գրեթե հակահեղափոխակա՞ն։ Որտեղի՞ց հայտնվեց թշնամիների այդ լեգեոնը։ Ինչո՞ւ կոմիտեները, նույնիսկ Հասարակական փրկության կոմիտեն, նրա «մինիստրությունը» հանկարծ նրանից երես դարձրին։

Հանկարծակիությունը երևութական էր։ Ճակատագրական կծիկի սկզբնածայրը կորչում էր անցյալում։ Բայց այն ժամանակվա մոտերքը, երբ Ռոբեսպիերն ամեն ինչ հասկացավ, այդեն ոչինչ փոխել չէր կարելի։

Շուեռ

Էրեբ

Ներա

Նոր դավադրության հիմքը կազմում էին հենց այն շարժիչ ուժերը, որոնք մի ժամանակ ստեղծեցին «գիշողամիտների» Դրակոնիան, դրանք վերացնել հնարավոր չէր, քանի դեռ նոր բուրժուազիան առաջացնող պայմանները չէին ոչնչացվել։ Իսկ դա ռոբեսպիերիստների ուժերից վեր էր։ Հեղափոխության ընթացքում առաջացած նոր բուրժուազիան իրեն երկրի տերն էր համարում։ Ֆեոդալիզմը վերացվեց, բացարձակ միապետությունը տապալվեց, արդյունաբերությունն ու առևտուրը կաշկանդող հին կարգադրությունը պատմության սեփականությունը դարձավ. հեղափոխության տարիների ընթացքում նախկին արտոնյալների անշարժ գույքի առյուծի բաժինը նույն բուրժուազիայի ձեռքն անցավ։ Էլ ի՞նչ է հարկավոր։ Թվում էր, թե այժմ պետք է միայն ապրել և իրենց հարստությունը բազմապատկել։ Բայց «նորահարուստների» ամբողջ դժբախտությունն էլ հենց այն էր, որ նրանք հանգիստ ապրել չէին կարող։ «Երկրի տերերից» ոչ մեկը հաստատապես չգիտեր՝ արդյոք վաղն ինքը բարօրության մեջ կլինի՞, թե՞ իրեն կդլխատեն։ Նոր բուրժուազիայի աճման ու ամրապնդման գործընթաց հեղափոխական կառավարությունը և տեռորի ռեժիմը նրա համար ավելի ու ավելի ատելի էին դառնում։ Դրանց հետ դեռ կարելի էր հաշվի նստել, քանի դեռ արտաքին խնդրամահության սպառնալիքը գոյություն ուներ։ Բայց այդ սպառնալիքը վաղուց արդեն անցել է։ Էլ ինչո՞ւ հանդուրժել մշտական սարսափը։ Հանուն ինչի՞ լսել հյուծախտավոր Ռոբեսպիերի և նրա բարեկամների զառանցական գաղափարախոսությունը։ Գրողի ծո՛ցը գնան նրանք բոլորը, գրողի ծո՛ցը գնա հեղափոխական կառավարությունը իր տեռորի, մաքսիմումի, վանտոզյան դեկրետների և այլ սիրելի բաների հետ։

Բայց մտքերից ու խոսքերից գործը դեռ շատ հեռու է։ Առաջինը գլուխ բարձրացրին Դանտոնը և նրա ամենամոտիկ շրջապատը։ Դանտոնը գործում էր խորամանկորեն, զգուշությամբ. նա երբեք իր մտքերը չէր հայտնում, նա թաքնվում էր ուրիշների հետևում, նա փորձում էր Անկաշառելիին սիրաշահել։ Այդ ամենը չօգնեց։ «Նորահարուստների» տրիբունը մերկացվեց ու կործանվեց։ Նրա հետևից ձգվեց արյունոտ պոչը։

Այն ժամանակ նոր սեփականատերերը հասկացան, որ իրենց ժամը դեռ չի հասել։ Ոչ, ժողովրդի ստեղծած և ժողովրդի վրա հենվող կառավարությունը, տապալելը բնավ էլ հեշտ բան չէ։ Մինչև Ռոբեսպիերի և Սեն-Ժյուստի գլուխները կըստանաս, սեփական գլուխդ կկորցնես։ Եվ շփոթված, լեղապատառ եղած «տերերը երկրի» ժամանակավորապես լռեցին ու հանդարտվեցին։ Թվում էր, թե նրանք հաշտվել են իրերի նոր կարգ ու կանոնին։ Թվում էր, թե նրանք անկեղծորեն ծափահարում են Ռոբեսպիերին և պաշտպանում նրա բոլոր առաջարկությունները։ Բայց այդպես միայն թվում էր։

Ժերմինալի կեսին դանտոնիստների ջախջախումն ավարտվեց, իսկ արդեն ֆլորեալի առաջին օրերին սկսեց նոր դավադրություն առաջանալ։ Նրա սկսողներն իրենց նախորդներից է՛լ ավելի խորամանկ էին գործում։ Մինչև Անկաշառելին նրանց պլանների մասին կռահեց, նրանք հեռու գնացին։ Բայց նրանք ովքե՞ր էին։

Դավադիրների մեջ գլխավոր դեր կատարելու հավակնություն ուներ Ժան Լամբեր Տալյենը։ Դա, ինչպես ասում են, մի ճարպիկ ստահակ էր։ Սեղանապետի որդի, նոտարի աշակերտ, հետո տպարանի ծառայող, նա հեղափոխության ժամանակ արագությամբ ու խորամանկորեն իր կարիերան ձեռք բերեց. թատերական ժեստին հակամետ, ճոռոմախոսությամբ պճնազարդվելու վարպետ, Տալյենը Յակոբինյան ակումբի ղեկավար դարձավ, Կոմունայում և Կոնվենտում ընտրվեց։ Նա իր «հարուստ բնավորությունը» լիովին բացահայտեց այն բանից հետո, երբ նշանակվեց Կոնվենտի պատգամավոր Բորդոյում։ Այստեղ շարունակելով ձախ ժեստով ու ճամարտակությամբ քողարկվել, նա հարստանալու և ածնական հաշիվ մաքրելու նպատակով տեռորը լայնորեն օգտագործում էր։ Իսպանացի մի բանկիրի դուստրով՝ գեղեցկուհի Թերեզա Կաբառյուսով հմայվելով, Տալյենը նրա հետ ամուսնացավ և նրա միջոցով կապվեց Բորդոյի խոշոր վաճառականների՝ մուրդարծամոլների մի ամբողջ ոհմակի հետ, որոնց հետ միասին կատարում էր քաղաքի պլանաչափ կողոպտումը։ Այդ կաշառակները բռնագրավման պատրվակով սովահար Բորդոյում հափշտակում էր ոչ միայն պարենամթերքի պաշարներն ա

Նրբահամ գինիները, այլև «նախկիններ»-ից բռնագրաված թանկարժեք իրերը, ոսկին ու արծաթը։ Նա իրեն շրջապատող կոպոպոտիչ անձանց հետ միասին մեկ միլիոն երեք հարյուր բառնհինգ հազար ֆրանկ յուրացրեց։ Այդպիսի մեթոդներով գործելով, Տալյենը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այնպիսի հարստություն դիզեց, որը նրան թույլ տվեց Նորմանդիայում ձեռք բերել տարեկան մոտավորապես տասնհինգ հազարի եկամուտ տվող կալվածքներ։ Միանգամայն հասկանալի է, որ այդ սպեկուլյանտն ու գործամոլը խորապես ատում ու վախենում էր իրեն մերկացնող Ռոբեսպիերից։ Վախենում էր և իր սարսափը թաքցնում ստի ու շողոքորթության դիմակի տակ։

Տալյենի արժանի բարեկամը և օգնականը Ֆրերոնն էր, կոլեջից Ռոբեսպիերի և Դեմուլենի ուսումնակիցը։ Մարսել ուղարկվելով, այդ գործիչն այնտեղ իր պաշտոնակից Բառասի հետ միասին դաժան տեռոր հաստատեց, Կոլո դ'Էրբուայի և Կարյեի հետ մրցակցելով։ Տեռորը կատարվում էր բացառապես անձնական հարստացման նպատակով։ Ընդ որում Մարսելի «կարգուկանոնի պահապանները», ճիշտ ինչպես և Տալյենը, ուղղակի գողությունից չէին խորշում։

Երբ Ֆրերոնին և Բառասին Մարսելից ետ կանչելուց հետո նրանց առաջարկվեց ութ հարյուր հազար ֆրանկ առհաշիվ գումարը պետական գանձարան մուծել, խաբեբաները դրա փոխարեն զեկուցագիր տվեցին, թե ինչպես իրենց կառքը ցրանցքն է ընկել և դրամը... կորել է։ Գանձարանում աշխատող նրանց բարեկամները մի կերպ միջադեպը կոծկեցին, բայց ոչ երկար ժամանակով։ Քանի դեռ իշխանության գրյուսեն էր Անկաշառելի կոչվող մարդը, հափշտակիչները ոչ մի բոպե հանգիստ ունենալ չէին կարող։

Տալյենի, Ֆրերոնի և Բառասի ամենամոտիկ շրջապատը կազմում էին ճիշտ այդպիսի գործամոլներ, հենց նման երկրիմի քաղաքագետներ։ Դրանք էին կապիտ Բուրդոնը (ուազացի), անողոք և ձեռներեց Մերլենը (տիոնվիլցի), նենգ Լեժանդրը, խոշոր սպեկուլյանտ Ռովերը, ուիստագրուժ Լեկուանտրը։ Այդ գործիչների մեծամասնության բնորոշ հատկանիշը մոմենտին հարմարվելու և այն իր համար օգտագործելու հմտու-

թյունն էր։ Իրենց հայացքներով ու նպատակներով տիպիկ աջեր լինելով, նրանք «մոդային» հետևելով, ծպտվում էին իբրև ձախեր և տեռորը գովաբանելով, ամեն կերպ վարկաբեկում էին այն, ինչպես նաև ամբողջ հեղափոխական-դեմոկրատական ռեժիմը միասին առած։ Այդպիսի միմիկրիան հետագայում Տալյենի խմբին օգնեց մոտենալու Կոնվենտի և Յակոբինյան ակումբի ձախ խմբավորումներին։

Այսպիսով, մի որոշ ժամանակ առաջին դավադիրները, դեռևս ոչ շատ մեծաքանակ, երկչոտ ու անվստահ, ամեն կերպ քողարկվելով, իրենց գործը կատարում էին գաղտնիքի քողի տակ։ Նրանք Կոնվենտում համակրողներ էին գտնում և ապավինում ապագային։ Եվ հանկարծ նրանց համակեց ոգեակալ ուրախությունը. նրանք զգացին, որ կառավարության ներսում պատակտում է սկսվել։

Հեղափոխական կառավարությունն իր էությամբ երկմիասնական էր. նրա երկու կոմիտեներն էլ սկզբունքորեն հավասար իշխանություն ունեին և պետք է բոլոր կարևոր հարցերի մասին համատեղ որոշումներ ընդունեին։ Սակայն ժամանակի ընթացքում այդ հավասարությունն սկսեց ավելի ու ավելի խախտվել Հասարակական փրկության կոմիտեի օգտին։ Այդ կոմիտեն գլխավորող Ռոբեսպիերը շարունակ ջանքեր էր թափում՝ ամբողջ լիիշխանությունը նրա ձեռքում կենտրոնացնելու։ Այդ ուղղությամբ առանձնապես շատ բան կատարվեց ժերմինալյան դատավարությունների ժամանակաշրջանում։ Արևելա-Հնդկական ընկերության գործը քննելիս հիմնական զեկուցողը, Հասարակական անվտանգության կոմիտեի անդամ Ամարն ամբողջ մեղադրանքն այնպես կառուցեց, որ նրա քաղաքական իմաստը քողարկվեց։ Ռոբեսպիերը Բիլո-Վարենի աջակցությամբ անհապաղ մատնանշեց այդ բանը, և մատնանշեց բավականաչափ խստորեն, որ Ամարի սրտում վրիժառու չարության զգացմունք առաջացրեց։ Ամարին մեղադրելով, Անկաշառելին անվստահություն ցույց տվեց Հասարակական անվտանգության կոմիտեի նկատմամբ ամբողջությամբ առած։ Այդ ժամանակվանից բոլոր կարևոր հարցերին վերաբերող զեկուցումները Հասարակական փրկության կոմիտեն իր վրա

Լ. վերցնում, ընդ որում այդ զեկուցումները, որպես կանոն, տալիս էին Ռոբեսպիերը, Սեն-Ժյուստը կամ Կուտոնը։ Ժերմինալի 27-ին (ապրիլի 16-ին) Սեն-Ժյուստի առաջարկությամբ Կոնվենտան ընդունեց շատ կարևոր մի դեկրետ Հասարակական փրկության կոմիտեին կից ընդհանուր ոստիկանության բյուրո ստեղծելու մասին, որի ղեկավարը դարձավ հենց զեկուցողը, ընդ որում Սեն-Ժյուստի բացակայության դեպքում նրան պետք է փոխարիներ Ռոբեսպիերը կամ Կուտոնը։ Այժմ Հասարակական փրկության կոմիտեն ոչ միայն գերակշռություն ստացավ Հասարակական անվտանգության կոմիտեի նկատմամբ, այլև հնարավորություն ուներ արդյունավետ կերպով վերահսկելու նրա գործունեության ամբողջ ոլորտը։ Այդ հանգամանքը առաջ բերեց տուժած Կոմիտեի մեծամասնության դայրույթը։ Ամարը, Վադյեն և ուրիշներ սկսեցին դանգատվել եռապետությունից, որ նոր կարգուկանոնը իրենց ձեռքն ու ոտքը կապում են, իրենց գործակալների գործունեությունը խանգարում և այլն։ Քանի որ այդ անձնավորություններն առաջներում էլ Ռոբեսպիերի հետ մի շարք սոցիալական ու գաղափարական հարցերի շուրջը զգալի տարաձայնություններ ունեին, ուստի այժմ նրանք սկսեցին եռապետությանը վատ քողարկվող ատելությամբ վերաբերվել։ Հասարակական անվտանգության կոմիտեի միայն երկու անդամներ՝ Լեբան և Դավիդը, մնում էին Մաքսիմիլիանի հավատարիմ կողմնակիցներ, բայց նրանք վճռական նշանակություն ունենալ չէին կարող։

Սակայն այս ամենը մեծ դժբախտություն չէր ներկայացնում։ Եթե Հասարակական փրկության կոմիտեն միասնական մնար, ապա, իհարկե, Վադյեի, Ամարի կամ Վուլանի դայրույթը նրա համար սարսափելի չէր լինի։ Սակայն տարաձայնություններն սկսեցին ավելի ու ավելի պարզ կերպով երևան գալ նաև կառավարական գլխավոր կոմիտեում։ Նրա տասնմեկ անդամներից Ռոբեսպիերը վայելում էր միայն Սեն-Ժյուստի և Կուտոնի անվերապահ աջակցությունը։ Կոմիտեի երկու անդամներ՝ Բիլո-Վարենը և Կոլո դ'Էրբուան, պատկանում էին ձախերի թևին, երկուսը՝ Կարնոն և Պրիերը (Կոտ-դ' Օրից) ռոբեսպիերականների նկատմամբ առանձին, թշնամական դիրք էին գրավում, Ռոբեր Լենդեն բարեհաճ վերաբերմունք ուներ

չափավորների նկատմամբ, Բարերն ինտրիգներ էր սարքում, վերջապես, մնացած երկուսը՝ Ժանրոն Ենոտ-Անդրեն և Պրիերը (Մարնայից), կառավարության գործերին չէին մասնակցում, մշտական գործուղումների մեջ լինելով։

Բիլո-Վարենը և առանձնապես Կոլո դ'Էրբուան անցյալում էբերտիզմի հետ էին կապված։ Եվ թեպետ նրանք էբերից հրաժարվեցին, նրանց հին հայացքները մեծ փոփոխությունների չենթարկվեցին։ Նրանք երկուսն էլ Ռոբեսպիերին աշխատակցում էին, բայց շատ բանից գժգոհ էին մնում։ Նրանց դուր չեկան բուրժուազիայի օգտին մաքսիմումի սիստեմում կատարված զիջողությունները։ Նրանց զայրացնում էր Ռոբեսպիերի կրոնական քաղաքականությունը, որի մեջ նրանք կեղծ բարեպաշտությունից ու երկերեսանությունից բացի ոչինչ չէին տեսնում։ Վերջապես, նրանց խիստ անհանգստացնում էր Անկաշառելիի աճած համբավը, որը յակոբինականների առաջնորդի անհատական որոշ հատկանիշների շնորհիվ առանձնապես կասկածելի էր թվում։

Ռոբեսպիերը, որը շարունակ աչքի էր ընկնում խորն անկեղծությամբ, իր պաշտոնակիցների ինքնատիրությունը չէր խնայում։ Նրա բերանից զգալիորեն ավելի հաճախ նախատինքներ ու խրատներ էին դուրս թռչում, քան գովեստներ ու հաճոյախոսություններ։ Իր նկատմամբ խստապահանջ լինելով, նա ոչ պակաս խստապահանջ էր նաև ուրիշների նկատմամբ։ Նախկին բարեկամներից խաբված, նա հեշտությամբ չէր մոտերմանում նոր բարեկամների հետ և Կոմիտեում իր ընկերների մեծամասնությանը վերաբերվում էր սառը զսպվածությամբ, որը նրանց համար անհասկանալի ու տհաճ էր։ Եթե դրան ավելացնենք, որ Ռոբեսպիերը առավել կարևոր հարցերին վերաբերող զեկուցումները վերապահում էր անձամբ իրեն կամ իր ամենամոտիկ զինակիցներին, որ նա, իր մտքերն ու եզրակացությունները հիմնավորելով, իր մասին հաճախ ու շատ էր խոսում, որ նա իր որոշ առաջարկությունները ուղղակի քվեարկության էր դնում Կոնվենտում, առանց դրանք նախապես Կոմիտեի անդամների հետ քննարկելու, ապա պարզ կը դառնա, թե ինչու Կոլո դ'Էրբուան, Բիլո-Վարենը և նրանց մերձավորները սկսեցին Մաքսիմիլիանին նախատրամադրել

վածությամբ ու անվստահությամբ վերաբերվել։ Այդ անվստահությունն առանձնապես ուժեղ էր առանձին անձնավորությունների համբավը և անչափ մեծ հեղինակություններ չընդունվող Բիլո-Վարենի մոտ։ Հասարակական անվտանգության կոմիտեից ստացվող նախազգուշացումները հաշվի առնելով, ինչպես նաև Նենդ Բարերի փսփսոցը լսելով, Բիլոն ավելի ու ավելի էր հավատում մոտալուտ «բռնապետության» ու «դիկտատուրայի» վերաբերյալ հերյուրանքներին։ Նա ֆրրրնալի սկզբին, առանց անունը տալու, առաջին հարձակումը կատարեց։ «Իր ազատության համար նախանձախնդիր ամեն մի ժողովուրդ,— ասաց Բիլոն,— պետք է զգուշանա բարձր դիրքերը զբաղեցնող մարդկանց ն ու յ ն ի ս կ ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն ն ե ր ի ց»։ Բոլորի համար պարզ էր, թե ում հասցեին ակնարկ արվեց։ Բիլոն ավելի հեռու գնաց։ Նա սկսեց մանրամասն խոսել հնադարյան բռնապետների մասին, ի միջի այլոց, ավելացնելով այժմեականության նկատմամբ բավական պարզորոշ ակնարկներ։ «Նենդ Պերիկլեսը,—բարբառում էր հռետորը,— ժողովրդական երանգներ էր օգտագործում՝ աթենացիների համար իր կոած շղթաները քողարկելու։ Նրա խոսքերով, ամբիոն բարձրանալուց առաջ ինքն իրեն ներշնչում էր. «Հիշիր, թե դու ինչ պիտի ասես ազատ մարդկանց»։ Եվ նույն այդ Պերիկլեսը, բացարձակ իշխանություն ձեռք բերելով, ամենաարյունռուշտ բռնակալը դարձավ»։ Ռոբեսպիերը հին վերքերը չբանալու համար խուլ էր ձևանում։ Բայց ուրիշները խլությամբ չէին տառապում։ Բիլոյի այդպիսի արտահայտությունները ամբարտավան Կարնոյին շատ դուր էին գալիս, և թեպետ նա ձախերից հեռու էր, տվյալ հիմքի վրա Կոմիտեի երկու անդամները ընդհանուր լեզու գտան։ «Մի՞թե այն հանրապետությանը,— գրում էր Կարնոն իր գեկուցումներից մեկում,—որի համար որևէ մի մարդու արժանապատվությունը և ն ու յ ն ի ս կ ա ռ ա ք ի ն ու թ յ ու ն ն ե ր ը անհրաժեշտ են դարձել»։

Կարնոյի և Ռոբեսպիերի միջև հարաբերությունները վատից ի վեր լարված էին։ Իրար էլ ավելի սաստիկ էին ատում Կարնոն և Սեն-Ժյուստը, որոնք ստրատեգիայի ու տակտիկայի կոնկրետ հարցերի մասին տարբեր կարծիքներ ունեին։

Ռազմական նշանավոր ինժեներ ու աչքի ընկնող կազմակերպիչ Լազար Կարնոն, հեղափոխության պահանջով պաշտպանությունը ղեկավարելով, գործունեության իր ասպարեզում շատ ու արդյունավետ աշխատեց։ Սակայն նա համեստությամբ աչքի չէր ընկնում։ Զգողության մշտական կենտրոն լինելով ոչ միայն գեներալական կազմի ու ռազմական մասնագետների, այլև ամեն տեսակ մատակարարների, մեծագնորդների և այլոց համար, Կարնոն, ինքնավստահ ու գոռոզ, իր պաշտոնակից Պրիերի հետ միասին ձգտում էր Կոմիտեի մյուս անդամներից մեկուսանալ և ինքնուրույն քաղաքականություն վարել։ Օբյեկտիվորեն նոր բուրժուազիայի պլանները պաշտպանելով, Կարնոն հետևում էր այն տեսակետին, որ պատերազմին պետք է ագրեսիվ բնույթ տալ։ Համարելով, որ պատերազմը պետք է նվաճված երկրների միջոցներով վարել, Կարնոն, մասնավորապես, խորհուրդ էր տալիս Բելգիան «կողոպտել»։ Բայց այդպիսի պլանների իրականացման ճանապարհին անսասանորեն կանգնած էին Ռոբեսպիերը և նրա զինակիցները, իրենց սկզբունքներին ու գաղափարներին հավատարիմ, նրանք առաջվա նման երազում էին «համաշխարհային երջանկության արշալույսի» մասին և վճռականորեն դեմ էին ազատագրական պատերազմի վերածմանը ավազակային, հափշտակողական պատերազմի։ Պարզ էր, որ ռոբեսպիերիստները թույլ չեն տա իրենց ամենապայծառ իդեալները հաշվից դուրս գցելու։ Ռոբեսպիերի խումբը և Կարնոյի խումբը ընդհանուր լեզու գտնել չէին կարողանում։ Նոր հազթանակների հետ այդ բանն ակներև էր դառնում, ու կատաղած Կարնոն նույնպես սկսեց խոսել դիկտատուրայի և բռնապետության մասին, կրկնելով ձախերի մեղադրանքները։

Այսպիսով, Կոմիտեում մթնոլորտը շիկանում էր, և պայթյունն անխուսափելի էր։ Այն տեղի ունեցավ պրերիալի 22-ի օրենքն ընդունելու հաջորդ օրը, երբ Բիլո-Վարենը, առանց բազմության ներկայությունից քաշվելու, Անկաշառելիին ուղղակի հակահեղափոխական անվանեց և նրան մեղադրեց ամբողջ Կոնվենտը գիլյոտինելու ցանկության մեջ։ Բիլո-Վարենի բերանից այդպիսի մեղադրանք լսելն ավելի քան տարօրինակ էր։ Ոչ պակաս տարօրինակ էին այն կծու հեգնանքները, որ պրերիա-

լի օրենքի առիթով ձախ Կոլո դ'Էրբուան, Վադյեն և Վուլանը Ռոբեսպիերի բացակայությամբ թափում էին նրա վրա։ Իսկապես, թվում էր, թե ո՞վ կարող էր արյունոտ դեկրետն ավելի տենչալ, քան կարտեշով մարդկանց գնդակահարող Կոլո դ' Էրբուան։ Ո՞վ կարող էր մռայլ, գթություն չիմացող Բիլո-Վարենից ավելի անկեղծորեն ուրախանալ այդ օրենքով։ Եվ մի՞թե այն ձեռնտու չէր տեռորի այնպիսի համոզված կողմնակիցներին, ինչպես Վադյեն կամ Վուլանը։ Եվ, սակայն, պարզվեց, որ հենց այս անձնավորություններն էին դժգոհների ավանգարդը կազմում։

Սակայն հպիվ թե երբևիցե ավելի կեղծավոր մի դժգոհություն է գոյություն ունեցել։ Իրականում նոր դեկրետը Բիլոյի և նրա բարեկամների սիրտը ոխակալ ուրախությամբ լցրեց։ Նրանք դատան Ռոբեսպիերի աքիլեսյան գարշապարը։ Անկաշառելին հասավ պրերիալի օրենքի հաստատման։ Դե ինչ, այժմ նա այդ օրենքի համար պատասխա՛ն կտա։ Այժմ նրա վրա կարելի կլինի բարդել ուզած առիթով թափված ուզած արյան հանցանքը։ Եվ երբ ժողովուրդը, մահապատիժներից հոգնելով, տարակուսանքով իր հայացքն ուղղի կառավարությանը, նրան անփոփոխ կերպով կտրվի միևնույն պատասխանը՝ «Անկաշառելին ա՛յդ էր ուզում»։

Եվ կոմիտեներն «աշխատանքի» անցան։ Այն ժամանակ, երբ Սեն-Ժյուստն ինտերվենտների բանակների դեմ մարտնչում էր, իսկ Ռոբեսպիերը ավելի ու ավելի հազվադեպ էր երևվում Հասարակական փրկության կոմիտեի նիստերին, վերջինս և առանձնապես նրա թույլտվությամբ Հասարակական անվտանգության կոմիտեն սկսեցին տենդորեն իրականացնել «արյան ծրագիրը», ատելի եռապետությունը տապալելու ծրագիրը։

Վրա հասավ «սրբազան գիլյոտինի» թագավորությունը։ Գլուխները հասած պտուղների նման թափվում էին կառափնարանի պատվանդանի մոտ։ Քառասունհինգ օրվա ընթացքում, պրերիալի 23-ից սկսած, Հեղափոխական տրիբունալը 1350 մահվան դատավճիռ կայացրեց, գրեթե այնքան, որքան նախընթաց տասնհինգ ամսում։ Դատավարության արա-

դացված կարգի հետևանքով դատավճիռներն անհապաղորեն հաջորդում էին մեկը մյուսին և անմիջապես ի կատար ածվում։ Մարդու ճակատագիրը երբեմն այնպիսի արագությամբ էր ավարտվում, որ շունչ էր կտրվում. առավոտյան ժամը հինգին նրան կալանավորում էին, ժամը յոթին՝ փոխագրում Կոնսյերժերի, իններին՝ մեղադրական ակտը հայտնում, տասին՝ նա նստում էր մեղադրյալների աթոռին, ցերեկվա ժամը երկուսին դատավճիռն ստանում և ժամը չորսին՝ գլխատվում։ Ամբողջ արարողության համար՝ կալանավորումից մինչև մահապատիժը, կես օրից պակաս ժամանակ էր պահանջվում... Կառավարական կոմիտեներն ամեն օր Հեղափոխական տրիբունալ էին բերում տասնյակ զոհեր, բայց որոշ օրեր առանձնապես առատ էին լինում. այսպես, տերմիդորի 3-ին հրապարակվեց երկու որոշում, որոնք մեղադրյալների աթոռներին նստեցրին 348 մարդ։ Շատ հաճախ միևնույն գործով դատի էին կանչում նույնիսկ միմյանց չճանաչող մեղադրյալների։ Բանտերում լրտեսները, թաքուն ինչ-որ անզգույշ խոսքեր լսելով, հանպատրաստից եբևակայական դավադիրների ցուցակներ էին կազմում, որոնց մեջ դրանցում էին տասնյակ, իսկ երբեմն էլ նաև հարյուրավոր անուններ։ Մեղադրման այդպիսի սիստեմի հիման վրա տրիբունալը դատապարտեց Բիսետրի 73 և Լյուքսեմբուրգյան բանտի 156 «դավադիրներին»։ Բայց ինչպես էլ բանտերն արագ էին դատարկվում, կառափնարանին զոհեր մատակարարելով, նրանք է՛լ ավելի արագ էին լցվում։ Մինչև պրերիալի 23-ը Փարիզում 7321 կալանավոր կար, մեկուկես ամիս հետո դրանց թիվը հասավ 7800-ի։

Իսկ ովքե՞ր էին այդ հազարավոր նոր կալանավորները և դիլյոտինի հարյուրավոր նոր զոհերը։ Ռոբեսպիերը, ջղաձգորեն հետամուտ լինելով պրերիալի օրենքի ընդունմանը, նրկատի ուներ ամենից առաջ վերացնելու «մի քանի օձերի», իր համեմատաբար փոքրաթիվ մեծ թշնամիներին, Կոնվենտի անդամների, որոնց նա որոշակիորեն ճանաչում էր որպես հակակառավարական դավադրության մասնակիցների։ Սակայն այդ գործիչներից և ոչ մեկը ոչ միայն մահապատժի չենթարկվեց, այլ նույնիսկ չկալանավորվեց։ Պրերիալի դաժան օրենքն այն մարդկանց չէր հարվածում, որոնց համար նախա-

սահմանված էր։ Հակառոբեսպիերական դավադրության հետագա հասունացման ժամանակաշրջանում փորձառու և դաժան ձեռքերով գործադրվելով, այդ օրենքը պետք է Անկաշառելիի համբավը թուլացներ, նրա հեղինակությունը գցեր, մասսաներին ստիպեր նրանից երես դարձնելու։ Այդ օրենքի զոհեր դարձան որոշ թվով իսկական սպեկուլյանտների, սաբոտաժնիկների և հանրապետության մանր թշնամիների հետ միասին պատահական, հաճախ բոլորովին անմեղ մարդիկ՝ Փարիզի արվարձանների բնակիչներ, փողոցային առևտրականներ, իրենց վիճակից դժգոհ աղքատ մարդիկ։ Այդպիսի «դավադիրների» լեգիոնները դահճի ձեռքը հանձնելով, այդ գործողությունը կատարողներն ասես լռիկայն Փարիզի ժողովրդին ասում էին. «Տեսե՛ք։ Այդպե՛ս էր ուզում Անկաշառելին...»

Պրերիալի վերջին հեղափոխական տրիբունալի քննարկած գործերի մեջ առանձնապես աչքի էր ընկնում «օտարերկրացիների դավադրությունը», կամ, այլ կերպ՝ «Կարմիր բլուզների» գործը։

Պրերիալի 3-ի լույս 4-ի (մայիսի 22—23-ի) գիշերը պարոնկը Ֆավար թատրոնի հրապարակով անցնելիս հանկարծ հուսահատական ճիչեր լսեց։ Ճիչերը լսվում էին № 4 տնից, որտեղ ապրում էր Կոլո դ՝ Էրբուան։ Նետվեցին այնտեղ։ Սանդուղքին կանգնած էր Կոլոն՝ գունատ ու քրտնակոխ, կողքին ընկած էին սրի կոտրվածքներ։ Կոլոն հայտնեց, որ ձեռնամարտից դուրս պրծավ, ընդ որում նրա վրա ատրճանակից երկու անգամ կրակեցին, բայց գնդակներից ոչ մեկը նպատակակետին չդիպավ։ Մարդասպանը սենյակում բարիկադավորվել էր և բղավում էր, որ կկրակի յուրաքանչյուրի վրա, ով կըփորձի ներս մտնել։ Փականագործ ժեֆրուան, սպառնալիքներին չնայելով, դուռը բաց արեց և իսկույն վայր ընկավ ուսից վիրավորված։ Հանցագործին բռնեցին։ Նա հիսուն տարեկան մի մարդ էր։ Նրա անունը Ամիրալ էր. նա ազգային վիճակախաղի գործում գրասենյակային ծառայող էր։ Նրան հարցաքննեցին։ Նա չէր թաքցնում, որ իր նպատակը սպանությունն էր, սակայն ոչ թե Կոլո դ՝Էրբուայի, այլ Ռոբեսպիերի. նա

Ռոբեսպիերին սպանելու նպատակով նախօրյակին եկել էր Կոնվենտ և սկսել սպասել իր զոհին։ Կոնվենտում վիճաբանություններ էին տեղի ունենում։ Բարերի երկար զեկուցումը հանցագործին քնեցրեց, իսկ երբ նա արթնացավ, Անկաշառելին արդեն գնացել էր։ Այն ժամանակ Ամիրալը զայրույթից վճռեց որևէ մեկ ուրիշի սպանել, և այստեղ նա ընտրեց Կոլոյին, որի հետ նա ապրում էր միևնույն տանը։

Հենց նույն օրը, երեկոյան ժամը իններին մոտ, Ռոբեսպիերի բնակարանը եկավ երիտասարդ մի օրիորդ, թղթավաճառի դուստրը, որն իրեն Սեսիլ Ռենո անվանեց։ Իմանալով, որ Մաքսիմիլիանը տանը չէ, նա սկսեց ոստիկ կատաղել և հայտարարեց, թե պաշտոնատար անձնավորությունը պարտավոր է այցելուներ ընդունել։ Նրա համառությունը, խոսելու տոնը և ամբողջ վարմունքը կասկածելի թվացին։ Նրան բռնեցին ու խուզարկեցին։ Երկու դանակ գտան։

— Նա ինչո՞ւ եկավ Ռոբեսպիերի մոտ։

— Տեսնելու բռնակալի կերպարանքը։

— Իսկ դանակները գործադրելու ի՞նչ մտադրություն ուներ։

— Ոչ մի։

Նրա վերջին պատասխանը հակասում էր մնացած ամեն ինչին։ Նա չէր թաքցնում իր ատելությունը հանրապետության նկատմամբ, հայտարարեց, որ միմիայն թագավորին գերադասում է հիսուն հազար բռնապետներից, ընդ որում վերջում նշեց բանտ գնալու և գիլյոտինվելու իր պատրաստակամությունը։

Կալանավորների գործի հետաքննությունը իր վրա վերցրեց Հասարակական անվտանգության կոմիտեն։ Մարդասպանների ձեռքը զենք տված իսկական հանցագործներին գտնելու գործով զբաղվելու փոխարեն,— իսկ նրանց գտնելն ամենևին դժվար չէր, և Կոմիտեի անդամները նրանց լավ էին ճանաչում,— գործին բոլորովին ուրիշ ուղղություն տրվեց։ Հետքերը կորցնելով և միաժամանակ ցանկանալով հանուն «բրոնակալի» մահապատժի ենթարկված բազմաթիվ մարդկանց մահվան համար Ռոբեսպիերին պատասխանատու դարձնել, Կոմիտեի ջանասեր ինտրիգանները որոշեցին Սեսիլ Ռենոյին և Ամիրալին իսկական դավադիրներից շատ հեռու հսկայական

մի «դավադրության» մասնակիցներ դարձնել։ Այդ նպատակով Կոմիտեն տասնյակ անկանոն ձերբակալություններ կատարեց, զուտ արտաքին նշաններով պատահական մարդկանց կալանավորելով։ Կալանավորվեցին հանցագործուհու հայրն ու երեք եղբայրները. նրանցից երկուսը, որ ծառայում էին բանակում, նախօրոք Փարիզ կանչվեցին։ Հետո կալանավորեցին դպրոցի ուսուցիչ Կարդինալին նրա համար, որ նա Ռոբեսպիերի մասին վիրավորական խոսքեր է ասել, ումն Պեն դ'Ավուանի՝ այն բանի համար, որ նա պրերիալի սկզբին ճաշել էր Ամիրալի հետ, քաղաքացուհի Լամարտինյերին՝ Ամիրալի սիրուհուն, ումն Պորբեֆի՝ նրա համար, որ երբ նա իմացավ մարդասպանի կալանավորման մասին, նրա բերանից դուրս թռավ մի բացականչություն՝ «Շատ ցավալի է». քաղաքացուհի Լեմուանին՝ նրա համար, որ Պորբեֆը խոսեց նրա ներկայությամբ։

Բայց դա քիչ է. հարկավոր էր «դավադրությանը» օտարերկրյա երանգավորում տալ և այն «նախկիններին» հետ կապել։ Այստեղ հիշեցին տխրահռչակ բարոն Բատցին և նրա բարեկամներին։ Եվ թեպետ Ամիրալի ու Սեսիլ Ռենոյի գործն այդ անորսալի ավանտյուրիստի հետ կապված լինելու մասին ոչ մի տվյալ չկար, նրանց որոշեցին միացնել։

Այն օրերին, երբ Բատցը դեռ Փարիզում էր ապրում, նա քողարկման նպատակով մի քանի բնակարան էր պահում։ Ի միջի այլոց, նա ապրում էր Հելվեցիուսի փողոցում ումն Ռուսելի մոտ։ Այդ մասին իմացան։ Հարցաքննության կանչված Ռուսելը պատմեց, որ Բատցի հետ ծանոթացել է դերասանուհի Գրան-Մեզոնի մոտ, վերջինիս քաղաքամերձ՝ Շարոնում գտնվող տանը, որտեղ սովորաբար հանդիպում էին Բատցի հանցակիցները։ Գրան-Մեզոնն իսկույնևեթ գրանցվեց «դավադիրների» ցուցակում։ Նրա հետ միասին դատի կանչեցին մի քանի նախկին արիստոկրատների՝ Լավալ դը Մոնմորանսին, թագաժառանգ Ռոգան-Ռոշֆորին, կոմս դը Պոնսին, գերկոմս դը Բուասանկուրին, հայր ու որդի Սոմբրեյլներին, կոմս Ֆլերին և ուրիշների։

Հատուկ նպատակներով հենց այդ գործի տակ դցեցին դևոս

ժերմինալի 10-ին ուրիշ մեղադրանքով կալանավորված Սենտ-Ամարանտի ընտանիքը։

Քաղաքացուհի Սենտ-Ամարանտը հեղափոխությունից առաջ խաղաորջ էր պահում, որտեղ նրա բարձրաստիճան հաճախորդները զվարճանում էին թղթախաղով և ուրիշ ավելի թեթևամիտ հաճույքներով։ Պատվարժան տիկինը իր արհեստը չթողեց նաև հետագայում, փոխվեցին միայն այցելուները։ Նախ դրանք Միրաբոն և նրա բարեկամներն էին, հետո ժիրոնդիստները, վերջապես Պալե-Ռոյալ փողոցում նրա վարձած սալոնների ամենացանկալի մշտական հաճախորդներ դարձան Դանտոնը, Շաբոն և էրո դը Սեշելը։ Այդ կնոջ՝ ոմն Սարտինի հետ ամուսնացած դուստրը իր հայացքներով ու ապրելակերպով մորը ոչնչով չէր զիջում։ Երկար ժամանակ այդ ընտանիքը, ինչպես և նրա հաստատությունը, անխոցելի էր թվում, որովհետև նրան շարունակ հովանավորում էր իշխանություն ունեցողներից ինչ-որ մեկը։ Բայց հետո, երբ ժերմինալի առաջին օրերին օրենքի սուրը կախվեց «զիջողամիտների» լիդերների գլխին, Սեն-Ժյուստը ուշադրություն դարձրեց անառակության այդ որջի վրա. նրա նախաձեռնությամբ մայրը, դուստրը և փեսան կալանավորվեցին և բանտ նետվեցին։ Այժմ Հասարակական անվտանգության կոմիտեի անդամները հանկարծ նրանց մասին հիշեցին։ Եվ ի՞նչ առիթով։ Այն պարզ պատճառով, որ երկու Սենտ-Ամարանտների ներգրավումով կարելի էր ամբողջ գործին որոշ հրապուրչություն տալ։ Ռոբեսպիերիստների թշնամիներից ինչ-որ մեկը հերյուրանքներ տարածեց, թե իբր Սեն-Ժյուստը Սենտ-Ամարանտների դեմ հարձակումներ գործեց այն պատճառով, որ նրանցից կրտսերը հրաժարվեց նրա սիրուհին դառնալուց։ Միաժամանակ պնդում էին, թե ինքն Անկաշառելին Սենտ-Ամարանտների խաղաորջում գիշերներ էր անցկացնում, որտեղ հարբում էր և բերանից պետական գաղտնիքներ թռցնում։ Դժվար էր ճշմարտանմանության նշույլ անգամ չունեցող ավելի նողկալի ու անհեթեթ մի զրպարտություն թխել։ Եվ, սակայն, թեև ոչ ոք դրան հավատալ չէր կարող, թեև դա հեշտությամբ փաստերով հերքվում էր, այն հաճույքով հաղորդում էին բերնեբերան, հաղորդում շշուկով, շուրջը նայելով և ստորաբար քմծիծաղ տալով։ «Այդ մարդկանց

պատապարտելով և մահապատժի ենթարկելով,— փսփսում էին զրպարտիչները,— Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստն ուզում են բոլոր հետքերը կորցնել և իրենց գիշերային արկածների հետքերը ոչնչացնել...»

Վերջապես, աչքի էր ընկնում այն, որ «դավադիրներին» միացրին աղքատների, հասարակ ժողովրդի՝ դառն աշխատանքով իրենց չնչին ապրուստը վաստակող մարդկանց։ Օրինակ, դրանց թվին էին պատկանում տասնյոթամյա դերձակուհի Նիկոլը, որն ապրում էր ձեղնահարկում և ուրիշ գույք չուներ, բացի մի կույտ ցնցոտիներից, որոնց վրա քնում էր։ Ո՞րն էր նրա հանցանքը։ Հայտնի չէ։ Նրան մեղադրում էին միայն այն բանի մեջ, որ նա Գրան-Մեզոնի համար ուտելիք էր տանում։

Ընդամենը հավաքեցին հիսունչորս մարդ։ Դրանց վերջին պահին միացրին չորս ոստիկանի, որոնք Ռոբեսպիերի նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք ունեցող մարդիկ էին համարվում։ Ամբողջ գործը միասին առած «օտարերկրացիների դավադրություն» անվանեցին և Հեղափոխական տրիբունալին հանձնեցին։ Պրերիալի 29-ին Ֆուկյե Տենվիլը առաջարկեց բոլոր մեղադրյալների նկատմամբ մահապատիժ կիրառել, և երդվյալ ատենակալները գատավճիռը հաստատեցին։

Մահապատժի գնացողների թափորը սոսկալի տեսարան էր ներկայացնում։ Հասարակական անվտանգության կոմիտեն բոլոր մահապարտներին «հայրասպաններ» հռչակեց։ Նրանց երկար կարմիր շապիկներ հագցրին և տեղավորեցին ինը քառանիվ սայլերում։ Մահապատժի վայրը Հեղափոխության հրապարակի փոխարեն նշանակեցին Գահի հրապարակը, որի հետևանքով զարհուրելի թափորը պետք է անցներ բանվոր մարդկանցով բնակեցված ամբողջ Սենտ-Անտուան արվարձանի միջով։ Դրանում նույնպես հատուկ դիտավորություն կար։ Երեք ժամ շարունակ սայլարկափողոցով անցնելով դըղրդում էին մարդկանց մահապատժի տանող սոսկալի կառքերը, որ լցված էին կարմիր հագնված մարդկանցով, որոնց մեջ կային կանայք, երիտասարդ աղջիկներ, գրեթե երեխաներ։

— Ահա մի թափոր, որ նման է կարդինալների շքերթի,—

հոհոում էր Ֆուկյե-Տենվիլը, ակնարկելով «պապին»՝ Ռոբեսպիերին։

Ամենից ավելի շատ ուրախանում էր այդ հնարանքի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ դաժան Վուլանը։

— Գնանք զոհասեղանի մոտ,— գոչեց նա իր պաշտոնակիցներին,— արյունոտ պատարագը վայելենք...— Եվ հետո, Կոմիտեի՝ սայլերին ուղեկցող գործակալներին արձագանքելով, նա բոլորից ավելի բարձր գոռում էր.— Մա՛հ Ռոբեսպիերի դահիճներին։

Անցել էր այն ժամանակը, երբ փարիզեցիները այդպիսի տեսարանները հետաքրքրությամբ դիտում էին։ Արյունը զզվանք էր առաջացնում։ Եվ սարսափահար Փարիզը երեսը շուռ էր տալիս, լսելով համառ մի ձայն, որն առանց հոգնելու կրկնում էր.

— Տեսե՛ք։ Ա՛յս էր ուզում նա՝ Անկաշառելին։

Այնինչ նույն Հասարակական անվտանգության կոմիտեն «Կարմիր բլուզների» գործին զուգընթաց պատրաստում էր ևս մեկ թխովի գործ, որով ուզում էին Ռոբեսպիերին հալածել։ Դա Կատերինա Թեոյի ամոթալի գործն էր, և այն հորինելու գլխավոր դերն ստանձնեց Վադյեն։

Պրերիալի 27-ին (հունիսի 15-ին) Վադյեն Կոնվենտի ամբիոնից հանդիսավոր կերպով հայտարարեց, թե Հասարակական անվտանգության կոմիտեն մի նոր դավադրություն է բացահայտել։ Դավադրության կենտրոնն իբր թե կազմում էր կիսախելագար մի պառավ, Կատերինա Թեոն, որն իրեն «աստվածամայր» էր հայտարարում և բազմաթիվ հավատացյալ հաճախորդներ ուներ։ Նոր «աստվածամայրը» քարոզում էր մեսիայի մոտալուտ գալուստը։ Քանի որ Թեոն Մաքսիմիլիանով հիացած էր և նրան ամեն կերպ փառաբանում էր, ուստի կարելի էր եզրակացնել, որ աշխարհի փրկիչ մեսիան, մարգարեն հենց նա է։ Այդ զուշակությունը հետ, նշեց այնուհետև Վադյեն, կապված էին Լոնդոնի և Ժենևի հետ կապ պահպանող մի խումբ արիստոկրատներ, ինչպես նաև Սահմանադիր ժողովի նախկին անդամ, վանական Ժերլը։ Այդ բոլոր անձանց Վադյեն մեղադրում էր հակահեղափոխական գործունեության մեջ և

պահանջում, որ Կոնվենտը թույլ տա նրանց Հեղափոխական տրիբունալին հանձնելու։

Ճակատագրի ծաղրով այդ օրը Ռոբեսպիերն էր նախագահում։ Վադյեն իր մեղադրանքները բարբառում էր լուրջ ու անտարբեր ձևով։ Նա ամբողջ գործն այնպես էր ներկայացրել, որ լսվում էին հռհռոցի անընդհատ պոռթկումներ և ծաղրական ծափահարություններ։ Բոլորն իրենց հայացքը հառել էին գունատ, տառապող, նախագահական աթոռին գամված և վիրավորանքի այդ սոսկալի տանջանքը ստիպված համբերությամբ տանող Ռոբեսպիերին։

Ասամբլեան հաստատեց Վադյեի առաջարկությունը և բացի դրանից որոշեց կարդացված զեկուցումն ուղարկել հանրապետության զորքերին և բոլոր կոմունաներին։

Դա Ռոբեսպիերին հասցված հրապարակային մի վիրավորանք էր։ Բայց գլխավորն առջևում էր։ Խորամանկ Վադյեն իր զեկուցման մեջ ոչ միայն խեղաթյուրեց էությունը, որովհետև իրականում Կատերինա Թեոյի քարոզները հանրապետության համար ամենևին թշնամական չէին։ Վադյեն դիտմամբ թաքցրեց հետաքննությամբ պարզված որոշ փաստեր։ Նա ոչինչ չասաց, որ Թեոյի երկրապագուների մեջ կային Դյուպլեի ընտանիքի անդամներ։ Նա թաքցրեց նաև այն, որ իր կողմից մեղադրվող Ժերլը բնակվում էր Դյուպլեի տանը և որ այն փաստաթուղթը, որով նա ապրում էր, Սահմանադիր ժողովի նախկին անդամն ստացել էր անձամբ Ռոբեսպիերից։ Այդ բոլոր փաստերը պետք է արդեն դատավարության ժամանակ հրապարակեր Ռոբեսպիերին դաղտնաբար ատող Ֆուկյե-Տենվիլը։ Այդ ուռցրած գործը կազմակերպելով և նրան առավելագույն չափով հրապարակային բնույթ տալով, դավադիրներն ուզում էին Անկաշառելիին խիստ վարկաբեկել և նրա տապալումն արագացնել։

Բայց Ռոբեսպիերը խորամանկությունը շատ լավ հասկացավ։ Նա անմիջապես Ֆուկյե-Տենվիլից գործը պահանջեց։ Դրանից հետո նա հուսահատական պայքար մղեց գործը վերացնելու կամ գեթ կասեցնելու համար։ Հասարակական փրկության կոմիտեի անդամների մեծամասնությունը, օրենքի տառով քողարկվելով, ոչ մի գնով զիջել չէր ուզում։ Հսկայա-

կան դժվարությամբ, մի քանի կատաղի միջադեպերից հետո Մաքսիմիլիանին հաջողվեց մեսիդորի 8-ին ձեռք բերել գործի հետաձգումը։ Դա նրա վերջին հաղթանակն էր։ Սակայն բազմաթիվ «բարյացակամների» շնորհիվ «Թեոյի գործը» հետագայում ևս շարունակում էր մնալ իբրև սարսափելի մի խրտվիլակ, որով Ռոբեսպիերին սպառնում էին ամեն դեպքում, ընդհուպ մինչև նրա կործանման ժամը։

Այն օրը, երբ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը Կոմիտեում տարավ իր վերջին հաղթանակը, հեղափոխական Ֆրանսիայի բանակը կոալիցիայի զորքերին հասցրեց ամենաջախջախիչ հարվածներից մեկը։ Վեցապատիկ անհաջողություններից հետո ֆրանսիացիները կռվելով անցան Սամբրան, գրավեցին Շարլերուան և մեսիդորի 8-ին (հունիսի 26-ին) Ֆլերյուսի մոտ շահեցին վճռական ճակատամարտը։ Այդ հաղթանակը որոշեց 1794 թվականի գարնան-ամռան պատերազմաշրջանի ելքը։ Ինտերվենտները ստիպված հեռանալով Լանդրեսի, Վալանսեն, Լե-Քենուա և Կոնդե ամրոցներից, խախտելով իրենց հաղորդակցման ուղիները, գլորվեցին դեպի արևելք։ Բելգիայի, Հոլանդիայի և Արևմտյան Գերմանիայի ճանապարհը բացվեց։

Սեն-Ժյուստը Ֆլերյուսյան հաղթանակի կազմակերպման գործում բավական շատ ջանքեր գործադրեց։ Նա այստեղ երևան բերեց իր ամբողջ անհողդողդությունը, հիրավի երկաթե համառություն ցույց տվեց։ Սեն-Ժյուստը պատերազմի հաջողության վրա մեծ հույսեր էր գնում։ Նա հույս ուներ, որ հաղթելու դեպքում իրեն և իր բարեկամներին կհաջողվի, թշնամական մեծամասնությանը ճնշելով, Հասարակական փրկության կոմիտեում իրենց դիրքերն ամրապնդելու։ Սակայն իրականում ուրիշ բան ստացվեց։ Ֆլերյուսի մոտ տարած հաղթանակը ռոբեսպիերիստների համար ճակատագրական հետևանքներ ունեցավ։ Այն արագացրեց դավադրության հասունացումը։ Հենց Ֆլերյուսի մոտ տարած հաղթանակից հետո տեղի ունեցավ հակաբնական թվացող այն դեպքը, երբ պահպանողականների աջ և ձախ թևերը միավորվեցին։ Ստեղծվեց այն բլոկը, որ հետագայում տերմիդորական անուն ստացավ։ Եվ այդ գոր-

ծում բավական մեծ դեր կատարեց ստվերում թաքնված մի մարդ, մեծ խարդախ և չգերազանցված կեղծավոր, դավաճան, իր քաղաքական անսկզբունքայնությամբ զարհուրելի Ժոզեֆ Ֆուշեն։

Դոնդողանման դեմքով ու թույլ ձայնով այդ անբարետես անձնավորությունն առաջին անգամ «փառաբանվեց» Լիոնում, որտեղ Կոլո դ'Էրբուայի հետ միասին հազարավոր մարդ ոչընչացրեց։ Ռոբեսպիերը, որը վաղուց էր հետևում Ֆուշեին, ժերմինալի 7-ի (մարտի 27-ի) հրամանով նրան Լիոնից ետ կանչեց։ Ֆուշեն Անկաշառելիի նկատմամբ իր ոխը թաքցնելով, փորձում էր նրա հետ հաշտվել։ Բայց Մաքսիմիլիանը գիտեր, թե ում հետ գործ ունի, և Ֆուշեի բոլոր հաճոյակատարությունները ապարդյուն անցան։ Այդ ժամանակ, է՛լ ավելի գազազած ու սաստիկ ահաբեկված, Ֆուշեն ինտրիգաներով տարվեց։ Ճարպկորեն օգտագործելով ամբոխավարության տարբեր ձևերը, հեղափոխական ֆրազեոլոգիայով ուխտադրժորեն իր ամեն մի արարքը քողարկելով, աջ ու ձախ խաբելով, փոփոխակի մե՛րթ շողոքորթելով, մե՛րթ սպառնալով, այդ փոխակերպումը շուտով դավադրության կենտրոնական գործող անձերից մեկը դարձավ, հասավ այն բանին, որ Յակոբինյան ակումբի նախագահ ընտրվեց և կարողացավ Տալյենի խումբը կապել էբերտիստների մնացորդների և մյուս ձախերի հետ։ Օգտագործելով այն հանգամանքը, որ լիոնյան հանցագործությունները, որոնց համար Ռոբեսպիերը նրան մեղադրում էր, կարող են հավասարապես վերագրվել նաև Կոլո դ' Էրբուային, Ֆուշեն նվաճեց Կոլոյի, ինչպես նաև նրա բարեկամ Բիլո-Վարենի լիակատար վստահությունը։ Նա միաժամանակ սերտ կապեր հաստատեց Կարյեի, Վադյեի, Կամբոնի և մի շարք ուրիշ մեծ գործիչների հետ, որոնք Ռոբեսպիերի նկատմամբ անբարյացակամաբար էին տրամադրված։ Աչակցելով աջերի և ձախերի, Կոնվենտի գաղտնի օպոզիցիայի և կառավարական կոմիտեների դժգոհ տարրերի մերձեցմանը, Ֆուշեն այնպիսի մի օղակ հյուսեց, որը չէր կարելի ո՛չ արձակել, ո՛չ թուլացնել. այն կարելի էր միայն ուժեղ ու արագ հարվածով կտրել, կամ մնում էր նրա աքցանի մեջ մեռնել։

Իսկապես որ, նոր դավադրությունն առանձնապես լուրջ ու վտանգավոր էր։ Այդ դավադրության ուժն ամենից առաջ կայանում էր նրանում, որ այն համախմբում էր անցյալում անհաշտելի, ռոբեսպիերիստների ինչպես աջ, այնպես էլ ձախ կողմում գտնվող խմբավորումները։ Այդպիսի համախմբումը կրկնապատկում էր դավադիրների ուժերը։ Եթե անցյալում հեղափոխական կառավարությունը կարողացավ էբերտիստներին և դանտոնիստներին զատ-զատ ջախջախել, ապա այժմ Ռոբեսպիերը և Սեն-Ժյուստը ստիպված էին գործ ունենալ հակակառավարական բոլոր ֆրակցիաների միասնական ճակատի հետ։ Ինչ որ չկարողացավ անել Դանտոնը, արեց Ֆուշեն։ Ընդ որում շատ լուրջ բնույթ ուներ նաև մի ուրիշ բան։ Դավադրությունը, որն ըստ էության ուղղված էր կ ա ռ ա վ ա ր ու թ յ ա ն դ ե մ, որովհետև նրա վերջնական նպատակը յակոբինյան դիկտատուրայի տապալումն էր,— հենվում էր հենց այն կ ա ռ ա վ ա ր ու թ յ ա ն մ ե ծ ա մ ա ս ն ու թ յ ա ն գաղտնի աջակցության վրա, որը նա ուզում էր տապալել։ Անխոնջ Ֆուշեի դիվային հնարամտության օգնությամբ դավադիրներին, որոնք չէին կարողանում ուղղակի տապալել գերագույն իշխանությունը, հաջողվեց նրա դեմ դավեր նյութել և այն ներսից պայթեցնել։

Բայց ձախերն ինչպե՞ս կարող էին դաշնակցել իրենց մահացու թշնամիների հետ։ Մի՞թե նրանք չէին տեսնում, որ Անկաշառելիին ուրանալով, իրենց կործանման են մատնում։ Մի՞թե չէին կռահում, որ դավադիրների վերջնական նպատակը հեղափոխական կառավարության ոչնչացումն է և անցած տարիների հիմնական նվաճումների վերացումը։ Այո, դավաճանության գործողությունը ուղեկցվում էր ակնհայտ կուրացումով։ Կոմիտեների ձախ անդամները և Կոնվենտի նրանց աջակցող դեպուտատները, Ռոբեսպիերի խնամակալությունից ճնշվելով, չհասկացան, որ իրենց մահվան արագացմանն են նպաստում։ Հմուտ ագիտատորների պրոպագանդային ենթարկվելով, թշնամիների կեղծ խոստումների հետ հույսեր կապելով, նրանք ընթանում էին հակահեղափոխության ազդեցության ոլորտում։ Իրենց սուբյեկտիվ մտքերից ու ցանկություններից անկախ, պրերիալի-տերմիդորի ձախերն սկզբ-

բունքորեն տարբերվում էին 1793—1794 թվականների սկզբի ձախ յակոբինականներից։ Եթե Շոմետը և նրա զինակիցները ժողովրդի հետ կապված իսկական յակոբինականներ էին, ապա ձախերը, իրենց նախորդների՝ էբերտիստների նման, մասսաներից կտրված ֆրակցիոներներ էին, որոնք սոցիալական հոտառություն չունեին և այդ պատճառով իրադրությունը հասկանալու անընդունակ կարճատես քաղքենիներ էին։ Ձախերը հակահեղափոխության ղեկավարներին պետք էին ժողովրդական զանգվածների ղգոնությունը բթացնելու, ինչպես նաև Ռոբեսպիերի դեմ մղվող պայքարը որպես ժողովրդին պաշտպանելու նպատակով ձեռնարկված մի գործ ներկայացնելու համար միայն։ Եվ ժողովրդի թշնամիների կողմից նրանց վրա դրված այդ խնդիրը նրանք կատարեցին։

Արդյոք ռոբեսպիերիզմի առաջնորդները տեսնո՞ւմ էին, թե իրենց շուրջն ինչ է կատարվում։ Հասկանու՞մ էին իրենց առաջ լայն բացված անդունդի խորությունը։ Ե՛վ տեսնում էին, և՛ հասկանում։ «... Հեղափոխությունն ընդարմացավ,— գրում էր Սեն-Ժյուստը։— Սկզբունքները թուլացան, մնացին ինտրիգան սքողող կարմիր թասակները։ Տեսորը բթացրեց հանցագործությունը, ինչպես որ թունդ խմիչքները բթացնում են համը...»։

Վեհ տրտմությամբ համակված այդ խոսքերը ներշնչված են դաժան իրականությամբ։ Ընդհանուր ոստիկանության բյուրոն ղեկավարելով, ռոբեսպիերիստները դավադրության մասին մանրամասն տեղեկություններ ունեին։ Եթե Անկաշառելին մինչև պրերիալի վերջին տասնօրյակը կարող էր ինչ-որ մոլորության մեջ լինել, ապա այդ ժամանակվանից սկսած նա գիտեր ամեն ինչ, ընդհուպ մինչև գլխավոր անունները, իսկ այստեղից էլ հետևում էր պրերիալի 22-ի բուն գաժան օրենքը։ Ասենք, մեսիդորում դավադրության մասին արդեն չիմանալ չէր կարելի։ Նրա կազմակերպիչները, իրենց ուժը գիտակցելով, զգուշությունը կորցնում էին։ Նրա վերաբերյալ լուրերը ոչ միայն տարածվում էին երկրում, նրա մասին ոչ միայն հարցնում ու հաղորդում էին ուղևորությունների մեջ գտնվող դեպուտատները և առանձին աստիճանավորներ, այլ

նույնիսկ օտարերկրյա մամուլն արժանահավատության երաշխավորությամբ հայտնում էր յակոբինյան դիկտատուրայի մոտալուտ տապալման մասին։

Բայց այս դեպքում ռոբեսպիերիստներն էլ ինչի՞ էին ըստ պատում։ Ինչո՞ւ վճռական հարված չէին հասցնում։ Ինչո՞ւ թշնամիներին թույլ էին տալիս պինդ ձգելու հեղափոխության կոկորդը սեղմող օղակը։ Որովհետև նրանք մի փակուղու մեջ էին ընկել, որից դուրս գալու ելք չկար։ Որովհետև այժմ նրանք գտնվում էին մի ճանապարհի վրա, որը ոչ մի տեղ չէր տանում։ Ո՛չ մի տեղ, բացի գերեզմանից...

Բուրժուական մեծ հեղափոխությունը, ժողովրդական լայն զանգվածներին արթնացնելով, փուլ փուլի հետևից հաղթականորեն առաջ էր ընթանում։ Այն բանի համեմատ, որ հեղափոխությունը բավարարում էր այս կամ այն սոցիալական խմբավորումներին, վերջիններս համապատասխանաբար ձգտում էին այն գադարեցնել։ Մի որոշ ժամանակ դա հնարավոր չէր, որովհետև հեղափոխության հեղեղն ավելի ուժեղ էր, քան նրա ճանապարհին ընկած բոլոր արգելքները, որովհետև մասսաներն ակտիվորեն պայքարելով հասնում էին իրենց պահանջների բավարարմանը, որովհետև մասսաների ավանգարդում էին ժողովրդի վճռական պաշտպանները, յակոբինականները՝ Ռոբեսպիերի, Մարատի, Սեն-Ժյուստի, Շոմետի գլխավորությամբ։ Բայց յակոբինյան դիկտատուրայի ողբերգությունը, մասնավորապես ռոբեսպիերիստների ողբերգությունն այն էր, որ իրենց բոլոր ուժեղ կողմերով հանդերձ, ժողովրդի հետ մինչև վերջ գնալու իրենց ամբողջ սուբյեկտիվ ցանկությամբ հանդերձ նույնիսկ լավագույն յակոբինականները մնում էին բուրժուական հեղափոխականներ, քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի առաջնորդներ,—նրանք այդ պայմաններում ուրիշ ոչինչ լինել չէին կարող։ Իսկ այդ նշանակում էր, որ Անկաշառելիի բոլոր ամենապայծառ իդեալները պետք է վաղ թե ուշ խորտակվեին կյանքի դաժան իրականությանը բախվելով, որը նա հաղթահարել չէր կարող։ Չէր կարող, հասկանալի է, ոչ թե իր չցանկանալու հետևանքով, այլ իր գլխավորած խմբավորման սոցիալական անխուսա-

փելի սահմանափակության պատճառով։ Վաղ թե ուշ պետք է գար մի պահ, և այդ պահը եկավ, երբ Անկաշառելին, որը մինչև այդ կրքոտությամբ պայքարում էր բոլորի դեմ, ովքեր փորձում էին հեղափոխության հաղթական երթը դանդաղեցնել կամ գագարեցնել, ինքն սկսեց միտք անել գադարեցնելու մասին, ընդ որում դագաբեցնելու քաղաքային և գյուղական պրլեթեյների չքավորագույն խավերի շահերը լիովին բավարարելուց առաջ։ Նա ինքը երբեք այդ բանը չէր խոստովանի, բայց փաստորեն մի որոշ ժամանակից ի վեր ռոբեսպիերիստների ջանքերով հեղափոխությունը պարապ ընթացք էր վերցրել։ Ինչո՞ւ Ռոբեսպիերը չախչախեց ոչ միայն «կատաղիներին», այլև ձախ յակոբինականներին, որոնք նրան նվիրված կերպով աջակցում էին և որոնց նա կարող էր լիովին ապավինել։ Առաջին հերթին այն պատճառով, որ ծայրահեղություններից զզվում էր։ Այդ բանն էլ ավելի մեծ պարզությամբ ցույց տվեց 1794 թվականի ուշ գարնանը և ամռանը ռոբեսպիերիստների բանվորական քաղաքականությունը։ Ֆլորեալի ընթացքում կառավարությունն ինքնավերացման կարգով ցրեց մի ամբողջ շարք ժողովրդական ընկերություններ ու սեկցիաներ։ Ռոբեսպիերական Կոմունան թշնամաբար էր վերաբերվում բանվորների՝ իրենց գոյությունը բարելավելու համար պայքարելու ամեն մի փորձին։ Օրինակ, երբ Փարիզի ծխախոտի մանուֆակտուրայի բանվորները ֆլորեալի 2-ին (ապրիլի 21-ին) Կոմունային աշխատավարձի բարձրացման մասին հարցում արեցին, հանրադիրը ներկայացնողների հռետորը Սեն-Ժյուստի սանկցիայով կալանավորվեց և ոստիկանություն ուղարկվեց։ Ֆլորեալի 9-ին (ապրիլի 28-ին) Փարիզի մունիցիպալիտետը նավահանգստային բանվորների կազմակերպիչների ձերբակալություններ կատարեց, ֆլորեալի 13-ին (մայիսի 2-ին) ճնշման ենթարկվեցին գժգոհ հացագործ-ենթավարպետները։ Ի պատասխան աճող բանվորական շարժման, Փարիզի կոմունան մայրաքաղաքի բոլոր շահագործվող մարդկանց դիմեց սպառնական մի թռուցիկով, որը դժգոհներին ուղղակի հակահեղափոխականների շարքն էր դասում և բացահայտ տեռոր հայտարարում նրանց դեմ, ովքեր կփորձեն իրենց ծանր վիճակը բարելավել։

Գյուղի և քաղաքի չքավորության վրա ճնշում գործադրելով, ռոբեսպիերիստները միաժամանակ չէին կատարում, ասենք, չէին էլ կարող կատարել հենց նույն չքավորությանը տված իրենց խոստումները. վանտոզի դեկրետները փաստորեն չիրականացան։ Այդ ամենի հետևանքով յակոբինյան կառավարությունը 1794 թվականի ամռան մոտերքը քաղաքի և գյուղի պլեբեյական մասսաների հետ լուրջ կոնֆլիկտային վիճակի մեջ ընկավ։ Իսկ դա հղի էր շատ լուրջ հետևանքներով։ Ռոբեսպիերի և նրա զինակիցների ուժը ժողովրդի հետ նրանց ունեցած կապի ամրությունն էր։ Ժողովրդի վրա հենվելով, նրա նախաձեռնությունը պաշտպանելով և նրա հետ համընթաց գնալով, ռոբեսպիերիստները անպարտելի էին։ Իսկ այժմ, երբ բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրները լուծվել էին, երբ հեղափոխության հետագա զարգացման հընարավորությունն սկսեց վախեցնել ոչ միայն «նորահարուստներին», այլև քաղաքի ու գյուղի մանրբուրժուական խավերին, առավելագույն չափով երևան էր գալիս յակոբինականների և նրանց ղեկավարող խմբի՝ ռոբեսպիերիստների բուրժուական սահմանափակությունը։ Դրա հետևանքով նրանք սկսեցին կորցնել իրենց հենարանը բնակչության այն խավերում, որոնք նրանց ուժի աղբյուրն էին, իսկ դրա հետ միասին կորցրին թշնամուն համարձակորեն ջախջախելու իրենց առաջվա ընդունակությունը։ Ահա պրերիալի վերջին և մեսիդորին Ռոբեսպիերի ու նրա բարեկամների համեմատական անգործության հիմնական պատճառը։ Կռանի և զնդանի արանքն ընկնելով, ուժեղ դավադրության և անտարբեր ժողովրդի միջև մնալով, նրանք քարացան, ինչպես քարանում է թռչունը օձի հիպնոսացնող հայացքի տակ։ Իհարկե, դրան ավելացան նաև զուտ սուբյեկտիվ բնույթի մի շարք պատճառներ։ Սեն-Ժյուստը գրեթե անընդհատ կորչում էր պատերազմի թատերաբեմում, սխալմամբ կարծելով, թե պատերազմական հաղթանակները կարող են լուծել ներքին կոնֆլիկտները, Կուտոնը հաճախ հիվանդանում էր, իսկ Ռոբեսպիերը... Ռոբեսպիերը, թվում էր, պատրաստ էր աչքը փակելու այն բանի վրա, ինչ կատարվում էր կոմիտեներում և փողոցում։ Նա հասկանում էր, որ առանց քաղաքական կուրսի վճռական փոփոխության չի կարող հույս

գնել գոյություն ունեցող ռեժիմն անձնվիրաբար պաշտպանելու մասսաների պատրաստականության վրա։ Բայց նա այդ կուրսը փոխել և՛ չէր ուզում, և՛ չէր կարող։ Եվ ահա նա ակընհայտին հակառակ, առաջվա նման խստապահանջ օրենսդետ, ապավինեց այն կործանարար հույսին, թե թշնամիները բացահայտորեն իր վրա հարձակվել չեն հանդգնի, թե ժողովուրդը գործողության մեջ չի դրվի, թե ամբողջ պայքարը հնարավոր կլինի մեկուսացնել Կոնվենտի, Յակոբինյան ակումբի և Կոմունայի շրջանակներում, կազմակերպություններ, որտեղ քաջ հայտնի է նրա խոսքի ուժը։ Ճիշտ է, այդ հույսը շարունակ պայքարում էր հուսահատության դեմ, բայց այնուամենայնիվ գոյություն ուներ։

Մեսիդորի 10-ի լույս 11-ի (հունիսի 28—29-ի) գիշերը Հասարակական փրկության կոմիտեում մոլեգին խոսակցություն տեղի ունեցավ, որը վերջացավ լիակատար պառակտումով։ Ռոբեսպիերը նիստը թողնելով, դուրս գնաց Կոմիտեից հեռանալու հաստատ մտադրությամբ. իրոք որ, մեսիդորի կեսից նա այլևս նիստերին չէր երևում։

Մեսիդորի 13-ին (հուլիսի 1-ին) նա Յակոբինյան ակումբի ամբիոնից մի ճառ արտասանեց, որը դավադիրներին ուղղված ձևական մի մարտահրավեր էր։

— Այժմ, ինչպես և միշտ,— ասում էր նա,— հայրենասերների գործողություններն աշխատում են անարդարության և անմարդկության լույսի տակ ներկայացնել... Այն ժամանակ, երբ փոքրաթիվ մարդիկ չթուլացող եռանդով զբաղվում են ամբողջ ժողովրդի կողմից իրենց վրա դրված գործով, բազմաթիվ ստոր մարդիկ և օտարերկրյա պետությունների գործակալներ հանգիստ զրպարտչական հերյուրանքներ են հյուսում և կարդին մարդկանց հալածանք պատրաստում... Այդ խմբակցությունն աճեց բոլոր մնացած խմբակցությունների բեկորներից... Նրանք ձգտում են Կոնվենտի գործունեությունը ներկայացնել որպես մի քանի մարդու գործ։ Հանդգնեցին Կոնվենտում լուր տարածել, թե Հեղափոխական տրիբունալն ստեղծվել է հենց Կոնվենտը խեղդամահ անելու համար միայն... Ինչ վերաբերում է ինձ, ապա, չնայած այն ջանքերին, որ գոր-

ծաղրում են իմ բերանը փակելու համար, ես ինձ իրավասու եմ համարում խոսելու այնպես, ինչպես էբերների, դանտոնների և ուրիշների ժամանակ։ Լոնդոնից ինձ ֆրանսիական բանակի առաջ դիկտատոր են ներկայացնում, նույն զրպարտությունը կրկնվում է Փարիզում...

Սակայն հակահեղափոխականներին և նրանց հետ կապված անձանց մեղադրելով, Անկաշառելին չուզեց ճշտել, թե ինքն անձամբ ում նկատի ունի։ Նա սպառնալիք կարդաց, բայց այդ սպառնալիքը օդում կախված մնաց։

— Երբ դեպքերը ծավալվեն,— վերջացրեց հոետորը,— ես ավելի մանրամասնորեն կբացատրեմ...

Բայց հետագայում ևս նա միշտ շարունակում էր նույն տակտիկային հետևել, և, թեպետ դեպքերն ամբողջ ուժով ծավալվում էին, նա դարձյալ ու դարձյալ հապաղում էր վճռական ճշտումներ կատարել։ Միաժամանակ ցույց տալով, թե ինքը որքան հասկանում է իր թշնամիների խորամանկությունները, Ռոբեսպիերը ուղղակի հավաստում է, որ հեղափոխական կառավարությունն արդեն ոտքերի տակ ամուր հող չունի։

— Հանրապետությունում,— ասում էր նա մեսիդորի 21-ին (հուլիսի 9-ին) հեգնանքով,— դոյություն ունի Հեղափոխական կոմիտե[1]։ Թերևս, դուք կարծում եք, թե այն իր խնդիրը համարում է արիստոկրատիայի ոչնչացումը։ Ամենևին ոչ, այն կարծում է, թե պետք է կալանավորել տոն օրերին հարգած բոլոր քաղաքացիներին։ Օրենքի այդպիսի հաջող կիրառման շնորհիվ բոլոր հակահեղափոխականները մնում են հանգիստ վիճակում և լիակատար անվտանգության մեջ, մինչդեռ արհեստավորներին և բարի քաղաքացիներին անգթաբար կալանավորում են...

Այսպես նա խոսում էր ու խոսում, մեղադրում, մերկացնում, հեգնում։ Բայց այդ ամենն ինչի՞ էր պետք։ Նույնիսկ ամենախայթիչ հեգնանքը չէր կարող օգնել այնտեղ, ուր պետք էր գործել, գործել վճռականորեն և առանց հապաղելու։ Բայց նա գործել չէր կարող։ Կասկածները պաշարել էին նրան։ Նա ոչ միայն

---

[1] Ռոբեսպիերը նկատի ուներ Հասարակական անվտանգության կոմիտեն։

վերջ տվեց Կոմիտե դնալուն, այլև դադարեց Կոնվենտի նիստերին հաճախելուց։ Շատերը զարմանում էին։ Հո նա Դանտոնի ճանապարհը չի՞ բռնել, որն իր կործանման նախօրեին լեթարգիայի մատնվեց։ Պաշտոնական պարտականություններից հանդստանալու ժամանա՛կ է գտել։ Հրաբխի եզրին պառկած խելագա՛ր։ Այդ օրերին հեռատես ու եռանդուն մարդիկ բազմիցս նախազգուշացնում էին Ռոբեսպիերին։ Նրան գրում էր ազգային դործակալ Պեյյանը, ապացուցելով, որ այժմ ամեն մի բոպեն թանկ է, որ պետք է դավադիրներին անհապաղ հարված հասցնել։ «Ինձ թվում է, որ մի ամիս շարունակ այն պահից, երբ ես քեզ գրեցի, դու քնած ես, Մաքսիմիլիան...»— դառնությամբ նրան կշտամբում էր առասցի հին բարեկամ Բյուիսարը դեռևս մեսիդորի 10-ի թվագրով իր նամակում։ Նա ստանում էր նաև նույնպիսի բովանդակությամբ բազմաթիվ անստորագիր նամակներ։ Ամեն ինչ ապարդյուն էր անցնում։ Ռոբեսպիերն իր պլանին հավատարիմ էր մնում։ Չի կարելի ասել, թե նա ամբողջովին անդործության էր մատնվել։ Նա եռանդի վերելքներ էր ունենում։ Նա այդ եռանդն ամբողջովին տալիս էր Յակոբինյան ակումբին, հույս ունենալով ակումբի միջոցով հասարակական լայն կարծիքն իր կողմը դրավել։ Ինչ վերաբերում է մնացած ամեն ինչին, ապա նա հետևում էր բացահայտ սպասողական քաղաքականության, ըստ երևույթին, կարծելով, թե ժամանակն իր օդտին է աշխատում։ Նա միայն մի մարդու հանգիստ չի տալիս, նրան մերկացնելով իր ներկայությամբ ու բացակայությամբ և աշխատելով նրա ջանքերը ջլատել։ Դա Ժոզեֆ Ֆուշեն էր, մի մարդ, ի դեմս որի Անկաշառելին ճշտորեն ճանաչեց դավադրության իսկական առաջնորդին։ Վերջ ի վերջո Մաքսիմիլիանը Ֆուշեին ակումբից վտարել տվեց (մեսիդորի 26-ին)։ Սակայն դրանով էլ գործը սահմանափակվեց. Ռոբեսպիերն իր գլխավոր թշնամուն չոչնչացրեց։ Իսկ Ֆուշեն հեռանկարում դիլյոտինի դանակ տեսնելով, իր ջանքերը կրկնապատկեց։ Այժմ նա անդադար պտույտ էր գալիս Կոնվենտի առանձին անդամների մոտ։ Նա կատարելապես իրազեկ մարդու ձևով փսփսում էր այսօր մեկի, վաղը մյուսի ականջին, թե նրանք գրանցված են իբր Ռոբեսպիերի կազմած սև ցուցակում և ենթակա են ոչնչացման։ Այս-

պես, մարդկանց վախեցնելով, Ֆուշեն անվճռական «ճահճին» աստիճանաբար տրամադրում էր դավադրությանը մասնակցելու։

Մեսիդորի վերջին օրերին Փարիզի Ելիսեյան դաշտերի կամ Մարբեֆ զբոսայգիների շրջանում ապրող բնակիչները բազմիցս հանդիպում էին վիթխարի նյուֆաունդլենդի ուղեկցությամբ զբոսնող, թեատրակին մի գիրք դրած, նիհարակազմ, մոախոհ մի մարդու։ Նրա դեմքը և ամբողջ կերպարանքը լավ ծանոթ էին անցորդներին. դա հեղափոխության հուշակավոր դործիչ, Հասարակական փրկության կոմիտեի անդամ, Անկաշառելի անուն ստացած Մաքսիմիլիան Ռոբեսպիերն էր։ Նա կանոնավոր կերպով կատարում էր այդ հուշիկ մենավոր զբոսանքները, ուրիշ ուղեկիցներ չուզելով, բացի իր սիրելի Բրունտից, որին անհամեմատ ավելի էր վստահում, քան մարդկանց։ Այստեղ նա հանդիպում էր երեխաների։ Նրանցից շատերը «բարի քեռուն» դեմքով լավ էին ճանաչում, որը նրանց կոնֆետներով հյուրասիրում էր և նրանց խաղերը հետաքրքրությամբ դիտում։ Հաճախ, երբ նա շոյում էր որևէ մի խարտյաշահեր գլուխ, ակամայից նրա աչքերն արտասվակալում էին։ Նա մտածում էր, որ ահա այդ պստիկ տղաների ապագայի համար ինքը հրաժարվեց սեփական կյանքից, հենց իրենից, հենց այդպիսի փոքրիկ տղաներից, որոնք կարող էին իր երեխաները լինել։ Ասենք, մի՞թե նրանք բոլորը և հազարավոր ուրիշները, մի՞թե նրանք իր երեխաները չեն, հեղափոխության երեխաները չեն...

Զբոսայդու նստարանին հանգստանալով, նա երբեմն կարդում էր, բայց ավելի շատ խորհում։ Հուշերը պատում էին նրան։ Աչքերը կիսախուփ, Մաքսիմիլիանը տեսնում էր խաղաղ Առասը, մի փոքրիկ փողոց, հինավուրց մի տուն։ Նա պատկերացնում էր սենյակների դասավորությունը, աշխատում էր հիշել, թե որտեղ ինչ կահույք էր դրված... Բոլորովին, բոլորովին հեռվից լսվում էր մոր մեղմ քաղցրալուր ձայնը, որը նրան նանիկ էր ասում. «Քնիր... Քնիր խորը քնով... Հավիտենական քնով...»

Ռոբեսպիերը ցնցվում է։ Նրա թմրությունը վայրկենապես

անցնում է։ Մի՞թե ճիշտ է։ Մի՞թե ինքը կործանվեց, կործանվեց անվերադարձ կերպով։ Բայց չէ՞ որ իր հետ կկործանվի վերջին տարիների ընթացքում կատարված ամեն ինչ։ Ամեն ինչ կոչնչանա, կվերադառնա հնին, ստրկության ատելի շղթաներին։ Բայց ներքին ձայնը հաստատապես և վստահորեն նրան ասում էր. «Ո՛չ։ Չի՛ կործանվի։ Չի՛ վերադառնա։ Եթե դու մեռնես էլ, ապա քո գործը կապրի, կապրի հավիտյան։ Նոր մարդիկներ կելնեն։ Նրանք կշարունակեն այն, ինչ դու սկսեցիր։ Եվ համաշխարհային երջանկության արշալույսը կբացվի, ինչ էլ որ կատարվի ամենամոտիկ ապագայում»։

ԳԼՈՒԽ 8

ՏԵՐՄԻԴՈՐԻ ԴՐԱՄԱՆ

Միայն տերմիդորի սկզբին Ռոբեսպիերը ապատիայից ըմբոստացավ։ Ոչ, այլևս սպասել չի կարելի։ Շենքը աչքի առաջ խորտակվում է։ Մի կողմ քաշվելու և ամեն ինչ բնական ընթացքին թողնելու փորձն իրեն չարդարացրեց։ Պարզվեց, որ ընթացքը նրա դեմ է ուղղված, և ճնշման ուժը սպասելիքները դերազանցեց։ Եվս մի քանի օր՝ և ուշ կլինի։ Թերևս, հենց այժմ էլ արդեն ուշ է։ Բայց հետո ի՞նչ։ Պետք է մինչև վերջ պայքարել, ինչպիսին էլ որ վերջը լինի։

Տերմիդորի 5-ին (հուլիսի 23-ին) Ռոբեսպիերը եկավ երկու կոմիտեների համատեղ նիստին։ Այդտեղ էլ եկավ հյուսիսային բանակից հենց նոր վերադարձած Սեն-Ժյուստը։ Սկսվեց սովորական գզվռտոցը։ Բարերն սկսեց թվարկել Ռոբեսպիերի և նրա համախոհների մեղքերը։ Սեն-Ժյուստը Դավիդի աջակցությամբ մեծամասնությանը մեղադրեց նոր պառակտում առաջացնելու և ազատության գործը կործանող խմբավորում ստեղծելու մեջ։

— Դուք ինքներդ եք ձգտում եռապետություն կազմել,— կտրուկ պատասխանեց Էլի Լաքոսթը։

Ուրիշները նրան պաշտպանեցին։

Ռոբեսպիերը խորհրդակցությունից հեռացավ այն հատատ համոզմամբ, որ այստեղ այլևս խոսելու բան չունի։

Ոչ, պետք է խոսել ոչ այստեղ։ Պետք է գնալ Կոնվենտ, օրենսդիրների մոտ, տիրակալ ժողովրդի դեպուտատների մոտ։ Պետք է նրանց ամեն ինչ պատմել։ Քանի՞-քանի անգամ նրա խոսքի ուժը հաղթանակ է տարել, քանի՞-քանի անգամ առաջացրել նույնիսկ երկչոտ «ճահճի» բուռն օվացիաները։ Ռոբեսպիերն ամենազոր է Կոնվենտի ամբիոնի վրա։ Միայն ժողովը կարող է նրան հասկանալ ու պաշտպանել։ Մեծամասնությունը երբեք չի համարձակվի ոճրագործների կողմը բռնել։ Եթե Կոնվենտը նրան ընդունի ու հավանություն տա, նա անխորտակելի է։ Այն ժամանակ վա՜յ դավաճաններին՝ նրանք կոչնչացվեն, նրանց կջախջախեն հենց այնպես, ինչպես էբերին ու Դանտոնին։ Այո, այժմ դա միակ ճիշտ միջոցն է։

Խոսքի հրաշալի հզորությանը հավատալով, Ռոբեսպիերը չէր էլ կասկածում, որ պետք է պատաշար փակված դուռ բախի։ Նա չգիտեր, թե դավադրության քաղցկեղային ուռուցքն ինչ չափով է ախտահարել Կոնվենտի բոլոր կենդանի հյուսվածքները։

Նույն օրենքթ նա գնաց Մոնմորանսի՝ իր սիրելի սրբությունների մոտ։ Ուսուցչի անմահ ոգին պետք է նրան խորհուրդ տար ու աջակցեր։ Նա թափառում էր ընդարձակ զբոսայգու շագանակենիների տակ, հանգստանում էրմիտաժի, այն օրհնյալ տան ստվերում, որտեղ Ռուսոն մի ժամանակ ստեղծագործել է «Նոր էլոիզան»։ Ռոբեսպիերը մտքով խորասուզվել էր ամենանվիրականի մեջ։ Նրա վերջին ճառը, նրա կտակը ծնունդ առավ այստեղ, սրտի համար նվիրական այս վայրերում, անցյալի անհանգստացած ուրվականների շրջանում...

Երեք օր հետո, տերմիդորի 8-ին (հուլիսի 26-ին), նա երկար ընդմիջումից հետո Կոնվենտի ամբիոն բարձրացավ։ Նա հանգիստ էր ու մտախոհ։ Նա իր ճառն սկսեց հետևյալ խոսքերով.

— Քաղաքացիներ, ես ուրիշներին եմ թողնում ձեր առաջ փայլուն հեռանկարներ շարադրելու. իսկ ես ուզում եմ ձեզ գործերի իսկական դրության մասին օգտակար տեղեկություն-

ներ հայտնել... Ես պետք է պաշտպանեմ ձեր վիրավորված հեղինակությունը և բռնագատվող ազատությունը։ Ես պետք է պաշտպանեմ նաև հենց ինձ. չէ՞ որ դա ձեզ չի զարմացնի, որովհետև ճնշված անմեղության ճիչերը ձեր լսողությունը վիրավորել չեն կարող...

Ֆրանսիական հեղափոխության, որպես առաջին անգամ առաքինության ու մարդու իրավունքների տեսության վրա հիմնված մի հեղափոխության առանձնահատկությունները ճշտորեն բացահայտելով, հռետորը հիշեցրեց հանրապետության հռչակման պահից ի վեր Ֆրանսիան քրքրող դավադրությունների ու խռովությունների մասին։ Նա ցույց տվեց, որ դրանք բոլորն էլ ունեին ընդհանուր սկզբնաղբյուրներ՝ ագահություն, փառասիրություն, օտարերկրյա ինտրիգա։ Նա համողիչ կերպով անցյալը կապեց ներկայի հետ, միասնական մի թել անցկացնելով Բրիսոյից ու Դանտոնից մինչև ջախջախված ֆրակցիաներից մնացած թափթփուկները։ Նա նախազգուշացրեց, որ այժմյան թշնամիների տակտիկան նկատի է առնում Կոնվենտի ահաբեկումը, ազնիվ հայրենասերների շրջանում պրովոկացիոն լուրերի տարածումը։ Եվ մոմենտի գլխավոր առանձնահատկությունն ամբողջ կրակը մեկ մարդու, նրա, Ռոբեսպիերի վրա կենտրոնացնելու ձգտումն է։

— Նրանք ինձ բռնապետ են անվանում... Բայց եթե ես բռնապետ լինեի, նրանք իմ առաջ կսողային, իսկ ես նրանց ոսկով կպատեի և իրավունք կտայի ուզած հանցագործությունները կատարելու... Եթե ես բռնապետ լինեի, ապա մեր հընազանդեցրած թագավորները ինձ չէին դատափետի,— ասացեք, խնդրեմ, ինչպիսի քնքուշ սեր են տածում նրանք մեր ազատության նկատմամբ,— այլ ինձ կառաջարկեին իրենց հանցավոր աջակցությունը... Բռնապետներից ո՞վ է ինձ հովանավորում։ Ես ո՞ր կլիկին եմ պատկանում։ Միայն քուն ժողովրդին։ Ո՞ր կլիկն էր հեղափոխության սկզբից պայքարում բոլոր կլիկների դեմ, որը ոչնչացրեց վստահություն վայելող այնքան դավաճանների։ Այդ կլիկը դուք եք, այդ ժողովուրդն է և իսկական սկզբունքները։ Ահա՛ այն կլիկը, որին ես պատկանում եմ և որի դեմ համախմբվեցին բոլոր հանցագործ ուժերը...

Սրիկանե՛ր։ Նրանք կուզենային, որ ես գերեզման իջնեի անարդված, որ իմ մասին բնապետի հիշատակ թողնեի... Ինչպե՞ս դաժան են նրանց նպատակները, ինչպե՞ս անարդ՝ նրանց միջոցները... Թերևս, չկա ոչ մի կալանավոր, ոչ մի ճնշված քաղաքացի, որին իմ մասին չասեին. «Ահա քո դժբախտությունների պատճառ հանդիսացողը. դու երջանիկ ու ազատ կլիներիր, եթե նա դադարեր գոյություն ունենալուց»։ Ինչպե՞ս նկարագրել այն բոլոր զրպարտությունները, որ գաղտնաբար բարդում են ինձ վրա Կոնվենտում, թե նրանից դուրս, նպատակ ունենալով ինձ զզվանքի և անվստահության առարկա դարձնելու։ Կսահմանափակվեմ նրանով, որ կասեմ՝ արդեն վեց շաբաթից ավելի է, որ ամեն տեսակ զրպարտություններ և բարիք գործելու անհնարինությունը ինձ ստիպեցին հրաժարվել Հասարակական փրկության կոմիտեի անդամի պարտականություններից. ահա արդեն վեց ամիս է, ինչ իմ դիկտատուրան վերացել է և ես կառավարության վրա ամենևին ազդեցություն չունեմ։ Արդյոք սկսեցի՞ն հայրենասիրությունն ավելի շատ հարգել։ Ֆրակցիոն ոգին ավելի երկչո՞տ դարձավ։ Հայրենիքն ավելի երջանի՞կ դարձավ...

Այդ խոսքերի ազնիվ պաթոսը ակամայից համակեց ժողովը։ Հռետորը խոսում էր գրեթե առանց ձայնը բարձրացնելու, բայց այնպիսի լռություն էր տիրում, որ նրա ձայնի յուրաքանչյուր նրբերանգը լսվում էր ամենայն պարզորոշությամբ։ Նա խոսում էր երկար, և ոչ ոք նրան չէր ընդհատում։

Կառավարական կոմիտեների և ամենից առաջ Հասարակական անվտանգության կոմիտեի կազմի մասին իր անհանգստությունը դեպուտատներից չթաքցնելով, Ռոբեսպիերը ոգեվորությամբ պաշտպանում էր հեղափոխական կառավարությունն ամբողջությամբ առած, շեշտելով, որ առանց նրա հանրապետությունն ամրապնդվել չի կարող և զանազան կլիկներ նրան կխեղդեն։

Անկաշառելին իր ճառի վերջին մասում կանգ առավ տնտեսական դժվարությունների և տնտեսական զարգացման հեռանկարների վրա։

Ֆինանսական գերատեսչությանը մեղադրելով, արտադրության և բաշխման բոլոր ոլորտները համակած հակահեղափո-

Ռոբեսպիերը Կոնվենտի ամբիոնի վրա
(ժամանակակից նկար)

Տերմիդորի լույս 10-ի գիշերը

խությունը մատնանշելով, նա հայտարարեց, որ ներկայումս խնդիրը մաքսիմումի թուլացումն է և էկոնոմիկայի փոխադրումը խաղաղ ժամանակվա հիմքի վրա։

— Ուրեմն, մենք ի՞նչ պետք է անենք,— վերջում հարցնում է հռետորը։— Որտե՞ղ են մեր բոլոր աղետների դեմ պայքարելու միջոցները...

Նա առաջարկում է այդ միջոցները։ Գլխավորը՝ ամրապնդել կառավարությունը, զտել կոմիտեները և պատժել գավառներին, Կոնվենտին վերադարձնել հեղինակությունը, ամենուրեք վերականգնել արդարության և ազատության սկզբունքների տիրապետությունը։ Հեղափոխական կառավարությունը հայրենիքը փրկեց, այժմ պետք է կառավարությունը փրկել նրան սպառնացող բոլոր ստորջրյա քարերից։

Ռոբեսպիերի ճառը ուժեղ տպավորություն գործեց։ Այն Անկաշառելիի արգարացումն էր, նրա թշնամիներին հասցրված մի հարված և միաժամանակ ապագայի նրբամտորեն ու հմտությամբ կազմած դրական ծրագիր։ Մատնանշելով մաքսիմումի աստիճանական վերացման միջոցով նոր տնտեսական քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը, Ռոբեսպիերը ձգտում է «ճահիճը» հանգստացնել և սեփականատերերին իր կողմը գրավել։ Եվ սակայն մարդկային սրտերի դիտակը՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը տակտիկական ամենակոպիտ սխալը կատարեց, որը նրա ելույթի գրական ամբողջ տպավորությունը միանգամից մոռացության տվեց։ Նոր դավադրությունը մերկացնելով և նրա պարագլուխներին սպառնալով, հռետորն անուններ չտվեց։ Իսկ ովքե՞ր են նրանք, որոնց պետք է ոչնչացնել։ Ինչո՞ւ Անկաշառելին գրանց ուղղակի ցույց չտվեց... Թերևս, նա նրանցից վախենո՞ւմ է։ Կամ թե նրանք այնքան շատ են, որ բոլորի անունները միանգամից տալ հնարավո՞ր չէ։ Անորոշությունը սարսափ առաջացրեց։ Այժմ Կոնվենտի յուրաքանչյուր անդամ կարող էր իրեն սպառնալիքի տակ համարել։ Յուրաքանչյուրը վախենում էր իր համար։ Այդ հանգամանքը գավագիրներին շատ ձեռնտու էր։ Նրանք Ռոբեսպիերի սխալն արագորեն հասկացան և այն օգտագործեցին։

Ճառն արտասանելուց հետո առաջին պահն այնուամենայնիվ հանդիսատեսի համար նպաստավոր էր թվում։ Լորան Լեկուանտրը, ի զարմանս իր բարեկամների, առաջարկեց ճառը տպագրել։ Կուտոնը պահանջեց, որ ճառը ոչ միայն տպագրեին, այլև ուղարկեին հանրապետության բոլոր կոմունաներին։ Չնայած առանձին երկչոտ բողոքներին, Կոնվենտն այդ առաջարկությունը հաստատեց։ Այդ ժամանակ Ռոբեսպիերի թշնամիները սթափվեցին։ Մեկը մյուսի հետևից հանգես եկան Վադյեն, Կամբոնը և Բիլո-Վարենը։

— Ժամանա՛կն է ամբողջ ճշմարտությունն ասելու,— բացականչեց Կամբոնը։—Մի մարդ չլատել է ամբողջ Ազգային Կոնվենտի կամքը. այդ մարդը Ռոբեսպիերն է։

Բիլոն, Կամբոնի խոսքերից քաջալերված, առարկեց ճառը տարածելու որոշման դեմ, պահանջելով Ռոբեսպիերի թեզիսներն ըստ էության խիստ քննարկման ենթարկել։ Ռոբեսպիերը վեր է կենում և խնդրում, որ նրան հնարավորություն տան իր հայացքներն ազատորեն արտահայտելու։

— Մենք բոլո՛ր ենք պահանջում այդ,— բացականչում են մի քանի դեպուտատներ։

— Ռոբեսպիերն իրավացի է,— շարունակում է Բիլոն։— Պետք է պատռել դիմակը, ով էլ այն լինի։ Եվ եթե մենք իսկապես չկարողանանք մեր համոզմունքներն ազատորեն արտահայտել, ապա ես ավելի շուտ կգերադասեմ, որ փառասերն իմ դիակը ոտնատակ տա, քան կհամաձայնվեմ լռել և նրա ոճրագործություններին մասնակից լինել։

Պանիսը Ռոբեսպիերին կշտամբում է, որ նա յակոբինականների մոտ լիիշխան տեր է դարձել և իբր թե սև ցուցակներ է կազմում։ Ասում են, թե այդ ցուցակներում կա նաև նրա՝ Պանիսի անունը։ Արդյոք ճի՞շտ է։ Ռոբեսպիերը այդպիսի հեղինակներին պատասխանել չի ուզում։

— Ես իմ վիճակը գցեցի,— հրապարակորեն հայտարարում է նա։— Ես թշնամիներիս բաց կրծքով դիմավորեցի։ Ես ոչ ոքի չշողոքորթեցի, ոչ ոքից չեմ վախենում և ոչ ոքի չեմ զրպարտում։

— Իսկ Ֆուշե՞ն,— զայրույթի բռնկման պահին անզգուշաբար բացականչում է Պանիսը։

Բոլորը քաբանում են։ Գլխավոր դավադիրներից մեկի անունը տրվեց։ Այն մասին, որ դավադրությունը գլխավորում է Ֆուշեն, գիտի նաև Ռոբեսպիերը։ Բայց՝ զարմանալի, անհասկանալի փաստ։ Անկաշառելին հակառակորդի բացահայտ անզգուշությունը չի օգտագործում։ Ֆուշե՞ն։ Ոչ։ Այժմ նա Ֆուշեի մասին խոսել չի ուզում։ Նա իր պարտքը կատարեց, թող մնացածներն իրենց պարտքը կատարեն։

Այն ժամանակ դավադիրները համարձակություն են ըստանում։ Արդեն ընդհանուր տրտունջ է լսվում։ Արդեն մի քանի ձայն ձգտում են միմյանցից բարձր բղավել։

— Երբ պարծենում են իրենց առաքինությամբ ու քաջությամբ,— բղավում է Շառլյեն,— պետք է նաև արգարամիտ լինել։ Տվեք նրանց անունները, որոնց դուք մեղադրում եք։

— Այո, այո, պաշտպանում են Շառլյեին,— տվեք նրանց անունները։

Այդ ուղղակի մարտահրավեր է։ Բայց Անկաշառելին մարտահրավերը չի ընդունում։

— Ես պնդում եմ այն ամենը, ինչ այստեղ ասացի, և հայտարարում եմ, որ չեմ մասնակցի այն որոշումներին, որ կընդունվեն իմ ճառի տարածումը կասեցնելու նպատակով։

Ելքը կանխորոշված է։ Վեր է կենում Սմարը։

— Ռոբեսպիերի ճառը,— ասում է նա,— մեղադրում է երկու կոմիտեներին։ Եթե կոմիտեների որոշ անդամների մասին նրա կարծիքը կապված է պետության շահերի հետ, թող նա նրանց անուններն ասի. իսկ եթե այդ կարծիքը մասնավոր բնույթ ունի, ապա մեկ մարդ չպետք է իր պատճառով բոլորին նսեմացնի։ Ազգային կոնվենտը վիրավորված ինքնասիրության հարցերով զբաղվել չի կարող։

Ռոբեսպիերը, որն ասաց այն ամենը, ինչ ուզում էր ասել, լռեց։ Եվ Կոնվենտը վերացրեց իր սկզբնական որոշումը ճառը կոմունաներին ուղարկելու մասին։

Կոնվենտում գոտեմարտը տանուլ տրվեց։ Շատ դեպուտատներ, որոնց մասին Ռոբեսպիերը չէր էլ մտածում, կարծեցին, թե նա իրենց սպառնում է։ Նրանք, որոնց չեզոքության վրա նա հույս ուներ, նրանից երես դարձրին։ Ինչո՞ւ նա այդպես

վարվեց։ Ըստ երևույթին, նա հետևում էր նախապես կազմված իր պլանին։ Նա ուզում էր ընդհանուր, գլխավոր հարվածն հասցնել։ Սեն-Ժյուստը պետք է վաղը, հենց այս ամբիոնից ջախջախումն ավարտեր և դավադիրների անուններն ասեր։ Տերմիդորի 8-ին Կոնվենտում ծավալված վիճաբանությունները տապալեցին այդ պլանը, բայց Ռոբեսպիերը չցանկացավ կամ չկարողացավ ընթացքում այն վերակառուցել. նա համառորեն որոշեց գործել նշված պլանի համաձայն, հաշվի չառնելով, թե ինչ կարող էր տեղի ունենալ գիշերն այնպիսի պայմաններում, երբ յուրաքանչյուր րոպեն թանկ էր։ Դավադիրներն այստեղ էլ նրան կանխեցին։ Պայքարի պառլամենտական մեթոդների խստապահանջ կողմնակից, վշտացած, բայց չվհատված, նա հույս ուներ սկսված կամպանիան շարունակել վաղը, մինչդեռ այդ վաղն արդեն չկար։

Ռոբեսպիերը նիստից հետո տուն գնաց, որտեղ նրան անհամբեր ոպասում էին։ Մաքսիմիլիանը պատմեց, թե ժողովում ինչ է տեղի ունեցել։ Ի զարմանս տնեցիների, նա հանգիստ էր։ Նա իր դառնությունը չէր թաքցնում, բայց հույսն էլ չէր կորցնում։

— Ես Լեռից այլևս ոչինչ չեմ սպասում,—պատասխանեց նա Մորիս Դյուպլեի հարցին։— Նրանք ուզում են ազատվել ինձանից, որպես բռնապետից, բայց Կոնվենտի մեծամասնությունը ինձ կլսի։

Հաշվելով, որ մինչև յակորինականների խորհրդակցությունը ամբողջ երկու ժամ է մնում, Մաքսիմիլիանն էլեոնորային առաջարկեց Ելիսեյան դաշտերում միասին զբոսնելու։ Աղջիկը հաճույքից շիկնեց։ Նրանք գնացին հավատարիմ Բրունտի ուղեկցությամբ։ Տաք երեկո էր։ Արևը մայր էր մտնում։ Էլեոնորան ձգտում էր սփոփել իր ուղեկցի մտասուզված տրամադրությունը։ Նա նրան պատմում էր տնային գործերի, իր հոգսերի մասին։ Հանկարծ Մաքսիմիլիանը ցնցվեց և ձեռքով հորիզոնը ցույց տվեց։ Արևն արդեն կիսով չափ իջել էր հորիզոնի եզրը։ Արևի շուրջը երկինքը կարմրել էր։ Արյան համատարած մի ծո՞վ։ Էլեոնորան զարմացած նայեց Ռոբեսպիերի աչքերին։

— Սիրելիս, այդ ասում է միայն այն մարդին, որ վաղը լավ եղանակ կլինի։

Անկաշառելին մռայլ ու անտարբեր հայացք ուներ։ Նա ոչինչ չպատասխանեց։

Ակումբում նրան խանդավառությամբ դիմավորեցին։ Ռոբեսպիերը կարգաց ցերեկը Կոնվենտում արտասանած ճառը։ Հետո, ճմռթած թերթիկները սեղանին դցելով և սպասելով մինչև ծափահարությունները կլռեն, ասաց հոգնած ձայնով.

— Եղբայրներ, ես ձեզ շարադրեցի իմ կտակը։ Այսօր ես տեսա բանդիտների դաշինքը։ Նրանց թիվն այնքան մեծ է, որ դժվար թե ես խուսափեմ նրանց վրիժառությունից։ Ես մեռնում եմ առանց ափսոսալու. ձեզ պատգամ եմ թողնում պահպանելու իմ հիշատակը. դուք այն կարող եք պաշտպանել...

Փոթորիկը ցնցեց հինավուրց եկեղեցու կամարները։ Յակոբինականները, իրենց տեղերից վեր թռչելով, դեպի ամբիոն նետվեցին և, ի նշան հանդիսավոր երդման ձեռքերը վեր բարձրացնելով, հռետորին ջերմ սեր ու հավատարմություն էին հայտնում։ Ո՛չ, Անկաշառելին կփրկվի՛։ Ոչ ոք նրան սպառնալ չի՛ հանդգնի։ Վա՛յ ազատության թշնամիներին...

Մաքսիմիլիանը կարճատես հայացքով ընդգրկեց իրեն շրջապատող մարդկանց։ Նրանք այդպես նվիրվա՞ծ են իրեն և այն գործին, որ ինքը պաշտպանում է։ Լավ, այդ դեպքում ինքը կասի ամեն ինչ, ինքը կհայտնի նույնիսկ այն, ինչ հապիվ խոստովանում է իրեն։

— Ոճրագործներին բաժանեցեք թույլ մարդկանցից. Կոնվենտը ազատեք նրան ճնշող սրիկաներից, նրան մատուցեք այն ծառայությունը, որը նա ձեզանից սպասում է մայիսի երեսունմեկի — հունիսի երկուսի օրերի օրինակով։ Գնացե՛ք ազատությունը նորից փրկեցեք։

Ռոբեսպիերի բիրերը լայնանում են։ Քրտինքը պատում է գունատ ճակատը։ Խոսքն ասվեց՝ դա ապստամբության կոչ է։ Արդյոք նրան կհասկանա՞ն...

— Իսկ եթե ազատությունն այնուամենայնիվ կործանվի,— վերջացնում է նա, նախքան որևէ մեկը կարողանում է պա-

տասխանել,— ապա դուք կտեսնեք, բարեկամներ, թե ինչպես հանգիստ կերպով ջրային մոլախիզ կխմեմ...

Ռոբեսպիերի մոտ է վազում Դավիդը։ Նա ձեռքը մեկնում է Անկաշառելիին։

— Ես թույն կխմեմ քեզ հետ միասին,— խանդավառությամբ բղավում է նա։

Ռոբեսպիերը տհաճությամբ հեռացնում է խանդավառ նկարչի ձեռքը։ Ա՛յն խոսքերը չեն։ Այժմ ա՛յդ մասին չէ, որ պետք է խոսել։ Բայց ահա նա տեսնում է, որ երկուսը կատաղաբար խցկվելով գալիս են դեպի առաջ։ Դրանք Կոլո դ'Էրբուան և Բիլո-Վարենն են։ Օ՜հ, դրանք իրեն հասկացան... Բայց Դյուման արդեն ամբիոնի վրա է։ Նա մերկացնում է դավադիրներին։ Անկաշառելիի երկու թշնամիներին ցույց տալով, նա բացականչում է.

— Տարօրինակ է, որ մի քանի ամիս շարունակ լռող մարդիկ այսօր շտապում են խոսել, անաարակույս, նրա համար, որ առարկեն հենց նոր Ռոբեսպիերի արտահայտած ճշմարտությունների դեմ։ Ի դեմս այդ մարդկանց հեշտ է ճանաչել էբերի և Դանտոնի հետևորդներին։ Ես նախազգուշակում եմ, որ նրանք կժառանգեն նաև այդ դավադիրների ճակատագիրը։

Կոլոն այնուամենայնիվ ճեղքելով, ամբիոն է դուրս գալիս։ Նա սկսում է խոսել՝ նրան սուլոցով են դիմավորում։ Նա հիշեցնում է Ամիրալի մասին, որի քիչ էր մնում զոհը դառնար. նրան ծաղրուծանակով են պատասխանում։ Նրան օգնության է հասնում գազազած Բիլո-Վարենը։

— Իսկ ո՞ւր են յակոբինականները,— բղավում է նա զայրույթից դողացող ձայնով։— Ես նրանց չեմ ճանաչում։ Ինչպե՞ս։ Ժողովրդի ներկայացուցիչը հիշեցնում է, թե ինքը քիչ էր մնում զոհ գնար իր հայրենասիրությանը, իսկ նրան վիրավորում են։ Եթե բանը դրան է հասել, ապա մնում է միայն գլուխը թիկնոցով ծածկել և դաշույնի հարվածների սպասել։

Բիլոյին ընդհատում են գոռոցներով։ Կոլո դ'Էրբուան բղավում է իր թոքերի ամբողջ ուժով, և ընդհանուր աղմուկի ժամանակ կարելի է լսել, որ նա մեղադրում է Ռոբեսպիերին։ Նրան ամբիոնից ցած են գցում։ Լսվում են անեծքներ, սպառնալից խոսքեր։

— Դիլյոտինն՝։

Դյումայի հետևից Կուտոնը դավադիրներին կործանում է նախագուշակում։ Ռոբեսպիերի սաստիկ տրորված թշնամիներին ակումբից վռնդում են։

Այդ միջոցին ամենաեռանդուն մարդիկ որոշում են գործել։ Ռոբեսպիերին մոտենում են Պեյյանը և Կոֆինալը։ Նրանք Անկաշառելիին ճիշտ հասկացան։ Այո, ապստամբությունը, անհապաղ ապստամբությունը կարող է գործը շտկել։ Պեյյանը Ռոբեսպիերին կոչում է ժողովրդի գլուխը անցնել։ Հանգամանքները նպաստավոր են, կոմիտեները պահպանում են ընդամենը մի քանի ժանդարմ։ Անկաշառելին սևեռուն նայում է Պեյյանի աչքերին և գլուխը բացասաբար օրորում։ Ոչ, այդ բոլորովին այն չէ։ Նա չի կարող ժողովրդի գլուխն անցնել։ Նրա միտքը ուրիշ էր։ Եթե ժողովուրդն ի՛նքը ապստամբություն բարձրացներ։ Եթե ժողովուրդն ի՛նքը իրեն այնպես դրսևորեր, ինչպես դրսևորեց օգոստոսի 10-ին և մայիսի 31-ին։ Իսկ ինչ վերաբերում է նրան, ապա նա ապստամբությունը ղեկավարել չի կարող։ Ոչ, նրա տեղը փողոցը չէ։ Նրա ոլորտը հռետորական արվեստն է։ Վաղը Կոնվենտում նա և Սեն-Ժյուստը ոնանշ կվերցնեն այսօրվա պարտության փոխարեն։ Յուրաքանչյուրը պետք է լինի իր գիրքում։ Նա կլինի այնտեղ, որտեղ կկարողանա ամենամեծ օգուտը տալ։

Հուլիսյան տոթ գիշերն իջավ մայրաքաղաքի վրա։ Այն ճնշում էր։ Քաղաքի վրա սավառնում էր չարագուշակ մղձավանջը։ Այդ գիշեր շատ փարիզեցիներ իրենց անկողնում շուռումուռ էին գալիս։ Ոմանք այդպես էլ քնել չկարողացան։

Երեք լույս վառվում էին մինչև լուսաբաց, որոնցից մեկը՝ Սենտ-Օնորե փողոցի փոքրիկ մի լուսամուտում, մյուս երկուսը՝ Տյուիլրիի պալատի շենքում, այնտեղ, ուր կոմիտեները նիստեր էին անում, այնտեղ, ուր մութ թիկնոցների մեջ փաթաթված մարդկանց խմբերը իրար հետ փսփսում էին։ Իսկ այդ ամենին վերևից անշարժ նայում էր գունատ ու անտարբեր լուսինը։

Իր խցիկում անցկացրած այդ վերջին գիշերը Մաքսիմիլիանը չքնեց։ Նա գրում էր, հետո ժամերով նստում, գլուխը գնելով հոգնած ձեռքերի վրա, ապա սենյակում շրջում, կրկին նստում, գրասեղանի արկղները բաց անում, թղթերը վերանայում, նորից գրում։ Սարսափելի հակասությունները քըրքըրում էին նրա սիրտը։ Մի կողմից, նա գրեթե համոզված էր, որ ամեն ինչ վերջացել է։ Այդ մասին նրան ասում էր ներըմբռնումը, ինչպես նաև մարդկային հոգիները ճանաչելու տարիների ընթացքում կուտակված փորձը։ Հաշվի առնելով ու համեմատելով տարբեր փաստերը, լավ կշռադատելով իր սեփական սխալները, նա պարզորեն տեսնում էր, որ գրությունը ծայր աստիճան վատացել է և ելք գտնել չի կարելի։ Նա հասկանում էր, որ կոմիտեներում պայքարել հնարավոր չէ, որ Կոնվենտն իրենից երես է դարձրել։ Յակոբինականնե՞ը... Այո, յակոբինականները նրան պաշտում են, նրանք պատրաստ են հավատարմության երդում տալու, նրանք պատրաստ են խոստանալ նրա հետ մահաբեր թույն խմելու... Ռոբեսպիերը գառնորեն ժպտում է։ Բայց յակոբինականները ուժ են միայն այն ժամանակ, երբ նրանք ժողովրդի հետ են և երբ ժողովուրդը նրանց հետ է... Ժողովուրդը... Բայց նա ժողովրդի մասին իր համար պատրանքներ չէր ստեղծում։ Ո՞ւր է այն խանդավառությունը, որ կար օգոստոսի 10-ի կամ մայիսի 31-ի նախօրեին։ Արդյոք հենց ի՞նքը չոչնչացրեց այն։ Արդյոք հենց ի՞նքը չէր, որ մահապատժի ենթարկեց Շոմետին ու ջախջախեց այն մարդկանցից շատերին, ովքեր այժմ իր համար արվարձանները Կոնվենտի մոտ կբերեին։ Սեկցիաները... Բայց իր քաղաքականությունը չէր՞, որ սեկցիաները թուլացրեց, նրանցից խլեց հեղափոխական խանդավառության ոգին, նրանք պաշտոնական կազմակերպություններ դարձրեց։ Կոմունան... Այո, Կոմունան իրեն հավատարիմ կլինի մինչև վերջին մարդը։ Պեյյանը, Ֆլերիո-Լեսկոն և ուրիշներ՝ դրանք իր մարդիկն են, դրանց ինքն է դաստիարակել։ Պեյյանը եռանդուն և խորաթափանց մարդ է, նա կարող է շարժումը գլխավորել։ Սակայն... դա 93 թվականի Կոմունան չէ։ Դա նույնպես պաշտոնական հիմնարկություն է։ Պեյյանի և Ֆլերիոյի ետևից ժողովուրդն այնպես չի գնա, ինչպես կգնար Շոմետի և Պաշի ետևից։ Իսկ

մաքսիմո՞ւմը։ Անկաշառելիի համար գաղտնիք չէր, որ մաքսիմումն ամենևին ժողովրդականություն չի վայելում, որ սանկյուլոտները հենց նրան՝ Ռոբեսպիերին են մեղադրում ցածր աշխատավարձի և տնտեսական դժվարությունների մեջ։ Եթե դրան ավելացնենք մեսիդորի բոլոր անիմաստ մահապատիժները, որոնք ժողովրդին նրանից վանեցին, ապա... ապա ապստամբության հնարավորության ու հաջողության հույսը չափազանց աննշան կդառնա...

Խավարը, զարհուրելի, անթափանց խավարը պատում է Ռոբեսպիերի հոգին։ Եվ այնուամենայնիվ... Այնուամենայնիվ նրա մեջ նշողվում է հույսը, նշողվում է հակառակ ամեն ինչի։ Մյուս կողմից, չէ՞ որ նա խոսքի շատ մեծ ուժ ունի, և նրա խոսքերը կյանքի ճշմարտությունն են արտահայտում։ Նրա բարեկամները պատրաստ են իր հետ միասին մեռնելու։ Այն, ինչ չհաջողվեց երեկ Կոնվենտում, կարող է հաջողվել այսօր։ Չէ՞ որ Կոնվենտը, ժողովրդական ներկայացուցչության գլխավոր օրգանը ամբողջապես խաբեբաներից ու սրիկաներից չի կազմված։ Երեկ նրանք անուններ էին պահանջում։ Լավ, այսօր Սեն-Ժյուստը անունները կասի։ Սեն-Ժյուստի հետևից հանդես կգա նա՝ Անկաշառելին, և ինչպես Դանտոնի տապալման օրերին, ինչպես պրերիալի 22-ի օրը, նա իր բարոյական համոզմունքի ուժով և իր հետևությունների տրամաբանությամբ դժգոհությունն ու բողոքները կհաղթահարի։ Երեկ վրիպում ստացվեց։ Ուրեմն ի՞նչ։ Անհաջողություններ լինում էին նաև առաջներում, բայց վերջին հաշվով հաղթանակողը նա էր լինում։ Պետք է միայն կատարելապես զինված լինել։ Առաքինությունն ու ճշմարտությունը նրան կպաշտպանեն, և գավագիրները կտապալվեն։

Ռոբեսպիերը մոտենում է հայելուն և երկար ժամանակ ուշադրությամբ նայում իր հոգնած դեմքին՝ լամպի թրթռացող լույսի տակ այնպես անպարզորոշ ու տարուբերվող գիմագծերին։ Արդյոք դա ի՞նքն է։ Ո՞ւր է այն երիտասարդ, ուժով ու հույսերով լեցուն առասցի վայելչակազմ փաստաբանը, որը մի ժամանակ, բայց, թվում է, թե բոլորովին վերջե՞րս,— սկսեց իր քաղաքական առաջին ելույթները «Փոքր զվարճությունների» դահլիճում։ Ռոբեսպիերը ձեռքերը մատեցնում է

քունքերին և մազերը հարդարում։ Նրա գլխում տարօրինակ մի միտք է ծագում։ Այսօր Կոնվենտում, եթե ուզում է հաղթանակել, նա պետք է այնպես լինի, ինչպես գերագույն էակի տոնի օրը։ Նա պետք է լինի երիտասարդ, ուժեղ, բարեսիրտ։ Նրա յուրաքանչյուր ժեստում պետք է ինքնավստահություն զգացվի։ Նա կհագնի իր լավագույն՝ հենց այն կոստյումը, որը հագած պրերիալի 20-ին ցնծացող բազմության հետ հանդիսավոր քայլում էր Փարիզի փողոցներում։

Այդ գիշեր Ֆուշեն, Տալյենը և դավադրության մյուս ղեկավարները նույնպես չքնեցին։ Տալյենը կարոտում էր իր սիրելի Թերեզային, որը բանտից նրան հուսահատական նամակներ էր գրում։ Նենգ Ֆուշեն շատ լավ գիտեր, որ եթե Ռոբեսպիերը իրեն երեկ խնայեց, ապա այսօր չի խնայի։ Բառասը, Բուրդոնը և նրանց ամբողջ սրիկայախումբը, որոնք զարմացել էին, թե Անկաշառելին ինչու անունները չասաց, հասկանում էին, որ պետք է իրենց անհապաղ ապահովեն, ռոբեսպիերիստներից խլելով նրանց սխալը վերացնելու ամեն մի հնարավորություն։ Եվ ահա գիշերվա քողի տակ Կոնվենտի կուլուարներում տեղի են ունենում գաղտնի տեսակցություններ։ Դավադիրները «ճահճի» լիդերներին աղաչում են իրենց հետ դաշինք կնքել և Ռոբեսպիերից երես դարձնել։ Ջափավորներ Բուասի դ'Անգլան, Դյուրան-Մայյանը, Պալան-Շամպոն տատանվում են։ Ռոբեսպիերից երես դարձնե՞լ... Հըմ... նրանք աշխարհում ամենից ավելի շատ վախենում են տեռորից։ Ռոբեսպիերը, իհարկե, տեռորիստ է։ Բայց նա կարծես խոստացավ տեռորը թուլացնել և մաքսիմումից հրաժարվել։ Եվ ահա իրենց առաջարկում են Ռոբեսպիերի դեմ դաշինք կնքել՝ բայց ո՞ւմ հետ։ Ծայրահեղ տեռորիստների՛ հետ։ Ֆուշեի հետ, որը լիոնցիներին կարտեչով գնդակահարեց, Տալյենի հետ, որը հարավում սանձարձակություններ էր անում... Ո՛չ, պարոնա՛յք, արդեն ավելի լավ է Ռոբեսպիերը, քան Ֆուշեն։ Պայմանավորվելու երկու փորձերն ապարդյուն անցան։ Այն ժամանակ կոնսպիրատորները համաձայնվում են «ճահճին» լիովին բավարարող ու հանգստացնող պարտավորություններ վերցնել։ Նրանք երդվելով խոստանում են հրաժարվել հեղափոխական

կառավարության քաղաքականությունից։ Նրանց երաշխիքն այն է, որ գավադրությանը մասնակցում են դանտոնիստներ՝ տեռորի կատաղի թշնամիները։ Եվ չափավորների լիդերները մի լավ կշռադատելուց հետո համաձայնվում են։ Նրանք հասկանում են, որ նոր դաշինքն իրենց միաժամանակ կփրկի թե՛ գիլյոտինի սարսափից, թե՛ հանրապետությունից։ Երրորդ փորձը հաջողությամբ է պսակվում։ Կոնվենտում Ռոբեսպիերի գեմ ցանցը հյուսված է։ «Ճահիճը», այսինքն՝ մեծամասնությունը նրանից երես դարձրեց։ Այդ տեղի է ունենում գիշերվա ժամը երկուսին։ Գլխավորը վերջացնելով, պայմանավորվում են մանրամասնությունների մասին։ Լուսաբացին դավադիրների դեմքերը կավճի նման սպիտակ են թվում։

Այդ միջոցին չքնեցին նաև Հասարակական փրկության կոմիտեում։ Յակոբինյան ակումբը փակվելուց շատ առաջ այստեղ եկավ Սեն-Ժյուստը։ Իր պաշտոնակիցներին սաստը ողջունելով,— Ռոբեսպիերը և Կուտոնը կոմիտեում չէին,— Սեն-Ժյուստը գնաց իր գրասեղանի մոտ և աշխատանքի մեջ խորասուզվեց։ Նա գրում էր այն զեկուցման տեքստը, որը մտադիր էր Կոնվենտում կարդալու։ Կես գիշերվա մոտ պատրաստ էին առաջին տասնութ էջերը, որ նա ուղարկեց գրագրին։ Այդ պահին դուռն աղմուկով լայն բացվեց, և շեմքին երևաց Կոլո դ'Էրբուան՝ գունատ, վառվող աչքերով, պատառոտված հագուստով. նա վերադարձել էր ակումբից դազազած ու ծեծված։ Սեն-Ժյուստը նրա վրա սարկաստիկ մի հայացք գցելով, հանգիստ կերպով հարցրեց.

— Յակոբինականների մոտ ի՞նչ նորություններ կան։

Կոլոն կատաղեց.

— Այդ մասին դո՞ւ ես ինձ հարցնում, դո՞ւ... Օ՜հ սրիկա, օ՜հ կեղծավոր մարդ, սրամիտ ասույթների կողով։

Խոսքից գործի անցնելով, նա հարձակվում է Սեն-Ժյուստի վրա։ Նրանց իրարից անջատում են։

— Դուք սրիկանե՛ր եք,— բղավում է Կոլոն։— Դուք հույս ունեք, որ հայրենիքը կործանման կհասցնեք, բայց ազատությունը ձեր զազրելի գավերը կհաղթահարի։

Նրան պաշտպանում է Բարերը։

— Դուք ուզում եք հայրենիքի մնացորդները բաժանել

Հաշմանդամի, երեխայի և հրեշի միջև։ Ես անձամբ ձեզ թույլ չէի տա նույնիսկ մի հավանոց ղեկավարելու։

Սեն-Ժյուստը ուսերը թոթվում է և անվրդով իր աշխատանքը շարունակում։ Դավադիրներն իրար են նայում։ Կոլոն բացականչում է, մարտահրավեր նետելով.

— Ես համոզված եմ, որ քո գրպանները մատնության ղեկուցագրերով լի՛ք են։

Առանց մի խոսք ասելու, Սեն-Ժյուստը իր գրպանների պարունակությունը թափում է սեղանի վրա և շարունակում գրել։ Կոլոն պահանջում է, որ նա ղեկուցման բովանդակությունը շարադրի։ Սեն-Ժյուստը պատասխանում է, որ ինքը չի ուզում իր համոզմունքները գաղտնի պահել։ Այո, ինքը ղեկուցման մեջ իր պաշտոնակիցներից ոմանց մեղադրում է։ Բայց ինքը Կոմիտեում այն կկարդա, և այն ժամանակ կարելի կլինի ըստ էության խոսել։ Այդ խոսքերն ասելով, նա շարունակում է աշխատանքը։ Նրանից ձեռք են քաշում։

Գիշերվա ժամը մեկին մոտ եկավ Լորան Լեկուանտրը։ Նա առաջարկեց կալանավորել Անրիոյին, Ֆլերիո-Լեսկոյին և Պեյյանին։ Նրա առաջարկությունը պաշտպանեց Ֆրերոնը։ Սեն-Ժյուստը, մի պահ իր ղեկուցումից կտրվելով, սկսեց առարկել։ Վեճը բորբոքվեց։

Առավոտյան ժամը հինգին Սեն-Ժյուստը, գրված թերթիկները հավաքելով և խնամքով դասավորելով, Կոմիտեից գնաց։ Գրեթե հենց այդ ժամանակ բաղկաթոռով ներս մտավ Կուտոնը։ Կոմունայի պաշտոնատար անձանց հրաժարականի ու կալանավորման վերաբերյալ վեճը նոր ուժով վերսկսվեց...

Ժամերն անցնում էին։ Լուսաբացին հաջորդեց առավոտը, առավոտը բաց էր անում ցերեկվա ճանապարհը։ Սկսվում էր տերմիդորի 9-ի ճակատագրական օրը։ Կոմիտեների անդամները, վաղուց արդեն վեճերը դադարեցնելով, անհանգիստ գիշերից հետո քնկոտ ու թուլացած, սպասում էին Սեն-Ժյուստի վերադարձին։ Հանկարծ Կոնվենտի պրիստավը դուռը լայնորեն բաց արեց և հայտարարեց.

— Սեն-Ժյուստը ամբիոնի վրա՛ է։

Բոլորը վեր թռան։ Երկաթե մարդն իր խորամանկությամբ նրանց գերազանցեց. իր խորհրդավոր ղեկուցումը Կոմիտեում

կարդալու փոխարեն, նա այն ուղղակի Կոնվենտ տարավ։ Դեհ, այդ նրան չի՛ փրկի... Մի քանի վայրկյան հետո Կոմիտեի շենքն ամայացավ. միայն Կուտոնի բազկաթոռն էր միայնակ սլանում սենեկաշարքի երկայնությամբ։

Փոթորիկ նախագուշակող խեղդող տոթ եղանակ էր։ Կոնվենտը վաղ առավոտվանից լիքը լցված էր։ Հասարակության սրահները լեփ-լեցուն էին։ Միջանցքներով դեպուտատներ էին դնում, որոնք շտապում էին գրավելու իրենց տեղերը։ Նիստն սկսվելուց հաշվված րոպեներ էին մնում։ Բուրդոնը, «ճահճի» պարագլուխ Դյուրան դը Մայյանի ետևից հասնելով, նրա ձեռքին կպավ և շողոքորթությամբ փսփսաց.

— Դուք քաջե՛ր եք։

Նրանց մոտ վազեց Տալլենը և, նիստերի դահլիճի դուռը ցույց տալով, արագ ասաց.

— Սեն-Ժյուստն արդեն ամբիոնի վրա է։ Շտապենք։ Ժամանակն է սկսելու։

Այո, Սեն-Ժյուստը ամբիոնի վրա է։ Հենց որ զանգի երեք զարկի ձայները լսվեցին, նա սկսեց խոսել։ Նրա ձայնը սառն էր ու անվրդով, ինչպես միշտ։

— Ես ոչ մի կուսակցության չեմ պատկանում և պատրաստ ես պայքարելու նրանցից յուրաքանչյուրի դեմ։ Բայց նրանց գործունեությունն անխուսափելիորեն կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ հաստատուն երաշխիքներ ապահովող օրենքներ չեն հրատարակվի, իշխանության ներգործության սահմանները չեն որոշվի և մարդկային հպարտությանը չեն ստիպի հասարակական աղատության առաջ խոնարհվելու։

Ուշացած դեպուտատներն անաղմուկ անցնում են նստարանների արանքով։ Ռոբեսպիերն իր տեղից հետևում է նրանց։ Նա այսօր պճնագեղ, պշրաբարո մարդու տեսք ունի։ Նա հագել է կապույտ ֆրակ, ոսկեգույն շալվար և միտաքսե սպիտակ գուլպաներ։ Լավ օսլայած ժաբոն փայլում է իր սպիտակությամբ։ Մազերը պուդրայած են։ Սակայն սպիտակ կեղծամն իր գունեղանգով գեմքից գրեթե չի տարբերվում։ Աչքերը տենդորեն փայլում են։

— Հանգամանքների զուգադիպության շնորհիվ,— շարունակում է Սեն-Ժյուստը,— այս հռետորական ամբիոնը, թերևս, Տարապեյան քարափ կդառնա ամեն մեկի համար, ով...

Այս խոսքերի վրա նրան ընդհատում են։ Նեքս է վազում Տալլենը և բղավում.

— Ես նիստի կարգի մասին ուզում եմ խոսել։ Հռետորը հայտարարեց, որ ինքը ոչ մի կլիկի չի պատկանում. ես միևնույն բանն եմ ասում։ Ամենուրեք միայն երկպառակություններ են երևում։ Երեկ կառավարության անդամներից մեկը հանդես եկավ բոլորովին ինքնուրույնաբար և իր անունից ճառ արտասանեց. այժմ մի ուրիշը վարվում է ճիշտ այդպես։ Ես պահանջում եմ քողը պատռել...

Լսվում են ծափահարություններ, որ շարունակվում են տարբեր տեղերում։ Սեն-Ժյուստը զուր է բողոքում կանոնների խախտման դեմ. նախագահը՝ Կոլո դ'Էրբուան, նրան օգնելու միտք չունի։ Բայց Տալլենն իր ձայնը ճիշտ չօգտագործեց։ Նա սկսեց խոսել չափազանց բարձր ձայնով։ Նա ավելի շուտ ուժասպառ եղավ, քան կասեր այն ամենը, ինչ ուզում էր։ Այդ հանգամանքը դավադիրների պլանների մեջ չի մտնում։ Տալլենին օգնության է շտապում Բիլո-Վարենը։ Նա մեղադրում է, սպառնում, զրպարտում. նրա խառնաշփոթ թույլ ճառը հազիվ թե հասկանալի է ժողովի համար։ Ասենք, ի՞նչ հասկանալ, երբ ամեն ինչ որոշված է։ Բիլոն արտասանում է «բռնապետ» բառը, և ամբողջ Կոնվենտը միասին բացականչում է.

— Մա՛հ բռնապետներին։

Ռոբեսպիերի նյարդերը չեն դիմանում։ Նա տեղից վեր է թռչում և վազում դեպի ամբիոնը։

— Կորչի՛ բռնապետը,— բղավում են նրա հետևից։

Նա խոսք է պահանջում։ Լեկուանտրը առաջարկում է նրան խոսք տալ կես ժամվա ռեգլամենտով։ Ուրիշները բողոքում են՝ Անկաշառելիին թեկուզ տասը բոպե տալ՝ այդ նշանակում է ամեն ինչ սպառնալիքի տակ դնել...

Բայց ահա գլխավոր կարգադրիչը՝ Տալլենը, ուշքի եկավ։ Նա դարձյալ ամբիոնի վրա է։ Նա մեծարում է աջերին, շողոքորթում «ճահճին», պահանջում կալանավորել Անրիոյին և նրա շտաբը։ Նրա ձեռքին փայլատակում է դաշույնը։ Այն թա-

փահարելով, Տալլենը գոռում է, որ ինքը պատրաստ է ապա-նելու նոր Կրոմվելին։ Ռոբեսպիերին մեղադրելով այն բանում, որ նրան ծառայում են «անառակության մեջ թաղված մարդիկ», նա առաջարկում է Կոնվենտի նիստերը հայտարարել շարունակվող այնքան ժամանակ, «... քանի դեռ օրենքի ուրը հեղափոխության գոյությունը չամրապնդի և քանի դեռ բռնապետության կամակատարների կալանավորման մասին որոշումներ չհրատարակվեն»։

Ժողովը ծափահարում է Տալլենին։ Նրա երկու առաջարկություններն էլ ընդունվում են «Կեցցե՛ հանրապետությունը» բացականչությունների տակ։

Ռոբեսպիերի քունքերը կատաղորեն զարկում են։ Գունատ երեսից ծորում է քրտինքը։ Նա փորձում է խցկվելով անցել դեպի ամբիոն, բայց նրան արմունկներով ետ են հրում։ Տալլենը թափահարում է դաշույնը։ Ամեն անգամ, երբ Անկաշառելին փորձում է խոսք ասել, լսվում է «կորչի՛ բռնակալը» ընդհանուր գոռգոռոց և զնգում է նախագահի զանգը։ Ոչ, նրանք նրան թույլ չեն տա խոսելու։ Ասես քնաթաթախ վիճակում, նա լսում է Բարերի շողոմ ձայնը, որը ինչ-որ բան է առաջարկում, ինչ-որ բանից նախազգուշացնում։ Բարերին փոխարինում է Վադյեն... Այդ ինչի՞ մասին է խոսում նա... Ա՜, դարձյալ պառավ Թեոյի գործը... Վադյեն ծաղրում է, թուք ու մուր թափում, նա ուզում է ընդհանուր հոհոց առաջացնել։ Տալլենն իր տեղում շուռումուռ է գալիս։ Հիմարնե՛ր։ Նրանք անտեղի ժամանակ են վատնում։ Երկրորդական դեկրետներ են ընդունում, երկրորդական անձնավորությունների կալանավորման մասին որոշումներ հրատարակում։ Իսկ նա... Նա դեռ կենդանի՛ է, և նա հո՛ւյս ունի խոսք ստանալու։ Ավելի, ավելի շուտ ամեն ինչի միանգամից վերջ դնել... Տալլենն ընդհատում է Վադյեի շաղակրատությունը։

— Ես պահանջում եմ մտքերի փոխանակությունը ծավալել գործի էության շուրջը։

Ռոբեսպիերը հասկանում է։ Նա խփված թռչունի նման ցնցվում է ու ևս մեկ անգամ փորձում ամբիոն բարձրանալ։

— Օ՜հ, ես կարո՛ղ եմ մտքերի փոխանակությունը վերա-

դարձնել գործի էությանը,— կրքոտությամբ բացականչում է նա։

Բայց նրան դարձյալ թույլ չեն տալիս խոսելու։ Ամեն կողմից լսվում են «կորչի՛ բռնապետը» գոռոցները։ Տալյենը նրան մեղադրում է, որ նա կալանավորել է հայրենասիրներին։

— Դա ճիշտ չէ՛,— գոռում է Ռոբեսպիերը։— Ես...

— Կորչի՛ բռնապետը,— ոռնում է Կոնվենտը։

Նա իջնում է ամբիոնի պատվանդանի մոտ։ Նա հայացքը դարձնում է դեպի լեռան կողմը։ Օ՜հ, դավաճանե՜ր։ Ոմանք անշարժ են մնում, մյուսները՝ երեսը շուռ տալիս։ Նա ձեռքերը մեկնում է դեպի ամֆիթատրոն։

— Ես ձե՛զ եմ գոչում, ստաքինի քաղաքացիներ, և ոչ թե այս ավազակներին...

Ապարդյուն։ Գոռգոռոցները սաստկանում են։ Այն ժամանակ, կատաղությունից իրեն կորցրած, Ռոբեսպիերը նորից նետվում է դեպի ամբիոն։ Նա մարտնչում է առյուծի նման, թշնամիներին դես ու դեն հրելով ճանապարհ բացում, ջղաձգորեն ամբիոնի բազրիքին կառչում... Նրա ժաքոն պոկում են։ Նախագահին դիմելով, նա խզխզոցով ասում է.

— Ավազակների նախագա՛հ, վերջին անգամ ինձ թույլ տուր խոսելու կամ ինձ սպանիր...

Թյուրիոն, որ Կոլոյին փոխարինելով գրավեց նախագահի բազկաթոռը, անողոքաբար զանգահարում է։ Գոռգոռոցները և հռհռոցները հաջորդում են իրար։ Ի՞նչ տեսարան է։ Ռոբեսպիերը, երկու ձեռքերով կուրծքը բռնած, հազում է. նրա ձայնը խզվել է։

— Քեզ խեղդում է Դանտոնի արյունը,— չարախնդորեն բղավում է Լեժանդրը։ Ռոբեսպիերը, ուժասպառ, շնչահեղձ լինելով, հանկարծ շուռ է գալիս.

— Ուրեմն, նշանակում է Դանտոնի համար դուք ուզում եք ինձանից վրե՞ժ լուծել, վախկոտնե՛ր։ Սրիկանե՛ր։ Իսկ դուք ինչո՞ւ նրան չէիք պաշտպանում։

Տալյենը նայում է ժամացույցին։ Ֆրերոնը սաստիկ հառաչում է.

— Ա՜խ, ինչպես դժվար է բռնապետին տապալելը։

Տալյենի հայացքը սահում է շարքերի վրայով, և նա նշան

է անում։ Վերջապես, ժամանակն է սկսելու վերջին գործողությունը։ Վեր է կենում դեպուտատ Լուշեն՝—ո՞վ է ճանաչում նրան,— և ասում է մի խոսք, որին բոլորն այնպես սպասում էին և որից այնպես վախենում։

— Ես առաջարկում եմ հրատարակել դեկրետ Ռոբեսպիերի կալանավորման մասին։—Գոռոցներն ասես մոգական գավազանի շարժումով խլացին։ Դահլիճում զարհուրելի լռություն տիրեց։ Գրեթե մի բոպե լռությունից հետո ինչ-որ մեկը Լուշեին պաշտպանեց։ Հարցը քվեարկության դրվեց։

Այդ բոպեին վեր է կենում մի երիտասարդ մարդ։ Դա Օգյուստեն Ռոբեսպիերն է։

— Ես մեղավոր եմ այնպես, ինչպես և իմ եղբայրը,— ասում է նա։— Ես բաժանում եմ նրա առաքինությունները։ Ես պահանջում եմ, որ մեղադրական դեկրետ հրատարակվի նաև իմ դեմ։

Մաքսիմիլիանը զուր է փորձում եղբորը պաշտպանել՝ նրան չեն լսում։ Հետո դեկրետավորվում է երկու Ռոբեսպիերների, Կուտոնի և Սեն-Ժյուստի կալանավորումը։ Կոնվենտի բոլոր անդամները վեր են կենում և գոռում.

— Կեցցե՛ հանրապետությունը։

Հանրապետությո՞ւն,— շշնջում է Մաքսիմիլիանը։— Հանրապետությունը կործանվեց։ Սկսվում է ավազակների թագավորությունը...

Հանկարծ վեր է թռչում Լեբան։ Նրան փորձում են պահել։ Բայց, բարեկամների ձեռքերում թողնելով իր հագուստի ծալները, նա վազում է շնորհազուրկների խմբի մոտ։

— Ես չեմ ուզում բաժանել այդ դեկրետի խայտառակությունը,— ասում է նա։— Ես պահանջում եմ ինձ կալանավորել։

Լեբայի կալանավորումը հաստատվում է։ Էլ ո՞վ է պակասում։ Դավիդը։ Դավիդն այդ օրը Կոնվենտի նիստի չեկավ։ Նկարիչը, հակառակ Յակոբինյան ակումբում իր արած խանդավառ հայտարարությանը, գերադասեց «մահաբեր բաժակը» չդատարկել...

Պահանջում են, որ կալանավորներն իջնեն Կոնվենտի վանդակապատի մոտ։ Երկու Ռոբեսպիերները, Կուտոնը և Լեբան

խոնարհաբար ենթարկվում են։ Սեն-Ժյուստը հեռանում է ամբիոնից, որտեղ մինչև այժմ հպարտ լռությամբ կանգնած էր, և իր զեկուցման տեքստը նախագահությանը հանձնում։ Կուտոնն ի պատասխան Ֆրերոնի ռեպլիկայի, որը նրան մեղադրեց այն բանում, թե նա ուզում էր «ժողովրդի ներկայացուցիչների գլխակների վրայով գահ բարձրանալ», ժպտալով ցույց է տալիս իր կաթվածահար ոտքերը։

— Այդ ե՞ս եմ ուզում գահ բարձրանալ։

Մնում էր կատարել կալանավորման դեկրետը։ Մեղադրյալները երևան են բերում հնազանդվելու լիակատար պատրաստակամություն։ Բայց Կոնվենտի պրիստավները, որոնք պետք է հրամանը կատարեին, շփոթվեցին և գործել չէին համարձակվում։ Ռոբեսպիերին կալանավորե՞լ։ Դա անհավատալի՛ էր թվում։ Ժանդարմներ են կանչում։ Կոլո դ'Էրբուան ժողովին շնորհավորում է այն բանի համար, որ նա խուսափեց մայիսի 31-ի—հունիսի 2-ի օրերի կրկնությունից։ Ժանդարմները գալիս են և դերիներին տանում։ Նախագահը, տեսնելով, որ արդեն ժամը վեցի կեսն է, ընդմիջում է հայտարարում, որ դեպուտատներին թույլ տա ճաշելու։ Նիստը հետաձգվում է մինչև երեկոյան ժամը յոթը։

Բայց մինչև այդ ժամը յոթը հասնելը շատ լուրջ դեպքեր տեղի կունենան։ Չէ՞ որ Փարիզը դեռ իր խոսքը չէր ասել։ Սեկցիաները դեռ ոչ մի վերաբերմունք ցույց չէին տվել։ Իսկ Կոմունա՞։ Մի՞թե կարելի էր նրան հաշվից դուրս գցել։ Անկաշառելին այդ ուզում էր, թե ոչ, բայց նրա ճակատագիրը պետք է փոխզիջում որոշվեր։

Երեկոյան ժամը հինգին, այն ժամանակ, երբ Ռոբեսպիերը և նրա չորս հավատարիմ զինակիցները Կոնվենտում ծաղրի ու ծանակի էին ենթարկվում, Կոմունայի պաշտոնատար անձինք և քաջ Անրիոն, գործերի դրության մասին կուահելով, սեփական նախաձեռնությամբ ապստամբության կոչ արեցին։ Ուղեկալները փակվեցին, ահազանգ խփեցին, սեկցիաները հրավիրեցին և նրանց կարգադրեցին իրենց հրետաձիգներին թնդանոթների հետ միասին ուղարկել քաղաքապետարանի շենքի մոտ։ Ճիշտ է, Կոնվենտի հրամանով հրետանավորների

զգալի մասը նախընթաց օրերին Փարիզից հեռացել էր, բայց քաղաքում մնացած հրետանավորներն էլ մեծ ուժ էին ներկայացնում. այդ ուժը ռոբեսպիերիստների և Կոմունայի հավատարիմ ռեզերվն էր։

Ժամը վեցի կեսին, երբ կալանավորներին տանում էին Հասարակական անվտանգության կոմիտե, որտեղ նրանց պետք է կերակրեին և բաշխեին ըստ բանտերի, Անրիոն որոշեց ժանդարմների մի ջոկատի հետ գնալ նրանց օգնելու։ Իր պլանն իրականացնելով, նա Մոննե և Սենտ-Օնորե փողոցներով քառարշավ սլացավ։ Դը Բրիոն հյուրանոցի շենքի մոտ, ուր տեղավորված էր Կոմիտեն, մարդիկ էին խռնվել։ Հրմշտելով ամբոխը ճեղքելով, Անրիոն իր ժանդարմների գլուխն անցած հասավ Կոմիտեի շքամուտքին և, երբ դուռը բաց անելուց հրաժարվեցին, նա հայհոյանքներ տալով՝ այն կոտրեց։ Նրա վրա հարձակվեցին։ Տառացիորեն Ռոբեսպիերի և մյուս կալանավորների աչքերի առաջ Անրիոյին գետին տապալեցին, կապկպեցին և հանձնեցին հենց այն ժանդարմների պահպանությանը, որոնց գլուխն անցած նա եկավ ռոբեսպիերիստներին փրկելու։ Այդ հանգամանքն ամրապնդեց Ռոբեսպիերի ենթադրությունները։ Նրա բարեկամները նույնպես որոշեցին, որ ապստամբությունը հաջողության շանսեր չունի։ Հինգ կալանավորներն այն եզրակացության եկան, որ պետք է հրաժարվել Կոնվենտին դիմադրելու ամեն մի մտքից և իրենց պաշտպանությունը կատարել օրինական միջոցներով, Հեղափոխական տրիբունալում։

Ժամը վեցին քաղաքապետարանի շենքում Կոմունայի գլխավոր խորհուրդը նիստ գումարեց։ Նախագահում էր Լեսկոն։ Կազմվեց մի կոչ, որն սկսվում էր այս խոսքերով. «Քաղաքացինե՛ր, հայրենիքն ավելի մեծ վտանգի մեջ է, քան երբևիցե եղել է»։ Որպես «Կոնվենտին օրենքներ պատվիրող ոճրագործներ» նշվում էին Ամարը, Կոլո դ'Էրբուան, Բուրդոնը, Բարերը և ուրիշներ։ «Ժողովո՛ւրդ, ոտքի ելի՛ր,— եզրափակում էր կոչը։— Չկորցնենք օգոստոսի 10-ի արդյունքները և ոչնչացնենք բոլոր դավաճաններին»։ Խորհուրդը որոշեց

կոմիտեների բոլոր հրամաններն անվավեր համարել։ Բոլոր սահմանված իշխանություններին կարգադրվեց ներկայանալ և հայրենիքը փրկելու երդում տալ։ Կասկածելի ադմինիստրատորները կալանավորվեցին։ Բանտերի դռնապաններին հրամաններ ուղարկվեցին առանց ռոբեսպիերիստներին հավատարիմ ադմինիստրացիայի հատուկ կարգադրության ոչ ոքի չընդունել և բաց չթողնել։ Հրետաձիգները հավաքվեցին Գրևյան հրապարակում, իրենց թնդանոթները տեղավորելով։ Վերջապես, Կոֆինալին հանձնարարվեց ազատել Հասարակական անվտանգության կոմիտեում տառապող բոլոր մարդկանց։

Ժամը ութին մոտ եռանդուն Կոֆինալը հավատարիմ ջոկատների գլուխն անցած արշավեց դեպի դը Բրիոն հյուրանոցը։ Երբ նա Հասարակական անվտանգության կոմիտեի շենքը գրավեց, այնտեղ գրեթե ոչ ոք չկար։ Կոմիտեի անդամները փախել էին։ Ռոբեսպիերին և մյուս կալանավորներին ուղարկել էին բանտերը։ Մնում էին կապված Անրիոն և նրա պահապանները։ Ժանդարմները, թեև նրանց հրամայել էին բռնության ենթարկվելու առաջին իսկ կասկածի դեպքում գերու գլուխը չնջխել, չդիմադրեցին։ Պարաններից ազատված Անրիոն ճըմըլկոտվում էր, ընդարմացած անդամների թմրությունը վերացընելու։ Հետո սկսեց ժանդարմներին դառնորեն նախատել, որոնք թույլ տվեցին նրան կապկպելու։ Ամոթահար, նրանք պատասխանեցին, որ նրան ցմահ հավատարիմ կլինեն։ Կոֆինալը և Անրիոն ձիերի վրա ցատկեցին և հրետաձիգների ջոկատի ուղեկցությամբ շարժվեցին դեպի Կոնվենտ։

Ժամը յոթին Կոնվենտը վերսկսեց ընդհատված նիստը։ Բուրդոնի առաջարկությամբ, որ Մերլենը պաշտպանեց, որոշվեց Կոմունայի անդամներին դատապարտել և ուղարկել տըրիբունալ։ Լուր տարածվեց, թե Պեյյանը կալանավորված է։ Ժողովը հրճվում էր։ Բայց լուրը սուտ դուրս եկավ։ Դրա փոխարեն պրիստավը ներս վազեց և հայտնեց, որ Կոֆինալը ազատել է Անրիոյին և խոռվարարները գրավել են Հասարակական անվտանգության կոմիտեն։ Դեպուտատները վհատ-

վեցին։ Ներս եկավ Կոլոն և, նախագահի բազկաթոռը գրավելով, շփոթված տեսքով ասաց.

— Քաղաքացինե՛ր, հասավ մեր գրաված դիրքում մեռնելու բոպեն...

Իր գրաված դիրքում մեռնել ոչ ոք չէր ցանկանում։ Ոմանք սկսեցին ծածուկ ծլկել։ Լորան Լեկուանտրը, որ եկավ, հետը ռազմամթերքներ բերելով, սկսեց հրացաններ ու ատրճանակներ բաժանել։ Սակայն շատերն աշխատում էին զենք ստանալուց խուսափել. ինչ-որ մի պահ Կոնվենտի դրությունը միանգամայն անհուսալի էր թվում։ Տեղում մնացած դեպուտատները տրտմությամբ իրար էին նայում։ Մի՞թե հրաշք չի կատարվի։ Եվ հրաշքը կատարվեց։

Կոֆինալն իր հաղթանակը չավարտեց։ Նա ջոկատի մի մասը հանձնեց Անրիոյին, իսկ ինքը մնացած մարդկանց հետ ետ գնաց դեպի քաղաքապետարան։ Անրիոն, որը կարծում էր, թե Կոնվենտի նիստը դեռ չի վերսկսվել, արշավեց ուղիղ դեպի Տյուիլրի, մտադիր լինելով գլխավոր դահլիճը փակել և ուղեկալ գնել։ Բայց երբ նա գրնթե բուն նպատակի մոտ էր, նկատեց, որ Կոնվենտի անդամները հավաքվել են և նիստը շարունակվում է։ Այստեղ հանկարծ այդ քաջ մարդուն անհասկանալի մի երկչոտություն պատեց։ Նա ինչ-որ բանից վախեցա՞վ։ Թե՞ նրա, ինչպես և Ռոբեսպիերի վրա դեռ էլի ճնշում էր Կոնվենտի հեղինակությունը։ Համենայն դեպս, իր մարդկանց հրամայելով ետ չմնալ, նա Կոֆինալի ետևից շուռ եկավ դեպի քաղաքապետարան։ Դա տերմիդորի 9-ի երեկոյան և գիշերը ապստամբների առաջնորդների կատարած ամենածանր սխալներից մեկն էր։ Այլևս գերագույն իշխանությունը գրավելու ավելի հարմար առիթ չներկայացավ և ներկայանալ չէր կարող։

Բայց ի՞նչ էր անում Անկաշառելին։ Ինչպե՞ս գասավորվեց նրա անձնական ճակատագիրը այն ժամերին, երբ ապրստամբությունը որոշում էր հեղափոխության ապագան։

Այն ժամանակ, երբ Կոմունայի գլխավոր խորհուրդը դումարվեց, իսկ կապկպված Անրիոն իր ժանդարմների պահպան-

նությանն էր հանձնված, կալանավորված ռոբեսպիերիստներին տեղավորում էին բանտերում։ Մաքսիմիլիանին ուղարկեցին Լյուքսեմբուրգյան բանտը, նրա եղբորը՝ Լաֆորս, Կուտոնին՝ Բուրբ, Սեն-Ժյուստին՝ Էքոսե, Հեբայիին՝ արդարադատության գեպարտամենտական տունը։

Ժամը յոթին մոտ Մաքսիմիլիանը, ժանդարմներով շրջապատված, անցնում էր Սենա գետը։ Նրան զարմացնում էր ճանապարհին տիրող ընդհանուր աշխուժությունը։ Զինված մարդկանց բազմություններ էին գնում, թնդանոթներ էին տանում, տարբեր ուղղություններով հեծյալ խմբեր էին սլանում։ Տուրնոն փողոցում բազմությունն այնքան հոծ էր, որ ժանդարմներն ստիպված եղան զենքով իրենց համար ճանապարհ բացել։ Երբ բանտին մոտեցան, լսվեցին «կեցցե՛ Ռոբեսպիերը» բացականչություններ։

Ժանդարմներն իրենց անհարմար էին զգում և իրենց վիճակի համար վախենում։ Դռնապանին կանչեցին։ Դռնապանը կալանավորին ընդունելուց հրաժարվեց։ Բանտապետին պահանջեցին։ Բայց նա նույնպես Ռոբեսպիերին չընդունեց։ Մունիցիպալիտետի այդտեղ գտնվող մի աստիճանավոր հարձակվեց ժանդարմների վրա.

— Ձեզ պետք է բոլոր ազնիվ քաղաքացիների վրիժառու գատաստանին հանձնել, որ Անկաշառելիի վրա ձեռք բարձրացրիք։ Կորե՛ք այստեղից, քանի դեռ ուշ չէ։

Բազմության գոռոցները սաստկացան։ Ժանդարմները պատրաստ էին իրենց խնամարկյալին թողնել և ճողոպրել, բայց նրանցից ոչ պակաս վշտացած Ռոբեսպիերը պահանջեց իրեն տանել առափնյա Օրֆևր փողոցը՝ ոստիկանական վարչությունը։ Ժանդարմները ենթարկվեցին։ Երբ Մաքսիմիլիանը մոտենում էր մունիցիպալ ոստիկանության վարչությանը, մոտավորապես ժամը ութն էր։

Այստեղ անհրաժեշտ է որոշ պարզաբանումներ անել։ Ինչո՞ւ բանտի պետը հրաժարվեց Անկաշառելիին ընդունելուց և ինչո՞ւ վերջինս դրանից այնպես վշտացավ։

Թեև Կոմունայի գլխավոր խորհուրդը բանտերին նոր կալանավորների ընդունումն արգելող հրամաններ ուղարկեց,

դրանց ենթարկվեցին ոչ բոլոր տեղերում։ Արդյոք Լյուքսեմբուրգյան բանտի պետը իր գործողությունների ժամանակ հենց ա՞յդ հրամանով էր ղեկավարվում։ Դժվար է ասել, որովհետև գրեթե միաժամանակ նա ստացավ բոլորովին համանման գաղտնի մի որոշում... Հասարակական անվտանգության կոմիտեից։ Առաջին հայացքից դա անհասկանալի է թվում։ Ի՞նչն ստիպեց հակառոբեսպիերական կառավարությանն իր սեփական որոշումը խախտող հրաման արձակել։ Ինչպե՞ս բացատրել, որ մեկ ձեռքով Ռոբեսպիերի կալանավորման դեկրետն ստորագրելով, այդ կառավարությունը մյուս ձեռքով անմիջապես նրան բանտ ընդունելն արգելող գրություն գրեց։ Դրա պատճառի մասին կարելի է կռահել միայն։ Ըստ երևույթին, եթե Ռոբեսպիերն ուզում էր վերջին մարտը տալ Հեղափոխական տրիբունալի պատերի ներսում, ապա նրա թշնամիները հենց դրանից էլ վախենում էին։ Իսկ դատարանում նրա ելույթ ունենալուն խանգարելու լավագույն ձևը բանը դատարան չհասցնելն է։ Հարկավոր էր ապացուցել, որ Ռոբեսպիերը խռովարար է, որ նա օրենքին չի ենթարկվում, և այն ժամանակ նրան կարելի էր օրենքից դուրս համարել, այսինքն՝ մահապատժի ենթարկել առանց դատական պրոցեդուրան պահպանելու։ Ահա, հավանարար, հենց այդ պատճառով էլ Հասարակական անվտանգության կոմիտեն հոգ տարավ այն մասին, որ Անկաշառելին բանտ չընդունվեր, որովհետև դա հնարավորություն էր տալիս նրան իշխանություններին չենթարկվելու, այսինքն՝ խռովության մեջ մեղադրելու։ Ահա հենց այդ պատճառով, մյուս կողմից, ինքը Մաքսիմիլիանն էլ Լյուքսեմբուրգյան բանտի մոտ տեղի ունեցած ամեն ինչից այդքան վշտացավ. տեղի ունեցած դեպքի պատճառների մասին դեռ չիմանալով, նա տեսնում էր իր պլանների խորտակումը. նա շատ լավ հասկանում էր, որ եթե թշնամիները իրեն մեղադրեն օրենքին չենթարկվելու մեջ, ինքը կըզրկվի օրինական ճանապարհով արդարանալու ամեն մի հնարավորությունից։ Իսկ նա, չնայած իր ամբողջ հիասթափությանը, մինչև այժմ էլ դեռ էլի պաշտպանության լեգալ միջոցների՝ որպես փրկության միակ հնարավորության հույս ուներ։ Եվ երբ նա տեսավ, որ իրեն բանտ չեն ընդունում, նա

«ավելի լավ» ելք չունենալու պատճառով իրեն հանձնեց մունիցիպալ ոստիկանության ձեռքը, որպեսզի օրենքին ենթարկվելու երևութականություն պահպանվեր։

Կոմունան ապստամբության կենտրոնը դարձավ։ Նրա շուրջը հավաքվում էին շարունակ նորանոր զինված ուժերի։ Ստեղծվեց գործադիր կոմիտե՝ Պեյյանի և Կոֆինալի գլխավորությամբ։ Շուտով քաղաքապետարան եկավ Օգյուստեն Ռոբեսպիերը, որին, ինչպես և Մաքսիմիլիանին, բանտապետը չընդունեց։ Երբ հայտնի դարձավ, որ Անկաշառելին գտնվում է Օրֆևր առափնյա փողոցում, նրա ետևից մարդիկ ուղարկեցին։ Պատգամավորության անունից Լանկեն Մաքսիմիլիանին խնդրեց միանալ Կոմունային և անմիջապես տեղափոխվել քաղաքապետարան։

— Դու այլևս քեզ չես պատկանում,— ասաց Լանկենը։— Դու պետք է քեզ ամբողջովին հայրենիքին նվիրես։

Սակայն Ռոբեսպիերը չէր շտապում հեռանալ ոստիկանության վարչությունից։ Նա ագահարար հարցուփորձ էր անում տեղի ունեցածի մասին, ուշադրությամբ լսում, բայց լսածի նկատմամբ իր վերաբերմունքը ցույց չէր տալիս։ Ներկա գրտնվողներին զարմացնում էին նրա մտազբաղությունը և օտարացածությունը։ Վերջ ի վերջո նա վճռականորեն հրաժարվեց Լանկեի հետ գնալուց, ասելով, որ գերադասում է «մնալ ագմինիստրացիայի ձեռքում»։ Այդպիսի վարմունքը զայրացրեց Լուանդուն Կոֆինալին։ Մոտավորապես ժամը տասին նա անձամբ գնաց Մաքսիմիլիանի հետևից և գրեթե զոռով նրան բերեց։ Այսպես Ռոբեսպիերը հայտնվեց քաղաքապետարանում, Կոմունայի՝ նրան բերկրանքով ողջունող անդամների մեջ։ Նա տխուր ու մտախոհ էր։ Նրա պլանները խորտակվեցին։ Նա կռահում էր այն ամենը, ինչ որ շուտով պետք է կատարվեր։

Երբ Կոնվենտի՝ Տյուիլրիում նիստեր ունեցող անդամները հասկացան, որ տագնապը կեղծ էր և որ իրենց անմիջականորեն ոչինչ չի սպառնում, նրանց բուռն ուրախություն համակեց։ Մարսալիելի Անրիոն, նրանց հանկարծակի բերելու փոխարեն,

որարշավ հեռացավ։ Կոնվենտի վրա ուղղված թնդանոթները հերյուրանք դուրս եկան։ Որոշվեց անհապաղ հակահարձակման պատրաստվել։ Ստեղծեցին պաշտպանության հանձնաժողով։ Հանձնաժողովի նախագահ նշանակեցին Բառասին, նրա օգնականներ՝ Ֆրերոնին, Ռովերին, երկու Բուրդոններին և էլի երկու դեպուտատի։ Հասարակական փրկության կոմիտեն ներկայացրեց մի դեկրետի նախագիծ, որը օրենքից դուրս էր համարում ամեն մեկին, ով կալանավորվելով, կխուսափեր իշխանություններին ենթարկվելուց։ Բոլորի համար պարզ էր, թե դեկրետն ում նկատի ուներ։ Սակայն Վուլանը անհրաժեշտ համարեց այդ ճշտել։ Նա առաջարկեց օրենքից դուրս համարել անհատապես ավագ Ռոբեսպիերին։ Առաջարկությունն ընդունվեց միաձայն։

Բարերը դեպուտատների ուշադրությունը դարձրեց փարիզեցիների հիմնական զանգվածն իրենց կողմը քաշելու անհրաժեշտության վրա։ Սեկցիաները, Կոմունայի կոչին հետևելով, վաղուց արդեն հավաքվել էին։ Բայց նրանք ո՞ւմ կպաշտպանեն։ Վերջին հաշվով դրանից էր կախված ամբողջ գործի հաջողությունը։ Եվ ահա Կոնվենտը որոշում է Բառասին իր համհարզների հետ ուղարկել սեկցիաները։ Նրանք պետք է «բացատրական» աշխատանք կատարեին և իրենց համար կանխապես ապահովեին հնարավոր մեծագույն թվով օկրուգների պաշտպանությունը։

Այսպես ուրեմն, Երեկոյան դեմ լիովին որոշակի դարձան և կազմակերպորեն ձևավորվեցին երկու կենտրոն՝ Կոմունան, ապստամբության գլխավոր օջախը, և Կոնվենտը, հակահեղափոխական տերմիդորական բլոկի կորիզը։ Այն բանից հետո, երբ Կոմունայի գլխավոր գործիչները ծանր սխալ կատարեցին, Կոնվենտը գրավելու փորձ անելուց հրաժարվելով, երբ այդ համեմատաբար հեշտ էր կատարել, ամբողջ պայքարը, բնականաբար, կենտրոնացավ մասսաների, այսինքն՝ սեկցիաների նվաճման վրա։ Այդ խուլ պայքարը գրավեց Երեկոյի մնացած մասը և գիշերվա սկիզբը։

Ռոբեսպիերն իրավացի էր սեկցիաներում տիրող տրամադրությունների մասին պատրանքներ չստեղծելով։ Փարիզե-

ցիների տրամադրությունները շատ տատանվող էին, և որքան շատ ժամանակ էր անցնում, այնքան ավելի մեծ չափով այդ տատանումները ձևավորվում էին ոչ Կոմունայի օգտին։

Այն ժամին, երբ Կոմունայի գլխավոր խորհուրդը ահազանգ խփեց և սեկցիաներին կոչ արեց հեղափոխական երդում տալու, թվում էր, թե նրանց ճնշող մեծամասնությունը կոչին կարձագանքի։ Սակայն անմիջապես Կոնվենտի կողմը կանգնեց սեկցիաների շուրջ մեկ երրորդը. շուտով նրանց թիվն ավելացավ, հասնելով սեկցիաների կեսին։ Բայց մնացած կեսի մեծամասնությունը Կոմունային անմիջական պաշտպանություն ցույց չտվեց, չեզոք կամ տատանվող դիրք գրավելով։ Քաղաքապետարանի գործադիր կոմիտեին անվերապահորեն երդում տվեցին միայն ութ սեկցիա, բայց դրանք էլ ապստամբության նկատմամբ իրենց հավատարմությունը մինչև վերջը չպահպանեցին։

Բուրժուական տարրերի գերակշռություն ունեցող սեկցիաները լիովին պաշտպանեցին Կոնվենտը։ Արհեստավորա-բանվորական զգալի բնակչություն ունեցող սեկցիաներից Կոնվենտի օգտին արտահայտվեցին երկու կենտրոնական՝ Գրավիլյե և Բոն-Նուվել սեկցիաները, որտեղ առաջ առանձնապես ուժեղ էր ժակ Ռուի և Էբերի ազդեցությունը։ Մանրբուրժուական սեկցիաները տատանվում էին և իրենց որոշումները փոխում. դրանցից շատերն սկզբում արտահայտվեցին Կոմունայի օգտին և միայն ներքին զաժան պայքարից հետո անցան Կոնվենտի կողմը։ Փարիզի արվարձանների հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան սեկցիաները, որտեղ շատ բանվորներ կային, մեծ մասամբ չեզոք էին մնում։ Իր չեզոքության մասին հայտարարեց ամենահեղափոխական սեկցիաներից մեկը՝ Քենզ-Վենը։ Բրուտի սեկցիայում պառակտում առաջացավ։ Հարավային արվարձանների շրջանից միայն Աստղադիտարանի սեկցիան Կոմունային հավատարիմ մնաց։

Կոմունան, ասես դիտմամբ, գործում էր դավադիրների օգտին։ Դեռևս տերմիդորի 5-ին (հուլիսի 23-ին) այն հաստատեց աշխատավարձի մաքսիմումի նոր դրույքներ, որոնք արվարձաններում բացահայտ դժգոհություն առաջացրին։ Եվ ահա այն ժամերին, երբ ահազանգը խփեց, ապստամբության

կոչ անելով, քաղաքապետարանի մոտ հավաքվեցին զայրացած բանվորները, իսկ սրմնադիրները գործադուլ էին կազմակերպում։ Այդ պայմաններում գործադիր կոմիտեն անհրաժեշտ օպերատիվություն չցուցաբերեց։ Ճիշտ է, հետագայում մի կոչ ընդունեց, որը նոր դրույքների համար պատասխանատու դարձրեց Բարերին, բայց ժամանակն արդեն բաց էր թողնվել։

Ռոբեսպիերի թշնամիներն այդ բոլոր սխալները ճարպկորեն օգտագործեցին։ Բառասը և մյուս «ագիտատորները» հրահրում էին դժգոհ բանվորներին և մոլորեցնում անվճռական մանր բուրժուաներին։ Նրանք աշխատավորներին խոստանում էին աշխատավարձի մաքսիմումը ոչնչացնել, բուրժուազիային՝ գների մաքսիմումը վերացնել և ատելի դիկտատուրան լիկվիդացնել։ Նրանք Մարատի անունը կրող սեկցիայում հայտարարեցին, որ «նահատակ Մարատի թանկագին աճյունը» անհապաղ պանթեոն կփոխադրվի և որ այդ բանը մինչև այժմ չի արվել «բռնակալ Ռոբեսպիերի ստոր նախանձի հետևանքով»։ Սենտ-Անտուան և Սեն-Մարսո արվարձաններում հմտորեն լուր տարածվեց, թե իբր Ռոբեսպիերը կալանավորվել է միապետական դավադրության համար։ Կեղծ մեղադրանքներ առաջադրեցին նաև ապստամբության մյուս ղեկավարների դեմ։

Եվ ահա, երբ դավադիրները գործում էին ամենայն արագությամբ ու վճռականությամբ, Ռոբեսպիերի կողմնակիցները չդրսևորեցին ո՛չ եռանդ, ո՛չ հաստատակամություն։ Նրանք չկարողացան իրենց հետևից տանել ժողովրդի հիմնական զանգվածները։ Այդ պատճառով դեմոկրատական սեկցիաները, որոնք Կոմունայի կողմն էին, պասսիվություն, ալարկոտություն ցուցաբերեցին։ Սեկցիաների բուրժուական մասի ցայտունորեն արտահայտված ակտիվության առկայությամբ այդ պասսիվությունն էլ ապստամբությունը ձախողեց։ Այդ ամենի համար մեղավորության զգալի բաժինն ընկնում է հենց Անկաշառելիի վրա։

Քաղաքապետարանի գլխավոր դահլիճը լեփ-լեցուն էր։ Աներևակայելի աղմուկ էր բարձրացել։ Գալիս ու գնում էին

ազգային սպայազոտի կապած մունիցիպալային սպաներ, դեսուդեն էին գնում թեատակին թղթապանակով մարդիկ, հայտնվում էին սեկցիաների նոր ներկայացուցիչներ՝ իրենց կոմիտեների հրահանգներով։ Հավաքվել էին մունիցիպալիտետի առնվազն հինգ հարյուր անդամ։ Աշխուժորեն վիճող կենտրոնական խումբը շրջապատել էր Մաքսիմիլիանին։ Նա դունատ էր, դեմքն արտահայտում էր ծայր աստիճանի հոգնածություն ու հոգեկան թախիծ։ Արդեն եկել էին բանտերից ազատված Սեն-Ժյուստը և Լեբան։ Սպասում էին Կուտոնին, սակայն Կուտոնը, հավատարիմ մնալով նախապես ընդունված պլանին, բանտից հեռանալ չէր ուզում։ Հարկ եղավ նրա հետևից մի պատգամավորություն ուղարկել թաղածալից նամակի հետ։

Մաքսիմիլիանը մեքենայաբար հետևում էր այն ամենին, ինչ որ կատարվում էր իր շուրջը։ Նրան թվում էր, թե իրեն ինչ-որ անմիտ խառնակություն է տիրում։ Մարդիկ դեսուդեն են գնում, բղավում, մինչև խռպոտելը դոռում, կոչեր կարդում... Բայց արդյոք ա՞յն է արվում, ինչ որ հարկավոր է եվ, իսկապես, ի՞նչ պետք է անել...

Մոտենում էր կեսգիշերը։ Ամպրոպաբեր ամպերով ծածկված երկինքը անձրև էր խոստանում։ Քաղաքապետարանի շենքի առաջ առաջվա նման կանգնած էին հրետաձիգների և ազգային գվարդիականների հոգնած գումարտակները։ Նրանք այստեղ էին գտնվում երեկոյան ժամը յոթից, սոված, տանջված, վհատված. ոչ ոք չգիտեր, թե էլի որքան ժամանակ պետք է անգործության մատնվել և այդ գիշերն ինչով կվերջանա։ Մոայլ անցուդարձ էին անում սպաները, նայելով սև երկնքին։ Քամի բարձրացավ։ Անխուսափելիորեն անձրև կլինի։

Քաղաքապետարանին հարող փողոցներում սկսեցին երևալ Կոնվենտի էմիսարները՝ ջահակիրների ուղեկցությամբ։ Նրանք, ինչպես և մունիցիպալային սպաները, եռադույն սպայազոտի էին կապել։ Խաչմերուկից խաչմերուկ անցնելով, նրանք բարձրաձայն կարդում էին Կոնվենտի վերջին դեկրետը։

«Ազգային Կոնվենտը, լսելով իր կոմիտեների զեկուցումները, արգելում է առանց կառավարական կոմիտեների համապատասխան թույլտվության քաղաքի դարպասները փակել և սեկցիաները հրավիրել։

Կոնվենտը օրենքից դուրս է հայտարարում վարչական այն անձնավորություններին, ովքեր զինված ուժերին հրամաններ կտան Ազգային Կոնվենտի դեմ դուրս գալու կամ կխրախուսեն նրա դեկրետների չկատարումը։

Այն նմանապես օրենքից դուրս է հայտարարում այն անձանց, որոնք կալանավորման դեկրետի ներգործության տակ լինելով, դիմադրում են օրենքին կամ խուսափում այն կատարելուց»։

Այդ դեկրետը հիմնովին շփոթեցրեց Ռոբեսպիերին պաշտպանող կամ նրան կարեկցող բոլոր մարդկանց։ Փարիզի քիչ առաջ լեփ-լեցուն փողոցները արագորեն ամայացան։ Ուշացած անցորդներն աշխատում էին ավելի շուտ հասնել իրենց բնակարանները։ Գրևյան հրապարակի մատույցներում հավաքված հայրենասերների բազմությունները նկատելիորեն նոսրանում էին։ Շատերը զենքը վայր էին դնում։ Կոմունայի ներկայացուցիչները Կոնվենտի էմիսարներին կալանավորեցին, բայց դա գործի ընդհանուր դրությունը փոխել չէր կարող։

Կուտոնին քաղաքապետարան բերեցին գիշերվա մոտավորապես ժամը մեկին միայն։ Մաքսիմիլիանը բերկրանքով նրան ընդառաջ նետվեց և իր գիրկն առավ։ Այժմ, վերջապես, բոլորը հավաքվեցին։ Հարկավոր էր ինչ-որ բան որոշել։ Հինգ ռոբեսպիերիստներ մեկուսացան գլխավոր դահլիճին հարևան մի սենյակում։

— Պետք է իսկույն բանակին ուղղված մի կոչ գրել,— ասաց Կուտոնը, հենց որ դուռը փակվեց։

— Ո՞ւմ անունից,— հարցրեց Անկաշառելին։

— Կոնվենտի անունից,— պատասխանեց Կուտոնը։— Մի՞թե այն հենց այնտեղ չէ, որտեղ և մենք ենք։ Մնացածները միայն դավադիրներ են. նրանց կարելի կլինի հեշտությամբ ցրել։

Ռոբեսպիերը մտածմունքի մեջ ընկավ։ Նրա դեմքին կասկած հայտնվեց։ Նա իր եղբոր ականջին ինչ-որ բան շշնջաց, հետո ասաց.

— Իմ կարծիքով, պետք է գրել ֆրանսիական ժողովրդի անունից։

Այսպես ուրեմն, Անկաշառելին, վերջապես, վճռեց Կոնվենտի հետ կապերը լիովին խզել, լեդալ միջոցներից լիովին հրաժարվել։ Շատ ուշ է։

Հարևան դահլիճից գոռոցներ լսվեցին։ Ռոբեսպիերը և նրա բարեկամները իրենց մեկուսատեղից դուրս եկան իմանալու, թե բանն ինչումն է։ Պարզվեց, որ Պեյյանի գլխում անսրամիտ մի միտք է ծագել Կոնվենտի՝ էմիսարներից խլած դեկրետը բարձրաձայն կարդալու։ Նա ուզում էր դեկրետը ծաղրել։ Բայց հակառակ բան կատարվեց։ Երբ ներկա գտնվողներն իմացան, որ իրենց օրենքից դուրս են հայտարարել, նրանք սարսափեցին։ Բոլորը հասկացան, որ իրենց առանց դատի մահ է սպասում։ Իրենց մտադրությունները չթաքցնելով, շատերը նետվեցին դեպի դռները։

Ներս մտավ Կոֆինալը։ Նա հայտնեց, որ հրետաձիգները և ազգային գվարդիականները սկսեցին Գրևյան հրապարակից ցրվել՝ նախ մեկ-մեկ, հետո խմբերով։ Որոշվեց շենքի ճակատը լամպերի պայծառ լույսով լուսավորել՝ զինվորներին ավելի լավ հսկելու։ Եվ ահա իսկական հրավառություն սարքեցին։ Այդպիսի մի ողբերգական դիշեր այդ տոնական լուսավորությունը տարօրինակ տեսարան էր ներկայացնում...

Պոլ Բառասը ժպտում էր։ Այո, գոհունակ ժպիտի այնպիսի մի լայն ծամածռություն կնճռոտեց նրա պարարտ փափկասուն դեմքը, որ փոքրիկ ջրագույն աչքերը բոլորովին փակվեցին։ Հարկա՞վ։ Նա հենց հիմա Գրևյան հրապարակում գրտնվող իր լրտեսներից նոր լուրեր ստացավ։ Ամեն ինչ շատ սահուն էր ընթանում. ցրվում էին հոգնած և Կոնվենտի էմիսարների կողմից մոլորեցված վերջին հրետաձիգները։ Լրտեսը պատմում էր, թե ինչպես Անրիոն, քաղաքապետարանից երկու համհարզների ուղեկցությամբ դուրս վազելով, զուր հայհոյում էր, դորգոռում, աղաղակում... Այդ ամենն էլ պետք էր սպասել։ Իդեալիստնե՛ր, բարեհոգի երազողնե՛ր։ Մինչդեռ նրանք փալինքներ էին թափում, կասկածելով և չիմանալով, թե գործը որ կողմից սկսել, նա՝ Բառասը և նրա սիրելի բարեկամները ոչ մի բոպե չէին կորցնում։ Իզուր չէ, որ նրանք այսօր

մինչև քափ ու քրտինք կտրելը աշխատեցին։ Զգուշությունը, ահաբեկումը, շողոքորթությունը, խաբեությունը՝ այդ ամենը գործի դրվեց։ Եվ ահա արդյունքը՝ խռովարարները նրա բռի մեջ են։ Դեհ, խռովարարները ի՛նչ։ Խռովարարների մասին խոսելու հարկ էլ չկա։ Այժմ նրանք գիակնե՛ր են։ Նրա և նրա բարեկամների՝ Տալլենի ու Ֆրերոնի ձեռքերում է ամբողջ Կոնվենտը։ Ա՜յ թե ճարպկորեն սարքվեց այդ գործը։ Այդ բոլոր հիմարները՝ Կոլո դ'Էրբուան, Բիլո-Վարենը, Վադյեն և ուրիշներ, հրապուրվեցին, ինչպես ճանճերը կպչուն թղթով։ Նրանք Անկաշառելիին դավաճանեցին, կարծելով, թե բարձր պաշտոններ կգրավեն, բայց իրականում նրանք բոլորն էլ նույնպես շուտով կսկսեն զամբյուղի մեջ թքել՝ նրանց արատորեն հաշվից դուրս կդցեն։ Եվ այն ժամանակ՝ քե՜ֆ արա, հարուստ մարդ։ Յակոբինական ամբողջ անհեթեթությունը գրողի ծոցը կգնա։ Ռոբեսպիերի և նրա բոլոր առաքինություններին համար ոչ ոք անգամ մի քուռ կոպեկ չի տա, իսկ նա՝ Բառասը, Կոնվենտի այսօրվա փրկիչն առաջին մարդը կդառնա. նա չափից շատ փող ունի, նա յակոբինականների ժամանակ կարողացավ բավականաչափ կողոպտել, իսկ այժմ նաև իշխանություն կունենա։ Փող և իշխանություն՝ դա ամեն ի՛նչ է։

Բառասը շուտ եկավ։ Ետևից նրան էր մոտենում Լեոնար Բուրդոնը։

— Արդեն ժամը երկուսի կեսն է,— ասաց Բուրդոնը։— Պետք է կոմպանիան ավարտել։

Բառասի պլանը պատրաստ էր։ Նա իր մարդկանց երկու ջոկատի բաժանեց։ Մեկի ղեկավար նշանակեց Բուրդոնին, այդ ջոկատը պետք է գնար առափնյա փողոցով և քաղաքապետարանին մոտենար Գրևյան հրապարակի կողմից։ Գործը հեշտանում էր նրանով, որ դավաճանության շնորհիվ Բուրդոնը դիտեր Կոմունայի զորքերի նշանաբանը։ Բառասն իր համար ընտրեց,—ինչի՞ համար ռիսկի դիմել,—մի ուրիշ՝ Սենտ-Օնորե, Սեն-Դենի և Սեն-Մարտեն փողոցների երկայնությամբ ձգվող շրջանցիկ ճանապարհը, որոշելով քաղաքապետարանին մոտենալ թիկունքից այն ժամանակ, երբ արդեն ամեն ինչ վերջացած կլինի։

Մունիցիպալիտետի անդամները և սեկցիաների ներկայացուցիչները հեռանում էին քաղաքապետարանից։ Մեկնեց հրահանգներ ստանալու համար եկած յակոբինական պատգամավորությունը։ Կորստի մատնված դեպուտատները տենդորեն աշխատում էին։ Լեբան Սաբլոնի ճամբարի ռազմական դպրոցին ուղերձ էր գրում։ Սեն-Ժյուստը և Կուտոնը միասին խմբագրում էին սեկցիաներին ուղղված նոր կոչերը։ Օդյուստեն Ռոբեսպիերը, Պեյյանը և Կոֆինալը քննարկում էին Կոնվենտի վրա հարձակվելու հնարավորությունը։ Մաքսիմիլիանը, խոր բազկաթոռի մեջ նստած, արագ կարդում էր իրեն տրվող ձեռագրերը և նշումներ անում։ Ահա, վերջապես, կազմվեց Պիկ սեկցիային ուղղված կոչի մաքրագիրը։ Գործադիր կոմիտեի անդամներն այն ստորագրում են։ Մաքսիմիլիանը մոտենում է լուսամուտին և նայում հրապարակին։ Գիշերվա ժամը երկուսն է։ Պայծառ լուսավորություն է։ Ասված իմ, քաղաքապետարանի առաջ որքա՞ն քիչ պաշտպաններ են մնացել։ Բայց նրանք էլ են փախչում։ Ընկնում են անձրևի առաջին կաթիլները։ Սակայն այդ ի՞նչ է այնտեղ, աջ կողմում։ Մի մեծ ջոկատ մոտենում է գլխավոր գոռանը։ Լսվում են «կեցցե՛ Ռոբեսպիերը» բացականչություններ։ Ովքե՞ր են նրանք։ Մի՞թե յուրայինները վերադառնում են։ Կամ, դուցե... Մաքսիմիլիանն ատամները սեղմում է և իր ոսկեգույն շալվարի դրպանում ատրճանակը շոշափում։ Նրա ետևից լսվում է Կոֆինալի ձայնը.

— Ռոբեսպիեր, ստորագրիր, քո հերթն է։

Մաքսիմիլիանը շուռ է գալիս։ Պեյյանը, Լերեբուրը և մյուսներն արդեն կոչն ստորագրել են։ Նրան գրիչ են տալիս։ Նա աչքստն աչքի է անցկացնում, դրչածայրը թանաքի մեջ թաթախում և իր անվան առաջին երկու տառը գանգաղորեն դրում։ Սանդուղքի վրայից լսվող սաստիկ աղմուկը նրան, ինչպես և մյուսներին ստիպում է նայել դռանը։ Լսվում է շատ ոտքերի դոփյուն... Մարտի աղմուկ... Դոփյունը մոտենում է։ Դուռը շրխկոցով լայն բացվում է, և շեմքին երևում է քրտնաթաթախ Լեոնար Բուրդոնը։ Նա սրի ծայրով ժանդարմներին ցույց է տալիս այն մարդկանց, որոնց պետք է առաջին հերթին բռնել։ Գրեթե միաժամանակ լսվում է երկու կրակոց։ Մաքսիմիլիա-

նի ստորագրությունն անավարտ է մնում. նրա անվան առաջին երկու դեռ չչորացած տառերի կողքին ընկնում է ալ ադյան մի կաթիլ...

...Մեռած Լեբան լողում էր սեփական արյան մեջ՝ նա ինքնասպանություն գործեց: Մաքսիմիլիանը ընկած էր՝ ծնոտը գընդակից խոցված: Արդյոք նա նույնպե՞ս ուզում էր ինքնասպանություն գործել: Թե՞ նրան վիրավորեց Բուրդոնի ժանդարմը... Օգյուստենը լուսամուտից դուրս նետվեց. նրան վերցրին կիսամեռ վիճակում: Սեն-Ժյուստը և Դյուման թշնամիներին հանձնվեցին առանց դիմադրության: Անրիոյին բռնեցին քաղաքապետարանի բակում: Կոֆինալին և մի քանի ուրիշների հաջողվեց թաքնվել: Նրանք փորձեցին Կուտոնին դուրս տանել, բայց հաջողություն չունեցան. գլխից վիրավորված Կուտոնին Բուրդոնի մարդիկ նրանց ձեռքից խլեցին:

Երբ Բառասը մոտեցավ քաղաքապետարանին, ամեն ինչ, ինչպես և նա սպասում էր, վերջացել էր: Մնում էր արյունը լվանալ, վիրավորներին հավաքել և մեռածներին տանել: Մոտավորապես ժամը երեքն էր: Լույսը բացվում էր: Տարափի փոխված անձրևը շռռում էր սալահատակին, և լճակներում արտացոլվում էր քաղաքապետարանի ավելորդ հրավառությունը: Բառասը բոլոր դռները կողպեց, իսկ բանալիները տիրոջ պես գրպանը դրեց: Ոչ, նա հոգնածություն չէր զգում: Նրա սիրտն ուրախ էր այն գիտակցությունից, որ զուր չէր աշխատել: Եվ իսկապես, արդյոք կարելի՞ է հպարտ գոհունակություն չզգալ: Քանի՞-քանի փառապանծ քաղաքագետներ ուզում էին հեղափոխությունը վերջացնել: Նրանք ունեին խելք, տաղանդ, պերճախոսության ընդունակություն, իսկ նրանց դրլուխները գիլյոտինի դանակի տակ ընկան: Նա՝ Պոլ Բառասը, որին միջակ խելքի տեր մարդ և երկրորդական դերծիչ էին համարում, կարողացավ կատարել այն, որի համար անընդունակ եղան այդ բոլոր խելքի տոպրակները. նա հեղափոխությունը վերջացրեց և նրա բանալիներն իր գրպանը դրեց: Դեհ, մի՞թե նա փառք ու պատվի արժանի մարդ չէր...

Իսկ արյունաշաղախ և գիտակցությունը կորցրած Անկաշառելիին շտապեցին փոխադրել Կոնվենտ։ Նրան զգուշությամբ տանում էին ժողովրդից եկած մի քանի մարդ։ Ճանապարհը երկար էր ու դժվարին. ոտքերի տակ ցեխը շրմփում էր, հագուստը թրջվեց։ Վերջապես երևաց Տյուիլրիի պալատի ուրվապատկերը։ Ահա և Կոնվենտը։ Սանդուղքի տակ հարկ եղավ կանգ առնել. կարծես թե այստեղ հավաքվել էր գրեթե ամբողջ Փարիզը։ Քնաթաթախ բուրժուաները չզլացան կեսգիշերին վեր կենալ՝ տապալված թշնամուն տեսնելուց բավականություն ստանալու։

— Նայեցե՛ք, ինքը թագավո՛րն է։ Ինչպե՞ս է, լա՞վ է։

— Ահա նա՛, Կեսա՛րը։

— Եթե դա Կեսարի մարմինն է, ապա ինչո՞ւ այն մաշկագերծարան չեն հետում...

Հռհռում էին, ձեռքով ցույց տալիս։ Նա, իր բախտից, ոչինչ չէր լսում։

Կոնվենտի նախագահը դիմեց Ժողովին։

— Սրիկա Ռոբեսպիերն այստեղ է։ Արդյոք նրան տեսնել չե՞ք ուզում։

— Ո՛չ,— ծափահարությունների տակ բղավեց Տյուրիոն։— Բոնապետի դիակը կարող է ժանտախտով վարակված լինել միայն։

Նրան բերեցին Հասարակական անվտանգության կոմիտեի սենյակներից մեկը։ Դրեցին սեղանին. լույսի դիմաց, իսկ գլխատակը խոթեցին բորբոսնած հացի կտորներով փայտե մի արկղ։

Նա պառկած է, ամբողջ հասակով մեկ ձգված, առանց գլխարկի և առանց վաքոյի։ Նրա բաց դույնի հագուստը պատառոտված է և արյունաշաղախ. գուլպաները ոտքերից ցած են իջել։ Նա չի շարժվում, բայց շնչում է հաճախակի։ Մերթ ընդ մերթ ձեռքն անգիտակցաբար ձգվում է դեպի ծոծրակը. դեմքի մկանները կծկվում են, արյունոտված շուրթերը ցնցվում։ Բայց այդ խոշտանգված շուրթերից ոչ մի տնքոց դուրս չի գալիս։ Ներս են գալիս նորանոր տանջողներ՝ «բոնապետին» նայելու։ Նրանց դեմքերը փայլում են դաժան ցնծությունից։

— Թագավոր, ձերդ մեծություն, դուք տանջվո՞ւմ եք։

Նա աչքերը բաց է անում և նայում խոսողներին։

— Դու համրացե՞լ ես, ինչ է...

Նա միայն սևեռուն նայում է նրանց։

Ներս են բերում Սեն-Ժյուստին, Դյումային և Պեյյանին։ Նրանք անցնում են սենյակի խորքը և նստում լուսամուտի մոտ։ Ներկա գտնվող մարդկանցից մեկը գոռում է Ռոբեսպիերին շրջապատող հետաքրքրվող անձանց.

— Մի կողմ քաշվե՛ք։ Թող նրանք տեսնեն, թե ինչպես իրենց թագավորը քնած է սեղանին, ճիշտ ինչպես հասարակ մի մահկանացու։

Սեն-Ժյուստը բարձրացնում է գլուխը։ Հոգեկան տառապանքը այլանդակում է նրա դեմքը։ Նա սրտի խոր կսկիծով է նայում այն մարդուն, որը եղել է իր ուսուցիչը և ամենամոտիկ բարեկամը։ Այդ հայացքն այնպես արտահայտիչ է, էրիտասարդ դեմքն այնպես գեղեցիկ, որ տանջողները մի բոպե սսկվում են։

Սեն-Ժյուստի և Ռոբեսպիերի հայացքները հանդիպում են։ Նրանց խոսքեր հարկավոր չեն։ Նրանք միմյանց հասկանում են։ Ռոբեսպիերն աչքերը հեռացնում է։ Սեն-Ժյուստը հետևում է նրան։ Անկաշառելին նայում է սահմանադրության՝ լուսամուտի դիմացի պատից կախված տեքստին։ Սեն-Ժյուստը նույնպես նայում է այդ տեղին։

— Բայց չէ՞ որ դա մեր գործն է...— շշնջում են նրա անարյուն շուրթերը։— Եվ հեղափոխական կառավարությունը նույնպես...

Առավոտյան ժամը վեցն է։ Արդեն բոլորովին լույս է։ Անձրևը դադարել է։ Արագ, զինվորական քայլով սենյակ է մտնում Էլի Լաքոսթը։ Նա հրամայում է կալանավորներին տանել Կոնսյերժերի։ Հետո դիմելով իր հետ միասին եկած վիրաբույժին, ասում է.

— Մի լավ կապեք Ռոբեսպիերի վերքը, որ նրան կարելի լինի պատժի ենթարկել։

Այն ժամանակ, երբ վիրաբույժը Մաքսիմիլիանի ճակատին վիրակապ էր դնում, ներկա գտնվողներից մեկն ասաց.

— Տեսե՞ք։ Նորին մեծության գլխին թաց են դնում։

Ռոբեսպիերը իրեն վիրավորողին նայեց հանգիստ, մտասույզ և սեռուն հայացքով։

Միակ խոսքերը, որ նա ասաց, շատերի համար տարօրինակ թվացին։ Երբ հետաքրքրվող մարդկանցից մեկը, տեսնելով, որ նա բոլորովին չի կարողանում կռանալ՝ գուլպաները վեր քաշելու, նրան օգնեց, Ռոբեսպիերը կամաց ասաց.

— Շնորհակալ եմ ձ ե զ ա ն ի ց, պ ա ր օ ն։

Որոշեցին, որ նա խելագարվում է. արդեն վաղուց մարդիկ միմյանց «դուք»-ով չէին դիմում և թագավորների ժամանակը հիշեցնող «պարոն» բառը չէին գործածում։ Ոչ, Անկաշառելիի խելքը գլխին էր, և նա պարզորեն արտահայտեց այն, ինչ մտածում էր։ Այդ խոսքերով նա ուզում էր ասել, որ հեղափոխությունը և հանրապետությունն այլևս գոյություն չունեն, որ կյանքը վերադարձավ հին ռեժիմին և անցած տարիների բոլոր նվաճումները անդարձ կորան։

Նրանց մահապատժի ենթարկեցին առանց դատելու, երեկոյան ժամը վեցին։ Ռոբեսպիերի հետ միասին մահը դիմավորեցին նրա քսաներկու ամենամոտիկ զինակիցները։ Հաջորդ օրը գիլյոտինն ստացավ ևս յոթանասուն զոհ՝ Կոմունայի անդամներից։ Տերմիդորի դրաման ավարտվեց։ Սկսվում էր տերմիդորական բուրժուազիայի արյունոտ վակխանալիան։

ՄԱՀ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

(Վերջաբանի փոխարեն)

Հաղթողներն շտապեցին իրացնել իրենց հաղթանակի արդյունքները։ Ճիշտ է, սկզբնական շրջանում «նորահարուստների» առաջնորդներն ստիպված եղան հաշվի առնել մոտ անցյալի իրենց դաշնակիցներին՝ ձախ տերմիդորականներին։ Բայց դա երկար չշարունակվեց։ Նորոգ Կոնվենտը վերացրեց ժողովրդի բոլոր նվաճումները։ Ոչնչացրին հեղափոխական կառավարությունը։ Ջախջախեցին Յակոբինյան ակումբը։ Վերացրին մաքսիմումը։

Ռոբեսպիերի թշնամիները խոստացել էին բանտերը բացել և տեռորը վերացնել։ Բայց բանտերը բացվեցին ժողովրդի թշնամիներին ազատելու համար միայն, իսկ տեռորը հարձակվեց նրա բարեկամների գլուխների վրա[1]։ Աղետալի կերպով իջավ կենսամակարդակը։ Եթե մաքսիմումի վերացումը բուրժուազիային բարօրություն տվեց, ապա բանվորների համար այն միայն քաղց ու ծայրահեղ աղքատություն բերեց։ Սոցիալական հակադրությունները հրեշավոր չափերի հասան։ Մինչդեռ բուրժուական Փարիզը լողում էր հին կարգի ժամանակները հիշեցնող շքեղության մեջ, իսկ Բառասի և Թերեզա Տալլիենի առանձնատներում շքեղ պարահանդեսներին փոխարինում էին խրախճանքներն ու գինարբուքները, բանվորական արվարձանները քաղցից մեռնում էին։

---

[1] *Հեղաշրջումից անմիջապես հետո կալանավորվեցին և բանտերը նետվեցին Մաքսիմիլիանի բոլոր մերձավորները՝ նրա ընակարանատեր Դյուպլե ամուսինները (տերմիդորի 9-ին), նրանց որդին (նույն օրը), ավագ դուստրերը (տերմիդորի 19-ին), ինչպես նաև տրիբունի քույրը (տերմիդորի 13-ին)։ Նրանք բոլորը տարբեր ճակատագիր ունեցան։ Քաղաքացուհի Դյուպլեն մեռավ բանտում։ Մորիս Դյուպլեն դատարանով արդարացվեց մոտավորապես մեկ տարի հետո. հետագայում նա որդու հետ միասին մասնակցեց Բաբյոֆի դավադրությանը, նորից կալանավորվեց և մեռավ 1820 թվականին։ Դյուպլեի զավակները բանտարկված կարճ ժամանակ մնացին։ Էլեոնորան՝ «Ռոբեսպիերի հարսնացուն», որն իր բարեկամից գրեթե քառասուն տարի ավելի ապրեց, իր ամբողջ կյանքում հավատարիմ մնաց նրա հիշատակին և նրա համար սուգ էր պահում։ Շարլոտա Ռոբեսպիերը ապրեց մինչև 1834 թվականը։ Հենց այդ տարում հրատարակվեցին նրա՝ մեծ եղբորը նվիրված և մահից քիչ առաջ գրած «Հուշերը»։*

Այժմ ժողովուրդը Անկաշառելիին ավելի ու ավելի հաճախ էր հիշում։ 1795 թվականի գարնանը՝ ժերմինալին և պրերիալին, ժողովուրդը երկու անգամ փորձ արեց զենքը ձեռքին վերադարձնել կորցրածը։ «Հա՛ց և 1793 թվականի սահմանադրությո՛ւն», բացականչում էին ապստամբները։ Բայց հաղթել նրանց չհաջողվեց։ Ժողովրդին ջախջախելով ու զինաթափ անելով, ռեակցիոն բուրժուազիան դեն նետեց քողարկման վերջին հնոքերը։ Ջախերի պարագլուխներին, բոլոր նրանց, ովքեր իրենց այնպես ակտիվորեն օգնում էին տերմիդորական հեղաշրջումը կատարելու, մահվան դատապարտեցին, Ֆրանսիայից արտաքսեցին կամ ուղարկեցին «չոր գիլյոտինման»՝ Գվիանա, հավիտենական աքսորի։

Նրանց մեծամասնությունը մեռավ օտար երկրներում։ Թվում էր, թե ճակատագիրը նրանցից դավաճանության համար վրեժ լուծեց։ Արդյոք նրանք գոնե հասկացա՞ն, որ ճակատագրական սխալ են կատարել։ Արդարությունը պահանջում է այս հարցին դրականորեն պատասխանել։

Նենգ Բարերը, որը չնայած իր բոլոր խորամանկություններին ու հնարքներին, աքսորվելուց չազատվեց, գրում էր, որ տերմիդորի 9-ի հակահեղափոխական հեղաշրջումը մեծ մոլորության հետևանք է համարում։ Նա ուղղակի հաստատում էր, որ Մաքսիմիլիան Ռոբեսպիերին հեղափոխության ամենաականավոր գործիչների թվին է դասում։

Կոլո դ'Էրբուան և Բիլո-Վարենը իրենց կյանքն ավարտեցին հեռավոր Ամերիկայում։ Կրակոտ Կոլոն իր խորհրդածությունների հետքեր չթողեց՝ մահը նրան շատ արագորեն տարավ։ Իսկ ինչ վերաբերում է Բիլո-Վարենին, ապա այդ անողոք հանրապետականը լիովին վերաիմաստավորեց իր անցյալ վարմունքը և խոստովանեց, որ այն զգալի չափով անձնական ատելության արդյունք է եղել։

«... Այդ օրերին մեր տարաձայնությունները,— գրում էր նա,— խախտեցին հեղափոխական սիստեմի միասնությունը... Այո, պուրիտանական անբասիր հեղափոխությունը տերմիդորի 9-ին կորավ։ Հետագայում ես քանի՞-քանի անգամ ողբում էի, որ վարվել եմ չարության թելադրանքով...»։

Եվ ծերացող Բիլոն ինքնաձաղկման բռնկման պահին խրդճում էր արդեն ոչ միայն Ռոբեսպիերին, այլ նույնիսկ Դանտոնին ու Դեմուլենին, որոնց առաջինը մահվան մատնեց։

Նախկին հայացքներից հրաժարվեց նաև Ամարը։

— Ես հպարտանում եմ նրանով, որ մասնակցում էի Ռոբեսպիերի աշխատանքներին,— ասում էր նա։— Ժողովուրդն այն ժամանակ հաց ուներ։ Նրան ուզում են որպես արյունռուշտ մարդ ներկայացնել, բայց այդ մասին սերունդները կդատեն։

Չարանենգ Վադյեն մյուսներից ավելի անդրդվելի էր։ Ճիշտ է, նա ևս տերմիդորի 9-ը ճակատագրական օր էր համարում, բայց, ըստ երևույթին, նա առանձնապես երկար ժամանակ պահպանեց Անկաշառելիի նկատմամբ իր շարությունը։ Սակայն նրա խիղճն էլ սկսեց խոսել. «Ես զաղրելի արարք կատարեցի,— մեռնելուց քիչ առաջ խոստովանեց կամակոր ծերունին։— Ես զղջում եմ, որ Ռոբեսպիերին ինչպես հարկն է չըգնահատեցի և հարգարժան քաղաքացուն բռնապետ համարեցի...»։

Այսպես էին խոսում անցյալի այդ բալոր մարդիկ։ Բայց դրանից ի՞նչ օգուտ։ Նրանք կարող էին զղջալ ու ողբալ, բայց ոչինչ փոխել չէին կարող։ Այնինչ Ռոբեսպիերի զցած սերմերը ծիլեր էին տալիս։ Նրա գործը զուր չկորավ։ Մասսաներն ավելի ու ավելի խորն էին իմաստավորում վերջին տարիների դեպքերը։ «Հենց շարունակ ափսոսանքներ են լսվում Ռոբեսպիերի մասին,— հայտնում էին խուզարկու ոստիկանները։— Խոսում են նրա օրոք եղած առատության և այժմյան կառավարության ժամանակ գոյություն ունեցող ծայրահեղ աղքատության մասին»։ Այդ տեղի էր ունենում այն օրերին, երբ տերմիդորական Կոնվենտին փոխարինեց բուրժուական Դիրեկտորիան՝ Բառասի գլխավորությամբ, երբ հասունանում էր հեղափոխական այն դավադրությունը, որը պատմության մեջ ստացավ «Հավասարների դավադրություն» անունը։

«Հավասարների դավադրությունը», որը կազմակերպեց հռոմեացի տրիբուն Կայոս Գրակքոսի անունն ընդունած երիտասարդ հայրենասեր Ֆրանսուա Նոյել Բաբյոֆը, ֆրանսիա-

կան հեղափոխության դեմոկրատական գաղափարների զարգացման մի նոր փուլ էր ներկայացնում։

Բաբյոֆականների ծրագրի կենտրոնական մասը դարձավ ուսմունքը հավասարության, փաստական հավասարության մասին, որը պետք է մասնավոր սեփականության ոչնչացման արդյունք լիներ։ Յակոբինականներից և նույնիսկ «կատաղիներից»՝ մանր սեփականության պաշտպաններից ըզգալիորեն ավելի հեռու գնալով, Բաբյոֆը կարծում էր, որ հեղափոխությունը պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ հանրապետությունում չի ստեղծվել «ազգային մեծ կոմունա»՝ բոլոր ունեցվածքների ընդհանրության հիման վրա միասնաբար աշխատող հավասար, ազատ մարդկանց ընկերություն։ Բաբյոֆը և նրա զինակիցները մանրամասնորեն մշակեցին այդ ընկերության կազմակերպման պլանը, ընկերություն, որը, ինչպես նրանք կարծում էին, պետք է շուտով ստեղծվեր դավադիրների նեղ շրջանի բարձրացրած՝ մասսաների հաջող ապստամբության հետևանքով։

Թեև «հավասարների» շարժումը մասսայական ելույթ չդարձած մի դավադրություն մնաց, թեև բաբյոֆականներն իրենց գաղափարների իրականացումը չէին կապում պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ, որի մասին շատ աղոտ պատկերացում ունեին, թեև, վերջապես, նրանց կոմունիզմը պրիմիտիվ, առավելապես ագրարային բնույթ ուներ, այնուամենայնիվ ապագայի այդ նոր ազդարարների դերը բացառիկորեն մեծ էր։

«... Այդ շարժումը,— գրում էր Կ. Մարքսը,— կյանքի կոչեց կոմունիստական գաղափարը, որը 1830 թվականի հեղափոխությունից հետո նորից Ֆրանսիա մտցրեց Բաբյոֆի բարեկամ Բուոնարոտին։ Հենց հետևողականորեն մշակված այդ գաղափարն էլ համաշխարհային նոր հասարակարգի գաղափարն է»[1], այսինքն՝ կոմունիզմի գաղափարը։

«Հավասարների դավադրության» մի հատկանիշը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում։ Բաբյոֆը, Ռոբեսպիերին խորապես գնահատելով, նրա անդրդվելի սկզբունքայնության առաջ գլուխ խոնարհելով և նրա շատ համոզմունքներ բաժա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, *Երկեր.*, հ. III, էջ 147.

նելով, իրեն Անկաշառելիի սկսած գործի անմիջական շարունակողն էր համարում։

IV թվականի ֆլորեալի 21-ին (1796 թվականի մայիսի 10-ին) փոքրիկ խնդուկ մի սենյակում երկու մարդ ձեռագրեր էին պրպտում։

Բաբյոֆը մտասույզ կարդում էր հին թղթապանակում պահվող մի մեծ կապոցից հանած ինչ-որ թերթիկներ։

— Ֆիլի՛պ,— հանկարծ բացականչեց նա։— Տե՛ս, ես ինչ գտա։

Բուոնարոտին կռացավ Բաբյոֆի ուսի վրա։ Նա տեսավ մանր ձեռագրով գրված, դեղնած մի թերթ թուղթ։

— Փորձիր կռահել, թե սա ի՛նչ է։

Բաբյոֆը քմծիծաղ տվեց։— Սա իմ առաջին հայտնագործությունն է 1789 թվականին։ Այն ժամանակ իմ գլխում հենց նոր էին հավասարության մասին մտքեր ծագում։ Եվ ես Անկաշառելիին հայտնագործեցի...

Ֆիլիպը հարցականորեն նայեց Բաբյոֆի ժպտացող աչքերին։

— Այո։ Այս իմ հայտնագործությունն է։— Այս նամակը ես ուզում էի ուղարկել Լոնդոն։ Այստեղ արտագրված է 1789 թվականի հոկտեմբերի 22-ին ընտրական ցենզի դեմ Ռոբեսպիերի արտասանած ճառի մի մասը։ Հիշում եմ իմ զարմանքն ու ցնծությունը... Ինչպիսի՜ հմտությամբ էր այն ժամանակ այդ բոլորի համար դեռ անհայտ հեռուորը ջախջախում Սահմանադիր ժողովի պարոններին։ Եվ ինչպիսի՜ երկաթե տրամաբանությամբ էր ջարդուփշուր անում նրանց բոլոր հնարքները...

Բաբյոֆը մտածմունքի մեջ ընկավ և լռեց։ Լուռ էր նաև Բուոնարոտին։

— Դու Ռոբեսպիերի նկատմամբ իրավացի չէիր,— ասաց վերջապես Ֆիլիպը։

— Իրավացի չէի՞,— Բաբյոֆը սուր նայեց զրուցակցին։— Օ՜հ, ես այն ժամանակ նրա նկատմամբ խորին պատկառանք էի տածում։ Ես հիշում եմ իմ մտքերն ու զգացմունքները։ Երբ ես լսում էի նրան կամ կարդում նրա ելույթների տեքստերը, ինձ թվում էր, թե ես նայում եմ սեփական հոգուս խոր-

քը։ Նա հիանալիորեն կարողանում էր ձևակերպել այն, ինչի մասին մենք բոլորս մտածում էինք։ Այն ժամանակ ես կատորագրեի նրա յուրաքանչյուր արտահայտության տակ... Իսկ հիշո՞ւմ ես,— ջերմորեն շարունակում էր Բաբյոֆը,—հիշո՞ւմ ես, թե մենք ինչպիսի խանդավառությամբ ընդունեցինք նրա Իրավունքների դեկլարացիան։ «Սեփականության իրավունքը չպետք է վնաս պատճառի ուրիշների, մեզ նմանների գոյությանը»։ Ո՞վ կարող էր այս ավելի լավ ձևակերպել։ Արդյոք սրանից հավասարության միտքը չէ՞ր հետևում։ Այո, ես վստահությամբ կարող եմ ասել, որ Ռոբեսպիերն ավելի, քան որևէ մեկ ուրիշը, աջակցեց այդ գաղափարի զարգացմանը։ Ճիշտ է, նա պնդում էր, թե ունեցվածքների լիակատար հավասարությունն անհնարին է... Եվ այնուամենայնիվ, նա մեր գործի վերջնական հաղթանակը գործնականապես շատ ավելի մեծ չափով մոտեցրեց, քան այդ բոլոր գետնաթզուկ շաղակրատները միասին վերցրած...

— Դու նկատի ունես էբերտիստների՞ն։

— Այո, նրանց հետ միասին նաև շատ ուրիշների։ Անկաշառելին ճիշտ արեց, որ նրանց վերացրեց։ Միջակ ընդունակությունների տեր, շփոթիչ, մեծամիտ և փառքի ձգտող մարդիկ, նրանք արժանացան իրենց վիճակին։ Քսանհինգ միլիոն մարդու ճակատագիրը չէր կարող կախում ունենալ մի քանի կասկածելի անձնավորությունների վարմունքից։ Նրանք խաբեբաներ էին թե հիմարներ, սնապարծներ թե փառասերներ՝ կարևոր չէ։ Ռոբեսպիերն իր խնդիրը ճիշտ էր հասկանում, և միայն այդ ինձ ստիպում է նրանով հիանալու։ Դա ինձ ստիպում է ի դեմս նրա հանճար տեսնելու։

— Դու Ռոբեսպիերի նկատմամբ իրավացի չէիր,— նորից ասաց Բուոնարոտին։

— Այո, գրողը տանի, ես իրավացի չէի։ Ես անկեղծորեն խոստովանում եմ, ես ինձ վրա խիստ զայրացած եմ, որ տերմիդորի օրերին պախարակեցի Ռոբեսպիերի, Սեն-Ժյուստի և ուրիշների հեղափոխական կառավարությունը։ Դա մոլորություն էր։ Ես կարծում եմ, որ այդ մարդիկ ինքնին ավելի արժեին, քան մնացած բոլոր հեղափոխականները միասին վերցրած, և որ նրանց դիկտատորական կառավարությունը շատ լավ

էր կազմված... Վերջին հաշվով, ռոբեսպիերիզմը՝ դա դեմոկրատիա է. այդ երկու բառերը միևնույն նշանակությունն ունեն։ Ռոբեսպիերիզմը վերականգնելով, կարելի է համոզված լինել, որ վերականգնում ես դեմոկրատիան։

Բուոնարոտին լսում էր իր բարեկամի կրակոտ ճառը, իսկ ինքը ակամայից հիշում է Դյուպլեի տան հյուրասենյակը, դաշնամուրը, Ելիզավետայի քնքուշ ձայնը... Ինչպե՞ս այդ վաղուց էր, անդարձորեն վաղուց և ինչպե՞ս այդ ամենը վառ է հիշողության մեջ։ Օ՜հ, նա կարող է պատմել ուրիշների համար անհայտ շատ բաներ։ Նա, թերևս, երբևիցե այդ մասին կպատմի էլ, եթե կենդանի մնա...

Լռությունը երկար տևեց։

— Դե ինչ,— սթափվեց Բաբյոֆը,—պետք է աշխատանքը շարունակել։ Բայց հետաքրքիր է, ինչո՞ւ մենք այսօր հանկարծ Ռոբեսպիերին հիշեցինք։ Արդյոք մեզ չի՞ սպասում նրա ճակատագիրը։

Բուոնարոտին քնքշորեն գրկեց Բաբյոֆին։ Նրա դաժան դեմքը մեղմացավ։

— Սիրելիս, այդ մասին մտածել հարկավոր չէ, մենք պետք է հաղթենք։ Բայց նույնիսկ եթե մենք կործանվենք էլ, մեր գործը չի մեռնի։ Եվ Ռոբեսպիերին մենք զուր չհիշեցինք։ Տե՛ս, թե ինչպես է ձգվում գաղափարների ու դեպքերի թելը. նա մեծ գործ սկսեց, մենք այն շարունակում ենք, իսկ մեզանից հետո կգտնվեն մարդիկ, որոնք այն կավարտեն...

Բուոնարոտին ճշմարտություն ասաց։ Այն գործը, որի համար ֆրանսիացի հեղափոխական դեմոկրատները պայքարում էին, անխորտակելի էր։ Հեղափոխությունը չէր կարող կորստի մատնվել, ինչպես որ չկորավ նրա լավագույն զավակների հիշատակը։ Եվ Ռոբեսպիերը, և Բաբյոֆը, և բոլոր մյուսները, ովքեր նրանց հետ միասին և նրանցից հետո պայքարում ու մեռնում էին աշխատավորների ապագայի համար, նրանք բոլորը մնացին առհավետ ապրելու։ Նրանց ճակատագիրը դիպուկ կերպով բնութագրեց Անկաշառելիի վերջին ճառում ասված մի արտահայտություն՝ «Մահը հավիտենական քուն չէ... Դա մի ճանապարհ է դեպի անմահություն...»։